3 - 85

Въ Государевой Библиотеку

56

à l'Institut Lazareff à Moscou.

Don de S. Ex. C. de Lazareff
Paris – 1853.

Explication des actes des apôtres
de Snt Jean Chrisostôme.

Въ Лазаревскій Институтъ
отъ Его Превосходительства
Христофора Ѳимовича
Лазарева приношеніе
1854 года
изъ Парижа.

1 V. in 8. 2 —

2004

113

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ԳՈՐԾՈՒՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐ

Գոս. Պետ. Գրադ.
ՀԱՅԿ-Ի Պ.Ա.
Ամ. Ա Պետրոսյան
Ս. Սարգսյան անվան

1761
№ 25-2
614-Հ.Հ.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՅ

ԹՄԲԱԳԻՐ ԱՐԱՐԵԱԼ ՆԱԽԵՆԱՑ

ՅՈՍԿԵՐԵՐԸՆԼԻ

ԵՒ

ՑԵՓՐԵՄԻ

9528-5Հ



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ԳԱՂԱՐԻՆ

ՑԱՄԻ 1839 ԹՎՈՅ

225

Հայ. ՀԱՅՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА.
Ակադ. Հ. Մանանդյան

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աստուածեղէն տառից մեկնութիւնն որպէս առաջինս 'ի կարևորացն ծանեան երանելի նախնիքն մեր 'ի հրահանգս կրօնից ազգիս և 'ի բեմբասացութիւն քարոզաց բանին 'ի տան տեառն, նոյնպէս և կարևոր և շահաւէտ զազգողագոյնսն 'ի լայն և 'ի Ճոխ բանից առաքելաշնորհ հարցն սրբոց յորդորեցան ծայրաքաղ առնել և յօդել առ միմեանս առ հեշտի ընթերցասիրացն և ցանկալի ամենեցուն լինելոց սրոյութեամբն և խիտ առ խիտ նորաբուր բանիւքն։

Բ. Յսպիսի է ահա և մեկնութիւնս Գործոց առաքելոցն համառօտեալ 'ի բուն ընդարձակ մեկնութեանց Իսկեբերանի և Եփրեմի և յայլոց ևս աստուածամերձ արանց որ առ նոքօք և որ յետ նոցա կային. ոչ զի ամենեքեան նոքա մեկնութիւնս Գործոց արարեալ լիցեն, այլ զի որ ինչ բանք լցեն և 'ի նոցա մատենագրութիւնսն իմացուածոյ առաջիկայ ընաբանի Գործոցս յայտարարք, զնոսին ընտրանաւ յարէ 'ի կարգին Ճարտար մատենագիրս. որ զիւր անձն յանծանօթս կալեալ՝ զնորայն եւեթ առ որ ընծայէ զվաստակս զայս, յայտ առնէ 'ի նախաբան մատենիս զանունն։ Իսկ ժամանակ մատենագրելոյն կրսեր է քան զԿայսարէն որպէս յայտ է 'ի հատուածոցն Շնորհալւոյն, Ամբրոնացւոյն և Կիրակոսին որ գտանին 'ի սմա, և 'ի յիշատակարանէն որ 'ի կատարած մատենիս։ Իսկ այն զի ասի անդէն նորին Գրիգորի Կայսարիի գտեալ 'ի Տիզանդիա զԻսկեբերանի Գործոց մեկնութիւնն և տուեալ 'ի հայ բարբառ փոխագրել, ոչ զմատեանս զայս որ ժողովեալն է անտի և Եփրեմէ և յայլոց՝ այլ զբուն մեկնութիւնն

Ասկեբերանին է իմանալ. որ թէպէտ և ըստ հասա-
բակաց կարծեաց առ Մարգմանչաց փոխեալ թուի
'ի հայ, որպէս հատուածք ինչ անտի 'ի հին Ճառըն-
տիրս երևեալք զայնր դարու ցուցանեն զոՀ շարա-
գրածոյ, այլ գուցէ հնոյ թարգմանութեանն օրինակ
կորուսեալ՝ վերստին ետ թարգմանել Ա կայասէրն.
այլ այսոքիկ ժամանակաւ ստուգեացին։

Բդ զայսպիսի մեկնութիւնքս յայլ և այլ գիրս
ասուածաշունչ գրոց, յիրէն առեալ զանուանն կո-
չեցաք Խմբագիր մեկնութիւնս. յորում մատենա-
գիրն զհաւաքածոյ հատածսն ոչ ամենայն ուրեք ըստ
բայիցն Ճշգիւ գաղափարէ 'ի սկզբնագիր թարգմա-
նութենէն զոր ունէր, այլ մեծաւ մասամբ զիմաստսն
պահեալ՝ յաւելուած առնէ յանձնէ և ինչ ինչ 'ի յօ-
գուածս բանից։

Յերկուց օրինակաց արարաք զտպագիրս զայս,
միոյն թուականն յայտնի ՌԽԹ և միւսոյն անյայտ.
որք զի ուրեք ուրեք յանուսանս հատածացն չմիա-
բանեին, միոյն Գրիգորի ասացեալ և միւսոյն Ասկեբե-
բանի, ջանացաք առ ժամս ըստ կարի զանմիաբանսն
հաւաստի առնել 'ի յոյն բնագրէ Ասկեբերանին։
Իսկ յերիրեմեանսն, որոց չկաք յոյն կամ ասորի բնագիր,
ընտրելագունին յերկուց անտի օրինակացն հպատա-
կեալ անխախտ պահեցաք ամենայն ուրեք զանուն-
ակն կալեալ յազգասիրացն փութոյ այլևս հնագոյն
օրինակաց, ոչ միայն 'ի փոխարէն սիրայորդոր ան-
ձանձիր վաստակոցս զոր ընծայեմք 'ի վայելս նոցա,
այլ զի մի և նշանախեց մի երկբայելի կայցէ 'ի նախ-
նեացն մատենագրութիւնս։

ԴՐՈՒԹԻՒՆՔ ԲԱՐՈՅԱԿԱՆԱՑ ՀԱՄԱՐԻՈՏ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՍ

ԳԻՐԴՈՅՑ ԱՒԱՔԵԼՈՅՆ

Ա. Թէ ոչ է պարտ յապաղել 'ի մկրտութիւն։
Բ. Ընդդէմ ելլենացւոցն։
Գ. Յաղագս ընտրութեան եպիսկոպոսաց և առաքինութեան։
Դ. Ընդդէմ ելլենացւոցն։
Ե. Ընդդէմ հերձուածողաց և վասն կենցաղավարութեան։
Զ. Ընդդէմ բարկացողացն։
Է. Թէ բաղում բարեաց պատճառ է անստացուածութիւն։
Ը. Թէ պարտ է 'ի փոքունցն մասանց սկսանել զառաքինութիւն. և վասն ոչ երդնելոյ։
Թ. Զի ոչ է պարտ երդնուլ և ոչ յերդումն պահանջել։
Ժ. Վասն երդնելոյ։
ԺԱ. Թէ բարի է անստացուածութիւն. և վասն ոչ երդնելոյ։
ԺԲ. Վասն ոչ երդնելոյ և գողանալոյ։
ԺԳ. Թէ բարի և հանդիստ է աղքատութիւն. և վասն ոչ երդնելոյ։
ԺԴ. Թէ պարտ է երկայնամտել և անյիշաչար լինել։
ԺԵ. Զի պարտ է քրիստոնէին ակն ունել նեղութեան յայսմ աշխարհիս. և ընդդէմ բարկացողաց։
ԺԶ. Թէ փրկեալ լինիցք յայ յաշխարհիս իրս փափկանալով։
ԺԷ. Ընդդէմ բարկացողաց։
ԺԸ. Թէ պարտ է փարթամաց յաղաբակս եկեղեցի շինել, և առանգամ մի զդոյսն անդանօրծախել. և քահանայս կարգել։
ԺԹ. Թէ պարտ է հանապազ փութով ընթեռնուլ զսուրբ գիրս։
Ի. Թէ պարտ է քրիստոնէին ոչ միայն իւրոյ անձինն, այլ և բազմաց գոլ պիտանի։
ԻԱ. Զի մեծապէս օգտին վանականաւոր. յորմէ վասն նոցունց աղօթից, ողորմութեանց և պատարագաց։
ԻԲ. Թէ մեծ է զօրութիւն ողորմութեան։
ԻԳ. Զի ոչ է պարտ յապաղել 'ի մկրտութենէ. և զի ոմանց նեղրէ մեծ առ այժմ որպէս ինքն գիտէ. իսկ ոմանց ոչ։
ԻԴ. Վասն ապաշխարութեան. և զի յեկեղեցիս զգուշութիւն և մի ցոփանօք և զրուցատրութեամբ լիցուք։
ԻԶ. Վասն ողորմածութեան։
ԻԵ. Թէ պարտ է զիշերի յառնել յաղօթս և 'ի հսկութիւն։
ԻԷ. Ընդդէմ արբեցողաց։

ԻԼ. Ընդդէմ անափառաց։

ԻԹ. Զի ժողովուն յեկեղեցին յօդուտս և 'ի շինութիւն լեցի և միրնդ վայր ինչ։

Լ. Վասն խոնարհութեան, և վասն ոչ բարախելոյ յեկեղեցւոջ։

ԼԱ. Վասն ճծային նախանձու և յօժարութեան և երկայնմտութեան և հեզութեան, և վասն ոչ բարկանալոյ։

ԼԲ. Վասն հեղամտութեան և անհպարտութեան, և թէ հայեաց 'ի քեզ։

ԼԳ. Վասն զի ողջախոհ մտաց ոչինչ վնասէն ընդդիմաբանութիւնք հերձուածողաց։

ԼԴ. Վասն փութոյ և խնամարկութեան։

ԼԵ. Զի վնասէ հանդիստ մարմնոյ և դատարկութիւնն։

ԼԶ. Վասն փութոյ աղօթից գիշերոյ։

ԼԷ. Վասն սիրոյ և հոգւոր խաղաղութեան որ առ միմեանս։

ԼԸ. Վասն ղջմման և սիրելոյ զնծ։

ԼԹ. Վասն հեզութեան և առ անարգողսն անյիշաչարութեան։

Խ. Յաղագս սիրոյ։

ԽԱ. Թէ չար է խստանալ սրտիւ և յամառել յախտս, այլ սթափիլ յախտից։

ԽԲ. Զի չափաւոր փորձութիւն պիտանացու է։

ԽԳ. Զի պարտ է նմանել սրբոցն և ոչ խնայել [2]զանձինս 'ի վիշտս եղբարց։

ԽԴ. Լո լսողն զգուշանալ ասացելոցն և յառաջել յառ ած սէրն, և յանձն իւր թէ որպէս ունիմ առ աշակերտսն։

ԽԵ. Վասն օտարսիրութեան, և թէ մեծագոյն վարձք են յընկնուլն զփոքունս։

ԽԶ. Ոչ ցաւադնիլ վասն հերձուածս գոլոյ։

ԽԷ. Թէ պարտ է մեզ վկայս Քրիստոսի լինել ուղիղ վարուք։

ԽԸ. Վասն հեզութեան և համարձակութեան, և հակակայց նոցին։

ԽԹ. Զի 'ի ձեռն թուլցելոցն թէ վնասիմք, շահիմք թէ արթուն իցեմք. օրինակ 'ի Յորայ և 'ի Յովսէփայ։

Ծ. Վասն ոչ փոխարինելոյ անարգողաց, այլ սիրով յառաջելոյ զնոսա։

ԾԱ. Զի ոչ օր կարէ վնասել զմեզ, եթէ մեք ոչ վնասիմք։

ԾԲ. Զի ըմբռնեալն ճծային սիրոմն առ ոչ մի ինչ աշխարհս հայի։

ԾԳ. Զի պարտ է ունել 'ի տան այր սուրբ և հաւանել նմա. և զի պարտ է այժմ որպէս 'ի մտոյ կալով լսել Պաւղոսի նախ քան զփորձիլն չարեօք։

ԾԴ. Թէ ոչ միշտ զեն պատճառ չարի կարել լինել։

ԾԵ. Վասն Պաւղոսի առաքելոյ։

1 Յորինակին Խաբիոնեան։ 2 Պակասեր բառդ Խնայել։

ԱՌ ԽՆԴՐՈՂՆ ՀԱՄԱՌՕՏԻՍ

ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԸՆԹԵՐՑԵՂ ԳՐՔՅՐ

ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՀԱՆԳԱՑ
ԱՍՏՈՒԱԾԱՊԱՀ ԴՊԼԵԿԻՆ ՄԱՒԼԵԻՈՆԻ
ԵՒ ՄԱՅԻՆ ԻՆՉ ԲԱՐՁՐԵԼԵՐԴՈՑ
ԵՒ ՆՈՅՆ ՏԵՍՈՒՉ
ՀՌՉԱԿԵԼԻ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՆ ԳՈՆԵՐՈՑ

ԵՒ ԱՌ ՀԱՆԴԻՊԵԱՄՆ ՄԱՏԵՆԻՍ

Ահա ով աստուածասէր Հայր իմ և տէր, հաւ-կեցուցիչ խնդիրս քո և պատկառելի շուք երեսացդ դարձեալ գրաւեացդիս ահիւ, մինչ զի մոռանալ զխա-մութիւն տխմարութեանս և ընկենուլ զիս 'ի գործ՝ որ առաւել ծանր է քան զիս։ Քանզի հրամայեցեր ինձ դէմ յանդիման տալով հանդամանս օրինակի 'ի լայն և 'ի հարուստ մեկնութենէ գործոց առաքելոյն հաւասար իմացուածով զսպել զերկարութիւն բանիցն համառօտ կարգաւ. զոր 'ի ձեռն այլոյ զօրեղի կամ յոյժ մանաւանդ քոյին իսկ հանձարայեղոց և շատիմաց անձամբ գեղեցկագիր բանիւ բաւական էիր ընուլ քեզէն զիմաստասէր փափաքդ քո 'ի նպաստ գիտնոց վարժողաց 'ի կարձեալ ժամանակիս զկարձն ախորժողաց ըստ ասելոյ ուսմանն։ Բայց արդ ոչ անզիտաւնամ զզիջանելդ քո ներդործութիւն սիրոյ գոլ առիս և յայտմմասին։ Որում թէպէտ հպատակել բրնազդատեցայ, սակայն 'ի թերութիւնս իմ հայելով զամենի հարեալ կամ յանդգնելովս իմ առ այս։

Եւ արդ քանզի թէպէտ և բազմամանուած[1], սա-
կայն հարեալ և հորդ և միանգամայն կուռ և կոկ էր
Ճանապարհս, ընդ որ 'ի քէն ընթանալ հրամայեցայ.
մանաւանդ զի զպայծառ ջահն և զանմուտ արեգա-
կունն առաջնորդ ինձ ունելով զաստուածուսոյց
հանՃարեալն զտէր Եփրեմ և զքրիստոսածաւալ աղ-
բիւրն իմաստից զամենահռչակն զՈսկեբերան. զորոց
սրբոց երկնընթաց ոտիցն բուռն հարեալ ահիւ՝ նախ
անտեսութիւն յանդգնութեանս իմոյ աղերսիւ հայ-
ցեմ, և ապա օգնականութիւն տկար զօրութեանս առ-
'ի բաւական լինել ինձ զնորիմաց և զպայծառափայլ
նոցին բանս մեկնութեան գործոց սուրբ առաքելոցն
զառանձնացեալսն երբեք և զհամաձայնեալսն ու-
րեք ընդելուզել հիւսմամբ իբրև զկանս պատուա-
կանս, կամ իբրև զանթառամելի զանուշահոտ ծա-
ղիկս բոլորելով կազմել պսակ յուսոյ աստուածասէր
գլխոյ խնդրողիդ 'ի փառս Աստուծոյ և 'ի պատիւ սրբ-
բոցսնորին և 'ի հրՃուանս ՃՃածասէր ընթերցողաց։ Յո-
րոց անսխամանՃ սիրոյ հայցեմ աղերսիւ զոչ ինքնա-
յորդոր համարձակիլս իմ յայս չարկանել ընդ մե-
զադրութիւն, այլ մանաւանդ զսխալանս իմ՝ աստ եղբայ-
բաբար ուղղել զիմքողացն ըստ իս։ Իսկ զառաւել պա-
սուք ծարաւոյ տարողութեան[2] ընդարձակ մտաց
հզօրքն 'ի ծովածաւալ աղբիւրսն իմաստից դիմեսցեն
ընուլ, 'ի բուռնն և 'ի լայնն ասեմ մեկնութիւնսն,
յորոց և այս այսչափ ծայրաբաղ համառօտեցաւ։ Եւ
զդոյզն իմ զաշխատութիւնս թողութեամբ մեզաց՝ յայ
հայցմամբ վարձատրել, և զիսխարիհն կրկնապատիկ
յառատապարգև տեառնէն ընդունել. ամէն։

1 Միւսն բազմանուածոյ։ 2 Միւսն կարողութեան։

ՎԱՄ ՎԵՐՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՑ

ԱՌԱՔԵԼՈՅՆ

Գրդ ներելովն Աստուծոյ տեսցուք զվերնագիրս թէ ընդէր ասէ գործք առաքելոց. զի ահա զոր ինչ պատմել ունի յառաջիկայսդ, ոչ է բովանդակն գործ լոկ մարդկեղէն փութով վճարեալ. այլ մանաւանդ յոլով մասն նոր և հիացուցիչ սքանչելիք, աստուածեղէն զօրութիւն արուեստաւորեալ։ Եւ՞ վասն ապա աստուածաբան պատմողն Ղուկաս ոչ 'ի վեհագոյն կոչմանէն զառաքեալսն հռչակելով նշանս և սքանչելիս առաքելոցն մակագրէ զառաջիկայս, այլ գործս։ Յաղագս այսորիկ նախ զայս ունիմք խմանալ. զի անփառասէր և առանց շփացութեան բարս ունելով՝ խոյս տայ 'ի մեծամեծս բարբառելոյ, որպէս և է իսկ սովորութիւն սրբոց. ըստ որում և յոլովագոյնս զայսոսիկ 'ի յառաջիկայսում քննութեանս գրոցս ունիմք ուսանել. այսինքն խոնարհագոյն բանիւ վարեցեալ յաւէտ՝ նախ զԲրիստոս ինքն, և ընդ նմին ապա և զաշակերտսն։ Վասն որոյ և Ղուկաս այսու ձևով վարի 'ի սկզբանէ գրոցս մինչև ցկատարումն։

Եւ ապա զի առաքեալքն սուրբք, յաղագս որոց առաջիկայ մատենիս է պատմութիւն, ոչ այնչափ 'ի սքանչելի նշանաց և 'ի զօրաւոր արուեստիցն զպատուէրն Քրիստոսի լցին և զառաքելութիւնն և Աստուծոյ հաճոյք և ընտիրք եղեն, որչափ իւրական ջանիւ և ինքնագործ աշխատութեամբ. որպէս և յառաջիկայսդ տեսցես բազում ուրեք գնոսա ոչ շնորհօք և սքանչելեօք յատուկ, այլ յոյժ մանաւանդ մարդկեղէն փութով մեծամեծ գործս վճարեալ։ Եւ այս յոյժ վայելչապէս. զի սքանչելեացն հրաշք ոչ մարդկեղէն հնարից, այլ աստուածային զօրութենն է գործոր մեկն բանիւ կատարէ զարմանալիս առանց արբանեկին ինչ աշխատութեան. որպէս յորժամ բանիւ սքանչելագործէին առաքելքն և մարգարէքն 'ի հընուսին 'ի հաւանութիւն խոստասրատցն։ Յոր թէպէտ և զօրացան 'ի նշանս առաքելքն, այլ ոչ այնու 'ի

ծուլութիւն հատան յանհոգս նստելով, գիտելով թէ առանց գործնական առաքելութեան՝ ոչ կարեն Աստուծոյ հաճոյ լինել. զի ահա բազումք նշանս և զօրութիւնս բազումս անուանին Քրիստոսի արարեալք՝ ասելոց են 'ի նմանէ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։

Պատկեր աշակերտութեան իւրոյ ոչ զնշանս սքանչելեաց եդ Քրիստոս, այլ զսերն սերտ՝ որ բազում փութոյ պնդութեան և աշխատութեան գործոց է պատուղ։ Ըստ որում և ինքն Քրիստոս ոչ յատուկ աստուածեղէն զօրութեամբն ևեթ, այլ յաւէտ մարդավայելուչ աստուածայրական փրկագործ կրիւքն սիրով եդ զանձն իւր 'ի մահ վասն մեր, և զհաճոյսն Հօր ինքնագործ փութով լցեալ կատարեաց առ 'ի յուսումն և յօրինակ մեզ վարդապետութեան. զի մեք մի ծուլութեամբ մեղկեալք՝ զամ ինչ զոր մեզ պարսն իցէ առնել յԱստուած ընկեսցուք, և մի պատճառս հեղգութեան կարկատեսցուք՝ թէ առաքեալքն 'ի հնարհսն Աստուծոյ յաճախ վայելեալ, նշանս մեծամեծս կարողացան առնել, և այնու զամենայն հաճոյսն Աստուծոյ ուղղել զօրացան. յորմէ վրիպեալ մեք փոքունքս և տկարք զինչ կարասցուք առնել։ Եւ այսպէս 'ի տարտամութեան գրաւեալք՝ զսակաւ կենցաղս անգործ 'ի բարեաց վճարեսցուք։ Այլ զի մանաւանդ հայեսցուք, զի այսու տկար մարմնովս իբրու մարդիկ գոլով առաքեալքն 'ի ձեռն ժրութեան փութոյ զտիեզերաց և զիւրեանց անձանց փրկութիւնն գործով լցին։ Առ որս 'ի նախանձ բարեաց զարթուցանելով զմեզ բանս՝ գործք առաքելոց մակագրէ. զի օգնականութիւն այ 'ի պատշաճաւորսն մեզ 'ի փոյթ պնդութեան գործոց յարեսցուք[2]։

[1] Միւսն առաքինութեան... գիտելոյ լրջութեան։
[2] Միւսն յարեսցուք։

Ի ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԲՈՒՆ ԵՒ ԸՆԴՄԱՁԱՒ
ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՅՆ

ՏԵՐՈՆ ԵՓՐԵՄԻ

ԵՒ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԻՉԻՆԻ

ԱՅՍ ՀԱՄԱՌՕՏ ՀԱՐԱՒԻՍԵՑԱՒ

ՈՐՊԷՍ ԵՒ ՏԵՍԵՑԵՍ ԱՌԸՆԹԵՐ ԲԱՆԻՆ ՈՒՆՑՆԻՒՐ
ՏԵՂԻՈՒՆՔ ԴՐՈՀՄԵԱԼ ՔԱՆԱՒԱՆԱՆ ՍՐԲՈՅՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՏԵՐՈՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ

ԱՍՏՈՒԱԾԱՊԱՀ ՈՒԽՏԻՆ ԳՈՆԵՐՈՅ ԱՌԱՔԶՈՐԴԻ

ՃԱՌ ԱՌԱՔԷԻ

ԵՓՐԵՄ. Գործոցս առաքելոց մատենագիր է Ղուկաս աւետարանիչ. այն որ Թէպէտ 'ի սկզբանէ անտի քարոզելոյ Քրիստոսի մերոյ չէր ընդ նմա, սակայն ընդ առաքեալսն տեառն Քրիստոսի յարէր նա 'ի սկզբանէ անտի իջման Հոգւոյն և յառաջ։ Եւ Թէպէտ զաւետարանն զոր գրեաց նա, որպէս լուաւ յաշակերտացանտի Քրիստոսի գրեաց, այլ գործոց առաքելոցն զոր գրեաց՝ իւրովք իսկ աչօք տեսող եղև Հաւաստի։ Արդ սա յետ աւետարանին իւրոյ զոր գրեաց, քանզի ետես զի խարդախողք ոմանք գրեցին 'ի մոռաց իւրեանց աւետարան յանուն տղայութեան Քրիստոսի մերոյ, և այլք գիրս Հարցուածոց յանուն Մարիամու և աշակերտացն Քրիստոսի, յորում ասեն Թէ զկնի յարութեանն յետ ութուտասնամոյ վերացաւ անդրանիկն այն, զորմէ առաքեալքն իւր գրեն՝ Թէ յետ քառասուն աւուր իսկ և իսկ վերացաւ նա յերկինս, արդ զի խափանեսցէ Ղուկաս զսուտ գիրս այլափառացն յաւետարանէն Քրիստոսի տեառն մերոյ, որք

երիցութիւն և կրտսերութի գործոց ստեղծաբանեն զտեառնէ Յիսուսէ, ինչ ինչ նախ քան զկրթին և ինչ ինչ յետ քառասնօրեայ վերացման նորա, գնէ 'ի մատեանս գործոց առաքելոցն սկիզբն և կատարումն գործոց տեառն մերոյ ըստ նմանութեան այլոց աւետարանչացն, սկսեալ 'ի մկրտութենէն տեառն 'ի Յովհաննէ մինչև 'ի քառասնօր վերացման նորա. զի ցուցցէ՝ թէ ամենայն գործ սրբ և գոյն գրեալ յանուն տեառն Քրիստոսի, նախ քան զմկրտութիւն նորա և յետ քառասուն աւուր համբառնալոյ նորա, օտար է գործն այն 'ի Քրիստոսէ տեառնէ մերմէ։ Եւ յայտ անտի է, զի ինքն իսկ Քրիստոս ասաց աշակերտացն իւրոց. «Եթէ ես ոչ երթայց, մխիթարիչն ոչ գայցէ». և մխիթարիչն'ի կատարումն պէնտեկոստէին եկն յետ յիսուն աւուր յարութեան նորա։ Յայտ եղև ահա, զի 'ի լրումն քառասնեկին, որպէս ասացին առաքեալքն, վերացաւ Յիսուս. և սուտ են խարդախողքն՝որ յետ ութուտասն ամսոյ ասեն զվերանալ նորա։ Աղդ գրեաց Ղուկաս վասն յարութեան տեառնէն մերոյ, վասն վերանալոյ նորա և վասն գալստեան Հոգւոյն և աշխատանաշակերտացն, և որ ինչ յետ այսորիկ։

ՈՍԿԵԲԵՐԱՆ. Այլ քանզի անդիտանան քազումք ոչ միայն զշարագրող սորին թէ ոք իցէ, այլև բնաւին իսկ զգիրս զայս գլխովին։ Սմին վասն հարկաւորապէս բուռն հարի առ 'ի քննել զսա, զի զոչ գիտողսն սորին զարթուցից, և ոչ թողից 'ի թաքուստ մնալ այսչափ պատուական գանձուցս մեծաց՝ որ ոչ ինչ նուազ քան զաւետարանն շահեցուցանէ զմեզ բարձրագոյն իմաստիւք և ուղղութեամբք աւանդութեանց. մանաւանդ յաղագս սրբոյ Հոգւոյն՝ աստուածաբանութի զեղելոցն և զասացելոցն 'ի Հոգւոյն պատմելովն։

Աղդ 'ի կարճոյ առ 'ի դիտումն բովանդակ գրոցս նախ այս լիցի գիտելի, զի կանխասացութիւն Քրիստոսի վասն 'ի լաւագոյն փոփոխման աշակերտացն՝ գալով 'ի նոսա Հոգւոյն սրբոյ՝ աստ 'ի գլուխ ելեալ երևի։ Ա յսինքն թէ. «Որ հաւատայ յիս, զնշանսն զոր ես առնեմ, և նա առնէ». զոր և արարին իսկ աստ աշակերտքն։ Եւ թէ առ դատաւորսն ածեալ՝

տանջողացն յաղթիցեն, և յաղթեցին՝ որպէս ասա-
լեմք. և այն՝ թէ աւետարանս քարոզեսցի, և այլն
ամենայն։ Աստանօր տեսցէս զաշակերտսն քարոզե-
լով զՔն իբրև զթուչունս սլացեալս ընդ ծով և ընդ
ցամաք՝ յանկարծակի իմն այլք յայլոց զնոսա փոփո-
խեալս. որք երբեմն երկչոտքն և անիմաստք՝ վեհա-
գոյն այժմ եղեալք փառաց, ընչից, ցասման և ցան-
կութեաց և սոցայոցն կրից. տիւնա մանաւանդ քաջու-
թեամբ և ցածութեամբ, միաբանութեամբ և սիրով փայ-
լեալք։ Ի գտանել 'ի սմա և վասն աստուածահաճոյ
գործական վարուց, այլ և աւանդութիւնս յոյժ պի-
տանիս. զոր թէ ոչ ասցի, ոչ այլ ուստեք մեզ լինէր
գիտելի։ Տինա մանաւանդ և գլուխն իսկ փրկու-
թեանս մերոյ Թագուն մնայր և անյայտ. այսինքն քրիս-
տոնեայ անուանս այս կոչումս։

Իսկ վասն զի յոլով մասն գրոցս գործքն Պաւղոսի
է, վասն զի աշակերտ էր նորին շարագրողն սորա ե-
բանելին Ղուկաս, զորոյ առաքինութիւն ոչ միայն 'ի Պաւ-
ղոսէ լսեմք՝ թէ գովութիւն նորա յաւետարանի անդ
է, այլ և յանքակ շրջելոյն սորա ընդ Պաւղոսի։ Զի
յորժամ այլքն 'ի նմանէ մեկնեալ հեռացան, ոմն 'ի
Դալիլեայ, միւսն 'ի Դաղմատիա, սա միայն առ նա
դեգերեր։ Ապա ընդէր արդեօք մինչ 'ի վախճան ըզ-
գործս նորա ոչ գրեաց, թերևս ասիցէ ոք։ Ասեմք՝
թէ բաւական էր այս որոց կամին 'ի միտ առնուլ, թէ
և ոչ գրեցեալքն [1] սոյնպիսիք իցեն։ Եւ դարձեալ զի
առ հարկաւորսն ևեթ և ոչ 'ի Ճառագրել ինչ աս-
տուածաբանքն փութային. այլ և բազում ինչ ան-
գիր աւանդեցին։ Սմին վասն և առաքեալքն 'ի քա-
րոզելն զՔրիստոս սակաւ ինչ ասացին վասն աստուա-
ծութեան նորա, և յոլովս վասն մարդեղութեան,
չարչարանացն, մահուն, յարութեանն և վերանալոյ
նորա։ Զի յայնժամ այս էր յոյժ հարկաւոր հաւա-
տալ մարդկան՝ թէ յարեաւ Քրիստոս և եկ յերկինս։
Զի որպէս Քրիստոս զայն փութայր ցուցանել թէ 'ի
Հօրէ եկն, այսպէս և աւետարանիչս ըստ կամելոյ
Հոգւոյն զայն փութայր ցուցանել՝ թէ յարեաւ 'ի

[1] Միւսն ՝ԿԼ Ն լքեալքն, այլն ասելովք իցեն։

մեռելոց և առ Հայր դնաց, ուստի և եկեալն խսկ էր։ Զի թէ ոչ նախ սոքա էին ընկալեալք, անհաւատալի լինէր Հրէիցն և այլ ամենայն աւանդութիւնքն։

Սմին վասն զտկար՝ միտս լսողացն մեղմով՝ ի բարձրագոյնն վերածել առաքեալքն կամելով՝ այր և պարզ մարդ զԲրիստոս քարոզէին։ Եւ յիրաւի. զի թէ զԲրիստոս վասն հաւատար Հօր զինքն դնելոյն՝ Հրեայքն քարկոծել ձեռն արկանէին իբրև զհայհոյիչ, յոյժ մանաւանդ՝ ի ձկնորսաց զառ՝ ի յինքեանց խաչեալն ՅԾ գոլ լսելով՝ ընդարձակս ծիծաղէին։ Եւ չէն ինչ զարմանք. զի թէ առաքեալքն յար ընդ նմա շրջեալք և զհրաշս՝ ի նմանէ եղեալս աչօք իսկ տեսեալ, սակայն ընդ լսելն՝ ի նմանէ զբարձրագոյնսն խռովէին, մինչ զի զբազումսն և լսել խսկ ոչ կարէին, զիարդ ապա ձեռագործացն երկրպագուք անմիտ հեթանոսքն վաղվաղակի զբարձրագոյն վարդապետութիւնն տանել կարէին. կամ՝ օրպէս Հրեայքն միշտ լսելով թէ մի է Աստուած և չիք այլ ոք, զառ՝ ի յինքեանց խաչեալն Քրիստոս մեռեալ թաղեալ և ոչ տեսեալ յարուցեալ՝ ի լսելն Աստուած զնա գոլ ոչ՝ ի բաց վաղէին. ըստ որս զիջանելոյն առաքեալքն խոնարհագոյնս զՔոհ դեռ ևս ՅԱռաւէին. սմին վասն և՝ ի շնորհս Հոգւոյն յաՃախ վայելէին, և անուամբն Յիսուսի մեծագոյն քան զորս ինքն արար նշանս՝ առնէին։ Զի այսպէս զգետնաքարշ միտս մարդկան՝ ի վեր յարուցեն հաւատալնախ թէ յարեաւ՝ ի մեռելոց Քրիստոս. զորմէ և յաՃախ հրաշիւք ապացոյց ուն՝ի գիրքս այս գործոց առաքելոյն. զի յարութիւնն Քրիստոսի հաւատալով մարդիկ, ըստ կարգի ապա և զայլսն յանձին կալցին։ Աղդ գլխաւորելով ի՝ն յայսոսիկ ժողովի զօրութիւն գրոցս։ Լուիցուք այսուհետև զառաքեալսն սորին, որ ասէ.

«Զ՝ զանն առաջին զոր արարի»։ Առաջին քան զաւետարանն ասէ զոր գրեաց։ Եւ թէ էր վասն՝ ի սկիզբն գործոցս զաւետարանէն յիշեցուցանէ, վայելչապէս. զի այնու զայս հաւատալի ցուցցէ։ Զի անդ՝ ի սկիզբն աւետարանին կամելով հաւատարիմ՝

1 Միւսն գ՝ի՝ոարանիս... գարգնոր մարդ։

առնել զբանն, ասէ. «Կամ եղև ինձ, որ'ի սկզբանէ զհետ
երթեալ էի ամենայնի ճշմարտութեամբ, կարգաւ
գրել քեզ, քաջդ Թէոփիլէ»։ Եւ ոչ իւրով վկայու-
թիւն շատացաւ, այլ և զառաքեալսն վկայս էած՝ թէ
«Աւանդեցին մեզ զոր'ի սկզբանէ ականատեսքն»։ Եւ
այսպէս զբանն հաւատարիմ արարեալ անդ՝ ասա այժ-
միկ ոչ կարօտանայ այլ ինչ պիտոյից դարձեալ Թէո-
փիլեայ հաւատարիմ լինել. այլ զառաջինն զայն հե-
րիք համարի յայսր գրութեան ճշմարտութիւն. իբրու
թէ ասել առ նա. Թէոփիլէ, զի թէ զառ'ի յայլոց լը-
սեալն գրեալով իմ հաւատացեր, ապա առաւել զայ-
սոսիկ հաւատասջիր զորս աչօք իսկ տեսի. և սա թէ անդ
զՔրիստոսէ զբանն ընկալար, յոյժ մանաւանդ և ասա
զառաքելոցն։

«Օ՛ բանն առաջին» ասէ։ Եւ ընդէր բան լոկ ասէ
զաւետարանն ասա. և կամ ընդէր և անդ՝ թէ աւան-
դեցին մեզ ինքնատեսքն. և ոչ ասաց՝ թէ աւանդեցին
Հոգւոյն սրբոյ արժանացեալքն։ Մի թէ լոկ պատմու-
թիւն իցէ աւետարանն առանց Հոգւոյն. ոչ. այլ զի
միշտ ցածութեամբ սիրող էն սուրբքն, և կրողք Հոգւոյն
հեզութեամբ. որով'ի բաց մղեալ և սորա զկարծիս փա-
ռաց՝ զբանն, ասէ, զոր արարի, և ոչ զաւետարանն.
մեծագոյն քան զինքն հաշուելով զանուն աւետարա-
նին, թէպէտ Առաքեալ այնու զսա ներբողէ։ Արդ
որպէս ասա ոչ պատուասիրեաց վասն իւր՝ այլ բան
ասաց զաւետարանն, նոյնպէս և անդ ոչ ասաց շփացու-
թեամբ՝ թէ աւանդեցին մեզ Հոգիքնկալքն, այլ թէ
ինքնատեսքն և սպասաւորք։ Եւ այլ ազգ. զի յակա-
նատեսից ուսեալն արժանի հաւատալոյ թուի. և թէ-
պէտ քան զտեսութիւն աչաց ստուգագոյն է Հոգւոյն
ազդումն, այլ ոչ անծանօթից Հոգւոյն։ Սմին վասն և
Մ'կրտիչն ասէր՝ թէ ես տեսի և վկայեցի. և Քրիստոս՝
զոր տեսաքն և վկայեմք. և Պետրոս՝ թէ ընդ նմա կէ-
բաք և արբաք։ Այս առնէին վասն ոչ կարողացն
յայնժամ ընդունել արժանապէս զբանն վասն Հո-
գւոյն սրբոյ։

«Օ՛ որ արարի, ասէ, վասն ամենայնի»։ Եւ սակայն
Յովհաննէս ասէ՝ թէ չէր հնար զամենայն գրել. և
սա զիարդ ասէ՝ վասն ամենայնի։ Ի միտ առ. ոչ ասէ

761
93520-157
ՀԱՅԿ-ՍՍՀ

զամենայն, այլ վասն ամենայնի. իբրև թէ ասել, թէ խոշորապէս՝ և թանձրամասնաբար սակաւուք զբաղմացն նշանակել։ «Ո Թէոփիլէ». այս է աստուածասէր։ Բայց թէ զիարդ անդ քաջասաց զսա, և աստ հիացակասս առ սա դնէ՝ ո, ասելով, աստուածասէր, վայելչապէս. զի անդ զչքնաղ և զանծանօթ սքանչից ունէր պատմել, քաջալերեաց զնա որպէս նաւապետ կամ զբաւալր մի կասկածել՝ի խորագոյնսն կամ երկմտել՝ի հաւատացն. իսկ աստ՝ի փոքրոյ եղելոց արդեանցն հիանայ ընդ մեծամեծսն՝ ասելով ո Թէոփիլէ։

Ա՛յլ տես զհեզութիւն նորա, մանաւանդ զհոգւոյն որ՝ի նմա, և զմարդասէրն փոյթ. զի վասն միոյ առն զգուշութեան ողջ իսկ աւետարան գրեաց. և արդ դարձեալ երկրորդ առնէ առնա շարագրութիւն առ՝ի շահել զնա փրկեալ. զի մի կորիցէ որ՝ի փոքրկանց, ՝ի տեառնէ լուեալ։ Եւ զի յերկուս գիրս բաժանեաց, նախ վասն հաստատութեան, և զի հանգուսցէ զլսողսն. և դարձեալ քանզի և իրաք իսկ յերկուս են բաժանեալ դիտողութիւնքն, զորս և ցուցցուք յետ սակաւուց։ Ա՝յլ այժմ դէռ զառաջնոյ բանէն ասէ, զոր արար վասն ամենայնի. և թէ վասն որոյ արդեաք,

«Օ որ սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել»։ Զբանքն՝ զլսեալսն և զվարդապետութիւնն Քրիստոսի ասէ, զոր սկսաւ առնել յետ մկրտութեանն։ Եւ ոչ միայն զայս ցուցանէ, այլ թէ և առնելով իսկ ուսուցանէր Յիսուս, և զբանն իւր ընդոյր գործով։ Եւ թէ զիարդ՝ լուր և ասացից։ Ուսուցանէր անսատացուած լինել, սիրել զթշնամիս, թողուլ յունողս զվերարկուն։ Եւ լից ինքն գործով զիւրաքանչիւրս. ոչ ունելով տեղի գլխոյն. աղօթելով վասն սպանչացն. թողլովն ոչ զՀանդերձեան ևեթ, այլ և զարիւնն ևս տուեալ։ Ուրեմն և զաղաչանսն Քրիստոսի գործ ասէ, որով զմահ քակեաց և զմեզ փրկեաց և ուսոյց մեզ զնոյն առնել։ Ուստի ուսաւ Պաւղոս խրատել՝ թէ նմանողք մեզ եղէջիք, ունելով զմեզ ձեզ օրինակ. որ մանա-

1 Մեան Բոլորագէս։

ամանդ գործ է վարդապետի, գործելով ուսուցանել, և ոչ բանիւ լոկով Ճարտարել։

ԵՓԲ. «Մինչև յօրն պատուիրելոյ առաքելոցն 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ»։ Որպէս կանխագոյն ասացաք 'ի սկզբան գործոյն տեառն և կատարած դնել ասելով թէ մինչև յօրն պատուիրելոյ, որ է օրն վերացման նորա. զի կարկեսցէ զտարխօսսն։

ՈՍԿ. «Բայց տես թէ զիարդ խոնարհագոյնս բարբառիլ զՔրիստոս։ Պատուիրեաց, ասէ, առաքելոցն 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ. այսինքն Հոգւոյս առ նոսա խօսեցաւ բանս և ոչ մարդկայինս. զի 'ի ձեռն Հոգւոյն, այսինքն գործակցութեամբ նորին, նոցա պատուիրեր. որպէս զայն՝ թէ «Հոգւով Աստուծոյ հանեմ զդեւս»։ Եւ զինչ արդեօք պատուիրեալքն իցեն. «Բանն զոր խօսեցայ ընդ ձեզ, հոգի է և կեանք. զնացէք ապա, ուսուցէք մկրտելոցն 'ի ձէնջ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ պահել զոր ինչ ես ձեզ պատուիրեցի»։ Բայց տես ասա, զի ոչ միայն առ փափաք պատուիրելոցն շարժէ զլսողսն՝ թէ Հոգւոյն բանք են, այլ և մեծ դնել զգովեստ առաքելոցն։ «Զորս ընտրեաց» ասէ. յայտ է թէ սպասաւորս փրկութեան հեթանոսաց։ Ապաքէն գիտեր զնոսա լաւսև ապա ընտրեր. «Եւս ընտրեցի զձեզ, ասէր, և եդի զձեզ, զի դուք պտղաբերքդ լինիջիք»։ զբազմաց ընտրիչն նոքօք յայտ առնելով։

Բ. Զդ պատուիրեալ, ասէ, Համբարձաւ։ Ցանկալին և սիրելի զմարդոյխօսելով զՔրիստոս աւետարանիչս, ոչ ասէ վերացաւ, այլ Համբարձաւ. որ և զմարդոյ ասի։ Որպէս այն որ կայ 'ի գիրս՝ թէ «Համբարձաւ Յովնաթան փոխանակ Յուդայի եղբօր իւրոյ»։ և զՊաւղոսէ գրէ Ղուկաս. «Համբարձաւ յԵրուսաղէմ»։ Համբարձաւս ասելն՝ է ուրեք զի զաստիկ արագութիւնն նշանակէ, է զի զբարձրութիւն պատուոյ և է ուր հանդերձ արագութեամբն և զինդատութիւնն ևս յայտնէ։ Որպէս զոտս ամբարձեալ Յակոբ գնայր յերկիրն արևելից, զուարճացեալ ընդ տեսիլ սանդխոցն՝ Ճեպով առնէր զընթացսն 'ի թեթևս ամբառնալոյ ոտիցն։ Զայս ձև օրինակի բանից և 'ի վերայ Յիսուսի պահէ՝ թէ պատուէր տալով ընտրելոյ աշակերտացն Համբարձաւ։

« Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանաց իւրոց» ։ Մեծ իմն աւանդէ 'ի Ծածուկ . և զինչ. ասաց նախ վասն Համբարձմանն Յիսուսի . ասէ և վասն յարութեանն։ Քանզի լուար եթէ Համբարձաւ , զի մի կարծեսցես յայլոց Համբարձեալ զնա , ասէ՝ կացոյց զանձն կենդանի . զի թէ մեծագոյնն՝ որ է յարութիւնն՝ կացոյց զանձն, յոյժ մանաւանդ 'ի նուազն ։

ՆՓԲ . Աբդ եցոյց , զի եկաց յետ խաչին ոչ առանց նշանաց, այլ 'ի բազումս նշանս և 'ի բազումս արուեստս զոր արար 'ի քառասուն աւուրս . իբրու երևեր նոցա յամենայն նմանութիւն , երբեմն 'ի ծանօթս , երբեմն յանծանօթս . ըստ որում այլուր ասէ . « Աչք նոցա կալեալ էին , զի մի ծանիցեն զնա » . և ապա . « Եւ ծանօթս նոցա » ։

ՈՍԿ . Այլ ազգ . զի ոչ որպէս նախ քան զյարութիւն միշտ ընդ նոսա էր , այսպէս և յետոյ . զի ոչ ասէ զաւուրս քառասուն երևեալ նոցա , այլ յաւուրս քառասուն . զի յանկարծ իմն երևեալ՝ դարձեալ 'ի բաց թռուցեալ լինէր ։ Զի երևելովն հաստատեսցէ զնոսա առ յարութիւնն իւր , և 'ի բաց ծածկելովն 'ի նոցանէ մեծագոյնս քան զմարդոյ տացէ իմանալ զինքն . և այսոքիկ 'ի ներհակաց կազմեալ լինէր ։ Զի առ հաւատ յարութեանն բազում ինչ մարգկային պարտ էր լինել . իսկ վասն համբառնալոյն՝ աստուածային . զոր ըստ պատշաճի զերկաքանչիւրսն ուղղեալ 'ի բազում նշանս , « Երևելով , ասէ , նոցա » ։ Եւ ընդէր նոցա միայն երևէր և ոչ ամենեցուն . զի մի երևոյթ ինչ կարծիցեն զնա անդէտքն մեծի խորհրդոյն ։ Զի թէ նոքին իսկ աշակերտքն զայս կրելով՝ շջաւիմամբ ձեռաց և սեղանոյ կարօտացան , զիարդ ոչ և այլք նոյնպէս խուճապէին ։ Սմին վասն և նշանօք հաստատեր զերևումն , թէպէտ և ոչ գրեցաւ ամենայն ։

Ա . Այլ զի մի միայն օրք տեսին զնա յայնժամ՝ հաւատացեն ստոյգ գոլ զյարութիւնն , այլ և յետոյ ամենեքեան , վասն այսորիկ ոչ միայն ինքն արար նշանս , այլ և դաշակերտան զօրացոյց նշանօք ։ Զի ահա թէ ոչ յարեաւ Քրիստոս , այլ տակաւին կայ նոյն մե-

ռեալ, զիարդ սոքա անուամբ Նորա մեռեալս յարու-
ցանէին։ Տկնա զի առանց մեծամեծ նշանաց ոչ իսկ
բաղկանայր քրիստոնէութիւնս։ Իսկ այժմ ոչ ոք
կարէ ուրանալ զյայտնի եղեալ նշանսն Քրիստոսիւ.
նա զի թէ և ժխտիցէ, ընդ անձին իւրում մարտնչի։
Զի այս իսկ իցէ մեծ նշան, առանց նշանաց տիեզե-
րաց ամենայնի 'ի հաւատս Քրիստոսի գալ 'ի ձեռն
տասն աղքատ և անգիր արանց, որք ոչ 'ի ձեռն ընչից
կամ իմաստութիւք կամ զօրութեամբ ձկնորսքն իմաստ-
նոցն և հզօրացն յաղթեցին։ Տեսանես, զի որով ժբխ-
տելն կամիցի ոք, նովիմբ յաւէտ խոստովանի զաս-
տուածային յաղթող զօրութիւնն։

Արդ զաւուրս քառասուն եկաց յերկրի Քրիստոս
երևելով նոցա.զի յերկար ժամանակին տեսութեամբ
մի առ աչս տեսիլ գոլ կարծիցեն զնա։ Եւ զինչ ար-
դեօք առներ 'ի քառասուն աւուրսն երևելով նոցա։
«Ճառէր, ասէ, նոցա վասն արքայութեանն Աստուծոյ»։
Զայնմանէ Ճառէր, զոր ասէր և նախ քան զմեռա-
նելն իւր ոչ միայն բազում բանիւք՝ թէ գալոց է փա-
ռօք Հօր իւրոյ և նստցի յաթոռ փառաց իւրոց, այլ
և աչաց նոցա տայր տեսանել զայն 'ի թափօր։ Եւ
յոյժ վայելչաբարբանզի աշխատեալք և խռովեալք
էին աշակերտքն առ ժամայն եղելովքն. այսինքն չար-
չարանօքն և մահուամբ նորա։ Եւս և զի հանդեր-
ձեալք էին առ մեծամեծ վաստակս ելանել քարո-
զութեամբ, արքայութեանն յուսով զոր խոստանայր
նոցա կազդուրեալ սրտապնդէր զզարհուրեալ անձինս
նոցա։ Բայց և ոչ միայն երևմամբն 'ի քառասուն աւուրս
և ծանօթ Ճառիւք արքայութեանն շատացաւ մխի-
թարել զնոսա, այլ և սեղանով ևս, «Եւ հաղորդե-
լով ընդ նոսա հացիւ»։

ԵՓՐ. Այլ զի բնութեան ինչ պէտս ունելով այնու-
հետև կերակրոյ, այլ զիջանելով առ 'ի ստոյգ ցու-
ցումն յարութեանն։

ՈՍԿ. Այսն որոյ և զայս միշտ առաքեալքն հա-
ւատոյ նշանակ տային յարութեանն՝ թէ «Կերաք և
արբաք ընդ նմա յետ յարութեն նորա»։ Արդ ուտելովն
հաստատեալ զաշակերտսն 'ի հաւատ յարութեանն
և զուարճացուցեալ զնոսա արքայութեանն խոստ-

մամբ. և զի այն ինչ մեկնելոց էր 'ի նոցանէ, «Պատուէր տայր նոցա Յերուսաղէմէ մի մեկնել»։

ԵՓԻ.Վ։ Քանզի զարհուրեալք էին, նախ 'ի Գալիլեա եկան զնոսա, զի անկասկած եղեալք լուիցեն զասացեալսն։ Եւ իբրև լուան, քառասունն ահա ընդ նոսա դեգերելով աւուրս՝ պատուիրէր նոցա Յերուսաղէմէ մի մեկնել և մի ելանել 'ի քարոզութիւն նախ քան զընդունել Հոգւոյն։ Որպէս զվնուռս ոչ որ թողու խառնիլ 'ի Ճակատ նախ քան զսպառազինեալն, և ոչ զերիվար առանց կառավարի, այսպէս զնոսա առանց գալոյ Հոգւոյն ոչ թողու մոռանել 'ի հանդէս մարտի և յաղթահարիլ։ Եւ դարձեալ վասն բազմաց՝ որ հաւատալոց էին Յերուսաղէմէ, հարկ արար նոցա մնալ անդէն։ Եւ դարձեալ զի մի ասիցեն Հրեայքն թէ զծանօթս թողեալ, առ անծանօթսն ելին առատեալութեամբ կամ վասն փառաց, և սրտառուչ եղեալ 'ի բաց վազիցեն 'ի նոցանէ, սմին վասն նոցունց իսկ խաչողացն նախ տան զաւետիս յարութեանն յայնմ քաղաքի՝ ուր անիրաւ սպանանէին զՔրիստոս 'ի նոցանէ եղև. զի և արտաքոյսն ևս հեթանոսք դիւրաւ հաւանեսցին, տեսանելով զսպանողսն Քրիստոսի հաւատացեալս 'ի նա, և զխաչողսն քարոզս յարութեան նորա։

Լ.Զի զի մի ասիցեն աշակերտքն՝ թէ զիարդ կացցուք 'ի մէջ դաժան սպանողացն, և զի մի փախիցեն յետ համբառնալոյ նորա, լուծանէ զկասկածն խոստմամբ Հոգւոյն անդանօր նախ ընդհել նոցա. զի այսու յուսով իբր կապանօք իւիք պահեսցէ զնոսա Յերուսաղէմ, նստել անդ և սպասել խոստմանն աւետեացն Հօր, այնր որ 'ի ձեռն մարգարէին ասէ՝ թէ «Հեղից զՈգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն մարմնոյ»։

ՈՍԿ.«Ո՞ որ լուարուք յինէն»։ Զի ոչ այժմ ևեթ ասեմ նորոգ, ասէ, այլ զի աւասիկ յառաջ իսկ խոստացեալ եմ և առնեմ անստապէս։ Եւ երբ արդեօք լուան։ Յորժամ ասէր. «Լաւ է ձեզ զի ես երթայց, զի եկեսցէ միխիթարիչն։» «Ասացից ց Հայր և այլ միխիթարիչ տայէ ձեզ»։ Այս՝ ուր զի դեռ ևս էր գալոց Հոգին, զիարդ վաղագոյն երբեմն ասէր ցնորա՝ թէ առէք Հոգի սուրբ, վայելչապէս. զի նախ

մասամբ ինչ ընտելս զնոսա Հոգւոյն կաղմեսցէ և բա-
ւականս առ 'ի յընդունիլ. Զի թէ հրեշտակ երևեալ
Դանիէլի՝ յերկիւղն հանդերձեալ էր լուծանիլ
իսկոյն, յոյժ մանաւանդ սոքա յանտանելոյն այ կրե-
լին։ Արդ կամ զայս պարտ է ասել, կամ թէ նախ
զլինելոյն իբրև զեղեալ ասացորպէս զայն՝ թէ «Ետու
ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիձս»։

Բ. Յլ ընդէր ոչ մերձ գոլովն առնոսա դեռևս Քրիս-
տոսի՝ եկեալ լինէր Հոգին նախ քան զերթալն նորա.
վայելչապէս։ Զի նախ պարտ էր յերկինս ելանել
մերոյ բնութեանս և հաշտութեանսն աւարտել, և
ապա գալ Հոգւոյն և հաստատել զհաշտութիւնն։ Եւ
այլ ազգ ևս. զի մի ցուրտ կամ աւելորդ թուիցի նոցա
գալուստ Հոգւոյն, այլ աստուածային և շահաւէտ։
Զի թէ Յիսուսի մերձ գոլով եկեալ լինէր Հոգին, և
ապա սա 'ի բաց գնացեալ և նա մնացեալ, ոչ արդեօք
թուեցեալ լինէր գալն նորա իբրև մխիթարութեան
աշակերտացն։ Նախ զի ոչ ժուժէին մեկնել 'ի Քրիս-
տոսէ. երկրորդ զի տակաւին ի ինքեանս ունելով զնա՝
չէին տխրեալք։ Եւ ընդէր ոչ յետ գնալոյն նորա վաղ-
վաղակի եկեալ լինէր Հոգին, այլ յետուրթ կամ ինն
աւուր։ Վայելչապէս. զի սիրով պարտ էր անկն ունել
գալոյն նորա։ Սմին իբրև և Քրիստոս սպասել ասէր
խոստմանն, զի տքնեալք լեցին նոքա յաղօթս, և հայ-
ցեսցեն զգալն։ Սմին վասն ոչ ընդ երթալն նորա իսկոյն
գայր սա, այլ աւուրս ընդմիջէր, զի տխրեսցին և անձ-
կացին նորա գալոյն. զի սովոր եմք մանաւանդ 'ի
կարեաց աւուր յառնել առ Աստուած աղօթիւք. ըստ
որում և Մկրտչին Յովհաննէս 'ի պիտոյից ժամու
առաքէր զաշակերտսն իւր առ Յիսուս՝ իւր 'ի բանտի
գոլով, զի նոքա յօժարսրտիւ առ Յիսուս գիմեսցին։
Այսպէս և սոքա, զի փոքր ինչ միջոցաւն տրտմեալք՝
մեծապէս շահեսցին զուրախարար Հոգին։

Գ. Արդ եթէ նուազ ոք էր Հոգին, չէր իսկ բաւական
մխիթարել զտրտմեալսն աստուածապէս. ապա ընդ-
էր ասէր Քրիստոս՝ թէ «Լաւ է ձեզ երթալն իմ, զի
եկեսցէ մխիթարիչն»։ Սմին վասն և մեծագոյն իրք վար-
դապետութեանն Հոգւոյն պահեալ լինէին, զի մի նը-
ւազ ինչ գոլ քան զՔրիստոս լիցի կարծեցեալ։

Եւ յորժամ ասաց սպասել խոստմանն Հօր զոր լուայք յինէն, ածէ զնովին՝ թէ «Յովհաննէս մկրտեաց 'ի ջուր, այլ դուք մկրտիցիք Հոգւովն սրբով»։ Վասն զի եւ զայսպէս ասասանօր 'ի մէջ բերէ զՅովհաննէս. նախ զի հաւատարմացուսցէ զանկեալութիւն նոցա առ գալուստ Հոգւոյն. իբրու թէ ասէ ցնոսա, թէ պարտ է ընուլ մարգարէութեանն Յովհաննու վասն իմ՝ թէ նա մկրտեսցէ զձեզ Հոգւովն սրբով։ Թէպէտ և ոչ առնու 'ի մէջ զվկայութիւս զասացեալ նորա, այլ լոկ զնա բերէ 'ի մէջ առ 'ի յիշելութիւն բանի նորուն զՅիսուսէ։ Այլ և զայն ևս ցուցանէ յայտնի, թէ որչափ միջոց է ինքեանն և Յովհաննու, ոչ տակաւին պատրուակաւ այժմ, որպէս զայն՝ թէ «Փոքրիկն յարքայութեանն այ մեծ է քան զնա», այլ յայտնապէս։ Զի Յովհաննէս որ մեծն է 'ի ծնունդս կանանց, մկրտեաց 'ի ջուր. բայց դուք մկրտեսջիք Հոգւովն սրբով. ցուցեալ թէ այնչափ միջոց է ընդ իս և ընդ Յովհաննէս, որչափ ընդ ջուրն և ընդ Հոգին։

ԵՓՐ. ՈՍԿ. Եւ ոչ միայն զինքն անբաղդատապէս մեծ գոլ ասէ, այլ և զաշակերտսն ևս ցուցանէ մեծագոյնս լեալ քան զՅովհաննէս ասելովն՝ թէ դուք մկրտեսջիք, զի 'ի Հոգին սուրբ և նոքա հանդերձեսմ էին մկրտել և զայլս։ Եւ զի չասաց՝ թէ ես մկրտեմ զձեզ Հոգւով սրբով, այլ թէ մկրտիցիք. ուսուցանելով զմեզ խոնարհել։ Այլ զի ինքն էր որ մկրտէր զնոսա Հոգւովն, 'ի վկայութենէն Յովհաննու յայտ է. զի ասաց. «Նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով և հրով»։

Եւ զի 'ի վերնատանն ընկալան զՀոգին, յայտ է։ Արդ որպէս ասէ մկրտիցիք, ջրոյ ոչ գոլով 'ի վերնատանն։ Ասեմ՝ թէ զի վերհագոյն Հոգին է, որով և ջուրն ներգործէ. ըստ որում և ինքն օծեալ ասի, որ ոչ զգալի իւղով օծաւ, այլ Հոգւովն ուրախութեան։ Եւ այլ ազդ. զի ջրով վաղ ուրեմն էին մկրտեալք 'ի Յովհաննէ. զի թէ մաքսաւորք մկրտէին, յայժ առաւել սոքա՝ որոց առաջի կայր մկրտիլ և մկրտել Հոգւովն սրբով։ Զի թէպէտ առ մեզ համանգամայն ջրով և Հոգւով լինի մկրտիլ, այլ յայնժամ առ աշակերտսն յանջատեալ ժամանակի։

Յուցցուք և զայն ևս որպէս խոստացաքն՝ թէ ընդ

էր Ղուկաս յերկուս գիրս բաժանեաց զպատմութիւն իւր։ Եւ այս է. զի յաւետարանի անդ իւրում Ղուկաս պատմէ զայն ինչ՝ զոր Քրիստոս արար և ասաց. իսկ յառաքելոցն գործս ասա պատմէ զոր ինչ միւս միսիթարիչ Հոգին սուրբ արար և ասաց։ Ա՛յլ յայնժամ բազում ինչ և սա ինքն միսիթարիչս առնէր ընդ Քոյ, որպէս և այժմ ընդ սմա և Քս ներգործէ, որպէս և յայնժամ՝ մինչ շրջէրն ընդ մեզ. այլ յայնժամ Քս մարմնոյն, իսկ այժմ 'ի ձեռն առաքելոցն։ Զմանապէս և յայնժամ Հոգին 'ի կուսական եկն յարգանդ և զոնձեղէնն ստեղծ զմարմնոյն, իսկ այժմիկ յանձինս եկն առաքելոցն. և յայնժամ տեսլեամբ աղաւնոյ 'ի վերայ Քոյ, և այժմ տեսլեամբ հրոյ յառաքեալսն։ Զորոց զպատճառսն յառաջիկայսդ հատցուք։

Ա՛յլ զի նախ բան զչարչարանսն խոստացաւ զՀոգին, և այժմ դարձեալ կրկնէ դեռ ևս առանց իրացն արդեանց, զի մի կարծիցեն աշակերտքն լոկ խոստումն գոլ զՀոգին կամ առանց էութեան ներգործութիւն, ասէ. «Ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ»։ Ոչ յայսմանեաց թէ երբ, զի մի յանհոգս կալով լիցեն դանդաղկոտք. այլ թէ հուսկ՝ ասաց. և թէ երբ՝ ոչ յայսմանեաց, զի մի լքցին, այլ վստահութեամբ տքնեսցին վասն մնատուր ժամանակին։ Եւ զիարդ ապա սքանչասցուք թէ զօրն կատարածի ոչ յայսմանեաց, որ և զայսպիսի մերձաւորս օր ոչ կամեցաւ յայտնել։ Եւ յոյժ իրաւապէս, զի միշտ տքնեալ սպասեսցեն. զի ոչ օրք շնորհաց հասանէ առանց հոկման. և զի մի իսկոյն զպարգևսն աղաւաղեսցէ։ Ո՞չ լսես զասելն Եղիայի ցաշակերտսն. «Թէ տեսանիցես զիս վերացեալ, լեցի և քեզ»։ Եւ Քրիստոս հաւատս պահանջէր յեկեղոցն և ապա բժշկէր։ Եւ Խորայէլ 'ի հնումն ահիւ մեծաւ ձգնէր, և ապա ծովն բաժանէր։ Նա զի և որք զծիրանին ներկանեն, նախ ընդ արգն տոպպ անցուցանեն զընդունիլ կտաւն, զի մի իսկոյն 'ի բաց թքցէ զծաղկին գունոյն։ Մին վասն և Քրիստոս նախ հոգոյն էլից զաշակերտսն, և ապա 'ի պէնտէկոստէին եկն Հոգին սուրբ և էլից զխոստումն Քրիստոսի՝ թէ դուք մերտիցիք 'ի Հոգին սուրբ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Լայլ թերևս ասիցէ ոք, թէ ընդէ՞ր ոչ և մեք յայնմ աւուր իջման Հոգւոյն սրբոյ մկրտիմք։ Ասեմք, թէ նոյն շնորհք Հոգւոյն բաշխին հանապազ, յայնժամ յայտնի և այժմ 'ի ծածուկ. միայն պահօք նախ զանձինս պատրաստեսցուք։ Զի թէ ոք յիշխանութիւն ինչ հանդերձեալ է հասանել, նախ պատրաստէ զանձն յամենայն կեանս իւր, միայն զի հասանիցէ շնորհին։ Որո՞յ իրաց արժանաւորք իցեմք այսչափ պղերգութեամբ յարքայութիւնն դիմեալք. և նախ քան զառնուլն փութամք, և յետ առնլոյն պղերգանամք. վասն այնր յետոյ ուրեմն ծուլանամք, զի նախ քան զառնուլն ոչ հսկեցաք։ Վասն այսորիկ բազումք յետ առնլոյն վաղվաղակի յառաջին փսխածն դառնան, և դժուարին տանջանս զանձամբ կուտեն. զի յառաջին մեղացն ազատեալք մեծապէս զդատաստանն ընդդէմ ինքեանց սրեցին, ոչ զդատացեալք առաջնոց ցաւոցն բժշկութեամբք։ Վասն որոյ ասէր Քրիստոս անդամալուծին՝ թէ «Ահա ողջացար, այլ մի՛ և ս մեղանչէր»։

ՃԱՌ ԵՐԿՐՈՐԴ

ՈՍԿ. « Իսկ նոքա մատուցեալ հարցանէին զնա և ասէին. տէր, եթէ 'ի ժամանակի՞ սոսա յայսմիկ հաստատեսցանես զթագաւորութիւնն Իսրայէլի » ։ Թուի թէ մի և նոյն իցեն հարցուածս այս և որ 'ի լերինն անդ զաւուրն կատարածի ։ Այլ ստուգութեամբ քննեալ ոչ են մի. բայց ոչ ինչ արգելու ասել թէ յուսանելն զայս՝ կարծէին մարթ գոլ և զայն եւս նոցա գիտել ։ « Նոքա մատուցեալ հարցանէին զնա » ։ Յորժամ կամին աշակերտքն հարցանել ինչ զՔրիստոս, միաբան մատչին, զի բազմութեամբն թախանձիցեն զնա։ Եւ այս մտածութիւն պիտանացու է մեզ՝ վասն միաբանութեամբ յաղօթս կալ զօրաւոր գոլ համարել, որպէս և յայնժամ նոքա ։ Քանզի գիտէին քաջ. զի զոր կանխաւն ասաց՝ թէ « Ոչ ոք գիտէ զօրն և ոչ ժամն », վասն զնոսա յայնմ ինդրոյ 'ի բաց մերժելոյ էր ։ Եւ զի թէ հաւանեալք էին յայնժամ, ոչ դարձեալ հարցանէին ։ Այլ զի լուան՝ թէ Հոգի հանդերձեալ են առնուլ, ահա իբրև արժանաւորք գոլով այնու հետև քաջանան ուսանել և պատրաստ լինել ։ Քանզի ոչ ախորժէին մեալ 'ի տանջանս զանձինս իւրեանց. թէպէտ և առ ժամայն յանհոգս էին զՔրիստոս մատ ունելով. այլ վասն յետոյ ակնկալեաց փոքձութեանցն տագնապէին ։ Սմին վասն և ոչ յաղագս Հոգւոյն ինչ ասէին, և ոչ վասն վերագրածի աւուրն հարցանէին. այլ թէ 'ի ժամանակի՞ սոսա այժմիկ հաստատեսցանելոց իցես զթագաւորութիւնն Իսրայէլի ։ Եւ որ վասն յոյժ սաստիկ բաղձանացն ոչ ասացին թէ երբ կամ յոր ժամ այս լինիցի. այլ յոյժ պատուով փութային զլինելն ասելով թէ այժմիկ հաստատես զթագաւորութիւնն Իսրայէլի ։

Ինձ թուի թէ չգիտէին զինչ արդեօք իցէ թագաւորութիւնն, զի չէր Հոգին ուսուցեալ զնոսա. այլ գեռ ևս առ զգալիս էին յօժարեալք։ Զի թէպէտ Քրիստոս վասն արքայութեանն Աստուծոյ Ճառէր նոցա յաւուրսն քառասուն, այլ նոքա զարքայութենէն Իսրայէլի հարցանէին, կարծելով թագաւորել նմա Իսրայէլի ըստ օրինակին Դաւթի։ Տիկնա զի գիտէին զյոյժ հեզութիւն և զանոխակալութիւն նորա այնչափ, մինչ զի և յետ սպանանելոյն զնա 'ի նոցուն՝ վստահանան նմա այց առնելով թագաւորել Իսրայէլի։ Զոր և փութան իսկ վասն և ինքեանց ևս ընդ նմա 'ի փառս և 'ի հանգիստ վայելելոյ ըստ երբեմն հայցելոյ 'ի նմանէ որդւոցն Զեբեդեայ։

«Իսկ ցնոսա. ոչ է ձեզ գիտել զժամն և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան»։ Երևէին լաւագոյն գոլ այժմ աշակերտքն քան զառաջինն. վասն զի ահա մեծագոյն այժմ ունին կարծիս զնմանէ։ Սմին վասն և ըստ վերաբերեալ մնաց նոցա յայտնապէս խօսի. զի ոչ ասէ և այժմ, թէ և ոչ Որդի գիտէ զօրն, այլ թէ չէ ձեզ գիտել զժամն և զժամանակս։ Եւ դու տես, զի թէպէտ և նոքա ոչ քաջ գիտէին զորինչ հարցինն՝ զթագաւորութիւն Իսրայէլի, այլ նա ոչ միայն զայն զոր ըստ կարծեաց մնաց իւրեանց հարցին, այլ և զնաև ժամանակաց խնդիրս 'ի բաց բառնայ յամենայն դարուց, բաց արձակ դնելով թէ չէ ձեզ գիտել զժամն և զժամանակս։

ԵՓՐ. Եւ զայս այնքան պնդութեամբ, զի և զօրս զայս վերանալոյ իւրոյ, զոր և աչօք իւրեանց տեսին, ոչ կամեցաւ յայտնել նոցա։

ՈՍԿ. Այլ հիացիր, զի վասն աւուրս գալստեան Հոգւոյն զոր ոչ հարցին, թէպէտ և ոչ ստուգիւ, սակայն թէ մերձ է՝ յայտ արար 'ի միխիթարութիւն և 'ի քաջալերութիւն նոցա. և վասն աւուրն զոր հարցին, 'ի բաց մերժեալ հեռացոյց։ Ընդէր. միթէ մեծագոյն ինչ էր ուսումն աւուրն քան զոր ուսեալ էին. ոչ. այլ յոյժ արուպք էին և վնասիչք, և մանաւանդ ուսեալքն և գիտացեալքն մեծագոյնք և առհաւատալ դժուարինք։ Զի ասա ինձ. հելլենացին

վասն որոյ թերահաւատէ՝ թէ կատարած գոյ լինելոց, թէ Աստուած մարդ եղեալ և 'ի կուսէ ծնեալ, և թէ Աստուած որդի ունի աթոռակից անժամանակ։ Զինչ մեծ քան զմարմնոյ նստիլ և 'ի զուարթնոց երկրպագիլ։ Եւ ապաքէն ուսան ոչքա զայս ամենայն, և թէ գալոց է դատել զաշխարհս արդարութեամբ։ Ուսան զոր ինչ նախ է քան զաշխարհս։ որպէս յայտ առնէ Մովսէս և Պաւղոս, զոր ոչ էմարթ մարդոյ խօսել։ Մի թէ չիցէ՞ մեծագոյն զսկիզբն գիտել զելիցս զոր սոքա գիտացին՝ քան զկատարածն։ այո և կարի իսկ քաջ։ և ևս բիւրապատիկս քան զայս, զի 'ի բազում արուեստս երևելով Յիսուս ուսոյց զնոսա։ Աւդ զի՞նչ մեծ է, զայսոսիկ ուսանելն, թէ զայն՝ թէ ո՞ր թագաւորեսցէ կամ երբ։

Այլ զբարուրս ծածկելոյն զուգաձայն դնէ և այժմ, որպէս յայնժամ առ առաջին հարցումն դիւրագոյն պատասխանի, թէ Հայր եդ յիւրում իշխանութեան։ Եւ ահա մի իշխանութիւն է քո և Հօր։ զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս, նոյնպէս և Որդի։ որ մեծ է քան զգիտելն զօրն։ արդ ընդէր ծածկեաս 'ի մէջն։ Այլ զի մի այսպիսի ինչ ասիցեն, տես զինչ առնէ։ Որպէս յայնժամ՝ 'ի հարցանելն զկատարածէն հեռացոյց զնոսա 'ի կարծելոյն զերծանել 'ի վշտաց, և արկ զնոսա յահ և 'ի տագնապ՝ թէ «Եւ զձեզ իսկ մատնեսցեն տանջել յատեանս», նմանապէս և այժմ այլ յոյժ մեղմով և հանդարտագոյն, զի փոքր ինչ յետոյ մեկնելոց էր 'ի նոցանէ։

Այլ զի մի կարծիցեն անարգիլ 'ի չլուծանելն զիրն դիրն կամ զարհուրեսցին ընդ դուշակել վշտացն, ասաց զտրամականն յայտնի թէ չարչարելոց են վասն նորա։ այլ իմաստութեամբ ինն ծածկեաց։ և ոչ ըստ հարցմանն եւ զպատասխանին, որ է գործ վարդապետի, այլ զոգտակարն։ առ 'ի գիտել և զլինելոցն 'ի նոսա վշտացն, կանխեաց ասաց, զի մի լքանիցին 'ի պատահելն։ զի դեռ տկարագոյնք էին։ Ասասց թէ գնամ ես, զի մի ցաւագնեսցին։ այլ առ վայր մի քրքրեաց զմիտս նոցա խոստմամբ Հոգւոյն ասելով։ «Այլ առջիք զօրութիւն 'ի հասանել Հոգւոյն սրբոյ 'ի վերայ ձեր»։

Այլ ապա զսարսռելի զվտանգսն խաղաղէ, զոր կրելոց էին, ախորժակասս իմն Ճառելով թէ «Եղիջիք ինձ վկայք Յերուսաղէմ և յամենայն հրէաստանի և 'ի Սամարիա և մինչև 'ի ծագս երկրի»։ Դրեթէ այսպէս ասիցէ, թէ զմի երկնչիք կամ զժամանակս խնդրիք գիտել, որ չէն ինչ ձեզ յօգուտ. խնդացեք և ուրախ լերուք ընդ մեծամեծ պարգևսն և փառսն՝ որ գալոց են ձեզ։

ԵՓՐ. «Զի առջիք զօրութիւն և քաջալերութիւն 'ի գալ Հոգւոյն 'ի ձեզ». և ելջիք 'ի վերնատանէն և լինիջիք յայսմիք տիեզերաց. վկայք յարութեան իմոյ, և որոց լուայքն և տեսէքն յինէն ոչ միայն Յերուսաղէմ քաղաք խաչողացն, ուր զարհուրեալ իսկ էք, այլ և առ շամրտացիս և յամարզս։

ՈՍԿ. Այլ վասն զի նախկին փակեաց ընդդէմ նոցա զմոռանելոյ նոցա առ շամրտացիս կամ առ հեթանոսս, համարձակէ նոցա այժմ՝ թէ «Մինչև 'ի ծագս երկրի»։ Լուեալ զայն թէ չարաչարս տանջեսցին և սպանցին զձեզ, և զի մի գարձեալ այլ ինչ հարցանիցէն, «Զայս իբրև ասաց՝ մինչդեռ հայէին նոքա, վերացաւ». և յոյժ վայելչաբար։ Զի որպէս մեք տեսանելով զմանուկ լացեալ, որ ստէպ խնդրիցէ ինչ, որ ոչ իւր յօգուտ՝ թաքուցանեմք, ցուցանելով զձեռս դատարկ, ասեմք թէ ոչ ունիմք, այսպէս և նա զառաքեալսն արար։ Խնդրէին ուսանել զոր ոչ էր 'ի Ճահ. թաքոյց ասելով թէ Հայր եդ յիւրում իշխանութեան։ Այլ որպէս մանուկն տակաւին կակաղի լալով գիտելով զի խաբեցաւ, և մեք այլ ինչ ընդ այնր զոր խնդրէ՝ տամք, և հեռացուցանելով զնա յիւրն յօժարութենէ գովեմք զայս ինչքան զայն զոր ինքն խնդրէ, և տուեալ նմա զայն 'ի բաց փախչիմք ասելով կոչէ զիս այս անուն, այսպէս արար և Քն. խոստացաւ նոցա ընդ անօգուտ խնդրոյն բիւր ըղձալի պարգև զՀոգին սուրբ։

«Այլ մինչդեռ հայէին նոքա, վերացաւ»։ Իսկ ընդէր ոչ տեսանելով նոցա յարեաւ, այլ տեսանելով նոցա համբարձաւ։ Վասն զի ոչ զօրէ տեսութիւս այս ամենայնմն վասն զյարութենն զկատարածն տեսին, իսկ զսկիզբն ոչ ևս. և զհամբառնալոյն զսկիզբն, այլ ոչ

զկատարածն։ Ա՛յլ զսկիզբն յարութեն թէպէտ և ոչ տեսին, յայտնի լիներ յերևմանէն տեառն կենդանի և 'ի բարբառոյն և 'ի թափուր ճանալոյ զերեզմանին. իսկ զկատարած վերանալոյն յետ այնորիկ 'ի բանից հրեշտակացն էր ուսանել. զի ոչ կարէին աչքս այս ձկտել 'ի բարձրութիս՝ ուր էին։ Տեսանէս, զի մասն ինչ հոգւով և մասն ինչ տեսութիւն աչաց անօրինի. սմին վասն և տեսանելով նոցա վերացաւ մինչ կարի յոյժ արթունք էին, միտ դնելով հարկաւոր ասացելոցն. զի մի ասիցեն թէ բնաւ իսկ չյարեաւ։

ԵԹԷ. Ա՛յլ որպէս Եղիա տեսանելումն Եղիշէի վերացաւ, զի մի ասիցեն թէ Յեզաբէլ սպան զնա, զի և նշանքն որ 'ի ձեռն Եղիշէի հաւատարիմ առնէ զվերանալն նորա, նոյնպէս և նշանքն որ 'ի ձեռն առաքելոցն՝ հաւատարիմ առնէ զվերանալն տեառն. զի մի ասիցեն թէ գողացան զնա։ « Եւ ամենն ծածկեաց զնա յաչաց նոցա ». յայտ է ներքոյ անցանելով, զի մի կարի աշխատեսցին առաքեալքն 'ի հայելն զհետ նորա։

ՈՍԿ. Ա՛ռդ ոչ կառք հրեղէնք յափշտակեցին զնա որպէս զԵղիա, զի մի թուեսցի յայլոց համբարձեալ որպէս զնա, այլ ամպ՝ որ նշանակ է աստուածային զօրութեանն։ Եւ զի այլ ինչ զօրութիւն 'ի վերայ ամպոյ ոչ երևի, լուր մարգարէիցն. « Եդ յամպս զդէնացս իւր ». և Աստուած նստեալ յամպ թէթև. և Մովսէս յամպն եմուտ, որ չէր վասն նորա, այլ զՅա՛ծ ցուցանէր։ Սմին վասն ամպով վերանալն Յիսուսի ցուցանէր զնա տեր և իշխան գոլ երկնից, զի նշանակ էր ամպն երկնից. զի որպէս զԹագաւորն ձեռն և թագն յայտնէ, և զՅիսուս կառքն ճա՛ծային։

Լ։ զի մի առ Ամիել սրտից իւրեանց ախտասցին աշակերտքն զեղիսէին՝ որ եհերձ զվերարկուն իւր, մինչդեռ հայէին ընդ երկինս երթալոյնորա հիացեալք թէ որպիսի հրաշից արժանացան տեսլեան, « Ահա արք երկու երևեցան նոցա ». զի յերկուց վկայիցն հաստատուն լիցի ասացեալն 'ի նոցանէ։ « Ի հանդերձս սպիտակս » որպէս առ զերեզմանին. և պայծառ ձեռն ցուցաներ զնոսա՝ թէ հրեշտակք են. և մարդակերպ յանկարծակի երևեցան, զի մի զնոսա խուսվեցուսցեն։ « Արք և ասացին. արք գալիլիացիք, զի՞ կայք

հայեցեալ ընդ երկինս։ Ծառաթակասս առնեն զբանն հայրենի դառաւելն կոչմամբ. զի և յայլսն ևս հառաստարիմք երևեսցին. և ասորժելիս և ողբակասս առնասս բարբառելն. «Զի կայք պշուցեալ ընդ յերկինս»։ Ոչ թողացուցին զնոսա այնպէս 'ի վեր հայելով մնալ, այլ աւետեաց բանիւն զնոսա յինքեանս դարձուցին. և ցուցական ձեռնին զնեն զասելն. «Եկայք Յիսուս այնչափ սքանչելոցն հրաշագործող, որ վերացաւն 'ի ձէնջ յերկինս, այսպէս եկեսցէ դարձեալ»։ Ի միտ առ զասելն՝ որ վերացաւ 'ի ձէնջ յերկինս. միթէ չուանեին այս առաքեալքն, կամ չտեսանէին զվերանալն Յիսուսի. և զիարդ ասպա ասաց աւետարանիչն նախ՝ թէ տեսանելով նոցա վերացաւ Յիսուս։ Եկայք այդպէս է։ Եկայլ վասն զի յոյժ մեծ էր բացատն քան զերկուսին աչաց նոցա, զի մի վասն ոչ ևս կարելոյն տեսանել զնա յանչափ բարձունսն՝ կարծիցեն թէ մինչև յերկինս էլ որպէս զեղիա՝ որ ծառայ էր, կամ թէ բնաւ իսկ ոչ վերացաւ յերկինս, որք և 'ի լսելն զերթալն՝ տարակուսեալ ասէին՝ տէր յո երթաս, այլ զի գիտասցին թէ 'ի վերոյ իսկ էլ քան զերկինս՝ զի Որդի էր, ասացին թէ վերացաւ 'ի ձէնջ յերկինս։

Եւ ընդէր ինքն ոչ աւասոյց նոցա զայս, այլ հրեշտակքն։ Ճառեաց զայս և ինքն նախ՝ թէ «Տեսանիցէք զորդի մարդոյ զի ելանիցէ ուր էր զառաջինն»։ Եկայլ կամ 'ի միտ ոչ պահէին, կամ որպէս 'ի ծննդեանն հրեշտակք եղեն աւետաւորք առ Մարիամ, Յովսէփ և առ Հովիւսն, և 'ի յարութեանն առ խնկաբերսն, լուցին և ասա. զի թէպէտ 'ի մարգարէիցն բազմագիմ մասամբք կանխաձայնեալ էին բնաւին իրքն Յիսուսի, այլ վասն յոյժ հատատութեանն և հրեշտակք վկայէին։ Սմին վասն և հանդերձ մարգարէիքն և հրեշտակք յարութեանն և ինքն Քրիստոս եղև վկայ. զի քան զամ ինչ և քան զծնունդն իսկ մեծ էր՝ զանձն իւր 'ի մեռելոց յարուցանելն. զի յայն երից վկայիցն հաստատեսցի։

Եւ ոչ ասացին՝ թէ այս Յիսուս որ համբարձաւն 'ի ձէնջ. զի համբարձաւն բատմութիւն իրաց է. որպէս Եղեկիել ասէ՝ թէ «Երթայի համբարձեալ 'ի դիմել Հոգւոյն ճշ, որ վերացոյց զիս»։ Սմին վասն ոչ ասացին

համբարձաւ, այլ վերացաւ։ Եւ թէ ասիցես, իսկ ընդ-
ելը ապա ասաց աւետարանիչն՝ թէ ամպն յափշտա-
կեաց զնա՝ ասեմ, զի ինքն ել յամպն։ Այլ թէպէտ
սփոփեաց զնոսա ասելն՝ թէ յերկինս ել, այլ զի ինչ
քեանք ոչ կարէին երթալ զհետ նորա, զի մի անձկով
սիրոյն 'ի սպառ տոչորեսցին, փոքր ինչ ոգի փչեցին
այսու բանիւ զոր յոյժ փափաքէին լսել, թէ «Նոյն-
պէս եկեսցէ դարձեալ»։ Իբրու ասել՝ թէ յերկինս
է, այսուհետև ակն կալէք գալոյ նորա։ Եւ զտիրական
պատիւն ևս նշանակէն, ոչ առաքեսցի ասելով, այլ
«եկեսցէ, զոր օրինակ տեսէք զնա երթալ յերկինս»։
Այսինքն թէ հանդերձ մարմնովն եկեսցէ և ամպով,
թէպէտ և փառօք իւրովք և Հօր. զի այսու և զդա-
տաստանն ակնարկեսցէն և զյարութիւն ստուգեսս-
ցէն։ Զի թէ մարմնովն համբարձաւ և նովաւ գալոց
է, յայտ է զի 'ի դատել. ապա ուրեմն նովին մարմնովն
և յարեաւ։

ԹՈՒՐՈՑԱԿԱՆ

Արդ որ ոգեցաւագոյն է՝ զի ոչ ետես զնա, լսելով ահա
թէ եկեսցէ դարձեալ, վարս սրբականս ցուցցէ, և
հաւատեաւ տեսցէ զնա։ Զի յոյժ մեծագոյն փառօք
և սքանչելի տեսլեամբ յերկնից ի՛ջանէ։ Այլ այս իսկ
զյարութիւնն հաւատարիմ առնէ. զի թէ մարմնովն
համբարձաւ, յոյժ մանաւանդ մարմնովն յարեաւ։
Ո՞ւր են որ յաղագս յարութեանն թերահաւատեն էլ
լենացիքն. նա և արարչութեանն արարածոց ոչ հաւա-
տան յոչէից առնել՝ այ զգոյսս, յամենայն լինին՝ ոչ գի-
տելով զզօրութիւն այ. զի որ յիմարն է, յիմարագոյն
խօսեսցի։ Ամաչեցէք զայդ ասելով թէ յէից առնէ
ած. զի թէ յէից առնէ, իւր զանազանի 'ի մարդկանէ։
Այլ ուստի է, ասես, չար՝ թէ ոչ յէէ արար ած ըզ-
գոյսս։ Ոչ է չար յայ. թէպէտ և յոչէէ արար զգոյսս։
Մի զկրինապատիկ չարեօք անկանիր. զի չար ոչ է էու-
թիւն, այլ բարւոյ յօժարութեան պղծութիւն։

ՃԱՌ ԵՐՐՈՐԴ

«Յաջնժամ դարձան յերուսաղէմ յանուանեալ լեռնէն ձիթենեաց»։ Երբ. յորժամ լուան թէ դարձեալ գալոց է. զի թերևս ոչ յանձն առնուին թէ չէր նոցա միւսանգամ գալուստ խոստացեալ։ «Որ է մերձ յերուսաղէմ ըստ շաբաթու Ճանապարհին»։ Ինձ թուի ըստ Հրէից'ի շաբաթու եղեալ իրացս, զի այլ և այլ շաբաթք պաշտեցեալ լինէր առ նոսա. սմին վասն նշանակէ զմիջոցն 'ի լեռնէն ձիթենեաց, որ է մերձ յերուսաղէմ ըստ շաբաթու Ճանապարհին։ Յայտ իմն կամի առնել՝ թէ չէր օրէն Հրէից երկար Ճանապարհ գնալ 'ի շաբաթու. կամ զի ցուցցէ զառաքեալսն վասն երկիւղի Հրէիցն դեռևս ոչ իշխել հեռագոյնս մեկնել. կամ թէ լոկ յիշէ զտեղին. զի որպէս ասի բան՝ թէ 'ի ժամանակէ անտի դարձին Հրէից 'ի Բաբիլոնէ վասն նեղելոյ 'ի շրջակայ ազգացն եդին վասն զգուշութեան այնչափ Ճանապարհ ելանել ըստ քաղաքն 'ի շաբաթու, զի մի դաւեսցին 'ի շաբաթս որպէս զմակաբայեցիսն։

«Եւ յորժամ մտին յերուսաղէմ, որպէս պատուէր առին յերուսաղէմ մի մեկնել, ելին 'ի վերնատունն՝ ուր վանքն իսկ էին»։ Ուրեմն յայտ է զի յԵմ ազանէին յետ յարութեն. այլ զի ոչ համարձակէին շրջել, ելին 'ի վերնատունն, զի մի ըմբռնեսցին։ Բայց զի մի ընդդէմ միմեանց թուիցին աստ ասելն՝ թէ ելին 'ի վերնատունն, և յաւետարանին՝ թէ էին հանապազ 'ի տաճարին, իմանալ պիտոյ է, զի զհանապազորդ աղօթսն 'ի տաճարին կատարելով, 'ի ժամ հանգստեան կամ կերակրոյ 'ի վերնատունն ելանէին։

Այլ ասիցէ օր, թէ և 'ի տաճարին զիարդ ոչ կասկածէին 'ի դաժան Հրէից անտի։ Ասեմ, թէ զի դեռևս ընդ Հրեայսն ինչ ոչ վիճէին կամ զՔրիստոս քարոզէին. այլ մտեալ լուիկ միայն զաղօթսն կատարէին.

«Պետրոս իսկ և Յակոբոս, Յովհաննէս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս, Բարդողոմէոս և Մատթէոս, Յակոբոս Ալփեայ և Շմաւոն նախանձայոյզ և Յուդա յակոբեան։

Բ. զՇմաւոն նախանձայոյզս Մատթէոս և Մարկոս Սիմոն կանանչի ասեն. Թերևս երբայեցերէն բառիւ նախանձայոյզ ասի. և ստուգի 'ի բազմաց, զի որդի է սա Յովսէփայ ՝ծածահօրն և եղբայր նոցա՝։ Եւ սա Յուդայ յակոբեանս եղբայր սորին Սիմոնի և որդի Յովսէփայ, որ և սա եղբայր նոցա։ Սա ինքն գրեաց զԹուղթն կաթողիկէայ, որ յիւր անուն կոչի Թուղթ Յուդայի. յորում 'ի սկզբանն խոնարհութիւն փոխանակ եղբայր նոցա զինքն ասելոյ, եղբայր Յակոբայ գրէ։ Եւ յայտ է ահա, զի սա ինքն է նա, զոր Մատթէոս և Մարկոս Ղեբէոս և Թադէոս անուանեն. և ոչ թէ զայլ օրնոքա և զայլ որ Ղուկաս նշանակեն, այլ զմի և զնոյն անձն այլ և այլ անուամբ կոչեն. և չէ զարմանք, զի յերբայեցիսն յաճախ գոյր երկանուն և բազմանուն, ուստի և տարաձայնութիւն աւետարանչացն 'ի Թադէոս և 'ի Յուդա յակոբեան անուամբ միայն է և ոչ անձամբք. զի յառաջնոյ ընտրելոցն 'ի Քրիստոսէ ոչ որ կոչեաւ բաց 'ի Յուդայէ մանանչէ։ Ստոյգ է ապա և միւս Թադէոսն որ առ Աբգարու [2] յԵօթանասնիցն գոլ, զոր վկայեն և գերեզմանք նոցա. զի Թադէոս որ յԵօթանասնիցն՝ կատարեցաւ 'ի Հայս 'ի գաւառն Արտազու. իսկ Յուդա յակոբեան՝ այն որ ըստ Մատթէոսի և Մարկոսի Թադէոս յերկոտասանիցն՝ կատարեցաւ 'ի յՈրմի Հայոց։ Այսպէս ստուգի համաձայնութիւն աւետարանչացն յանուանս առաքելոցն։

ՈՍԿ. Օ որ և Ղուկաս որպէս յաւետարանին՝ բարիոք յիշէ և աստ զաշակերտսն Քրիստոսի. զի ոմն մանոնեաց և միւսն ուրացաւ և այլք թերահաւատեցին, ցուցանէ աստ թէ բաց 'ի միոյն ամենեքեան ողջ են։ Այլ տես զի և 'ի կարգս դասու անուանց նոցա

[1] Այսպէս խօսէին երբեմն հին հայք. բայց յետոյ սոսոյգ տեսութեամբ ցուցաւ, զի եղբարք տեառն կոչին որդիք Կղեովպայ եղբօր պրբոյն Յովսէփայ. զորմէ տեսցի և 'ի վարս որդոց. հատ. Ի. էջ 364։

[2] Միւսն առ Աբգար լուգա . . . պարգի համանուանութեան։

խրատեմ զմեզ Հոգւոյն 'ի սէր միաբանութեան. և սմին վասն երկու երկու լծակից զնոսա շաղկապաւն. որգոն, Պետրոս և Յակոբոս։ Եւ զի մի վերջին մեռասցեն բորդն Յուդա յակոբեանն անընկեր մնասցէ, խառնեմ զնա ընդ երկուսն և, լաւ գիտելով զերկուսն և անխզելի զերիսն. զոր և հետագայս զայսոսիկ հաստատել։

ՈՍԿ. «Սոքա ամենեքին, ասէ, հանապազորդեալք միաբան յաղօթս»։ Տես զնոսա տչնեալս հանապազ յերկոսին՝ յաղօթս և 'ի ժուժկալութիւն իբր միով հոգւով. զի հանապազորդելն զժուժկալելն ցուցանէ. իսկ աղօթքն մեծ զէն է ընդդէմ փորձութեանց։ Սոքօք այժմ վաւին իբր նախկին խրատեալք չմոռանել 'ի փորձութիւն. նա զի և երկիւղն Հրէից ածէր զնոսա յայսոսիկ։ «Հանդերձ կանանմբք» ասէ։ Ցայտ է թէ օրք շրջէին ընդ Յիսուսի և պաշտէին զնա։ «Եւ Մարեմաւ մարբն Յիսուսի և եղբարքք նորա»։ Մայրն Յիսուսի առ խուչին սիրեցելոյ աշակերտին յանձնեցաւ 'ի Յիսուսէ. զոր և առ իւր իսկ առ աշակերտն։ Այլ ասա 'ի միասին ժողովի զմայրն Յիսուսի և զեղբարսն և 'ի սպասել Հոգւոյն. զի և եղբարքն երբեմն էին թերահաւատեալք, զի այժմ ցուցցի զնոսա հաւատացեալս. իսկ զՅովսէփ ոչ այժմ յիշէ, զի վախճանեալ էր. զի որպէս թերահաւատ մնայր, որ նախ քան զամենեսեան ծանեաւ զնա։

«Յաւուրսն յայսոսիկ յարուցեալ Պետրոս 'ի մէջ եղբարցն՝ ասէ»։ Վայելչապէս. Պետրոս իբրև զնա-խապատուեալ 'ի Քրիստոսէ միշտ նախ սկսանի զբանն. և այժմ իբրև զքերմ սիրող Քրիստոսի, յորմէ և զՀօտն իսկ յանձնեցաւ հովուել, զաւաջակայիցն հոգայ։ Վասն զի ցնա իսկ ասաց տէր. «Դու երբեմն դարձցիս և հաստատեացես զեղբարս քո»։ Եւ ոչ օք այժմ յայլոցն նախանձի ընդ սա որպէս երբեմն, այլ այժմ համամիտք են. զի չմնաց և ոչ մի ինչ առ նոսա կենցաղական։ «Եւ էր անդ բազմութիւն անուանց իբրև հարիւր և քսանից»։ Ցայտ է զի էութանասունքն և այլք ոմանք յաշակերտացն, յրոց և Յովսէփ և Մատաթիաս, այլ և 'ի կանանց ևս յոլովք։

«Գրքի եղբարք, ասէ, պարտ էր կատարել զբոյն»։ Վայելչապէս եղբարս ասէ. զի թէ տէրն եղբարս կոչեաց զնոսա, «Աստուածք, ասէ, եղբարց իմոց», յոյժ մանաւանդ սա զմիաբանեալսն հրեշտակական կարգաւորութեամբ. ուր ոչ արու և ոչ էգ, այլ ամենեքեան գօտեսնդեալք 'ի ժուժկալութեան։ Այսպէս և այժմկամի Քրիստոս լինել զեկեղեցիս. զի ոչ զք անդ յաղագս տան կամ զոյից զբաղէր։ Այսչափ բարի են նեղութիւնք և փորձութիւնք, զի այն իսկ զնոսա ընտիրս գործէր, և սիրով ընդ միմիանս կապէր հարատութեամբ '. առ որս ասէ՝ թէ «Պարտ էր կատարել գրոյն զոր յառաջ ասաց Հոգին սուրբ բերանովն Դաւթի վասն Յուդայի»։ Մխիթարէ զնոսա կանխասացութեամբ Հուսոյն վասն անկմանն Յուդայի՝ որ ոչ փոքր տարակուսանս եթող քաղմաց, և այժմ ևս, թող թէ յայնժամ։ Սմին վասն որպէս Քրիստոս առնէր 'ի գրոց պատմելով, նմանապէս և սա. զի ցուցցէ թէ չէղև ինչ նոր, այլ զի գիրն լցցէ, զոր ոչ Դաւիթ՝ այլ Հոգին սուրբ ասաց բերանով Դաւթի։ Նա և 'ի ձեռն Դաւթի ասէն ոչ փոքր մխիթարութիւն բերէր լսողացն։ «Վասն Յուդայի, ասէ, որ եղև առաջնորդ սնեալեացն Յիսուսի». այսինքն տարող դահճացն 'ի պարտեզ անգր, ուր կալան զՅիսուս։ Բայց զզոյշ լեր վասն կանխասացութեան Հուսոյն. զի ոչ թէ զի ասաց Հոգին՝ արար Յուդա զայս, այլ զի ծածկելով ոչ ծածկեցաւ 'ի Հուսոյն զոր հանդերձեալ էր առնել Յուդա։

ՈՍԿ. Բայց դու տես զհեղութիւն սորա. զի ոչ անարգելով ձաղեաց, և ոչ ասաց՝ պղծոյն և անամօթ լրբին. այլ պարզ [2] լոկաբար զբուցատրէ զեղեալսն. «Վասն Յուդայի» ասէ։ Եւ ոչ ասէ՝ որ մատնեացն, այլ յայլս ձեպի փոխել զամբաստանութիւնն. «Եղև առաջնորդ եղև ուսնելեացն Յսի» ասէ. սակայն վճարեալն 'ի նմանէ չարութիւնն ուժգնապէս շուրջ զնովաւ գնէ զվնասն առաջնորդ եղելոյն ըմբռնողացն զՅիսուս։ Եւ ոչ յիշէ զոր կանխաւ ասաց Քրիստոս բազումանգամ զնմանէ, և ոչ զայն թէ յորում վայ-

1 Միան հարազատաբար։ 2 Միան ըստ դարձեալ։

բի ասաց Դաւիթ վասն մատնելոյն զնա Յուդայի. իբր այն՝ թէ « Բերան մեղաւորի բացաւ 'ի վերայ իմ ». այլ լոկ զհատուցումն պատուհասին յիշէ 'ի մխիթարութիւն լսողացն. այսինքն զի եղելովք պատ- ժոքն Յուդայի և զառաջիկայսն հարկաւոր լինելոյ ցուցցէ. յայտ է զլրումն երկոտասան թուոյն, առ որ փութայ առնել զբանն։

ԵՓՐ. « Օ՛ի 'ի թիւս մեր էր, ասէ, ընդ մեզ ». ՕՎ. յայտ է զի Յուդա։ Եցոյց զտեառն մարդասիրութիւն՝ որ ընտրեաց զնա, իբրու զիտէր զնա։ « Ի թիւս մեր էր, ասէ, և հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այ- սորիկ »։ Վիճակ կոչէ զառաքելութիւնն, ցուցանել լով թէ յոյ շնորհացն ունին զամենայն։ Որպէս զզեւատացիսն յայնժամ՝ իւր ինքեան բաժին ընտրեաց ՅԱԾ, և ոչ ետ նոցա վիճակ ընդ ցեղսն Խորայէլի։

ՈՍԿ. Եւ յամէ Պետրոս 'ի բանս որ վասն մատնոր- չին. զի վարձն իսկ մատնութեանն եղև քարոզ պա- տուհասին։ Զի թէպէտ առ կացոյց զնա տեր մեր քսակակալ, այլ նա ժլատութեամբ գողութեան իւրոյ ոչ յագեցաւ. այլ « Ստացաւ գեօղ 'ի վարձուց անիրաւութեան »։ Եւ ահա նա ոչ ստացաւ զգեօղն. այլ և զարծաթն ևս զանիրաւ՝ զոր առ ընկէց առ քա- հանայսն, և նոքա գնեցին զգեօղն։ Այլ յիրաւի նո- բա կոչի ադարակն. զի որոյ գինքն էին, նա իսկ իցէ տեր մեծի աւերակին։ Ասէ ապա և զդատաստանն զոր կրեաց։ « Ուռուցեալ հերձաւ, ասէ, ընդ մէջ և հեղաւ ամենայն փոր նորա »։ Բարւոքք ոչ զմնասն, այլ զպատուհասն ձառէ 'ի մխիթարութիւն զար- հուրելոցն 'ի Հրէիցն։ Այլ զի անկաւ 'ի վերայ եր- կրի և հերձաւ և վայթեցաւ փոր նորա, նման է այս պէս. զի զգրունսն փակեաց ընդդէմ իւր նախ քան զխեղդելն զանձն, և կաց մնաց 'ի կախաղանի անդ զուրբաթն և զշաբաթն. իբրև ուռեաւ և ծանրա- ցաւ, հատաւ չուանն զորմէ կայր. անկաւ հերձաւ և վայթեցաւ։ Բայց հոտ նեխոյ բարդին և փորա- տուոյն ժողովէր զորդիսն Երուսաղէմի երթալ տեսա- նել զծանակասս նորա և զնշանն սոսկալի՝ որ եղև նմա կարապետ զեհենի հրոյն։

« Եւ այս յայտնի եղև, ասէ, ամենեցուն՝ որ բնա-

կեալ են յԵրուսաղէմ. մինչև կոչել գեղջն այնմիկ բաբբառումն իւրեանց ակեղդամա. այսինքն է գեօղ արեան »։ Եւ դարձ Հրեայքն կոչեցին գեղջն զանունս զայս. ոչ զի զանիրաւ գործն յայտնեսցեն զոր արարին ինքեանք, այլ վասն զՅուդաս հրապարակելոյ։ Եւ յայլ Պետրոս 'ի նոսա դարձուցանէ զանիրաւ գործն, որոյ և ինքեանք թշնամիքն վկայեն 'ի ձեռն անուան գեղջն. զի ասելն թէ իւրեանց բաբբառն՝ զայս իսկ յայտ առնէ։

Լաւ դու տես, զի Աստուծոյ տնօրէնութիւն էր յայտնել զանիրաւութիւն զմատնչին և զխաչողացն. զի իբրև զայս անիրաւութիւն ոչ ուրեք երբէք եղև. ամին վասն ոչ առժամայն պատահելոյն միայն եղև յայտնի, այլ և ամենեցուն յետոյ. զի թէպէտ ինքեանք ծածկել զիրսն փութային, հաչակեցին յաւէտ զձաղանսն. որպէս Կայիափա յակամայ մարգարէացաւ։ Ուրեմն Աստուած հարկեաց զնոսա երբայեցերէն կոչել գեղջն ակեղդամա՝ որ է գեօղ արեան. զի զհանդերձեալ չարիսն յայտնէր՝ որ հասանելոյ էր Հրէիցն, զի ոռոգելոյ էր Երուսաղէմ արեամբ խաչողացն։

Յուցանէ և զկանխասացութիւնն Քրիստոսի մասամբ վՀարեալ առ մատնիչն՝ թէ «Վայ մարդոյն այնմիկ. լաւ էր թէ չէր ծնեալ »։ Զոր ասելի էր առ Հրեայսն՝ թէ ով դուք, եղուկ էք դուք. զի թէ առաջնորդն ձեր Յուդա զայս կրեաց, յոյժ առաւել դուք։ Բայց ոչ ասաց ինչ յայսպիսեաց. այլ տեսեալ թէ զոր գնեցին 'ի գերեզմանս օտարաց, 'ի ՀԱՀ կոչի տեղին ակեղդամա յետ ելիցն 'ի գլուխ, այսինքն աւերմանէն զոր կրեաց Երուսաղէմ 'ի տիտոսեանցն. վասն որոյ գնելով ապա զպատշաՀՎՀուն ապարակին՝ ածէ 'ի մէջ զմարգարէն։ « Գրեալ է, ասէ, 'ի գիրս սաղմոսաց. այս է յորհնութիւնս Դաւթի. եղիցի բնակութիւն նորա աւերակ, և 'ի յարկս նորա ոչ ոք բնակեսցէ »։ Զայս ասաց վասն քաղաքին և տանն։ Վայելչապէս. զի զինչ աւերակագոյն քան զգերեզման. այլ աւերումն տանն յոր խեղդեցաւ մատնիչն, նախաքարոյ էր Հրէից վերջնոյ աւերածին։ Զի վերսիրանեանքն և տիտոսեանք զնոսա սրով և սովով մաշեալք՝

լինէր քաղաքն ըստ Հրէից վՀՌին գերեզման օտարաց, այսինքն պաշարողացն զինուորաց. զի գնոսա ոչ թողուին գնել 'ի շիրիմս, այլ անխաղ տային ընկենուլ. վկայէ քեզ Յովսէպոս առ այս։ Ապա զի մեծ իմն թուէր որ առաջին կայր, այսինքն ընուլ թուոյն, վկայութեամբ կնքէ. « Զկարգ նորա առցէ այլոմն ». յայտ է թէ զիշխանութիւն առաքելութեանն և գնոստացեալ տեղի արքայութեանն։

Իբրև ասաց զմարգարէին, ապա և զիւրն ևս գնէ. « Արդ պարտ է արանցս եկեղեցոյս ընդ մեզ յամենայն ժամանակս։ Եւ զի այնպէս մեծ էր հարին, զի և մարգարէն վկայէր ընդ երկոտասան թուոյն, ընդէր ապա զՔրիստոս ոչ աղաչեաց կարգել զոք 'ի տեղին Յուդայի։ Ասեմ. նախ զի այժմ Պետրոս լաւագոյն ոմն էրևի գոլ քան յայնժամ, զի յայնժամ՝ առ այլ ինչ պարապէր. երկրորդ զի դեռ ևս ընդ նոսա իսկ էր Քրիստոս։ Դարձեալ զի և այս մեծ իմն նշանակ էր 'ի մխիթարութիւն նոցա. զի որպէս յայնժամ մնա գոլով ընտրէր Քրիստոս, և այժմ 'ի հեռուստ։ « Պարտ է, ասէ, յարանցս եկեղեցոյ ընդ մեզ վկայ լինել յարութեան նորա »։ Տես զխնամոտ և զանփառասէր միտս նորա. զի վարդապետ 'ի Քրիստոսէ կարգեալ այլովքն, ոչ ասաց թէ մեզ շատասջիք. այլ հաւասարապատիւ սիրով և անմնախանձ ըստ Մովսէսի 'ի լրումն թերի թուոյն փութայր. և զի Ճահ էր այս առաքինութեան նորա՝ յայտ է։ Այլ զի յայնժամ ոչ պատիւ էր ասել Ճանն, այլ սպասաւորութիւն էր մեծին առ փոքունսն, սմին վասն ասելով թէ պարտ է վկայ լինել միւսմ ումեք, ոչ տայ թոյլ ընտրելոյն հպարտանալ իբր 'ի նեղութիւն կոչեցեալ, և ոչ այլոցն տրտմել։ Այլ աւաղ զի այժմ ոչ այսպէս, այլ հակառակն սորին լինի։

Տես դարձեալ զառաքելոյն Պետրոսի և առ Յովհան զնաղաղականութիւնն. զի ոչ իշխանաբար ընտրէր զայրն, այլ 'ի կցորդութիւն ընտրութեան առնն զբազմութիւն առնոյր. և զայն վասն յոլով շահից։ Նախ զի ինքեան ևեթ ընտրել ոչ էր պարտ, զի մի թուիցի հնարհ ընտրելոյն առնել։ Երկրորդ զի մի առանց

։ Միւսն յայնմանայլ ինչ։ ալ պարագրեր։

Հոգւոյն մասին թուիցին իրքն։ Երբորդ զի մի մարտ վիճման 'ի նեբքս 'ի նոսա մոցէ և այժմ որպէս յառաջն, ուստի յոլով չարիք յիշխանասիրութենէ լինին, յորմէ փախչել արժան է փութով։ Չորրորդ զի զայն որ ընտրելոյն էր, պատկառելի ցուցցէ. և զի յայտ արար թէ ընտրել պարտ է 'ի հարիւր և 'ի քսանիցն զմի ոք, և զայն հասարակաց կամաք. յայտնէ և զայն թէ յորոց պարտ է ընտրել։

« Յարանցս յայսցանէ եկեղեցոյս ընդ մեզ յամենայն ժամանակ՝ յորս մուտ և ել առ մեզ տէր Յիսուս »։ Յայտ է ասա, զի ոչ երկոտասանքն և եթ, այլ և բազումք հետևէին նոցա 'ի սկզբանէ անտի մկրտելոյն տեառն 'ի Յովհաննէ. որպէս այն որ լուան 'ի Յովհաննէ վասն Յիսուսի և գնաց ընդ Անդրէի զհետ Յիսուսի։ « Խօսցուցց, ասէ, յընդ մեզ շրջելոցս »։ Ոչ ասաց 'ի հեզոց և 'ի խոնարհաց, զի մի թուեսցի զայլսն անարգել. այլ ժամանակաւն տայ զՀիռն. ոչ 'ի բաց արձակ ասէ եկեղեցս, և ոչ 'ի բաց առնու ինչ 'ի ժամանակէն, այլ լիով յամենայն ժամանակս, ասէ, շրջելոցս ընդ մեզ։ Տեսանես զսաստիկ փոյթ Հշմարտասիրութեանն. զի թէպէտ Հոգին կատարելոց էր զնոսա, ոչ այնու և եթ, այլ և ականատես կամի գոլ ըզվկայն իրացն գործելոցս։ « Հանապազ, ասէ, յորս մուտ և ել առ մեզ տէր Յիսուս »։ Յուցանէ և զինքեանս բնականիցս 'նորա լինել և ոչ լոկ իբր միայն աշակերտք մօտ պատահելք։

Եւ թէ երբ մուտ տէր Յիսուս, « Սկսեալ 'ի մկրտութենէն » և յառաջ. և երբ ել, « Յօրն յորում վերացաւն 'ի մէնջ, վկայ յարութեան նորա լինել միւմ 'ի սոցանէ »։ Եւ ոչ այլոցն ասէ լինել, այլ յարութենն և եթ վկայ. զի ոչ էր պարտ միայն նշանաց այնմ ժամանակին, որ նախ էր յարութեանն և որ յետոյ՝ լինել վկայ, այլ առաւել յարութեանն՝ որ չքնաղ էր քան զընաւսն և դժուարին առ հաւատալ։ Տիսնա զի այլքն յայտնիք էին, և յարութիւն գաղտնի և սոցա միայն յայտնի։ Սմին վասն հաւատարմագունի առն պէտք էր որ կարէր ասել՝ թէ նա որ

1 Միւսն Բառիցս։

եկեր և արբ և խաչեցաւ , նա յարեաւ . զի ոչ ասէին թէ հրեշտակք ասացին մեզ , այլ թէ մեք տեսաք ։ Եւ ուստի գիտասցուք . 'ի սքանչելեացն զոր գործեմք յանուն նորա ։

«Լոյս կացուցին երկուս . զՅովսէփ որում Բարսաբայն կոչէին՝ որ անուանեցաւն Յուստոս , և զՄատաթիաս » ։ Ոչ ինքն Պետրոս զսոսա կացոյց , այլ ըստ նոցա միաբան կամացն . միայն պատմեաց թէ ոչ յիւրմէ , այլ 'ի վերուստ մարգարէութեան էր իրքն ։ Եւ ոչ կացուցին բաղումս , զի մի մեծագոյն լիցի տրամութիւնն . այլ և ոչ մի , զի վիճակաւ էր ընտրութիւնն ։ Եւ ընդէր մականուամբ դնէ զՅովսէփն . զի զատուսցէ 'ի համանուանց [1] . զի և յոլովք համանունք էին 'ի նոսա , որպէս Յակոբոս ալփեանց և Զեբեդեայ , Սիմոնք և Յուդայք . կամ թէ թերանուութիւն [2] զառաքինութիւն բարուցն Բարսաբայն զնշանակ ։

«Լոյս կացեալ միտքն յաղօթս ասեն . դու տէր սրտագէտ ամենայնի , յայտնեա զմի ոք 'ի սոցանէ յերկոցունց» ։ Բարուոք աղօթելով այսպան զընտրութիւն . զի յոլովակի 'ի մարդկանէ ընտրեալն՝ առ այն նուազ է ։ « Դու տէր սրտագէտ , ցոյց զմի ոք » . դու և ոչ մեք ։ Եւ 'ի դէպ ժամու սրտագէտ կոչեն զաստ , զի այս իսկ է խտրոց ընտրութիւն այն և մարդոյ . զի մարդ հայի յերեսս , և աստ 'ի սիրտս ։ Վասն որոյ ցոյց , ասեն , զմի ոք . վասահ էին միուսին 'ի նոցունց անվրէպ լինել ։ Եւ չասացին թէ ընտրեա , այլ ցոյց զընտրեալն . զի տեսին կանխաւ ընտրեալ միւսմ 'ի նոցանէ ։ «Ընտրեալ զվիճակ պաշտամանս այսորիկ և զառաքելութիւն » ։ Զի է և այլ ինչ պաշտօն հոգևոր , թէպէտ և նուազ . այլ աստ զառաքելութիւն հայցեն առնուլ զաստիճան ։

ԵՓՐ . «Յորմէ անկաւ Յուդաս գնալ 'ի տեղի իւր » ։ Ոչ յայն որ լուսաւորն է զոր խոստացաւ նմա տէր , այլ 'ի խաւարին ։

ՈՍԿ . Այսչափաբար յիշեն զնորա սխալականն , ցուցեալ թէ վկայ հայցեն . ոչ յաձախել խնդրեն զթիւն , այլ զթերին լնուլ ։ «Եւ ետուն վիճակս նոցա . և էլաներ վիճակն Մատաթեայ » ։ Եւ ընդէր վիճա-

[1] Միւսն համանուանց . . համանուանք ։ [2] Միւսն թերանուանութիւն ։

կաւ. զի չև էր Հոգի. և զի զանձինս անարժան վարկանէին 'ի ձեռն նշանի յայտնել. և զի առ Յեսուսաւ պաշտեցան իբրս այս։ Եւ այլ ազգ. թէուր ոչ խնդրբուածք և ոչ արք արժանաւորք, և վիճակն այսպէս զօրացաւ առ Յովնանու՝ զի յուղիղ մնաց էր, բազում առաւել աստ վիճակ՝ որով ցուցանէր զարժանն և կատարէր դասն։

ԴԻՈՆ. Վանգի վիճակն ասացեալ ՅԾՄԱՅԻՆ ինն պարգև յայտնէ սրբազանի դասուն այնորիկ ՅԾՄԱՅՆՈՅՆ ընտրութիւն ցուցցեալ. ուստի և զառ 'ի ՅԾՄԱՅՆՈՅՆ վիճակէ ՅԾՄԱՅՆԱՐԱՐ յայտնեալն 'ի սրբոց երկոտասանից առաքելականն թիւ ընկալան. զի թուեցաւ ասել ընդ մեռասան առաքեալսն՝ երկոտասան։

ՈՍԿ. Այլ ընկերն ոչ ցաւագներ։ Եւ ուստի է յայտ. յայտմանէ, զի ոչ թաքուցանեն ուրեք առաքելքն զիւրեանց նուազութիւնն. և մանաւանդ զի և վասն գլխաւորացն ասեն զայլսն խառնվեալս, և ոչ մի անդամ, այլ բազում. և վասն այնր մեղադրեալս 'ի Քրիստոսէ, հեթանոսական ասելով զփառասիրութիւն։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ինդ որս և մեզ արժան է փախչել 'ի պատուասիրութեանց՝ հայելով զծանրութի գործոյն, զոր պարտի ուղղել եպիսկոպոսն, և զՀրդապահանջ համարն 'ի մեծ ատենին Քրիստոսի. ըստ որում սպառնայ Եզեկիելիս տարամիտ հովուաց։ Այլ վասն այսորիկ փութալի եղև բազմաց եպիսկոպոսութիւն, զի 'ի հանգիստ և 'ի փառս անձանց դիմեն և ոչ 'ի պաշտօն և 'ի սպասաւորութի բազմաց։ Զի եթէ զմտաւ ածէր թէ վերակացու պարտ է լինել և զամենեցուն պատասխանատուութիւն ստանձնել, և թէ դժնդակս պահանջելոց է պղերգանալով, իբրու զի ռամիին նեբելի է մեղուցեալ, այլ նա ոչ ևս, ոչ արդեաք փութացեալ լիներ յայս ինչ։

ՃԱՌ ՁՈՐՐՈՐԴ

«Լոյ 'ի կատարել աւուրցն պենտէկոստէից էին ամենեքեան միաբան 'ի միասին »։ Պենտէկոստէն ըստ Յունաց յիսնէրեակ ասի . և էր սա 'ի մեծ և 'ի նշանաւոր տօնիցն Հրէից . յետ եօթն եօթներորդաց աւուրց զկնի զատկին 'ի յիսներորդն կարդեալ ', և նոյն ինքն սկիզբն հնձոց . յորում աւուր և տուչութիւն օրինացն 'ի Սինա ։ 'Նա և ամն իսկ յիսներորդ յայնժամ էր առ Խրայէլ պատուռեալ թողութիւն պարտուց , և անդրէն դարձուութեամբ հայրենեաց ։

ԱՌԱՔ . Ոստանօր առ միմեանս հաւաքեալ յիսնեբեակքս , որ ըստ ամացն և ըստ աւուրց . զի մեծասցին յաւէտ առ մեզ շնորհքն ՅԾՅԱՅԻՆ , ընդ դրսին Հոգին և ընդ հայրենեացն այսրէն դառնալոյ 'ի մեզ դրախտս։

ՈՍԿ . Եւ ոչ սոքիմք միայն հաղորդի օրինակն ընդ ՀՇՄարտութիւնս, այլ և այնու՝ զի յորժամ սկիզբն էր հնձոց զի մանկաղն արկցի յՅՇՆ և հաւաքեսցի պտուղն, յայնժամ փոխանակ մանկաղոյ Հոգին սուրբ սրեալ զլեզուս զառաքելոցն, որովք թեւակոխեալ զբանաւոր իրձունսն հաւաքէր , զայնս՝ զորմէ և Քրիստոս ասէր՝ թէ « Հունձք բազում են և արտորայք սպիտակացեալք ». յորում ինքն իսկ Քրիստոս էարկ նախ քան զմանկաղ բանին , և զառաջին պտուղ հաւատոցն ժողովեաց . որոց հնձոց սերմն էր քարոզութիւն բանին իւրոյ ։ Արդ «Յելս պենտէկոստէին էին , ասէ , ամենեքեան միաբան 'ի միասին ». ըստ պատուիրելոյ նոցն մի ելանել Յերուսաղէմէ։ Եւ յորում աւուր տօնն մեծ

՝ Մին յերկուց օրինակացն խառնեալ էր 'ի կարգին զնամուածս զայս ծանօթարար։ Զի զառաքելոցն պենտէկոստէն 'ի բուն Գիրքն Յովհան ասէր հնձոց . այլ զԽաչանն զպենտէկոստէն ասէ հնձոց . զի 'ի դարձին դայն որ նուիրեալն 'ի սեղանն , և ըստ այնմ պենտէկոստէն խառնուրդ էրեալ հնձոց . ընդէրս դրեալ է մեզ ։ Ոչ և ասէ յիսներեակ էր յորում խաչեցաւ Քրիստոս և էլ հանգիստ . անայլ է . զայս յետոյ պենտէկոստէն 'ի փիլոնէ և 'ի օրինգիրքն , և գտանիս։

էր ըստ օրինացն, որոյ հարկի սակս յերուսաղէմ ժողովեալ լինել պարտ էր պատահելոցն անդ յաւուր խաչին Քրիստոսի. զի տեսողքն անարգանաց նորա տեսցեն 'ի փառս նորա և զայս. զոր ասաց. «Զի եղև յանկարծակի հնչումն յերկնից եկեալ իբրև սաստիկ հողմոյ»։

ԵՓՐ. Զայն սաստիկ հողմոյ եղև 'ի տան անդ ուր ժողովեալ էին աշակերտքն Յիսուսի, և հոտ անոյշ բուրեր 'ի սաստկութեանէ հողմոյն և զտունն ամ ընդ։

ՈՍԿ. Այլ ընդէ՞ր ոչ առանց զգալի օրինակի լինէր գալուստ Հոգւոյն։ Աստէ՛մ թէ վասն հրէիցն. զի թէ յետ այսքան հաստատութեանս քաղցուալիցս զնոսա զրաբանէին, եթէ ոչ այսպէս լինէր՝ զի՞նչ ոչ յանդգնեին ասել։ Եւ ոչ բաց արձակ էր հնչումն, այլ յերկնից. ուր տէրն չոգաւ, անտի դիմեալ գայ և Հոգին, զի ՆՈՅՆ է. որ ոչ 'ի կողմանէ, այլ 'ի վերուստ երևի, որոտալով յերկնից և 'ի բարձանց տալով զձայն զորութեան իւրոյ։ «Եկեալ իբրև զհողմն սաստիկ»։ Եկեալ, ասէ, ինքնիշխանաբար, զՆՈՐՈՒԹԻՒՆ Հոգւոյն յայտնելով։ Իսկ այն՝ թէ իբրև զհողմն սաստիկ, վայելչապէս. փշրել իբրև զՅոմխանոսս 'ի Թարշիշ զնաւն փախչողացն յոյ, և ցուցանել թէ ոչ ինչ կարէ յաղթել ընդունողացն զնա. այլ իբրև փոշի 'ի հողմոյ հակառակորդքն նոցին ցնդեսցին։

ՆԻՍՍ. ԵՓՐ. «Այլ ելից զամենայն տունն յորում նըստէին»։ Եւ զիարդ հողմն ընդոյր զտունն։ Յայտ է՝ անոյշ հոտով և պայծառ լուսով։

ՈՍԿ. Այլ յոյժ բազում էր հեղումն Հոգւոյն, զի պատահելքն մեծ հաւատասցէն և արժանասցին նմա. զի իբրև զաւազան ինչ ջրոյ ելից զտունն՝ մերբ. տելով զոր 'ի ներքս էին։ Դա զի և աշխարհի էր օրինակ տունն զոր ելից Հոգին իբրև զՋուրս բազումս։ Այլ զի և օրինադրեսցէ մարմնոյս տան մերբիլ, նախ բարձրագոյն վարուք, խորհրդով վերնատանն զարգարեցելում՝ յորում եկն ՆՈՅ, և ապա Հոգւոյն ընուլ զՀոգիս։ Ընդ սոսին նկարէ և զպատիւ եկեղեցւոյ, յորոյ 'ի ջուրս աւազանին նախ իջմամբ Հոգին ծնանի զմկրտեալսն ընտրհօր իւրովք որդիս ՆՈՅ, որով ազազակեմք Հայր մեր՝ որ յերկինս։ Դնեմ ապա և զահպինն օրինակն։

ՆԻՍ. «Լրևեցան նոցա, ասէ, լեզուք՝ զի բաժանեին իբրև զհուր»։ Ի միտ առ զկարգ եղելոցն։ Նախ 'ի լսելիս նոցա Հոգին սուրբ հնչեաց ձայն ահեղ որոտման իբրև զհողմ ասատիկ շնչեալ. և ապա աչաց նոցա եղև տեսեալ Հոգին 'ի ձև հրեղէն լեզուաց տպաւորեալ։

ՆԱՁ. Լրս վասն էր 'ի ձև լեզուաց։ Զի առ բանն ընտիր և անսայթաք սրբոցդ զլեզուս նոցա։ Իսկ զի բաժանեալ երևէին լեզուքն իբրև զոստս ծառոյ, զի 'ի միոյ արմատոյ էին 'ի Հոգւոյն սրբոյ, որ բաժանէ և տայ շնորհս յորժամ և որչափ և որպէս կամի։ Իսկ զի իբրև զհուր, բարւոք զիբրևն դնէ առ հողմանին և առ հրովս, զի մի զՀոգին զգալի հողմ կամ հուր լոկ կարծիցես։ Սմին վասն և 'ի զանազան կերպս երևի. զի ոչ հողմ և հոտ և լոյս և ձէթ, այլ և լեզուս երևեալս տեսանէին. և այնք իբրև զհուր, զի բազում դէմն ակնարկեացէ հրոմն։

Լրս նախ թէ ընդէր ասա 'ի տեսակ հրոյ և 'ի Յորդանան 'ի կերպարանս աղաւնոյ երևէր Հոգին, ասեմ. զի անդ զհեզութիւն Քրիստոսի և զիւրն ևս յայտ առնիցէ. զի ուր զմեզս թողուլ պէտք և ժամանակ է, հեզութիւն յառաջեսցէ։ Իսկ ասա հուր, զի յետ ընդունելոյ ուժք զպարգևս, ապա և դատաստանք պահեալ կան, և հուր երկայն և տաժանելի տանջողզոչ հաւանեալսն. ըստ որում ասաց Յովհաննէս զՔրիստոս. նա մկրտեսցէ զձեզ նախ Հոգւով սրբով ասա՝ և ապա հրով անդ։ Երկրորդ զի որպէս հողին ուժգնութեան է ցոյցք, այսպէս և հուրն առատութեան. զի ծանիցուք զՀոգւոյ թիւն ընդունողաց այսր հրոյ, զառաքելոցն ասեմ. զի որպէս 'ի հրոյ ճրագս որչափ կամիս վառեալ լինի, այսպէս աղբիւր Հոգւոյն առնոյր իւրաքանչիւր զբ 'ի նոցունց. որպէս Քրիստոս աղբիւր ջրոյ կենաց ունէր։ Իսկ առ մարգարէսն ոչ այսպէս առատ. այլ Եզեկիել մատեան գրոյ յուտել առնոյր, և Երեմիաս ձեռն Աստուծոյ ձգեալ. Եղիսէոս մարթով առնոյր զշնորհս և Դաւիթ իւղով. զի զեռ ևս օրինակաց կարօտէինն նոքա։ Այլ ասա Հոգին ինքն բնակցաբար 'ի նոսա լինի. ըստ որում ասաց Քրիստոս՝ թէ 'ի ձեզ բնակեսցէ։ Եւ թէպէտ Մովսէսի հրով երևիւր

Աստուած, այլ ոչ և աստ 'ի մարենուօջն բոց վառի. այլ ինքն իսկ 'ի նոսա հուր նստի։ Երրորդ զի և ձուլեսցէ զնոսա և մաքրեսցէ որպէս զոսկի։ Չորրորդ և զի Թրծեալ և հրազինեալ զնոսա իբրև զանօթս կաւեղէնս՝ ամուրս և անբեկանելիս սերտեալ պնդեսցէ։ Հինգերորդ և զի Ջեռուսցէ նոքօք զսառուցեալսն եռալ 'ի բարիս հոգւով։ Վեցերորդ և զի Ծախեսցէ նոքօք զչարիս յաշխարհէ որպէս շանթ հրոյ զեղեգն։ Եւ վայելչապէս առատանայր յանձինս առաքելոցն. զի սոքա ոչ իբրև զմարդարէսն առ մի ազգ, և այն առ իւրեանցսն առաքեալ լինէին, այլ մանաւանդ առ հանուրս և անծանօթս. ոչ մրցել ընդ Փարաւոն կամ սպառնալ Յեզաբելի, այլ ընդ դատն և չար դիւին տալ պատերազմ։ Սակս որոյ և յառաքիլն ոչ մանուկ կամ ծանրախօս զինքեանս գոլ փաստաբանէին, այլ խսկոյն պատրաստաբար ընթանային։ Բայց թէ ընդեր ոչ հրով ընայր Հոգին զտուն, զի ոչ էին զարհուրեցուցանել որպէս զծոյլս և զարբեցեալս. այլ մխեթարել իբրև զդաստս և հսկեցողս։

ԵԹԷ. «Լաւ նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա». այսինքն լեզուքն երևեալք նստան 'ի վերայ միոյ միոյ 'ի նոցանէ։ Ցայտ է զի իւրաքանչիւրքն նստան յանցնիւրսն, բոլորեքեան մասունքն առ մի մի 'ի նոսա վերանստեալ. սակս որոյ և վասն նոյնութեան բնութեանն զբոլոր մասունսն 'ի մի ժողովելով եզականապէս ասէ՝ թէ նստաւ յիւրաքանչիւրսն։

ՈՍԿ. Լսէ նստելն զարքունական պատիւն և զմիշտ 'ի նոսա լինելն յայտնէ զՀոգւոյն. զի նստելն հաստատուն գոլոյ է նշանակ և կալոյ և մնալոյ։ Ի վերայ երկոտասանիցն միայն նստաւ արդեօք. ոչ. այլ 'ի վերայ հարիւր և քսանիցն. զի եթէ 'ի նոսա եւթն նրսոիւր, ոչ ածէր Պետրոս վկայ 'ի մէջ զմարգարէն՝ թէ «Ասաց ՅԱ. Հեղից յՈգւոյ իմոյ 'ի վերայ ամմարմնոյ»։ «Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով»։ Նա և ոչ զայս թերևս ասէր Ղուկաս միահամուռ՝ թէ լցան ամենեքեան, թէ ոչ և այլքն առին զՀոգին. այլ որոշէր յատուկ զերկոտասանսն որպէս 'ի վերոյ։ Զի թէ ուր լոկ մէջ էին և այլքն՝ առանձինն յիշեաց զառաքեալսն, որչափ էս առաւել աստ առնէր

զնոյն։ Եւ զի ասէ. «Լցան ամենեքեան Հոգւովն սրբ-
բով». այսինքն, ոչ մասնաւոր առին զշնորհս, այլ բոլոր-
քին բոլորիւ լցեալ եղեն։ Եւ տես զի ոչ եւս տարակու-
սին առ ընտրեալն զԵւթանսն որպէս առ Մատաթիաս։

Այլ տես զի առ ժրացեալսն յաղօթս և առ
սրբեալսն յախտից ժամանակ Հոգին որպէս առ մար-
գարէսն՝ որք օտարացան յաշխարհէ. որպէս Մովսէս
յարքունեացն, Դաւիթ յետ յաղթութեան Գեղեալ
'ի հովուականն, Եղիսէոս թաղեալ զամենայն և յայն-
ժամ առ զՀոգին։ Սոյնպէս և սոքա զբոլոր ինչս
իւրեանց թողին, և ապա լցան Հոգւով զեր քան զը-
մարգարէսն։ Զի ահա մեծն 'ի նոսա Մովսէս նուա-
զեր առնել զծերսն Հոգեկիրս. իսկ նոքա տային զՀո-
գին ձեռս դնելով առաւութեամբ։

«Եւ սկսան խօսել յայլ և այլ լեզուս, որպէս և
Հոգին տայր բարբառել նոցա»։ Յառնուլն զՀոգին՝
առաջին զայս ցուցին նշանս, զի յայլ և այլ լե-
զուս խօսէին. ոչ թէ զի մեծ էր այս քան զամենայն
նշանսն, այլ զի նոր էր և անծանօթ, զի զարմացին
լսողքն. նա և առժամայն չէին պէտք այլոց նշանի
հաւակելի առնել զեղեալսն։ Թող զայն զի առաջի
կայր նոցա աշակերտել զաղգս և զլեզուս. 'ի սկզբ-
անս Հոխացան լեզուօք, զի խիզախեալ համարձա-
կեսցեն առ քարոզութիւնն։ Զի զրաժանեալսն յաշ-
տարակէն և 'ի բազմաստուածութիւն ցրուեալսն
'ի մի ածպաշտութիւնն ժողովեսցէն սիրով։ Եւ որպէս
անդ մի լեզուն 'ի բազումս եղև բաժանեալ, նոյնպէս
և աստ բազում լեզուքն 'ի մի մի մարդ եղև ժողո-
վեալ. զի մի և նոյն Հոգւոյն գործ էր աստ և անդ։
Սմին վասն խօսէին յայլ և այլ լեզուս, որպէս և Հո-
գին տայր բարբառել նոցա։ Զինչ կամի բարբառէն
մեզ նշանակել. եթէ ոչ զայս՝ զի ոչ էր պարտ միայն
յինքեանս 'ի խորհրդոջ խօսել, այլ յառաջբերական
բանիւ յայտնի 'ի բաց բարբառել։

«Եւ էին բնակեալ Յերուսաղէմ Հրեայք արք
երկիւղածք յամենայն ազգաց»։ Ուրեմն Յերուսա-
ղէմ բնակէին երկիւղի Աստուծոյ էր նշանակ։ Այս

[1] Միւսն զԵՒԹԱՆՍ զաշխարհիս ՆՈՅՆ։

և կարի իսկ քաջ. զի յայնչափ ազգաց զտոհմս և զհայրենիս թողեալ՝ անդ բնակէին. կամ զի էին նոքա հեթանոսք ընդ հրեական կարգօք մնեալք, կամ մանաւանդ Հրեայք 'ի գերութենէն Ասորոցդ դարձեալք. և զի պարտ էր նոցա ըստ օրինացն երիցս 'ի տարւոջ երևել 'ի տաճարին. զի մի յոյժ նեղասցին յաճախանդը երթալովն, անդէն իսկ բնակէին յերուսաղէմ։

ԵՓՐ. «Որքան եղև բարբառս այս, եկն միաբան բազմութիւնն և խռնեցաւ»։ Զայնն որ գայր յերկնից, լսելի եղև ամենայն քաղաքացեացն. և հոտն որ 'ի բռնութենէ անտի հողմոյն բուրեր, զբազմութիւն ժողովեաց ած անդր. այս է բարբառն որ եղև։

ԼԱՄՔ. Իսկ կիսոց թուեցաւ զլինելն բարբառոյս 'ի վերայ այլատարազ խօսից առաքելոցն առնուլ. և երկոքեան իսկ են 'ի դէպ։

ՈՍԿ. «Իսկն միաբան բազմութիւնն և խմբեցաւ»։ Զի 'ի վերնատանն եղև բարբառն՝ ուր էջ Հոգին, յիրաւի արտաքուստ հոսեալ բազմութիւն անդր ժողովէին. զի բազումք 'ի նոցունց իբրև զերկիւղածս կասկածէին եկեալ հասեալ 'ի վերայ նոցա զպատուհասն սպառնացեալ վասն յանդգնութենն որ 'ի Քրիստոս։

ԵՓՐ. Ապին իսկ այսոքիկ զորս շարժեաց բարբառն ահագին և ած ժողովեաց հոտն անուշութեան, իբրև տեսին զգալելեացիսն զի խօսէին յամենայն լեզուս՝ զարմացան, ըստ որում ասէ. «Զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա»։ Ա՛յլ մի ոք կարծիցէ առաքելոցն 'ի բարբառն հայրենի խօսել, և լսողացն յիւրաքանչիւր լեզուս լսել։

ՆԱՀ. Զի այսպէս իմանալ՝ Պարսիցն և Պարթևացցն գայ սքանչելագործելն, այլ մանաւանդ յայլ և այլ խօսելին լեզուս։ Զոր յընթեռնուլն՝ ստորակիտաւ պարտ է կարել զլսէլինն. և ապա երկար առոգանութեամբ առնել մեծատերջ[1] զիւրաքանչիւրն, և խառնել սոցիւ յընդ լեզուս խօսել նոցա. այսպէս ընթեռնլով. զի լսէին, յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա. զի ուղիղ տացէ զնմաստն. որպէս զի իցէ սքանչելագոր-

[1] Միան ԳԼՈՒԽԻՆ։

ծելն ու լսողացն, այլ խօսողացն առաքելոցն։ Եւ տես ահա։

ՈՍԿ. «Քանչանային, ասէ, ամենեքեան զարմացեալք»։ Յիրաւի, զի նոր և չքնաղ էին սքանչելիքն, վաղվաղակի յառաքելոն Հայէին և ասէին ընդ միմեանս. «Ո՞չ ապաքէն սոքա որ խօսինս՝ գալիլեացիք են, աղքատք և չինականք. և զիարդ լսեմք յիւրաքանչիւր բարբառս մեր յորս ծնեալ եմք, Պարթեւքս և Մարքս և իլամացիքս, Հրեայքս և եկեղս կրետացիք և արաբացիք լսեմք խօսել դոցա՝ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ»։ Տես արդ յելիցն արեւու մինչև՝ի մուտս այն ինչ գնոսա հասեալս. զի յամենայն կողմանց աշխարհի անդր ժողովեալ էին. և այս զօրացուցանէր զառաքեալսն. զի թէ պարթեւերէն էր բարբառէալն, ինքեանք որ խօսէինն՝ ոչ գիտէին, այլ՝ի նոցունց՝ի լսողացն ուսանէին։ Եւ զի յանուանէ յիշեաց զազգսն զթշնամիս Հրէից, առ՝ի ցուցանել թէ ամենեցունց իսկ առաքեալքն յաղթեացին։

Բ. Զդ սոքա կամ յայսոցիկ յիշելոց ազգացս՝ի գերութիւն եկեալ Հրեայք էին այլալեզուք, կամ անդանօր՝ի հրէաստան ծնեալ հեթանոսք. զինոր առանդութիւնս բազումս կալցի վկայս զհրէաստանեայս և զեկս օտարս։ Որք ապշեալք և տարակուսեալք, այլ ոք առ այլ ասէին. «Զինչ կամիցի այս լինել»։ Առ որս ասելն է թէ զի՞ զարհուրիք։ Զի լսեմք, ասեն, խօսել սոցա մերով լեզուովս զմեծամեծս այ։ Տես զի ոչ բանս ինչ լոկ խօսէին, այլ սքանչելիս ոմանս բարբառէին մարգարէանալով կամ իմանալով զվկայութիւնս մարգարէիցն զՔրիստոսէ. ընդ որ յիրաւի լսողքն տարակուսէին։ Եւ այս զբարեմտութիւնս նոցա յայտնէր. զի զարհուրելք ընդ եղեալսն՝ ասէին զինչ կամիցի այս լինել. զի հանդերձելոց իրաց նախագուշակ զնշանն վարկանէին. այլ թէ բարւոյ իցէ արդեօք կամ չարի, ոչ գիտելով տարակուսէին։

«Լոկ կիսոցն այսն արարեալ ասէին՝ թէ քաղցուալեցք՝ են, Ով անամեթ չարութեանն. նախ զի չև էր ժամանակ արբեցութեան, զի պենտեկոստն էր.

՝ Միւսն ՀԱՂՑԱԼԵՑ։

և զի Հրէից և հեթանոսաց Թերևս և խաչողացն խոստովանելով զբանչելին նոքա ծաղր խաղ առնէին։ Այլ չեն զարմանք, զի սոքա և զտէրն տեսանէին զի հանէր դևս, և դև ունել նմա ասէին. և ասա ընդ այլ կողմն Թիւրեին զեղեալն. զի Թշնամանասէրքն զասելն և եթե խնդրէ, այլ ոչ զի դեպ ինչ ասէին։

«Յարուցեալ Պետրոս հանդերձ մեռասանիւքն ամբարձ զձայն իւր»։ Տես զարիութիւն նորա. զի Թէպէտ կէսքն զարհուրեալք էին, սակայն աքանչելի էր համարձակիչն նորա և զձայնն համբառնալ, այր մի ռամիկ և առ իւրսն, Թողեալ Թէ առ սպանիչս։ Եւ զի չէին գինեւոյզ արբեալք և ոչ ապշեալք որպէս զդիւրեթն, իսկոյն ձայնիւն Պետրոս և հայելովն յայտ արար. և զի անձահ էր ամենեցուն խօսել, մեռասանքն մերձ կալով վկայէին ասացելոցն, և ամենեցունն նա էր բերան։ Այլ վաշ զօրութեան Հոգւոյն. զի ահա որ ոչն տարաւ հարցման աղջկան միոյ վատթարի, 'ի մէջ անցեալ արիւնահեղ խառնն այսչափ բանիւ համարձակի, զի աներկբայ լիցի նշան յարութեանն Քրիստոսի և զօրութիւն Հոգւոյն՝ որ զարժանիս իւր ոսկի առնէ 'ի կաւեղինաց, որպէս զՊետրոս զերբեւն երկչոտն և զանհանձարն. այլ տես և զընկերսն երբեւն նախանձոտս նմա, այժմ Թողեալ զատենաբանելն։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Եւ արդ միայն զանձինս արժանիս Հոգւոյն կազմեսցուք, և ամենայն ինչ գիւրաւ մեզ վճարի. որպէս յայնժամ և պետրոսեանք Հոգւոյն վառեալք որպէս արս հրեղէնս 'ի մէջ ծղի՝ անկեալք ոչ չար ինչ կրէին, այլ 'ի հպեալսն գործէին զյաղթութիւն. ոչ միայն Հրէից յաղթելով, այլ և բռնաւոր իշխանաց և գոռոզաշխարհակալացն, և միանգամայն բանիբուն ճարտարաց և փիլիսոփայիցն հելլենացւոց։ Որպէս և այժմ 'ի մէջ անցեալ առ խաչեցողսն հանդիսաբանել և ասել.

։ Միւսն ծԽ։

ՃԱՌ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Զ՞Ր. Հրէաստանեայք և որ բնակեալ էք յԵրուսաղէմ ամենեքեան, այս ձեզ յայտնի լիցի և ունկն դիք բանից իմոց»։ Ոչ առ որս նախ արս երկիւղած և օտարս ասաց յամենայն ազգաց՝ խօսի այժմ զբանս, այլ տակաւին առ կատակողն առ 'ի յուզել զԹիւրկարծիս նոցա։ Եւ դու տես, զի այսն առնելն պատճառ եղև բանին, և բարւոք. ոչ իբրև առ կատակողս ընդդիմաբանէ, այլ յարգանօք իմն՝ թէ «Աբրահրէաստանեայք և որ բնակեալ էք յԵրուսաղէմ». զի մեծ իմն գովեստ կարծէին զբնակելն յԵրուսաղէմ և Հրէաստանեայ գոլն, որ է յուդայեան վիճակն. զորս այսու բանիւ առ ինքն դարձուցանէ՝ թէ «Ունկն դիք բանից իմոց. ոչ որպէս դուք կարծէք թէ խաղմղով լցեալ իցեմք»։ Տես զմեծանձնութիւնն, զի զյոլով մասն ամբոխին զարմացեալս ընդ իւր ունելով ոչ շփանայ, այլ հեզութեամբ ընդ խիստն բարբառի։ Հայեաց և զոգւոյ նորա զազատութիւնն. զի ոչ գովեաց զասողն՝ թէ լսեմք խօսել նոցա 'ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ, այլ զհեգնողն մեղմով 'ի կշտամբելն զսքանչացեալսն փութացողս արար յերկիւղ. և խոյս տուեալ բանիւն յամբառնալոյ և 'ի սուտակասպասութենէ, նախ 'ի բաց խլէ զանպատշաճ կարծիս նոցա՝ թէ «Ոչ որպէս դուք կարծէք թէ խաղմղով լցեալ իցեմք». ապա զուղիղն հաստատէ։ Եւ չասաց թէ ոչ որպէս դուք կատակէք, զի մի՛ կամաւ չարութեան, այլ անգիտութեան զծաղն դիցէ։

«Օ՛ի դեռ երեք ժամք են աւուրս»։ Եւ այս զի՞նչ առնիցէ՝ թերևս ասիցէ ոք, զի մարթի և յերրորդումժամու արբեալ լինել։ Աստ թէ ոչ ասաց Ճշգիւ վասն արբեցութեան. զի և նոքա ոչ զսոսա արբեալս ունէին, այլ կատակելով զայն ասէին։ Ուստ

ուսանիմք թէ առ ոչ հարկաւորսն չէն պէտք բազում բանից։ Եւ այլ ազգ. զի ըստ օրինացն, մանաւանդ յայնմ ժամու և յաւուր, չէր օրէն առն հրեի արբեալ գոլ, զի պէնտեկոստէ էր։ Այլ տեսցուք դարձեալ զի յերրորդ ժամու իջանել Հոգւոյն ոչ էր վայրապար. այլ նախ զի հռչակելի լիցի, զի չև ևս յուտել կամ՝ի գործ կամ յընթրիս զբաղեալք, այլ օրն մեկնեալ, և մարդիկն զուարթացեալ պայծառացեալք ցուցցին։

ՆԵՐՍ. ԿԹՂ. Լուս՝ի սոյն ժամու ասի Ադամ ստեղծեալ և զՀոգինն՝ոբ փչմամբ զդեցեալ. յորում ժամու և կինն՝ի չարէն պատրեալ և՝ի Հոգւոյն թափուր մնացեալ. զորս՝ի սոյն ժամու և տէրն՝ի խաչին քաւեաց և զՀոգին սուրբ այժմ դարձեալ պարգևեաց. զոր իբրև նախ արբին պետրոսեանք, ոչ խազմուզ ասեն արբաք և արբեցաք, այլ բաժակ անապական բերկրութեամբ՝ի կենացն աղբերէ. գեաօրէն բըղխմանն ուղխից փափկութեամբ կանխաձայնեալն խոստման։

ՈՍԿ. Որով և զմարգարէութիւն Յովելեայ այսուլցեալ ցուցանէ, աստի և յառաջ առ ամենեսեան նոր սա խօսելով թէ «Այս է որ ասացաւ՝ի ձեռն մարգարէին Յովելեայ. և եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս ասէ Աստուած՝ հեղից յՈգւոյ իմոյ»։ Ցուցանէ այժմու եղելոցս մերձ գոլ զկատարածն. զի յաւուրս վերջինս ասէ զերևումն Քրիստոսի և զհեղումն Հոգւոյն, այլ ոչ յիշէ առ ժամանսն զանունն Քրիստոսի կամ զխոստանալն նորա զՀոգին. այլ՝ի Հօրէ ասէ զխոստումն Հոգւոյն. բայց սուղ ինչ յետոյ ասէ վասն Քրիստոսի. և զի խոստացաւն զՀոգին և սրբուեաց ասէ որպէս տեսանիք։ Այսելչապէս զայս արար Պետրոս. զի թէ նախ յիշէր զՔրիստոս, ՝ի վերՃ դըրդէր զնոսա. այլ՝ի յետոյ ասելն հաւատացին ՃՃ գոլ զնա։ «Հեղից, ասէ, յՈգւոյ իմոյ՝ի վերայ ամենայն մարմնոյ»։ Հեղումն զառատութիւնն յայտնէ. և՝ի վերայ ամենայն մարմնոյ, այսինքն՝ի հաւատացեալս, ոչ՝ի Հրեայս միայն, այլ և՝ի հեթանոսս՝ յայտ է։ Այլ դեռ ևս ոչ յայտնեաց զայս, զի մի յաչաղեսցին Հրեայքն։

Այլ իբրև ետ նոցա քաղցր խոստումն զհեղումն Հոգւոյն՝ թէ ընդունել կամեսցին, ոչ ետ տեղի նոցա

նախանձելոյ ընդ հեթանոսս. այլ իսկոյն 'ի բաժան-
մունս ընդունողաց Հոգւոյն փոխեաց զբանն՝ թէ
«Մարգարէասցին ուստերք ձեր և դստերք ձեր»։ Ոչ
'ի ձեզ հարսդ, ասէ, այլ 'ի մանկունս ձեր հեղցի Հո-
գին. որք և յամենայն լեզուս խօսելով մարգարէ-
ասցին։ վերստին առեալք զչնորհսն զոր կորոյս Ադամ
Սմին վասն նախ զուստերսն դնէ, զի փոխանակ հօրն
առին որդիքն՝ առաքեալքն և Ագարոսք և շիղայեանք.
ապա և դստերք, որպէս և Փիլիպպոսին և այլք։
«Եւ երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն»։ Եւ էն
սոքա հզօրքն յառաքինութիւն, առ որս գրէր Յովհան-
նէս՝ թէ «Յաղթեցեք դուք չարին»։ Եւ զի մի յոր-
դիսն և-ևթ կացուցցէ զշնորհսն՝ յաւելու. «Եւ ծերք
ձեր երազով երազեսցին»։ Յայտ է ասծային հանձա-
րով ալևորեալքն, զորս ցուցանէ ահա արդէն արժա-
նացեալ և հասեալս շնորհին. իսկ զկատակողսն ոչ
Սմին վասն զմարգարէն ածէ 'ի մէջ 'ի դիմաց Աստու-
ծոյ ասելով, հեղու

որպէս ասէ, «Թէ դաւիթ զնա տէր կոչէ, զիարդ որդի նորա իցէ». և այլ բազում ուրեք. առ որ ոչ կարէին տալ պատասխանի։

Արդ իբրև ուղղեաց աստ Պետրոս մարգարէութն զթիւրկարծիս նոցա ասելով թէ «Այս է ասացեալն 'ի ձեռն Յովելեայ», ոչ 'ի նոյն առնու զտեղի, այլ ընթեռնու ըստ կարգի և զահագինսն ևս՝ զի երկիցեն։ «Տաց, ասէ, նշանս յերկինս 'ի վերո և յերկիր 'ի խոնարհ, արիւն և հուր և մրրիկ ծխեալ»։ Այսոքիկ ասացեալ են նախ վասն եղելոց նշանացն յաւուր խաչին Քրիստոսի. նա և վասն սաստիկ հասելոց վշտացն Երուսաղէմի 'ի զօրացն Հռոմոց. ևս և վասն նշանաց հանդերձեալ աւուրն վերջնոյ, զորս ածէ 'ի մէջ բանիս։ Նախ զի ցուցցէ թէ Հոգւոյն խօսին 'ի լեզուս, որոյ իջմանն 'ի նոսա նախագուշակք եղեն նշանքն ահաւորք՝ որ եղեն 'ի ժամ խաչին նախ քան զգալ մեծի աւուրս այսորիկ, յորում եկն ահա Հոգին. զի այսու ցուցցէ զինքնուին Հոգւոյն սրբոյ ընդ չարչարանացն Քրիստոսի 'ի Հօրէ պարգևս հեղեալ 'ի մեզ հաւատացեալս։ Այլ և սպառնայ ևս խաչահանողացն զանցան՝ որ կրելոց են 'ի տիտոսեանցն. թէպէտ և ոչ մեկնեաց զասացեալսն, որպէս և ոչ զպատուհասն Յուդայի յիշեաց զասացեալն բերանոյն Դաւթի։ Եւս եցոյց թէ զոր կրեսն 'ի տիտոսեանցն զպմնդական 'ի դժնդակագունից վշտաց, վերջնոյ աւուրն են նախագուշակք՝ եթէ ոչ գայցեն 'ի զգաստութիւն։ Եւ զի խիստք և նշանախնդիրք ոմանք էին առ հաւատ հանդերձելոցն, «Տաց, ասէ, նշանս». ոյր. յայտ է ըստ առաջին կարգին՝ թէ հեղման Հոգւոյն այսմ աւուր, զոր օր մեծ և երևելի կոչէ։

ԵՓՐ. Օ 'ի որպէս առաւօտն նշան է ծագմանն արեւու, և նշանքն յաւուրն խաչին Քրիստոսի գուշակ հեղմանն Հոգւոյն ևս։

ԿԻՒՐ. ԵՐ. Յերկինս՝ արեգակն զի խաւարեցաւ, և յերկիր՝ շարժումն զի եղև. արիւնն՝ Քրիստոսի որով փրկեցաք մեք, զոր նոքա առին 'ի վերայ անձանց և որդւոց իւրեանց 'ի դատապարտութիւն փոխանակ աբեանն՝ որ ցանիւր 'ի վերայ նոցա 'ի փրկութիւն. և հուր՝ ՀԱԾ բանն՝ որ ջրով կողին զիջոյց զՀուրն Աղամայ, և վառեաց զոր ինքն եկն արկանել յերկիր,

կամ՝ որ երևեցուն այսօր լեզուաց հրեղինաց։ Դարձեալ հուր՝ մարմնոն ճաճացեալ յերկինս, և արիւն՝ Բանն մարմնացեալ 'ի խաչին. մրրիկ ծխոյ՝ նախատինք խաչահանուացն։

ԴԱՒԻԹ ՓԻԼ. Կամ 'ի շարժմանէն երկրի և 'ի փրկմանէ վիմաց փոչի ծխատեսակ յօդս վերացեալ։ Ուստի և արեգակն խաւարմամբ քօղ արկեալ պատկառանաց 'ի տեսանել զնախատինս արարչին, և լուսինն շրջեալ 'ի գոյն արեան ստեղծչին. ըստ որում՝ ասէ. «Արեգակն դարձցի 'ի խաւար և լուսին յարիւն». Թէպէտ և ոչ գրեցաւ յաւետարանսն, որպէս և ոչ արտասուքն որ ընդ ուժգին պաղատանացն Քրիստի։

ԿԻՐ. ԵՐ. Լ. Յոսքիկ որպէս յայտ է յաւետարանչացն՝ կանխագոյն վՀարեցան քան զգալուստ Հոգւոյն յօրն պենտեկոստէից. վասն որոյ և մարգարէն ասէ. «Մինչև եկեալ իցէ օր տեառն մեծ և երևելի». յայտ է իմման Հոգւոյն. որ և վասն այսր նշանաց և անմեղին մահու եկն ահա օրս այս մեծ, յորում հեղաւ Հոգին։

ՈՍԿ. Իսկ ըստ երկրորդ կարգին կերպագրէ կանխաւանացս աղէտիցն յորժամ առցի 'ի Հռոմոյ Երուսաղէմ. արիւն՝ սպանեալոցն պատժապարտաց, և հուր՝ քաղաքին հրդեհեցելոյ, և մրրիկ ծխեալ՝ նոցն հրոյն հարելոյ. արեգակն խաւարեալ և լուսին յարիւն դարձեալ՝ 'ի վերայ ծախելոցն 'ի սրոյն և 'ի սովոյն՝ յայտ է։ Կամ զասստիկ վիշտս նոցա այսու նշանակէ և զմեծութիւն նեղութեանն սպառնալեօքս՝ որով գիտասցեն եղուկ զինքեանս, զի հասեալ է աւերն Երուսաղէմի։ Նա զի և նշանս ոմանս ահագինս յայնժամ եղեալս 'ի պաշարմանն Երուսաղէմի պատմէ Յովսէպոս հրեայ։ Ապա և զարհուրեցուցանէ և զկատակողսն նախաձաշակնշանօքս այսոքիւք՝ ակն ունել մեծի հրոյն հանդերձելոյ 'ի գալստեան աւուրն տեառն յերկնից, զի հուր երթայ առաջի նորա։

ԵՓՐ. Որոյ լոյս պարգևացն հեթանոսաց, և մրրիկ ծխոյն խաչահանուաց 'ի խնդրել 'ի նոցանէ զվրէժ արեանն Քրիստոսի և արդարոյն. և խաւարի 'ի վերայ նոցա արեգակն նախ քան զըմբռնելն զնոսա 'ի լիճ հրոյն, զորմէ ասէ. «Մինչև եկեալ իցէ օր տեառն մեծ և երևելի»։

ՈՍԿ. Զի թէպէտ տակաւին առանց պատուհասի մեղանչէք, ասէ, այժմ, այլ ոչ է պարտ դովաբանել զի թէ նեղութիւնքն որ նախագուշակ լինելոց են դժուարագունիցն՝ այսչափ սաստկագոյնք են, ապա վասն յոյժ մեծագունիցն կարի յաւէտ զարհուրելի։ Եւ իբրև կարի յոյժ սասանեցոյց զնոսա, և զծիծաղելն նոցա ընդ այնքան տագնապաւ փակեաց, դարձեալ տայ ապացոյց նոցա ոգի կլանել։ «Եղիցի, ասէ, ամենայն որ կարդասցէ զանուն տեառն՝ կեցցէ»։ Եւ զայս ասաց մարգարէն վասն Քրիստոսի. զի նա է տէր, զորոյ անունն որ խոստովանի՝ կեցցէ։ Ա՛յլ Պետրոս դեռ ևս զայս ոչ ասաց յայտնի, այլ պարզաբար զբանն առնու ոչ յաւելլով՝ թէ որ կարդայ զանունն Քրիստի, որպէս այն՝ թէ ամենայն որ կարդասցէ. ոչ յաւելլ թէ հրեայն իցէ և թէ հեթանոսն, որոց չիք խտիր 'ի Քրիստոս։ Որպէս յաբքունիսս զի ոչ 'ի քաջատոհմութեէ, այլ յարուեստէ և 'ի գործոյ յարգի իւրաքանչիւրոք։ Սմին վասն և ոչ զկարդալն յաւել, թէ ոչ լոկ ասելն տէր տէր՝ հերքիք է առ կեցուցանել, այլ պատուիրանացն կատարմամբ։ Բայց առ այժմ զի դեռ սկիզբն էր, զբան հաւատոյն միայն 'ի նեբքս ածէ՝ թէ ահագին տանջանացն կարդայմամբ անուանն տեառն է փրկութիւն։ Իսկ զայն՝ թէ յետ խաչին որ ոք խնդրէ ըզփրկութիւն՝ պարտի 'ի Քրիստոս հաւատալով և կարդալով փրկիլ, յետոյ կարդէ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ա՛ռդ այս ձև օրինակի բանից առ նորընծայսն այսպէս 'ի Ն՛ահ է, զոր դեռ ևս պիտոյ է նախ 'ի հաւատս աշակերտել։ Իսկ ըստ մեզ վաղուց հաւատացեալոցս պիտոյ է զօրինակ վշտացն Երուսաղէմի 'ի ստուգութի առնուլ հանդերձեալ գեհենին սպառնալեաց. և մի վասն զի բարեբար է ոՀ՝ արհամարհել զնա, այլ մանաւանդ զարհուրել, զի և տանջող ևս է։ Զի ո՞այլ ոք զայնչափ չարիս հասոյց Հրէիցն, մինչև կանանց առ կարիս սովոյն զորդիսն խորովել և ուտել, եթէ ոչ ինքն Քրիստոս։ Ա՛ռ որ և նախ 'ի հաւատալ 'ի նա Հրէիցն՝ փութայ Պետրոս հասուցանել զբանն յասէն.

ՃԱՌ ԿԵՑԵՐՈՐԴ

«Արդ իսրայելացիք, լուարուք զբանս զայս»։ Ոչ է փաղաքշանաց հանդարտագոյն խօսելը. այլ զի վերագոյն զարհուրեցոյց զնոսա սպառնալեօք մարգարէին, զի մի՛ վհատիցին կամ զայրասցին, դարձեալ նախերգանս սկսանի, յիշեցուցանել կամելով նոցա զՔո։ Եւ ոչ ասաց թէ արք իսրայելացիք հաւանեցարուք, զի ծանր թուէր. այլ թէ լուարուք։ Եւ իսկոյն վաղվաղակի՝ ի մէջ բերէ զանուանն Յոի. և՝ ի սկիզբն բանիս ոչ ասէ ինչ՝ ի բարձրագունիցն զՔոեէ, այլ՝ ի յոյժ խոնարհագունիցն. զՅո՝ ասէ։ Եւ վաղվաղակի զհայրենիսն յիշէ. զնաղվրեցի՝ ասէ, որ ոչ ինչ մեծագոյն ցուցանէ զնա քան զմարգարէ։

ԵՓՐ. Օ այր. մարդ քարոզէ զնա, զի իբրև կաթն ջամբեսցէ նոցա զաւետարանն. այլ իբրև կատարեսցին, քարոզեսցեն զնա դատաւոր արարիչ և ՅՈ։

ՈՍԿ. Օ Յո՛, ասէ, զայրն. և զնովիմբ ածէ զմեծն, թէպէտ մեղմով՝ թէ յայ առաքեցաւ, ասէ։ «Զցուցեալն յայ՝ ի ձեզ»։ Զայս և Քո՝ ամ ուրեք փուԹայր ցուցանել՝ թէ «Ոչ յանձնէ, այլ՝ ի Հօրէ եկի». և Մկրտիչն՝ թէ «Նա ասաց ցիս. յոյր վերայ իջցէ Հոգին և հանգիցէ, նա է Քոն»։ Զայս և Երանելին Պետրոս Ճեպելով ցուցանէր այպանողացն. նախ զսպեաց զնոսա երկիւղիւ, և ապա համարձակի պատմէ՝ ի մէջ խաչողացն թէ յարեաւ։ Բայց նախ զայն գնէ՝ յայ եկն։ Եւ այս ուսոմ է յայտ. ՝ի զօրութենէն և յարուցեալ՝ ի զոր արար։ Եւ դեռ ևս ոչ ասէ թէ ինքն Յո արար, այլ թէ՝ ի ձեռն նորա ածՅ։ «Որպէս և դուք իսկ գիտէք» ասէ։ Զանց երկիւղն իբրեզնոսա կոչէ վերկայս, զտեսողն և զլսողն սքանչելեացն Յոի. զոր և Նիկոդիմոս ասէր՝ թէ «Յայ եկեալ ես. զի ոչ ոք կարէ առնել զոր դուդ առնես»։

Եւ իբրև ասաց զնոցին գիտացեալն, ապա և առ

անյայտն գայ։ «Զնա, ասէ, նկատեալ խորհրդով և կանխագիտութիւն այ մատնեալ 'ի ձեռաց անօրինաց բևեռեալ 'ի փայտի սպանէք»։ Զչար կատաղութիւն զայն՝ ոչ եթէ դուք զօրացայք և խաչեցէք, ասէ, եթէ ոչ ինքնիշխան յօժարութիւն գայր 'ի մահ. որ ցուցանէ զնա ՅԱԾ. այլ կանխագիտութիւն այ էր սահմանեալ։ Եւ տես, զի Թէպէտ փութացաւ ազատել զնոսա յամբաստանութենէն ասելով թէ տեսչուի այ էր որ եղեւն, որպէս և Յովսէփ ասէր մի բարկանայք միմեանց զի ՅԱԾ առաքեաց զիս աստ, այլ զի մի ասիցեն թէ տեսչուի այ էր՝ ասպա բարիոք գործեցաք զի խաչեցաք, ոչ, ասէ. զի Թէպէտ նախասահմանեալ էր, այլ դուք այրասպան էք։ Սմին վասն յաւել՝ թէ «Մատնեալ 'ի ձեռաց անօրինաց բևեռեալ 'ի փայտի սպանէք»։ Զբոլոր չարն 'ի գլուխն Յուդայի կուտէ, որ մատնեաց զնա համբուրիւն 'ի ձեռս անօրինաց զինուորացն։ Զի ոչ պարզաբար սպանէք, այլ 'ի ձեռն աւրանց անօրինաց։ Եւ զոր ինչ վասն սպանուէն ծանր էր նոցա լսել, ոչ ածէ 'ի մէջ թէ կարող էր՝ որ մահու յաղթեաց, և զձեզ սպանանել. այլ ՅԵՍԻ ցուցանել թէ մեռաւ և յարեաւ։ Եւ ոչ ՀԱՅԵՂ դեռ ևս զնոսա, թէ դուք ուրանայք՝ մարգարէն վկայէ. զի ուսուցէ զմեզ զիջանելով ընդունել զանհաւատն։

Այլ նախ զմահն Յոի խոստովանեալ՝ գայ առ յարութիւն։ «Զոր ՅԱԾ յարոյց» ասէ։ Տես թէ որպէս 'ի մէջ քաջայայտիցն զանյայտն դնէ, զյարութիւն ասեմ. զի զօրութիւնքն և նշանքն և սպանումն յայտնիք էին։ Եւ ոչ ասէ թէ ինքն յարեաւ, այլ թէ ՅԱԾ յարոյց. զի դեռ զխնայարհագումնիւքն գայ. և զի ցուցցէ թէ չէր օտար 'ի Հօրէ, այլ միաբան և համակամ։

Այլ 'ի վեր հանէ զլսողն բարձրագոյնս ՀԱՌԵԼՈՎ զնմանէ։ «Լուծեալ, ասէ, զերկունս մահու. զի ոչ էր հնար ընդունել նմա'ի նմանէ»։ Ոչ էր հնարդ՝ ցուցանէ թէ ինքն իսկ մահն երկնէր յունելն զնա, և չարաչար պատառումն իւր կրել փութայր՝ զոր լուծանել ասէ։ Որպէս որ երկնէն ծնանել՝ ոչ կարէ 'ի նեղբս ունել զոր ունին, այլ ՅԵՍԻ արտաքս տալ, այսպէս ոչ կարողանայր մահ իշխել նմա ունելով, այլ լուծեալ քակտիւր 'ի նմանէ։ Այլ և երկունս մահու

զնախնի պատուհասն ասէ զմեր, որ վասն մեզաց գտին զմեզ. զոր լուծեալ անդործ արար։ Դարձեալ ոչ էր հնարդ՝ յայտ առնել թէ ոչ դարձեալ մեռանի որպէս այլք ոմանք յարուցեալք և դարձեալ մեռեալք։

Լու իսկոյն փութայ բառնալ զայլ ազգ ինչ մտածուելն 'ի նոցունց ասելով. « Դաւիթի խսկ ասէ զմանանէ »։ Չի յոյժ մեծարգոյ էր այրն, զնա ած վկայ մահուն և յարութեն. և 'ի վերուստ 'ի խոնարհագունին առնու զբանն վկայութեամբ զքեզ, զի ցուցցէ թէ չէր ինչ տրտմեցուցիչ մահ նորա. վասն որոյ և 'ի դիմաց քեզի առնու զբանս։ « Ցառաջագոյն, ասէ, տեսանէի զտէր առաջի իմ յամ ժամ. զի էր ընդ աջմէ իմ մէ, զի մի սասանեցայց »։ Ցուցանէ թէ չէր օտար յայ կամ հակառակ ըստ կարծեաց նոցա. և ոչ առ տկարութեամբ մեռաւ, այլ կամաւ և Հօր կամակցութեամբ յաղթեաց մահու ուրախութեամբ. զոր և ասէ. « Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ »։ այսինքն բանական հոգին քոյ յաւերեցն զդիւաբնակ բանսն դժոխոց։ « Ցնծացաւ լեզու իմ »։ Հոգւովն սրբով 'ի կոչեցն զՀայր տէր երկնի և երկրի։ և դարձեալ զեղեալ խնդութիւն աշխարհի ինքն ասէ զխիզախողացն՝ թէ ուր է մահ խայթոցն քո։ Վասն որոյ յաւելու. « Եւս և մարմին իմ բնակեսցէ յուսով »։ յայտ է անմահութեն, որում սպասեմք դեռևս փրկուելոյ մարմնոյ մերոյ։ ընդ որ և ինքն ուրախացեալ փառս կոչէր զաւիթն փրկութեանս զխաչն։

« Օ 'ի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս». կալ մնալ 'ի խաւարչուտ սանդարամետս ընդ կապելոցն 'ի ներքսն ոգւոցն։ « Եւ ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն »։ որ է լուծումն 'ի նեխուն։ զի թէպէտ մեռաւ Ճշմարտապէս, այլ ելոյծ զմահ և զապականութիւն, և զդժոխս զդժուարին ամրոցն չարին յաւիտեանց քակեաց։ Չի ոչ եթէ անձնաւոր ինն է դժոխք, թէպէտ և գիրք դէմս դնեն նմա ուրեք իբրև անձնաւորի ուրուք՝ թէ « Լայնեցին դժոխք զանձինս »։ Սակայն տեղի է մանաւանդ դժոխք և թշուառական հոգւոց տխուր կապարան։ « Ծանուցեր ինձ զՃանապարհս կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց »։ Տակաւին և զխոնարհագոյնսն Ճառէ զքեզ. այսինքն թէ առեալ 'ի Հօրէ զանմահութիւն և բաշխեալ ամենեցուն՝

վերացաւ յերկինս, յանդիման եղեալ վասն մեր երեսացն Հօր։

ՈՍԿԻ. Եւ յետ վկայութեան մարգարէին յաւելու մեկնել զնոցին։ «Եւ բերեալ» ասէ. 'ի մեծ ինչ ասէին զբնէ զառաջաբանս զայս, զարթուցանելով զնոսա և ընտանեցուցանելով։ «Պարտ է համարձակութեամբ ասել ձեզ, ասէ, վասն նահապետին Դաւթի»։ Բաղումք խոնարհութեամբ խօսի, զի մի խցցեն զանանց չլսել կամ բարկացին։ Սմին վասն ոչ ասաց՝ թէ չէն ասացեալ բանքս վասն Դաւթի, այլ վասն Քրիստոսի. զի մի թուեսցի անարժանս ինչ զԴաւթէ խօսել։ Վասն այսորիկ և ոչ ասաց լոկ վասն Դաւթի, այլ վասն նահապետին Դաւթի։ Այսու և զնոսա ևս մեծարէ վասն ցեղապետն ունելով'ի վերուստ ինքեանց զԴաւիթ։ «Զի մեռաւ, ասէ, և թաղեցաւ»։ Եւ ոչ ասաց թէ ոչ յարեաւ, այլ զոզանալով իմն զբանն՝ մեծագոյն ասաց քան զայս՝ թէ «Գերեզմանն նորա կայ 'ի միջի մերում մինչև ցայսօր»։

Եւ ոչ դեռ այսպէս ևս եկն 'ի Քրիստոս, այլ տակաւին հանդերձ մեծ իմն գովութեամբ զԴաւթէ։ «Զի մարգարէ էր և գիտէր, ասէ, թէ երդմամբ երդուաւ նմա ՅԱԾ»։ Հարկ առնէ նոցա ընդունել զՔրիստի յարութեան բան. ապա թէ ոչ՝ վնասի պատիւն և մարգարէութիւնն Դաւթի։ «Զի գիտէր, ասէ, թէ ոչ պարզաբար խօսեցաւ նմա ՅԱԾ, այլ երդմամբ երդուաւ 'ի պտղոյ որովայնի նորա ըստ մարմնոյ յարուցանել զՔրիստոս և նստուցանել յաթոռ նորա»։ Համարձակապէս խօսի զբարձրագոյնսն, զի նախկին բանիւքն հանդարտեցոյց զնոսա։ Եւ ոչ մերկ դնէ զմարգարէութիւնն, այլ և մեկնէ ևս. երդմամբ, ասէ, երդուաւ յարուցանել ըստ մարմնոյ զՔրիստոս և նստուցանել յաթոռ նորա։ Ըստ մարմնոյ, ասէ. զի ըստ հոգւոյ թագաւորութիւն նորա յերկինս է։ Եւ ընդ յարութեան և զթագաւորութիւն Քրիստի լծակցէ. զի յարուցանել ասէ և նստուցանել յաթոռ նորա։

Եւ ցուցանէ թէ հարկ էր ընդունել մարգարէութեան այսմիկ. և զի վասն Քրիստի իսկ էր մարգարէութիւն, «Յառաջագոյն, ասէ, ծանուցեալ խօսեցաւ վասն յարութեանն Քրիստոսի»։ Եւ չասաց թէ վասն թագաւորութեան նորա, այլ վասն յարութեանն. զի յասէին թէ նստաւ յաթոռն Դաւ-

թէ, եցոյց՝ թէ թագաւոր է Հրէիցն, որ խաչեցին զնա։ «Զի ոչ թողաւ ոգի նորա 'ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն»։ Ա՛յսպէս ասելս քան զյարեաւն ասել նուազ թուի, այլ նոյն է. զի անապականն ոչ է ընդ մահուամբ։ Նա և օրանչելի ևս քան զայլոց ցուցանէ զյարութիւն նորա. զի ընկալաւ իսկ զնա մահ, այլ ոչ կարաց զիւրն գործել 'ի նմա. այսինքն զի մինչև ցերիս աւուրս իբրև զքար ինչ խառատեալ ոչ կարաց կրկտել՝ զնա, այլ փչրեալ 'ի նմանէ ժանեալսն՝ փութացաւ արտաքս տալ զնա, և ընդ նմին և զյաւաջագոյն կլեալսն փսխեաց 'ի բաց։

ԻՄԱՍՏ. Հաստատեալ Պետրոսի զբան յարութենն Քրիստոսի վկայութիւն Դաւթի՝ համարձակ ապա և զիւրն ևս 'ի նոյն յարէ։ «Զայս Յի՛ն, ասէ, յարոյց Ա՛ծ»։ Ոչ տայ այլազգ իմանալ զնա յետ յարութեն, զի յամենայն աբասցէ զմարկելոյսն և զմաքսիմինիսոն և զսեւեւիտսն, որք անկատար և անփառաւոր ասեն զմարմին Տն մինչև ցիսաչն, և յարութիւն այլայլեալ և փառաւորեալ. զորս կշտամբէ և ինքն որ յարեաւն՝ ասելով, թէ ես նոյն եմ։ Իսկ յարոյց Ա՛ծ ասելն՝ զիջանելով է ընդ նոսա։ Եւ ոչ ասաց թէ յարոյց Հայր, այլ Ա՛ծ. ըստ որում և ինքն Քրիստոս ասաց՝ թէ Ա՛ծն իմ։

ԵՓՐ. «Որում ամենեքին մեք եմք վկայք»։ Եւ մեզ վկայ ստատիկ բարբառն որ հնչեաց և անոյշ հոսն որ բուրեաց և լեզուքս օտար զոր խօսիմքս։

ՈՍԿ. Ոչ ասաց թէ ես եմ վկայ, այլ ամենեքին իսկ մեք։ Եւ զի հաւատարիմ ցուցցէ զինքեանց վկայութիւնն, դիմէ 'ի սոյն յայս աքանչելիս։ Բայց ոչ զայս ևեթ կազմէ սոքիմքք, այսինքն հաւատարմացուցանել զինքեանց վկայութիւնն, այլ և զնոսա զարհուրեցուցանէ. զի յորժամ ցուցանի 'ի նոցանէ սպանեալն յարուցեալ և Որդի՝ այ և սիրելի Որդի, թէպէտ դու լուսեցես [2] զպատուհաս վրիժուցն, մեզուցեալն իւրովի հաչի. յայս միտս ասէ «Աջոյն այ բարձրացեալ, զաւետիս Հոգւոյն ընկալեալ 'ի Հօրէ՝ սիրեաց զայս զոր դուք իսկ տեսանէք և լսէք»։ Յայտնեաց ասատնօր զնա՛ծուն Քրիստոս, և զի Որդի է այ և զի գործակից

[1] Միւսն Խրէն։ [2] Միւսն սիրեցես։

է նմա Հայր, յորմէ և զանծուին ունի որպէս 'ի Հօրէ, և զՀոգին առնու որպէս 'ի Հօրէ, և ինքն բաշխէ որ-պէս և կամի, որովք երևի մեծքան զմարգարէս։ Զի ահա Մովսէս տկարանայր բաշխել զՀոգին. իսկ սմա զի Որդի է, ոչ չափով տայ Հայր զՀոգին, զի և իւր իսկ է, Որդւոյ՝ որում զամենայն ինչ ետ 'ի ձեռս նո-ցա։ Եւ զի յոյժ մեծապէս՝ ասաց զՔրիստոս, զնոսին իսկ ածէ վկայս. «Սփռեաց, ասէ, զայս զոր տեսանէք և լսէք»։

Այլ զի ասաց թէ Որդի է՝այ, և զի յարեաւ և զի առաքեաց զՀոգին, ասէ և զհամբարձումն նորա. «Զի ոչ եթէ Դաւիթ եկ յերկինս»։ Որպէս ոք զմանուկ տհաս 'ի բարձր ուրեք կամիցի հանել մեղմով, զի մի յանկրթութենէն ապշեալ 'ի վայր անկցի, այսպէս և Պետ-րոս զգետնաքարշ միտս նոցա։ Եւ զի անհաւատալի թուէր Հրէիցն թէ յերկինս եկ, որք և ոչ յարու-ցեալ իսկ զնա գիտէին, մարգարէիւն դարձեալ կնքէ զբանն, զի մի վասն այլոյ ուրուք կարծիցեն զասա-ցեալն զոր ինքն Դաւիթ ասէ. «Ասաց տէր ցտէր իմ. Նիստ ընդ աջմէ իմմէ»։ Զոր և ոՀրն ասելով զբանս զայս պատանձեցոյց զնոսա։ Եւ զի նոքա մեռեալ հա-մարէին զնա, ցուցանէ թէ յերկինս է և ընդ աջմէ Հօր իբրև զզուգապատիւ և զանթառակից։ Դա և ար-հաւիրս արկանէ յաջորդաւն. «Մինչև եդից, ասէ, զթշնամիս քո պատուանդան ոտից քոց»։ Ցուցանէ զնոսա և Հօր դիմադարձս. վասն որոյ և զվերջին հնա-զանդութիւն օրինակն գնէ. «Պատուանդան ոտից քոց» ասէ։ Եւ այսու զանհնարին տանջանսն ակնարկէ և զաւերումն քաղաքին։

Այլ յորժամ մարգարէիւն հաստատեաց զտէրութիւն նորա զբանն, ապա և ինքն համարձակ զնոյն վկայէ. «Արդ Ոչմարտիւ գիտասցէ ամենայն Իսրայէլի, զի և տէր զնա և օծեալ ածաւ արար»։ Զամենայն ինչ Հօր յանձն արար զՔրիստոսին, զի ընդունելի լիցի բանն 'ի լսողն, և զոչ գոն յինքեանէ հնար հաստատել 'ի մարգարէէն ստուգիւ. ապա և ինքն ևս վկիոր տայ բանիւս ցուցանելով զնա տէր և դատաւոր հաւասար

1 Միւսն գՀ.։

Հօր և Քո իսկ, որ է օծեալ. զոր և ինքեանք իսկ Հրեայքն քաջ գիտէին և զՅովհաննէս հարցանէին թէ դու ես Քոն, և զնոյն իսկ զՅն՝ եթէ դու ես Քոն՝ ասա մեզ, զի գիտէին թէ Քոն Որդի ՅՍ է. և սմա ոչ հաւատացին, այլ և խաչեցին իսկ, ցուցանէ արդ՝ թէ սանտ է որուն մակն ունէիք, և ոչ հաւատացէք Ձչմարտութեանն։

Գ. Այլ զասէն թէ ՅԾ արար զնա, մի արիոսաբար ընկալցիս. զի զմարմնոյն է բանս և ոչ յատուկ զՅԾուէն. զորոյ և Պաւղոս իսկ ասէ. «Ամ տեառն մերոյ Յսի Քոի»։ Եւ այլ ազգ. որոց հակառակ Հօր կարծէին զնա, 'ի սկզբանս կամի ցուցանել թէ 'ի Հօրէ ունի զՅոխութիւն։ Եւ զայս հաստատեալ 'ի գլուխս նոցա 'ի ծածուկ կուտէ զմեղադրանս ասելով. «Զայն Յն զոր դուքն խաչեցիք»։ Եւ այսու սաստիկ զնէ զսպառնալիս, զի զՈրդին ՅՍ սպանին. և չէ հնար թէ ոչ տանջեսցին։

ԲԱՐՈՅԱՒԱՆ

Դ. Զի զաղաւմն 'ի մարդկանէ քան թէ բարերարուէն՝ յոյժ մանաւանդ երկիւղն զգաստացուցանէ, այլ այս ծառայական բարուց և նորեկ անձանց է երկիւղն զգաստացուցանել. իսկ առաքինին ոչ յերկիւղէ գործէնին և ոչ 'ի շահից արքայութեան ակն ածէ, այլ ազատաբար առ ՅԾ զսէրն ուղղէ։ Այլ աւաղ զի և ոչ վաճառականապէս վասն բարի խոստմանցն հաւանիմք ՅՍ, այլ բանսարկուին՝ որ յառաքեալս գործէնին զմեզ ստիպէ 'ի բարկութիւն, 'ի փառամոլութիւն, 'ի պակշոտութիւն. որք և առանց գործէնին ըստ ինքեանց են փախչելիք։ Զորս 'ի բաց մղեալ ուղղեսցուք զՀեղութիւնն, զխոնարհութիւն, զզգաստութիւն, օրինակ ոչ բարկանալոյ առնլով 'ի Պետրոսէ՝ որ մանաւանդ հեղութիւն հաւանեցոյց զիստաստիրտն, զոր և ասա է տեսանել։

ՃԱՌ ԵՕԹՆԵՐՈՐԴ

«Եւ լուեալ զայս զղջացան 'ի սիրտս իւրեանց և ասեն ցՊետրոս և ցայլ առաքեալսն. զինչ գործեսցուք, արք եղբարք»։ Յայժ զօրաւոր է հեզուն քան զխստուն, զի արագագոյն խթելով զսիրտս ազդող գանիւ զարթուցանէ. զի որպէս զանզգայեալ մարմին ոչ խոցելով զբ ածէ 'ի զգայուն՝ այլ կակղացուցիչ գեղովք, այսպէս զանիրաւուն 'ի խիստ ոգւոյ ոչ ցասումն 'ի բաց հանէ կամ նախատինք, այլ մանաւանդ հեզուն առ նա մատչէին։ Ա յսպիսի ինչ արար Պետրոս. յիշեցոյց նոցա զիւրեանց յանդգնութիւն հեղաբար և ոչ կշտամբելով. ասաց և զպարգևսն այ, և զնոսին էած վկայս. և չև ևս յերկարեալ զբանն՝ պատկառեցին 'ի մեծ հեզուէ նորա. զի առ խաչողսն տեառն իւրոյ և ծաւրաւիսն արեանն իւրոյ հայրօրէն դթովք խօսեցեալ լինէր. ուստի և ոչ պարզաբար հաւանեցան, այլ և պարսաւեցին զանձինս։ Վասն զի միշտ այսպիսի են բարք մարդկան. զի յորժամ ասեմք զոք անիրաւ կամ թիւր գոլ, զընդդէմսն ՃԷպի ցուցանել. այլ թէ ասեմք զնա ոչ անիրաւեալ, ինքն վաղվաղ ասել զինքն անիրաւ. զի վէճասէր է ազգ մարդկան։

Սմին վասն Պետրոս ոչ պարսաւեաց զնոսա, այլ ցաւութիւն զիջոյց 'ի զղջումն. մինչև ասել նոցա ցպետրոսեան «Զինչ գործեսցուք, արք եղբարք»։ Զորս վերագոյն արքեալս ասէին, արդ եղբարս կոչեն. ոչ այնքան առ հաւասարս ինքեանց զնոսա ունել ցուցանելով, որչափ 'ի գութ խնամոց առ ինքեանս զնոսա յորդորելով։ Եւ դարձեալ զնախնա արժանացոյց կոչել զնոսա եղբարս։ «Զինչ արասցուք» ասեն։ Ոչ ասացին իսկոյն՝ թէ ապաշաւեմք, այլ զինքեանս նոցա յանձն արարին. որպէս ալէկոծեալն նաւավարին և հիւանդն բժշկին զամենայն ինչ յանձն առնեն, այսպէս և նոքա խոստովանեցին զինքեանս ընդ անյոյսս

կենաց. զի ոչ ասացին թէ զիարդ կեցցուք, այլ թէ զինչ արասցուք։

«Լսեք ցնոսա Պետրոս». դարձեալ ընդամենեցուն նա պատասխանէ։ «Ապաշաւեցէք և մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ»։ Ոչ ասաց իբրև նեղելով թէ տանջեալ լերուք, այլ պարզաբար՝ թէ ապաշաւեցէք, իբր թէ լալ և ափսոսել։ Եւ ոչ ասաց հաւատացէք, այլ թէ մկրտեսջիք. զի զհաւատն մկրտուէն առցեն։ Եւ չասաց զմկրտելն 'ի խաչն և 'ի մահն, այլ յանուն Տէր Յիսուսի, խոստովանեալ զայն զոր ուրացանն. զի այս է սկիզբն բարեաց՝ յորմէ և զայլսն կարելին գիտել։ Վասն որոյ նախ զգիւրագոյնն ասէ զուսնողն բաղում պարգևաց, այսինքն զմկրտելն։ Եւ բարիոք յաւել զիւրաքանչիւրն. զի մկրտութիւնն լուացումն ոչ համանգամայն է բոլոր աշխարհի որպէս ջրհեղեղն, այլ ուրոյն ուրոյն հաւատով մատուցելոցն օր ըստ օրի։ Ապա և զշաղն ասէ, զոր յոյժ փափաքէին լսել թէ զինչ իցեն արդիւնք մկրտութեանն։ «Ի Թողութիւն մեղաց, ասէ. և ընկալջիք զաւետիս Հոգւոյն սրբոյ»։ Արդ եթէ թողութիւն մեղաց և զաւետիս Հոգւոյն պարգև ունի մկրտութիւնն, ապա ընդէր հեղգայք։

ԵԹԷ. Օ 'ի թողութիւն ոչ ծածկեալ է 'ի մկրտութիւն նորա, քաւիչ լինի ձեզ յանօրէնութենէն, զի 'ի խաչ հանեք զդա. և յորժամ քաւիք և սրբիք, ապա և պարգևաց Հոգւոյն զոր տեսէքս 'ի մեզ՝ արժանի լինիք և դուք։ Եւ հաւանական առնէ զբանն և ասէ. «Ձի ձեզ են աւետիքս և որդւոց ձերոց». յայտ է առ 'ի Յովելեայ աւետարանեալն՝ թէ «Հեղից զՈգւոյ իմոյ»։

ՈՍԿ. Մեծ են պարգևքն յորժամ և զորդիսն ևս հաղորդս և ժառանգս բարեացն ունիցին։ «Եւ ՀԱՄ հեռաւորաց, ասէ, զորս կոչեսցէ տէր Աստուած մեր». Այս ինքն հեթանոսաց, այլ նախ մանաւանդ ձեզ մերձաւորացդ։ Եւ տես յոր ժամանաց հեռաւորաց. յորժամ եգիտ զնա զգաստացեալս մեղադրելով անձանց. զի ոգի յորժամ զինքն յաղագս յանցանաց իւրեք ըստ գտանօք դատապարտէ, ոչ կարէ մախալ ընդ այլոց բարիս։

«Լոյս այլովք բանիւք բազմօք վկայութիւն դներ և մխեթարեր զնոսա և ասէր. ապրեցարուք յաղգէ ան-

ան խոստոռելոյ յայսմանէ »։ Ոչ շփացութեամբ իբրև առ ցոյցս ինչ յերկարէ զբանս մատեանագիրս. այլ մանաւանդ համառօտէ սոսկ անցանելովք թէ և այլովք բանիւք։ Եւ ոչ մի ըստ միոջէ զասացեալսն 'ի մէջ բերէ։ Բայց դու տես զնորդ յայանիս և կատարեալս տայ զցոյցս վարդապետութեանն սուղ բանիւս. զի վկայուն գնեն երկիւղ արկանելոյ և զգուշութիւն է ցոյցորոյ սակս և զիրշն ոտիցն այլուր թօթափէին։ Իսկ միութարեն սիրոյ և քաջալերս կենաց տալոյ։

«Լսիցեարուք, ասէ, յազգէ աստի խոստոռելոյ»։ Խոստոռեալ ազգ յաղագս առաժամայն ներկայից Հրէիցն ասաց, որք յայնժամ խոստոռեցան 'ի Փեռ. որով առաւել առաժամայն կշտամբին և պատուհասին մարդիկ 'ի չարութիւն գործոջ ըմբռնեալք. որպէս բանիւս այսու խաչեցողքն ահա, յորոց 'ի բաց կտրելով զլեզուսն յորդորէ 'ի հաւատս Փեռի, և ցուցանէ թէ հաւատքն զնոսա յայնպիսի չարէն ազատէ. այս է տարբերարուքն։

«Ամենց յօժարութիւն ընկալեալ զբանս նորա մկրտեցան. և յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրև երեք հազար»։ Հայեաց 'ի փրկելոյն բազմութի՝ որ առաւել քան զնչանն քաջալերեալս և զօրեղս առնէր զառաքեալսն. զի ընկալեալ զբանն գովեցին և երկիւղիւ լեալով մկրտեցան, և նոյնժամայն ընկալեալ զպարգևս Հոգւոյն սրբոյ՝ իսկոյն առ բարիոք վարս եղեն փոխադրեալք։ «Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն և բեկանելոյ հացին և աղօթից»։ Երկու առաքինութիւնս համանգամայն ցուցանէ զնոսցանէ, միաբանութիւն և ժուժկալութիւն, զի հանապազօր ուսուցանէին զնոսա առաքեալքն, և իբրև զնորագոյն մանկունս մուցանէին հոգևոր կերակրով, ոչ բաւականացեալք առաջնովք առ նոսա ասացելովքն. զի այն հաւաքեաց ահա զնոսա 'ի հաւատս։ Իսկ զկնի այնր ցանկ ուսուցանէն՝ թէ զինչ պարտ է հաւատացելոցն առնել, խրատէր։ Եւ տես ապա զնոսա 'ի կերակուր, յաղօթս և 'ի հաղորդութիւն ամենայն կարեաց, միաբանեալս յամենայնն հասարակաց և ժուժկալութիւն։

«Լուս լինիցեն ամ անձին ահ և երկիւղ»։ Ցայտ է զի ոչ հաւատացելոցն միայն. նախ զի յանկարծ ինն տե-

սանէին այնպէս փոխադրեալս զնոսա . զի հրեշտակք այն ինչ եղեալք՝ միայն յաղօթս և յունկնդրուն բանին ժուժկալէին ։ Եւ դարձեալ 'ի յոլով նշանացն եղելոց յաձախէր երկիւղն։ «Զի բազում նշանք և արուեստք 'ի ձեռս առաքելոցն գործէին »։ Զի որպէս առ Փեթրու նախ նշանք գործէին 'ի նմանէ , և ապա վարդապետուն և դարձեալ նշանք , նոյնպէս և աստ . որով ամէն երկիւղն հանապազ։ Այլ ոչ ասէ աստանօր զվարդապետուն կամ զբազում նշանսն մի ըստ միոջէ , այլ համառօտ անցանէ . զի գիտասցուք զի ոչ զնա՞մ ինչ գրեցին ոչ զՓեթրն և ոչ զառաքելոցն ։

«Զամենայն հաւատացեալքն էին 'ի միասին , և ունէին զամենայն ինչ հասարակաց »։ Տես զաձուն նոցա 'ի բարին վաղվաղակի . զի ոչ տեղեաւ միայն և վարդապետուն և աղօթիւք էր հաղորդուն , այլ և քաղաքավարուն . զի ունէին զամենայն ինչ հասարակաց իբր զտէրունիս և ոչ անձանց։ Քանզի տեսին թէ Հոգւոյն սրբոյ պարգևքն հասարակաց էին , և ոչ ոմն քան զոմն ունէր յոլովագոյն , վաղվաղակի և ինքեանք զգոյն հասարակեցին սիրով . զի սէրն իսկ է պատճառ ամենայն բարեաց ։ Ամենեքեան , ասէ , միաբան էին , և ոչ ոմն էր և ոմն ոչ . զի վաղվաղակի արմատն չաբեաց ագահութի 'ի բաց հատաւ ։

« Յչ զս ոացուածս և զինչս վաձառէին և բաշխէին ամենեցուն ում զիարդ պիտոյ ինչ լինէր »։ Տես զզօրուն Հոգւոյն օրշափ երկիւղ և փոյթ արկ 'ի նոսա ։ Վաձառէին զգոյսն , որպէս և Քէ ասաց . և բաշխէին ոչ վայրապար որպէս ելլենացւոց իմաստունքն , յորոց ոմանք զգոյսն լոկ ընդ վայր թողին , և այլք ոմանք բազում 'ի ծոմն ընկեցին . իբրու թէ չէր հնար բարւոք ուղղել զայն բաշխելով , որ էր անմտուն ։ Այլ սորա բաշխէին , ասէ , որոց պէտք էին . և « Ինքեանք հանապազօր կանխէին միաբանութի՞ 'ի տաձարն »։ Քան զերիս հազարս աւելի գոլով էլանէին հանդերձ առաքելովքն բազում համարձակուն՞ . զի վայելելով օր ըստ օրէ վարդապետուն՞նոցա՝ ոչ մարմնական ինչ իբս Հոգւոյն , այլ 'ի տաձարն ժուժկալէին առ սովորական տեղին , յոլով սէր և պատկառանս ունելով ։ Զի և առաքեալքն ոչ մերժէին զնոսա անտի , և ոչ

'ի հրեական կարգացն տակաւին փոխեին ինչ, զի մի 'ի հաւատն զնոսա վնասէսցեն. Քանզի և ինքեանք իսկ անդ 'ի տաճարն կանխեին յաղօթս։

«Յչ առանին բեկանեին զհացն և առնուին կերակուր ուրախութիւն։ Մինչդ զհացն ասացեալ՝ Թուի ինձ զպահս և զխիստ վարս ակնարկել. զի կերակրոյ և ոչ փափկութեանն հաղորդեին։ Եւ Թէպէտ պահքն և 'ի բաց տալն ընչիցն կարէր զնոսա արկանել 'ի տրամութիւն, այլ երկոքումբքն իսկ ուրախ էին. զի ուրախութիւն առնէ զվայելչութիւն, և ոչ յղփութիւն կերակրոց և ըմպելեաց յաձախութի՝ որ արկանեն 'ի ցաւս։

«Յչ միամտութիւն սրտի օրհնէին զԱծ»։ Յայտ է զի ողջախոհքն եղեն վարուք. զի ոչ է հնար 'ի ցնծութենէ լինել, ուր ոչ է պարզամիտ յստակութի. զի սա իսկ յայտ առնէ զառաքինութի նոցա, քան զընչիցն տուրս և ըզպահս և զաղօթս մեծագոյն գոլով միամտութիւն։ Այսպէս մաքրապէս օրհնէին զԱծ. զի այս է առաւել օրհնել զԱծ, պարզամտութի։ Այլ տես զնոսա վաղվաղակի ընկալեալ զփոխարէնն։ «Ունէին, ասէ, շնորհս առ ամենայն ժողովուրդն»։ Յայտ է՝ վասն ընչիցն արհամարհելոյ և ողորմածութենն զոր առնէին, փափաքելիք ոմանք էին և ցանկալիք. զի ով որ ոչ սքանչանայր ընդ նոցա պարզամտութի։ Եւ մի զայս ինձ ասիցես՝ Թէ քահանայապետքն դառն աչօք հայէին ընդ նոսա որպէս և ընդ Քրիստոս. այլ զի առ ժողովուրդն մեծարգի էին, Թուի Թէ և զաղջումն 'ի նախանձ բարւոք կրօնիցն յորդորէին։ «Եւ տէր յաւելոյր 'ի փրկեալսն հանապազօր 'ի նոյն»։ Յիրաւի տեառն վերագրէ զկոչումն փրկելոցն. զի նա ինքն զիւրաքանչիւր որ 'ի դէպ ժամու կոչէ միաւորելով ընդ փրկեալսն։ Որպէս ցուցանէ ահա զօրինակն աձման հաւատացելոցն սքանչելեօքս զոր կամի պատմել։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Բայց հայեաց, զի բազում բարութեամբ պատճառք են անստացուածութեան՝ բացատրութի առնելով համ չարեաց, և նեղքսադրութի անչարութեամբ ըստ անմեղ մանկանց։ Աստպիսիք էին Յովսէփ և Դաւիթ և խորամանկացն յաղթեցին. զի որ գնայ միամտութեամբ, գնայ յուսով. գործակցէ այսմ և նեղութի և անձուկ, յաղթիս և 'ի յոյսն այ զարթուցանելով զտագնապեալն, առ որ փութով հասանէ այցելութեամբ բազմագիտի յեղանակաւք։ Եւ լուր ահա որոց 'ի կարգիս։

ՃԱՌ ՈՒԹԵՐՈՐԴ

«Պետրոս և Յովհաննէս եղանէին 'ի տաճար անդրը յինն ժամու աղօթիցն»։ Բազում յոյժ երևի սոցա միաբանութիւն. զի սմա ակնարկեր Պետրոս հարցանել զմանչէն, և 'ի գերեզմանն սոքա զուգընթացք, և այն՝ թէ «Տեր, իսկ սա զի՞»։ և այժմ յաղօթս ժուժկալէին, կարգաւ և օրինօք զայն կատարէին և անդ աղօթէին։ Սմին վասն ոչ ասէ թէ եղին 'ի տաճարն յինն ժամն յաղօթս կալ՝ իբրև զնորոգ սկսեալ սովորուէ, այլ թէ եղանէին 'ի տաճարն յինն ժամու աղօթիցն. զի ցուցցէ՝ թէ օրէն իսկ էր Հրէից աղօթել 'ի ժամուն յայնմիկ. թերևս 'ի Դաւթէ կարգեալ էր ժամն յեօթն ժամուցն օրհնելոյ զՅԾ։

ՆԵՐ. ԿԹՂ. Օրոյ եղից տէրն զխորհուրդ յայնմ ժամու փոխանակ մահուն վՀաւի զոր ետաս նախնի մարդոյն և արտաքսեաց. եմոյծ 'ի դրախտն զաւազակն 'ի սոյն ժամու. և ինքն անմահն մահացաւ. զի ընդ այլոցն դիմադարձութեաց՝ և ժամ ընդ ժամու կշռեսցէ 'ի բժշկէն զմեզ։ Զի և մեք մի տուժեսցուք ծուլութք զաղօթս 'ի դէպ ժամուցն։ Եւ զի ընդդէմ յամելոյ 'ի մեղս չափեսցուք և զապաշխարութեն ժամանակ։

ՈՍԿ. «Լոյս էր այր միկաղ յորովայնէ մօր իւրոյ»։ Զայլովք նշանօքն օրնախ քան զայս՝ զանց արարՂուկաս, և զայն միայն յիշէ՝ որով զամենեսեան 'ի հիացուցմունս շարժեցին, զհաւատացեալսն հաստատեցին և զայլսըն 'ի հաւատս ձգեցին. զի իբրև զայս նշան դեռ ևս ոչ էին արարեալ։ Քանզի բնական էր ախտն առ այրն, որ դժուարին և 'ի վեր է քան զարուեստ բժշկութե. քանզի քառասուն ամ կաղ գոլով ոչ օր կարաց բժշկել զնա։ Բայց տես և զառաքեալսն ոչ 'ի սկզբան զայս արարեալ, զի յամենայն փառասիրութէ մաքուրք էին

։ Միւսն գիմաբրոՆէանց։

իբրև զվարդապետն իւրեանց. այլ յետոյ ուրեմն ե-
կին յայս նշան մեծ բժշկել զկաղն 'ի ծնե։

ՆԵՐ. ԿԹՂ. «Զ որ բարձեալ դնէին, ասէ, հանապազ առ դրան տաճարին խնդրել ողորմութիւն»։ Յոյժ էր պատահարք վշտաց մարդոյն. զի և ոչ 'ի հարկաւոր կերակրոյն պաճարանս կարողանալ նմա գոյր հնար, այլ այլոց ոտիւք բարձեալ. որովք և նշանաւոր իսկ էր այրն յախտէն, 'ի ժամանակէն և 'ի տեղւոյն, զի բառնալով տանէին զնա 'ի դուռն տաճարին. և մինչև անդ 'ի ժամ մտանելոյ մարդկան 'ի տաճարն։

ՈՍԿ. «Խնդրել ողորմութիւն» ասէ։ Զի մի կարծիցես վասն այլոյ իրիք կրեալ և եգեալ զնա անդ, այլ զի ողորմութիւն առցէ։ Եւ էր վասն զտեղին յիշէ. առ 'ի յանդիմանել զանապարոյն բարս կրողացն զնա, որ ոչ մատուցին զնա առ Քն, որպէս և ոչ զերեսունեւութամեայ հիւանդն։ Թերևս էին թերահաւատք ոմանք նստեալ 'ի տաճարին, որք զաղաւմս յայսմանէ խափանէին։ Եւ տես ահա զի և ոչ առ առաքեալսն զնա մատուցին, տեսանելով զնոսա մտեալս 'ի տաճարին և բազում աքանչելիս գործեալ։ «Որոյ տեսեալ զՊետրոս և զՅովհաննէս մտանելով 'ի տաճարն՝ աղաչէր ողորմութիւն առնուլ»։ Ողորմութիւն միայն առնուլ հայցէր ոչ գիտելով թէ այր ոմանք էին. այլ զի իբրև առաքինի արանց և արդարոց ետես զձև նոցա յատուկ յայլոց։ «Հայեցաւ 'ի նա Պետրոս Յովհաննու հանդերձ և ասէ. հայեաց 'ի մեզ»։ Զայս ասաց, զի զմիտս նորա 'ի բարձրագոյն իմացուածս զարթուսցէ. այլ նա և ոչ այնպէս զգաստանայր, այլ ստէպ ստէպ թախանձեցուցանէր. զոր և ասէ. «Նա դարձաւ 'ի նոսա, և ակն ունէր առնուլ ինչ 'ի նոցանէ»։ Զի այնպիսի է տնանկութիւն, որ և առ հրաժարեալսն 'ի տալոյ ստիպով հայցել հարկէ։ Ամենեսցուք ապա և մի յաղօթիցն արտաքս ելցուք, այլ մնասցուք թախանձելով զնոսա։

«Նէ ասէ Պետրոս»։ Տես զՅովհաննէս, զի յամենայնի լուն և զգաստերիցութիւն այլ ոչ խնդրէ. այլ Պետրոս ընդ նորա տայ պատասխանի. «Արծաթ և ոսկի ոչ ունիմ»։ Ոչ ասաց թէ ասա ոչ ունիմ որպէս մեք ասեմք, այլ թէ բնաւ ոչ ունիմ։ Եւ զկնոջդ, ան-

տէս առնես զՀայցողս. ոչ. այլ զոր ունիմն յայսմ-
նէ առ։ Եւ ոչ ասաց թէ պատուականագոյն քան զոս-
կին տայ քեզ. զի այն յարդեանցն յայտնէր։ Եւ զինչ
իցէ զոր տայդ։ «Ցանուն Յեսի Քրիստոսի նազովրեցւոյ ա-
րի և գնա»։ Եւ միշտ զնազովրեցին անուանէն. զի
առ ժամայն այն ինչ էր խնդրելի, զի հաւատասցէն 'ի
նա։ «Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նորա յարոյց զնա»։
Ա՛յսպէս և Քրիստոսն բանիւ բժշկէր, և երբեմն
ձեռն դնելով ուր տկարքն էին 'ի հաւատս. նոյնպէս
և սա, զի մի թուեսցի ինքնին լինել նշանն՝ կալաւ զա-
ջոյ ձեռանէն և յարոյց զնա։ Եւ այս ինչ յայտնի առ-
նէր զյարութիւն Քրիստոսի. զի յարութիւն էր պատկեր և օրի-
նակ յարուցանելն զկաղն. սմին վասն և յանուն նորա
առնէին։

Ա՛յսպիսիք էին Հրեայք կաղք 'ի հաւատս, որոց
պարտ էր խնդրել զառողջութիւն. այլ կացին կաղա-
ցեալք, զի զեանաբարշք և ընչասէրք էին։ Ա՛յլ զոս
Պետրոս ոչ արար անտես։ Եւ հայեաց զաղատուն ան-
ձինն, զի ոչ առ ցոյցս արար զբարեբարեն, զի բերանն
և ձեռն զամենայն վճարէր. և նա ոչ զոք 'ի փարթա-
մաց խնդրեաց առ բժշկուն, և ոչ ասաց թէ սմա բժշ-
կելով ոչ լինի յայտնի և մեծ սքանչելիքս. նա զի և ոչ
գնոյ ակնկալուն գոյր 'ի նմանէ, և ոչ առաջի ումանց
բժշկէր զնա, և ոչ տանէր 'ի ներքս ուր բազմուին էր,
և ոչ 'ի ներքս մտեալ քարոզեաց զեղեալն. այլ 'ի
համեստ ձեւոյ իւրմէ զկաղն ձգեաց առ հայցուածս,
և ետ նմա զոր ոչ ակն ունէր։

«Ցանուն Յեսի Քրիստոսի արի, ասաց. և անդէն հաստա-
տեցան բարձք նորա և սրունք. 'ի վեր վազեաց և սկսաւ
գնալ»։ Աքանչելի էր և հաւատք առն, զի փութապէս
հաւատաց լինել բժշկուէն. զի յամենայն յախտս հա-
զիւ կարէն հաւատալ, իսկ նա ընդ տեսուին և ընդ
լսելն զբանն հաւատաց և բժշկեալ եղև։ «Ի վեր վա-
զեաց և եմուտ ընդ նոսա 'ի տաճարն. գնայր և վազ-
վազէր և օրհնէր զՅԻՇ»։ Ա՛ռդ քանզի տկար էին ոտքն
և ոչ հատեալք, և վասն այնորիկ վազվազէր, փորձե-
լով թերևս զանձն իւր և յոլովագոյն առնելով ըղ-
քնութիւնն։

ԵՓՐ. Ա՛յլ ումանք ասեն՝ թէ վասն զի անփորձ էր
և ոչ գիտէր գնալ, զի չէր երբեք գնացեալ։

ՈՍԿ. Իսկ սքանչանալ գայ, զի և ընդ նոսա 'ի տա-
ճարն եմուտ. զի ոչ նոքա զնա ածին, այլ ինքն հետե-
ւեր և զերախտաւորսն ցուցանէր և օրհնէր զնա՝ ։
Զի ոչ ընդ նոսա միայն սքանչանայր, այլ 'ի ձեռն նո-
ցա զնա՝ օրհնէր և ոչ դադարէր. այլ մասն ինչ առ
հետուանէ որպէս 'ի խաղս ինքեաւ վազս առնոյր, և մասն
ինչ յար կալով ընդ նոսա ինոյր զերանս անհաւա-
տիցն։ Եւ զի մի կեղծաւորուն իրքն կարծիցի, վազե-
լով գնայր, զի այն չէր կեղծաւորուն. զի թէ առ սո-
վոյն վասանգի՝ լոկ 'ի վայր կոխել ոչ կարէր, ոչ թերևս
վազվազեր և ցնծայր առաջի կրողացն զնա, զի մի
բաժանեսցին զառ 'ի յողորմուն տուեալսն նմա. զոր
միայն իւր լինել կարծէր բաւական։ Եւ այլ ազգ. զի-
արդ կեղծաւորեր վասն յուսոյ ընչից 'ի Պետրոսէ՝ որ
ոչ ունէր ստացուածս. այլ վասն զի գոհացող էր նախ-
քան զբժշկիրն, և յետ առողջուանն ևս առ ոտ և առ
նոսա բարեմիտ լինէր։

«Այս ետես ամենայն ժողովուրդն զնա զի գնայր և
օրհնէր զնա՝ և գիտէին զի սա էր որ նստեր առ գե-
ղեցիկ դրան տաճարին»։ Բարւոք ասէ թէ Ճանաչէին
թէ նա էր, ցուցանելով զի իբրև զանծանօթ զոմն հա-
մարէին զայրն, որպէս զկուրէն իբրև զանծանօթ ա-
սէին. «Ո՞չ սա էր որ նստէրն և մուրանայր»։ Նոյն-
պէս և ասա, հաղիւ ուրեմն յիշէն թէ սա էր՝ որ նըս-
տեր վասն ողորմուն։ Զի այսպիսի բառիւս վարիմք
'ի վերայ որոց հաղիւ Ճանաչեմք առ ժամն. ասեմք՝
թէ յառաջ Ճանաչէաք սա էր, այսոնիկ ոմն։ «Եւ լցան
զարմանալեօք 'ի վերայ նշանին որ եղև»։ Վայելչա-
պէս. զի բնաւորեալ իսկ է նշան 'ի սքանչումն ըմբռ-
նել՝ զտեսողն։ Թերևս զՀինգ հազարացն ակնարկէ
ասա, որ այսու նշանաւս հաւատացին։

«Այս մինչ նա ունէր զՊետրոս և զՅովհաննէս»։
յայտ է՝ բժշկեալն, զի ոչ մեկներ 'ի նոցանէ, գոհա-
նալով զնոսն և զնոցանէ, և քարոզեր ամենեցուն զե-
ղեալսն։ «Ընթացաւ ամենայն ժողովուրդն 'ի սրահն
Սողոմանի՝ զարմացեալք»։ Յայտ առնէ այսու զբարե-
միտ և զանմեղանձ կամն ժողովրդեանն. որպէս զա-

1 Միւսն բերէն։

ռաջին սքանչացեալն երկիւղածս գոլ վկայեաց։ «Եւ տեսեալ զնոսա Պետրոս զարմացեալս՝ արար պատասխանի »։ Դարձեալ Պետրոս որպէս 'ի սկզբանն ատենաբանէ։ Ա՛յլ յայնժամ յարոյց զնա առ քարոզուին իրքն որ վասն լեզուացն էր. իսկ այժմ նշանն որ եղև։ Սմին վասն յայնժամ սկսանէր 'ի կատակելոյն, և այժմ 'ի տարադէպ կարծեացն՝ թէ « Ընդ մեզ զի՞ էք պչուցեալք »։ Տեսցուք ապա զհասարակուն և զզանազանուն այնր և այսր հրապարակախոսութեան։

Ա՛նդ սքանչելիք և այն և այս, և զարմացեալս և անդ և աստ, և բազմուն նմանապէս խմբեալք, և անգիտացեալք նոքա և սոքա զզիարդն և զուստին, և առաքելոցն ուղղեալ զկարծիսն, և հաւատալ բազմաց։ Ա՛յլ զանազանին. զի այն 'ի տան, և այս 'ի տաճարին. զի յայտնի լիցի, և բազումք հաւատասցեն. անդ առանց բժշկուէ, և աստ մերձ կալով բժշկեալն քարոզէր զերախտիսն. անդ կէսք խաղ առնէին, և աստ ամենեքեան զարմացեալք. անդ հանդերձ մեծատանիւքն խօսէր Պետրոս, և աստ հանդերձ Յովհաննու միայն. զի այժմ ուժգնագոյն է և համարձակ 'ի յաճախութեանէ նշանացն։ Սմին վասն և հաւատացեալքն անդ երեք հազարք, իսկ աստ հինգ հազարք. զի այսպէս առաքինուն բնաւորեալ է յառաջանալ միշտ և զօրանալ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ուստի խրատեսցուք նախ զփոքրն խլել զարիս իբրև զերդումն և զծաղրարանել, և սկսանել զբարին, և սովորել առանց ձանձրուէ. թէպէտ և յոյժ 'ի փոքունցն իցէ, փութով 'ի մեծամեծս ելանէ, որպէս փոքր կայծակն 'ի դիզանէլ փայտից։

ՃԱՌ ԻՆՆԵՐՈՐԴ

«Լ՝ԲՐԵԻ ետես Պետրոս, պատասխանի ետ Ժողովրդեանն. արք Իսրայելացիք, զի զարմացեալ էք 'ի վերայ այսոցիկ, կամ ընդ մեզ զի՞ էք սլշուցեալք»։ Համարձակագոյն քան զառաջինն է այժմու հրապարակախօսուն. ոչ թէ վասն զի երկնչէին յայնժամ, այլ զի անդ ծաղրարարք գոլով լսողքն ոչ հանդարտէին. զորս և յառաջաբանն անդ առ ինքն դարձուցանել կամելով ասէր՝ թէ ունկն դիք բանից իմոց։ Իսկ այժմ վասն զի նշանն զսոսա յորդորեաց, և լի էին ահիւ և զարմացմամբ, ոչ կարօտացաւ այնպիսի ինչ բանից. այլ այլ ազգ հնարեցաւ զնոսա շահել։ «Ընդէր, ասէ, հայիք ընդ մեզ. իբր թէ անձանց զօրութիւն արարաք զգնալ դորա»։ Զայս ասելով նախ զայն կամի յայտառնել՝ թէ ինքեանք արարին զքարանչելիսն, և ոչ տայ թոյլ թերահաւատ լինել յեղելոցն. բայց զգուշանայ դարձեալ զի մի յայս և՛ եթ դադարեալ՝ վնասեսցին հաւատք նոցա. սմին վասն 'ի բաց մղէ յինքեանց զառ 'ի նոցանէ փառսն և զդովեսա, յանձ վերաբերելով զզօրութիւն հրաշիցն. զի այնպէս քաջ մանաւանդ զանձինս փառաւորեսցէն արհամարհելովն զփառս և ցուցանելով թէ անձայինքն էր որ ինչ 'ի ձեռն նոցա եղև։ Քանզի այս իսկ է ախորժակ սրբոցն. ըստ որում Դանիէլ ասէր. «Ես ոչ թէ իմաստութեամբ որ յիս է՝ գիտացի»։ և Յովսէփ՝ թէ «Աստուծով է մեկնութիւն երազոցն»։ և Դաւիթ՝ թէ «Զարշ և զառիւծ փողոտէի յանուն տեառն»։ Նոյնպէս և ասա Պետրոս՝ վասն եղելոյ նշանին իմացարուք, ասէ, զաբանչելարարն և մի՛ վրդովիք։

«Լ՝աստուած Աբրահամու, անձ խասկայ և անձ Յակոբայ»։ Միշտ զնախնիսն յիշէ և 'ի նոսա յարի, զի մի՛ թուեսցի նոր ինչ կրօնս 'ի ներքս մուծանել։ Սմին վասն անդ զԴաւիթ յիշեաց, և ասա զաբրահա-

մեանսն։ « Աստուած հարցն մերոց փառաւորեաց զՈրդի իւր զՅՍ»։Տես ընդ ցածուԹեն և զիմաստուԹիւն. ոչ ասաց չիացուցք վաղվաղակի՝ Թէ արդ հաւատացէք, ահաւադիկ տեսանէք՝ զի քառասնամեայ կաղն անուամբն Յսի յարեաւ. զի մի վիճողս արասցէ զնոսա։ Այլ առժամայն գովէ զնոսայ իշմամբն նախնեացն, զի սքանչացեալ էին ընդ եղեալսն. և ապա զՅՍ 'ի մէջ բերէ, և 'ի ծնողէ անտի կոչէ զՅՍ Որդի Ա՛ստուծոյ։ Եւ դեռ ևս ոչ ասէ՝ Թէ ՅՍ զսա բժշկեաց, և մանաւանդ զի նա իսկ բժշկեաց. այլ զինչ. «Աստ փառաւորեաց զՈրդի իւր զՅիսուս»։ Եւ յորժամ յԱծ ապաւէնի ցուցանելով 'ի նմանէ զՅՍ, յայնժամ առանց ահի ինչ զարՀուրեցուցանել զնոսա. զի վերագոյն ասէր. զՅՍ զայր ցուցեալ յայր 'ի ձեզ նշանաւք, և այժմ՝ Թէ Աստ փառաւորեաց զՈրդի իւր զՅՍ։

Այլ զի մի ասիցեն՝ Թէ զիարդ զօրինաղանցն փառաւորէր Աստուած, ցուցանէ Թէ յայր Հօրէ միշտ փառաւորեալ էր նա նշանաւքն զոր արար 'ի միջի ձեռամբ։ Քանզի խոնարհաբար դարձեալ սկսանի Ճառել զնմանէ որպէս յառաջնումն 'ի խօսսն. և ապա յամելով բանիւն 'ի Ճառս չարչարանացն 'ի բարձրագոյնսն Հանէ զլսողսն։ Սմին վասն զիջանելոյն ասէ. « Փառաւորեաց զՅՍ զոր դուքն մատնեցիք և ուրացարուք առաջի Պիղատոսի 'ի դատելն նորա արձակել »։ Ցիշեցուցանէ նոցա զդատաստանն որ եղև առաջի Պիղատոսի. զի Թէ կամիցին 'ի միտ առնուլ, ոչ էր ՅՍ օրինազանց. և Թէ այնպիսի ոք էր, Թերևս և ոչ Պիղատոս 'ի բաց արձակէր զնա։

Այլ ոչ ասաց 'ի կամելն նորա արձակել, այլ 'ի դատելն. զայժ անամՀԹուԹիւն և զկարծրուԹիւն նոցա յայտ առնելով։Աստ կրկին զնէ զատաստանուԹիւն.զի Հեթանոսն և որ յայնժամ Հետեւ զնա, 'ի բաց արձակեր. և այն զի ոչ ինչ մեծամեծս Հետեւ կամ լուաւ 'ի նմանէ, այլ զի գիտաց զի առ նախանձու մատնեցին զնա։ Իսկ նոքա որ բանիցն և նշանացն մնդակիցք էին, զՀաւատառն այնմիկ առնէին։ Եւ 'ի դատելն Պիղատոսի արձակել, զի մի կարծեսցեն չնորՀ ինչ առնել նմա, ինքն իսկ ասաց՝ Թէ «Ի՞ ձեր սոխլորուԹ, զի արձակեցից ձեզ այր մի »։

«Լ. Յլդուք զնոն և զարդարն ուրացարուք, ասելով չիք մեր Թագաւորք բաց 'ի կայսերէ. և խնդրեցէք այր մի մահապարտ հնորհել ձեզ»։ Որ զայլս սպանանէր աւազակն՝ հայցեցէք 'ի բաց արձակել, և որ զսպանեալն կենդանարարն՝ զառաջնորդն կենաց՝ սպանէք»։ Յոյժ դժուարացոյց զծանրութիւն չարեացն. նախ զի ոչ խնդրեցէք, ասէ, զանմեղն. և զի 'ի կամէն Պիղատոսի արձակել՝ ոչ կամեցայք. և դարձեալ ոչ միայն ուրացայք, այլ և սպանէք և։ Յոյժ զարհուրեցուցանէ զնոսա. քանզի յերկիւղն և ընդ ձեռամբ ունէր զնոսա։ Իսկ յառաջնումն նուազին ոչ ինչ այսպիսի ասաց զնոսա. այլ այժմ յորժամ և զգալ կարէին զասացեալսն. զի որպէս արբեցելոցն ոչ ինչ ասէմք մինչև սթափեալ յարբեցութենէն զգաստանան և ասա զայն յանձախեմք, այսպէս Պետրոս՝ յորժամ կարէին 'ի միտ առնուլ, յայնժամ թեքեաց զլեզուն և անձեցոյց զամբաստանութիւն՝ թէ զոր ՀԾ փառաւորեաց, դուք ուրացարուք։

Լ. Լ տես թէ որպէս 'ի ծածուկ զզօրութիւն նորա ցուցանէ՝ թէ զանձն իւր յարոյց. որպէս յառաջնումն կացրդականուն ասաց՝ թէ չէր հնար ըմբռնել նմա 'ի մահուանէ, և ասա՝ թէ զառաջնորդն կենաց սպանէք։ Ուրեմն ապա ոչ յայլմէ ունի զկեալն. զի որպէս առաջնորդ սպանութիւն ասի՝ որ զսպանութիւն ուսուցեալ եցէ, և առաջնորդ կենաց՝ որ յինքեանէ ունի զկենդանութիւն։ Եւ ապա զիմանելով ընդ նոսա խոնարհագոյնս բարբառի։ «Զոր ՀԾ յարոյց, ասէ, 'ի մեռելոց». իբրև զգործակից. յայտ է զի ոչ տկարանայր զանձն յարուցանել առաջնորդն կենաց, որոյ անուն կանգնեաց զկաղն՝ որ չէր ընդհատ 'ի մեռելոյ։ Եւ ուստի գիտասցուք. «Մեք իսկ եմք վկայք» ասէ։ Տես զի ոչ այժմ 'ի մարդարէսն ասալինի, այլ յանձն իւր. զի այնուհետև արժանի հաւատալոյ ամն էր։ Զի անդ յասելն թէ յարեաւ, զԴաւիթ ածէ վկայ. իսկ այժմ զգունդն առաքելական։

«Լ. Հաւատովք անուան նորա զսա զոր տեսանէքքս և գիտէք, հաստատեաց անուն նորա. և հաւատքն որ նովաւ՝ ետուն դմա զառողջութիւնս զայս յանդիմման ձեր ամենն»։ Կամեցեալ ասել զիրս փրկու-

թէ նոցա՝ թէ դարձարուք 'ի ինքէ զմեղս ձեր, և նախ քան զայն ասել Հանապարհ գործելով հաւատոյ նոցա, յառաջեաց զնշանն 'ի վերայ եած, զոր և ինքեանք իսկ կամէին. մանաւանդ լսել և գիտել՝ թէ զիարդ կամ յումի եղեն աքանչելիքն, զոր յայտնէ ասելով թէ հաւատքն որ 'ի Քս՝ զամ ինչ վՀարէ։ Եւ ոչ ասաց 'ի ձեռն անուանն, այլ անուամբն։ Եւ դեռ ևս ոչ ասէ թէ 'ի նա հաւատացէք, զի տակաւին ոչ վստահանայր. այլ թէ հաւատքն որ նովաւ։ Եւ զի մի նուազ երևեսցի ասելն՝ թէ նովաւ, ասաց՝ թէ անուն նորա հաստատեաց զդա։

ԼՀ ապա յորդորելով 'ի հաւատս, ածէ 'ի վերայ՝ թէ «Հաւատքն որ նովաւ՝ ետուն դմա առողջութիւդ զայդ»։ Եւ գիտեա թէ որպէս յամի զնոսա կոչէ վկայս. զի վերագոյն ասէր, «Որպէս և դուք իսկ գիտէք». և ասա՝ թէ վկայ ձեզ առողջութիւս զոր տուաք սմա յանդիման ձեր ամենեցուն։ Զի զայն՝ թէ անուամբն Յեսի եղեն աքանչելիքն, ոչ գիտէին. այլ թէ կաղ էր և արդ առողջացեալ տեսանէին իսկ։ Այլ սոքա զոր արարին, զայն խոստովանին՝ թէ ոչ իւրեանց զօրութեամբ զայն արարին, այլ անուամբն Յեսի. զի թէ չէր այսպէս, և ոչ Հշմարտապէս տեսեալ էին զնա զի յարեաւ. ոչ ապա ախորժէին զփառս մեռելոյն հաստատել, այլ յաւէտ ևս զինքեանցն. և մանաւանդ առաջի այնոցիկ՝ որք 'ի նոսա իսկ հայէին իբրև ընդ աքանչելարարս։

ԼՀ քանզի յոյժ սաստկապէս բուռն եՀար զնոքօք և զարՀուրեցոյց՝ ցուցանելով յարուցեալ զխաչեալն 'ի նոցանէ, զի մի Հատցէ զյոյս նոցա որ խաչեցին զնա, և սպառսպուռ կորիցեն, դարձաւ թողացոյց նոցա տալով զիշխանութիւն ապաշխարութեան։ Եւ վաղվաղակի եղբարց անուանակոչութիւն մխիթարեաց զնոսա. և զոր ինչ նոցա պարտ էր ասել, ինքն ասաց. «Եւ արդ եղբարք, գիտեմ զի անգիտութիւն արարէք որպէս և իշխանքն ձեր»։ Եւ վասն զի անդ յառաջ ոչ ասաց այսպիսի ինչ յաղագս Քսի մեծագոյնս, այլ միայն՝ թէ «Հշմարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իսրայէլի, զի տէր զնա և ած արար», բայց ասա և ողբանս մատուցանէ թէ անգիտութիւն արարէք։ Անդ զտեղի առնոյր, զի նո-

քա տացէն պատասխանի. իսկ այժմ զի ընտանա-
ցեալք եղէն, ինքն ընդ նոցա պատասխանէ։

Եւ զի չէր յանգիտութիւն, յայտ է. զի զաւազակն
հայցել և զդատեալն արձակել ոչ առնուլ՝ այլ և սպա-
նանել՝ զնարդ էր անգիտուն։ Սակայն ետ նոցա տե-
զի ոչ ուրանալ զեղեալն, այլ զղջանալ։ Արդ զի զան-
պարտն սպանին, գիտէին. բայց թէ զառաջնորդ կե-
նաց և զտէրն փառաց՝ ոչ գիտէին. զոր և ինքն Քրիս-
տոս ասաց՝ թէ «Ոչ գիտեն զինչ գործեն»։ Եւ ոչ մի-
այն զնոսա ազատէ յամբաստանութենէ, այլ և զնշ-
խանան և զՀարտարապետն չարեաց։ Եւ զայս հան-
ճարով. զի թէ 'ի դատախազուն զանն արտաբերէր,
վնճակաւս զնոսա առնէր. զի չարագործ՝ որ յորժամ
պարսաւիցի, ճեպի ուժգնագոյնս լինել 'ի պատաս-
խանիս։ Սմին վասն ոչ ասաց այժմ դարձեալ՝ թէ խա-
չեցէք սպանէք, այլ թէ արարէք, ներողութիւն տալով
նոցա։ Զի թէ իշխանքն և առաջնորդք անգէտք էին,
քաջ մանաւանդ սոքա. և եթէ նոցա թողաւ, յաւէտ
և սոցա։ Արդ մի այս է պատասխանի, և երկրորդ
միւսն նոր և սքանչելի. որպէս Յովսէփ ասէրն թէ
«Աճ առաքեաց զիս առաջի ձեր». և ասաց թէ «Ցայ
եղէ»։ Եւ զոր ինչ վերագոյնն ամփոփելով ասաց՝ թէ
«Սահմանեալ խորհրդով և կանխագիտութեան այ»,
զնոսն և ասաց ասէ յայտնի և ընդարձակ։

«Այլ ասէ, որպէս յառաջագոյն պատմեաց
'ի բերանոյ ամ մարգարէից զաւրաբերին Քրիստոս,
նոյնպէս և կատարեաց»։ Ցուցանէ թէ զոր ինչ կը-
րեացն Յս, ոչ էր 'ի նոցա զօրութիւն, այլ յայտնի ցու-
ցեալ լինի 'ի մարգարէից՝ թէ ըստ այ կամացն եղէն։
Եւ զոր հեգնելով ասէին «Թէ որդի է այ՝ ինչդեղ այժմ
'ի խաչէն, զի ասաց թէ որդի այ եմ, արդ փրկեսցէ
զդա եթէ կամի զդա», ոչ էր առ տկարութիւն այն
զի ոչն էր՝ այլ ըստ զօրութիւնն, զի կամաւ Հօր եկն
յայն. որ կանխեաց քարոզեաց զնմանէ բերանով ամ
մարգարէից։ Եւ զի մի ասիցեն թէ զիարդ այժմ զնա
փառաւորեաց, որոյ յայնժամ օգնել ոչ կամեցաւն,
ածէ 'ի մէջ զմարգարէսն՝ թէ այնպէս պարտ էր լի-
նել։ Բայց ոչ զուրուք յիշէ զվկայութիւն, զորս իւրա-
քանչիւր սք 'ի նոցանէ զնաւոզացն ամբաստան եղէն,

և զտանջանն զոր նոցա հասանելոց էր քարոզեցին. ըստ այնմ, թէ «Տայ զչարս փոխանակ թաղման նոցա»։ Եւ մեծացոյց զնոսրՀուրդ չարչարանացն յաՀախուն թէ մարգարէին, թէ ոչ մի ոք կամ երկու՝ այլ ամենեքեան իսկ ասացին, զորս և կատարեաց, ասէ, զի մի կարծիցեն պակաս ինչ լինել յասացելոցն։

Լոյս զի մի վստահացին՝ զայ տնօրէնութիւն պատասխանի դոլ ինքեանց, կանխեաց առաջին բանիւքն ըմբռնեաց զնոսա, զի առաջի Պիղատոսի ուրանալն նոցա ոչ էր ըստ այ 'ի կամէն նորա արձակել. և դատապարտեալ զնոսա մարդասպանն, զոր հայցեցին և զանմեղն սպանին. թէպէտ առ 'ի նմանէ տնօրէնութիւն մեծ էր. որ մեռաւ և զմահ ելոյծ. որ միայն այ իմաստութիւն է 'ի Ճահ զնոցա չարութիւն յօգուտ բոլորից վՀարել։

Լոյս որս թէպէտ 'ի դէպ էր ասել՝ թէ մի կարծէք, թէ զի մարգարէքն զայսոսիկ ասացին, կամ թէ զի ըստ անգիտութեան գործեցէք, թէ այսու ազատեալք լինիջիք 'ի պատժոց։ Այլ ոչ ասաց զայս, այլ յոյժ հեզութիւն. «Արդ ապաշաւեցէք» ասէ։ Զի թէպէտ ըստ տնօրէնութեան կամ անգիտութիւն եղև, այլ մեծամեծս մեղայք։ «Եւ այժմ ապաշաւեցէք և դարձարուք 'ի ջնջել զմեղս ձեր»։ Ոչ ասաց դարձարուք 'ի մեղաց ձերոց, այլ 'ի ջնջել զմեղս ձեր։ Ոչ ասեմ միայն զյանդգնութիւն որ 'ի խաչին, զի այն թերևս ըստ անգիտութեան էր. այլ զի և այլ ևս մեղքն ձեր ջնջեսցին։ Որ անդ ասաց «Մկրտեսջիք իւրաքանչիւր ոք 'ի թողութիւն մեղաց», ապա և զշահն ցուցանէ, «Որպէս զի եկեսցեն 'ի վերայ ձեր ժամանակք հանգստեան յերեսաց տեառն», աստանօր յաղագս հասարակաց յարութիւնն պատմէ. զի այն իսկ է Ճշմարիտ հանգստեան ժամանակ։ Զոր և Պաւղոս հայցէ՝ թէ «Ի տաղաւարի աստ հեծեմք ծանրացեալք և բնակութիւնն երկնից փափաքեմք». զնոյն և սա ցուցանէ թէ աշխատեալք էին և բազում պատերազմաք չարչարեալք. զի առողջացեալս և բազում միխիթարութիւն խնդրողս յարմարի այս բան։ Եւ յայտ առնէ՝ թէ նա ինքն է հանգըստեան ժամանակաց պատՃառք, որ յայսքան չարեաց հանգուսցէ. զորմէ ոչ ետ աւետիս թէ զմի ևեթ ըղ-

մեղս ընկնեցէ, այլ յոգնասցէս զմեղս բազումս, և զայն հաւասարասցէս։

Եւ տես զմարդ Հանապարհաւ յառաջ վարէ զբանս. զի յառաջնումն ատենախօսութեան 'ի ծածուկ իմն զլարութիւն քոի և զնստելն յերկինս նշանակեաց, և ասասնօր յայտ յանդիման ասէ և զերկրորդ գալուստն։ Եւ նախ զինչանելոյն ընդ նոսա «Առաքեցէք, ասէ, ձեզ»։ Եւ ապա յորդորական, թէ «Ջյառաջագոյն նկատեալն ձեզ զՁՈ քո». ցուցանելով 'ի վերուստ 'ի սկզբանց անտի զՀանգիստն զայն պատրաստեալ ձեզ քոիւ։

«Օ՞ որ պարտէ, ասէ, յերկնից ընդունել». փոխանակ ասելոյ թէ հարկ է յերկնից ընդունել. և զիա՞րդ դեռ ընդունել. ընդէ՞ր ոչ ասաց՝ որ յերկինս ընկալեալ եղև, այլ զկանխագոյն ընկալեալն այսպէս ասաց. ցուցանելով թէ յերկինս է։ Եւ ընդէ՞ր այժմ չլինի եկեալ, յայտնէ զպատՃառն՝ թէ «Մինչև 'ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ, զորոց խօսեցաւ ՈՃ 'ի բերանոյ սրբոց իւրոց մարգարէիցն»։ Որպէս զի բազումք ինչ իրաց դեռ ևս պակաս գոլով՝ ընալ պատՃառ է. և զիա՞րդ ապա ասացեր՝ թէ կատարեաց զմարգարէիւքն խոստացեալսն։ Ա՛յլ զոր պարտն էր կատարել՝ լցաւ, և այն ինչ որ դեռ ևս լինել պարտն է՝ ոչ ևս։

Դ՝այ ապա ըստ իւրում խոստմանն 'ի մարգարէս. որպէս և անդ զԴաւիթ, և ասա զՄովսէս 'ի մէջ ածէ։ «Մովսէս ասաց ցՀարսն՝ թէ մարգարէ յարուսցէ ձեզ ՈՃ»։ Եւ զայլոցն ոչ պատմեաց, այլ միայն թէ խօսեցաւ բերանով սրբոց մարգարէիցն, որոց հարկ է լսել. զի ոչ ոք կարէ ասել զնոսա սխալեալս։ Եւ ՈՃմն նոցա կանխասացուբ՝ 'ի ներքս մուծանէ զՔՈ. զորմէ նախ Մովսէս ասաց. «Մարգարէ յարուսցէ ձեզ տէր ՈՃ ձեր յեղբարց ձերոց իբրև զիս». և այլ ոք, ասէ, ոչ ունի զիմ նմանութիս բաց 'ի նմանէ։ Եւ յեղբարց ձերոց ասելով առաւել իմն ընտանեցուցանէ զնոսա։ Եւ յորդորէ ապա. «Նմա լուիջիք ըստ ՈՃի որ զինչ և խօսեսցի առ ձեզ»։ Եւ ոչ ասաց թէ լուիջիք որոց ՔՈ խօսիցի. իբրու ինքն էր որ խօսէրն։ Ամենն վասն և զպատուհասն բազում դնէ ոչ լսողացն. «Եղիցի ՈՃ անձն

որ ոչ լուիցէ մարդարէին այնմիկ, սատակեսցի 'ի ժողովրդենէ։» Տեսանէս թէ որպէս ընդ խոնարհագոյնս խառնէ և զբարձրագոյնսն։ Աստուած յարոյց զնա ասելոյ զերոց, այս խոնարհագոյն. իսկ սպառնալն ոչ լսողացն նմա, զի «Որ ոչ լուիցէ՝ սատակեսցի», զբարձրագոյն պատիւն նորա նշանակէ. և յայտ առնէ թէ՝ եմ ինչ լինի զոր խօսեցաւ Քս։ Եւ բարիոք եղ զսատակելն ոչ լսողացն. զի յորժամ մեծ ինչ ասէ, 'ի յառաջինս ապաւինի և զայն բերէ վկայութիւն 'ի մարգարէից, որ համանգամայն ունի զերկոսին տեսակ հնազանդութիւն և անլսողութիւն, որ է հրաշափառագոյն. որպէս նախ եբէր՝ թէ «Մինչև եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց»։

Այս յորժամ եցոյց զնոսա սատակապէս մերժեցեալս զի զանմեղն սպանին, և հաղորդս արար ներողութիւն 'ի ինքնէն զմեղսն, և խոստացաւ զքաղցր հանդիստն, 'ի վերայ եաւ վաղվաղակի՝ թէ Մովսէս զնոյնդ ասէ։ Որով ցուցանէ ըստ կարգի զեմ ինչ լինել մինչև 'ի ժամանակս եմի կատարելոյ. զորոց ասէ՝ թէ «Եւ եմ մարգարէք որ 'ի Սամուէլէ և այսր խօսեցան և պատմեցին զաւուրս զայսոսիկ»։ Եւ ոչ կամեցաւ 'ի մէջ ածել զիւրաքանչիւրոցն խօսս, զի մի երկայնեսցէ զբանն. այլ զնշանաւորն յիշէլով վկայութիւն զմովսիսական՝ զայլովքն զանց արար։

Այս քանզի նոքա վասն յանդգնութեան որ 'ի Քս՝ կարծէին զինքեանս օտարացեալս, այժմիկ մխիթարէ զնոսա և ցուցանէ՝ թէ և չարչարիչն Քսի և օրհնէն զձեզ ըստ մարգարէութեանն է. յորոց լսողութիւն յորդորէ զնոսա հանդերձ գովասանութիւն. զի այսու նուաճեսցին 'ի հաւանիլ։ «Դուք էք, ասէ, որդիք մարգարէիցն և կտակին զոր ուխտեաց ՅԱԾ»։ Եւ զինչ էն որ զիք կտակին կամ որպէս. այսինքն է ժառանգք էք խոստմանցն։ Եւ զիարդ ապա 'ի ձեր իրսդ օտարաբար կայք հեղգացեալք։ Պատժոց և պարսաւանաց արդեօք արժանիս գտրծիցէք. այլ կարէք հանդիսել ներողութիւն. արդ մի զսկիզբն յորհնութիւնն զոր օրհնեաց ՅԱԾ զԱբրահամ և ասէ. «Ի զաւակի քում օրհնեսցին ՅԱՄ ազգք երկրի»։ Եւ ոչ մերկնեաց զասացեալսն, և ոչ յիշեաց զՔՍ. այլ պարզաբար էանց։

Եւ զի մի թուեսցի իբրև թէ 'ի շնորհացն Պետրոսի միայն զայնոսիկ առնուլ, ցուցանէ թէ 'ի վերուստ 'ի վաղուց հետէ պատրաստեալ է նոցա օրհնութիւն այդ. և զի հաւատացեն, « Ձեզ, ասէ, նախ յարոյց ած զՍրդին իւր և առաքեաց զնա օրհնել զձեզ». թերևս արդեօք ոչ և այլոց, այո այլ ձեզ յառաջագոյն խաչեցուցացուցէ։ Սմին վասն ոչ լոկ ասաց թէ առաքեսցէ, այլ թէ ձեզ յարոյց և առաքեաց. այսինքն թէ և յետ յարութեան և յետ խաչելոյն 'ի ձէնջ ձեզ նախ առաքեաց։ Եւ զի մի ասիցեն թէ ինքն զայսոսիկ ոչ կամի, այլ միայն Հայրն, վասն այնորիկ ասաց օրհնել զձեզ. ոչ ասաց կեցուցանել, այլ որ ինչ մեծագոյնն էր. զի խաչեալն օրհնէ զխաչողսն, որ է անբաւ բարերարութեան։ Եւ վայելչապէս. զի թէ եղբայր է ձեր, նա և օրհնէ զձեզ որպէս խոստացեալ է Աբրահամու 'ի զաւակէ նորա օրհնիլ և այլոց։ Յայտ է ահա զի այնչափ հեռի է յոչ կցորդելոյն Հօր վասն ձեր, զի և այլոց զձեզ ախորժէ պատճառս և առաջնորդս օրհնութեան լինել։

Եւ զի մի իբրև 'ի պատժոց արձակեալք յանհոգս լիցին, յաւել՝ թէ « Ի դառնալ ձեզ իւրաքանչիւր 'ի չարեաց ձերոց». զի զգուշասցին յառաջիկայսն։ Եւ դարձեալ ցուցանէ թէ այնպէս մեծ է օրհնութիւնս այս, զի ոչ միայն 'ի չարեացն դադարեցուցանէ, այլ և զմեղս լուծանէ. զի թէ ոչ լուծանէր, զինչդ օրհնութեան հնարէր։ Զի ոչ եթէ դադարեալն միայն 'ի մեղաց անդէն և օրհնեալ եղև, կամ մեղացն եգիտ թողութեան առանց քան օրհնութեան հաղորդելոյ։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Զմա այսուհետև նմանեսցուք և մեք, որ յետ խաչին զնամ հնարս շարժեաց յաղագս փրկութեան խաչողացն. առ որս և զառաքեալսն առաքեաց անսոխակալ մտօք։ Ի բաց հանցուք և մեք զոխս և զնախանձ. և մի բաւական համարեսցուք զոչ հատուցանելն վրէժ, այլ և մահուչափ ցուցցուք առ նենգիչսն զսէր։ Եւ յայսոսիկ մեծ օգնական առցուք զոչ երդնուլն, ուստի լինի ոչքարկանալ։

ՃԱՌ ՏԱՍՆԵՐՈՐԴ

«Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովուրդսն, հասին 'ի վերայ նոցա քահանայապետքն և իշխանք տաճարին և սադուկեցիքն զայրագնեալք վասն ուսուցանելոյ նոցա զժողովուրդն »։ Տես թէ զիարդ յաճախել սքանչելեացն և փորձութիւնքն 'ի միմեանց զնոսա առնուն, ուստի և քաջութիւն իսկ նոցա յայտնի լինի։ Զի յետ առաջնոյ փորձութեանն՝ որ էր պարսաւանք վասն լեզուացն, որպէս թէ չև ևս խառնեալք համարելով ընդ մարտակիցսն, փութապէս ապա ընդ ուժգնագոյնս ընդ այս խառնին պատերազմ։ Բայց տես դարձեալ՝ թէ որպէս կարգաւ լինէր իրքն անօրինեալ. զի ոչ անընդմիջաբար կալան զնոսա փորձութիւնքն, այլ յառաջնումն քաջ կրթեալք հրապարակախօսութիւնն, և յետ այնորիկ սքանչելեօքն որ առկան՝ մեծարեալք և քաջալերեալք, ապա այժմ ևս զչարչարանաց ևս բուռն հարկանեն խնամօքն այ. զոր պատմէ՝ թէ մինչդեռ խօսէին, եկին հասին քահանայքն և իշխանք տաճարին։

Եւ դու հայեաց, թէ զիարդ 'ի վերայ քեռի յարուցեալք մատնիչս խնդրեին և սպասաւորքն ոմանքք վարէին. իսկ այժմ ինքեանք իսկ եկեալ իշխանքն՝ ձեռս մխեին յանդգունք և անամօթագոյնք եղեալք յետ խաչին։ Վասն զի այսպիսի են մեղք. մինչ չև ևս կատարեալ, ամօթ ինչ ունի. իսկ 'ի կատարումն եկեալ՝ անամօթագոյն զգործողն առնէ։ Որով և սոքա լրբեալք հասին քահանայքն և սադուկեցիքն և իշխանք տաճարին. զի կամին դարձեալ հանդիսական ամբաստանութիւս վասն բժշկութեանն յարուցանել։ Եւ ոչ ախորժէին 'ի ծածուկ ինչ լինել վրէժխնդրութեանն քանզի զոր ինչ արարին առ Քրիստս, նոյնպէս և զայս ևս նոքին վասն մարդկայնոյ փառաց առնէին. որոյ սակս այժմ և զայս ևս կեղծաւորին, զի միարիւ-

նահեղք գոլ երևեսցին. զոր և յետոյ ասէն՝ թէ «կամիք ընկենուլ 'ի վերայ մեր զարիւն զանն զանմեղիկ»։

Լ։ տես զանամեթութիւն, 'ի նշանացն և յարուեստից հաւատալի եղեալ թէ յարեաւ, որով ցուցանիւր ՅԾ գոլ։ Զոր մահ ոչ կարաց ըմբռնել, նոքա հնարիւք ջանան շինուցանել. և իբրև զգազանս կատաղիս զայրագինս 'ի վերայ նոցա դիմէին վասն ուսուցանելոյ զժողովուրդն և պատմելոյ Յեսու զյարութիւն մեռելոց։ Ոչ միայն զնա ասէին յարուցեալ, այլ և զմեզ 'ի ձեռս նորա լինել յարուցեալս։ Այսպէս զօրաւոր և յայտնի եղև յարութիւնն Քրիստոսի. որպէս և այլոց զնա պատճառ լինել յարութեան։ Եւ դու հայեաց, զի ամենեքեան ասէին՝ թէ ՅԾ յարոյց զնա, բայց զնշանսն յանուն Յեսու ասէին. որով ցուցանիւր թէ ինքնին իսկ յարեաւ Քրիստոս, որոյ անունն և զայլս յարուցանէ։

Լ։ քանզի և նոքա յարութիւն կարծէին մեռելոց, թէպէտ և ցուրտ ինն և տղայական, սակայն կարծէին և մեծապէս խաւսէին, զի սոքա Յեսու պատմէին զյարութիւն մեռելոց։ Վասն որոյ թէպէտ բաւական էր հաւանեցուցանել զնոսա նշանքն և համարձակուել բանի առաքելոցն, այլ զի ոմանք լցեալք էին ընդ յանունն Յեսու, «Մխեցին 'ի նոսա զձեռս իւրեանց և եդին զնոսա 'ի բանտի»։ Արդ առ Քրիստոս ոչ այսպէս մտանէին քանզի էին. այլ 'ի մէջ գիշերի առաքեալք՝ զնա անյապաղ 'ի բաց տանէին, երկնչելով յոյժ 'ի բազմութենէն։ Բայց յաղագս սոցա յանձինս վստահացեալք ոչ խորշեցան 'ի բազմութենէն. զի վասն այսր իսկ և ի բանտն ընդ նոսա էին, որք այն ինչ զձեռս արեամբն Քրիստոսի լցեալս ունելով՝ զայս և 'ի նոյն յաւելուին։ Եւ ոչ ևս առ Պիղատոս ածեն զնոսա ամաչելով վասն առաջնոց իրացն, գուցէ և վասն այսր ամբաստանիցին. այլ դեռ ևս ինքեանք եդին 'ի բանտի մինչև 'ի վաղիւն, թերևս զի չարչարեսցեն, զի էր ընդ երեկս ժամանակ։

ՈՍԿ. Լ։ արդ նոքա կամելով կակղացուցանել զնոսա եդին 'ի բանտի. այլ զառաքեալսն կարծրագոյն գործեաց յապաղումն ժամանակին։ Բայց տես զի զգլուխս առաքելոցն ըմբռնեցին, որով աւելի ինն կարծէին զայլսն զարհուրեցուցանել և օգտել 'ի միմեանց. այլ

հակառակաւն[1] եղև, զի «Բազումք 'ի լսողաց բանին հաւատացին. և եղև Թիւ մարդկան իբրև հազարաց հնգից»։ Աբանչելի է Թէ զիարդ հաւատացին. մի-Թէ քաջ զօրացեալս տեսին զնոսա. ոչ ապաքէն կա-պեալս և 'ի բանտ դժուարին վարեալս, որ բաւական էր և զնախկին հաւատացեալսն դղրդել։ Այլ տես զզօրութիւն Քրիստոսի. զի ոչ ինչ 'ի նոցանէ զարհուրեին, և ոչ զհաճաւալ դժուարութիւն ծանր ինչ գրեին. զի ասէին, Թէ խաչեալն զայսպիսի ինչ գործէ, ապա ոչ եր-կընչիմք 'ի սոցանէ. զի մեծ է զօրութիւն որ կանգնեաց զկարն։ Եւ այս ոչ անօրինեալսն լինէր. զի յոլով են այժմու հաւատացեալքս քան զառաջինն։ Սմին վասն և տեսանելով նոցա կապեցին զառաքեալսն, զի և զնո-սա երկեցուսցեն. և ոչ առաջի նոցա արտաքս հանին, զի մի 'ի նոցա համարձակութիւն այլքն շահեսցին։

«Լու 'ի վաղիւ անդր ժողովել նոցա զիշխանսն և զերիցունս և զդպիրս Յերուսաղէմ, և զԱննա քահա-նայապետ և զԿայիափա և զԱղեքսանդրոս և զՅով-հաննէս և զոր միանգամ յաղգէ քահանայիցն»։ Տես զնոսա յետ առաջնոց չարեացն բնաւին կոխեալ զօ-բէնսն. ինքեանք դատաւորք, ինքեանք դատախազք. 'ի նոյն դատարանի, 'ի նոյն իրս շարամերձին։ Աննա դարձեալ և Կայիափա, զի նոյնպէս պարտապանք լի-ցին անիրաւ դատաստանին։ Դարձեալ Յերուսաղէմ ժողովին, ուր սովոր իսկ են անիրաւել. ուր և զՔրիստոս աբիւնն հեղին. նա և 'ի քաղաքէն ոչ պատկառեին։

«Լու կացուցեալ զնոսա 'ի մէջ հարցանէին. որով զօրութիւն կամ որով անուամբ արարէք դուք զայն»։ Ապաքէն գիտէին որով անուամբ. այլ 'ի խորհուրդս ելանել պատմելոյ նոցա Յիսուսի զյարութիւն, ըմբռնեցին զնոսա։ Եւ ընդդէմ հարցանէին. ակն ունելով առա-ջի բազմութիւնն ուրանալ նոցա, և զամենայն ինչ այնու համարեին ուղղել։ «Որով անուամբ, ասեն, արարէք դուք զայն»։ Զոր. ընդդէմ ոչ ասէք. զի կամիք ստուերացուցանել, այլ քարոզէք ահա. զի դոքա մանաւանդ ասեն՝ Թէ մեք ոչ արարաք։

«Յայնժամ Պետրոս լցեալ Հոգւով սրբով ասէ

1 Միւսն հակառակն։

ցնոսա »։ Աստանօր յիշեա զոր ասաց Քրիստոս՝ թէ « Յորժամ ածցեն զձեզ 'ի ժողովս, մի հոգայք. զի Հոգին սուրբ խօսեսցի 'ի ձեզ »։ Աբդ տես զզօրութիւն Հոգւոյն. զի որ հարցուածոյ աղախնոյն ոչ հանդուրժեաց, այժմիկ 'ի միջ անցեալ համարձակագոյնս բարբառի. « Իշխանք ժողովրդեան, ասէ, և Ծերք Իսրայէլի »։ Տես զհանձարեղ անձնն. ոչ ասաց վաղվաղակի, թէ յանուն Յեսի մեք արարաք, և ոչ ամբարտաւանս ինչ բարբառեցաւ. այլ հանդերձ պատուով առանց ցասման և երկիւղի. « Իշխանք ժողովրդեան և Ծերք Իսրայէլի, եթէ արժան իցէ դատել զմեզ այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի, որով սա բժշկեցաւ »։ Ցոյժ բուռն եհար զնոքօք. վասն որոյ և 'ի նախերգանէն սկսեալ կատակէ զնոքօք. զի վասն բարերարութիւնն դատեն զնոսա։ Իբրու թէ զայս ինչ ասիցէ, թէ պարտ էր մանաւանդ վասն այսր պսակել զմեզ և իբր զբարեգործս քարոզել, նա և դատիմք 'ի ձէնջ վասն երախտեաց առն տկարի, ոչ հարստի և ոչ փառաւորի. և վասն այսորիկ յաչաղէ՞ոք։ Եւ մանաւանդ այս իսկ խոցէր զնոսա, զի ցուցանէր զնոսա թերնամիս փրկութիւնն մարդկան. և որպէս Քն ասաց՝ միշտ 'ի սպանութիւնս ընթացեալք։

Խազում ծանրութիւն լի է բանս, յայտ առնելով՝ թէ ինքեանք իսկ զիւրեանց բերանս խնուն. և ինքեանք թէպէտ և ոչ կամաւ, զՔն քարոզեն՝ խաչողքն և դատողքն. առ որս համարձակապէս գոչէ. « Յայտնի լեցի ձեզ և ամենայն տանդ Իսրայէլի »։ Աչսու առաւել տրտմեցուցանէր զնոսա, թէ յայտնի լեցի ձեզ ամենեցուն։ Եւ այս է զոր ասաց ցնոսա Քրիստոս՝ թէ « Զոր լսէք յականէ, քարոզեցէք 'ի վերայ տանեաց »։ Եւ զինչ ասէս. « Զի յանուն Յեսի Քրիստոսի զոր դուք խաչեցիք, զոր ՅԾ յարոյց 'ի մեռելոց, նովաւ սա կայ առաջի ձեր ողջացեալ »։ Մի կարծէք, ասէ, թէ թարուցանեմք ինչ զՀայրենիսն կամ զբարչարանսն իբր զամօթալիս։ Գրեթէ նախատելով զնոսա զայսոսիկ ասէր, 'ի միջ բերելով դարձեալ զբարչարանսն, դարձեալ զյարութիւնն. և ապա համարձակ և յայտնի քարոզէ, զոր թշնամիքն ոչ կամէին լսել՝ թէ յանուն նորա և նովաւ սա կայ առաջի ձեր ողջացեալ։

Լու ոչ ասէ թէ առ 'ի մէնք եղև ողջ, և ոչ անցանէ փուքով. այլ և յամէ և ս 'ի բանն։ «Նա է, ասէ, վէնն անարգեալ 'ի ձէնք չինողաց»։ Յիշեցոյց նոցա բան՝ որ բաւական էր զարհուրեցուցանել զնոսա, զոր կանխաւ ասաց Փա՛ թէ «Որ ընդ հարցի ընդ վիմիս ընդ այսմիկ, փշրեսցի»։ Այլ և ուսուցանէ զնոսա 'ի վերայ ածելով թէ «Նա եղև գլուխ անկեան». այսինքն ընտրեալ զօրաւոր պատճառ հաստատութէ երկուց որմոց։ Զայսոսիկ խօսի, զի բազում և ՝ածեղէն էր զօրութէն և մեծնշանացն համարձակութէ։ Այլ յորժամ ուսուցանել պարտ էր, տես որպիսիս խօսին և մարգարէութիս բազումս յառաջ ածէն. իսկ յորժամ միայն համարձակել պիտոյ էր, պատասխանատարէն։

«Լու չէք, ասէ, այլով իւիք փրկութէ»։ Արդ որպիսի՞ զանս ոչ առնուին նոքա 'ի բանից աստի յայսցանէ։ «Զի և ոչ անուն այլ դոյ 'ի ներքոյ երկնից, ասէ, տուեալ 'ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ»։ Տես զիարդ զարձրագոյնս բարբառի։ Անենեցուն, ասէ, յայտնի է, զի ոչ մեզ միայն տուաւ անունն կեցուցիչ, այլ բոլորիցս։ Եւ զնոսա ածէ վկայս բանիցն. քանզի հարցեալք թէ որով անուամբ արարէք, Փեթրն՝ ասէ, զի ոչ դոյ այլ անուն. զի՞արդ հարցանէք, զի ՝ամենն այս յայտնի լիցի՝ զի ոչ անուն այլ կայ ընդ երկնաւ, որով կեանս է գտանել. այլ սա միայն կարող է զմեզ կեցուցանել։ Տեսանե՞ս աստ զհամարձակութէն. որով յայտ է զի զխոնարհագոյնսն ոչ առ երկիւղի, այլ զիջանելով խօսէր։ Իսկ այժմ զի ոչ էին օգտելոց, աներկիւղ մանաւանդ զնոսա զարհուրեցուցանէ։

«Հայեցեալ 'ի համարձակութէն Պետրոսի և Յովհաննու, և 'ի վերայ հասեալ թէ արք տգէտք և առանց դպրութէ են, զարմանային»։ Ահա այլ նշան ոչ պակաս քան զառաջինն. զի երկու այր առանց դպրութէ՝ ընդ հարցաքննութիւն հաւատոցդ երևեցան ընդդէմ քահանայապետիցն. և զարհուրեցուցանէր զնոսա համարձակութէն նոցա, զի ռամիկք և առանց դպրութէ էին։ Զի իցէ ռամիկ լինել և առանց դպրութէ՞ ոչ. իցէ և առանց դպրութէ դոլ և ռամիկ ոչ. իսկ

աստ երկոքին իսկ։ Եւ յարդարուն և գեղեցկապէս, համառօտ և ոչ երկայն բանս տարածանէին. և 'ի շարադրութեան ասացուածոցն զիմաստութիւն ընդ համարձակութենն զոյգ ցուցանէին, ընդ որ նոքա յոյժ աքանչանային։

« Եւ զի Հանաչէին զնոսա զի ընդ Յոի էին »։ Ոչ պարզաբար եդ զայս աւետարանիչն. այլ զի սոքա միայն էին յայնժամ 'ի չարչարանսն Յոի երկուցեալք և խոնարհեալք. ուստի առաւել զարմանային ընդ այնչափ փոփոխումն՝ յոր զնոսա տեսանէին յանկարծակի. զի և անդ իսկ էին Աննա և Կայիափա, որք և տեսին զնոսա ընդ Յոի։ Եւ այն իսկ հաւատալ հարկէր զնոսա՝ թէ առ 'ի Յոե իսկ զայս գիտէին, և իբր նորա աշակերտք զամ ինչ գործէին։ Այլ ոչ պակաս քան զզանս սոցա և նշանն ձայն արձակեալ խնդրոյ զբերանս նոցա։ « Զի տեսանէին, ասէ, զայրն ևս բժշկեալ, զի կայր ընդ նոսա. և ոչ կարէին տալ պատասխանի »։ Բազումք էր համարձակութիւն առնն, զի և 'ի դատարանին իսկ ոչ թողոյր զնոսա. զի թէ որպէս սովոր էին Հրեայքն՝ ժխտել ջանային և ծածկել զկրան, նա իսկ կարկեցուցանէր զնոսա։

Եւ քանզի բժշկութենն որ ոչ տայր թոյլ չարչարել զնոսա, « Հրամայեցին նոցա արտաքս քան զատեանն ելանել։ Խորհեցան ընդ միմեանս և ասեն. զի՞նչ առցուք արանցս այսոցիկ »։ Տես յոյժ վտանգեալս զնոսա. զի զամ ինչ առ մարդկան երկիւղի հնարելով որպէս առ Քահիւ ասէին « Զի՞նչ արասցուք, զի աշխարհ ամ զկնի նորա գնաց », նոյնպէս և աստ ասէին. « Ստուերացուցանել զկրս չէ հնար. զի երևելի նշան եղև 'ի ձեռն դոցա. ամենայն իսկ բնակչացն Երուսաղէմի յայտ է, և ոչ կարեմք ուրանալ »։ Յայտ է ահա զի ուրանային իսկ, թէ ոչ քաջայայտ էր նշանն և բազմացն վկայութիւն։

« Այլ զի մի, ասեն, առաւել Հարակէսցի 'ի ժողովուրդն, սպառնասցուք նոցա մի ևս խօսել յանունն յայն և մի ումեք 'ի մարդկանէ »։ Ով անմտութենն. զի զորս Հաշակել չարչարանացն համարձակագոյնս արար, կարծէին սպառնալեօք զարհուրեցուցանել. զի այսպիսի է չարութիւն. ոչ երբէք դադարել, թէ

պէտ և կշտամբեալ յանդիմանի։ Եւ տես, զի զո-
բոց զվարդապետան սպանին, և զնոսա ոչ դադարեցու-
ցին. և զորս կապանքն և բանսն ոչ թողացուցին, հա-
մարեին բանիւ լռեցուցանել։ Յոյժ լաւագոյն էր թո-
ղուլ զնոսա քան թէ սպառնալ։ Վասն որոյ զոր խա-
փանելն կամիին, յոյժ մանաւանդ յանչափս աճեցեալ
լինէր։ «Եւ կոչեցեալ զնոսա 'ի ներքոս պատուիրեցին
ամենևին մի խօսել և մի ուսուցանել յանունն Յի՛սուսի»։
Իբրու յաղթահարեալք և ամաչեցեալք յետ լոցն՝ զի-
ջանեին տակաւ, թէպէտ յանմտութենէն ոչ կան 'ի բաց։
«Իսկ Պետրոս և Յովհաննէս պատասխանի ետուն
և ասեն. եթէ արժան իցէ առաջի ՝ի ձեզ լսել առա-
ւել քան ՝ի, ընտրեցէք»։ Յորժամ մասն ինչ յերկիւ-
ղէն մանչու հատաւ, զի մանաւանդ պատուիրեն ոչ
այլ ինչ էր քան թէ արձակել, յայնժամ հեզագոյնս
բարբառի. զի այսպէս հեռի էին 'ի յանդգնութենէ։
«Եթէ արժան իցէ առաջի ՝ի ձեզ լսել քան ՝ի»։ Ա-
տանօր ՝ի՝ զՔրիստոս ասեն, զի նա նոցա բազումս անդամ
հրամայեաց քարոզել. և առաջի ՝ի ասելոյ զամե-
նամերձն գոլ զՁոյ ցուցանել, որով առաւել ինն կամի
գրաւել զնոսա յերկիւղ և յամենեթ. այլ զընտրութիւնն
'ի կամն նոցա թողու։ Եւ զի դուք թերևս զձերն ա-
խորժէք քան զՆայն նախապատուել հրամանն, «Ա՛յլ մեք
ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք՝ չպատմել»։ Դար-
ձեալ այսու բանիւ հաստատեն զյարութիւնն. զոր և
տեսաք, ասեն. որով և հաւատալոյ արժանի եմք վը-
կայքս. եթէ սուտ է զոր ասեմքս, քննեցէք և 'ի վե-
րայ հասէք. իսկ եթէ ճշմարիտ, ընդէր արգելուք։
«Ոչ՝ որպա սպառնացեալ արձակեցին զնոսա»։ Տես
զյանդգնութիւն. զի ոչ ներելին սոցա կատարել կնոսս
իւրեանց, այլ 'ի մէջ ասացուածոյն հատանելին զբա-
նն յոյժ քամահելով։ Ա՛յլ և յիմարեալք 'ի վա-
բանս մտանելին։ «Զի ոչ ինչ գտանէին թէ որով պա-
տուհասեսցեն զնոսա». զի եթէ զբերանս նոցա նշանն։
«Եւ ամենեքեան փառաւոր առնէին զՍուրբ վասն իրացն
եղելոց. զի ամաց եր այրն աւելի քան զքառասուն, յո-
բոյ վերայ եղև նշանս այս բժշկութեան»։ Ա՛ռդ ժողո-
վուրդն փառաւոր առնէին զՍուրբ. այլ նոքա ՝ի՝ ծա-
մարտք գոլով սպառնային և սպանանել մտաբերէին.

ուստի և երևելագոյնս և պայծառաս զնոսա ցուցին. զի զօրութիւն իմ, ասէ, 'ի տկարութիւն կատարի։ Զի այսպիսի է հոգևոր իմաստութիւն. նոքա 'ի վտանգի, և սոքա յուրախութեան. նոքա զարհուրեալք զի մի Ճարակեսցի բանն առ ժողովուրդն, և սոքա համարձակեալք՝ թէ ոչ կարեմք զմեծամեծսն չպատմել։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Մերձեսցուք այսուհետև յառաքինութիւն. և մի մինչև 'ի հրձուանս լսելեաց լեցին մեզ ասացեալքս։ Ա մաչեսցուք. զի փոխանակ զկատարելագոյն վարուց, այսինքն բարիս առնել ատողացն՝ պէտք են դարձեալ վասն ոչ երգնելոյ պատուիրել։ Որպէս ոք 'ի կատարեալ հասակի և ատոՃանի գիտութիւն գոլով հեգից և վանկից ուսման պիտոյանայ, ոչ ապաքէն ծաղուս է արժանի։

ՃԱՌ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Լ՚Ի անտի արձակեալք եկին առ իւրեանցն, և պատմեցին որչափ ինչ ասացին ցնոսա քահանայապետքն և երիցունքն։ Տես զցածուն և զիմաստասէր բարս առաքելոցն. զի ոչ շուրջ եկեալ հաչակեցին պանծալով թէ զինչ պատասխանատրեցին քահանայիցն կամ զիարդ զերծան 'ի նոցանէ, զի ոչ էին պատուասէրք. և ոչ 'ի բազմութենն համարձակութի վստահացեալք դժուարինս ինչ ասէին զնոցանէ, այլ հանդարտապէս և հեզաբար եկեալք առ ընկերսն պատմեցին որչափ ինչ ասացին ցնոսա քահանայապետքն, ոչ սակս պատուասիրուե, այլ առ 'ի ցուցանել զՔրիստի շնորհացն զօրութիւն. զի զոր ինչ նոքա ասացին զայն պատմեցին. իսկ զիւրեանցն թէպէտ և իրաւապէս էր ասել, ոչ ասացին առ յոյժ խոնարհութենն, զի զմեզ խրատեցեն 'ի բաց կտրել զփառասիրութենն։

«Իսկ նոցա լուեալ» և ոչ զարհուրեալք, այլ քաջալերեալք 'ի ճշմարիտ օգնականութենն ապաւինեցան և յանմատչելի՝ զօրութենն։ «Եւ միաբան համբարձին զձայնս իւրեանց և ասեն»։ Աղաղակէին նոցա ձայնիւ՝ լիներ 'ի հեշտութիւն և 'ի բազում ըղձմտութիւն։ Եւ տես զիարդ փութով աղօթեն։ Եւ զի մեծաւ խմաստութիւն և բազում խորհրդով առատուգեալ էն աղօթք նոցա. զի յորժամ զոր արժանն էր յառաքելութենի ցուցանել՝ այսպէս ասէին, «Դու տէր սրտագէտ ամի, յանեա զմի օր». զի անդ կանխագիտութիւն էր սէրք. իսկ ասա քանզի լուեցուցանել զհակառակամարտսն պարտ էր, յաղագս տերութենն բարբառին. «Դու տէր ամ, որ արարեր զերկինս և զերկիր, զծով և զամ որ 'ի նոսա»։ Ահա սահման կատարեալ աղօթից, յորժամ յաղագս այսպիսի իրաց լինի, և

1 Միւսն յանմարդանելի։

յայսպիսեաց ոմանց և այսպիսի յեղանակաւ. զի որ ոչ այսպիսի նուիրէ զինքն յաղօթս, դարշելի ինն է։ Եւ տես զի ոչ պառաւականս և ցուրտ բանս 'ի կիր առնուն որպէս բազումք՝ որ առ այլս անկեալ կան չարութիւն, այլ յաղագս զօրութեան նորա խօսին։

Լ։ Որպէս Քա ասաց՝ թէ «Հոգւով ՝այ հանեմ ես զգեաս», ահա և Հայր Հոգւոյն լինի բարբառեալ. զոր և ասէն իսկ։ «Տէր ՝ած, որ 'ի բերանոյ հօր մերոյ Դաւթի ծառայի քո Հոգւոյն սրբով ասացեր, զմի՞ խառնվեցան հեթանոսք և ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս»։ Որպէս ուխտ պահանջելով յայ՝ զմարգարէութիւն 'ի մէջ ածէն, միանգամայն և զնիզբեանս իսկ միխիթարէն, զի ունայն խոկացին զնա՞մ ինչ թշնամիքն. զայնոսիկ 'ի կատարումն, ասէն, հասս, և ցոյց թէ սնոտիս խորհեցան։ «Յանդիման եղէն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան 'ի միասին»։ Եւ վասն զի անդ ոչ էին բազում իշխանք և թագաւորք, այլ Հերոդէս և Պիղատոս, այլ սու

էն գիրք զմիոյ որպէս զրազմայ խօսել. որպէս Պաւղոս ասէ՝ թէ «Ոչ որ յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ զնա»։

ԵՓՐ. «Լ։ զան տեառն և վասն օծելոյ նորա»։ Վասն զի զՔրիստն զոր անարգեցին, զՀայրն զոր ոչ անարգեցին՝ անարգեցին նովաւ։ «Զի ժողովեցան արդարեւ 'ի քաղաքիս յայսմիկ 'ի վերայ սրբոյ Որդւոյ քո Յսի զոր օծեր, Հերոդէս և պոնտոս Պիղատոս ազգօք և ժողովրդովք Խրայելի առնել որչափ ձեռն քո և կամք յառաջագոյն սահմանեցին լինել»։

ՈՍԿ. Լ։ Զրդ եկին սոքա 'ի միասին իբր թշնամիք սպանողական մտօք ընդդէմ քո հակառակեալք. այլ զայն առնէին զոր ինչ դու կամիր. զի ոչ նոքա զօրեին գալ յայս, այլ դու որ զչարութեն նոցա 'ի փրկութեն աշխարհի 'ի կիր արկեր, քաջահարդ իմաստուն և զօրեղ. որ զքո թշնամին ընդ կամն քո թագաւորացուցեր առնել որչափ ձեռն քո և կամք կարգեցին յառաջագոյն։ Ձեռն զզօրութեն ասէն. զի ոչ է այլ ումեք զօրութեն սահմանել յառաջագոյն. կամ ասեն որչափ ձեռն քո դասաւորեալ էտ նոցա իշխանութեն. զոր և Քա ցՊիղատոս ասէր. «Ոչ ունիցիր դու 'ի վերայ իմ իշխանութեն, եթէ ոչ էր տուեալ քեզ 'ի

վերուստ »։ Իսկ կամ, զի՞մ ինչ կամելովն նորա հաստատի։ Եւ տես զի և յաղօթսն ոչ մոռանան, այլ յիշեն զաբչարանսն և զամ 'ի նա վերաբերեն, և համարձակութեամբ պատճառ ինքեանց զնա լինել ասեն։

« Լոյս արդ տեր, հայեաց 'ի սպառնալիս նոցա »։ Զայս ոչ անիծանելով ասեն, և ոչ զոր ինչ սպառնացան նոքա՝ 'ի մէջ բերեն, որպէս և ոչ Եղեկիայն ըզՀուտխակայ. Թերևս զի դժնդակս ինչ ասացին, Թէպետ և Ղուկաս ոչ գնէ։ Սակայն ոչ ասացին Թէ կորս վանեա կործանեա. զի այսպէս բազումք անկեալ 'ի ձեռս սպանանել սպառնացողաց ցաստմամբ և սաստիկ Թշնամութիւն լցեալ լինէին։ Այլ ոչ այսպէս և սուրբ գունդս այս. այլ զինչ. հայեաց, ասեն, 'ի սպառնալիսն, և տուր նոցա և այժմ ևս մնոտիս խորհել որպէս և յայնժամ. և մի հասանիցեն 'ի գործ սպառնալիք նոցա։ Զայս ասէին ոչ իբր 'ի վշտաց հրաժարելով, այլ յաղագս քարոզութեանն և փառացն այ. զի ոչ ասացին Թէ փրկեա զմեզ 'ի վշտաց, այլ զինչ. «Տուր ծառայից քոց խօսել համարձակութիւն զբանն քո »։ Տեսանես, զի յանձանց իւրեանց խոստանան ոչ զարհուրել 'ի նոցանէ. բայց աղաչեն լինել նշանացն։

« Զա 'ի տարածել, ասեն, զձեռն քո 'ի բժշկութիւս և նշանս և արուեստս լինել »։ Վայելչապէս. զի առանց այնոցիկ Թէպետ և բիւր յօժարութիւս ցուցանէին, ընդ վայր էր ամ։ Այլ ոչ պարզաբար ցլինելն հայցեն. այլ անուամբ, ասեն, սրբոյ Որդւոյ քո Յսի։ Զի յորժամ 'ի նորա անունն սքանչելիքն լինիցին, մեծ լիցի համարձակութիւն մեր. վասն զի ոչ այլով իւիք կարեն ցուցանել Թէ յարեաւ, բայց միայն 'ի նշանացն։ Զի ոչ միայն զգուշութիւն ինդրէին անձանց, այլ զոչ լինելն յամօթ և զհամարձակութիւն խօսել զբանն այ։

« Լոյս մինչ կային նոքա յաղօթս, շարժեցաւ տեղին ուր ժողովեալ էին»։ Աղօթելով նոցա շարժիւր տեղին նշանակեալ Թէ լուաւ ամ աղօթիցն նոցա. տինա և զի ելհան ինքն առ նոսա. զի յերեսաց տեառն սասանեցաւ երկիր, որ հայի 'ի սա և տայ դողալ սմա։ Այլ զայս արար ամ, զի դեռ սկիզբն էր, և զգալի նշանաց կարօտանային. զի հաւանեցուսցէ զնոսա քա-

ջալերել. իսկ յետ այնորիկ ոչ այսպիսի ինչ լիներ։ Բայց զիտելի է զի շարժումն երբեմն սաստկապէս և զեալ բարկութեան է նշանակ, որպէս հիմունք ելեռանց սասանեցան զի բարկացաւ ած. և որպէս յաւուր խաչելութեանն Քրիստոսի, և իբրև զառ յապա լինելոցսն զոր ասէր Քրիստոս լինել շարժմանց մեծամեծաց, սովոյ և սասանութեան։ Իսկ այժմուս թերևս ընդդէմ Հրէիցն ընդդիմադարձիցն այսպէս, այլ իւրոցն խնամոց և այցարարութեան ցոյցք. զի առ իւրսն միայն եղև և ոչ սաստիկ. զի շարժեցաւ, ասէ, տեղին յոր կային։ Սասանեցաւ տեղին, այլ զնոսա անշարժս հաստատեաց և Հոգւովն սրբովն լցոյց։

«Զի լցան, ասէ, ամենեքեան Հոգւովն սրբովն», եւ զինչ է լցանն. այսինքն վերստին հրացան և ջերմագոյնք եղեն, և բարբոքիւր 'ի նոսա ընտրեալն որպէս բաց 'ի կայծակունս շարժեալս և ընդվզեալս արծարծեալս։ «Եւ խօսէին զբանն ՅԻՍՈՒՍԻ համարձակութեամբ»։ Զի բազում էր զօրութեան Հոգւոյն որ 'ի նոսա ընդեաց, որ և ինքն իսկ է սիրելն և առաջադրութեան բարեաց. զոր և յիշէ երկրորդ անգամ թէ որպէս Հոգւոյն 'ի բարիս յորդորեալք եղեն ամենեքեան։

«Լցու բազմութեան հաւատացելոցն էր, ասէ, սիրտ և անձն մի»։ Յետ այ ընտրեալն և զառ 'ի յինքեանցն և ս 'ի ներքս բերելին։ Զոր և մեզ պարտ է առնել, որպէս և Պետրոս ասէր. «Արծաթ և ոսկի ոչ գոյ իմ»։ Եւ այլքն զինչս հասարակելոցն, աւելի գոլով քան զՀաղարս ութ, եղեն սիրտ և անձն մի. և զիարդ։ «Զի ոչ և մի ոք ասէր զընչից իւրոց գոլ»։ Ասաց վերագոյն՝ թէ լսելի եղեն աղօթք նոցա. ցուցանէ և զառաքինութեան նոցա։ Այլ զի այս ինչ ոչ լինի առանց սիրոյ, աղէ տեսցուք սէրն զանստացուածութեան ծնաներ, թէ անստացուածութեանն զսէրն։ Յայտ է զի սէրն զանստացուածութեան. իսկ 'ի բաց տալն զգոյսն՝ սերն է և պահէր զսէրն. զի էր նոցա ամենայն ինչ հասարակաց։

«Լցու զօրութեամբ մեծաւ տային վկայութիւն առաքեալքն զյարութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Ոչ միայն 'ի նշանացն ցուցանէ զօրացեալս զնոսա, այլ և 'ի բազմութեանն յաճախութեան օգնեալք. որով իբրև մե-

ծամեծ շնորհօքն զօրութիւն համարձակեալք՝ համար-
ձակութիւն տային զկիսայութիւնն, զթերութիւնն զամ 'ի
բաց հանելով վասն յարութեան։ Տինա զի ոչ բանիւ
միայն, այլ և զօրութիւն. և այն ոչ պարզաբար, այլ մե-
ծաւ զօրութիւն ըստ Պաւղոսի ասելոյն՝ թէ «Բանն մեր
և քարոզութիւնն ոչ էր պատիր բանիւք մարդկեղէն
ինչ իմաստից, այլ ազդմամբ Հոգւոյն և զօրութիւն»։
«Եւ շնորհք մեծամեծք էին 'ի վերայ ամենեցուն. և ոչ
ոք կարօտեր 'ի նոսա»։ Վասն այսորիկ մեծ ասէ զշնորհ-
սին, զի ոչ և մի ոք էր կարօտեալ. յայտ է զի օրհնու-
թիւնն այ աձեցուցանէր զդոյսն. ուստի առաւելութիւն
առանց կարօտութեան որպէս 'ի տուն հայրենի համա-
պատիւք էին ամենեքեան։ Զի ոչ թուէր գոյաւորացն
կերակրել զայլսն, այլ իբրև յիւրականաց իւրաքան-
չիւր ոք վայելէր. զի յինքեանց 'ի բաց եդեալ զիւ-
բեանց իրս՝ ոչ իբրև յիւրեանցայնոց, այլ իբր 'ի հա-
զորդակից կերակրէին ընդ այլս. որ և աքանչելի ցու-
ցանէ զառաքինութիւն նոցա։

«Զի որ միանգամ տեարքն էին գիւղից կամ
ապարանից, վաձառէին և բերէին զգինսն, դնէին
առ ոտս առաքելոցն»։ Այս լինէր 'ի բազում յաժա-
բութենէ հաւատացելոցն. զի ոչ եթէ մասն ինչ 'ի
գոյիցն տային ցառաքեալսն, որպէս տուինն անանիայոց,
այլ ինքնակամ իսկ զբոլորն, որով և 'ի բազում առա-
տութեան վայելէին. զանհաւասարութիւնն 'ի միջոյ
'ի բաց բարձեալ արարին բարեկարգութիւն։ Եւ տես
զառաքեալսն՝ ոչ յորդորէին վաձառել, այլ ինքեանք
վաձառէին և զգինսն ցնոսա տային, և բազում պա-
տուով զայն առնէին. զի ոչ 'ի ձեռաս համարձակէին
տալ, և ոչ հպարտացեալ ինքեանք շնորհէին որոց
պէտք էին. առ ոտսն բերեալ դնէին, գնոսա առնե-
լով տեարս և հոգաբարձուս. զի իբրև 'ի հասարակաց
իրաց ծախքն լինէին և ոչ յիւրականաց ուրուք. այս
ինչ և առ ոչ սնափառել նոցա՝ 'ի Հոգւոյն լինէր պատ-
շաձեալ։ «Եւ բաշխէին իւրաքանչիւր ումեք ըստ ո-
րում պիտոյ ինչ լինէր»։ Յայտ է զի առաքեալքն իբ-
րև զհաւատարիմ տեսուչս ըստ բազմապատիկ կարեաց
մարդկան տային զարժանն։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Լ.այս ինչ թէ այժմիկ լինէր, յոլովագոյն հեշտութիւն քաղաքավարեալք լինէաք և Ճոխք և տնանկք. և ոչ տնանկացն այնչափ՝ որքան փարթամացն բերէր ըզ-հեշտութիւն։ Ապա թէ ասիցես, զինչ առնէաք յեա-ծախման ընչիցն, մի զարհուրիր. զի բիւրապատիկ ոյ շնորհքն ահեցուցանէր։ Զի թէ առ ուրթ հազարամ այնչափ յաճախէր շնորհքն, որչափ առաւել առ և բազում այժմ. զինչ ունիք ասել այժմ. վասն այսո-բիկ 'ի փոքունցն սկսայ՝ յոչ երդնելոյ։

ՃԱՌ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Յ ՈՎՍԷՓ որ կոչեցաւն Բառնաբաս՝ յառաքելոյն անտի, որ Թարգմանի որդի մխիթարուն»։ Կրկին պիտոյից սակս 'ի մէջ բերեալ ածէ զսա։ Նախ իբրև ըզպատկեր ոմն կենդանի 'ի դէմս ածէլ սովաւ զբազմացն առաքինութիւն, զորոց վերագոյն ասաց առ տուրս ընչիցն։ Եւ դարձեալ 'ի կշտամբանս Անանիայ և Սաբիրայ, ցուցանելով զնոսա 'ի վատթարութիւն սխալեալս։ Վասն որոյ նախ զբազմացն ուղղութիւնս յիշէ. զի այնչափ բազումք գոլով որք զայն առնէին՝ այնչափ յօժարք գոլով յառատութի ընտրհայցն, նոքա և ոչ 'ի միոջէ խրատեալք կորուստ ածին անձանց իւրեանց։ Բայց Յովսէփս այս ոչ թուի ինձ այն գոլ որ ընդ Մատաթիայն եկաց. զի նա և Յոստոս կոչիւր։ Իսկ զի և որդի մխիթարութիւն կոչեցին զսա առաքելքն, թուի ինձ բերանուն նպէս յառաքինութիւն անտի կոչեցեալ, որպէս թէ առ այն ինչ բաւական գոլ զսա և ճահաւոր։

«Ղեւտացի» ասէ։ Տես զբարեկարգութիւն բազմացն, զի և զքահանայսն 'ի սոյն յորդորեցին զօրութեամբ հաւատոցն։ «Աղդաւ Կիպրացի»։ Ցուցանէ ամիւ քակեալ զօրէնսն, զի ղեւտացի գոլով զիարդ էր Կիպրացի. այլ զի տարաբնակ եղեալք այնուհետև անդէն իսկ 'ի հեռաստան մնային ղեւտացիքն։ «Էր նորա գեօղ»։ Ցայտ է զի զայն միայն էր ստացեալ, և զայն վաճառեալ եբեր զգինսն և եդ առ ոտս առաքելոցն, հպատակ և յոյժ ցածուն գոլով բարուցն ըստ որուսմ վերագոյն ցուցաւ։

«Իսկ այր ոմն Անանիա անուն հանդերձ կնաւն իւրով Սաբիրաւ վաճառեաց ագարակ, և խորեաց 'ի գնոց անտի գիտակցութիւն կնոջն, և եբեր մասն ինչ եդ առ ոտս առաքելոցն»։ Դիւաւարագոյն էր իրքն, զի միաբանութեամբ եղև սխալանքն, և այլոք ոչ գի-

տաց . ուստի և արագ պատուհասն 'ի վերայ եհաս թշուառականացն ։ « Ասէ Պետրոս . Անանիա , ընդ-էր ելից սատանայ զսիրտ քո ստել քեզ Հոգւոյն սրբոյ և խորել 'ի գնոց գեղջն » ։ Տես զի յոյժ մեծ է նշանս այս քան զառաջինսն , գիտելն զծածուկսն ։ Ընդէր , ասէ , ելից սատանայ զսիրտ քո ։ Ոչ զնա կշտամբէ թէ ընդէր արար սատանայ զայս ինչ . զի գնն յայս իսկ յամառեալ կայ ։ Այսն որոյ և ոչ ՀՀՀ հարցանէր ինչ զօձն՝ որ էր ինչ ուղղելոց . այլ նզովէր զչարն ։ Այլ ասա զայս ինչ ասէ , թէ ընդէր ներեցեր ընուլ սատանայի չարեօք զսիրտ քո ։ Եւ եթէ սատանայ զայս ինչ արար , դա զինչ մեղաւ կամ ընդէր պարտաւորի։ Այս ասեմ յիրաւի . զի ընկալաւ կամաքիւրովք ըզներգործութիւն սատանայի , և նովաւ լցաւ ։ Այլ պարտ էր ուղղել ապա զնա . այլ ոչ ուղղել որ յայնպիսի շահն հայեցեալ լինէր ։ Բայց դու տես զիարդ վաղվաղակի 'ի սկզբանն 'ի վերայ եհաս բանսարկուն, և 'ի մէջ նշանացն և այնչափ աքանչիցն սա ոիրպէս յամառեցաւ , որպէս Աքարն այն 'ի հնուն վերադրեալ իրին ցանկացաւ և զդժնդակ վրէժն կրեաց . զի յոյժ ծանր և դժուարին է տաճարակողոպուտ լինել , զի 'ի բազում արհամարհանաց ժպրհի ոք յայն ։ Ոչ վաճառել հարկեցաք , ասէ . և յետ վաճառելոյն տալ զինչսն դու կամեցար . զիարդ այժմիկ գողացար 'ի նուիրեալ ընչիցդ ։

« Ոչ ասպաքէն մինչ կայրն քո էր , և 'ի վաճառելն ընդ քո իշխանութիւն . միթէ 'ի մէջ արգելար ինչ . զի է զի եդեր 'ի սրտի քում ստել Հոգւոյն սրբոյ . ոչ ստեցեր մարդկան , այլ ՀՀՀ » ։ ՏեսանեՀ զծանրութիւն չարեացն և զարհամարհանաց ։ Եւ արդ ոՀր են այնոքիկ՝ որ ընդ Հոգւոյն պատերազմին . լուիցեն ասանօր , զի որպէս զՀօրէ խօսի յայանապէս քարոզելով զՀածուութիւն Հոգւոյն ։

« Լու լուեալ Անանիա զբանս զայսոսիկ անկաւ և եՀան զոգին » ։ Յեղեղոց ասուի յայտ է թէ մեծ է այս քան զոր առ կաղն արար . այս է սպանանելն և զդատնի լեալն գիտելն ։ Եւ յոյժ մանաւանդ պարտ էր այսմ լինել , այսինքն սպանանել , և ոչ այլ ազգ շահել զնա . զի ոչ էր արժան պարզաբար անցուցանել

զոր ինչ եղեն, այլ որպէս զապականագործ փառաց ի ինչ 'ի բաց հատանել, զի մի ինքասեսցէ զբոլոր մարմինն։ Եւ զի և նա իսկ շահեսցի ոչ ընդ երկար վարելով՝ 'ի խորագոյն չարիս, զի և այլքն զգուշասցին, զի մի 'ի բազումն տարածեսցի չարն։ Բայց ոչ յանկարծակի պատուհասեաց, այլ նախ դատաստան կարգեաց։ Ընդէր, ասէ, որով կամաքն արարեր. 'ի սկզբանն ունել պարտ էր քեզ զինչն և ոչ խոստանալ։ Տես որչափ դժուարին է տաճարակապուտութիւն. զի այլ ոք օտարին ցանկացեալ, թերևս յիրաւի թաքուցանէր. քեզ զբոյդ ունել և ոչ գողանալ պարտ էր. զմարդ արարեր զդայլընծայս տաճարին, և դարձեալ առ քեզ շորթեցեր։ Ցայտ է զի 'ի բազում արհամարհանաց արարեր. վասն որոյ ոչ ունի հնար ներողութիւն։

Բայց մի դայթակղեսջիք՝ թէ և այժմ իցեն ոմանք տաճարապուտք. զի և Յուդա այնպիսի էր, այլ ոչ դայթակղեցան աշակերտքն։ Ապա յանդիմանեսցուք զնոսա առաջի ամենեցուն, զի և այլքն երկիցեն։ Ապա թէ ասիցէ ոք՝ թէ այժմ ընդէր ոչ զնորայն կրեն պատուհասն, ասեմ՝ թէ ընդ այն առաւել պարտ է զարհուրել, զի դժնդակագոյն չարեաց պատահին թէ ոչ ապաշխարեսցեն։

«Յու եղև, ասէ, ահ մեծ 'ի վերայ ամենեցուն որ լուան զայս»։ Նա պատուհասեալ եղև, և այլքն մեծապէս շահեցան. զի թէպէտ և եղեն յառաջագոյն նշանք, այլ ոչ էր այլոցն այնպիսի երկիւղ։ Ի Ճահ ինն դիպի ասացեալն՝ թէ «Ճանապի տէր յառնել զդատաստանս իւր. և 'ի գործս ձեռաց իւրոց ըմբռնեսցի մեղաւորն»։ Ապասպէս և առ տապանակաւն եղև. Ոչա պատուհասեցաւ, և այլոցն երկիւղ մեծ անկանէր, և թագաւորն հեռացուցանէր յինքեանէ զտապանակն։ Ապէ վայ և աւաղ. զի որոց պարտ էր հեռանալ այժմ, առաւել ինն հպին։ «Յոտն կացին Եբիտասարդքն, զսպեցին զնա և տարան թաղեցին»։ Իբրև փոյթք և խելացիք յինքեանց առնեն զարժանն։

«Յու եղև իբրև ժամք երեք անցին, և կին նորա ոչ գիտեր զինչ եղեալն էր»։ Ապա է երկիւղ վարդա-

1 Միւսն ընթերցեալ։

պետի, այս պատիւ աշակերտաց. լսողութիւն և հպատակութիւն։ Երից ժամուց միջոց անցեալ եղև, և կինն ոչ իմացաւ. ոչ ոք ասաց 'ի պատահելոցն, և մանաւանդ զի բաւական էր իրքն յայտնի լինել. այլ այնչափ երկնչէին, զի և խօսել չհամարձակէին զոր ինչ եղևն։ Ընդ այս և աւետարանիչն աքանչացեալ ասէ՝ կինն ոչ գիտէր զեղեալն։ «Եմուտ 'ի ներքս»։ Տես ոչ զկինն կոչեաց Պետրոս, այլ սպասեաց մինչև իւրովի եմուտ։ «Պատասխանի ետ Պետրոս և ասէ. ասա դու ինձ, այնչափ գնոց զգեղն վաճառեցէք»։ Գիտաց կից էր կինն եղելոցն. վասն այնորիկ և զնա քննէ, կամելով զնա այրեցուցանել. զի այրն էր առաջնորդ մեղացն։ Վասն այնորիկ ետ նմա պայման պատասխանոյ և իշխանութեան ապաշխարութեան. զի կարող էր կինն յայտնմանէ իմանալ՝ թէ Պետրոս գիտէ զեղեալսն. զի ոչ զայլ ոք, այլ զնոսին հարցանէր. այլ բազում յամառութինն ոչ ետ նմա թոյլ զանձն ճողոպրել 'ի վրիժուցն, այլ և բազում համարձակութիւն տայր պատասխանի. «Ա՛յո, ասէ, այնչափ». զի կարծէր որպէս ընդ մարդոյ խօսել։ Ո՛հ թէ որչափ դժուարին և ծանր էր իրքն, զի միով հոգւով առ մի մեղս միաբանեցին։ «Ասէ ցնա Պետրոս. զի՞ է զի միաբանեցէք դուք փորձել զՀոգին տեառն»։ Իրրև նա ոչ կամեցաւ ասել զստոյգն, ինքն յանդիմանեալ կշտամբեաց զնա՝ յայտնի առնելով զնոսն. և ապա իրաւապէս 'ի վերայ յամառեցելոցն եդ զնոցն պատուհասն, զորոյ նմանապէսն մեղաւ։ «Ահա ոտքն որ թաղեցին զայրն քո արտաքս, հանցեն և զքեզ. և անկեալ առ ոտս նորա եհան զոգի». քանզի մօտ առ նմա կայր։

ԵՓԻ. Ա. Յսպէս սպանեալք եղեն տունն անանիանց. ոչ միայն զի գողացան և թագուցին, այլ զի ոչ երկեան. և կամեցան խաբել զայնոսիկ՝ որ Հոգին սուրբ ամենաքնին բնակեալ էր 'ի նոսա։

ՈՍԿ. Ա. Լ թերևս ասիցէ որ՝ թէ յոյժ դառնապէս զնոսա պատուհասեաց։ Եւ արդ ասա ինձ, որ է դառնագոյն. եթէ կրկուտ քաղելով ոք պատուհասի, ոչ յոյժ մանաւանդ տաճարակապուտն. քանզի սոցա ինքն այնուհետև նուիրեալ եկեղեցւոյն էր։ Զի որ ոք յանձն առնու զգոյսն իւր վաճառել և բաշ-

խել, և ապա զՊՁՅՑԵԱԼ արգելու, սեղանակապուտ է և անհնարին պատժոց արժանաւոր։ Արդ եթէ յիւրոց նուիրելոց խորոյն սեղանակապուտ է, յոյժ մանաւանդ որ յօտարացն։ Այլ եթէ ոչ այսպէս առ ոտս պատժին, մի կարծեսցուք անպատուհաս մնալ. այլ զայն տեսցուք, զի վասն այսորիկ սոքա ամբաստանին, զի մեք զգուշասցուք. զի մեծամեծ չարիք ծնանին յայսպիսի ախտէ, ագահութի, զանձ արհամարհութի, ամբարշտութի։ Սմին վասն պատժեաց զնոսա սակս հասարակաց օգտի։ Այլ զի յոյժ ծանր հանդերձեալ էր երևիլ Պետրոս և պատուհասիչ, զայս առնելով գրեթէ բազում հարուածովքն պատասխանի առնէ ամենեցուն, նախ ցուցեալ զմերսն և ապա տանջեալ։

Արդ եթէ որ սուտ խօսեցաւ միանգամ՝ թէ այո այնչափ՝ և այսպէս պատժեցաւ, զինչ կրեսցեն յաբակայ ստախօսքն և երդմնահարքն. որոց անվրէպ սպառնալիքն գերանդւոյն մեծի պահեալ կայ։ Այլ մի յայն հայեսցուք զի ոչ տանջիմք, այլ թէ ոչ մերազք. զի թէ մերուցեալք ոչ տանջիմք, դողալ առաւել պարտ է. զի բազումք զառ ջրհեղեղաւն և զսոդոմայեցւոցն և զՓարաւոնին յանդգնելով ոչ խկոյն պատժին, զի պահեալ կայ նոցա վայն մշտնջենաւոր։ Բայց կրեն ոմանք և այժմ մասնաւոր, որոց պարտ է զեղբարյն Յովսէփու յիշել և ասել՝ թէ յիրաւի, քանզի մերաւոր եմք։

«Պտին երիտասարդքն, գտին զնա մեռեալ, և հանին թաղեցին զնա առ առն իւրում»։ Եւ ուստի մտին, յայտ է՝ զի 'ի սրահէն Սողոմոնի, ուր և բնակէին իսկ։ Այլ տես 'ի հաւատացելոցն անդէն իսկ լուծեալ զօրէնսն. զի անվեհեր 'ի մեռեալն հպելով փութով զսպեալ թաղէին։ Դիտեսցուք և զայս եթէ զիարդ առ ընտանիսն ուժգինք էին առաքեալքն, և առ օտարսն ներողականք. զի ոչ այնչափ արտաքնոց իրք պատերազմի ընդ մեզ, որչափ որ յընտանեացն։ «Եւ եղև երկիւղ մեծ 'ի վերայ ամենայն եկեղեցւոյն և 'ի վերայ ամենեցուն որ լուան զայն»։ Եւ ո՞ոք ոչ երկնչէր յառաքելոցն և աքանչանայր ընդ նոսա. կամ ո՞ոք տեսանելով զսատան զայն ոչ հեծեծէր և յոգւոց ելանէր. զի ամենեքեան երկուցեալք եղեն։

«Լոյս 'ի ձեռս առաքելոցն լինէին նշանք և սքանչելեսք բազումք 'ի ժողովրդեանն»։ Յետ լինելոյ 'ի նոսա երկիւղին՝ յոլովագոյն նշանս առնէր Պետրոս և այլքն. քանզի հաւատացն բազմայ տարածանելով՝ նշանքն յոլովագոյնք լինէին։ «Եւ էին ամենեքեան միաբան 'ի սրահին Սողոմոնի»։ Եւ ուստի զայս առնէին. ինձ թուի յայնմանէ զոր Քն յառաջագոյն ասաց նոցա՝ անդ լինել և ոչ այլուր մեկնել. ուստի ոչ ևս այնուհետև 'ի տան, այլ 'ի տաճարին կացեալ մնային, ունկնդրութեամբ բանին պարապեալք. զի բազումք և մեծ էր հաւատն նոցա որ առ Քն։ Ով աքանչելեացս. առ վաճառականին այնուհետև շրջեալ լինէին, և մեծաւ համարձակութեամբ բնակէին 'ի նշանաւոր տեղւոջն՝ ուր ամենայն Հրեայքն ժողովեալ էին և զամենայն գործ անդ վճարէին, և 'ի մէջ թշնամեացն զօրանային։ Եւ ընդոյր մարգարէութեամբն՝ թէ «Գաւազան զօրութեամբ առաքեսցէ քեզ տէր 'ի Սիոն, և տիրեացես դու 'ի մէջ թշնամեաց քոց»։ Այս իսկ էր նշանակ մեծի զօրութեամբ. զի ըմբռնեալքն և կապեալք զայսոսիկ գործէին։

«Լոյս յայլոց անտի ոչ ոք իշխէր մերձենալ 'ի նոսա». այսինքն յառաքելսն. զի ոչ ոք համարձակէր հպել 'ի նոսա։ Զի առաւել զարմանալի էր այնուհետև Պետրոս, ընդ որ հայէին ամենեքեան հիացեալք վասն առաջին, երկրորդ և երրորդ ատենարանութեանն և վասն նոյնքան նշանացն. զի այժմուս կրկին է նշան, յանդիմանելն զծածուկսն և սպանանելն հրամանաւ։ Եւ այլ ազգ. զի ասաց վասն բազմութեամբ՝ թէ 'ի տաճարին բնակէին. զի մի զարմացիս թէ զիարդ տեղւ տային՝ անդ կալոյ, ասէ թէ և ոչ հպել ևս ոք 'ի նոսա համարձակէր։ Այլ յարգէր զնոսա ժողովուրդն և մեծարէր. և ոչ ևս դիւրաւ արհամարհեալք լինէին որպէս յառաջն 'ի կատակողացն։

«Լոյս առաւել ևս յաւելուին հաւատացեալքն 'ի տէր, բազմութիւն արանց և կանանց»։ Այսուհետև զթիւն ոչ ասէ զհաւատացելոցն. այսպէս՝ 'ի բազմութիւն անեղս տարածեալ լիներ իրք հաւատացելոցն,

1 Միւսն այնպիսի բազմաթիւն։

և յարութիւն քարոզեալ լինէր։ Եւ այն իսկ էր զաբ-
մանք, զի 'ի սուղ ժամանակի որպէս թէ 'ի միում
պահու այնչափ իրք եղեն 'ի ձեռն ձկնորսին և մաք-
սապետին և ընկերաց նոցին, զի և երկիրս երկին է-
ղև։ Եւ այս յաղագս առաքինութիւն նոցա և սքան-
չելեաց և համարձակութեան. զի իրքև զհրեշտակս սքան-
չելիք էին ամենեցուն, աներկիւղք 'ի վշտաց և 'ի սպառ-
նալեաց, մարդասէրք, խնամիչք, յօրինիչք. ոմանց ըն-
չիւք օգնէին, կիսոց բանիւ, այլոց բժշկութիւնք հոգւոց
և մարմնոց, « Մինչև 'ի հրապարակս հանել զհի-
ւանդս և դնել բազմականաւք և մահճաւք իւրեանց, զի
ընդ անցանել Պետրոսի գոնէ հովանի նորա հասցէ
ուրուք 'ի նոցանէ »։ Այս ինչ առ Քրիստոս ոչ եղև։
Այլ տես աստ կատարեալ զառ 'ի նմանէ ասացեալն՝
թէ « Որ հաւատայ յիս, զգործսն զոր ես գործեմ,
և նա գործէ և մեծամեծս ևս »։

« Եւ ժողովէր բազմութիւն շուրջ 'ի քաղաքաց անտի
Յերուսաղէմ, բերելով զհիւանդս և զնեղեալս յայ-
սոց պղծոց. որք և բժշկեին ամենեքեան »։ Ամենայն
ուստեք 'ի սքանչելեացն համբաւ ժողովէին 'ի հաւա-
տացելոցն, 'ի բժշկելոցն, 'ի պատժողական երկիւղէն,
'ի համարձակութեան առաքելոցն, յառաքինութեան հա-
ւատացելոցն. զի այս ամենայն ոչ միայն 'ի նշանացն էր
որ լինէր, այլ յաւէտ ևս յառաքինութեան առաքելոցն։
Զի թէպէտ և նոքա ըստ բազում խոնարհութեան զան-
ձինս առ չափաւորս ունելով զամենայնն այ վերադրէ-
ին, այլ ընդ առաքինութիւնս նոցա ուրախացեալ Հո-
գին՝ յայտնէր նոքօք զիւր զօրութիւն։

Այլ տես 'ի հակառակացն զկենցաղն նոցա շարա-
մանեալ։ Նախ յառաջ տրտմութիւն եղև նոցա վասն
համբառնալոյն Քրիստոսի. ապա ուրախութիւն վասն ի Ջման
Հոգւոյն։ Դարձեալ տրտմութիւն վասն ծաղր առնելով
կատակողացն. ապա ուրախութիւն վասն հաւատացելոց
երից հազարացն և վասն առ կայն եղելոյ նշանին։
Տրտմութիւն դարձեալ վասն ըմբռնմանն, և ապա աս-
տանօր ուրախութիւն և տրտմութիւն խառնեալ։ Քան-
զի պայծառք էին և ՝ած յայտնի արարեալ էր զնոսա,
այն ուրախութիւն էր. այլ զի զնոսին զիւրեանցն սպա-
նանէին, տրտմութիւն։ Ուրախութիւն զարձեալ 'ի պայ-

ծառութիւն անտի և յայնչափ նշանացն և յանթիւ հաւատացելոցն. և տրտմութիւն 'ի քահանայապետիցն և յայլոցն 'ի վերայ յառնելոյ։ Եւ բոլորովին իսկ զամենայն կեանս նոցա այսպէս տեսցես։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Քդ մեծապէս հոգաբարձուք զպուշասցուք յերդմնահարութիւն։ Եւ նախ քան զայս 'ի գողութիւն՝ որ է մայր երդմնահարութեան. մանաւանդ 'ի տաճարակապուտ լինելոյ. զմտաւ ածելով զխոստացեալ[1] պատուհասս առ ոմանս եղեալս և առ այլս զսպառնացեալն. զի և յաստի տանջանաց զերծեալք և խոստացելոց բարեացն ժամանեսցուք շնորհօք կեցուցչին Քրիստի օրհնելոյն յաւիտեանս. ամէն։

1 Միւսն զոստոյեալ։

ՃԱՌ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«ՅԱՐՈՒՑԵԱԼ քահանայապետն և ամենեքին որ ընդ նմա և աղանդն սադուկեցւոց՝ լցան նախանձու։ Յարուցեալ, այսինքն շարժեալ նախանձու և խռովեալ վասն եղելոյն։ «Արկին զձեռս յառաքեալսն, և եդին զնոսա հրապարակաւ 'ի բանտի»։ Եւ ընդէր հրապարակաւ. զի այժմ կարի յանդուգն հասին 'ի վերայ նոցա. այլ ոչ վաղվաղակի դատեցին զնոսա, ակն ունելով դարձեալ հաւանականս լինել նոցա երկնչելով 'ի տանջանաց։

«Լ.պա հրեշտակ տեառն 'ի գիշերի երաց զդուրս բանտին և հանեալ զնոսա ասէ»։ Որ ինչ եղևն 'ի հրեշտակէն 'ի մխիթարութիւն էր նոցա և 'ի քաջալերութիւն. իսկ բանտողացն զնոսա, յուսումն և 'ի կշտամբանս՝ թէ 'ի զուր յանդգնէին։ Եւ տես, զոր ինչ Քրիստոս ընդ փակեալ դրունսն մտանելով, զնոցն և աստ եղեալ։ Բայց ոչ թողացոյց հրեշտակն պահապանացն տեսանել զեղեալսքանչելիսն, որպէս և ոչ ինքն Քրիստոս զայն թէ որպէս յարեաւ։ Չի որպէս գինի որ 'ի ջրոյ խառնեալ լինի, ոչ բազմականքն՝ որ յարքեցութիւն են տեսանեն, այլ զընտրութիւնն այլոց հրամայեն, այսպէս և աստանօր նոքա զարտաքս հանելն 'ի բանտէն զառաքեալսն ոչ տեսանեն, այլ զնշանսն միայն և զարուեստս տեսին. յորոց և կարող էին 'ի միտ առնուլ թէ ճշմարիտ գործ էր զոր ինչ լինէր։ Եւ ընդէր 'ի գիշերի զնոսա հանէր. վայելչապէս. զի այսպէս հաւատալի լիցի եղեալն, քան թէ 'ի տուընջեան. թերևս զի և ոչ հարցանել զնոսա ժողովեալ լինէին, և ծածկեալ լինէր իրքն. իսկ այսպէս հռչակելի լինէր։

«Գնացէք կացէք, ասէ, 'ի տաճարին և խօսեցարուք ընդ ժողովրդեանն զամենայն բանս կենացս այսոցիկ»։ Իբաղեայ հեռի ուրեք երթալ կամ արտաքոյ կալ տաճարին ոչ թողացոյց զնոսա. զի 'ի միտ առցին ժպիրհ-

քրն բանտարիողքն, զի եթէ 'ի պահապանացն եղէն հանեալք որպէս կարծէին ինքեանք, կամ ոչ իսկ հաւանէին ելանել, կամ ելեալք փախչէին վաղվաղակի, կամ 'ի հանողացն իսկ փախուցեալք լինէին. այլ 'ի տաճարին ոչ լինէին կացեալք խօսելով ընդ ժողովուրդն։ Զի «Իբրև լուան, մտին ընդ առաւօտն 'ի տաճարն և ուսուցանէին»։ Այսչափս ընդ առաւօտն. զի ուսուցանել պատուէր առին, մնացին մինչև ցժամն՝ յորում լսել սովոր էին ժողովուրդն որպէս առ Քրիստ։

«Եւ եկն քահանայապետն և որ ընդ նմա, կոչեցին միաբան զատեանն և զամ ծերակոյտ որդւոցն Իսրայէլի, և առաքեցին 'ի բանտն ածել զնոսա»։ Տեսանես զիարդ ջերեալք էին. զի թողին նոքա գալ կալ յաղօթս ընդ առաւօտն 'ի տաճարին, և փութացան նստել դատել զաշակերտսն Քրիստ. զի թէ ոչ մեծ թուէր նոցա քան զաղօթսն չարչարէն զառաքեալսն, մարթ իսկ էր 'ի գնալն անդր՝ զի իբրև ուսուցանէին նոքա, ոչ կարօտ լինել ինքեանց ուրուք յղել զնոցանէն։ Այլ կատարեր բանն՝ թէ «Որ սպանանիցէ զձեզ, համարիցի մատերիմ պաշտօնեայ դոլ ՅՍ»։

ՈՍԿ. «Իբրև եկին սպասաւորքն, ոչ գտին զնոսա 'ի բանտին. դարձան անդրէն պատմեցին՝ թէ զբանտն գտաք փակեալ ամ զգուշութիւն, և զպահապանսն զի կային առ դրանն. բացաք և 'ի ներքս զոք ոչ գտաք»։ Կրկին էր եղեալ զգուշութիւնն որպէս առ գերեզմանաւն Քրիստ, և կնիքն և զնուորքն։ Այլ որ ասելի է, թէ ովաճամարտք, զիարդ ելին ընդ փակեալ դրունսն. ոչ ահա մնելոց է ատեանդ և բանդ. զի զորս փակեալ դրունքն ոչ կարացին ունել, յաղթահարել կարծէք։ Այլ բարիոք էր, զի սպասաւորքն նոցա եկեալ յայտնապէս խոստովանեցին զերեալսն։ Եւ որպէս այնք սպասաւորքն զՔրիստ ասէին՝ թէ ոչ երբէք խօսեցաւ ոք որպէս մարդն այն, նոյնպէս և սոքա հաւատարիմք գտան քան զնոսա, որք առ յարութիւնն ոչ ինչ սոքա թաքուցին, զի մի քահանայապետքն խծբիծս ինչ կցեսցէն։ Այլ տես զնշանսն զանազանեալս, զոմանս յառաքելոցն յայլս եղեալս, և զոմանս յինքեանս իսկ յառաքեալսն, որովք և պայծառք եղեն.

«Իբրև լուան զբանս զայս իշխանք տաճարին և քա-

հանապատեալքն, հիանային վասն նոցա թէ զինչ արդեաք լինիցի այս»։ Ա՛յս ինչ և 'ի հնումն եղև առ Նաբուգոդոնոսորաւ. զի մինչ ետես զմանկունսն օրհնելով զԱծ, յայնժամ եկն 'ի զարհուրանս։ «Եւ եկն ոմն պատմեաց նոցա, թէ ահա արքն զորս եդիք 'ի բանտի, կան 'ի տաճարին և ուսուցանեն զժողովուրդն»։ Բարիոք էր. զի ոչ վաղվաղակի նոցա ազդ եղև, այլ յառաջագոյն 'ի տարակուսանս եղեն. զի խորհելով և որոնելով զիրսն իմացին Ածային զօրութենն զեղեալ գործն. և 'ի ձեռն այլոց իմանան զԱմ, զի մի կարասցեն ստել։

«Յայնժամ երթեալ իշխանքն հանդերձ սպասաւորօքն ածեն զնոսա ոչ բռնութիւն. զի երկնչէին 'ի ժողովրդենէն, զի մի քարկոծեսցին»։ Ով անՀած բարուցն, ամենայն ուրեք զմարդկային երկիւղն երկնչին. պարտ էր յայ երկնչել, որ իբրև զթռչունս միշտ 'ի ձեռաց նոցա յափշտակէր զնոսա։ «Եւ ածեալ զնոսա կացուցին յատենի. Եհարց ցնոսա քահանայապետն և ասէ. «Ոչ պատուիրեալով պատուիրեցաք ձեզ մի խօսել և մի ուսուցանել յանունն յայն»։ Ով անամեթ և կարծր անձինն. պարտ էր հարցանել թէ ո՞րպէս եղեք ելեալ. այլ առ չար նախանձուն իբրու թէ և ոչ միոյ իրիք նշանի եղելոյ՝ հեզագոյն հարցուածովքն պարտաւորէ. «Ո՞չ պատուիրեալով պատուիրեցաք ձեզ մի խօսել և մի ուսուցանել յանունն յայն»։ Ջանայ առ 'ի ցուցանել թէ իրաւապէս պատուիրեր նոցա մի խօսել յանունն Ցսի. զոր և առ չարութենն զոր ունէին ընդ նմա, և ոչ զանունն անգամ կամէին յիշել։ Ա՛ռ որ ասելն է՝ թէ ով անմիտ, եթէ դոքա հաւանեցան ձեզ, բարիոք պատուիրէք. ապա թէ 'ի նմին ժամու ասացին ոչ հաւանել, որպիսի՞ պարտաւորութի՞ է այդ. «Ահա ամբաստանութի՞՝ անյար և լի անմտութի՞։ Ա՛յլ հայեաց զկեղծաւորութիւն. զի այսու հետև ոչ սպանողականս կամ զուր պատուհասողս կամին ցուցանել զինքեանս, այլ որպէս վասն ճշմարտութեան զայն սպառնացեալ։

«Լ՛ս արդ աւասիկ լցեք զերուսաղէմ, ասէ, ուսմամբ

։ Միւսն ամբարտաւանութի՞. . և անմտութի՞։

ձերով և կամիք ածել՝ի վերայ մեր զարիւն զառն զայ-
նորիկ». քանզի զարհուրեցուցանել զնոսա կամիր և
արգելուլ զքարոզութիւնն. զոր քաջ մանաւանդ ա-
խորժեր քան թէ զնոսա սպանանել։ Այլ զի այնմ ոչ
եղև հնար, կամի այժմ զամենն շարժել՝ի ցասումն. զի
յաճախ յարուցցէ նոցա զտագնապս չարչարանաց. ա-
սէ. «կամիք ածել՝ի վերայ մեր զարիւն զառնն»։ Զայս
ինչ և Քրիստոս արար հարցանելով թէ «Դու՞ ես Որդի
Այ». զի ամենեցուն զնա մահապարտ երևեցուցցէ։
«Զարիւն զառնն զայնորիկ» ասէ, զՔրիստոս՝ յայտ է։ Եւ
տես զի յամառի տակաւին, զի մարդ լսկ ցուցանել
զնա։ Եւ զոր ասէն այս է, թէ քարոզութիւն ձերով և
նշանօք զոր առնէք յանուն նորա, կամիք զմեզ անի-
բաւ սպանողս երևեցուցանել։ Այլ տես զնոսա դար-
ձեալ հեղութիւն ընդ նոսա խօսեցեալ. և այն զի՝ի դէպ
էր ասել զի՝ դուք, ով կամ՞ոյք ոմանք էք հակառակել
ընդ հրամանն այ։ Բայց ոչ ասացին, զի բազումք էր ի-
մաստութիւն նոցա. այլ կարգաւ ողբանաց և խորհրդ-
ակցութիւն և ողբմելով դիտեին թէ զիարդ ազա-
տեսցեն զնոսա։ Բազում հեղութիւն պատասխանեն,
սակայն և այսպէս ածամարտս զնոսա ցուցանեն. և
լուր ահա.

«Պատասխանի ետ Պետրոս և այլ առաքեալքն և
ասեն. Հնազանդել պարտ է այ առաւել քան մարդ-
կան»։ Ոչ որպէս յառաջնումն ասեն զնոսա՝ թէ դուք
ընտրեցէք, զի նոքա ածամարտք և սուտք և անիրաւք
յանդիմանեալք եղեն. և ոչ ասացին թէ չասացաք ձեզ
յայնժամ՝ թէ ոչ կարեմք զոր լուաք և տեսաք չպատ-
մել. զի չէին պատուասէրք։ Այլ դարձեալ զնոյն ա-
սեն զնաչն զյարութիւն։

«Զ՚Ն հարցն մերոց յարոյց զՅՀ զոր դուք սպանէք
կախեալ զփայտէ. զնա ածառաջնորդ և փրկիչ քարձ-
բացոյց աջոյն իւրով տալ ապաշխարութիւն Իսրայէլի
և թողութիւն մեղաց»։ Մեծ գոլ ցուցանէ զամբարշտ-
տութիւն նոցա. և՝ի Հայր դարձեալ զամենայն ինչ զՔրիստ՝
վերաբերէ, որպէս զի մի թուեսցի Քրիստ՝ի Հօրէ օտար
գոլ։ Եւ այս իսկ սաստիկ զնոսա խոցէր, ցուցանելն
զնոսա Հօր թշնամիս։ Բարձրացոյց, ասէ. ոչ պարզա-
բար զյարութիւն և եթ ցուցանէ այսու, այլ և զվերա-

նալն առ Հայր։ Եւ արդ ո՞ր Ճարտասանութիւն աստա-
նօր. և ոչ մի. այլ յամի չարչարանք և յարութիւն և
համբարձումն ատենաբանեալ, որ յոյժ իսկ անհա-
ւանական գոլ թուին։ Սակայն ոչ իշխանքն և ոչ բազ-
մութիւն ընդդիմադրել ունէին առ այս. այլ ոմանք
լռել սպառնային և այլք ուսեալ լինէին. ուստի և
զշահն 'ի վերայ ածէ։ «Տալ, ասէ, ապաշխարութիւն
Իսրայէլի»։ Եւ զՀեթանոս ոչ յիշէ, զի մի ցասման
կամ նախանձու պատճառս տացէ նոցա. այլ ասէ. «Եւ
թողութիւն մեղաց»։ Տես 'ի կարգի պատասխանատրու-
թիւն վարդապետութիւն աւարտեալ։ Եւ զի յիշելով ըզ-
յանդգնութիւն նոցա՝ զթողութիւն 'ի վերայ ածեն, ցու-
ցանելով զի ինքեանք ըստ որում սպանին գնա, արժանի
են մահու. և որ ինչ 'ի նմանէ տուեալ լինի, իբրև ե-
բախտաւորաց լինի տուեալ։ Եւ այս է թողութիւն մե-
ղաց՝ որ ցուցանէ զմեծ առ նոսա զսէրն և զանսխա-
կալութիւն փոխ, թողութիւն տալով զղջացելոց խաչո-
ղացն. զոր և 'ի Հօրէ հայցեր, «Հայր, թող սոցա»։
«Այս մեք եմք վկայք բանիցս այսոցիկ»։ Բազում
համարձակութիւն խօսի, ունելով զվստահութիւն հաւա-
տարմութեան։ «Վկայք եմք նորա բանիցս այսոցիկ». ո-
րոց եթէ ապաշխարութիւն, եթէ թողութիւն մեղաց խոս-
տացաւ. զի յարութիւնն այնու իսկ խոստովանեալ լի-
նէր 'ի հաւատալն՝ թէ թողութիւն տայ։ «Եւ մեք վը-
կայք եմք և Հոգին սուրբ». որ թերևս չէր եկեալ, եթէ
ոչ յառաջագոյն մեղքն լուծեալ էին. որպէս զի աներկ-
բայելի նշան այս իսկ է յարութեանն։ Այլ տես զի
զՀոգւոյն տուչութիւնն ոչ միայն ինքեանց 'ի կիր առ-
նու, զի ոչ ասէ թէ զոր ետ մեզ, այլ «Զոր ետ, ասէ,
ՈՒԾ հնազանդեցելոց իւրոց»։ Զայս ասեն զանձինս
չափաւորելով համանգամայն և յայտ առնեն՝ թէ և
նոցա հնար է առնուլ, թէ հնազանդեսցին ՈՒ։ Այլ
այնպէս պինդ էր յամառութիւն նոցա, զի այնքան
գործովք և բանիւք խրատեալք ոչ առնուն 'ի միտ.
որպէս զի յիրաւի դատապարտեսցին, ոչ կամելով զ-
գուան իւրեանց։ Զի վասն այսորիկ թոյլ տայր ՈՒԾ
մատնել սոցա 'ի դատաստան, զի նոքա խրատեսցին,
և ամենեքեան ուսանիցին, և առաքեալքն 'ի համար
ձակութիւն յարիցեն։

«Իսկ նոքա իբրև լուան, ասէ, առատանային և խորհէին սպանանել զնոսա»։ Տես զխիստ խակուէին, այլքն լուեալ զղջանային, և նոքա առաւել գրգեալք եռային ցասմամբ զնոսա սպանանել. զորս պարտ էր մանաւանդ իբրև զմարգարէս աւետարերս պատուել և առաւել ևս, իբրև զթողութեան պատգամաւորս և յարութեան 'ի նոր աւուրս քարոզողս. այլ ոչ մանհու սպառնալ թողութեան մեղայ լսելով։ Ով եղկելի, ոչ տանջանք պահանջէ, ոչ վրէժ, և սպանանել մտաբերես. այլ պարտ էր կամ յանդիմանել զդոսա իբրև զստախօսս, կամ զայս ոչ կարելով առնել՝ հաւանել. այլ ոչ սպանանել։ Ա՜յլ յարբեցութեանն ախտին չգիտէին զինչ արասցեն, զի էին դարձեալ նոքա 'ի վրատանգի և սոքա 'ի դիւրութեան և յուրախութեան։ Նոքա փոքր ինչ նուազ և հերձուին 'ի սաստիկ բարկութենն զոր յայտ առնէ առատանայինն. զի այսպէս առնէին չարաչար՝ մանաւանդ կրել է չարաչար. որպէս որ զանդամանդ հարկանէ՝ ինքն յաւէտ առաւել դանի, այսպէս սոքա մեծաւ համարձակութիւն 'ի դատաստանի կալով առանց հոգալոյ զբանն խօսէին, և դատողքն 'ի մեծ ինն անձարութեան վտանգէին։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Օ՜ի այսպէս մանաւանդ տնանկքն քան զՀոխան [1] 'ի դիւրութեան վայելեն. զի մեծատուն իբր զքաղաք է անպարիսպ 'ի մէջ դաշտի՝ որ 'ի բազում կողմանց յինքքն ձգէ զդաւաճանողսն, զտրտմութեան, զաարկութեան, զերդումն և զայլս։ Իսկ տնանկութեան դղեակ է ամուր պատեալ պինդով, զոր ոչ կարեն տրտմեցուցանել և ոչ մի վտանգք փորձութեաց՝ որ թէ դան 'ի վերայ, որպէս առաքելոցն. որով ոչ միայն յայլոց ախտից, այլ և յերգնոյ կարասցուք զանձինս պարսպել։ Զի երդումն որոգայթ է սատանայի. տես զՅեսու առ գաբաւոնացիսն երդուեալ, և զՀերոմգէս 'ի գժնդակ չարիս ըմբռնեալ։ Կտրեա զլարսն և ոչ ըմբռնիս յորոգայթն։ Եւ մեծահոգոզութեամբ և ազատամիտ՝ առա-

[1] Միւսն ՀՈՀՈՓԻ։

քինութեամբ կալ օրինակ զառաքեալն սուրբս։ Բայց թերևս ասիցէ ոք, թէ ո՞ ոք 'ի մարդկանէ յայնպիսի շնորհս վայելելով ոչ արդեօք մեծ լինէր և պայծառ։ Այլ դու տես նախ քան զշնորհսն զիարդ էին ժուժկալք միաբան յաղօթս, յուսալով 'ի վերին տեսչութենն։ Նա զի և դու հոգիընկալ ես և յոյս ունիս արքայութեն, և ոչ ինչ այնպիսի տագնապիս. իսկ զնոսա փորձութիքն 'ի միմեանց առնուին։ Եւ ոչ ամ ինչ շնորհացն էր, այլ և յոլով ինչ իւրեանց փութոյն և լաւութենն։ Զորս իբրև սպանանել սպառնացան, ապրեցոյց զնոսա Դամաղիել։

ՃԵԱՌ ՀՈՐԵՔՏԱՍՆԵՐՈՐԴ

«ԲԵՐՈՒՅԵԼ, ասէ, ոմն 'ի մէջ առէնին փաբիսէ-
ցի, որում անուն էր Գամաղիէլ, օր էնոսուայց, պա-
տուական ամ ժողովրդեանն»։ Սա վարդապետ Պաւ-
ղոսի է։ Եւ զարմանք են ահա, զի ըստ կամաց իւրոց
ունելով զդատարանն և օրինացն քան զրազումս քաջ
գիտակ, զիսրդ ոչ ևս էր հաւատացեալ։ Ա՛յլ և չէ
'ի դէպ կարծել արդէն իսկ բոլորովին գոլ սմա ոչ հա-
ւատացեալ. և այս յայտ 'ի նորա բանիցն է։ «Հրա-
մայեաց, ասէ, սակաւիկ մի զարսն արտաքս տա-
նել»։ Վայելչապէս. զի մի թուիցի 'ի նոցա կողմն գոլ,
կամ վասն նոցա ասել զոր ասացն. «Արք իսրայէլա-
ցիք, ասէ, հայեցարուք 'ի ձեզ վասն արանցս այսոցիկ,
զինչ արժան իցէ առնելոյ»։ Տես զիմաստուն հրապա-
բակախօսութիւնն՝ թէ զիարդ յառաջին բանիցն յեր-
կիւղ զնոսա արկանէ։ Եւ զի մի կարծիցեն թէ զնոցա
իրս խորհի, իբր ընդ համակրօնս հեզութիւնք ընդ նոսա
խօսի. սակայն որպէս ընդ արբեալս սրտմտութիւնք և
չարութիւնք «Արք իսրայէլացիք, ասէ, հայեցարուք 'ի
ձեզ». մի վայրապար և մի որպէս դէպ լինի բերեալ
լինիք իբրև ապշեալք։

«Յառաջ քան զաւուրս զայսոսիկ յարեաւ Թեւդաս
ասել զանձնէ՝ թէ իցէ ոմն. յոր ական արք թուով
իբրև չորեքհարիւր. որ սպանաւ, և ամենքն որք միա-
բանեալ էին ընդ նմա՝ քակտեցան և եղեն յոչինչ»։
Օրինակաւք ոմանքք կամի մխիթարել զնոսա և մտա-
խորհս առնել. և ոչ 'ի հին պատմութեանց բերէ 'ի մէջ,
թէպէտ բազումս ունէր ասել. այլ զնորագոյնսն, որ
մանաւանդ զօրեղ էր առ հաւատալ։ Սմին վասն ասէ՝
թէ յառաջ քան զայսոսիկ աւուրս։ Բայց նախ քան
զյարացոյցս ասաց՝ հայեցարուք 'ի ձեզ. ցուցեալ այ-
սու՝ ստութիւնք զնոսա և 'ի զուր մոլեալս. Չի թէ վաղ
վաղակի ասացեալ էր թէ 'ի բաց կացէք և թոյլ տուք

արանցդ, և ինքն իսկ եղեալ էր կասկածաւոր, որպէս Նիկոդիմոս առ փրկչաւն. և բանն այսպէս ոչ լինէր զօրաւոր. այլ յետ օրինակացն բանն զիւրն էառ զօրութիւն։ Վասն որոյ և զայն որ յոլովագոյնն ապաստամ բեցոյց, 'ի վերջոյ դնէ։

ԵՓՐ. «Յետ նորա, ասէ, յարեաւ Յուդաս գալիլեացի յաւուրս լինելոյ աշխարհագրին, և ապստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի իւր»։ Արդ յարոյց զսոսա սատանայ նախ քան զծնունդն և առ ծննդեամբն տեառն մերոյ. զի լուաւ նա զծննդենէ նորա 'ի բանից անտի հրեշտակին որ առ Զաքարիա և Մարիամ, այլ և ետես զի արգելաւ Շմաւոն ծեր, զի մի Ճաշակեսցէ զմահ մինչև տեսցէ զտէր մեր Յս Քս, փութացաւ զի 'ի ձեռն այսց ապստամբաց վնասեսցէ զխորհուրդն Քրիստի։ Սակայն փութոյ որպէս նա, սոյնպէս և սա կռեաւ, և որք ընդ նմա հաւանեալք էին՝ ցրուեցան։

ՈՍԿ. Ամին վասն ոչ զմին միայն յիշեաց, այլ և զերկրորդն. զի յերկուց վկայից հաստատեսցէ զբանն։ Ունէր ասել և զեգիպտացին և զսրոս հազարն, այլ զսոսա բաւական համարեալ գայ 'ի խնդրելին։ «Եւ զարդիս ասեմ ձեզ. 'ի բաց կացէք յարանցդ յայդցանէ և թոյլ տուք դոցա. զի թէ 'ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործ, քակտեսցի. ապա թէ յայ, ոչ կարէք քակտել զդոսա»։ Տես որպիսի հեզութիւն լի է բանս և համառօտ և լցեալ հանճարով։ Ոչ զնոսա նախատելով թշնամանէ, այլ միայն պատմողաբար ասէ՝ թէ ապանան. և ոչ զսոսա ամբաստանելով և սրամտելով յիշէ, և ոչ վնասաբանէ ինչ կամ ասէ՝ զի թէպէտ և երկոտասանք էին և արդ բազումք, մի երկնչիք 'ի բազմութէն։

Լաւ դարձեալ զի չէր բաւական հաւանեցուցանել, թէ յայտնի ասէր վասն Քրիստի՝ թէ ահա 'ի բազում ժամանակաց հետէ լուան նմա ամենեքեան և հաւատան Հրեայք և Հեթանոսք, և լցան Երուսաղէմ ուսմամբ դոցա, արդ ընդէր ոչ հաւատայք. ապաքէն այս ոչ է մարդկային, զի ոչ կարացէք քակտել զդա։ Սակայն զայս ինչ այլոլք բանիւք տայ իմանալ։ Զի ոչ ասաց՝ թէ ՈՒՆ է Քս, այլ 'ի գործոցն յայտ արար թէ է, յաւելն թէ յայ իցէ՝ ոչ ոք զօրէ քակտել զդա։ Եւ տես

ոչ համարձակեցաւ մարդկային ասել, այլ և ոչ զնոր-
այն. զի թէ յայր ասէր զոլ, հակառակէին. և եթէ
'ի մարդկանէ, և առաւել զինէին։ Զսոյն այսր ան-
նախի հրամայեաց նոցա սպասել կատարածին։ Զի
թէ 'ի մարդկանէ իցէ, զինչ դիտք են այսչափ դժուա-
բանալ. զի չեն իսկ կարող 'ի ձեռնուքուք սպանանել,
այլ անդէն իսկ յինքեանց ինքեանք լուծեալ քակ-
ուեցին և 'ի բաց հոսեցի բաղկացաւ թէ նոցա։ Ապա
թէ ածային՝ ոչ կարէք դուք ձերով տկար ուժով յաղ-
թել նմա։ Եւ ապա ահագին և անպատշաճ՝ իրօքն
զարհուրեցոյց զնոսա։

«Լուցէ, ասէ, ածամարտք գտանիցիք»։ Զի զինչ
արգելու զնա, զի և զձեզ քակտեսցէ. զի դուք ընդ
այս մարանելոչ կարէք։ Տես զիարդ յոյժ անըմբռնելի
էր բանն նորա, որով և սաստիկ զայրագնեալքն և արիւն-
արբուքն հաւանեցան։ Աբդ ստուգապէս պատմէ և
Յովսեպոս՝ թէ օրքան համարձակեցաւնա այնուհետև
ասել՝ թէ յայր է գործն. յորժամ յիրօրուն թեցն ըզ-
հաւատարմութիւն ընկալաւ, այսինքն 'ի սքանչելեացն
զյարութիւն Քրիստոսի. բայց և առժամայն իսկ սաստիկ և
անսալա էր համարձակութիւնոր։ Ոչ ասաց՝ թէ զի
ոչ քակտեցաւ՝ յայր է, այլ թէ յայր է՝ ոչ քակտի և ոչ
բնաւ իսկ սր քակտել կարէ։ Որով գազանամիտքն
պատասխանեցին յիմաստութէն, 'ի պատուոյն և 'ի կար-
ծեաց ահաւոր և ստուգախօս բանիցն. ուստի հաւա-
նեցան ոչ սպանանել, այլ դեռ գանիւ տանջել.

«Հաւանեցան նմա, ասէ. և կոչեցեալ զառաքեալ-
սն գան հարին»։ Զի թէպէտ և աներկբայելի ի-
րաւարարութեն ընդդիմամարտել ոչ ունէին, սա-
կայն զցասումն լցին զիւրեանց. և դարձեալ զի տան-
ջեալսն երկեցուցանել ամն ունէին։ «Եւ պատուիրե-
ցին մի խօսել և մի ուսուցանել յանունն Յսի»։ Տես
դարձեալ սպառնան. թէպէտ գիտէին զի ոչ ինչ վնաս
բնն ասնու, սակայն զիւրեանցն ցուցանեն. զի այսպէս
լիցի և չարութի, զի և յանհնարինսն ժտին ձեռնարկել։ «Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց առնելոյն»։
զի վասն անուանն արժանի եղեն անարգելոյ։ Այս-
ինքն վասն քարոզելոյն զանունն Յսի, զոր սպառնա-
ցան Հրեայքն մի ուսուցանել յանունն յայն. վասն

որոյ տանջեալք խնդալիցք եղեն ։ Եւ Թէպէտ ոչ սպանան վասն հաւանելոյ Հրէիցն Գամաղիէլի , այլ զպատուէր նոցա այլ ընդ այլոյ լուեալ գնացին ։

« Յե զամ օր 'ի տաճարին և առանին ոչ դադարէին աւետարանել և ուսուցանել զՅս » ։ Բաւէ քանիցս անգամ գան արբեալ ՝ լինին , և դարձեալ զվարդապետութիւնն տարածանեն . մինչ զի և առանին և 'ի տաճարին ուսուցանէին ։ Քան զորչափ նշանս այս ինչ ոչ իցէ սքանչելի , որ բազում առաւելութիւն զանազանեալ է 'ի կրից առաջնոցն սրբոց ։ Զի և երեմիաս գանս էառ վասն բանին ՝այ , և Եղիսա սպառնալիս կրեալ փախստեայ գնայր , և այլք բազումք այսպիսի ։ Բայց սոքա ոչ 'ի նշանացն միայն , այլ և յիւրեանց փութոյ առաւել զՀայ զօրութիւն ցուցանէին ։ Եւ ոչասաց թէ ցաւս ոչ կրեցին , այլ թէ գանս կրեալ խնդալիցք եղեն ։ Եւ այս ուստի է յայտ . 'ի համարձակուէն որ յետ այնորիկ. զի այնպէս և յետ գանիցն միշտ առաւելեալ լինէին 'ի քարոզուէն դեգերեալք։

« Յե յաւուրսն յայնոսիկ 'ի բազմանալ աշակերտացն » ։ Ո՞վ սքանչելեացն . յորժամ այս ամենայն լիներ , յորժամ գանս և հարուածս , յորժամ սպառնալիս բազում , յայնժամ բազմանայր թիւ աշակերտացն ։ Ա՛յլ տես զտուգութիւն պատմագրողիս։ « Եղև , ասէ , տրտունջ Յունաց առ Եբրայեցիսն , զի արհամարհեալ լինէին 'ի պաշտամանն հանապազորդ այրիք նոցա » ։ Ոչ թէ անդէն 'ի մօտոյ եղև այս ինչ , այլ ժամանակի ընդ մէջ անցանելոյ . այլ սովորութիւն է գրոց այսպէս ասել։ « Ի բազում տեղիս եղև , ասէ , տրտունջ Յունաց » ։ Տես 'ի բազմութէն զայս ինչ եղեալ. քանզի ամենայնիւ ստուգութիւն և հաստատութիւն առ բազմութիւնն ոչ գտանի ։ Եւ ուստի լինի այս. յայտ է զի յանփութուէ . զի բազումք 'ի քահանայիցն հպատակէին հաւատոցն , որպէս յետոյ ասէ ։ Եւ զի պատուականագոյն թուէր ազգն այն , որոց կարծէին բազմութիւն աւելի նուիրել պաշտօն , ըստ օրում և եղև տրտունջ Յունացն ։ Յունականս զայնոսիկ կոչէին , որք 'ի յունարէն բարբառ խօսէին . յայտ է զի

։ Միւսն գառնարգել։

վան յերկար ընակելոյ Հրէիցն 'ի մէջ նոցա, զի ոչ ամենեքեան խօսէին յունարէն։ «Ընտեսլինէին, ասէ, 'ի հանապազորդ պաշտամանն». ապա ուրեմն օր ըստ օրէ պաշտօն լինէր այրեացն։ Եւ տես զի պաշտօն և ոչ ողորմութիւն զսա կոչէ. զի ոչ զարարողն և եթ, այլ համանգամայն և զկրողն այսպէս ասելովս բարձ-բացուցանէ։

Այլ տրտունջն զի եղև՝ ոչ էր ըստ չարութեան, այլ ըստ պղերգութեան բազմութեան թերևս. վասն այսո-րիկ և աւետարանին յառաջագոյն 'ի մէջ բերէ զիրն, զի ցուցցէ թէ ոչ փոքր չար էր յառաջելով։ Բայց և զայս տեսջիր՝ թէ զիարդ փոքրութիւնքն չարեացն անդէն 'ի սկզբանն ոչ միայն արտաքուստ՝ այլ և 'ի ներքուստ 'ի վերայ յառնէին առաքելոցն։ Եւ մի՛ յայս և եթ հայեացիս՝ թէ զիարդ փութով խնդիր իրացն ուղղեալ եղև. այլ զի մեծ չար էր հեղգութեան և արտունջն. ուստի և առաքեալքն որպէս առ արտաքինսն ոչ իւ-րեանց կամաւ՝ այլ ըստ հարկի պատասխանատրէին, որպէս և առ իւրեանցսն։

«Օ՛ի կուեցին, ասէ, երկոտասանքն զբազմութի՛ աշակերտացն և ասեն. ոչ է մեզ հաճ՚ոյ թողուլ զբանն ՚այ և պաշտել զսեղանն»։ Քանզի հարկաւորացն կարե-ւորագոյնն նախապատուելի է. սմին վասն յառաջա-գոյն զանտեղին ասէին. իբրու զի ոչ էր վայելուչ փու-թով երկաքանչիւրոցն 'ի միասին լինել։ Այլ տես թէ զիարդ վաղվաղակի և յայսմիկ նախախնամութի և հոգ առնէին և ինքեանք 'ի քարոզութի՛ փութային. և ընտրեցին կարգել առ այն ինչ արս՝ որ առաւել եր-կիւղածք էին 'ի նոսա։

«Ընտրեցէք, ասէն, եղբարք՝ վկայեալս 'ի ձէնջ արս եօթն, զորս կացուսցուք 'ի վերայ պիտոյիցս այ-սոցիկ». այսինքն զի իցեն լի Հոգւով և իմաստութի՛։ Եւ քանզի յորժամ զմատաթիայն ձեռնադրել հան-դերձեալ էին, յառաջագոյն զպէտս իրացն ցուցանէին զի պակասութիւնն լցցի, այսպէս և աստ զպէտսն յայտ-նեն։ Եւ ոչ յառաջագոյն արարին զայս. այլ սպասե-ցին մինչև պէտք իրացն յայտնի լինէր 'ի տրտնջողացն. որովհետև ոչ ներեցին քաղաքն անգամ այսմ իրաց լի-նել։ Եւ տես, զդատաստանն ընտրութի՛ իրացս այսո-

ցիկ նոցա առնել յորդորէին, զի հաճոյ իցեն ամենեցունն. և որ վկայեալ իցեն յամենեցունց, զայնոսիկ յառաջ արկցեն, զի և մեք ուսցուք զնոսն. քանզի յոյժ բարի և գեղեցիկ է զայնպիսին ընտրել։

Եւ եօթն այր յառաջ կացուցանէին. և ոչ ևս երկոտասան ըստ ինքեանցն. և իմաստունք և վկայեալք բարուք և կենօք։ Արդ յորժամ զՄատաթիայն պարտ էր յառաջ մատուցանել, «Պարտ է, ասէին, լեկեալոցս ընդ մեզ յամենայն ժամանակի». այլ ասա՛ ոչ այնպէս. զի ոչ էր այնպիսի աստիճան ընտրութեն, և ոչ ևս վիճակաւ յորդորէին ընտրել, զի այն նուազ էր վասն չև ևս եկեալ Հոգւոյն. այլ ասա՛ կամաք ամենեցուն։ Եւ այն զի ինքեանք կարողք էին ընտրել Հոգւովն. այլ սակայն և զառ 'ի նոցանէ զվկայութեն ախորժէին։ Այլ սահմանելն զթիւն և ձեռնադրել և յայնպիսի պէտս նոցա լինել և բաժանել զարսն 'ի պաշտօնն, առաքելոցն եղև հրամայեալ. զի մի թուիցին այլքն շնորհուկս ինչ արանցն կամ առանց շնորհի ինչ Հոգւոյն առնել։ Քանզի և ՅԾ Մովսէսի հրամայեաց ընտրել զերիցունսն. նա զի և բազում իմաստութեն պէտք էին առ այնպիսի տնօրէնութիս։ Եւ մի կարծեսցես թէ զի բան ոչ եղև ընձեռեալ պաշտել նոցա, այլ զգործ տնտեսութեն՝ թէ ոչ ունի պէտս իմաստութեն այնպիսի իրք, այլ և յոյժ բազում թերևս քան զբան։

«Եւ մեք, ասէն, աղօթից և պաշտաման և բանին հպատակեսցուք». այս է ժուժկալեսցուք։ Տեսանե՞ս զի ոչ պարզաբար, այլ բազում փութոյ պնդութի՛ զաղօթսն առնէին. և մանաւանդ որպէս զքարոզութենն զաղօթսն լինէին վճարել, ևս և 'ի պաշտամանէ աղքատացն ոչ անհոգ մնային. այլ մեծաւ փութով իբրև յոյժ մեծագոյն իրի հպատակէին։ Իսկ զքարոզութիւն բանին իբրև զտուեալ յայ՛ գործ ոչ թողուլ և 'ի Մովսիսէ իսկ խրատէին. այլ պահել զայ՛մ աւանդեալսն ըստ կարգի։ Սմին վասն որպէս 'ի սկզբանն ասացին՝ թէ ոչ է պարտ 'ի բանէն դադարել, զնոյն և այժմ ասեն։ Զի պարտ էր ոչ պարզաբար և ոչ որպէս դէպ լինէր, այլ բազում ջանիւ ժուժկալել 'ի պաշտօնբանին։ «Եւ հաճոյ եղև բանն առաջի ամենայն բազ-

մութեան »։ Վայելչապէս . զի արժանի ըստ նոցա ի-
մաստութեան էր . վասն որոյ և ամենեքեան գովեցին
զասացեալսն , զի այնպէս լի էր հանճարով։

« Եւ ընտրեցին զՍտեփանոս , այր լի հաւատով և
Հոգւով սրբով և զՓիլիպպոս և զՊրոքորոն և զՆի-
կանովրայ և զՏիմոնայ և զՊարմենայ և զՆիկողայոս
զեկն անտիոքացի» ։ Այս ուրեմն և սոքա ամենեքեան
լի էին հաւատովք և Հոգւով սրբով։ Եւ ոչ պարզաբար
Հոգեւորս զսոսա ասէ , այլ լի Հոգւով և իմաստութիւն .
զի թէ հաւատովք և Հոգւով լիքայայտ էթէ և իմա-
տութիւն . զի մեծ իմաստութիւն պէտք էր հանդուրժել
տժգոհութիւն այրեացն . ըստ որում պարտ էր լինել
ոչ միայն հաւատարիմ , այլ և իմաստուն ։ Զի զինչ
օգուտ է թէ չգողանայ , յորժամ զբոլորն կորուսա-
նէ անիմաստ գողով, յանդուգն կամ զայրացեալ ։

Ամին վասն որպէս Ստեփանոս լի հաւատովք և
իմաստութիւն , այսպէս աքանչելի և Փիլիպպոս . յա-
ղագս որոյ գրէ Ղուկաս . « Մտեալ , ասէ , ագաբ 'ի
տունն Փիլիպպոսի աւետարանչի , որ էր յեօթանց ան-
տի» ։ Այսպէս Պրոքորոն հետեւող Յովհաննու աւե-
տարանչի ։ Այսպէս Նիկողայոս . այն որ թէպէտ 'ի
պատճառս չնութիւն կնոջ իւրոյ զոր արձակեաց խրա-
տու առաքելոցն՝ համարձակին 'ի չնութիւն Նիկողայե-
ցիք , այլ ինքն յոյժ աքանչելապէս եկաց մնաց , որպէս
պատմէ Կղեմենտէս։ Այլ զի եկ կոչէ զսա Անտիոքայ ,
ինձ թուի 'ի հեթանոսաց գոլ նշանակել զնմանէ .
կամ որպէս զՅովսէփ կիպրացի և զՊաւղոս տարսո-
նացի , այսպէս և զսա անտիոքացի ։ Արդ զի մի այն-
պիսի ինչ լիցի որպէս առ Յուդայիս , Անանիայիս և
Սափիրաս , ընտրեալ որոշեցին զսոսա 'ի բազմութէն ։

« Եւ կացուցին առաջի առաքելոցն » ։ Ոչ եթէ
առաքեալքն ածին , այլ 'ի բազմութէն արքն ձգեալք
լինին ։ Այլ աքանչելի է թէ զիարդ ոչ հերձաւ բազ-
մութիւն յընտրութի արանցն , և ոչ 'ի նոցունց ան-
հնազանդութիւն անպատուեցան առաքեալքն։ Եւ տես
թէ զիարդ եօթն արանցն կարօտացան առ այնպիսի
իրս . այնչափ զինչն 'ի վերայ հոսեալ լինէին , և այն-
չափ էր այրեացն բազմութիւն ։ Եւ տես , զի ոչ էր
կարգելն զսոսա մարդկային և աւելորդ . և զի լի էին

հոգւով և իմաստութիւն. և յայտ անտի է, զի ոչ հայցէին ուսանել զհանդամանս գործոյն թէ զիարդ մնատակարարեսցին. այլ թէ « Աղօթս արարեալ եդին ձեռս 'ի վերայ նոցա »։ Եւ ոչ ասէ սատ զաղօթսն, այլ համառօտ անցանէ։ Այլ տես, զի ամենայն ուրեք զհոգևորսն պահօք և աղօթիւք և բաղում ջանիւ և ընտրութիւն առնէին։ Որպէս յորժամ զպաւեղոսեանսն յուղարկէին՝ աղօթիւք և ջանիւ առաքէին, այսպէս և սոցա ընդ գործոյն և զբարոզութեան բանին աւանդեցին. որպէս ինքեանք հսկելով բանին 'ի պաշտամանէն ոչ հեղգացան։ Իսկ զի թէպէտ ձեռս վերադրեալ լինի առն, այլ ՝ուծ է որ զամենայն ինչ ներգործէ, և նորին ձեռն մերձեցեալ լինի 'ի զլուխ ձեռնադրելոցն. որպէս 'ի հնումն առ Յեսուաւ և այլովք ոմամբք։ Մի այն թէ ըստ արժանի և որպէս պարտն է լիցի ձեռնադրութիւն, որպէս և ասաց։

Այլ որպիսի ինչ է իշխանութիւն նոցա զոր ընկալան ձեռնադրութեամբ։ Զսարկաւագացն ունէին զպատիւ՝ յայտ է։ Իսկ այսպէս այժմ ոչ գոյ յեկեղեցի, այլ երիցանց է անօրէնութիւն այն զոր նոքայն առնէին։ Այլ ինձ թուի զի դեռ ևս ոչ միոք էր եպիսկոպոս, այլ առաքեալքն միայն։ Սմին վասն և ոչ զերիցանց և ոչ ըղսարկաւագաց կարծեմ զանուանսն յայտ յանդիման գոլ։ Այլ առժամայն ոչ միայն 'ի սարկաւագուէ, այլ և յայլ հնորհս ՝ուծայինս եղեն սոքա ձեռնադրեալք. ուստի ոչ հարևանցի, այլ բազում աղօթիւք լինէր ձեռնադրութիւն, զի զօրաւոյին կարողութիւն։ Զօրս և ոչ բարձրամտեալս ինչ ասէ վասն իշխանութեան կամ հեղգացեալս 'ի գործն. զի և մեք այսպէս զգուշասցուք։

« Յս բանն ՝այ ՝ՀՆԵՐ, և բազմանայր թիւ աշակերտացն յոյժ յերուսաղէմ»։ Ոչ լոկ և պարզաբար ինչ ասէ զայս, այլ զի ցուցցէ թէ որչափ էր ողորմութեան և կարգաւորութեան զօրութի։ Եւ այս ևս մեզ 'ի խրատ, զի և մեք այսու կարասցուք զբազումս ձգել 'ի հաւատս։ Այլ ովսքանչելեացն, զի յերուսաղէմ՝ՀՆԵՐ լինէր բազմութիւն. ուր Քրիստոս եղև սպանեալ, անդ ՝ՀՆԵՐ և քարոզութիւն։ Եւ ոչ միայն ոչ գայթակղեցան ոմանք սակս անցիցն Անանիայ և Սափիրայ, այլ և երկիւղն և հաւատոցն հաստատութի յո-

լովագոյն եղև։ Զի թէպէտ զոմանս տանջեալս տեսանէին յառաքելոցն վասն անուանն Յսի և ոմանց սպառնացեալ մի՛ խօսել յանունն յայն, ոմանք փորձելով զՀոգին և այլք տրանջէին, այլ տես աՃեցեալ զբազմութիւն, և այն զկնի փորձութեացն և ոչ յառաջագոյն։

Հանդերձեալ այսուհետև աՃեցուցանել զիրսն Ստեփաննոսի, նախագրէ և զպատՃառս նորին ի բաց։ «Բազում ժողովք, ասէ, 'ի քահանայիցն անսային հաւատոցն»։ Զի տեսին զքահանայապետսն և զիշխանսն և զայլսն սուտ եղեալս, և զսքանչելեացըն և զգեղեցիկ կարգացն փորձ տեսեալ հնազանդէին հաւատոցն։ Այլ տես զանչափ մարդասիրութիւն՝ այ, մինչ զի և 'ի քահանայապետիցն որք հանապազ չարաչար տրանջէին և հայհոյէին զնա և ասէին՝ խաչեսցի դա, 'ի հաւատս ընկալաւ որք կամեցան։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Օ որ և մեզ պարտ է բարիս փոխարինել դաւաՃանողացն. զի այսու նմանել կարիցեմք Քրիստոսի։ Զի և նա եկեալ 'ի բարերարել մարդկան՝ խաչեցին և զաշակերտսն նորա տանջեցին. այլ նա յետ այնորիկ 'ի պատիւ աշակերտացն հասուցանէր զհաւատացեալսն 'ի խաչողացն։ Արդ ողորմածութիւն յայսոսիկ կրթեսցուք, և բարերարելով թշնամեացն և մեծահոգութեամբ, անցաստուն լինելով առ անարգողսն և անյիշաչար։ Զի այսպէս պայծառք երևեալք քաջութիւն պսակացն հասանիցիմք շնորհօքն Քրիստոսի՝ որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Ստեփաննոս այր լի շնորհօք և զօրութիւն»։ Տեսանես, զի առ Եօթանսն նա էր նախապատուեալ և առաջնորդ այլոցն. զի թէպէտ ձեռնադրութիւն հասարակաց էր, սակայն բազմապատիկ շնորհս և զօրութիւս սա յինքեան ընկալաւ. զի ըստ չափու հաւատոցն տայ ած։ Եւ զի լի էր հաւատովք, լցաւ և հոգւով շնորհաց և զօրութեաց. շնորհօքն 'ի բարեգործել բժշկութիւնք, և զօրութիւն 'ի բազմապատիկ նշանս և 'ի պատուհասել կարողանալ։ «Առնէր արուեստս և նշանս մեծամեծս 'ի ժողովրդեանն»։ Համառօտ անցանէ և ասա, և ոչ յանուանէ յիշէ զեղեալսն 'ի նմանէ։ Այլ արուեստս ասի՝ որ ձեռս դնելով իցէ, որպէս կաւով ծեփելն տեառն զաչս կուրին. և նշան՝ որ հրամանաւ, որպէս այն՝ թէ «Երթ, որդին քո կենդանի է». կամ «Դաղարէ, արի եկ արտաքս»։ Յայսպիսիս զօրանալ ասէ սմա։

Լաւ տես, զի նախ քան զձեռնադրութիւն այսպիսի ինչ ոչ առնէր. զի յայսմի լիցի թէ ոչ միայն շնորհաց, այլ և ձեռնադրութիւն պէտք են. որովք սա ոչ միայն բանիւ ուսուցանէր զամենեսեան, այլ և յաճախէր զմեծամեծ գործս և զնշանս զարմանալիս։ Յորմէ դարձեալ նոքա չարնախանձու շարժեալք՝ ամբոխս և խռովութիւն յարուցանեն. ըստ որում ասէ. «Յարեան ոմանք 'ի ժողովրդենէն, որ կոչիւր լիբերտացւոց, կիւրենացւոց, աղեքսանդրացւոց, կիլիկեցւոց, ասիացւոց»։ Դարձեալ յառնել՝ զզայրանալն ասէ և զբարկութիւն։ Այլ ասա յոյժ առաւելացուցանէ զբազմութիւն 'ի վերայ յարուցելոցն. ոչ միայն զայնոսիկ որ յԵրուսաղէմ էին, այլ և այլս բազումս. որք յայլ և այլ ժամանակս գերեալք ընդ բազում աշխարհս, և յեռոյ ուրեմն անդրէն դարձեալք. կէսք 'ի լիբերտացւոց 'ի սահմանակցացն Եգիպտոսի և Հինդ-

կաց, և այլք 'ի կիւրեղնացուցն, որ է անդր և-ս քան զԱղեքսանդրիա. և ոմանք յասիացւոց, որոց լեզուաքքն վարժեալք և յերուսաղէմ բնակեալք, զի մի յար երթևեկութիւն աշխատեսցին. որք և ժողովարանս ունէին լսել զօրէնսն և աղօթել։ Սոքա իբրև տեսին զսուրբն այնքան պայծառացեալ նշանօքք, ոչ բերելով նախանձուն՝ ինդիրս ոմանս 'ի մէջ արկանէին վիճել ընդ Ստեփաննոսի։ Ո՛վ անմտութեն. զի որով գործով չարչարանաց ոչ յաղթէին, ակն ունէին բանիւք յաղթել. և զոր ինչ առ Քրիստ առնէին, զնոցն և ասա. զի միշտ բանս 'ի մէջ արկանէին վիճախնդիր լինել. զի հարկ արասցեն նմա ասել ինչ, թերևս պատճառս կարասցեն յօդել։

«Այլ ոչ կարէին զդէմ ունել իմաստութեն և զՀոգւոյն՝ որով խօսէր»։ Ոչ միայն պարտեալ լինէին, այլ և ոչ հակառակել ինչ ընդդէմ կարէին։ Զի զօրաւոր մաքառմամբ 'ի մարդարէից շուրջ ածէր զնոսա և խառնէր։ Զդադարումն թերևս ասելով ՀԱծային օրինացն. կամ թէ և յայտնի ոչ ասէր, սակայն զնոցն նշանակեալ լինէր. զի թէ ինքն յայտնապէս ասէր, ոչ էին պէտք եկամուտ արանցն և սուտ վկայիցն։

«Յայնժամ հրապուրեցին արս ոմանս ասել՝ թէ լուաք զդորա խօսել բանս հայհոյութեա 'ի Մովսէս և յԱՀԾ»։ Արդ զառաքելոցն ասէին թէ զյարութիւնն պատմեն, և թէ լցէք զերուսաղէմ ուսմամբ ձերով. իսկ աստանօր զի բաղումք բժշկեալ լինէին, վասն որոյ և գոհանալ պարտ էր, ընդ այն իսկ խառնէին. և յայլ ձև շրջեն զչարախօսութիւնն, և զքնէ ոչ ինչ յիշեն, զի յայնմանէ արգել զնոսա Գամաղիել. այլ ինն պատճառս յօդեալ 'ի մէջ բերեն. չարախօսութեն, ասեն, առնէ և խօսի զայ և զՄովսիսէ։

Այս քանզի պարզաբար յափշտակել ամաչէին՝ ոչ ինչ ունելով ինասաբանել, տես զինչ առնեն. ոչ ինքեանք դատողքն վկայեն, կասկածեալք զի մի կրչտամբեսցին դաւաճանողս և անիրաւս գող, զայլս հրապուրեալ արծաթով վարձաւորեն ասել՝ թէ «Լուաք զդորա խօսել բանս հայհոյութե 'ի Մովսէս և յԱՀԾ»։ Ով անամօթք, զհայհոյութեա իբս գուք առնէք, և չէ ձեզ փոյթ։ Վասն այսորիկ զՄովսէս 'ի մէջ բերեն,

զի զայ փոյթ ոչ ունէին, այլ 'ի վեր և 'ի խոնարհ ըզ-
Մովսէս յիշեն. « Մովսէսն այն որ եհան զմեզ, ոչ
գիտեմք զի եղև »։ Այլ պարտ էր զմտաւ ածել դրժ-
նէիցն՝ թէ զկարդ հայհոյիչ այր այնպէս աղօթիցէ,
զի ոչ կարէին զդէմ ունել. կամ զկարդ նշանս այն-
պիսիս առնել 'ի ժողովրդեանն։

Լ. Այլ ամբոխ չար և անկարգ գոլով ծանրացուցա-
նելով զյօդեալ ամբաստանութիւն, « Խռովեցին զժո-
ղովուրդն և զերիցունս և զդպիրս »։ Եւ քանզի ոչ
ախորժէին պարզաբար սպանանել, այլ դատաստա-
նաւ իբր զհայհոյիչ խորամանկէին իմն. զի և զՀնչմար-
տութիւն առաքելոցն ստուերկարծեօք վնասեսցեն։ Սմին
վասն զնոսա թողեալք ընդ սմա վիճաբանէին, և սը-
տայօդ զբպարտութիւնն զամենայն ժողովուրդն զայրա-
ցուցին որպէս սովոր էին։

Լ. Ապա յանդուգն համարձակութեամբ իբր ըզ-
գաղանս արիւնարբուս « Հասեալ 'ի վերայ յափշտա-
կեցին զնա և ածին յատեանն, և կացուցին վկայս
սուտս որ ասէին. այրս այս ոչ դադարէ խօսել բանս
հայհոյութեան զտեղւոյն սրբոյ և զօրինացն »։ Սուտ
վկայիւք զանմեղն դատապարտէին, զի մի անիրաւ
սպանողք երևեսցին. այլ իբրև ջատագովք օրինացն և
պահողք զասացեալն՝ թէ մի ոք առանց երկուց վկայից
մեռցի։ Եւ այսպէս զանմեղն զբպարտէին, որպէս միշտ
սովոր էին առնել, որպէս առ Քրիստ, Շուշանաւ և
Նաբովթաւ. զի աշակերտք էին չար ծերոցն և Յեզա-
բելի, վկայէին թէ այրս այս ոչ դադարէ հայհոյել
զՄովսէս, զտաճարն և զնոսա։ Յեսանէս թէ ՝ի՞նչքան
ծանր է չարախօսութիւն. ոչ ասէն թէ խօսի, այլ թէ
ոչ դադարէ 'ի խօսելոյ զՀայհոյութիւն. այսինքն թէ
գործ հանապազորդ զայս ունի իւր՝ հայհոյել զսուրբ
տաճարն և զանձային օրէնքն։

Լ. Ոչ զայս բաւական համարին. այլ յաւելուն
իբրու ցուցական առնելով. « Մեք, ասեն, լուաք 'ի
դմանէ զի ասէր, թէ Յիսուսազովրեցին նա քակեսցէ ըզ-
տաճարս և փոխեսցէ զօրէնսն Մովսէսի »։ Դազովրե-
ցին ասէն նախատելով. նա քակեսցէ զտաճարս՝ զայս
միշտ և 'ի վերայ Քրիստ կարկատէին. « Վասն որ քակէիր
զտաճարն »։ Քանզի մեծ իմն վստահութիւն հաստատու-

թեան ազգին կարծելով զտաճարն, յոյժ ախորժելի էր նոցա. որով և զչարախօսութիւն ամենեքեան ջանան ցուցանել. որպէս թէ զտաճարն զայն քակել ասէ Յսի, և զնակուրեալն և զօրէնսն փոփոխել զոր ետ մեզ Մովսէս։ Եւ յանուանէ զՄովսէս 'ի մէջ բերելն կրկին չարախօսութիւն էր. նախ թէ փոխէ զսովորական օրէնսն. և երկրորդ թէ զայլս 'ի նեռքս մուծանէ։ Սմին վասն ոչ ասացին՝ թէ զոր ետ մեզ ասէ, այլ զոր ետ մեզ Մովսէս. զի ցուցանել ջանային թէ վասն քակելոյ քաղաքին և տաճարին և ամբարշտութեան յոյժ, որ էր փոփոխումն օրինացն, զնա չարախօսէին. զի այսպէս'ի ցաւումն սպանութեան զամենեսեան գրգռեսցեն։

Լուրդ իբրև կարծէին թէ զարհուրեցուցին զնա ատենիւն, և ակն ունէին այլագունել երեսացն յերկիւղէ և յամօթոյ, վրիպեալ գտան։ «Զի հայեցեալ 'ի նա ամենեցուն որ նստէին յատենի, տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի»։ Վայելչապէս. զի տէրն հրեշտակաց 'ի ձև անմարմին սպասաւորացն իւրոց երևեցոյց զմարմնաւոր սպասաւորն իւր յամօթ դիւադէմ՝ լրբենեացս, և 'ի յոյս վստահութեան այսրէն 'ի մեզ դառնալոյ առաջին պայծառփառացն՝ ուստի վրիպեցաք. զի «Ծագեսցին արդարքն իբրև զարեգակն». և 'ի խրախոյս քաջալերութեան յետ այնորիկ հետևողացն 'ի նոյն հանդէս։

Լու տես, զի և 'ի փոքր աստիճանի գոլով է փայլել մեծապէս որք կամեսցին, որպէս և սա։ Բայց և զինչ նուազագոյն սա ընկալաւ քան զառաքեալսն. 'ի նըշանաց ոչ էր նուազեալ, և համարձակութիւն բանի պայծառագոյն. որով 'ի խոր խոցեալ լինէին դժնեայքն։ «Տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի»։ Այս իսկ էր շնորհ փառացն Մովսէսի, որով խնդալոյց արար զնա ասէ լուսափայլութիւն դիմացն. իսկ սորայս առաւել պայծառութիւն փայլեալ, բազում և անչափ լցեալ ուրախութիւն։ Եւ վայելչապէս, զի վասն Յսի կրեր զզրպարտութիւնն. սակս որոյ ընդ մեծապէս բերկրեալ սրտին զուարթացան երեսքն. որպէս և առաքեալքն խնդային ընդ անարգանսն՝ որ վասն անուանն Յսի։

1 Միւսն Բիւրգէմ։

Եւ քանզի հանդէրձեալ էր ընդ երկար ՝ծածաքանել, նախ երեսաքն հիացոյց զնոսա, նուաճելով յունկրնդրութիւն. զի գոյ և 'ի պայծառ դէմս լուսոյն հոգևորական շնորհի՝ սիրելեացն 'ի յոյս հաստատութիւն, և թշնամեացն յամօթ և 'ի զարհուրանս, որով և նեբեցին ատենաբանութիւնն։

Լ.ՍԼԹԷ ուստի էր շնորհայն լոյս փայլեալ 'ի դէմսն Ստեփանոսի, յայտ է զի կատարելութիւն հաւատոյն շնորհալից արար զնա. զոր վկայեաց՝ թէ լի էր հաւատովք և Հոգւով սրբով։ Չի և հաւատովք շնորհս ունել, ոչ միայն 'ի բանս և 'ի բժշկութիւնս՝ այլ և յայս ինչ, շնորհք Հոգւոյն բաշխի, որ աջողէ զամենայն յամենայնի. որով տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի. զի զպարզամիտսն և զանչարսն յաւէտ շնորհօք ընուՀաճ, որպէս զԲառնաբայ վկայէ Ղուկաս։ Եւ թէ լինչ սակս այս եղև, վասն զի ոչ էր նա պատՀառ այսպիսի յանդուգն զրպարտութեան, դիմացն լուսաւորութիւն և հեզութիւն և հանդարտութիւն նորա յայտ առնէր։ Չի ուր զառաքեալսն ոչ այսպէս զրպարտէին՝ այլ միայն արգելուին, այսպիսի ինչ ոչ եղև. իսկ աստ զի սա զրպարտեալ լինէր, վայելչապէս ուղղէր զայն ՝ածզի նախ քան զՀամ լուսաւորութիւն դիմացն պատասխանի արասցէ ընդդէմ ստութեանն։ Աչս իսկ և զքահանայապետն յամօթ արար, և զիջոյց 'ի խիստ դառնութենէն ունկն դնել բանից նորա։

« Լ.սէ քահանայապետն՝ թէ արդարեւ այդ այդպէս իցէ»։ Տես զխորամանկութիւնն. հեզութիւնք հարցանէ, զի մեծ ինչ չարագործեսցէ. զոր և առ Քն ասարար։ Վասն այնորիկ և նա հեզաբար սկսանի զբանն և ասէ. « Աբք եղբարք և հարք, լուարուք ինձ. ՝ածփառաց երևեցաւ Հօր մերում Աբրահամու մինչդեռ 'ի Միջագետս էր, մինչ չև բնակեցուցեալ էր զնա 'ի Խառան »։ Ոչ առանց խորհրդոյ կամ պարզաբար 'ի վեր 'ի նահապետ անդր տանի զբանս։

ԵՓՐ. Լ.ՍԼ քանզի ախմարս և անդէտս դպրութեանն հեգնէին գոլ զառաքեալսն, սկսաւ երկրորդել նոցա զգիրս. սկսեալ յԱբրահամէ համառօտէ մինչև 'ի Քն և 'ի լրբութեան նոցա։

ՈՍԿ. Լ.ս իսկ և իսկ յառաջին բանիցն զթուե-

ցեալն նոցա մեծ 'ի բաց բառնայ . և ցուցանէ ասացե-
լովքն՝ թէ ոչ ինչ է տաճարն և հրեական սովորութիւնն.
զի 'ի Մելքիսեդեկ երևեցաւ ՅԱԾ Աբրահամու , և անդ
տաճար ոչ էր և ոչ զենմունք . և յԱծային տեսլենէն
Աբրահամ ոչ վրիպեաց . և այն զի նախահարս քաղ-
դեայս պարսիկս ունէր ։ Եւ բարւոք սկսանելով 'ի
բանն՝ ՅԱԾ փառաց կոչեաց , ցուցանելով թէ զանպա-
տիւն փառաւորս արար . զի նա , ասէ , որ զնոսա փա-
ռաւորս արար , և զմեզ արասցէ ։ Տես թէ զիարդ 'ի
բաց տանի զնոսա 'ի մարմնական ընծայիցն . և նախ
'ի տեղւոյն սկսանի, զի բանն վասն տեղւոյն էր։ ՅԱԾ փա-
ռաց, ասէ. զի ոչ կարօտի 'ի մէնջ փառաց , այսինքն 'ի
ձեռն տաճարիդ . զի ինքն է աղբիւր փառաց և 'ի նմա-
նէ ամենեցուն փառք . ապա մի կարծէք այսու փա-
ռաւորել զնա . զի երևումն ՅՅ և խոստումն նախ է
քան զտաճարն և յառաջ քան զելիսատութիւն և քան
զզենմունսն ։ Եւ զի դուք ոչ ըստ արժանեաց ձերոց
առէք ոչ զելիսատութիւն և ոչ զօրէնսն , այլ այս ՅՄ
Աբրահամու լսողութեան վարձ էր . զի զերկիրն խոս-
տանայր տալ նախ քան զելիսատութիւն և զօրէնսն ,
և զՀայրենիսն Թողուլ հրամայէր . զի այն է հայրե-
նիք՝ զոր ՅԱԾ պարտ գոլ վարկանի ։

« ԼՅ , ասէ , յերկրէ քումմէ և յազգէ քումմէ , և
եկ յերկիրս զոր ցուցից քեզ » ։ Ցուցանել կամի՝ թէ
սոքա ոչ են զաւակ Աբրահամու . զի նա այնպէս հա-
ւան և հնազանդ էր ՅՅ , զի ել , ասէ , յերկրէ և յազ-
գէ քումմէ։ Երկոքեան իսկ գժուարինք են . այլ նա
աշխատութեամբ համբեր , և գուք զպտուղն հաւաքե-
ցէք ։ Եւ թէ ամենեքեան նախահարքն 'ի վիշտս և 'ի
նեղութեան էին և 'ի հրամանէն ՅՅ ոչ խոտորէին , առ
'ի խրատել զմեզ՝ թէ առանց նշանաց պարտ է հաւա-
նել ՅՅ , թէպէտ և դժուարինք իցեն պատահեալքն .
զի և հայրապետն զՇիրիմն հայրենիս թողեալ և զայ-
լն ամենայն , հնազանդեալ լինէր ՅՅ ։

« Յայնժամ, ասէ , ելեալ յերկրէն քաղդէացւոց՝
փոխաբնակեցաւ 'ի Խառան » ։ Ուրեմն ստուգապէս
քննելով քաղդէացիքն են Հրեայքն . զի ել , ասէ , յեր-
կրէն քաղդէացւոց ։ Իսկ այն զի ասէ գիր՝ թէ հայրն
Աբրահամու կամեցաւ ելանել , ստոյ ուսանիմք՝ թէ

տեսլեամբն այ ինքն Աբրահամ՝ շարժեալ եղև առ յե-
լանել։ Եւ յայտ է զի հայրն երևմամբն այ ոչ ուղեկ-
ցեր նորա գնացկանութեանն[1]. այլ վասն զթոյ մանն-
կանցն, թէպէտ բազում Ճանապարհ հատանէին, ըզ-
հետ գնացեալ լինէր մինչև 'ի Խառան։

«Յետ անտի յետ մեռանելոյ հօր նորա փոխեաց սպան-
ղըխտեցոյց զնա յերկիրս յայս՝ յորում դուք այժմիկ
բնակեալ էք»։ Տեսանես թէ զիարդ զնոսա յերկրէ 'ի
վերս հանէ, ցուցանելով թէ նոքա սպանդխտութեամբ
կէին՝ ազնուագունին սպասելով. և զոսոսա կշտամբէ՝
բնակիչս երկրի, և ստորագաւառս այս ախորժոյս
գոլ՝ զաստիս նախապատուելով։ Այլ զնորա հաւատն
և զերկայնմտութիւն և ինքն ՅԾ կամելով յայտնի
առնել, «Ոչ ետ նմա ժառանգութիւն 'ի սմա և ոչ քայլ
մի ոտին»։ Եւ նա ոչ երկմտեր կամ տագնապեր
ինչ, այլ 'ի հաւատս յեցեալ զխոստացեալն յայ իբ-
րև զառեալ ունէր. որով հաւատով և զազգն և ըզ-
հայրենիսն թողեալ՝ եկն զհետ խոստմանն այ. այլ դեռ
ևս ոչ ետ ժառանգութիւն. զի օրինակ ուրեմն էր այն
այլոց երկրի զոր առնելոց էին։

«Յե խոստացաւ տալ նմա զսա 'ի բնակութիւն»։ Ոչ
վայրապար զբանս վերստին առնու. ոչ ետ, ասէ, և
խոստացաւ տալ։ «Եւ զաւակի նորա, ասէ, յետ նո-
րա». դեռ ևս զաւակ ոչ գոլով նորա։ Զայս ասէ, զի
բազում ցուցցէ զայ մարդասիրութիւն և զամենահնար
զօրութիւն, որ զամ ինչ յանհնարից կազմեալ 'ի մէջ
ածէ. զի զենակեալն յերկրին քաղդէացւոց և զայն-
չափ հեռացեալն տեր ասաց առնել երկրին պա-
ղեստինացւոց։ Յայտնէ միանգամայն և զԱբրահա-
մու հաւատն և զլսողութիւն. զի ոչ գոլով նորա զա-
ւակ՝ ունկնդիր լինէր այ. և մանաւանդ զի եղեալքն
զհակառակն ցուցանէին։ Զի իբրև եկն, ոչ ունէր տե-
ղի և ոչ քայլ մի ոտին, և ոչ ունէր որդի, այլ ոչ կասէր
'ի հաւատոցն։

[1] Այդպէս յերկոսին օրինակն։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Օ՛ի ուսցուք և մեք մի տագնապել ընդ աստեաց նեղութիւն, մանաւանդ հրաւիրեալքս 'ի նեղութիւս աշխարհի աստ. զի այսպէս զխոստումն այ ընդունել մարթասցուք, թէպէտ ներհականք թուիցին պատահքն։ Բայց այժմառ մեզ ոչ ներհականք, այլ յոյժ հետևեալք ըստ խոստմանցն. զի ստատնօր նեղութիւն ունել մեզ ասացաւ, և անդ հանգչել. ապա մի փոփոխեսցուք զժամանակս, զի աշխատութեց և մըրցմանց է ժամ. մի աստ հանգիստ խնդրեսցուք։ Եւ զի այժմ հալածանք 'ի կռապաշտից ոչ գոյ, մարտիցուք ընդ մնափառութեան, ընդ բարկութեան, ընդ անպատեհ ցանկութիւս, ընդ ագահութեան։ Տարցուք թշնամանացն՝ որ դժնդակք են, չարչարիչք հոգւոց. որոց յաղթելովք պսակացն հասցուք շնորհօքն Քրիստի. ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ՎԵՐՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Այդ մինչ ոչ գոյը նորա որդի, խօսեցաւ ՅԾ այսպէս՝ Թէ եղիցի զաւակ նորա պանդուխտ յօտար երկրի. և ծառայեցուսցեն զնա և չարչարեսցեն ամս չորեքհարիւր. և զազգն որում ծառայեսցեն, դատեցայց ես՝ ասէ ՅԾ. և յետ այսորիկ ելցեն և պաշտեսցեն զիս 'ի տեղւոջս յայսմիկ»։ Հայեաց Թէ քանի ամաւք յառաջ է խոստումն և որպիսի խոստմանն յետանակ, և ոչ ուրեք էր զենմունքն և ոչ թլփատութիւն. և դարձեալ Թէ որպէս ինքն ՅԾ զիւրսն Թոյլ տայր չարչարանս կրել և յօտարութիւն պանդխտանալ այնչափ ժամանակս, և չարաչար նեղիլ յայնցանէ՝ որոց ոչինչ մեղան։ Զի ոչ որպէս տերաբք ծառայիւքն եգիպտացիքն նոքաւք վարէին, այլ որպէս Թշնամիք և գոռոզք 'ի կոխել միայն և 'ի չարչարել փութալով։

Այլ Թէպէտ զայսքան ժամանակս եղ Թուով չափեալ, Թոյլ տայր վիսանալ վատթար գոռոզացն. սակայն ոչ առանց պատուհասի Թողոյր զնոսա, այլ «Զազգն որում ծառայեսցեն, դատեցայց ես՝ ասէ ՅԾ»։ Զայս ասելով իբր շնորհս ինն առնել երևի չարչարելոցն 'ի պանդխտութիւն, պատուհասելովն զնեղիչսն։ Բայց անդէն վաղվաղակի ոչ սոցա հանգիստ լինել տուեալ, և ոչ նոցա տանջանս. այլ նախ յառաջ խոստանայ միայն։ Ապա մի ոմն դուք, այսու բանիւ միայն բարեպարիշաք լինել համարիք, ասելով զՅՇեէ. «Թէ յուսացաւ 'ի տէր, փրկեսցէ այժմ զդա եթէ կամի զդա»։ Զի նա որ խոստացաւն Աբրահամու, որ էանն զերկիրն, յայնժամ նախ գալոց չարեացն տեղի տայր. նոյնպէս և այժմ Թէպէտ արքայութիւն խոստացեալ է, այլ նախ Թողու կրթել փորձութիւնքն։ Եւ եթէ անդանօր յետ չորեքհարիւր ամի էր ազատութիւնն յազգս արքայութիւն, զինչ զարմանք են ոչ տալն առ ժամայն։

Բայց դու զայն տես, զի զոր խոստացուն՝ արար, և ոչ կարաց յոլով ժամանակն և խիստ ծառայութիւնն խափանել զխոստումն. և ոչ մինչ՝ի թշնամեացն պատուհասելն եկաց մնաց, այլ՝ի նոցա կորնչելն բնաւսոքա՝ի նեղութենն օգնեալք փրկուք մեծաւ ելին՝ի հանգիստ. զոր և յիշեցուցանէ նոցա զմեծ երախտիսն յասելն՝ թէ «Յետ այսորիկ ելցեն և պաշտեսցեն զիս՝ի տեղւոջս յայս». այսինքն թէ ազատութիւն մեծաւ վերստին այսրէն դարձցին և առանց պատուհասի մնասցեն։ Եւ յետ այսչափ երկամանց և խոստմանց ապա ետ նմա ուխտ թլփատութեան իբրև դրոշմ ինչ կնքոյ և նշան՝ որով զատչիցին հաւատացեալքն յանհաւատից։

«Լուր ապա ծնաւ զԻսահակ»։ Ասասնօր հանգիստ և գիւրութեամբ արար Աբրահամու կատարմամբ աւետեացն՝ի ձեռն պարգևական զաւակին։ «Եւ ապա թլփատեաց զնա յաւուր ութերորդի, և Իսահակ զՅակոբ, և Յակոբ զերկոտասան նահապետսն»։ Ասասնոսի ինձ զօրինսն նշանակել թլփատութիւնն Յակոբաւ և նահապետաւքն. զի ըստ օրինացն հրամանի յութերորդում աւուր թլփատեին, որ էր ստուերք հանդերձելոյ ութերեկին, յորժամ թլփատեալ՝ի բաց կտրին չարքն յառաքինեաց. որ և առ մեզ Քրիստոս պայծառացաւ անձեռագործ թլփատութեամբ։

«Լուր նահապետքն նախանձեալ ընդ Յովսեփայ վաճառեցին զնա յԵգիպտոս»։ Ասասնօր Քրիստոս օրինակին է յայտնեալ նոցա՝ իբրօքն զոր կրեաց Յովսէփ յեղբարցն. որք ոչ ինչ՝ի նմանէ մնասեալք, այլ եկեալ կերակրել զնոսա, նոքա չարչար զնմանէ խորհեցան. առ որ թէպէտ խոստումն այ յամէ, սակայն կատարած առնու։ «Զի էր, ասէ, ածի ընդ նմա, և փրկեաց զնա յամ նեղութեանց նորա»։ Տես զի ոչ գիտելով գործակից լինէին եղբարքն մարգարէութեան. զի և ինքեանք լինէին պատճառ. սմին վասն և չարքն՝ի նոսա դարձեալ լինէր։ «Իսկ նմա ետ ածի հնարս և իմաստութիւն առաջի Փարաւոնի արքային Եգիպտացւոց. և կացոյց զնա իշխան Եգիպտացւոցն և՝ամ տան նորա»։ Հնարս ետ նմա առաջի առն բարբարոսի ծառային գերեցելոյն. զի զոր եղբարքն մատնեցին, նա պա-

տուեաց։ Զոր և առ Քառասնեամբ եղեալ. յեղբարցն խաչեալ, և 'ի հեթանոսսայ երկրպագեալ և հաւատացեալ։

«Լուս եկն սով մեծ յամ երկիրն եգիպտացւոց և Քանանու նեղութիւն մեծ »։ Զի խրատունք գատաստանացն ամ սովով Հնչել պարտ վարկաւ զյղփութիւն անազգակեալսն։ Եւ տես թէ որպէս կազմէ զերան այլոցն 'ի խրատ, և զի իւրքն փառաւորեսցին։ Եւ զի էր, ասէ, նեղուն մեծ, զի ոչ բաւական լինէր գիւրել վասնզի սովոյն ընտովքն կամ ձկամբք կամ բանջարովք անզօր եղելոյ սոցունց։ «Եւ ոչ գտանէին կերակուր հարքն մեր»։ Ընդ բազումն նեղեալ վասանգեալ դաւաճանողքն Յովսէփայ 'ի տեղն պատժոցն. իսկ Յակոբ ըստ մատակարարութեան, զի 'ի պատճառս նորա կեցցէն ընդ նոսաւքն։

«Լուեալ Յակոբու թէ գտանի կերակուր յԵգիպտոս»։ Վայելչապէս. ոչ այլ ոք, այլ արժանաւորն կելոյ լսէ զհնարս կենացն. յոյժ մանաւանդ մարգարէաբար քան թէ 'ի համբաւոյ։ «Ասաքեաց զհարսն մեր յառաքեցոյն. և յերկրորդումն եւ ծանութիւն Յովսէփ եղբարցն իւրոց, և յայտնի եղև Փարաւոնի ազգնորա»։ Արդ իջեալ եղեն, զի կերակուր գնեսցեն, և 'ի պէտս կարեացն առ նա անկեալ եղեն։ Իսկ նա ոչ մինչև յայս միայն զսիրելութիւն իւր եցոյց, այլ և Փարաւոնի ծանոյց և զնոսա առ ինքն էած, պահելով և այսու ամբողջ զնմանութիւն տեառն իւրոյ՝ որ յերկրորդումն գալստեան փառաք յայտնելոց է և որոց խոցեցին զնա։

«Ասաքեաց Յովսէփ և կոչեաց զՅակոբ զհայր իւր և զամ ազգատոհմն՝ ոգիս եօթանասուն և հինգ»։ Յորժամ թիւ զաւակացն Յակոբայ հաւասարեաց աբրութուոյ կրկին եօթանասնեակ ամացն Աբրահամու, յորում խոստացաւ ածէ նմա զաւակ, և որչափ եկաց յետ տալոյ զաւակին, սկիզբն առնէ ապա միւսոյ նախասացութիւնն լրման՝ թէ եղիցի զաւակ բո պանդուխտ։ Եւ 'ի պատճառս սովոյն «Եղջ Յակոբ յեգիպտոս, և վախճանեցաւ ինքն և ամ հարքն մեր». մինչ չև էր ժամանակ ելիցն։ «Եւ փոխեցան 'ի Սիւքեմ, և եդան յայրին զոր ստացաւ Աբրահամ գնոց արծաթոյ յոր-

դուցն Եմովրայ 'ի Միւքէմ». զի դեռ ևս և ոչ տեղւոյ գերեզմանի անդամ տեարք էին 'ի Քանան, այսինքն է քայլ մի ոտին։

«Իբրև մերձեցաւ ժամանակ աւետեացն զոր խոստացաւ ԱծՍ Աբրահամու, առնեաց ժողովուրդն և բազմացաւ Յեգիպտոս»։ Ոչ 'ի չորեքհարիւր ամն առնեցոյց զնոսա, այլ մօտ 'ի կատարածն. և մինաւանդ չորեքհարիւր ամն անցեալ էր, և յոլովագոյնն Յեգիպտոս։ «Մինչև յարեաւ այլ Թագաւոր՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ. նա հնարեցաւ ազգին մերում և չարչարեաց զհարսն մեր՝ առնել ընկեցիկ զմանկունսն նոցա, զի մի ապրեսցին»։ Եւ այս իսկ է սքանչելի. զի յայնժամ առնեցոյց, յորժամ Թագաւորն հնարեցաւ զետընկէց առնել զմանկունսն. զի զնոսա ոչ կամէր յայտնապէս սպանանել, այլ զմանկունսն, զի մի բազմացին։ Եւ այս դարձեալ այլ յուսահատութեան տագնապ յետ առաջնոյն՝ որ էր սուին. այլ յայնմանէ ապրեցան։ Եւ երկրորդ 'ի ձեռս եգիպտացւոցն անկանել։ Իսկ երրորդս գժնդակ քան զայլսն, կորնչելն 'ի ձեռաց Թագաւորին։

Այլ տես աստանօր զքաջ ամենահնարութիւնն այ յայտնեալ. զի Թէպէտ եկն սուն 'ի վերայ նոցա, այլ ոչ սատակեաց զնոսա. նա և զի որ գիտէր զնոսա Թագաւորն՝ վախճանեցաւ, այլ մինաւանդ յայնժամ առնեցոյց զնոսա. և զի էլ հրաման Թագաւորական և ոչ զօրեաց սպառել զնոսա. այլ որովք բանսարկուն ձեռնարկէր քակել զխոստումն այ, այնու իսկ առաւել եղեն առնեցեալ։ Եւ յայնժամ սքանչելապէս լցեալ լինէր խոստումն այ. զի ոչ 'ի բարեբաստութեան և 'ի հանգիստ գոլով, այլ չարչարեալք և սպանեալք առնեցեալ լինէին։

«Յորում ժամանակի ծնաւ և Մովսէս»։ Դարձեալ և այս ևս սքանչելի զտեսչութիւնն այ յայտնէ. զի այն որ պաշտպան լինելոյ էր ազգին, այսինքն Մովսէս, ոչ յառաջ քան զխուռնչապ խռուելութեն և ոչ յետոյ, այլ 'ի մէջ սատակութեն ծնանէր։ Իսկ զի՞նչ այն՝ Թէ էր կայտառ առաջի այ։ Ցուցանէ՝ որ զի Թէպէտ ըստ մարմնոյ զօրութի ինչ կամ իմաստուն ոչ երևէր 'ի նմա, բայց առ 'ի յայ չնորհքն փայլէր։ «Որ և մաս

'ի տան հօր իւրոյ ամիսս երիս»։ Զոր Պաւղոս հաւատով, ասէ, Թագուցին. զի ծաղիկ դիմացն յոյս տայր Տնորհացն ՝ի ապրեցուցանել զնա։ Եւ ոչ եւս կարելով Թաքուցանել, Թէպէտ ոչ կամէին, 'ի գետ ընկեցին։

«Յս յընկեցիկն առնել զնա՝ երբարձ զնա դուստրն Փարաւոնի, և մնայց զնա իւր յորդեգիրս»։ Զի ոչ վայրապար ընկեցին, այլ մեծաւ յուսով և բազում խնամարկութ, ակն ունելով յայտնել 'ի նմա տուեալ Տնորհացն ՝ի պարգևք. որ և եղև իսկ։ Զի յորժամ 'ի մարդկայնոցս անյոյս եղև, և արտաքս ընկեցին զնա, յանժամ՝ի բարերարութիւն փայլեալ ցուցանիւր. զի երբարձ զնա ոչ այլ ոք, այլ դուստր Փարաւոնի։ Ահա չէր ուրեք տաճար և ոչ զենմունք զոհից, և այսչափ տնօրէնութիւք եղեն։ Արդ երեք Յովսէփայն այսքան սքանչելի էր՝ որ յեղբարցն վաճառեալ եղև և 'ի վաճառմանն Թագաւորեալ, ապա այս Մովսէսիս ևս քանչելագոյն. զի զայն որ պարտական եղև մեռանել և 'ի մահ իսկ մերձեցաւ 'ի գետ ընկեցեալ՝ Թագաւորն ինքն մնուցանէր զնա, զայն որ հանդերձեալ էր կործանել զիշխանութիւն նորա։ Տեսանես յամի գրեթէ զմեռելոցն յօրինեալ զյարութիւն. և մանաւանդ զի չեն հաւասար նորին ՝ի առնելն ինչ և մարդկային կամաքն առլինել. քանզի այսպիսի մարդկային լինէին կամքք։ Եւ տես զփոյթ նոցա, զի և զնմաստունս եգիպտացւոց կացուցանէին 'ի դայեկութիւն վարժից կորուսչին իւրեանց։ «Եւ վարժեցաւ Մովսէս ամ իմաստութեամբ եգիպտացւոցն. և էր զօրաւոր բանիւք և գործովք իւրովք». այսինքն 'ի խրատս հանձարոյ և 'ի հրահանգս գրաւորական կրթութիւն։

«Իբրև լցաւ նորա քառասնամեայ ժամանակ, անկաւ 'ի սիրտ նորա շրջել զեղբարքն իւրովք զորդւովքն Իսրայելի». զի ակն ունէր վարձուցն, բարւոք համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն ՝ի։ «Եւ տեսեալ զոմն զրկեալ, զչարեցաւ» ուղիղ նախանձու և օգնական եղև զրկելոյն։ Եւ Թէպէտ կասկածելի էին իրքն, «Խնդրեաց զվրէժ զրկելոյն սպանեալ զեգիպտացին»։ Տես Թէ որպէս ինքեանք 'ի զգուշութեան գոլով՝ զիւրեանց հանգիստն անտես առնէին, և սա և Յովսէփ զի զայլս ապրեցուսցեն։

«Օ մտաւ ածէր թէ իմացին եղբարք նորա՝ թէ ՝ի ձեռն նորա տալոց էր զփրկութիւն նոցա, և նոքա ոչ իմացան»։ Բազում աստանօր ցուցանէ առ հարս նոցա զխնամակալութիւն ՝ի նեղութիւս. զի ՝ի ձեռն բարերարութեան և տանջանաց և սքանչելեաց նուաճէր զնոսա ՝ի հաւատս, որով արժանասցին փրկութեան. այլ նոքա ոչ իմանային զնշանս նորա։ Զայս ասելով Ստեփաննոսի և զսոցանէ ակնարկէ իբրև զյիմարաց, որ զամենեցուն եկեալ հասեալ փրկութի՝ զՅս առաւել քան զՄովսէսին, որ ոչ առ յապա գուշակեալ էր՝ այլ անդէն իսկ եկեալ հասեալ, ոչ իմացան իբրև ափշեալք։ Զի որոյ արդեօք հանճարոյ կամ անդ կամաստ պէտք էին առ ՝ի գիտել. վասն զի ոչ լոկ բանիւք, այլ ՝ի ձեռն գործոյ լինէր պաշտպանութիւն. սակայն ոչ իմացան։ Ա՛յլ հայեաց թէ զիարդ այնչափ խօսելով Ստեփաննոսի ոչ էր ծանրագոյն ատենին, այլ լսէին բանից նորա. զի տեսանէին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի։

«Լո՛ւ ՝ի վաղիւ անդր երևեցաւ, ասէ, երկուց եբրայեցւոց ընդ միմեանս մարտուցելոց, և կամէր առնել խաղաղութի՝ ՝ի մէջ նոցա. ասէ. արբ, եղբարք էք, ընդէր զրկէք զմիմեանս»։ Ի միտ առ թէ զիարդ անդ զզրկիչն ոչ խրատէր, այլ սատակէր, որ թշնամի էր և ոչ լսէր խրատու. իսկ աստ առ անիրաւն հեզութի՝ խօսի իբրև առ ընտանի և երեկ փրկեալ առ ՝ի նմանէ ՝ի ձեռաց եգիպտացւոյն. որուհետև ՝ի Ճահ իսկ էր հաւանել փրկչին իւրոյ. այլնա ապերախտ եղեալ և ըմբոստացեալ ընդդիմաբանէր «Ո՞ կացոյց զքեզ, ասէ, իշխան և դատաւոր ՝ի վերայ մեր»։ Ա՛յսպիսի ինչ և ընդ Քրիստոսի ասէին. «Որով իշխանութի՝ առնես զայդ. կամ ո՞վ ետ քեզ զիշխանութի՝ զայդ». զի այս իսկ է սովորութի՝ հրէից, առ բարերարն անիրաւութի՝ գնալ։ Եւ տես զաստուծոյ պղծութի՝ ապերախտ առնն։ «Մի թէ սպանանել կամիցիս զիս, ասէ, որպէս երեկ սպաներ զեգիպտացին»։ Ա՛յնպէս վաղվաղակի զերախտիսն մոռանային և զդժոգակսն բարեացն փոխարինէին։ Զի ահա որ վասն իւր փրկութե՝ զծածուկ եղեալն՝ յայտ յանդիման հրապարակէր։

«Լո՛ւ փախեաւ Մովսէս ՝ի բանից յայսցանէ, և

եղև պանդուխտ յօտարս երկրի. ուր ծնաւ երկուս որդիս »։ Բայց ոչ խափանեաց փախուստն զանօրէնութիւնն, այլ և պատճառ եւս եղև։ Զի թէպէտ նոքա չարաբարոյք առ երախտաւորսն լինէին, սակայն որպէս յայնժամ 'ի ձեռն չարաչար կրողին Յովսէփայ ապրեալ եղեն, և այժմ 'ի ձեռն չարաչար կրողին յինքեանց ապրեցան, այսինքն 'ի ձեռն Մովսէսի։ Զի որ ղերախտիսն ընկալաւ 'ի նմանէ, թէպէտ և դարձով ոչ սպան զնա, սակայն բանիւ սպան, որպէս և նոքա. նոքա զՅովսէփ յերկրէն իւրեանց յօտարն վաճառեցին, իսկ սոքա զՄովսէս յօտարէն յօտարն փախստեայ արարին. և նոքա զկերակրիչն ինքեանց դաւաճանեցին, և սոքա զբարւոյ խորհրդակիցն և զփրկիչն իւրեանց կամեցան սպանանել։ Այլ ըստ Գամաղիէլի ոչ զօրեցին քակել զկարգեալն յայ խորհուրդ, այլ դաւաճանեալքն պատճառ փրկութեան լինէին դաւաճանողացն. 'ի ձեռն որոց ապրեալքն և փրկեալքն լինէին հանդերձ Աստուծով. որպէս 'ի կարգի ասացելովքս ցուցանէ։

« Լու 'ի կատարել, ասէ, ամացն քառասնից երևեցաւ նմա յանապատին 'ի լերինն Սինայ հրեշտակ տեառնէն 'ի բոց հրոյ մորենւոյն »։ Տեսանես զի ոչ կարէ երկար ժամանակն խափանել զխոստումն այ. այլ յորժամ բազում ժամանակս յօտարութեան էր և ոչ եւս ունէր ակն անդրէն դառնալոյ, քանզի և մանկունս երկուս անդրէն ծնեալ էր, յայնժամ նմա հրեշտակն երևեալ լինի։ Եւ մի զարմանար թէ զՈրդին այ հրեշտակ կոչէ, զի կոչէ և առ Յեսուաւ մարդ։ Յանապատին և 'ի լերինն ասէ, և ոչ 'ի տաճարին. և ոչ ուրեք տաճար և ոչ զենուն։ Դա և ոչ յանապատին երևեր, այլ 'ի տկար և 'ի փշալից թփուտն և 'ի մորենւոջն առ 'ի նշանակ մեծի խորհրդոյն, որ ' առ յապայն լինելոց էր 'ի ձեռն կուսին Մարիամու՝ որ կրեաց զմանալի հուր ՅԾՈՒԹԵՆՆ և ոչ կիզաւ, որպէս մորենին որ վառեալ էր և ոչ այրեր։

« Լու Մովսէսի տեսեալ զարմացաւ ընդ տեսիլն »։

1 Յերկոսին օրինական ։

Զի ասի թէ և չորն ձաղկ դալարացեալ տերևէր իբ-
րև զՄարիամ . որ թէ գոյր 'ի նմա տեսակ փշոյ [1] 'ի
զանգուածոյ տանն Աղամայ, և այն ևս սրբեալ հո-
գէխառնէր ։ « Եւ 'ի մատչելն նորա նշմարել՝ եղև
ձայն տեառն » ։ Ահաւասիկ ոչ միայն տեսլեան , այլ
և ձայնի արժանացաւ ։ « Ես եմ, ասէ , ՅԱ Աբրահա-
մու , ՅԱ Խսահակայ և ՅԱ Յակոբայ » ։ Զոր վերա-
գոյն հրեշտակ ասաց , աստանօր ՅԱ և տէր կոչէ Աբ-
րահամու , Խսահակայ և Յակոբայ զմեծի խորհրդոյ
հրեշտակն ։ « Եւ զահի հարեալ Մովսէս՝ դարձուցա-
նէր զերեսս և ոչ իշխէր հայեալ առաջի այ . և ասէ ցնա
տէր . լոյծ զկօշիկս յոտից քոց » կոխել զեգիպտա-
ցիս որպէս զողկոյզս 'ի հնձանի . ըստ որում Յեսու
զքանանացիսնըստ ասելոյն՝ յեգոմ լուծից զկօշիկ իմ ։

ՆԱՀ . Լոյս մեզ առ յօրինակ . զի որ մովսիսապէս
հպի առ ՅԱ աստիճանաւ ինչ ըստ առաքելոյն , մեր-
կանալ պարտի և 'ի սակաւ ախտից , որով և զերկիր
կոխէ . զի 'ի հոգալ զհարկաւորսն կերակուր կամ
ծածկոյթ՝ մի աղտեղասցի ։

ՈՍԿ . « Օ՛ի տեղիդ յորում դուդ կացեր , երկիր
սուրբ է » ։ Ոչ ուրեք տաճար , և տեղին սուրբ է . զի
վերերևումն ներգործութիւն միածնին յոյժ սքան-
չելի և սրբագոյն էր վայրն , և քան զնոյն ինքն զսրբուն
սրբութեցն . վասն զի անդ ոչ երբեք այսպէս երևե-
ցաւ ՅԱ , և ոչ այսպէս դողացեալ եղև Մովսէս ։ Նշա-
նակէր այսու զմարմնով գալուստն իւր , որով սրբելոյ
էին ամենայն արարածք առաւել քան զտաճարն և
զդաբիրսն ։ Այս ասէ և զբազում մատակարարու-
թիւն զինամն ։

« Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ
որ յԵգիպտոս » . յայտ է զի ոչ իբրև զմարդ տեսանէ ։
« Եւ լուայ հեծութիւնսոցա » . զի աղաղակեն և հեծեն
'ի դառնութիւն վշտին ։ « Եւ իջի փրկել զնոսա . արդ եկ
առաքեցից զքեզ յԵգիպտոս » ։ Ոչ տեղւոջէ 'ի տեղի
իջանէ , այլ յանհաս բարձրութիւնն 'ի գթութիւն , յի-
շելով զնոսատուն արդարոցն ։ Ցուցանէ ՅԱ զդիջա-

[1] Յօրինական գրեալ էր ՀԼՈՅ կամ ՀՈՒՅ ։

նեն իւր խնամաք առ. Հարս նոցա 'ի նեղութեն. զի և սոցա տայցէ գիտել՝ թէ որպէս անիմայքն և ապերախտք եղեն նոքա, նոյնպէս և սոքա։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Լսել մեր լսելով զայս 'ի նեղութիս 'ի նա ապաւինեսցուք. քանզի հեծութեն նոցա լուայ, ասէ, և ի՞նչ փրկել զնոսա։ Ոչ պարզաբար վասն նեղութեցն, այլ և վասն հեծութենն և աղաղակի նոցա առ իս. զոր և Դաւթաւ յուսադրէ՝ թէ վասն հեծութեան տնանկին յարեայց 'ի փրկել։ Ապա թէ ոք ասիցէ՝ թէ ընդէր թողացոյց ՝ն ՝ն ՝ն զարշարիլ նոցա անդանօր, նախ զայս ասասցուք՝ թէ ամենայն յանիրաւի չարչարանք եկեալ 'ի վերայ ուրուք, մեծաց վարձուց պատճառ լինի։ Եւ ապա զի զզօրութիւնն իւր ցուցցէ Թանձրամտացն՝ թէ կարող էր փրկել 'ի միջոյ չարեացն։ Եւ դարձեալ զի խրատեսցէ զնոսա տանջանօքն զսպիլ յաւելորդաց. զի ահա յորժամ յանապատին անդորրացան, գիրացան պարարտացան և թողին զՅոբ զաբարիչն։ Սմին վասն թոյլ տայր նոցա չարչարիլ, որպէս Ադամայ քրտամբք ուտել զհաց. զի յորժամ հասցէն դարձեալ 'ի հանգիստն, գոհասցին զՅոբ. զի մեծ բարի է նեղութիւն ըստ ասողին «Բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս, որով ուսայց զարդարութիւնս քո»։

Լսդ եթէ սրբոցն բարի էր նեղութիւնն, յոյժ մանաւանդ մեզ. ապա մի՞ փափկանալ խնդրեսցուք, զի ոչ կարեմք յաշխարհիս խնդալով միանգամայն և յոյժ խնդալ. զի չիք ինչ խայտառակագոյն քան զզփափկութիւն. զի ոչ դադարէ 'ի վերայ իւրում հիմանն հոգի փափկացեալ. այլ բերեալ լինի իբր 'ի գժնդակ ջրհեղեղէ հեշտութեանցն անկարգասէս 'ի ծաղր անհամ և 'ի բանս վայրապարս։ Եւ տես զԱդամ որպիսի՞ ոք էր 'ի փափկութեն դրախտին, և որպէս յետ այնորիկ. կամ զնոյն ինքն զԴաւիթ յորժամ 'ի հեշտութեն էր և 'ի խնդութեն զինչ ասէր. «Ես ասացի 'ի բարեկենդանութեան իմում՝ թէ ոչ սասանեցայց յաւիտեան». զինչ և 'ի նեղութենն. «Թէ ասիցէ՝ թէ

ոչ կամիմ զքեզ, ահա արասցէ ընդ իս զոր ինչ կամիցի »։ Տեսանեա զզգաստութիւն 'ի հեղութիւնն. զի չիք իմաստասիրագոյն քան զարամութիւն. սմին վասն և Սողոմոն ասէ. « Լաւ է երթալ 'ի տուն սգոյ քան 'ի տուն ուրախութեան »։ Եւ ասպա զօրինակ փրկելոյն զնոսա յայտ առնէ. « Եկ, ասէ, առաքեցից զքեզ յԵգիպտոս »։ Սպասաւոր զքեզ լինել կամիմ փրկագործ կամաց իմոց, և հանել անտի զիմ ժողովուրդն. վասն որոյ եկ առաքեցից զքեզ։

ՃԱՌ ԵՕԹՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

«Զ՞ԱՅն Մովսէս զոր ուրացան և ասեն՝ ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր 'ի վերայ մեր»։ Յոյժ միաբանի իրքն Մովսէսի ընդ խորհուրդն Քոյ, զի մի՛ զարմացուք թէ բարեգործելքն 'ի Քոյ 'ի քաց հրաժարեն ասելով զի՛ք մեր թագաւոր. զի և առ Մովսէսիւ զայս ինչ արարին. սմին վասն ցուցանէ 'ի վաղընջուց զապերախտութիւն նոցա։ Զայն Մովսէսն, ասէ, զոր տագնապեցուցին կորնչել, զայն յորմէ հրաժարեցին, զնա՞ծ փրկիչ առաքեաց նոցա, որպէս և զՔո զոր յարոյցն և առաջնորդ կենացն առաքեաց։ Եւ տես թէ զիարդ 'ի ձեռն Քոյ ցուցանէ և զլեալսն յառաջագոյն։ «Զեռամբ հրեշտակին» ասէ, այնմ որ ասաց 'ի մորենեւոջն «Ես եմ ՝ն՞ծ Աբրահամու»։

«Մ՞ովսէսն այն եհան զնոսա» ասէ։ Եւ տես զիարդ ցուցանէ զնա պայծառագոյն։ «Աբարեալ, ասէ, նշանս և արուեստս յերկրին եգիպտացւոց և 'ի կարմիր ծովուն և յանապատին զամս քառասուն»։ Յայտ առնէ թէ վասն նոցա առնէր զնշանսն զամենայն. ոչ 'ի միւմ տեղւոջ կամ սակաւս, այլ յԵգիպտոս և 'ի ծովուն և յանապատին, ուր և դեգերեալ լինէին զամս քառասուն։ Զի ոչ պարզաբար ընտրեաց զնոսա, այլ այսպիսի հրաշիւք 'ի ձեռն այնպիսի առն, որ ընդ՞այ խօսեցաւ, որ 'ի հրաշափառ երևմանցն ապրեցաւ, այնչափ նշանս կարողացաւ առնել։

«Զ՞ն Մովսէսն, ասէ, զոր ասաց ցորդիսն Խարայելի մարգարէ յարուսցէ Ձեզ տէր ՝ն՞ծ ձեր յեղբարց ձերոց արհամարհեալ 'ի ձէնջ իբրև զիս»։ Զի զոր օրինակ անարգեցին հարքնոցա զՄովսէս, այնպէս անարգեցին և սոքա զՔո. և որպէս անդ զնա Փարաւոն, սոյնպէս և աստ զսա Հերոդէս կամեցաւ սպանանել. այլ նա 'ի Մադիամ, և սա յԵգիպտոս զերծեալ ապրեցան։ «Նմա լուիջիք» ասէ։ Բերէ 'ի մէջ զմար-

գարէութիւն վասն քեզի և զնորին օրինակն 'ի նոր օ-
րէնս հաստատելոյ՝ թէ առաջինն լուծանելոց էր 'ի
յառնել մարգարէին։ Եւ եցոյց թէ առանց պատ-
ճառի ընուլ պարտ է մարգարէութիւնն. և ոչ հակա-
ռակի նմա Մովսէս։

«Սակ որ եղև յեկեղեցւոջն, որ յանապատին էր,
ընդ հրեշտակին՝ որ խօսեցաւ ընդ նմա 'ի հրոյ մարե-
նւոջն՝ ես եմ ՅԱբրահամու. և ընդ հարսն մեր՝
ես եմ ակր ՅԾ քո»։ Տեսանէս զի անդուստ էր ար-
մատն հաւատոց. զի փրկութիւն 'ի Հրէից է, ասէ։ Եւ
ապա զմեծ սքանչելիսն ցուցանէ՝ որ 'ի վերինն լեալ լի
նէին. «Որ ընկալաւ, ասէ, զպատգամս կենդանիս
տալ մեզ»։ Տես զի զհրեշտակն որ խօսեցաւ ընդ նմա,
զնոյն ինքն զնա ահաւասիկ ցուցանէ գոլ տուող օրի-
նացն։ Զինչ է պատգամն կենդանիս. այսինքն որոց
կատարումն կենդանութիւն էր, թէ պահեցեն և հնա-
զանդեսցին. ըստ այսմ՝ թէ «Որ արասցէ զայն, կեցցէ
նոքիմբք»։ որ են մարգարէութիւնքն 'ի քէզ. և նովաւ
կարէին նոքա կենդանի մնալ 'ի հնումն։ Իսկ վասն ոչ
պահողացն զբանս, ասէ Եզեկիէլիս՝ թէ «Տաց նոցա
հրամանս անբարիս և իրաւունս՝ որովք ոչ կարիցեն
կեալ»։ Ահա ոչ ուրեք տաճար և ոչ զենուն, և ըն-
կալաւ, ասէ, զբանս կենդանիս։ Յամենայնի սքանչե-
լի ցուցանէ զՄովսէս՝ թէ ոչ միայն նշանս արար, այլ
և օրէնս ետ. որպէս և քեզ յառաջագոյն նշանս առնէր,
և յայնժամ ապա օրէնս դնէր և պատուիրանս ա-
ւանդէր, նոյնպէս և նա։

Այլ աստանօր ամբաստանութիւն հասուցանէ նա-
հապետացն որք ոչ լուան նմա անհաւանական բարս
ունելով յետ այնչափ նշանացն, և յետ առնլոյն զպատ-
գամն կենդանիս 'ի հակառակն ևս դարձան նմա։
«Որում ոչ կամեցան, ասէ, հնազանդ լինել հարքն
մեր. այլ մերժեցին և դարձան սրտիւք իւրեանց յե-
գիպտոս». ուր հեծէին և յոգւոց հանէին, ուստի
դուրէին և առ ՅԾ աղաղակէին. դարձեալ անդանօր
դառնային։ «Եւ ասեն ցՅահարոն. արա մեզ աստուածս»։
Ով չարութիւնն. արա, ասեն, ոչ ՅԾ, այլ աստուածս։
Եւ այս իսկ է սքանչելի, զի զոր ոչ գիտէին՝ խնդրէին։
«Զի երթիցեն, ասեն, առաջի մեր»։ Ուր. յեգիպ-

տոս։ Տեսանէս թէ զիարդ դժուարաքակ իմն հպեալ էին 'ի բարս Եգիպտականս, և ո՛րպէս ուրանան զերբախտաւորն և զՀանողն անարգէն։

« Օ՜ի Մովսէսն այն որ Եհան զմեզ յԵգիպտոսէ, ոչ գիտեմք զի՞ եղև նմա»։ Ոչ ուրեք յանուն ՝այ, այլ զամենայն Մովսէսի վերագրէն։ Արդ ուր զոհանալ պարտ էր զ՝այ, զՄովսէս 'ի մէջ բերէին. և ուր հաւանել պարտ էր օրինացն, զՄովսէս ոչ յիշէն։ «Ոչ գիտեմք ասէն, զի՞ եղև նմա»։ Եւ սակայն ասաց Աստուած՝ թէ եղեալ է զի առնուցու զօրէնսն. այլ ոչ Հանդուրժեցին զաւուրս քառասուն. « Այլ արարին որթ 'ի Քոռրեբ, ուր ՝ած երևեցաւ Մովսէսի, և մատուցին զոհս կռոց և ուրախ լինէին 'ի գործս ձեռաց իւրեանց »։ Վասն որոյ պարտ էր ամաչել և պատատել զերեսս իւրեանց, նոքա 'ի խնՀոյս ծաղուս իմն ելեալ կաքաւելով ուրախ լինէին։ Եւ զինչ աքանչելի թէ զՔա ոչ գիտացին այնոքիկ՝ որ զՄովսէս և զ՝ած զցուցեալն 'ի ձեռն այնչափ նշանաց ոչ միայն անգիտացան, այլ և անարգեցին կուռս առնելով։ Այլ « Դարձոյց զնոսա ՝ած և մատնեաց 'ի պաշտօն զօրուութեանէ երկնից »։ Այսպէս յայտ է թէ աստուստ են զոհքս 'ի սովորութեանէ չարութեցն։ « Եւ նոքա, ասէ, արարին զոհս կռոց »։ Վասն այնորիկ նշանակէ յանուանէ՝ թէ արարին որթ և մատուցին զոհս. զի նախ քան զայն չիք անուն զոհի. այլ հրամանք կենդանի և բանք կենաց։ « Եւ ուրախ լինէին 'ի գործս ձեռաց իւրեանց »։ վասն այնորիկ լինէին տոնք մարմնականք։

ԿԻՐԱԿՈՍ. Իսկ զինչ այն՝ թէ « Մատնեաց զնոսա 'ի պաշտօն զօրուութեանէ երկնից »։ Աստուծոյն յերկրաւոր չար սովորութենէն փոխեալ ընդ երկնաւորացն արար խորհրդակից պաշտամամբքն։ Իսկ մատնելն զՀոյլ տալն յայտ առնէ. որ ոչ ըստ նորին կամաց էր անբանիցն արիւնքն և նիւթական պաշտամունքն, այլ ըստ նոցին հեթանոսաբարոյ սովորութենէն. որ յիմանալին և 'ի հոգևորն մարմնապէս հպէին, ոչ կարելով ըստ միտս կատարել զպաշտօնն, այլ կերակրովք և պէսպէս լուացմամբք մարմնոյ։

ՈՍԿ. « Որպէս և գրեալ է 'ի գիրս մարգարէից »։ Եւ ոչ ածէ զվկայութենն պարզաբար. այլ զի ոչ գոյր պէտք

զոհիցն ցուցանէ ասելով. «Մի թէ զնոսս և պատարագս մատուցէք ինձ զամս քառասուն յանապատին, տունդ Իսրայէլի»։ Զի ոչ թէ փոխանակ զոհից և պատարագաց կերակրեցան նոքա մանանայիւն և լորամարգո

այլ ոչ ինչ օգտէր նոցա, և ոչ որ նախ քան զայս նը-
չանքն, և ոչ որ յետ այնորիկ լինէին. այլ ամենեքին
ինքեալ տապաստ անկանէին ոսկերքն։ Եւ յանապա-
տին՝ ասէ, զի տեղի ընդ տեղւոյ բաղդատիցէ, այսին
քրն ընդ տաճարին. զի ցուցցէ թէ անդ է տեղի սուրբ՝
ուր ՅԾ իցէ։ Ապա յայտնէ թէ նախ էր բարեբարու-
թիւն քան զխորանն։

«Օ՛որ ընկալեալ բերէին հարքն մեր, փոխանորդ է
լով զմիմեանս, հանդերձ Յեսուաւ 'ի կալուածս քա-
նանացւոցն»։ Թէպէտ և յայ եղև ստորագրութիւն
խորանին, ասէ, բայց և այնպէս յանապատին շրջա-
բերեալ լինէր և ոչ 'ի տեղւոջ դադարեալ. և ոչ էր
տաճար, և սակայն քանանացիքն արտաքսեալ լինէին։
«Զորս և մերժեաց, ասէ, ՅԾ յերեսաց հարցն մե-
րոց»։ Ա՛յլ և ոչ յայնժամ գոյր տաճար. և այնչափ
սքանչելիք եղէն, և ոչ էր ուրեք տաճար։ Որպէս զի
ասիցէ՝ թէ առաջինն էր իբրև զտաղաւար դիւրա-
փոփոխ, զփոփոխումն օրինացն տպաւորելով։ «Մինչև
յաւուրս Դաւթի, ասէ, ոչ էր տաճար. նա եգիտ
շնորհս առաջի ՅԾ, և խնդրեաց գտանել զյարիս ՅԾ
Յակոբայ»։ Հայցեաց գտանել շնորհս առաջի ՅԾ. և
նա ոչ շինեաց, այլ 'ի բաց ընկեցեալն Սողոմոն. այս-
պէս ոչ մեծ ինչ է տաճարդ, ասէ։

Եւ զի կարծէին նոքա մեծ գոլ զՍողոմոն վասն շի-
նելոյն զտաճարն, ցուցանէ թէ չէր լաւագոյն քան
զՀայրն և ոչ հաւասար ևս, որպէս յայտ է։ «Նա և
Սողոմոն շինեաց նմա տուն. այլ ոչ եթէ բարձրեալն
'ի ձեռագործ տաճարս բնակէ»։ Եւ զի զայսոսիկ ե-
ցոյց նախ ասացելովքն, ցուցանէ և 'ի ձեռն Եսայեայ
զնոյն ասացեալ։

«Երկինք աթոռ իմ են և երկիր պատուանդան ո-
տից իմոց» ասէ. և ոչ թէ տուն բնակութեան իմոյ։ Զի
թէպէտ արարածք իւր են և գործք ձեռաց իւրոց,
բայց ոչ այսուիկ արժանի ՅԾ. և եթէ սոքա ոչ, զիարդ
'ի ձեռաց մարդկան եղէսցն։ «Որպիսի՞ տուն շինե-
ցէք ինձ, ասէ. կամ զի՞նչ տեղի հանգստեան իմոյ. զի
զայս ամ ձեռն իմ արար»։ Ա՛յսպէս փոյթ և համար-
ձակ Ստեփաննոս զբանն 'ի կիր արկանէ. զի բաղում

էր համարձակութիւն, հանդէրձեալ նորա մեռանել, զոր և քաջ գիտէր իսկ։

ԵՓՐ. Ա՛ամն որոյ իբրև եցոյց զնոսա զի զիսորանն փառաց ընդ վրանն Մաղրբայ փոխանակէցին, և զտաճարն պարծանաց իւրեանց անարգեաց բարձրեալն. զի զինքեանս արասցեն նմա տաճար երկիւղիւն ՝այ։ Ա՛յլ զի ծանեաւ թէ չեն ինչ օգտելոց, այլ սպանանել խնդրեն զնա, զուարճացեալ հոգւովն՝ ՝ի նոսա իսկ դարձոյց զբանն կշտամբելով զկարծրութիւն նոցա մարգարէիցն ձայնիւ և ոչ յիւրմէ. «Ո՛ խստապարանոցք, ասէ, և անթլփատք սրտիւք»։ Որովք Երեմիա նախատէր զնոսա, անարգեաց և սա զթլփատութիւն մարմնոյ. և մեծարեաց զթլփատութիւն սրտի զոր խրնդրէ ՝ած, յորմէ նոքա ՝ի բաց կային. սմին վասն ՝ի մարգարէական կշտամբանսն և զիւրն ևս յաւելու։

ՈՍԿ. «Դուք հանապազ, ասէ, Հոգւոյն սրբոյ հակառակ կայք որպէս և յայսմ ժամանակի»։ Զի յորժամ ոչ կամէր զոհս դող, դուք զոհս արարէք. և վասն որոյ ոչ կամէր տալ ձեզ պատուէր, խնդրեցէք զնա. և իբրև առէր, պղերդացեալ հեստեցէք նմա. դարձեալ մինչ կանգուն էր տաճարն, կուռս կանգնեցէք. և այժմ զի առանց տաճարին կամի զպաշտօնն, դուք զտաճարն խնդրէք. մարգարէքն Հոգւովն խօսէին, և ոչ անսայլք. առաքեալքն նովաւ սքանչելիս գործեն, և դուք հակառակ յառնէք։ Եւ ոչ ասաց թէ ընդ ՝այ հակառակիք, այլ ընդ Հոգւոյն. զի և ոչ մի գիտէ զանազանութիւն, այլ զՀօրն Որդւոյ ասէ և զՈրդւոյն Հոգւոյ։ Եւ Հայրենի ցուցանէ զանհաւատութիւն նոցա. «Որպէս հարքն ձեր և դուք» ասէ։

Այ՛ զի մեծամեծս պարծէին ՝ի նահապետսն, օտարացուցանէ զնոսա յարդարոցն և մեծապէս խոցոտէ զսիրտս նոցա. որպէս Յովհաննէս ծնունդս իժից ասաց զնոսա, և ՓՇ որդիս սատանայի, և սա սպանողացն։ Զի «Զո՞ ՝ի մարգարէիցն, ասէ, ոչ հալածեցին հարքն ձեր. և սպանին զայնոսիկ՝ որ յառաջագոյն պատմեցին վասն գալստեան արդարոյն»։ Ոչ այժմ ևեթ ՝ի Քեզ ապստամբք էք, ասէ, այլ և վաղ

իսկ 'ի Հօրէ նորա. որպէս գիրք ամբաստանէն. «Տէր զսեղանն քո կործանեցին և զմարգարէսն քո կոտորեցին», որք յառաջագոյն խօսեցան վասն գալստեան Քրիստոսի. զոր տակաւին արգարոյն ասէ, կամելով ամփոփել զնոսա. և անհամեմատ դնէ զկատաղութիւն սոցա քան զՀարցն. զի նոքա զմարգարէսն սպանին, և սոքա զՅածն մարգարէից։

«Արդ՝ զուք, ասէ, այժմ մանուիչք և սպանողք եղերուք», 'ի ձեռս տալով Պիղատոսի և խաչելով զնա։ «Ոչ առեք զօրէնս 'ի հրամանս հրեշտակաց և ոչ պահեցիք»։ Ամենք ասեն թէ զայն որ 'ի ձեռն հրեշտակաց միջնորդութիւն կարգաւորեալ էր. զօրէնսն ասէ. կամ զայն իսկ ընձեռեալ նմա 'ի ձեռն հրեշտակին՝ որ երևեցաւ նմա 'ի մօրենւոջն զոր վերագոյն ասաց։ Քանզի թէ մարդ ոք էր որ հրամայէր, չէր ինչ մեծ ապախտ առնելն. ոչ ասպաքէն 'ի վերուստ էր կարգաւորութիւնն. այնմ, ասէ, եղէք հակառակ որ զայնոսիկ արար 'ի ձեռն Մովսէսի և զայսոսիկ ինքեամբ, զորոյ զպատմողն ևս սպանէք։ Յոյժ մանաւանդ զնոսա՝ այ և հրեշտակաց իւրոց և մարգարէիցն և Հոգւոյն և միածնին և ամենեցուն իսկ եղոյց լեալս անհաւանս։

Եւ քանզի նոքա այսոքիւք ջատագովք լինէին օրինացն և ասէին՝ թէ 'ի Մովսէս փրկասաքանէ, ցուցանէ արդ՝ զի նոքա մանաւանդ էին հայհոյիչք և դիմադարձք Մովսէսի։ Եւ զի ասէին՝ թէ և յԱծ հայհոյութիւն խօսի, ցուցանէ թէ ինքեանք 'ի ընէ 'ի վերուստ զայն առնէին. և թէ զօրէնսդիրն նոքա փոխեցին. և թէ օրէնքն ոչ է փոյթ նոցա։ Եւ զի ամբաստանելով ասէին ընդ Մովսէսի հակառակել զնա, յայտ առնէ զի ինքեանք ընդ Հոգւոյն միշտ հակառակէին. և այս ոչ պարզաբար, այլ հանդերձ սպանանելով զընակարանս Հոգւոյն։ Եւ թէ զոր Հոգին կանխաւ պատմեաց վասն գալստեանն Քրիստոսի, նոքա զնա ոչ միայն ոչ ընկալան՝ 'ի վերուստ ունելով ընդ նմա թշնամութիւն, այլ և զեկեալն 'ի փրկել զնոսա ոչ մատնեցին միայն, այլ և սպանին։ Այսպիսի է համարձակութիւն առն զիաչն բարձողի։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Լ, մանեսցուք և մեք այնպիսի համարձակութեան. զի թէ պատերազմի ժամ ոչ է, այլ համարձակութեան ժամ է. խօսեսցուք հանապազազ զվկայութիւս այս առաջի թագաւորաց. խցցուք զբերանս հեթանոսաց, այլ առանց սրտմտութեան. զի ոչ բնակէ Հոգին սուրբ հեզութեան ուր սրտմտութիւն է։ Զի որպէս 'ի ծովային ձմերայնի բազումք աղմուկն և ոչ ունի տեղի օք ի մաստասիրելոյ, նոյնպէս և 'ի սրտմտութիւն ոչ ինչ յառաջեալ լինի ամբողջ. զի ոչ ինչ ընդ հատ է բարկացեալն յարբեցելոյ և 'ի դիւահարաց անկարգութիւն։ Եթէ կամիցիմք համարձակութեան ցուցանել, մաքուր լիցուք 'ի բարկութեան։ Տես զՍտեփաննոս ոչ ցասմամբ զրուցատրելով, զի ոչ անարգէր զնոսա խստապարանոցս ասելովն, այլ զմարգարէութիւն յիշեցուցանէր հեզաբար։ Եւ ոչ էր սրտմտութեան առնմա. 'ի քարկոծիլն 'ի նոցանէ ըղձայր ասելով «Տէր, մի համարիր սոցա զայս մեղս»։ Զսոյն և մեր ուղղելով հանդերձելոց բարեացն հասցուք 'ի փառս Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ՈՒԹՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

«Լ՚Ի լուեալ զայս զայրանային 'ի սիրտս իւրեանց և կրճատէին զատամունս իւրեանց 'ի վերայ նորա»։ Ահաւասիկ իբրև պատճառս ինն առեալ լինէին յաստացելոյն սպանանել զնա. զի անիրաւք գոլով և չարք յոյժ տարակուսին։ Որպէս վասն առաքելոցն ասէին զկծեալք «Զի՞նչ արասցուք արանցս այսոցիկ», նոյնպէս և աստանօր հերձուն 'ի բարկութենէն։ Եւ թէպէտ նմա իսկ էր 'ի դէպ սրտմտիլ որ յանիրաւի զբարպարտիւրն, այլ նա ոչ ինչ այնպիսի կրեր. այլ մանաւանդ զրպարտողքն իբրև 'ի խիստ դիւէ մոլեգնեալք սատակեալք լինէին ընդ լուրն Ճշմարտութեան։ Զի ըստ որում ասէի, առնելն չար՝ նոյն է կրել չարաչար. զի և մեք ուր ոչ ինչ իցեմք սխալեալք, և զրպարտեալք կամ անարգեալ լիցուք, մի ախտասցուք սրտմտութիւն կամ տրտմութիւն։

Լ՚որդ քանզի կամէին զնա սպանանել պատճառս ինն իրաւացիս խնդրէին առ 'ի ընուլ զկատաղութիւն իւրեանց։ Եւ զի թէպէտ Ճշմարիտ էր զոր ինչ կշտամբեալ յանդիմանեաց զնոսա, այլ ոչ կամէին տալ կարծիս՝ թէ վասն առ նոսա կշտամբանացն սպանին զնա, այլ վասն ամբարիշտ հայհոյութեան։ Զի յետ սպանանելոյն զնասել ախորժէին զկարծիս ամբոյն 'ի նա իբրև առ հայհոյիչ ոք. որով և հերձեալք բարկութիւն կրճատէին զատամունս և նախատինս առ նա արձակէին։

«Լ՚ուն լի էր Հոգւով սրբով, հայեցաւ յերկինս և ետես զփառս այ, և զՅա զի կայր ընդ աջմէ այ»։ Յայտ է ահա զի 'ի բոլոր երրորդութեանէ փառս վայելէն չարչարեալքն վասն Քրիստոսի։ Եթէս զՀայր և զՅա ընդ աջմէ նորա. զի իւրոյն միայն երևի Յա, որպէս յետ յարութենն առաքելոցն։ Եւ զի 'ի մէջ կատաղի տիրապետանացն կայր նահատակն առանց օգնականի, և

զի ժամ պսակելոյ էր առաջին վկային, ետես զտէրն ունելով զպսակն, զի կայր թելադիր ընդ աջմէ նորա յաղթել մահու. զի ցուցցէ թէ նոյնպէս օգնէ 'ի ծառայսն որք վասն նորա 'ի մահ մատնին։ Սմին վասն յայտնէ զոր ետեսն զերկինս բացեալ, զայն որ յետ փակելոյն Աստուծոյ նախ Քրիստոսի միայն բացաւ 'ի Յորդանան. իսկ յետ խաչին բացեալ լինի և խաչակցացն Քրիստոսի, և նախ սմա զոր և ասէ. « Ահա տեսանեմ զերկինս բացեալ և զորդի մարդոյ զի կայ ընդ աջմէ ՝այ։ Տեսանեն, զի յայտնեաց զպատճառս լուսաւորութեան երեսացն նորա, զի հանդերձեալ էր զաբանչելին զայն տեսանել զտեսիլ. վասն այնորիկ և 'ի կերպարանս հրեշտակի փոխեցաւ, զի հաւատարիմ լիցի վկայութիւն նորա։

Եւ քանզի վերագոյն Ճառեաց յաղագս մահուն Քրիստոսի, որում մատնիչք և սպանողք եղեն, այժմ և զյարութեն յաւելու զբան. զի գոնէ պատկառեալ 'ի հրեշտակատիպ փառաց երեսաց նորա Հրեայքն ընկալցին զասացեալն։ Զոր դուք սոսկ մարդ կարծելով սպանէք, ասէ, ես կենդանի զնա յերկինս փառաւք՝ զի կայ ընդ աջմէ ՝այ՝ տեսանեմ։ Եւ զի ծանոր թաւէր նոցա ընդ աջմէ ՝այ զնա լսելն, զի այն ինչ եւեթ յաբեաւ 'ի մեռելոց՝ յայտնէր ահա, սմին վասն ընդ յարութեանն ոչ զհամբառնալն եւեթ վկայէ, այլ և ըզհամապատիւ բնութիւն ընդ Հօր և զուրդահաւասար զփառսն։

Եւ ոչ ասաց զՈրդի ՝այ, այլ զորդի մարդոյ. զի հաստատեսցէ ծանօթ բանիւն թէ նա է որ ասէրն՝ թէ « Տեսանիցէք զորդի մարդոյ ելեալ ուր էր զառաջինն ». որ և ՝ած գոլով վասն այնր էջ և եղև մարդ մնալով անմեղ. որպէս զի զաղխեալ գրուհնս երկնից ընդգէմ մեզուցելոյ նախահօրն մկրտութիւն և աբեամբ վերստին բացեալ ընդ իւր տարցի մուծցէ ըզպատրանօք կոխեալն 'ի դիւաց և յանդիման կացուցցէ երեսացն ՝այ և Հօր։ Այս որ և փութայր 'որն հասանել առ տէրն և ՝ած Քս, որ և վասն մեծ սիրոյն որ առ նախնին վկայն իւր յարեաւ պսակել զբաջնահատանն։

Եւ զի ընդ աջմէ ՝այ ասաց և ոչ ընդ աջմէ Հօր, զի զմարմնոյն իրս կամէր հաստատել. յաղագս որոյ և

որդի մարդոյ կոչէ զնա. և զի սքանչելի տեսիլն հաւատալոյ արժանի լիցի, և երեսքն փառաւորեալ լինէր. զի մարդասէր գոլով ՅԾ զչարութիւն նոցա 'ի նոցին յօգուտ յեղաշրջեալ այնչափ նշանօք արծարծէր զնոսա 'ի հաւատս. յաղագս որոյ և սուրբն երկեցուցանել կամելով զնոսա, «Աղաղակեաց 'ի ձայն մեծ». բարձրագոչ ձայնիւ 'ի լսելիս նոցա հնչեցոյց զոր ետեսն, զի ցաժուսցէ զնոսա 'ի մոլեգնութենէն։ Ահել նոքա զինչ. «Խցին զականջս իւրեանց» իբրև զլժս։ Իսկ ոմանք և այպէս ընթեռնուն. «Աղաղակեալ 'ի ձայն մեծ՝ խցին զականջս իւրեանց»։ Եւ զոր առ Քրիստ ասրարին, լսելով թէ «Տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութենն», հայհոյութի զայն զրաբանելով մահապարտ զնա դատեցին, զնոյն և աստ առնեն. աղաղակեցին՝ թէ հայհոյեաց, մահապարտ է։ Եւ որպէս առ Քրիստ զհանդերձս պատառեցին, և աստ զականջս խցին, զի մի լուիցին զոր ասայն։

«Եւ գիմեցին առ հասարակ 'ի վերայ նորա». վասն վկայելոյն զՔրիստ թէ յերկինս է ընդ աջմէ Այր, զոր ոչ կամէին լսել։ Վասն որոյ զցասումն և զոխսն զոր ընդ Քրիստունելով ոչ կարացին լնուլ, հատուցին Յստեփաննոս։ «Եւ հանեալ արտաքոյ քաղաքին քարկոծեցին»։ Դարձեալ արտաքոյ քաղաքին, որպէս զՔրիստ արտաքոյ այգւոյն. զի ձեռքն որ կապեցին ըղտէրն, զիարդ խորչէին 'ի ծառայէն։ Եւ էր տեսանել զի տեղային 'ի վերայ նորա քարինքն որպէս տարափս անձրևաց. զորոց ընդունէր երանելին զզարկուածսն ուրախութիւն յանձակիր մարմին իւր որպէս զծաղիկս անուշահոտս գարնայնոյ և իբրև զցօղ հեշտալի ամարայնոյ։ Եւ 'ի սաստիկ հարուածոց քարանցն խոցոտեալ սուրբ մարմնոյն հեղոյր արիւն արդարոյն փոխան արեանն Քրիստ. և մանրեալ ոսկերացն ջախջախիւր և գլուխն սուրբ վասն ՅԾեղէն գլխոյն Քրիստ խոնարհելոյ 'ի վերայ խաչին։

«Եւ վկայքն, զզարարիչքն որպէս Նաբովթայ արդարոյ, զնեին զձորձս իւրեանց առ ոտս երիտասարդի միոջ՝ որ կոչէր Սաւուղ»։ Տես թէ զիարդ ստուգիւ պատմէ զիրսն Պաւղոսի 'ի սկզբանն. զի ցուցցէ քեզ մեծ յետ այնորիկ զՅԾայինն առնա ներգործուի. զի

առ. Ժամայն վասն այնքան նշանացն ոչ միայն ինքն ոչ հաւատաց, այլ և 'ի ձեռս սպանողացն ընկէց իսկ զնա։

ԵՓՐ. ԼՒ զի փոքր թուեցաւ յաչս նորա ընկենուլ 'ի նա քար, եղև նա կարասապահ ' սպանողաց նորա, զի ընդ ամենեցունց մասն բաժանեսցի։ «Եւ քարկոծ առնէին զՍտեփաննոս»։ Ոչ վայրապար կրկնէ զքարկոծ առնելն, այլ զի ցուցցէ թէ սուտ վկայքն նախ բոլկսան քարկոծելզտէրն, զի կարծիս տացեն իբրև թէ զհրամանս օրինացն պահիցեն՝ թէ ձեռք վկայիցն նախ ընկեսցեն զքարինս 'ի հայհոյին։ Զայսպիսի կարծիս խորամանկելով նոցա հաստատել սուտ վկայիւքն 'ի վերայ սրբոյն, «Քարկոծ առնէին զՍտեփաննոս, որ կարդայր և ասէր. տէր Յն, ընկալ զոգի իմ»։

ՈՍԿ. Յուցանէր այսու՝ թէ ոչ լինէր կորուսեալ, այլ և յորդորէր զնոսա թէ պարտ է հաւատալ 'ի Քն, զի նա է տէր կենդանեաց և մեռելոց։ Եւ ոչ այսչափ միայն հոգայր զիրկութեն սպանչացն, այլ և մեծապէս ևս. զի «Եդ ծունր և աղաղակեաց 'ի ձայն բարձր. տէր, մի համարիր սոցա զայս մեղս»։ Ո՛վ մեծի սիրոյն և գթութեն զոր ունէր առ նոսա, և ո՛րպէս պատասխանի տալով զայս յայտնէր՝ թէ յաւաջագոյն ասացեալքն ոչ էին ցասմամբ. և այնպէս կամէր զնոսա առ ինքն դարձուցանել և 'ի բաց թողուլ զբարկութենն, և գոնէ յետ սպանմանն զնա ողջանալ յախտէն։ Եւ զի դիւրընկալ առնիցէ զխրատն, ոչ պարզաբար աղօթէր, այլ մեծաւ զգուշութեամբ ծունր կըրկնէր և զայն ինչ ասէր զոր ուսաւ 'ի տեառնէ իւրմէ՝ զոր ասաց 'ի ժամ խաչին. «Մի համարիր սոցա զայս մեղս»։

«ԼՒ զայս իբրև ասաց, ննջեաց»։ Տեսանէս, զի ածահաձոյ էր մահ նորա. զի մինչև ցայն վայր թողացոյց լինել ոգւոյն 'ի նմա, մինչև աղօթիւք փոխադրեաց զսպանողն։ «Եւ Սօղոս էր կամակից սպանման նորա»։ Զի դահիճ խիստ և դժնդակ էր նա 'ի տղայութենն, յանդուգն և դայլ յափշտակող. այլ 'ի լինելն աղօթիւք սրբոյն այր և ծեր հաւատովք՝ մի անգամ քարկոծ լինելով վճարէր զպարտս քարանցն, որովք հաղորդ եղև սպանողաց նորա։

1 Միւսն ֆորոգան. Թերևս ֆորոգան։

« Եւ եղև յաւուրն յայնմիկ հալածումն մեծ 'ի վերայ եկեղեցւոյն յԵրուսաղէմ » ։ Քանզի կատաղիք գոլով ոչ չատացան սպանմամբ Ստեփաննոսի , այլ մեծամեծս իմն փքացեալք իբրև զյաղթողս ձեռնարկեն լրբութիւն զբոլոր հաւատացեալսն խափանել հալածելով։

ԵՓՐ. Եւ նման է թէ յայնմ աւուր առին զինչս նոցա յաւարի, զորս գովէ Առաքեալն՝ թէ « Զյափշտակութիւն ընդեց ձերոց ընկալայք ուրախութեամբ » ։ « Եւ ամենեքեան ցրուեցան 'ի գեօղս Հրէաստանի և 'ի Սամարիա բաց յառաքելոցն » ։ Յայտ է զի յերեսաց հալածչացն բացագունացք լինէին ։

ՈՍԿ. Լ. Այլ տես թէ զիարդ փախուստանոցա անօրինեալ լինեալք յայլոց փրկութեան. զի մի այնու հետև ամենեքեան յԵրուսաղէմ նստցին միայն , այլ 'ի հեռաւորս տարածեսցի բանն ։ Վասն որոյ և առանց խղձի ինչ համարձակ խառնին ընդ սամարացիսն այնոքիկ՝ որք երբեմն լուան 'ի Քրիստոսէ խորհել 'ի հեթանոսաց ։ Իսկ առաքեալքն զի և այսպէս առ իւրեանս կամէին ձգել զՀրեայսն , ոչ 'ի բաց թողուին զքաղաքն, այլ և յայլոց քաղաքաց տային պատճառս վստահութեաբորոշել զանն կենաց ։ Այլ հայեաց թէ որպէս դարձեալ թոյլ տայր ՀԾ լինելոյ փոքրութեան. և 'ի միտ առ թէ որպէս զիրսն անօրինէ անդուստ 'ի վերուստ ։ Աբանչելիք և պայծառք եղեն 'ի ձեռն նշանացն. ապա 'ի տանջանս մտեալ այլ ինչ ոչ կրեցին ։ Կացուցին պաշտպանս տեսչութեան այրեացն ։ ԱՀեաց բանն հաւատոց ։ Դարձեալ նեարկ զի լինիցի արգել մեծ և հալածումն ոչ զինչ և իցէ, այլ սաստիկ, զի ամենեքեան երկուցեալք եղեն. որով ցուցանին մարդիկ գոլ երկուցեալքն և փախուցեալք. զի մի յետ այնորիկ ասիցես ինորհօք միայն առնել նոցա զուղղութիւն. զի ահա հալածեալք և զանգիտեալք եղեն , և հալածիչքն յանդգնունք ։

« Եւ բարձին զՍտեփաննոս արք երկիւղածք , և արարին կոծ մեծ 'ի վերայ նորա » ։ Ոչ՞ արդեօք էին սոքա ։ Օրինաւորայն Գամաղիէլ , և եղբօրորդին իւր Նիկոդիմոս , որ և թաղման տեսուն սպասաւորեաց ։ Եւ զի երկիւղածք էին ընդեր առնէին զկոծն , զի ոչ

աշխարհի՝ այլ խնդալի է այրն։ Զի չև ևս կատարեալք գոլով տակաւին զՀրէական սովորութիւնքն գայրն. նա և այս իսկ ցուցանէր զնոսա մարդիկ գոլ, ոչ միայն երկիւղն՝ այլ և տրտմութիւնն և կոծն։ Բայց և ո՞ւք թերևս ոչ լայր տեսանելով զՀանդարտ և զրքանելագործ վկայն որպէս զգառն անմեղ քարկոծեալ և եղեալ մեռեալ։ Ա՛յլ բաւական գերեզմանական խօսեցաւ աւետարանին, զձայնն զոր նա ասաց 'ի ժամ քարկոծմանն. «Տէր, մի հանարիր սոցա զայս մեղս»։ և թէ, «Արարին կոծ մեծ 'ի վերայ նորա»։

ԵԹԷ. «Բայց Սողոս մինասակար էր եկեղեցւոյն. 'ի տունս տունս մտանէր, քարշէր զարս և զկանայս՝ մատնէր 'ի բանտ»։ Քանզի յայսմ հալածանս, որ եղև ցրուել և վանել աշակերտացն Յերուսաղէմէ, թուեցաւ քահանայիցն, դատաւորացն և Սաւուղի՝ թէ ահա խափանեցաւ աւետարանութիւն անդէն 'ի սկզբանն. և վասն այսորիկ շրջէր Սաւուղ տանէ 'ի տուն քննել և տեսանել, թերևս գտցէ զոք տակաւին։

ՈՍԿ. Լաւ տես զի բազում և անչափ էր մոլորութիւն նորա, զի և միայն գոլով մտանէր 'ի տունս. զի զանձն իսկ եղեալ էր վասն օրինացն։ «Քարշէր, ասէ, զարս և զկանայս»։ Տես զհամարձակութիւնն և զամբարտաւանն մոլորութիւն, զի զանկեալսն 'ի բուռն բազում խոշտանգանօք չարչարէր. զի 'ի սպանմանէն Ստեփանոսի յանգգնագոյն եղև։ «Եւ սփռեալքն շրջէին աւետարանէին զբանն»։ Արդ այժմ քանզի յոյժ եղև հալածումն քան զառաջինն, զի այժմ թէպէտ ըմբռնեալ եղեն, այլ ազատեաց զնոսա նշանքն, բայց մահն Ստեփաննոսի ոչ շինջոյց զցասումն նոցա, այլ ջերմացոյց։ Զի ահա եկեղեցին՝ որ նախ քան զմահ նորա աւելի քան զութ հազար մարդ էր 'ի նմա, երկոտասան այր միայն մնացին անդ։ Ա՛յլ թէպէտ հալածիչքն ցրուելով եկեղեցւոյն կարծէին թէ ամենևին բնաջինջ սպառի ուսումն Ճշմարտութիւն, այն իսկ ցրուեաց ըզվարդապետսն որ Յերուսաղէմ խափանեալ կային. զի հանին տարածեցին հալածիչքն զնոսա ընդ գաւառսն, զի աշակերտութիւն բազմասցի ընդ ամենայն աշխարհս. որ և էր այն ուրախութիւն մեծ առ նոսա։ Տեսանես որչափ իրս մնօրինեն 'ի ձեռն մահուանն Ստեփաննոս-

սի. զի թէպէտ մեծ եղև սուգն յառաջագոյն, այլ 'ի բաց ջնջեցաւ դարձեալ ուրախութիւն. զի բացաւ դուռն հաւատոց ամենեցուն։ « Իսկ Փիլիպպոս ի՛ջեալ 'ի քաղաքն սամարացւոց՝ քարոզէր նոցա զՔրիստոս »։ Ինձ թուի սա յեօթանցն գալ, որ էր ընդ Ստեփաննոսի։ Եւ տես զի ոչ ինքեան յառաջելով եղև գալ 'ի Սամարիա, այլ հալածեալ 'ի Հրէիցն լինելով, որպէսզի յաւուրսն Քրիստի եղև։ Ա՛յլ դու ինձ ընդ այն զարմացիր, զի և 'ի ժամանակի վշտացն ոչ պղերգանան 'ի քարոզելոյն, այլ փութացեալ լինին։

ԵՓՐԱՅԻՄ էջանդը Փիլիպպոս, և 'ի զօրութի՛ն նշանաց իւրոց ելից զաշխարհն շամարտացւոց յաշակերտութիւն անտի իւրմէ այնքան, զի և Շմաւոն մոգն՝ այն որ կախարդանօքն իւրովք զարմացուցանէր զշամարտացիսն՝ յանձին կալաւ իջանել ընդ շամարտացիսն 'ի մկրտութի՛ն աւազանին, զոր և ըստ կարգի պատմէ աւետարանիչս։

ՈՍԿ. « Ունկն դնէին, ասէ, ժողովուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան »։ Տես աստանօր 'ի սկզբանս ըզդիւրահաւան և զիմաստասէր բարս հեթանոսաց։ Եւ այս իսկ է սքանչելի. զի ոչ ոմանք յատուկ, այլ միաբան ունկն դնէին։ Վկայի վասն նոցա և յաւետարանի անդ հաւատալ բազմաց 'ի Քրիստոս վասն բանի նորա։ « Եւ 'ի լսել նոցա և 'ի տեսանել զնշանսն զորս առնէր »։ Զի զկնի քարոզելոյն բանիւ, սքանչելի՛ն նշանօք և բարեգործական բժշկութի՛ւքն հաստատէր 'ի հաւատս զլսողս բանին։ « Քանզի բազումք որ ունէին այսս պիղծս, գոչէին ձայնիւ մեծաւ և ելանէին »։ Զի աղաղակաւ ելանելն էր յայտնի նշան, որ ցուցանէր զմեծ զօրութի՛ն հնարհայցն այ՛ 'ի ձեռն Փիլիպպոսի. զի ոչ որպէս կախարդքն Եգիպտոսի առնէին առաւօտ, կամ որպէս և ինքն իսկ Սիմոն որ կարծիս իմն տայր մոգութի՛ն թէ բժշկիցէ. զի նա թերևս կապէր զգեանս մոլեգնելոյն մնալ 'ի նոսին, որ ոչ աղաղակէին և ոչ ելանէին։ Եւ յայտ անտի է, զի բազումք էին, ասէ, դիւահարք անդանօր։ « Եւ բազումք անդամալոյծք և կաղք որք բժշկէին, ասէ, զօրութի՛ն այ՛ 'ի ձեռն Փիլիպպոսի »։ Եւ աստանօր խաբէութի՛ն ոչ էր, զի գնալ կաղացն և գործել անդա-

մալուծիցն 'ի բաց բառնայր զայնպիսի կարծիս. որոց և Հշմարիտ բժշկութիւնն եղև ուրախութիւն մեծ 'ի քաղաքին։

«Լ.յր ոմն Սիմոն անուն յառաջագոյն էր 'ի քաղաքին, և մոգելովն ապշեցուցանէր զազգն սամարացւոց, և ասէր զանձնէ թէ իցէ մեծ ոմն»։ Ահա և այլ ինչ փոքձութիւն՝ անդէն սկսեալ կախարդութիւնն Սիմոնի։ Եւ տես թէ որպէս առ Մովսէսիւ բաղդատութեամբ և իբրև հակընդդէմ միմեանց լինէին սքանչելագործութիւնքն, նոքսպէս և աստ յայտնի նըշանք յառաքելոցն և զանազան բժշկութիւնք Հշմարտապէս եղեալք, և առ աչօք խաբէութիւն ընդդէմ նոցունց կերպարանօք կախարդութիւնք մոգեալ։ Եւ զի մանաւանդ ոչ և միայ դիւահարի պարտ էր լինել անդ, եթէ մոգութիւնքն Սիմոնի՝ որ 'ի կարծիս բժշկութիւն լինէին՝ չէին սուտ։

«Յոր հայէին, ասէ, ամենեքեան 'ի փոքրկանց մինչև ցմեծամեծս վասն բազում ժամանակօք ապշեցուցանելոյն զնոսա. և ասէին, սա է զօրութիւն այ, որ կոչի մեծ»։ Զայս ասելով զմոգական չարարուեստութիւն նորա կամի նշանակել, և զկոչմունս առ 'ի նոցունց հմբաւելոյն բարեգործաց դիւաց ոմանց, որք 'ի յուութիւն պիղծ կախարդացն կցորդեալ բարեգործել ձևանային՝ սուտ երևութիւք խաբելով զպարզամիտսն. մինչ զի ասել «Սա է զօրութիւն այ, որ կոչի մեծ»։ Եւ լցեալ լինէր ասացեալն 'ի Քեզ՝ եթէ «Եկեսցեն սուտ քրիստոսք և տացեն նշանս մեծամեծս և զբաղումս մոլորեցուսցեն»։

Իսկ Փիլիպպոս միայն բանիւ զնոսա յանուն Ցոյ բժշկէր և հաւանեցուցանէր. ըստ որում ասէ. «Բայց յորժամ հաւատացին Փիլիպպոսի, որ աւետարանէր վասն արքայութեան այ և անուանն Ցոյ Քրիստոսի, մկրտեին ամենեքեան արք և կանայք»։ Թուի ինձ աւետարանէրն ասելովք հաստատել զոր վերագոյն ասացի՝ բանիւ միայն զնոսա բժշկել և ոչ ձեռս դնելով. զի առ ժամայն լուծցէ զկարծս այնպիսի ինչ մոգական արուեստից և բժժանաց։ Ընդ որս և առաւել սքանչացեալք 'ի բանիւ միայն եղեալ սքանչելեացն մկրտէին ամենեքեան։ Այլ թէ ասիցէ որ՝ թէ և յետ

այնորիկ ընդէր առանց կասկածի ձեռս դնելով տային զՀոգին նոցուն։ իսկ սամարացւոյն զորս և 'ի կարծեաց իսկ մոգութեանէ ազատել կամէին, ասեմ՝ թէ վասն զի յայնժամ մկրտեալք և հաստատեալք էին 'ի հաւատսն. և այլ ազգ. զի զՀոգին նշանաց առեալք ինքեանք իսկ սքանչելագործելով յայտիսի կարծիս ոչ գային։

«Այլ և ինքն իսկ Սիմոն հաւատաց, և մկրտեալ կանխէր առ Փիլիպպոս»։ Մկրտէր Սիմոն ոչ վասն հաւատոց, այլ զկերծաւորութիւն թաքուցանելով։ Ապա ընդէր ասէ՝ թէ հաւատաց։ Զվերին կերպարանսն ասէ, զի իբրև զհաւատացեալ մատեաւ. որպէս և վասն վհկին ասէ գիր՝ թէ Եհան զՍամուել. զոր ոչ Եհան, այլ զդև զոմն 'ի կերպարանս նորա։ Եւ ընդէր ապա մկրտէր զնա Փիլիպպոս. որպէս և զՅուդա յայնժամ ընտրեաց Քս. և զի մի դարձեալ հալածիցի որպէս երբեմն 'ի Քեզ, զի կասկածէր, ժուժկալեալ կանխէր առ Փիլիպպոս դեգերելով առ նմա։ «Եւ տեսեալ զմեծամեծ նշանսն զոր առնէր, զարմանայր»։ Այսպիսի ինչ և վասն կախարդացն ասի, որք յաղթահարեալք ասէին՝ թէ մատըն այ է այս։ Այլ ոչ համարձակէր առաժամայն հայցել զայն ինչ զոր հայցեաց յետոյ. զի և ոչ այլքն դեռ ևս ընկալեալ էին շնորհս նշանաց։

«Իսկ իբրև լուան որ յԵրուսաղէմ առաքեալքն էին՝ թէ և 'ի Սամարիա ընկալան զբանն այ, առաքեցին առ նոսա զՊետրոս և զՅովհաննէս. որք իջեալ կացին յաղօթս 'ի վերայ նոցա, որպէս զի առցեն Հոգի սուրբ։ Որպէս զի յայնժամ չև ևս էր և ոչ 'ի վերայ միոյ ուրուք 'ի նոցանէ հասեալ, այլ միայն մկրտեալք էին յանուն տեառն»։ Արդ զի 'ի ձեռն Փիլիպպոսի ընկալան նոքա զբանն այ և մկրտեցան, ահա յայտ է. և զի նշանք մեծամեծք եղեն 'ի ձեռն նորա, ապա զիարդ ոչ էին ընկալեալ Հոգի սուրբ։

ՈՍԿ. Այս ընկալեալ էին Հոգի սուրբ, այլ զմեղացն թողութեի և ոչ զնշանացն զորութեի։ Զի Փիլիպպոս թէպէտ և զորութիս առնէր և զվիրաւորեալսն Հոգւովն 'ի քաւութեի մեզաց մկրտէր, այլ զՀոգին՝ առնել զորութեի՝ չիչիներ տալ կամ վասն պատուելոյ

զառաքեալսն, կամ վասն ոչ ունելոյ այնպիսի շնորհս, կամ զի յԵօթանցն էր, զոր և մանաւանդ Թուի ինձ ասել. իսկ ներբինւոյն Փիլիպպոսն՝ յառաքելոցն։ Եւ տես զի առաքեալքն ոչ եղեն նախ ելեալ յԵրուսաղէմ, այլ այսպէս անօրինեցաւ, զի նախ սոքա ելցեն 'ի քարոզել 'ի մկրտել 'ի բժշկել. և առաքեալքն յետոյ եկեսցեն վասն տուչութեան Հոգւոյն սրբոյ՝ որ կատարումն էր պարգևացն։ Զի նոքա եօթանքն նըշանս առնելոյ զօրութեան ընկալան, բայց ոչ և այլոց զնոյն Հոգի պարգևել. քանզի այս իսկ էր առաքելոցն վերագոյն առաւելութիւն։

ԵԿԻ. Այլ վասն այսորիկ առաքեցին զՊետրոս և զՅովհաննէս, զի ձեռնադրութեամբ նոցա ընկալցին շամարտացիքն զՀոգին նշանաց՝ և զարմացուսցեն ըզմանկունս Երուսաղէմի գործովք Հոգւոյն զոր ինչ առնէին շամարտացիքն։ «Յայնժամ եդին ձեռս 'ի վերայ նոցա, և առնուին զՀոգին սուրբ»։ Յայտ է զի աղօթս առնելով օրպէս ասայ՝ զնէին զձեռս։ Զի ոչ պարզ՝ տուեալ լինէր Հոգին սուրբ կամ կարէին տալ, այլ բազում խնդրուածոց պէտք էին. զի ոչ է հաւասար հանգիպելն բժշկութեամբ և առնուլն զօրութիւն բժշկութեամբ։

«Տեսեալ Սիմոնի զի ձեռս դնելով առաքելոցն տուեալ լինէր Հոգի սուրբ, մատոյց նոցա ինչս և ասէ. տուք և ինձ զիշխանութիւդ զայդ, զի յոյր վերայ դնիցեմ զձեռս, առցէ Հոգի սուրբ»։ Տեսեալ, ասէ, Սիմոնի։ Այլ թերևս ոչ տեսանէր եթէ ոչ նշանք ինչ յայտնիք լեալ լինէին 'ի շամարտացւոցն։ Այլ տես զի եղեն նոքա արժանի յանկարծակի առնելըզօրութիւս և նշանս 'ի ձեռն Հոգւոյն զոր ընկալան ձեռնադրութեանն պետրոսեանց. բայց ինքն ոչ գտաւ արժանի, այլ յանդիմանեցաւ 'ի նմանէ, որպէս այնք 'ի Պաւղոսէ որք 'ի լեզուս խօսելոյ հպարտացեալք էին՝ կշտամբեցան փոքու ժամանեալքն ընդ հի. և էն խժգժագոյնք առանց թարգմանելոյ։ Այսպէս և Սիմոն որոյ պարտ էր հաւատով մատչել և հայցել զի ընդ այլն և ինքն առցէ Հոգի սուրբ, այլ ոչ ինչ

1 Մեռ ընդ։ 2 Մեռ գոյ։

փոյթ էր նմա վասն այնորիկ. այլ ինդրէր զի զՀոգին զօրութեամբ այլոց բաշխեսցէ։ Եւ վասն զի այլքն ոչ էին առեալ զի և այլոց տացեն, այլ ոչ կամէր նա ի թիւ և ի հմար այլոցն անկանել կամ ընդ բազումսն միաբանել, այլ մանաւանդ և քան զՓիլիպպոս կամէր լինել պայծառագոյն. զորոյ տեսանելով զնշանսն զոր առնէր, կարծէր զիրսն արուեստ գոլ. այլ իբրև եւ տես զմեծագոյն իշխանութիւնն յառաքեալսն, հիացեալ ասէն առ նոսա։ Մատոյց առաջի նոցա արծաթ։ Ընդէր. միթէ զշամարտացիսն ետես զայն ինչ արարեալ, կամ զՓիլիպպոս առնելով այնպիսի ինչ. և ոչ երբէք. և միթէ կարծէր ոչ գիտել նոցա թէ որպիսի մտօք զարծաթն մատուցանէր, կամ թէ ոչ իմանայր թէ նոքա որպիսի միտս ունէին. մանաւանդ զի ոչ ետես զնոսա ընչիւք տուեալ ուսմբ զՀոգին։

Այլ տես զպղծութիւն կախարդութիւնն նորա. զի ոչ էր իրքն անգիտութիւն, այլ փորձողն և կամեցողն զնոսա ընդ չարութիւնն արկանել։ Վասն որոյ ասէ ցնա Պետրոս. «Արծաթ քո ընդ քեզ լեցի՝ ի կորուստս». զի ոչ որպէս պատշաճէ վարիս դովաւ։ Ոչ են բանքս անիծանողի. այլ կամ խրատողի՝ իբրու ասել՝ ի բաց կորուսցիր զայդպիսի չար կամսդ հանդերձ արծաթովդ, կամ մարդարէութիւն զհանդերձելոցն նմա գուշակողն, զի երկիցէ։ «Զի զպարգևսն այ համարեցար, ասէ, ընչիւք ստանալ», փոքր խորհելով այդպէս յաղագս ձրիցն այ։ Տես զնոսա յամենայնի մաքուրս լրնչից. զի և մեք ուսցուք թէ չկարէ մք ընչիւք աշխարհի ըստանալ զպարգևսն այ։ Եւ բարիոք պարգև կոչէ, զի ոչ արծաթով բաշխի։ Եւ զի ինաւ իսկ, ասէ, ամն կալար մարդկային գոլ զիրս զայս՝ որ ոչ է այնպիսի, սմին վասն զքեզ հանդերձ որովք իբրև զքեզ արծաթով ընտրիլ բռնազբօսեն, խոստեալ՝ ի բաց վարէ Հոգին սուրբ ասելով. «Ոչ գոյ քեզ մասն և վիճակ՝ ի բանիդ յայդմիկ»։ Այլ տես, զի որ յաղագս մեծամեծացն փոքր խորհի, կրկին մեղանչէ՝ ի մեծամեծսն՝ և յածայինսն ամբարշտելով և զանձն ինքասելով որպէս Սիմոն մոգ. զի թէ պարզմտութիւն էր մատչելն նորա, թերևս ընդունէին գյօժարութիւն նորա։ Այլ զինչ. «Սիրտ քո, ասէ, ոչ է ուղիղ առաջի այ»։

Տեսանէս, զի 'ի չարութէ զամենայն ինչ գործէր, և մանաւանդ զի պարտ էր առ նոսա յսատակ և պարզամիտ գոլ. այլ զի կրկին էր չարն, երկու իրս հրամայէ նմա։

«Պաշաւեա դու, ասէ, 'ի չար խորհրդոցդ քոց յայդցանէ, և աղաչեա զտէր՝ Թերևս Թողութիւն լիցի քեզ 'ի մեղմէ խորհրդոց սրտի քո»։ Տես զի չարիս ինչ մտածէր. սմին վասն զոր ինչ 'ի մտածութեն նորա էր, զայն 'ի մէջ բերէ զոր նա զանխլանալ կարծէր։ Զի զնոյն և քա առնէր նմա յորժամ մատչէր առ նա յաշակերտութեն իբրև զմի 'ի դպրաց։ Եւ զի գիտէր զնա Պետրոս առանց ուղղութեն, ասէ՝ Թերևս Թողութեն լիցի քեզ 'ի նենգաւոր խորհրդոց սրտիդ և 'ի դառն կապանաց արծաթասիրութեդ՝ յորում կապեալ կաղկանդեալ կաս դու։ «Թերևս, ասէ, Թողութեն լիցի քեզ»։ Զայս ասաց ոչ թէ զի ոչ լինէր նմա Թողութեն՝ թէ ապաշխարէր արտասուօք, այլ զի երկիւղ արկցէ նմա. որպէս Դանիէլ ասէր ցՆաբուգոդոնոսոր. «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսջիր, Թերևս երկայնամիտ լիցի 'ի վերայ յանցանաց քոց ոճ»։ Քանզի է այս իսկ սովորութեն մարգարէիցն, իբրև թէ հրաժարել և լքանել ինն և ասել հաւատի, թէ զայս ինչ արասցես՝ Թողութեն լիցի քեզ։ Եւ զայս առնեն է երբէք՝ զի առ անհաւատն, զի մի առանց պատճառի թուիցի պատուհասն որ առ նոսա լիցի. որպէս այն՝ թէ զի մի դարձցին և Թողցի նոցա։ Եւ է դարձեալ իբրև յահ ընկնելով, զի երկուցեալն ինքնին խնդրեսցէ հնարս փրկութեան. որպէս այն՝ թէ երբեք աւուրքն և Նինուէ կործանեսցի։ Նոյնպէս և սմա արկանէ երկիւղ։

«Զանգի 'ի դառնութեն մաղձի և 'ի կնճռեն անիրաւութեն, ասէ, տեսանեմ զքեզ»։ Բազում ցաստամբ լի է յանդիմանութիւս. զաղգի ազգի և զպէս պէս կախարդութիւս չարեացն՝ յորոց միջի վարակեալ կայր, այսու ապացուցիւք խայտառակելով։ Ապա այսպիսի դժնդակ գոլով նորա ընդէր ոչ սպան զնա որպէս զԱնանիա և զՍափիրա։ Ասեմ, զի որպէս 'ի հնումն որ զփայտն քաղէր՝ սպանաւ առ յայլոցն ողջախոհութեն և այլ ոչ ևս օր կրեաց զնոյն, նմանապէս

և այժմ։ Եւ այլ ազգ. ոչ սպան կամ տանջեաց զնա, զի մի հաւատն 'ի հարկէ լինիցի. այլ խստագոյնս յանդիմանեաց, զի մի իրքն փոքր կամ առանց խղճի զոլ թուիցի։ Դարձեալ զի տեղի կամէր տալնմա ապաշխարելոյ. և ահա շատ բաւական է առ 'ի խրատ ուղղութեան յանդիմանելն և ասել զոր ինչ 'ի սիրտն մտեալ չար խորհուրդք իցեն։

Մեծ էր և խոստովանելն ինքնին թէ ընդ պատժովք ըմբռնեալ եղև. և մեղադիր լինելն անձին իւրում. քանզի ասաց մեղն. «Աղաչեցէք զուք վասն իմ զտեր, զի մի ինչ եկեսցէ 'ի վերայ իմ յորոց գուրգ ասացէք»։ Այս բանք խոստովանողն են զսխալանսն. և զայս առ 'ի մաքրութիւն իւր ասէր իբր թէ զղջացեալ. այլ պարտ էր 'ի խորոց սրտէ լալ և ողբալ, թերևս քաւեսցի։ Բայց տես զնա պիղծ գոլով ամենայնիւ հանդերձ մեղութեան, և 'ի տուռունս չարեաց կապեալ անլոյծ հանգուցիւք։ Զի յորժամ յանդիմանեցաւ, հաւատաց. և յորժամ դարձեալ յանդիմանեցաւ, խմարհեցաւ՝ կարծելով հնար զոլ զանխլանալ։ Այլ զարհուրեալ 'ի բազմութենէն երկեաւ ուրանալ զյայտնեալ չարիսն իւր. և այն զի կարէր ասել թէ ոչ գիտեի, այլ պարզմտութիւն արարի. այլ զարհուրեր, զի յառաջագոյն նշանաւքն ըմբռնեալ եղև. և դարձեալ զի զչար խորհուրդս նորա յայտնապէս ձաղեաց։ Վասն այնորիկ ընդ երկար գնայր փախստական 'ի Հռոմ, կարծելով ոչ հասանել անդր առաքելոցն։

«Եւ նոցա եդեալ վկայութիւն խօսեցան զբանն այ և դարձան յԵրուսաղէմ»։ Վկայութիւն եդին վասն նորա. թերևս զի մի դարձեալ պատրեալք խաբեութիւն նորա լիցին, այլ զգուշանալ 'ի նմանէ և կալ հաստատուն յաւանդեալ վարդապետութենն այ զոր աւետարանեցին։ Այլ ընդէր արդեօք դարձան յԵրուսաղէմ։ Այսչափս. անդ գնային՝ ուր բռնութիւն չարեացն էր, ուր մանաւանդ էին սպանողքն. որպէս 'ի պատերազմունս զօրավարքն առնեն, զբռնամարտիկ տեղի ինչ և դժուարակռիւ հմտագունից քաջամարտ կացն՝ տալով։ Եւ 'ի բազում գեօղս սամարացւոցն

1 Միւսն ֆաշմարդան։

աւետարանէին »։ Տես զի և Հանապարհք նոցա ոչ էին դատարկ, այլ մանաւանդ գործովք զբաղումն փրկելով. և ոչ ինչ վայրապար երբէք առնէին։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Օ՛ի և մեք ուսցուք մի՛ 'ի մնոտիս ծախել զփոքր ժամանակս։ Զի բազումք որ ունին գեօղս և ագարակս, հնարին թէ ո՛րպէս բազանիս կամ գինեվաճառս շինեսցեն և զշահսն բազմացուսցեն, կամ շիրիմս և ապարանս կանգնեսցեն։ Այլ թէ ո՛րպէս զհոգիս իւրեանցայոցն շահեսցին՝ ոչ է փոյթ, կամ զի եկեղեցի շինեսցեն 'ի փառս ՅՀ և 'ի զգուշութիւն երկրագործ մշակացն որ յագարակսն։ Վասն որոյ փութալ խրատ տամ ստացուածաւորացն յագարակս իւրեանց եկեղեցիս շինել և քահանայ կարգել. զի աղօթիւք և գոհութիւ՝ պարսպեսցին վայրքն և արարք և արմտիքն, և յիշատակ բարեացն կանգնողին յերկարաձգեսցին մինչև 'ի գալուստն տեառն։ Եւ մեծ է մասն վարձուց նորա, զի զթագաւորն երկնից 'ի ձեռն եկեղեցւոյն 'ի տուն իւր ընդունի։

ՃԱՌԻ ԻՆՆԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

«ԻՐԵՏՅԱԿ տեառն խօսեցաւ առ Փիլիպպոս և ասէ. արի և գնա դու ընդ կողմն հարաւոյ ընդ Ճանապարհն որ իջանէ յԵրուսաղէմէ 'ի Գազա, զի այս է անապատ. և յարեաւ և գնաց»։ Ինձ թուի յառաքելոյն և ոչ յեօթանց գոլ զսա. քանզի յԵրուսաղէմէ 'ի հարաւ գնացեալ լինի, այլ ոչ 'ի հիւսիս։ Իսկ 'ի Սամարիոյ'ի Գազա ոչ ընդ հարաւ պարտ էր գնալ. զի այս է, ասէ, անապատ. զի մի երկնչիցի 'ի Հրէիցն բռնուէ։ Եւ նա ոչ եհարց թէ վասն էր. այլ յարեաւ և գնաց։ «Եւ ահաւասիկ այր մի եթովպացի ներքինի, հզօր՝ կանդակայ տիկնոջ եթովպացւոց»։ Քանզի անդամնօր'ի հնուէն կանայք թագաւորէին. և այս իսկ առ նոսա օրէն էր։ Եւ ներքինին, որ էր 'ի վերայ ամենայն գանձուց նորա, եկեալ էր երկիր պագանել յԵրուսաղէմ։ Մեծ էր գովութիւն սորա. զի եթովպայի գոլով և 'ի կռամոլ քաղաքի բնակելով և յոյժ 'ի մեծութիւն գոլով եկեալ լինէր 'ի տօնն երկիր պագանել յԵրուսաղէմ։

ԵՓՐ. Այլ նման է՝ թէ վասն այնորիկ եկն, զի ընկալաւ նա կարգաւ 'ի տուչութիւն դշխոյին հարաւոյ՝ որ եկն երկիր պագանել 'ի տաճարին յաւուրս Սողոմոնի։

ՈՍԿ. «Այս էր անդրէն դարձեալ, և նստեալ 'ի կառս իւր ընթեռնոյր զմարգարէն զեսայի»։ Բարւոք այր հզօր ասաց զսա՝ զքաջութիւն անձինն նշանակեալ. զի ահա յեթովպիա գնալով, և այնչափ Ճանապարհի հոգաւք և իրաւք պաշարեալ, այնչափ փութոյ պընդութեամբ նստեալ 'ի կառս իւր ընթեռնոյր զմարգարէն։

ԿԻՒՐ. «Այսչ Հոգին ցՓիլիպպոս. մատիր և յարեաց 'ի կառսդ»։ Եւ որպէս ասէր Հոգին. մատծութիւն թերևս 'ի նմա արկանելով, և 'ի միտս նորա խօ-

սի։ Ոչ լեզուաւ և բանիւք որպէս առ մեզ կատարի, այլ զհանդերձելոյն գիտութիւն զօրէն լուսոյ 'ի միտս և 'ի սիրտս պայծառացուցեալ, որպէս ինքն միայն գիտէ և նոքա ընդ որս խօսէր։ «Մատիր, ասէ, և յարեաց 'ի կառաւդ»։ Եւ ընդէր ոչ ներքինւոյն երևեր հրեշտակն և ածէր զնա առ Փիլիպպոս, այլ զսա առ նա ածէր։ Զի Թերևս ոչ հաւանէր այրն անծանօթ գոլով. այլ և զարհուրէր և։ Սմին վասն և յԵրուսաղէմ ոչ յայտնեցաւ կամ ետես զնա Փիլիպպոս, զի չէր օգուտ նմա տեսանել զառաքեալսն հալածեալս վասն տակաւին տկարամիտ գոլոյն։

«Լաւ ընթացեալ Փիլիպպոսի լսէր՝ զի ընթեռնոյր զԵսայի մարգարէ»։ Ընթանալովն ցուցանէր Թէ ասել ինչ կամիցի։ «Եւ ասէ. գիտիցես արդեօք զոր ընթեռնուցուսդ»։ Տես զմեծանձնութիւն նորա. ոչ նախատեաց զնա և ոչ ասաց Թէ տգէտ ես և ես ուսուցից զքեզ. և ոչ զինքեւնէ ասաց Թէ զայդոսիկ ես ստուգապէս գիտեմ։ Եւ դարձեալ ոչ մեծաբերելով և գովելով զնա ասաց՝ Թէ երանի է քեզ, զի ա՞ծայրն գիրս ընթեռնուս. այլ 'ի յանդգնութիւն և 'ի մարդահաճութիւն ազատեալ արար զբանն։ Զի և մանաւանդ տնօրինաբար և մարդասիրագոյն արար զայն. զի նմա որ ընթեռնոյրն՝ պարտ էր հայցել 'ի սմանէ և փափագել փրկութիւն իւրոյ 'ի ձեռս նորա։ Այլ սա միայն երևեցոյց զանձն իւր, և պատճառս տալով հոգաբարձօրէն ասաց ցնա. գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուսդ։ Եւ միանգամայն հարցանելովն ցուցանէ բազում գանձս [1] ներկայեալ 'ի բանն։

Լ. այլ բարւոք և ներքինին ոչ հաւանեցաւ 'ի ձեռն Փիլիպպոսի, և ոչ ասաց ցնա Թէ դու ո՞վ ես. ոչ պարտաւեաց զնա, և ոչ ինքն ամբարհաւաճեաց կամ ասաց գիտել զբանն. այլ ցածուցա՞ ասաց. «Հիմարդ կարիցեմ գիտել, Թէ ոչ ոք առաջնորդեսցէ ինձ»։ Տես զերկիւղածութիւնն, զի և ոչ գիտելովն ընթեռնու. ապա յետ ընթեռնելոյն և քննէ ևս. վասն որոյ և ուսաւ։ Հիմարդ կարիցեմ, ասէ։ Եցոյց զանգիտութիւն վերն բժշկիւն. իմացաւ Թէ գիտէ զայնսոսիկ և կամի ուսու-

[1] Միւսն գանձն էրիտրէաւ։

ցանել. Եթէս զնորա հեզութիւն և զանփքացութիւն, զի ոչ պայծառագոյն յանձին ունէր ձև. և այնպէս էր գրասէր [1] և բանիցն միտ դնէր. և զոր ասաց Քո՝ թէ որ խնդրէ առնու, առ սմա լցեալ կատարէր։

«ԼՍ աղաչեաց զՓիլիպպոս ելանել նստել ընդ նմա»։ Աչա թէ ասիցէ ոք, թէ Փիլիպպոսի պարտ էր ստիպել և յորդորել զնա, ասասցուք՝ թէ ոչ գիտէր զինչ պէտս ունէր ներքինին, և ամենևին թէ զինչ հանդերձեալ էր ասել ընդ նմա. այլ կարծէր պարզաբար զմարգարէութիւն ընդունել և ընթեռնուլ զնա։ Բայց մեծապէս պատուեաց զնա ներքինին. զի ոչ հրամայեաց նմա կամ ասաց լոկ, այլ աղաչեաց զնա ելանել նստել առ նմա։ «Եւ գլուխ գրոցն զոր ընթեռնոյր, էր այս. իբրև զոչխար 'ի սպանդ վարեցաւ, և իբրև զոչոչ առաջի կտրչի իւրոյ անմռունչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր. առ խոնարհութիւն նորա դատաստան նորա բարձաւ. և զազգատոհմն նորա ո՞պատմեսցէ, զի բառնան յերկրէ կեանք նորա»։ Եւ այս իսկ նորին խմաստասիրութեան էր, զմարգարէս զայս ունել 'ի ձեռին՝ որ բարձրագոյն էր քան զայլսն։

«Պատասխանի ետ ներքինին Փիլիպպոսի և ասէ ցնա. աղաչեմ զքեզ, վասն ո՞յր ասէ մարգարէն զայս. վասն իւր եթէ վասն այլոյ ուրուք»։ Հայեաց ընդ համեստութիւն նորա, զի ոչնախ բարբառեալ եղև առ Փիլիպպոս մինչև 'ի նմանէ հարցեալ եղև։ Աչալ և ոչ նա իսկոյն ձեռնարկեաց պատմել նմա մինչև ետես զյոժարութիւն նորա։ Զի նախ աղաչեաց նստել առ նմա, և այժմ աղաչէ ասելով վասն ո՞յր ասէ մարգարէն զայս՝ ամենևին ցուցանէ զինքն գիտել թէ այլ ազգ, և յաղագս այլոց ասէն մարգարէքն, և յաղագս անձանց իւրեանց յայլ դէմս խօսին։ Տես զի յոյժ խորհրդաբար հարցանէ զայս։ Աչդ ամաչեցուք և տնանկք և մեծատունք 'ի Աչմարտասէր բարուցն շտեմարանապետին։

«ԼՍեաց Փիլիպպոս զբերան իւր, և սկսեալ 'ի գրոցս յայսցանէ աւետարանեաց նմա զՔո»։ Ոչ պարզաբար և հարևանցի ինչ պատմեաց նմա, այլ հեզաբար և

[1] Միան գրէր։

բազում յօժարութիւն։ Եւ տես թէ որպէս անօրինեալ լինէր. նախ ընթեռնուլ և ոչ իմանալ. ապա և զայն ևս զկայութիւն՝ ուր էր չարչարանքն և յարութիւն և պարգևքն։

«Իբրև երթային զՀանապարհայն, եկին 'ի Ջուր ինչ. ասէ Ներքինին. ահաւասիկ Ջուր, զինչ արգելու զիս 'ի մկրտելոյ»։ Տես զնորա ստուգագոյն յօժարութիւն. զի դարձեալ հայցէ ասելով, ահա Ջուր՝ զինչ արգելու զիս 'ի մկրտելոյ։ Յամօթ լիցին հեղգացեալքքն 'ի մկրտութենէ։ Բայց տես դարձեալ զհեղութիւն նորա և զպատկառկոտութիւն. զի ոչ ասաց թէ մկրտեա զիս, բայց և ոչ լռեաց. այլ 'ի մէջ ցանկութենն և պատկառանացն բարբառի ասելով՝ ահա Ջուր, զինչ արգելու զիս։

«Ասէ ցնա Փիլիպպոս. եթէ հաւատաս բոլորովսրբութիւ քով, մարթ է. և նա ասէ. հաւատամ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ»։ Տեսանէս զի զաւանդութիւն հաւատոցն կատարեալ ունէր, և փութով խոստովան լինէր։ Քանզի մարգարէն Եսայի զամ ինչ ունէր յինքեան՝ զմարմնանալն Քրիստի և զչարչարելն, զյարութիւն, զհամբարձումն, զհանդերձեալ դատաստանն. և մի ըստ միոջէ ուսաւ 'ի գրոցս յայսցանէ։ Ուստի թէ բազում ցանկութիւն ցուցանէ, մի սքանչանար։

«Եւ հրամայեաց կացուցանել զկառն»։ Հանմանգամայն ասաց զբանն հաւատոյ, և հրամայեաց կացուցանել նախ քան թէ լսել ինչ։ «Եւ իջին երկոքին 'ի Ջուրն՝ Փիլիպպոս և Ներքինին, և մկրտեաց զնա. և իբրև եղ 'ի Ջրոյ անտի, Հոգին սուրբ եկն 'ի վերայ Ներքինւոյն»։ Վայելչապէս. զի ՈՒԾայրն ցուցեալ լիցի որ ինչ եղևն, զի մի կարծեսցէ թէ մարգկային իրք եղեն առ նմա 'ի ձեռն Փիլիպպոսի. այլ զի յայտ լիցի թէ յայ առաքեցաւ Փիլիպպոս 'ի փրկութիւն նորա. և Հոգւոյն էր գործն։

ԵՓՐ. Ա՝ ասն որոյ իբրև էլ նա յաւազանէ անտի մկրտութեան՝ բնակեցաւ անդէն 'ի վերայ նորա Հոգին զօրութեան գործոց. զի գործովք Հոգւոյն զոր 'ի Հնդիկս գործէր, հաւատարիմ լիցի խաչն ամայեցեալ զոր քարոզէր։ «Եւ հրեշտակ տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, և ոչ ևս ետես զնա Ներքինին»։ Իսկ 'ի հին

օրինակս մեկնութեանս՝ Հոգի տեառն յափշտակեաց, ասէ, զՓիլիպպոս։ Եւ բազում անգամ կրկնէ զՀոգին. ինձ թուի թէ զի յայտ առնել կամի՝ թէ յափշտակել հրեշտակին զՓիլիպպոս անտեսաբար եղև 'ի ներքինւոյն, զի մի թանձր կերպարանօք երեւեալ հրեշտակն, որպէս բազմաց մարդակերպ, կարծեսցէ ներքինին մարդ գոլ զնա։

ՈՍԿ. «Եւ էր վասն վաղվաղակի վերացոյց զնա Հոգին։ Զի որ ինչ եղև, սքանչելի ցուցցի. և վայելչապէս. ոչ առ կամ վերացոյց, այլ յափշտակեաց, ասէ. որ է յանկարծակի ինն. զի մի աղաւէսցէ զնա ներքինին ընդ նմա երթալ, և ոչ յանձն առնլով նմա՝ տրտմեսցի. քանզի չէր ժամ զՀետ նորա գնալոյ։ «Եւ գնայր զՃանապարհս իւր ուրախութիւն»։ Զի թէ կացեալ մնացեալ էր անդէն, 'ի հեղգութիւն լինէր ամբաստանեալ. այլ երթայր ուրախութիւն. յայտ է՝ զի թէ ոչ յառաջագէտ էր ամենայն բարութեան եղելոց առնա, թերեւս ոչ այնպէս հեշտացեալ ցնծայր. նա զի և ոչ ինչ արդելոյր զնա զամենայն ինչ ստուգագոյն ուսանել մինչդեռ 'ի կառն անդ էին։ Այլ և ցուցանէ թէ տրտմեալ լինէր, եթէ էր գիտացեալ զբաժանելն Փիլիպպոսի. այլ բազում խնդութիւն զգածեալ և Հոգւոյն արժանացեալ՝ զյափշտակելն Փիլիպպոսի ոչ տեսանէր յուրախութենէն։

«Բայց Փիլիպպոս գտաւ յԱզովտոս»։ Աստ ցուցանէ հեռի բացարձակութիւն Ճանապարհի գնացեալ նորա, մինչ զի յԱզովտոս, ասէ, գտեալ եղև. քանզի անդ եդ զնա Հոգին, ուր այնուհետեւ աւետարանել պարտ էր։ Այլ մեծամեծս այսու Փիլիպպոս շահեցաւ. քանզի զոր լուեալ էր վասն Ամբակումայ և Եղեկիելի, զնոյն առ ինքն ետես սքանչելիս։ «Եւ շրջեալ աւետարանէր ամենայն քաղաքացն մինչև 'ի գալ նորա 'ի Կեսարիա»։ Բայց տես զՀրեշտակս յօգնականութիւն հասեալ քարոզութեան. զի թէպէտ ինքեանք ոչ քարոզէին, այլ զաշակերտսն յորդորէին։ Սքանչելի ինն և աստուստ ցուցեալ լինի. զի որ ինչ 'ի հնումն հազիւ միոյ ուրուք 'ի հեթանոսաց լինէր հաւատալ, աստանօր յոյժ առատութիւն յաճախէր. զի ահաւասիկ զայլազգիս վաղվաղակի ածէն 'ի հաւատս յամենի և 'ի կշտամբանս Հրէից յամառկոտաց։

«Իսկ Սօղոս տակաւին լցեալ սպառնալեօք և սպանմամբ աշակերտացն տեառն»։ Արժանապէս ասաց աւետարանիչն կանխաւ վասն նախանձուն Պաւղոսի. և ցուցանէ թէ տակաւին սաստիկ յանդգնութիւ 'ի նոյն յարձակի. և ոչ ևս յագեալ սպանմամբն Ստեփանոսի և ոչ շատացեալ հալածմամբ եկեղեցւոյն Յերուսաղէմ, որով ցրուեալ սփռեցան ամենեքեան։ Եւ յայնժամ լցեալ լինէր առ 'ի տեառնէ ասացեալն՝ թէ «Եկեսցէ ժամանակ, զի որ սպանանիցէ 'ի ձէնջ, համարիցի պաշտօն մատուցանել նմայ»։ Եւ արդ սա այնպէս առնէր. և զի ըստ նախանձուն առնէր, որպէս կարծէր վասն օրինացն մրցել, յայտ է. քանզի և յարտաքին քաղաքսն ուր և մնացեալ իցեն, հասեալ լինէր հալածել զնոսա։ Իսկ այլ Հրեայքն միայն Երուսաղէմացւոցն փոյթ առնէին. զմի ինչ դիտելով միայն, զի պատիւ յամենեցունց կալցին ինքեանք։

ԵՓՐ. Իսկ սա իբրու զի ոչ ոք յղեաց զնա, ինքն դշխեմ կամաք «Մատուցեալ առ քահանայապետն՝ խնդրեաց 'ի նմանէ թուղթս 'ի Դամասկոս առ ժողովուրդսն. որպէս թէ զոք գտցէ զայնր Ճանապարհի արս կամ կանայս, կապեալս ածցէ Յերուսաղէմ»։

ՈՍԿ. Յո ընդէր 'ի Դամասկոս երթայր։ Զի մեծ էր քաղաքն և թագաւորական. կասկածէր գուցէ նախ ըմբռնեսցի յաշակերտացն Քրիստի, և դժուարադարձն լիցի։ Եւ տես զփափաք յօժարութիւնն նորա թէ զիարդ վասն օրինացն զինէր. զի ոչ մատեաւ առ իշխանսն, այլ առ քահանայապետն. 'ի նմանէ առնու զհամարձակութիւնն, զի թէ զոմանս գտցէ որ կարդասցէ զանուանն Քրիստի, կապեալս ածցէ Յերուսաղէմ։ Զայնրը Ճանապարհի, ասէ. քանզի այսպէս կոչէին յայնժամ զՀաւատացեալսն 'ի Քրիստ. կամ զուսումն նշանակելով Ճանապարհի անուամբն, որպէս Պաւղոս ասէր թէ վասն Ճանապարհին զոր ասէն հերձուած նազովրեցւոց. կամ թերևս վասն զՃանապարհն հատանելոյ անցանելոյ՝ որ Յերկինսն բերէր։ Եւ ընդէր ոչ էառ իշխանութիւն անդէն 'ի Դամասկոս պատուհասել զնոսա, այլ Յերուսաղէմ ածել։ Զի անդ բազում իշխանութիւն զայն ինչ գործեսցէ։ Եւ տես թէ յորպիսի

տագնապ արկանէ զանձն իւր ոչ երկնչելով, զի մի գժուարինս ինչ կրեսցէ. նա և զայլս սմանս առ ընդ ինքն։ Ով կարծը խոտութիւն. զի զորս և գտցէ, ասէ, զայնը Ճանապարհի, կապեալս ածցէ յԵրուսաղէմ. զի յերկար միջոցաւն ամենեցուն զնոսա տեսարանեսցէ։ Աբդ Հրեաքն այսպէս ոչ լինելին փութացեալք. այլ սա և յառաջ իսկ քան զայս ջան ունէր խափանել զառ 'ի Քն կրօնս. և զոր ինչ նոքա ոչ կարացին առնել, նա առնել յամառէր։

ԵՓՐ. Եւ վասն զի քան զքահանայսն և զայլսն նա կարի դառն էր առ եկեղեցիս, ոչ եղև նմա ած երկայնամիտ մինչև յաձախեսցէ 'ի հալածանսն, և ապա կուլեսցէ զնա. այլ յառաջ քան զՀալածելն նորա օրէսփ կամէր եկեղեցւոյ աշակերտ արար զնա։

ՈՍԿ. "Օ! ի ընդ երթալն նորա և մերձենալ 'ի Դամասկոս, յանկարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց լոյս յերկնից, և անկեալ յերկիր՝ լուաւ բարբառ որ ասէր ցնա. Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես զիս »։ Եւ ընդդէր ոչ 'ի ներքս 'ի քաղաքին փայլատակեր լոյսն ըզնովաւ։ Զի մի ամանք առ չՀաւատալ խաղ առնիցեն. որպէս զձայնն Հօր լսելով ասէին որոտումն լինել։ Եւ դարձեալ զի մի այլոցն որ ընդ նմա էին՝ Հնար լիցի այլ ազգ պատմել. այլ ինքն Հաւատարիմ պատմող լիցի իրացն, որ վասն այնորիկ գնացեալ լինէր։ Վասն որոյ զնոյն ասէր ցԱՂրիպպաս՝ թէ տեսի յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինև լոյս։ Զի գերազանցութիւն լուսոյն հարեալ զաչսն՝ գանեաց զսովորական տեսութիւն. զի աչք չափ ունին տեսուն։ Այլ ասի թէ առաւելութիւն այն և խուլ առնէ և անզգայս. բայց զնա կուրացոյց միայն։

ԵՓՐ. Աբդ լուսոյն զի կուրացոյց՝ երկեցոյց զնա, և երկիւղիւ ահագին փառացն շնչոյց զսրտմտութիւն նորա, և մեղմ բարբառովն կակղացոյց զնա. որովք և նա հաւանեցաւ յանձին ունել. և զի երկեաւ նա արհամարհել զխոնարհութիւն տեառն մերոյ՝ որ հեզագոյն բարբառովն երևեր, և զահի հարաւ անարգել զաստուածութիւն նորա՝ որ 'ի ձեռն սաստիկ լուսոյն շրջոյց զնա։ Եւ մինչդեռ յերկիր ընկեցեալ յիմարեալ կայր ոչ յեթ բարբառոյն, այլ յառաջ քան զբարբառն

ապշեալ զարմացմամբ թէ ո՞վ յերկնից կուրացոյց զնա, զի ահա ՅՈ և ոչ 'ի մեռելոց խսկ յարեաւ որպէս և կարծէր նա. այլ իբրև ասաց ցնա ամբաստանելոցն՝ Սաւուղ Սաւուղ զի՞ հալածես զիս, զի՞նչ առ յինէն անիրաւեալ առնես զայդ ընդ իս, լքաւ նա 'ի միտս իւր՝ թէ ես վասն տեառն երկնից հալածեմ, և ոչ թէ զայն որ բնակէն յերկինս՝ հալածեմ։ Հարցանէ ապա. «Ո՞վ ես, տէր». առաժամայն խոստովանի զինքն ծառայ։ Ո՞վ ես դու, տէր, որ յերկնիցդ հալածեալ ես. զի ես զՅՈ՝ զայն որ 'ի մեռեալս է՝ աշակերտաքն նորա հալածեմ։

ՈՍԿ. Այս տէրն ասէ. «Ես եմ ՅՈ, զոր դուն հալածես»։ Մի կարծեր ընդ մարդկան ունել դու մարտ, այլ ընդ ՅՈ։ «Այլ յոտն կաց և մուտ 'ի քաղաքն և պատմեսցի քեզ զինչ քեզ պարտ իցէ առնել»։ Տես որպէս ոչ վաղվաղակի զամենայն 'ի վերայ ածէ. այլ նախ կակղացուցանէ զարամախոհութիւն նորա և զբրտութիւն։

ԵՓՐ. Այս մինչդեռ կայր ապա 'ի դողման վասն անցից նորա որք անցին ընդ նա, և զահի հարեալ երկչէր թէ գուցէ ոչ յառնիցէ յերկրէն ուր զարկաւն, և լոյսն որ բարձաւ 'ի նմանէ՝ այլ ոչ դառնայցէ 'ի նա, և ատամնակարկաչ՝ կայր 'ի յերերման, գուցէ ունիցին զնա պատիժք պատուհասից մեծ քան զոր ընկալաւն, տայ նմա յոյս քաղցրութիւն, և զի վերբստին տեսանիցէ։

ՈՍԿ. Կայց ոչ բժշկեաց զնա անդէն 'ի տեղւոջն, ուր կուրացոյց զնա։

ԵՓՐ. Օ՛ի Դամասկոս ամենայն եկեսցէ տեսցէ զնա սոսկալի նշանաւն որ եդաւ 'ի նմա։

ՈՍԿ. «Իսկ արքն որք ընդ նմա երթային, կային անշշունչ. զձայնն միայն լսէին, բայց տեսանէին և ոչինչ»։ Զձայնն Պաւղոսի լսէին որ ընդ նմայն էին, զի ասէր՝ թէ ո՞վ ես տէր. այլ ոչ զոք տեսանէին, և թէ ում տայր պատասխանի՝ ոչ գիտէին. քանզի նուաստագունիցն միայն արար զնոսա լսող։ Զի թէ զձայնն զայն լուեալ էին, թերևս չլինէին թերահաւատեալ.

1 Մինչև պատմելոցն։

բայց զի Պաւղոս տայր պատասխանի, սքանչանային։

ԵՓՐ. Լ՚ԱՅԼ և զսաստիկ փայլատակումն ոչ տեսին, զի մի կուրացին և նոքա, և եղիցի շփոթութիւն։ Ա՚ԱՅԼ կուրացոյց զՍաւուղ ստուգութիւն, և ողորմեցաւ նոցա ինքն հոգի։

ՈՍԿ. Լ՚ու վասն զի զԹուղթն 'ի քահանայից անտի նա խնդրեաց և ոչ նոքա. և զի յառաքելութիւն քարոզութիւն նա ընտրեցաւ և ոչ նոքա։

ԵՓՐ. Ամէն վասն յայնժամ և յերրորդ երկինս զնա անքննաբար վերամբառնայր և զանձառելիսն դերաբնապէս՝ նմա վարդապետէր. զի մի նուազ ինչ գտցի քան զսիւնսն եկեղեցւոյ 'ի հաւասարութենէ ծայրագոյն պատուոյ առաքելութիւն։ Բայց առժամայն դեռևս յարեաւ, ասէ, Սօղոս յերկրէ անտի, և աչքք բացաք ոչ զոք տեսանէր։ Դան արք երկու աչքն իւրովք, զի յանդգնեցաւ նա հալածել զողջ և զանարատ մարմին եկեղեցւոյ։ «Ջնեռանէ նորա առեալ՝ մուծին 'ի Դամասկոս»։ Մեծաւ վատթարութիւն ձգեալ տանէին զնա 'ի Դամասկոս, ուր գիմեալ երթայր մեծաւ հպարտութեամբ. ձգեալ տանէին զնա, զայն որ ակն ունէր զայլս ձգել բռնութիւն. որպէս կապեալ 'ի նեբքս մուծանելով զայն՝ որ զայլս հանդերձեալ էր կապել։

ՈՍԿ. Լ՚այց տես զո՞ ոք արդեաք այնպէս ձգէին. զաւարտոն բանսարկուին անօթ ի բն. զկապեալն Յոի Քրիստոսի և զկապողն 'ի նոյն զընդ հանուրս. զնա իբր 'ի քաղաքի ուրեք կամ 'ի մայրաքաղաքի 'ի Դամասկոս ըմբռնեալ։ Նա և որ սքանչելին է, զի նոքա մարտուցեալքն և թշնամիքն Յոի 'ի նեբքս մուծանէին զնա ամենեցուն տեսանելով։

ԵՓՐ. «Լ՚ու էր անդ զերիս աւուրս և ոչ տեսանէր»։ Զի գիտասցէ զնա Դամասկոս և ամենայն շուրջ զնովաւ՝ եթէ գան արք և ապա կալաւ յանձին. և ոչ թէ կաշառաւք իւիք հրապուրեցաւ նա լռել և դադարել։

ՈՍԿ. «Լ՚ու ոչ եկեր և ոչ արբ»։ Քանզի մեղադիր էր անձին իւրում վասն յինքեանէ եղելոցն։ Եւ յաւուրսն յայնոսիկ խոստովան լինէր խնդրեր աղօթեր ըղձայր ողբեր աղաչէր զՅ՚ծ։ Եւ ապա զինչ։

1 Միւսն գէրոգլ... Ֆանրոգոյն գրոցոյ։

ԵՓՐ. Յայտնեցաւ տէր 'ի տեսիլ գիշերի Անանիայի, զի առանց երկիւղի երթիցէ մկրտեսցէ զՀալածիչն։ Յայտնեցաւ դարձեալ Սաւուղի, զի առանց երկմտութեան լրջասցի ընդ առաջ բժշկին իւրոյ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ ամաչեսցուք, որպէս ասացի, 'ի ներքինութենէ. զի 'ի զօրեղութեան գոլով և 'ի փարթամութեան և 'ի Հանապարհի, և ոչ մի ինչ խափաներ զնա յընթեռնլոյն զգիրս կամ 'ի լուացմանէ մկրտութեան. զի թէ 'ի Հանապարհին այնպէս ժրանայր, զինչ արդեօք էր 'ի տան։ Արդ փութաբար ընթերցջիք զգիրս ՅԾային, զի այն իսկ զներքինին պայծառագործեաց. զի ոչ կարօտացաւ նշանաց ինչ, այլ վաղվաղակի հաւատացեալ մկրտեցաւ։ Զի որ զք միտ դիցէ մարգարէից, նշանաց ոչ կարօտանայ. վասն այն ասացաւ յօրէնսն՝ թէ «Խօսեսցիս զօրէնսն այ 'ի Հանապարհի, յանկողնի, 'ի նստել 'ի տան». զի մեծ ինն վՀարէ գրոց վերծանութիւն։ Ապա թէ ասիցես թէ և Պաւղոս ոչ ընթեռնոյր զգիրս՝ զիաՀրդ սքանչից պէտք եղեն նմա առ հաւատալ, ասեմ՝ թէ վասն Հրէիցն կարծրութեան սքանչելեօք կազմեաց զմիտիսխուսին նորա, որով 'ի Հահ էր զՀրէայսն շահել. զոր ըստ կարգի պատմաւետարանիչս։

ՃԱՌ ԲՍԱՆԵՐՈՐԴ

«Այ էր, ասէ, աշակերտ ոմն 'ի Դամասկոս, Անանիա անուն. ասէ ցնա տէր 'ի տեսլեան. Անանիա. և նա ասէ՝ աւասիկ եմ, տէր։ Ասէ ցնա տէր. յոտն կաց և գնա ընդ փողոցն՝ որ կոչի ուղիղ, և խնդրեսցես յապարանսն Յուդայ զՍօղոս տարսոնացի, զի կայ դեռ յաղօթս»։ Բազում նշանակս տայ ած Անանիայի, զի մարթասցէ գտանել զՊաւղոս. որպէս հրեշտակն Կուռնելիու այսպիսի նշանս տայր գտանել 'ի Յոպպէ զՊետրոս։ Արդ ուղիղ փողոցն այսու անուամբ հրաչակեալ, ամենայն քաղաքացեացն էր գիտելի. և 'ի կողմն փողոցին ապարանքն Յուդայի հրէի միոյ, առ որ մուծին օրք ածէին զՊաւղոս, որպէս առ խաղաղասիրդին մտեալ էր Պետրոս։

ՈՍԿ. Բայց ընդէր արդեօք ոչ 'ի մեծամեծաց և 'ի հաւատարմագունից ձգեաց ած ած առ հաստատուն հաւանութիւնն և ողբանսն Պաւղոսի։ Վայելչապէս. քանզի ոչ էր լինելոց կոչումն նորա 'ի ձեռն մարդոյ, այլ 'ի ձեռն նորուն ինքեան Քրիստի. զի և Անանիա ոչ ինչ ուսոյց զնա, այլ միայն մկրտեաց. քանզի հանդերձ ձեալ էր նա ընդ մկրտութենն բազում շնորհս Հոգւոյն կրել յանձին ըստ բազում նախանձուն զոր ունէր յանձին և յօժարութենն։ Իսկ Անանիա զի ոչ էր 'ի յոյժ նշանաւորացն, 'ի կասկածագին պատասխանուոյ նորա յայտ է. զի թէ տեառն ընդդէմ խօսէր, յոյժ մանաւանդ թէ հրեշտակ առնա առաքէր։ Բայց ոչ այսպէս և Փիլիպպոս. զի ոչ նախ լուաւ զոր ինչ լինելոց էր, այլ միայն զհրեշտակն ետես, և ապա Հոգին հրամայեաց նմա յարել 'ի կառն. և ոչ դեռ թէ երևաս զամենայն լուաւ։

Բայց 'ի սմանէ տես թէ օրպէս հատանէր ած զերկիւղն։ Մի երկնչիր, ասէ, խոպանեալ է և աղօթս առնէ։ Եւ ոչ ասաց զոր ինչ ուղղութեի հանդերձեալ

էր լինել 'ի նմանէ. զմեզ խրատելով, մի պատմել զանձանց ուղղութիւն։ Այլ և երկուցեալ տեսեալ զնա՝ ոչ ասաց թէ մի անհաւատ լինիր, և ոչ ասաց թէ ուստ կամ ողջեա զնա. զի թէ ասելով թէ աղօթս առնէ, և եռես այր մի եդեալ ձեռս 'ի վերայ զի տեսցէ, և ոչ այսու հաւանեցոյց, յոյժ մանաւանդ թէ զայն իսկ ասէր։ Այլ զինչ. «Եռես 'ի տեսլեան այր մի Անանիա անուն. մտեալ և եդեալ ձեռս 'ի վերայ նորա, որպէս զի տեսցէ»։ Դրեսջիր թէ այսպէս ասիցէ, և ոչ անհաւատ լինի քեզ։ Քանզի եռես տեսլեամբ զերթալն քո առ նա, և գնելով զձեռս լուսաւորել. և վասն այնորիկ տեսլեամբ, զի խաւարեալ էր։ Իսկ առ Պաւղոս այս ինչ եղև, զի հաւատացէ գնացելոյն առ նմա Անանիայի. ըստ որում յերազի եռես նախ ազդեցեալ նմա։

«Պատասխանի եռ Անանիա. տէր, լուայ 'ի բազմաց վասն առն այնորիկ որչափ արար չարիս սրբոց քոց յԵրուսաղէմ. և ասա ունի իշխանութիւն 'ի քահանայապետիցն կապել զամենեսեանսրք կարդան զանուն քո»։ Տես այնչափ զարհուրեալ զաշակերտն, մինչ զի և ոչ եղելոցն առ Պաւղոս սքանչելեացն առաւելութիւն հաւանեցուցանէր զնա։ Այսպէս և Մովսէս երբեմն երկուցեալ լինէր. ըստ որում և սորա բանքս ոչ թերահաւատի, այլ երկուցելոյ և հրաժարելոյ են. զի ասէ. «Տէր, լուայ 'ի բազմաց՝ թէ այլն այն որչափ արար չարիս սրբոց քոց»։ Զինչ ասես, ով մարդ. ՈՏ խօսի ընդ քեզ, և դու յերկուանաս։ Տես զի ոչ դեռ ևս գիտէին վայելչապէս զզօրութիւն Քրիստոսի։ Եւ ուստի այս յայտ իցէ. զի զարհուրեալ գոլով քննէր զիրսն. ոչ թէ իբրև ոչ գիտելով Քրիստոսի ասէր զայս, այլ թէ այսպիսի գոլով առն զիարդ հնար իցէ առնել զհրամայեալսդ։ Քանզի նոքա կան և ասեն, ասէ, թէ ոչ ուրուք 'ի հաւատացելոց Քրիստոսի հնար իցէ կեալ. այնպէս երկուցեալ դողայր. զի ոչ միտ դնէր ասացելոցն, այլ 'ի լսելն զանունն Պաւղոսի յոյժ տագնապեցաւ երկիւղիւ. մինչ գրեթէ ասել՝ տես տեր, յոյր ձեռս զիս մատնես. որ ասա վասն այնր է. կեալ է, զի կապեսցէ զորս կարդան զանուն քո. երկընչիմ զուցէ և զիս յԵրուսաղէմ տարցի. ընդէր

ընկենուս զիս'ի բերան առիւծուն. բարւոք ունի, թայլ տուր նմա խաւարեալ կալ. թէ ամենևին կոյր իցէ, ընդէր հրամայես ինձ բանալ զնա, զի դարձեալ կապեսցէ։ Զայսոսիկ ասէր զարհուրեալ դալով։

Լու յայսմանէ ահա յայտնի լինի արուեստն առնն. զի Հրեիցն ասել զայս՝ ոչ էր աքանչելի. այլ սոցա այսպէս երկնչելն մեծագոյն զարուեստս զօրութենն ՅՍ ցուցանէ, որ զայնպիսի սատանին հաւանեցոյց, զոր յայտ առնելով ՅՍ՝ ասէ. «Երթ դու, զի անօթ ընտիր է նա ինձ կրել զանուն իմ առաջի ազգաց»։ Առաւելութիւն դոլութենն ելոյծ զերկիւղն վաղվաղակի։ Մանաւանդ, ասէ, այնքան յօժարագոյն է մերս խորհել, որպէս զի և բազումս վասն այնր հանդերձեալ է չարչարել։ Եւ անօթ ընտիր կոչէ զնա, ցուցանելով թէ ոչ է բնական նորայն չարութիւն. զի զփոքձն և զաւն կոչէմք ընտիր. որպէս և զոմանս 'ի չարեաց անօթս ասէ բարկութենն ՅՍ, և զայլս անօթս ողորմութեան, և զՊաւղոս անօթ ընտիր։

Լայց գիտելի է, զի ոչ միայն հնորհայն ՅՍ, այլ և մարդոյն փութոյ պէտք են յարգոյ առնել զընտրութենն. զի «Թէ ոք սրբէ զանձն իւր, ասէ, եղեցի անօթ ընտիր և պիտանի տեառն 'ի գործս բարիս պատրաստեալ»։ Որպէս զՊաւղոսն ասէ անօթ ընտիր. զի ոչ միայն հաւատացեալ լինելոց է, ասէ, այլ և վարդապետ. որ և բազում համարձակութիւք վարելով՝ այնչափ աձեցուցանէ զվարդապետութենն, որչափ յառաջագոյն զարհուրեցուցանէր զբազումս։

Լու զի անօթ ընտիր ասաց զնա, պահէ զկարգ հետևումանն, և 'ի կրելեացն ցուցանէ զարժանաւորութենն անօթոյն։ «Կրել զանուն իմ, ասէ, առաջի ազգաց և թագաւորաց և որդւոցն Իսրայէլի»։ Լուաւ ահա զոր ինչ ախորժէր Անանիա՝ թէ ոչ միայն ոչ կապեսցէ զոր կարդան զանուն իմ, այլ մանաւանդ ինքն կարդալով և կրելով զանուն իմ ընդդէմ կայցէ Հրեից և ազգաց և թագաւորաց։ «Զի ես ցուցից նմա որչափ պարտ է նմա չարչարել վասն անուան իմոյ»։ Թերևս յօրժամ աղաչէր 'ի բաց առնել զսատանն, և լուաւ՝ թէ «Շատ են քեզ հնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութիւն կատարի»։ Բայց թուի թէ և առ Ան-

նիա նախատական է բանս՝ թէ նա իսկ զնմա կրեսցէ վասն իմ, որ այնչափ մոլեալն էր. իսկ զոմ և մկրտել ոչ կամիս զնա. մի երկնչիր, զի բացմամբն ոչ հակառակ ձեր յառնէ, այլ վասն ձեր լիցի 'ի տագնապ մտեալ։

Յայսմանէ համարձակու թիւն առեալ, «Գնայ Անանիա և եմուտ յապարանսն, եդեալ ձեռս 'ի վերայ նորա և ասէ. Սաւուղ եղբայր, 'ի վերս հայեաց. տէր առաքեաց զիս առ քեզ, Յն որ երևեցաւ քեզ 'ի Ճանապարհին յորում գայիր. որպէս զի տեսցես և լցցիս Հոգւով սրբով»։ Վաղվաղակի ընտանեցուցանէ զնա անուամբն Յն։ «Յն, ասէ, որ երևեցաւն քեզ»։ Եւ մանաւանդ զայս ոչ ասաց նմա Քն, այլ 'ի Հոգւոյն ուսաւ։ Եւ ոչ ասաց՝ թէ Յն որ խաւարեցոյցն զքեզ. և ոչ թէ Յն Որդին Այ խաչեալն՝ որ նշանս առնէր։ Այլ երևեալն քեզ, ասէ. 'ի նորա ծանօթ իրացն հաստատէ զբանն։ Նա զի և ոչ Քն յաւել ինչ առ Պաւղոս յայտնեալ, և ոչ ասաց թէ ես եմ Յն որ 'ի խաչելի և յարեայ, այլ թէ զոր դուդ հալածես։ Բայց ոչ ասէ Անանիա թէ հալածեալն 'ի քէն, զի մի թուիցի այպանել ինչնախատելով. այլ երևեալն քեզ, ասէ։ Եւ սակայն ոչ երևեցաւ, այլ 'ի ձեռն իրացն երևեալ եղև։

Այս վաղվաղակի կամելով 'ի բաց բառնալ զնախատինսն, 'ի վերայ էած. «Որպէս զի տեսցես և լցցիս Հոգւով սրբով»։ Յայտ արար թէ ոչ էկն՝ զի յանդգնմանեսցէ զերեալն, այլ զի տայցէ զսպարգևն, այսինքն զՀոգին։ Եւ ինձ թուի զի և Պաւղոս, որպէս կուսնելիանքն, ընդ ասել բանիս՝ Հոգւոյն սրբոյ եղև հաղորդեալ. և մանաւանդ զի ասաց որ տայրն Անանիա, ոչ էր մեծ։ Վասն զի ոչ ինչ էր մարդկային որ լինէր, և ոչ 'ի ձեռն մարդոյ. այլ ՃԾ էր մերձ՝ որ առնէրն զայն։ Համանգամայն և խրատէ զնա խոնարհել։ Ոչ ածէ զնա առ սքանչելի առաքեալսն. զի յուցցէ՝ թէ ոչ ինչ էր մարդկային աստանօր, սակայն Հոգւով լի եղև, այնու Հոգւով որ զնշանսն առնէ. զի և այնպէս հաւատք նորա յուցեալ լիցի։ Բայց սքանչելիս ինչ դեռ ևս ոչ առնէր։

«Այս վաղվաղակի անկան յաչաց նորա իբրև կեղե-

ւանք. ետես և յարեաւ մկրտեցաւ։ Ամենք ասեն, թէ քան զայն ինչ արար նշան խաւարման, ընդէր իսկ ոչ խրեաց զաչս նորա։ Ասեմ՝ թէ վասն զի այն հրաշաւ փառագոյն էր բաց գոլով աչացն ոչինչ տեսանել մինչև զանուանն Յսի կարդալով առ նմա Ասնանիա լուսաւորեաց զնա և մկրտեաց։ «Եւ առեալ կերակուր, ասէ, զօրացաւ»։ Զի տկարացեալ էր 'ի Հանապարհէն, յերկիւղէն, 'ի սովոյն զերիս աւուրս, 'ի տրտմութենէն. զի կամելով ՝ած աՀեցուցանել զարտմութիւն նորա կուրացոյց զնա յառաջ քան զգալն նորա. և զի մի կարծիցէ տեսիլ ինչ զնաւարուն, սմին վասն իբրև կեղևանք թափեալ լինէին։ «Եւ եղև 'ի Դամասկոս աւուրս ինչ ընդ աշակերտսն. և վաղվաղակի 'ի ժողովուրդսն քարոզեաց զԲՀ՝ թէ սա է Որդին ՝այ»։ Արդ տես զսքանչելիսն. ոչ կարօտացաւ այլոց վարդապետութիւն, այլ պատահումն եղև նմա վարդապետութիւն։

ԵԹԲ. Այլ այն որ գիմեալ երթայր խռովել զաշակերտսն աւետարանին, գտաւ նա խռովիչ հալածչաց աւետարանին. զի ասէր նա՝ թէ Որդի ՝այ է Յսն այն, զորմէ դուք կարծէք թէ 'ի դժոխս է։ Եւ քարոզեաց զանծութիւն նորա և զմարդեղութիւն միանգամայն լսողաց և անհաւատից։

ՈՍԿ. Այլ տես զփոյթն. զի վաղվաղակի, ասէ, քարոզէր և վարդապետէր 'ի ժողովսն. և 'ի սկզբան անդ զմահ իսկ յանձն առնոյր՝ առ սպանմունս պատրաստելով։ Տեսանես որպիսի հաստատուն նշանն եղև. և այս իսկ զամենեսեան զարհուրեցուցանէր։ «Զարմանային ամենն որք լսէին, և ասէին ոչ սա է որ աւարն հարկանէր զայնոսիկ՝ որ կարդային զանունն Յսի. և այսր նմին իբրև եկեալ էր, զի կապեալ զսոսա տարցի յԵրուսաղէմ՝ առ քահանայապետսն»։ Տես զի 'ի թերահաւատութիւն եկեալ լինէին վասն քարոզութեանն նորա։ Ո՞վ յիմարութիւն. զի ոչ միայն սքանչանալ պարտ էր, այլ և երկիր պագանել Քսի և պաշտել՝ որ զնայն փոփոխեաց իսկոյն։ Զի ոչ պարզաբար հալածիչ էր, այլ և աւար հարկանէր զաշակերտսն Յսի. և 'ի յոյժ թշնամութենէն և ոչ զանուանն նորա լսել յանձն առնոյր։ Եւ որ մեծն է քան զայս, զի և անդանօր վասն այսորիկ եկեալ իսկ էր. և ոչ ունէին ասել՝ թէ յառաջա-

գոյն հաղորդեալ էր իւիք ինչ ընդ առաքեալսն։ Տես-
սանես թէ որքան իրօք յայտնի է զի Թշնամի էր։

«Այլ Սօղոս առաւել ևս զօրանայր և յաղթահա-
ր էր զՀրեայսն որ բնակեալ էին 'ի Դամասկոս, և խե-
լամտեցուցանէր թէ սա է Քրիստոս։ Տես ոչ միայն ոչ լի-
նէր ամաչեցեալ կամ ծածկեալ զերեսս, այլ առաւել
զօրացեալ լինէր և յաղթահարէր զՀրեայսն. այսինքն
իբրև օրէնսգէտ գոլով խնայր զերեսս այնոցիկ՝ որ
հակառակէին. և ոչ թողոյր ասել ինչ, հաստատե-
լով թէ նա է Քրիստոս։ Իսկ նոքա երկուցեալ և ամաչե-
ցեալ լինէին ասել՝ թէ դու էիր որ աւարէիր զուսումն-
նըդ զայդ, արդ ընդէր փոխեցար։ Զի ամաչէին և
առ ինքեանս խորհէին՝ զի մի ասիցէ թէ այս իսկ փո-
փոխումս իմ բաւական էր զձեզ ուսուցանել առ 'ի
Ճանաչել զզօրութիւն այնր՝ որ զիս փոփոխեացն։

Իսկ զՀաւանեալսն խելամտեցուցանէր. այսինքն
հեղութիւն ուսուցանելով և հաստատելով թէ նա է
Քրիստոս։ Եւ զի կեղծաւորէին Հրեայքն ազատիլ 'ի մե-
ղադրութիւն յոչ լսելն քարոզութիւն, և այնպիսի կար-
ծեօք մոլեգնէին 'ի վերայ Ստեփաննոսի, ահաւասիկ
գտին զսա ընդդէմ ինքեանց ուժգնագոյն մանաւանդ
քան զՍտեփաննոս։ Եւ արդ զինչ հաւասար գոցի
այսմ ուրախութիւն, որ յաղագս տրտմութիւնն որ վասն
Ստեփաննոսի մխիթարութիւն եղև 'գալուստն Պաւղո-
սի. որով ամենեքեան զուարթանային, մանաւանդ զի
այսպիսի օրինակաւ եղև գալուստ նորա։

Այլ թէ ընդէր 'ի սկզբանն ոչ եղև այս՝ այլ յետոյ
ուրեմն, վայելչապէս. զի ցուցեալ լիցի թէ Ճշմար-
տապէս յարեաւ Քրիստոս։ Զի որ հալածէրն զնա և ոչ հա-
ւատայր յարուցեալ զնա, ուստի արդեօք հաւատա-
ցեալ եղև, եթէ ոչ բազում էր զօրութիւն յարու-
ցելոյն։ Արդ համարեսցուք թէ աշակերտքն Քրի-
ստոսի զնորս ինչ առնեն Քրիստի, զիարդ և զայս առ սմա ոք
կարծիցէ։ Վասն այնորիկ ոչ վաղվաղակի կոչեաց զնա,
զի յայտնի լիցի սորին պատերազմն ընդ Քրիստի։ Զի որ
այնպէս մոլեալ էր զի արիւն արդար հեղլով և 'ի բանա
արկանելով և հայհոյելով և զՔրիստոս հալածելով ոչ
շատացաւ, այլ պարտ գոլ վարկաւ ուժգնապէս ևս
մարտնչել ընդ հաւատացեալսն, մինչ զի առ քահա-
նայապետն մատուցեալ 'ի մեծամեծ վիշտս զանձն ըն-

կենայր, սորա հաւատալն յանկարծակի մեծ էր և բա-
քանչելի։

Այս թէ որ 'ի հարկէ բռնադատեալ ասիցէ զիրսն,
ասեմ՝ թէ և Եղիմաս զնոյն կրեաց, ընդէր ոչ փոխե-
ցաւ։ Եւ դարձեալ զինչ ահաւորագոյն քան զշարժումն
նոցն որ առ յարութեան զկենդանոցն տագնապեցոյց, և
զայլ նշանսն որ եղեն, և տեսանելով ևս զնա յարու-
թեալ. բայց ոչ կամեցան օգտել։ Ընդէր ոչ և Հրեայքն
հաւատացին լսելով զեղեալսն որ առ սա, որոց յայտ-
նի էր Աշմարտութիւն. քանզի և ոչ իսկ լինէր նա փո-
խադրեալ առանց այսմիկ։

Արդ հարցանեմ զՀրեայսն. ուստի, ասա ինձ, փո-
խադրեցաւ Պաւղոս. այն որ այնչափ նշանք եղեն յա-
ւաջագոյն, և ոչ փոխադրեցաւ։ Նորին վարդապետն
փոխադրեալ հաւատաց, և նա ոչ փոխեցաւ։ Արդ ո՞վ
ոք զսա ոչ միայն հաւանեցոյց, այլ և յանկարծակի
այնչափ արկ 'ի նմա յօժարութիւն, մինչ զի և 'ի գեհենն
ցանկայր գնալ վասն սիրոյն Քրիստոսի. ոչ ահա յայտմանէ
յայտնի է իրացն Աշմարտուի, զի ճշմարիտ իսկ էր առ
նա գործն վՀարեալ։ Վասն որոյ և որպէս այլոցն
պարտ է հաւատալ, որ քարոզեցին զյարութիւն Քրիստոսի,
ոչ ինչ նուազ և սմա՝ որ յանկարծակի փոխեցաւ։

Այլ զի հաւաստի լիցի թէ եղեալքն առ նա ոչ բրա-
նադատութի՛ էր հարկեցուցիչ, այլ վարժողական օրի-
նակ հաւանութեան, տեսցուք և զայլս օգտեալս, զոմանս
առանց նշանի և զայլս նշանօք. որպէս սամարացւոց
գաւառքն, որոց հաւատալն ոչ փոքր ինչ ուրախութի՛
էր ընդդէմ յայնմ ժամու տրտմութեան։ Այլ ներքի-
նին հնդիկ զինչ նշանս տեսեալ հաւատաց, ընդ որ
աքանչանալ արժան է Աշմարտապէս. զի զՔրիստոս ոչ էտես
և ոչ զայլ ինչ նշանս, այլ մանաւանդ զերուսաղէմա-
ցիսն դեռ ևս պայծառացեալս էտես օրինօքն։ Ուստի
ապա եկն յայնչափ խոհեմութիւն. զի ահա աւազակն
նշանս էտես, և մոգքն զաստղն. իսկ սա ոչ ինչ այսպի-
սի, և ոչ կարօտացաւ նշանաց առ փրկութիւն։ Ապա-
քէն 'ի գրոց ստուգութի՛ ընթեռնլոյն։

Այլ զի՞արդ, Պաւղոս ոչ ընթեռնոյր զբրէնսն։ Այլ
տնօրինաբար Պաւղոս այսպէս փոխեցաւ, կամելով
Քրիստոսի ամենայն ուսանել շահել զՀրեայսն. որք թէ միտս
ունէին, քան զամենայն նշանսն որ եղեն 'ի ձեռն ա-

ռաքելոցն՝ բաւական էր շահեցուցանել զնոսա բերելն զնա 'ի հաւատս։ Այլ տես ահա յետ առաքելոցն և զՅԾ արեալ նշանս առ 'ի հաւատալ նոցա. զի յետ առաքելոյ սքանչիցն որ առ կաղն՝ 'ի բանտ արկին զառաքեալսն, ուր և ՅԾ իսկ առնէր նշանս. և այն էր հանելն զնոսա 'ի բանտէն։ Երկրորդ նշան ցուցանելն զինքն Ստեփաննոսի։ Երրորդ նշան ածելն զՓիլիպպոս առ ներքինին։ Չորրորդ նշան ձգելն զՊաւղոս առ ինքն. այլ ոչ կամեցան նոքա օգտել։ Այլ տեսցուք դարձեալ թէ զիարդ Պաւղոս պատուով կոչի, և որպէս ներքինին. զի աստանօր Պաւղոսի երևի Քս վասն կարծրութեան թերևս, զի ոչ արդեօք հաւանէր առանց այսորիկ։

ԵՓՐ. Զդ իբրև խռովեաց նա զԴամասկոս աւետարանաւն զոր սկսաւ նա քարոզել անդ, խռովեցաւ ամենայն Դամասկոս ընդդէմ նորա։

ՈՍԿ. «Զոր իբրև կատարէին աւուրք բաղումք, խորհեցան Հրեայքն սպանանել զնա»։ Առ ունակացեալ չարարուեստութիւնն իւրեանց եկեալ լինէին դարձեալ Հրեայքն. ոչ տակաւին զրպարտողք և սուտ վկայք խնդրելով, այլ ինքեանք ըստ ինքեանց զխորհուրդն իւրեանց կատարեն. քանզի տեսին զաւետարանն տարածեալ, վասն որոյ և ոչ ևս դատաստան նստուցանեն։

«Յայտնեցաւ Սօղոսի նենգութիւնն նոցա. քանզի պահէին զդրունսն 'ի տուէ և 'ի գիշերի, զի սպանցեն զնա»։ Քանզի այս իսկ անհանդուրժելի էր նոցա և ծանր թուէր քան զյաւաջագոյն եղեալ նշանսն զամենայն. և քան զՀինգ հազարացն և զերեք հազարացն սորայն փոփոխումն խոցոտէր զնոսա։ Այլ տես զնա առ ժամայն ոչ շնորհիւ կեցեալ, այլ մարդկային իմաստութեամբ. և ոչ այնոքիւք որովք այլ առաքեալքն, զի և յայսմիկ իմասցիս զառնն զօրութեան փայլեալ առանց շնորհաց նշանի։

ԵՓՐ. Զդ զի մի խափանեսցի նա 'ի ձեռն մահուն իւրոյ 'ի քարոզութեանն՝ որում կարօտեալ էր նա, խորհեցաւ նա ինքանել ընդ պարիսպն. ոչ զի երթիցէ նա 'ի քաղաքս հեթանոսաց ուր ընդունէին զնա, այլ յԵրուսաղեմ՝ որ աւելի քան զԴամասկոս սպառնայր նմա։ «Եւ առեալ զնա աշակերտացն 'ի գիշերի ընդ

պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ». որպէս զի առանց կասկածանաց իրքն լինիցին։

ՈՍԿ. Յե զիարդ. յայնպիսի վշտաց Ճողոպրել փախչի արդեօք։ Ոչ. այլ գնացեալ լինի անդ՝ ուր մեծապէս Թերևս գնոսա բորբոքէ, քանզի ստուգապէս հաւատացեալ էր. բայց զի անհաւատալի Թուէր այս, վասն այնորիկ յետ բազում աւուրց լինի այս։ Եւ զի վայել էր նմա առժամայն ոչ կամել ելանել անտի, բազմաց Թերևս աղաչելով գնա, այլ քանզի իմացաւ զոր ինչ խորհէին, յայնժամ յորդորեաց զաշակերտսն զի իջուսցին գնա։ Տես զի և աշակերտս ունէր վաղվաղակի. զի չէր կարօտ յումեքէ ուսանիլ, այլ ուսուցանել։ Վասն սորին իրաց և զրէ իսկ՝ Թէ «Աղգապետն Աբրետայ արքային պահէր զքաղաքն դամասկացւոց ունել զիս, և կախեցայ վանդակաւ և փախեայ»։

Յե Թէ ոք ասիցէ Թէ ընդէր եղև փախուցեալ, ասեմք՝ Թէ ոչ էր իրքն զանգիտութիւն, այլ պահէր զանձն վասն քարոզութիւն. զի Թէ զանգիտեալ էր, ոչ Յերուսաղէմ էր եկեալ, և ոչ վաղվաղակի զվարդապետութիւնն յանձն առեալ. այլ Թողացուցեալ էր արդեօք զուժգնութիւնն, խրատեալ Թերևս կրիւքն Ստեփաննոսի։ Նա և այս իսկ տնօրինական էր, զի ոչ ինչ մեծ վարկանէր զմեռանիլն փուԹով վասն մեծագոյն շահի քարոզութիւն։ Այլ և հանդերձ բազում շահիւք զբազումն փրկելով, զՃողոպրելն գիտելով առնէր զայն։ Եւ այնչափ փոյթ էր այրն, մինչ զի և զԲն ոչ տեսանել կամելով, զոր և այնչափ սիրէր և յաւէտ քան զամենայն փուԹայր տեսանել, այլ զայս առնէր՝ քանզի դեռ ոչ էր աւարտեալ նմա որ առ մարդկան էր տնօրէնութիւն։ Զի Թէ յետ այնչափ ժամանակաց ոչ կամէր լուծանել, այլ ասէր՝ Թէ կալ մնալ 'ի մարմնի կարևոր ևս է վասն ձեր, յոյժ մանաւանդ 'ի սկզբան վաՃառականութիւնն մինչդեռ այն ինչ ելեալ էր 'ի նաւահանգստէն։

Արդ բազում ինչ որպէս ասացի և մարդկային հանՃարով լինել Թայլ տայր Բն, զի ուսանիցիմք Թէ մարդկեկ էին. և ոչ յամենայնի չնորհայն էր իրքն. և Եթէ ոչ էր այսպէս, ապա իբրև զծառս էին պարզաբար անշարժք. այլ բազում ինչ և ինքեանք տնօրինէին մարդկեղէն հնարիւք։ Եւ այս ոչ է նուազ քան զմար-

տիրոսութեն, յոչ և միոյ իրաց հրաժարել վասն բազմաց փրկութեն։

Այլ տես զաշակերտն որ պատմէ՝ ոչ պատուասիրաբար պայծառացուցանելով զՊաւղոս։ զի միայն զնա արձակեցին և ոչ զայլ ոք ընդ նմա։ և այս յոյժ պատշաճասէր։ զի երևեալ լեցի նա առաքելոցն որ յԵրուսաղէմ էին։ Արդ նոքա արձակեցին զնա իբրև պարտ գոլով նմա փախստեամբն գտանել փրկութեն։ իսկ նա զներհակն առնէր, առ մոլեալսն մանաւանդ դիմելով։ այս իսկ է տապանալ և Քրիստոսի սիրոյն վերստին եռալ։ Յառաջնմէ իսկ օրէ ծանեաւ զամենայն պատուիրեալ սրն զոր լուան առաքեալքն 'ի տեառնէ։ «Զի եթէ ոչ ոք բարձցէ զխաչն և եկեսցէ զՀետ իմ, չէ ինձ արժանի»։ Այլ և հեղգագոյն գալն նորա քան զայլ առաքեալսն առաւել յօժարագոյն արար զնա։ զի «Որուսմ բազուսմ թողուցու, ասէ, առաւել սիրեսցէ»։ Զի որչափ յետոյ եկն, այնչափ յոլովագոյն սիրեաց, մինչ զի յառաջին ամին դարանս լինէր արարեալ նմա։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

'Լ, մին և մեք նմանեսցուք և զոգիս 'ի ձեռս առցուք առ ամենայն վիշտս Ճգնել, զի զայլս օգտեցուսցուք։ զի ոչ այլ ինչ այսպէս ուրախ առնէ զՅԾ, որպէս ըղբարեգործելն զայլս։ ոչ 'ի բարեկամն ևեթ, այլ և 'ի դժոխս։ Զսոյն զայս իսկ արար Քրիստոս, և մեզ ետ պատուէր։ Թողջիք, ասէ, զոր ինչ ունիք 'ի սիրտս ձեր զուսմբէ յորժամ յաղօթս կայցէք, ոչ եօթնիցս ևեթ, այլ եօթանասնիցս եօթն անգամ։ որպէս և ինքն արար 'ի խաչին, Հայր՝ թող դոցա ասելով։ Եւ ոչ այսչափ ևեթ, այլ և բարիս գործեսցուք առ կարօտս, և մի զաղքատութեն պատճառեսցուք։ զի կինն որ արկ զերկուս լումայսն, դատապարտէ զմեզ։ Ոչ ինչ գոյ ցրտագոյն թէ քրիստոնեայն զայլս ոչ կեցուցանէ։ զի ո՞ ոք աղքատ քան զՊետրոս։ թէ ծառայ իցես, և Ոնեսիմոս։ թէ հիւանդոտ ես, և Տիմոթէոս։ մի պատճառեր մնոտիս։ զի որ զանձին ևեթ հոգայ, ոչ կարէ ասպրիլ։ Լուր զՀառս յիմար կուսիցն, և որ զարծաթն թագոյց։ զի ոչ վասն վատթար գործոց, այլ զի ոչ բարեգործեցին՝ դատապարտեցան։

ՃԱՌԻ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՔՅԵՆԵՐՈՐԴ

«Բ ԲՐԵՒ ԵԿԻՆ Սողոս յԵրուսաղէմ, ընդ ելանելոյ յաբել յաշակերտսն»։ Արժան է ասասանօր տարակուսել թէ զի՞արդ ասէ 'ի գաղատացւոց թղթին՝ թէ ոչ ելի յԵրուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին, այլ չոգայ յԱրաբիա և դարձեալ դարձայ 'ի Դամասկոս, և յետ երից ամաց ելի յԵրուսաղէմ տեսանել զՊետրոս։ Եւ ասասնօր կանխաւասէ՝ թէ ել յԵրուսաղէմ։ Եւ անդ ասէ՝ թէ զայլ ոք յառաքելոցն ոչ տեսի, բայց միայն զՅակոբոս. և ասէ՝ թէ Բառնաբաս ած զնա առ առաքեալսն։ Կամ զայս ասասցուք՝ թէ այժմ ոչ զուսանելոյ ինչ յառաքելոցն նշանակէ գնալով առնոսա, այլ զդարձն և զհաւատսն իւր ցուցանելոյ։ Եւ զի ետես զտէր և 'ի նմանէ կոչեցաւ, և ապա ոչ ինչ ընդերկարեալ անդ վասն հակառակութեան Հրէիցն, այլ գնացեալ անտի և մինչև յԵրիս ամս աւետարանեալ՝ ապա ելանէ յԵրուսաղէմ, միայն զի տեսցէ զՊետրոս. այլ ոչ եթէ ուսանել ինչ 'ի նմանէ, զոր և անդ զնոյն ասէ՝ թէ ոչ գնացի զի ուսայց ինչ կամ վերադրեալ եղէց։ Կամ թէ զայս ելանելս անդ ոչ ասէ, այլ թողու. որպէս զի լինել այսպէս, թէ գնացեալ յԱրաբիա՝ ապա եկն 'ի Դամասկոս, ապա յԵրուսաղէմ. կամ թէ որպէս բազում ուրեք համառօտեն պատմագիրք զբազում ժամանակս 'ի միասին ժողովելով։

«Այլ իբրև եկն, ասէ, ընդ ելանելոյ յաբել յաշակերտսն»։ Տես արդ զաշակերտն զՊաւղիկաս թէ որպէս ոչ է պատուասէր. զի և ոչ զտեսիլն զայն ահագին պատմէ մեզ յորժամ յափշտակեցաւ Պաւղոս և զանչառելիսն լուաւ, այլ թոյլ տայ։ Տես և զՊաւղոսի չափաւորութիւնն. զի իբրև եկն, ոչ առ առաքեալսն չգաւ, այլ փութայր առ աշակերտսն, ոչ անամօթաբար մատուցեալ, այլ պարկեշտաբար ամփոփեալ յաշա-

կերտացն օրինակին. զի աշակերտք ամենեքեան կո-
չեցեալ էին յայնժամ վասն բազում առաքինութեան.
և զի պատկերն և օրինակն յայտնի աշակերտաց էր,
որ յանուն վարդապետին խօսէին և գործէին զամ-
նայն ինչ։ Եւ որս փութայր, ասէ, յարել ցածութիւն
իբրև աշակերտ գոլով որ վարդապետն էր. և վասն
անակնուանելի իրացն տակաւին չէր կարծեցեալ հա-
ւատարիմ։

«Չէ ամենեքեան երկնչէին 'ի նմանէ»։ Տեսանէս
զիարդ տակաւին երկուցեալ լինէին 'ի վշտացն, գի-
տելով զյանդգնութիւն առնն. յայսմանէ ահարկութիւն
և եռանդնոտ սիրան Պաւղոսի յայտնի լինի։ Ոչ յԱ-
նանիայէ միայն կամ որոց 'ի Դամասկոս՝ սքանչա-
ցեալ էին ընդ նմա, այլ առաւել յայնցանէ որ յԵրու-
սաղէմ՝ զարհուրէին 'ի նմանէ. զի ոչ էր իրքն այն ըստ
մարդկային ակնկալութեան։

ԵՓՐ. Արդ իբրև 'ի Հրէիցն որ անդ էին՝ հալածա-
կան էր նա, և յաշակերտացն որ անդ էին չէր հաւա-
տալի նա, զի չհաւատային, ասէ, թէ իցէ աշակերտ,
յայնժամ Բառնաբաս՝ որ յԵրուսաղէմ էին՝ յամե-
նայն ընկերաց իւրոց մատեաւ կալաւ զձեռանէ նորա
և ած առ առաքեալսն։

ՈՍԿ. Ինձ թուի զի Բառնաբաս 'ի վերուստ 'ի վաղուց
բարեկամ էր նորա. վասն որոյ նմա և ոչ այլ ումեք 'ի
նոցանէ ասաց ինչ Պաւղոս զկուրոց իրաց. սմին վասն ոչ
նա յայլս վստահանայ, այլ ինքն առեալ ածէ զնա։
Եւ զի քաղցրաբարոյ էր Բառնաբաս, և 'ի Յովհան-
նու իրացն և Ղուկայ վկայելոյն յայտ է։ Վասն որոյ և
ոչ եղև երկուցեալ, զի այր փոյթ էր. այլ ած զնա առ
առաքեալսն։ «Եւ պատմեաց նոցա որպէս 'ի Ճանա-
պարհին ետես զտէր, և զի խօսեցաւ ընդ նմա, և զի
'ի Դամասկոս համարձակեցաւ յանունն Յիսուսի»։
Այսոքիւք Բառնաբաս կազմէ զնորա հաւատարմու-
թիւն. ուստի և դիւրահաւատ եղև առ նոսա Պաւղոս։

«Չէր ընդ նոսա մտանել և ելանել յԵրուսաղէմ,
համարձակեալ յանունն տեառն»։ Քանզի աշակերտքն
երկուցեալք էին 'ի նմանէ, և առաքեալքն չհաւա-
տային նմա, այսու լուծանէ զերկիւղ նոցա՝ համար-
ձակ քարոզելով զանունն Յի. որով և ամբն իսկ 'ի

տա վատահայեալ լինէին։ Եւ տես զփոյթ նորա և անդ 'ի Դամասկոս և աստ յԵրուսաղէմ զայլն նախախնամելով և պատրաստելով գալ 'ի հաւատս. և առ ժամայն 'ի սկզբանն ոչ միայն ՅԾային տեսչութիւնն մատակարարէր զաւէտարանն, այլ և իւրով փութով. որով և ցուցեալ իսկ եղև ուժգնութիւն նորա։ Զի որպէս ինձ թուի, ոչ ընդ երկարս ինչ առնել նմա Ճանապարհս ուրեք յետ կոչմանն, այլ փութով յԵրուսաղէմ հասեալ։ Եւ այս տնօրինաբար լինէր, զի նախ անդ քարոզեսցէ. ուրեմն և դաւաՃանութիւնն առնա 'ի Դամասկոս տնօրինաբար լինէր, որով և գայն նորա եղև յԵրուսաղէմ. զի այս ամենայն եղև և տակաւին թերահաւատէին վասն նորա, զի ոչ զոք այսոցիկ ակն ունէր։

Իսկ նա ոչ զանգիտէր և ոչ դադարէր 'ի քարոզելոյ. «Ա՛յլ խօսէր և վիՃեր ընդ Յոյնսն», որք յունական լեզուով խօսէին։ Եւ զայս առնէր յոյժ իմաստութիւն. զի բուն խօրին երբայեցիքն և ոչ տեսանել անգամ զնա կամէցան. զորս իբրև խռովեաց, նոքա խոկային սպանանել զնա։ Եւ այս ուժգնութիւն նորա է նշանակ և զօրաւոր յաղթութիւն, և նոցա յոյժ տրտմութիւն, վասն որ ինչ եղև նորին իրացն։ Ուստի և երկուցեալ աշակերտացն զի մի լինիցի այն ինչ որ առ Ստեփաննոսիւ, «Վասն որոյ իմացեալ, ասէ, եղբարքն իջուցին զնա 'ի Կեսարիա, և անտի առաքեցին զնա 'ի Տարսոն»։ Տես զի ոչ ՅամՀնարհիւ լինի. այլ թոյլ տայր նոցա ՅԾ բազում իրս տնօրինել իւրեանց իմաստութիւն մարդապէս. զի թէ յիւրում աւուրսն 'ի Յոի բազում ինչ այսպէս եղև, յոյժ մանաւանդ առ սոքօք զայս առնէ ՅԾ, զի լուծցէ զպատՃառս պղերգիցն։ Արդ փախուցին զնա մինչև 'ի Տարսոն իբրև յիւրում հայրենի գաւառ 'ի զգուշանալն նմա, միանգամայն և 'ի քարոզել նմա մինչև և 'ի հեռաւորսն։

«Այլ եկեղեցին ընդ ամ հրեաստան և 'ի Սամարիա և 'ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, շինեալ և երթեալ զհետ երկիւղի տեառն»։ Հանդերձեալ ասել, թէ իջեալ Պետրոս յԵրուսաղէմ շրջել առ ամենքումբք, զի մի առ երկիւղի զայս կարծիցես առնել Պետրոսի, յառաջադոյն ասէ զայս՝ թէ հրեաստան

ունէր զխաղաղութիւն։ Զի յորժամ սաստիկ հալա-
ծումն էր, յԵրուսաղէմ էր և նա և այլքն. իսկ յոր-
ժամ յամենայնի ամրացեալ և խաղաղացեալ եղեն ե-
կեղեցիքն, յայնժամ թողին զԵրուսաղէմ։ Արդ շըր-
ջեալ լինէր Պետրոս ուժգին զօրութիւն առ ամենեսին.
զի թէպէտ խաղաղութիւն ունէր եկեղեցին, այլ 'ի դէպ
կարծէր ոչ ինչ անկարօտանալ գալստեան նորա։

Գնաց Յերուսաղէմ Պաւղոս, և խաղաղութիւն էր
և ոչ էաս պատերազմ և ոչ խռովութիւն. քանզի 'ի
պետրոսեանց պատկառեալ լինէին. մանաւանդ իբ-
րև բազում անգամ և սքանչելիս արարեալ և ժա-
մանակաւ կացեալս առ նոսա։ Իսկ զՊաւղոս արհա-
մարհէին, այլ և մանաւանդ զայրացեալ լինէին նմա։
Տես որպիսի էր պատերազմն, և վաղվաղակի եղև խա-
ղաղութիւն։ Եւ հայեա թէ զինչ մեծագոյն շահ
արար մարտն այն որ առ Ստեփաննոսիւ յառաջնմէ.
քանզի սփռեաց ընդ գաւառս գաւառս զարարողն
խաղաղութիւն, 'ի Սամարիա՝ որով յամօթ եղև Սի-
մոն. որպէս եղև և 'ի Հրէաստանի իրքն Անանիայ և
Սափիրայ։ Այլ տես զմեծ ջերմութիւն փութոյ աշա-
կերտացն. զի թէպէտ խաղաղութիւն էր յոյժ, այլ
այսու զփոյթ քարոզութիւնն ոչ լքանէին։ Եւ այնպիսի
էր խաղաղութիւնն, որպէս զի մխիթարութիւն Հոգւոյն
սրբոյ լի առնէին զամենեսեան։ Քանզի Հոգին սուրբ
մխիթարէր զնոսա 'ի ձեռն սքանչելեացն և 'ի ձեռն
գործոցն. և 'ի վերայ այսոցիկ զիւրաքանչիւր ոք ըստ
ինքեան երկիւղիւն ՝այ։

«Այլ եղև 'ի շրջելն Պետրոսի առ ամենեքումքբ»։
Իբրև զօրավար երկնաւոր թագաւորին շրջեալ լինէր
'ի դիտաւորութիւն դասուցն եկեղեցւոյ, տեսանել թէ
ո՞ր մասն իցէ սպառազինեալ կամ ներկուռ և դիւ-
րեալ ըստ բարձրագոյն Ճանապարհին. կամ ո՞ր վայել
չագոյն և գեղեցիկ, կամ ո՞ր իցէ որ նորին գալստեանն
կարօտանայ։ Տեսանէս զփոյթն առ ՝ամն շրջելով։
Յառաջագոյն յորժամ պարտ էր ընտրել զառաքեալ-
սին, սա էր առաջին. և յորժամ հրապարակախօսել
առ Հրեայսն որք զնոսա արբեալս ասէին, սա դար-
ձեալ. յորժամ զկաղն բժշկել, յորժամ հանդիսա-
բանել յատենի և առ իշխանսն, սա էր յառաջադէմ

քան զայլսն. յորժամ առ Անանիայիւ, յորժամ 'ի սուտերէն ամ հիւանդութիւնք բժշկէին, սա էր։ Տես և յամի իսկ, ուր տագնապ լինէր նեղութիւն և տնօրէնութիւն խորհրդոց, սա էր։ Իսկ ուր խաղաղութիւն լի եղեն առ նոսա իրքն, նա հասարակաց առ ամենեսեան էր և ոչ պահանջէր առաւել պատիւ։ Արդ յորժամ սքանչելիս գործել պարտ էր, նա յառաջեալ լինէր. և աստանօր դարձեալ ապա սա լինէր աշխատեալ նախ և 'ի տառապանս հասեալ։

«Իջեալ լինի և առ սուրբսն որ բնակեալ էին 'ի Լիւդիա։ Տես զի ոչ միայն հաւատացեալք, այլ և սուրբք էին ամենեքեան։ «Եղիտ անդ այր մի, որում անուն էր Էնեա, ուրթամեայ դներ 'ի մահիճս անդամալոյծ»։ Եւ յառաջ քան զիսօսելն նորա կամ աղաչել ասէ ցնա. «Էնեա, բժշկէ զքեզ տէր Յն. արի և քեզէն թօթափեա զանկողինս քո»։ Իսկ նա բանիս այսմիկ հաւատացեալ՝ եղև առողջացեալ, և վաղվաղակի յարեաւ։ Ընդէր ոչ սպասեաց Պետրոս հաւատալոյ առնն, և ոչ եհարց թէ կամիցի բժշկել։ Այսուրեալապէս. քանզի մանաւանդ առ 'ի բազմաց փրկութիւն և 'ի մխիթարութիւն եղեն սքանչելիքս զամենեսեան ածելով 'ի հաւատս։ Եւ լուր իսկ թէ որչափ շահ եղև։

«Տեսին զնա, ասէ, ամենեքեան որ բնակեալ էին 'ի Լիւդիա և 'ի Սարոնա, որք և դարձան իսկ 'ի տէր». քանզի նշանաւոր էր այրն և ամենեցուն ծանօթ։ Բայց տես և զառաւելութիւնն. զի ոչ 'ի ցաւոցն միայն ազատեին, այլ և զառողջութիւն շնորհէին և զզօրութիւն։ Եւ քանզի անդ ցայն ժամ ոչ էր տուեալ զարուեստս զօրութեանն, յերուսալիս ոչ պահանջէր հաւատս. որպէս և ոչ կաղն պահանջեցաւ յերուսաղէմ։ Եւ զի որպէս Քրիստոս 'ի սկիզբն նշանացն ոչ պահանջէր հաւատս յումեքէ, նոյնպէս և ոչ սոքա, և յերուսաղէմ յետ սքանչելեացն զվիրձ առնլոյն։ Այսուրեալապէս մատուցելոյն հաւատքն յառաջագոյն ցուցեալ լինէր. զի ասէ իսկ՝ թէ «Յանցս Ճանապարհաց դնէին զհիւանդս, զի յանցանելն Պետրոսի գոնէ հովանի նորա հասցէ ումեք 'ի նոցանէ»։ Եւ զայս առնէին, զի անդանօր յերուսաղէմ բազում նշանք եղեն. բայց ասա առաջին այս հանդիպեցաւ. քանզի 'ի նշանաց ումանք

վասն զայլս առ ինքեանս 'ի հաւատս կորզելոյ լինէին, և ոմանք վասն հաւատացեալոյն մխիթարութեան. որպէս և հետագայ կարգ պատմութեանս իսկ յայտ առնէ։

«Լու 'ի Յոպպէ էր կին ոմն աշակերտեալ, անուն Տաբիթա, որ թարգմանեալ կոչի այծեամիկ»։ Ոչ վայրապար ուսուցանէ մեզ Ղուկաս զանուն կնոջն, այլ զի ցուցցէ՝ թէ բերան ունէր, և աչս այնպէս ունէր սրահայեացս և զարթուցեալս որպէս այծեամն։ Քանզի բազումանուանք տնօրինաբար եղեալ լինէին, որպէս բազումանգամ ասացաք ձեզ։ «Սա էր լի բարեաւք գործովք». ոչ միայն ողորմածութիւն, այլ և բարի գործովք յառաջագոյն, և ապա ողորմածութիւն էր զարդարեալ։

«Լու եղև յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նորա և մեռանել»։ Ոչ յանկարծակի մեռաւ, այլ հիւանդացաւ. և ոչ կոչեցին զՊետրոս մինչև վախճանեցաւ։ Ոչ կոծ էր անդանօր և ոչ ողբք. զի տես որպէս մաքուր պատմէ մեզ զիրսն։ «Լուացին զնա, ասէ, և եդին 'ի վերնատանն». այսինքն զոր ինչ օրէն է մեռելոյ, արարին զնա՝, և ապա առաքեցին։

«Լու էր մերձ Լիւդիա 'ի Յոպպէ. աշակերտացն լուեալ թէ Պետրոս անդ է, առաքեցին երկուս արս առ նա. աղաչեցին զի մի դանդաղեսցի գալ առ նոսա»։ Ընդէր սպասեցին մեռանելոյն, և ոչ յառաջքան զմահն աղաչեցին զՊետրոս։ Զի անարժան վարկանէին յաղագս այնպիսի իրաց աշխատ առնել զաշակերտսն, և հատուած տալ քարոզութեան. վասն այսորիկ իսկ և ասէ՝ թէ մերձ է Լիւդիա 'ի Յոպպէ. զի իբրև վարկպարազի ինչ զիրսն խնդրէին, և ոչ նախահոգութեամբ. զի վախճանեալ կինն աշակերտուհի էր։

«Լու յարուցեալ Պետրոս եկն առ նոսա»։ Տեսանէս զի զայլս առաքելով կոչէն, և նա եկեալ եղև. ոչ անարգանս համարեցաւ զկոչէն 'ի ձեռն երկուց արանց։ Ահա՝ խոսիսի դիւրահաւանք և խոնարհք եղիցուք և մեք, մեծ վարդապետութիւն դիտելով զնեղութիւն։ «Եւ իբրև եկն, հանին զնա 'ի վերնատունն»։ Ոչ աղաչեցին, այլ պարզաբար յորդորեցին. զի զփրկութիւն

'ի մահուանէն նմա շնորհեսցէ։ Եւ 'ի տուն մտեալ լինէր Պետրոս իբրու իմաստասիրելով յիրսն։ Եւ տես ապա որպիսի օրինակաւ և որչափ ահաւոր եղև ապաշանացն։ «Կացին, ասէ, շուրջ զնովաւ այրիքն ամ. լայ-ին և ցուցանէին զձորձս և զհանդերձս որչափ առնէր նոցա այծեմնիկն։ Տես զողորմածութիւն նորա, որչափ և որպիսի իրի լինի յորդորիչ։ Ցուցանէին, ասէ, Պետրոսի շուրջ զնովաւ եկեալք, զի բաղում էր խոնարհութիւն նորա. և ոչ որպէս մեք, այլ հաւասարաբար կայր ընդ ամենեսեան։

«Եւ հանեալ արտաքս զնոսն Պետրոսի, եդ ծունր, եկաց յաղօթս։» Եւ ընդէր հանէր արտաքս։ Զպտուղն բարեաց առ ցոյցս ոչ առնելով, նմանելով 'ի ձեռն այսորիկ իւրում վարդապետին։ Դա զի և լային իսկ, զի մի շփոթումն և զբաղումն արասցեն արտասուս հեղլով և խռովելով. զի ուր աքանչելիք իցեն, ոչ է պարտ խռովել ողբովք, մանաւանդ ուր այսպիսի խորհուրդ լինի կատարել։ «Եդ ծունր եկաց յաղօթս։» Դախ ջերմութիւն և խոնարհութեամբ զաղօթսն տարածեալ, «Դարձաւ 'ի մարմինն և ասէ. Տարիթա, արի կաց յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ նա եբաց զաչս իւր. և տեսեալ զՊետրոս, նստաւ կանգուն։ Աստի ուսանիմք՝ թէ ոչ զամ նշանսն այնպէս դիւրութիւն արարեալ լինէին։ Եւ այս լինէր վասն նոցին շահու. զի ոչ միայն այլոց փրկութիւն, այլ և նոցա փոյթ ունէր ուծ։ Զի ահա որոյ ստուերն զայնչափ բիւրսն բժշկէր յերուսաղէմ, այժմ որպէս ոչ երբէք արարեալ այնպիսի ինչ առնէր։ Այլ է ուրեք, զի և հաւատք մատուցելոցն գործակից լինի։

Օ այս առաջին մեռեալ յարուցանէ Պետրոս։ Եւ տես որպէս զնա իբրև 'ի քնոյ զարթուցանէ, զոր մանրամասն պատմէ առ սակաւ սակաւ. նախ զկեանս տրեալ նմա, որով և զաչսն եբաց. ապա տեսեալ զնա նստաւ կանգուն։ Զայսոսիկ բանիւ։ Եւ ապա շօշափմամբ ձեռին զնախկին զօրութիւն ընձեռեալ։ «Ձեռն ետ նմա և յարոյց զնա. կոչեաց զորբսն և զայրիսն. առաջի կացոյց զնա կենդանի։» Որբոցն 'ի միութարութիւն, զի աւին դարձեալ զքոյրն կենդանի, զի և զմեծ աքանչելիսն տեսին. և այրեացն 'ի պաշտպանութիւն տածողութիւն

«Այս յայտնի եղև այս ընդ ամ Յոպպէ. և հաւատացին բազումք 'ի տէր»։ Տես յամ տեղիս լինելով զնշանն, և զամն ածելով 'ի հաւատս։ «Եւ եղև աւուրս բազումս լինել նմա 'ի Յոպպէ առ ումեմն Սիմոնի խաղախորդի»։ Տես զխոնարհամտութիւն և զհեզութիւն Պետրոսի. զի ոչ առ յարուցեալ կնոջն ագանի, և ոչ առ այլ ոք 'ի նշանաւորաց. այլ առ մշակի ումեմն մորթեգործի, որ ազգաւ և արուեստիւ ուներ զաղքատութիւն. 'ի ձեռն ամի 'ի խոնարհութիւն ածելով զմեզ և զնոսա։ Ոչ զնուաստագոյնսն յամոթ արարեալ, և ոչ զմեծագոյնսն բարձրացուցեալ հրպարտութիւն։ Խակ աւուրս բազումս լինել անդ, զի կարօտանային վարդապետութեան նորա՝ որք նշանաքն հաւատացին։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Բ.ԱԼ լուարուք աղաւեմ, և մի անօգուտ և վնասակար կոծս և ողբս յարուցանէք 'ի վերայ ննջեցելոց։ Աստ ինձ, զի թէ մինչ մեք նստեալ իցեմք, և առաքեսցէ թագաւորն և կոչեսցէ զոք 'ի մէնջ առ ինքն, լա՞լ պարտ է զնա։ Ի բաց տար. քանի՞ ևս առաւել այս կոչումն է ահագին և սարսափելի, և օրհնութեաց և երգոց արժանաւոր։ Զի իբրև զարեգակն մաքուր պայծառութիւն հոգին թողեալ զմարմինն իբրև յասպարիսէ իմեմնէ փութացեալ լինի առ տէր. մանաւանդ նորակնիքն և անմեղութիւն քաղաքավարեալքն, զորս չէ պարտ սգալ, որպէս և ոչ զծնեալսն. զի և այս ծնունդ է քան զայնն լաւագոյն, առ այլոմն լոյս յառաջ եկեալ։ Աստ թէ զմեզ զնացեալսն ողբացեսս, առաւել ևս ես արտասուեցից։ Զի թէ ոք քսան ամ 'ի մնոտիս վաստակէր՝ ողբայր, քանի՞ ևս ողբոց արժանի՝ որ զամենայն կեանս 'ի մնոտիս ծախեաց։ Ա՞յլ թէ կամիմք, կարեմք զայնպիսին 'ի վշտայն 'ի բաց յափշտակել, աղօթս վասն նորա և ողորմութիւս առնելով. շուրջ կացուսցուք զայրիս պաղատանս առնել վասն նոցա և հաշտեցուցանել զա՞ծ. զի վասն նոցին աղաչանաց և Պետրոս յարոյց զՏաբիթայն։ Ի սոյն և մեք վստահացուք 'ի Տէրս ա՞յ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

«ԱՅՐ մի էր 'ի Կեսարիա, անուն Կուռնելիոս, հարիւրապետ 'ի գնդէն՝ որ կոչէր իտալացի. բարեպաշտոն և երկիւղած յայ» ։ Աչքս այս ոչ էր հրեայ և ոչ յայնցանէ՝ որ ընդ օրինաւքն էին. այլ նախ ընկալեալ էր զմերս բարեպաշտութիւն ։ Եւ տես աստանօր երկուս հաւատացեալս 'ի հեթանոսաց նմանս միմեանց, զնեքքինին որ վերակացուն էր գանձուցն, և զԿուռնելիոս. զերկաքանչիւրս յիշխանութիւն գոլով։ Եւ զիտեա զաւգում փոյթին՝ որ լինէր վասն սոցա. և զայն ոչ թէ վասն իշխանութեանցն, 'ի բաց տար, այլ բարեգործութեանցն. զի վասն այսորիկ իսկ և զիշխանութիւնս նոցա եդ Աստուած, անդ շտեմարանապետ և ատ հարիւրապետս, զի զարմանալի և մեծ ցուցեալ լիցի նոցա բարեգործութիւն ։ Զի աքանչելի այն է, յորժամ 'ի Հոխութիւն և 'ի զօրեղութիւն ոք իցէ և այսպիսի լինիցի. զի այն իսկ էր նեբբինուցն գովութիւն, զի Հանապազ հոգդեղով յայնչափ հեռաւորութիւն և ժամուն անՀահ գոլով այնմ և կաւօք լինելով բերեալ՝ գիրս ընթեռնոյր և զՓիլիպպոս աղաչէր մեկնել, և այլն որ զմնի ։ Մեծ էր և սորայս իսկ ողորմութիւն առնելն և աղօթս Հանապազ, և արդար և սուրբ լինել յայնպիսի իշխանութիւն ։ Վասն այնորիկ զայրն ծանօթ և յայտնի առնէ, զի մի ոք կարծեսցէ թէ ստէ պատմութիւնս ։ Ածեղէն գրոց ։

Այս տես ուստի լինի սկիզբն կոչման հեթանոսաց. յառնէ բարեպաշտէ և արժանի ։ Երևեցելոյ 'ի գործոց իւրոց ։ Զի թէ այս ամենայն եղև և տակաւին գայթակղեին Հրեայքն խղՃելով 'ի Պետրոսէ, եթէ չէր այսպէս եղեալ՝ զինչ ոչ լինէր։ Քանզի նշանաւոր էր այրն և 'ի նշանաւոր քաղաքի բնակեալ. այլ և 'ի Հրեաստանէ իբրն սկիզբն առեալ լինի և անտի յամենայն հեթանոսս տարածեալ։

«Յ գնդէն՝ որ կոչէր իտալական»։ Եւ է գունդս այս զոր այժմիկ նուամերուին կոչեն. այսինքն է թիւ դասուն թէ։ «Բարեպաշտոն էր, ասէ, և երկիւղած յոյ»։ Դնէ ըստ կարգի զբարեգործութիւնսոցա, զի մի կարծիցես վասն իշխանութեան լինել փութոյն զնմանէ։ Լուարուք որք 'ի զինուորութենէ և մնասակաց թագաւորաց։ «Բարեպաշտ էր, ասէ, և արդար և երկիւղած յոյ»։ Ա յլ թերևս ասիցէ որ, թէ հեթանոսք գոլով՝ սորա և ներքինեայն՝ ուստի ընկալան զգէմարիտ ածն պաշտել և երկնչել 'ի նմանէ։ Ասեմ. կամ զենական գիտութիւն ունէին ամբողջ՝ որ բաւական էր արարածովքս զարարիչն քարոզել, կամ 'ի ժամանակաց անտի սքանչելեացն՝ որ 'ի ձեռն Մովսէսի յԵգիպտոս և յառաջ, 'ի յաճախս զարմանալեացն յայտնի եղև համբաւ հրաշիցն այ, որում և պաշտօն նուիրէին սոքա։ Եւ որ մեծագոյն է սորայս, զի ոչ ինքն ևեթ գոլով ածապաշտ, այլ ամենայն տամբն իւրով։ Ոչ որպէս մեք որ յայն փութամք միայն, զի պաշտօնեաքն մեր ահիւ և երկիւղիւ զամենայն ինչ մեզ առնիցեն. իսկ զի և բարեպաշտք ևս իցեն՝ պըղերգանամք. և զայս ոչ միայն վասն ծառայիցն, այլ և վասն տանց մերոց փրկութեան. այլ նա ամենայն տամբն էր արդար, և որպէս հայր հասարակաց հոգայր ընդ ամենեցուն, և զինուորացն ևս առնէր փոյթ լինել բարեպաշտս։

«Յ ողորմութիս բազումն առնէր 'ի ժողովրդեանն»։ Դարձեալ և աստ ողորմածութիւն գովութիւն, որպէս և անդ վասն Տարիթայն. որով և սա զկեանս իւր ուղղեալ լինէր։ «Եւ յաղօթս կայր, ասէ, առ ածն յամենայն ժամ»։ Եւ ոչ կարէր վրիպել զնա յածային գործոց աղօթիցն ցնորք աշխարհականք. յայտ է զի մեծ և բազում էր փոյթ նորա 'ի պարապումն աղօթից։

«Յտես 'ի տեսլեան յայտնապէս յիններորդ ժամու աւուրն զհրեշտակ այ՝ զի մտանէր առ նա և ասէր. Կոռնելիէ։ Եւ նա հայեցեալ ընդ նա զարհուրեցաւ և ասէ՝ զի՞ է տէր. և ասէ ցնա. աղօթք քո և ողորմութիք ելին յիշատակաւ առաջի այ»։ Ընդէր տեսանէր զհրեշտակն։ Ա՛ 'ի ստուգութի Պետրոսի.

և մանաւանդ ոչ վասն նորա միայն, այլ և վասն այլոց տկարագունից։ Եւ ոչ ընդ քուն երեւինմա հրեշտակն, այլ յարթնուելոյ ի տուէ լինելոցդ ժամու։ քանզի և այնպէս էր այրն զգուշացեալ միշտ անձին իւրում. մանաւանդ յայնմ ժամու պարապեալ լինէր ի ցնորից, և էր ի հանդարտութեան և յաղօթս և ի զղջման։

«Եւ կոչեաց զնա հրեշտակն և ասէ. Կուռնելիէ։ Եւ նորա հայեցեալ ի նա զարհուրեցաւ ընդ տեսիլն»։ Յայտ առնէ՝ թէ նախ ձայնիւ կոչեաց զնա, և այնպէս ապա ետես. զի թէ չէր կոչեցեալ, ոչ տեսանէր թերեւս։ «Եւ ասէ ցնա. աղօթք քո և ողորմութիւնք ելին յիշատակաւ առաջի ՀՍ»։ Քանզի այսպէս ամենեքեան յամենեսեան տարածեալ էր համբաւ բարեաց նորա։ Իսկ զի՞նչ այն՝ թէ ելին յիշատակք. այսինքն ելին յիշեցան առաջի ՀՍ. քանզի յիշատակին առաջի ՀՍ զոծք ամենեցուն։ ոմանց յիշեսցին մեղք հարց նորա առաջի տեառն, որպէս մեծն Բաբիլոն յիշեցաւ, ասէ, առաջի ՀՍ տալ նմա զբաժակ ցասմանն ՀՍ. և ոմանց յիշի գնալն առաջի ՀՍ արդարութեամբ, որպէս Եզեկիայն։ Եւ այս ի ձեռն հրեշտակաց՝ որք հանեն մատուցանեն առաջի ՀՍ զաղօթս սրբոցն. որպէս Ռափայէլ ցՏուբիթ ասէր. «Մատուցի զյիշատակ աղօթիցդն ձերոց առաջի սրբոյն»։

Զարդ երևեալ հրեշտակն ոչ վաղվաղակի ասաց Կուռնելիու զոր ինչ ասելոցն էր. այլ նախ վերացոյց առաւծ զմիտս նորա, զի տեսլեամբն իւրով յերկիւղ արկ զնա. այլ չափաւորեր զերկիւղն որչափ զհայցուածս նորա առ ինքն դարձուցանել միայն. և ապա ասացելովքն զերկիւղն եղոյծ և գովութիւն ի համարձակութիւն ածէ, և ապա ասէ. «Յղեա՛ի Յոպպէ արս և կոչեա զՍիմոն՝ որ կոչի Պետրոս»։ Զայս ասաց զի մի առ այլ ոք երթիցեն. բայց ոչ ի մականուանէն միայն, այլ և ի տեղւոյն յայտնի առնէր զայրն։

«Զա մնեալ է, ասէ, առ Սիմոնի ուսմանն մշակի, որոյ է տունն մերձ ի ծով»։ Տեսանէք թէ որպէս զառանձին տեղեաց քաղաքացն առաքեալքն զՀետ երթային, սիրողք անապատի գոլով և հանդարտութեան։ Ալ զի՞նչդ արդեօք՝ թէ պատահեալ լինէր և այլոց ուրուք Սիմոնի լինել խաղախորդի. ահաւասիկ տայ

և այլ նշան զառ 'ի Ծովուն բնակէն. քանզի այլոց ուրուք ոչ էր հնար երից նշանացն 'ի միասին լինել։ «Արդ կոչեա» ասէ. և ոչ յաւել զքաղցրագոյնն թէ ընդէր, զի մի նորին փափաքն լցեալ լքանիցի. այլ թոյլ ետ նմա 'ի ցանկութիւն սիրոյ և 'ի կարօտութիւն լսողութեան լինել։ Այսպէս և ոչ Պետրոսի ասաց զամենայն զնորայսն. այլ յամենայնի 'ի մասնէ լինին պատմութիւնքն առ նոսա, որպէս զի յարուցանիցէ զլսողսն 'ի խնդիր իրացն։ Այսպէս և զԳիլիպպոս կոչէ միայն յանապատն։

«Եւ իբրև գնաց հրեշտակն որ խօսէր ընդ նմա, կոչեաց յերկուս 'ի Ծառայիցն և զինուոր մի բարեպաշտօն 'ի սպասաւորացն իւրոց. և պատմեալ նոցա զամենայն առաքեաց զնոսա 'ի Յոպպէ»։ Տեսանէս, զի ոչ վայրապար ասէ զայսոսիկ. այլ զի ցուցցէ մեզ՝ թէ որ պաշտէին զնա, այնպիսիք էին։ Այլ տես զխոնարհամտութիւն նորա. զի ոչ ասաց՝ թէ կոչեցէք առ իս զՊետրոս, այլ զամենայն ինչ պատմեաց նոցա. որպէս զի նոքա հաւանեցուսցեն զնա։ Եւ զայս իմաստութիւն և տնօրինաբար առնէ, զի ոչ պարտ և արժան համարի իշխանութիւն ածել զնա։ Սմին վասն զամենայն ինչ պատմէր, զի այնպէս էր այրն չափաւոր. և զի մանաւանդ ոչ ինչ էր մեծ չփանալ 'ի վերայ առն՝ որ ինքն վանեալ էր առ մշակի։

«Եւ 'ի վաղիւ անդր 'ի Ճանապարհ անկեալ նոցա և մօտ 'ի քաղաքն լինել»։ Վայելչապէս. ընդ մօտեն նոցա յայնժամ Պետրոս զտեսիլն տեսանէր, զի մի ընդ երկար 'ի տարակուսանս կացցէ։ «Եկ, ասէ, Պետրոս 'ի տանիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն»։ Տես թէ օրպէս և զժամն իսկ ստուգիւ հաւաքեալ յօրինէ Հոգին, և ոչ կանուխ քան զայն և ոչ անագան թողացուցանէ լինել. այլ յորում ժամու և զամարուհին Փ՞ կոչեաց յանստուերս և յամենաՀառագայթ ժամուն առ 'ի խորհուրդ նորոյ փրկութեան, որ կատարելոց էր առ ազգս ամենայն։ Իսկ 'ի տանիս ելանէն, զի աւանձինն և հանդարտութիւն լինիցի իբրև 'ի վերնատանն։ «Քաղցեաւ և կամէր Ճաշակել»։ Տես զի և ոչ քաղցնուն յաղօթիցն կասեցոյց ինչ զնա։ «Եւ 'ի պատրաստելն նոցա եղև 'ի վերայ նորա զարմացու-

մին. և տեսանէ զերկինս բացեալ»։ Եւ այս մանաւանդ հոգեպէս եղև առնմա տեսութիւն. և որպէս ասիցէ զի՝ թէ 'ի մարմնոյն հոգին վերացեալ եղև, որով տեսանէ զերկինս բացեալ։

ԵՓՐ. «Այլ զչորեցունց տանոց կախեալ անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի ի ջեալ նստեալ 'ի վերայ երկրի. յորում էր ամենայն չորքոտանիք և սողունք երկրի և թռչունք երկնից»։ Զինչ արդեօք էր այս։ Նշանակ էր այն ամենայն տիեզերաց կոչման։ Եւ քանզի առաքեաց առ Պետրոս զկուռնելիոս 'ի հեթանոսաց, 'ի ձեռն տեսլեանն որ եղև 'ի վերայ նորա՝ յորդորեաց զի մի անարգեսցէ Շմաւոն և ոչ երթիցէ, մանաւանդ վասն այլոց ևս Հրէիցն զորոց յետոյ պատմելոց է։

ՈՍԿ. Զանգի այլն անթլփատ էր և ոչ ինչ հաղորդութիւն ունէր ընդ Հրէից. և հանդերձեալ էին ամենեքեան չարախօսել զՊետրոս իբրև զյանցաւոր օրինացն, երևեցաւ նմա 'ի տեսլեան անօթ մի իբրև ըզկտաւ ինչ մեծ զչորեցունց տանոց կախեալ յերկնից և 'ի նմա չորքոտանիք սուրբք և անսուրբք։

ԵՓՐ. Զդ կտաւն երևեալ Պետրոսի՝ էր խորհուրդ աւետարանին, զանազան կենդանեօքն զամենայն ազգս զանազան պաշտամամբք լինելոն պարունակեալ։

ՈՍԿ. Այլ այլ ազգ. կտաւն երկիր էր, և որ 'ի նմա էին գազանքն՝ հեթանոսք. 'ի վերուստ կախեալն՝ զի յայ եղեալ են ամենեքեան. իսկ զանազան ազգք անբան կենդանեացն՝ զի բարձրագոյն բարս և զվարս նշանակէր. զի զբանական միտս զոր առին, յանբանութիւն շրջեցին։ «Եւ եղև ձայն առ նա. արի, Պետրոս, զեն և կեր»։ Արի, ասէ. թերևս 'ի ծունր իջեալ եսես զտեսիլն։ «Զեն և կեր»։ Ճահողապէս ասացաւ զեն և կեր. զի 'ի վերայ հասանելն կտաւուն 'ի նմին իսկ 'ի ժամ քաղցոյն եղև։ Վասն քարոզութեանն այսպէս յօրինեալ. զի որ ինչ լինէրն, ՝ծածկեալն էր։ «Զեն, ասէ, և կեր». այսինքն թէ զնոսա ևս որպէս զՀրեայս պարտ է քեզ յանձն առնուլ, և յանպիտանութիւն առնել պիտանիս և կերակրողականս։

«Այլ Պետրոս ասէ. քաւ լիցի, տէր. զի ոչ երբեք կերայ խառնակ ինչ և անսուրբ»։ Բազում ասա երևի յանդգնութիւն Պետրոսի թէ ընդէր եղև՝՝ այ ընդդի-

մախսոս։ Ա՛յլ զայս առնէր Հոգին, զի մի՞ որ ասիցէ թէ փորձէր զնա ՚ի՞ն որպէս զԱբրահամն։ Վասն այսորիկ Պետրոս խօսեցաւ զայս, և ոչ ընդդիմախօս լինելով. զի ոչ վասն ինքեան՝ որպէս կանխաւ ասացի՝ այս ամենայն եղև, այլ նոցա էր ընդդիմակայ՝ որ ՚ի նմանէ խղճելոցն էին։ Եւ տես թէ զիարդ լինի տնօրինեալ։ «Ոչ երբէք կերեալ եմ, ասէ, այդպիսի ինչ». զի ուՆիցի պատասխանի առ ամբաստանողն՝ նախ զտեսիլն, և ապա զի ընդդէմ խօսեցաւ։ Եւ ոչ է աբանելի. զի թէ Պաւղոս յետ այնորիկ անագան ուրեմն թլփատուԹՇ և զենման կարօտացաւ վասն նոցա, առաւել յայնժամ ՚ի սկզբան քարոզուԹՇն պէտք էին այնպիսի տնօրէնուԹՇ մինչ դեռ և տկարագոյնք էին և առհրէական ջերմք։ Եւ քանզի ՚ի հեԹանոսս առաքեալ լինէր, զի մի՞ կարծիք ինչ տեսիլն Թուլցի, և չարախօսեսցեն զնմանէ, քաւ լիցի ասաց։ «Զայն եղև առ նա կրկին անգամ. զոր ՚ի՞ն սրբեաց, դու մի՞ պիղծ համարիր»։ Եւ Թուի այս ընդ նմա գոլ ասացեալ. բայց ամենեին վասն Հրէիցն ասացաւ. զի Թէ գլխաւորն և վարդապետն բանադրեալ եղև, զի մի՞ զայն այլ ասիցէ, յոյժ մանաւանդ և նոքա։ «Այս եղև երիցս, և վերացաւ անօԹն յերկինս»։ Արդ երիցս կրկնեցն՝ Թէ զոր ՚ի՞ն սրբեաց, դու մի՞ խառնակ համարիր, մկրտուԹՇ կոչումն և դաւանուԹՇ երրորդուԹեան է։

ՆԻՒՍ. Ո՞՛՛՛

բակուսութիւն. քանզի և զՅովսէփ վասն Մարիամու թողացոյց Քեզ, զի եղիցի զարհուրեալ. և ասպա առաքեաց զՀրեշտակն, զի դիւրաւ այնուհետև 'ի հոգին ընկալցի զիրացն պատասխանին յառաջագոյն գոլով 'ի տարակուսանս։ Բայց Պետրոսի ոչ ընդ երկար լինի տարակուսութիւն, զի 'ի նմին իսկ ժամու հարցանէին թէ ասա Պետրոս մտեալ իցէ։

« Այլ մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա. ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ. այլ արի էջ և երթ ընդ նոսա առանց իրիք խղձելոյ, զի ես առաքեցի զնոսա »։ Դարձեալ և այս իսկ պատասխանի է Պետրոսի առ աշակերտսն, զի իմասցին՝ թէ տարակուսեալ եղև և խրատեցաւ յայ առանց խղձի լինել։ « Ես առաքեցի » ասէ։ Բազում և մեծ է իշխանութիւն Հոգւոյն. զի զոր ինչ ածի Հայր առնել, զայն իսկ ասացեալ լինի թէ Հոգին արար։ Իսկ հրեշտակն ոչ այսպէս, այլ յառաջագոյն ասաց « Աղօթք քո և ողորմութիւք ելին առաջի այ ». զի ցուցցէ՝ թէ անդուստ էր առաքեալ։ Այլ Հոգին ոչ այսպէս, այլ թէ ես առաքեցի զնոսա։ Տեսանես զմիակամ զմիապատիւ բնութիւն Հոգւոյն զիշխանութիւն։

« Այ իբրև էջ Պետրոս առ նոսա, ասէ. ահաւասիկ ես եմ զոր խնդրէքն »։ Այսպէս պարտ է հաւանել Հոգւոյն, պարտս և հաւաստիս ոչ պահանջելով. շատ է առ 'ի նմանէ լսելն միայն թէ զայս ինչ արա և այսմ հաւատա. ամենայնին հաւատալ և այլ ինչ աւելի ոչ խնդրել։ Իսկ Պետրոս տեսանէ զզինուորսն յորժամ էջ և ոչ զարհուրեցաւ. այլ յառաջագոյն խոստովան եղև թէ նա ինքն է զոր խնդրեն։ Այսպա և հարցանէ իսկ զպատճառն. « Զի՞նչ իրք են վասն որոյ եկիքդ». իբրու կամեցեալ զկամն իւր թագուցանել մինչև նոքա ասասցեն զպատճառս կոչմանն։

« Կուռնելիոս, ասեն, հարիւրապետ այր արդար և երկիւղած վկայեալ յամենայն ազգէն Հրէից, հրամայեաց 'ի հրեշտակէ սրբոյ կոչել զքեզ 'ի տուն իւր և լսել բանս 'ի քէն»։ Ասեն զլաւութիւն առնն զի հաւանեցուցցեն թէ հրեշտակ երևեցաւ նմա։ Այլ տես, ասեն, և դու, զի արդար և երկիւղած է։ Յաւելին և զայս՝ թէ վկայեալ յամենայն ազգէն Հրէ-

ից։ Եւ զնմանդ՝ զի նա անելիատ էր, նոքա վկայէին նմա։ Զի ոչ ինչ է ողորմութիւն հաւասար. մեծ է սորայս զօրութիւն, յորժամ 'ի մնքուր և յարդար շնորհաց հեղեալ լինի. որպէս և սորայն առատաբար լինէր 'ի ժողովրդեանն. որով և վկայեալ լինէր 'ի բարեկրեալոցն։ Տես որչափ է ողորմութիւն զօրութիւն, որ զՏաբիթայն և յառաջմայն մահուանէն ազատեաց, և զսա 'ի յաւիտենականէն, և զդրուհս երկնից եբաց. և այնչափ փոյթ արար հաւատալ Կուռնելիոս, և հրեշտակ երևեցաւ, և Հոգին ներգործեաց, և գլուխ առաքելոցն կոչեցաւ, և տեսիլ այնպիսի երևեցաւ։ Որչափ էին այլք ոմանք հարիւրապետք և թագաւորք, և ոչ մի ոք հանդիպեցաւ որոց սա եղև հանդիպեալ։

«Կոչեաց զնոսա 'ի ներքս և առ իւր ագոյց»։ Զի թէ վաղվաղակի փութացեալ էր ընդ նոսա 'ի Ճանապարհ ելանել, ապա ոչ ժամանէր հիւրընկալութիւն առ իւր ագուցանել։ Այլ զայս առնէր, զի ուսանիցիմք թէ վասն այնչափ սաստիկ հրէական զգուշութեան որ յառաջագոյն՝ այժմ ոչ ինչ հոգայ, կամ դժուարինս համարի ընդ նոսա խառնիլ. այլ 'ի ներքս ածեալ և հիւրընկալեալ այնուհետև համարձակութիւն նոցա սնակից լինի և հետևող։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Այլ դարձեալ հայեաց, զի մեծ է շահ ողորմութեան յորժամ յիրաւացի շահից իցէ. որպէս աղբիւր յստակ և ցուրտ և բարեհամ հեշտալի է 'ի տօթ ժամու։ Այս աղբիւր խաղայ 'ի կեանսն յաւիտենից. սա զգէտն հրոյ շիջուցանէ, զորդն անքուն մեռուցանէ. որ զառուն, ոչ պապակի 'ի տապոյ գեհենին։ Այլ մի առ այս աղբիւր փիճիք և ցրդիք և նոճիք անկեսցուք. զի այսպիսին անպտուղ է, աւելորդ խրախութիւնք և հանդերձից փափկութիւնք 'ի տեսանել միայն պատրիչք հեշտասէր աչաց անօգուտք և ֆնասակարք։ Այլ անկեսցուք ծառս քաջապտուղս 'ի ձեռս աղքատաց. որոց ոչ ըստ երկրաւոր ծառոց վրիպակք պատահէն, այլ մանաւանդ յետ մահու տացէ քեզ պտուղ զկեանսն յաւիտենից։

ՃԱՌԻ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԻՈՐԴ

«Այլ 'ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս զնաց ընդ նոսա. և ոմանք յեղբարց անտի որ 'ի Յոպպէ էին՝ եկին ընդ նմա, և 'ի վաղիւ անդր մտին 'ի Կեսարիա»։ Բարիոք յառաջագոյն պատուասիրեալ զարմն իբրև զվաստակեալս և իւր ընտանեցուցեալ զայր ընդ նոսա 'ի կոչն։ Իսկ այլոց եղբարցն գալ ընդ նմա անօրինաբար եղև, որպէս զի վկայք լինիցին յետ այնորիկ յորժամ պարտ իցէ պատասխանատրել Պետրոսի։ «Եւ Կուռնելիոս մնայր նոցա»։ Տես թէ որպէս հաւատայ թէ ստոյգ եկեսցէ Պետրոս. վասն որոյ և զնամ ինչ պատրաստ առնէր՝ մնալով նմա. այնպէս փոյթ էր այրն յամ բարիս։ «Կոչեալ և զազգատոհմն իւր և զկարևոր բարեկամսն»։ Այս իսկ գործ է բարեկամի ճշմարտի, զի առ այնպիսի բարութիւնս հաղորդս արասցէ զկարևոր բարեկամս։ Վայելչապէս զնոսա միայն՝ յորս վստահացեալն էր հանապազ յաղագս այսպիսի իրաց գոլով նմա փոյթ և ջան. զի երկնչէր յայլոց ոմանց ընձեռել զիրսն։ Բայց տես ինձ աստանօր, զի և սիրելիքն և ազգականքն առ 'ի նմանէ ընտրեալք էին։

«Այլ եղև 'ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ եղև նմա Կուռնելիոս, և անկեալ առ ոտս նորա երկիր պագանէր»։ Զայս առնէր նա զայլսն խրատելով 'ի նոցն, և զնոյն գոհանալով վասն իրացն, և զնոնարհութիւն իւր ցուցանելով. զի թէպէտ և հրաման առ կոչել զնա, սակայն անդուստ 'ի բնէ բազումն էառ բարութիւս 'ի բնութենն։ Զի ներքինին միայն աղաչեաց զՊիլիպպոս եկանել նստել 'ի կառսն. և մանաւանդ ոչ գիտելով ո՞ՀՀ է, այլ միայն վասն պատմութեան մարգարէին զոր կամէր լսել։ Իսկ սա ընդ առաջ երթայր և առ ոտս անկանէր, խոնարհամիտ գոլով բարուք։

«Իսկ Պետրոս կանգնեաց զնա և ասէ. յոտն կաց,

և ես ինքն մարդ եմ»։ Տեսանես թէ որպէս նախ քան զայլ ինչ առ այս զնոսա խրատէր, ոչ ինչ մեծ յաղագս նորա կարծել։ «Եւ խօսելով ընդ նմա եմուտ 'ի ներքս»։ Եւ զինչ արդեօք էր զոր խօսէին. զոր ինչ յառաջագոյն Կուռնելիոս արար և զոր ինչ առաջի կայր. 'ի գալն իւր խօսելով եմուտ 'ի ներքս և եգիտ անդ ժողովեալ մարդիկ բազում, զի պատրաստ էին լսել նմա։

«Եւ ասէ ցնոսա. դուք ինքնին գիտէք որպէս անմարթ է առն հրէի հպել կամ մերձենալ առ այլազգի»։ Տես վաղվաղակի յաղագս այ մարդասիրութեն պատմէ, ցուցանելով թէ մեծամեծս ընդհակառակ նոցա ածէ բարիս՝ նորա գալովն առ նոսա։ Եւ նայեաց թէ զիարդ միանգամայն ընդ մեծագոյն բարբառելն և խոնարհեալ լինի. զի ոչ ասաց՝ թէ որք չէիք արժանի հպելոյ մեզ՝ եկաք առ ձեզ. այլ զինչ. դուք գիտէք, ասէ, զի ածէ զայս հրամայեաց, անօրէն գոլ մերձենալ հրէի առ այլազգի։ Եւ զի ոչ էր զայս ասելն սնափառութիւն, նոցունց վկայութիւնքն զբանն։ Ապա զի մի ոք նմա ընդհակ ունիցի ընդ այսմ, ցուցանէ ածային միայն հրաման գոլ զգալուստն իւր. այսինքն զի ածէ առաքեաց։ «Եւ ինձ ածէ եցոյց մի զոք խառնակ կամ անտոգ ասել 'ի մարդկանէ»։ Եւ զի մի թուեսցի բանն առ երեսս Կուռնելիոս ասացեալ, ոչ և զմի ոք 'ի մարդկանէ անսուրբ ասել ասաց. յայտ է զի զահաւոր անուամբն այ սրբեալն, որպէս կանխաւ ցուցաք։

«Վասն այսորիկ և առանց ընդդեմ բանս ինչ ածելոյ եկի կոչեցեալ»։ Զայս ասէ, զի մի անօրէնութիւն կարծեսցեն զհպելն 'ի նոսա վասն առաջին բանիցն. զի ըստ այնմ ոչ միայն չյարել, այլ և ոչ գալ բնաւ առ նոսա՝ օրէն էր։ «Բայց արդ հարցանեմ, ասէ, ինչ պէտս կոչեցեք զիս»։ Եւ զի գիտէր զամ Պետրոս ուսեալ 'ի Հոգւոյն, յայտ է. լուսաւ և առ 'ի զինուորացն. բայց կամի յառաջագոյն զնոսա խոստովանեցուցանել, և 'ի նոցին բանիցն զնոսա պարտականս առնել հաստատելոյ։ Զինչ ասայ և Կուռնելիոս. ազատեալ ամիս զբանն 'ի խաբէութէ և լցեալ խոնարհութիւն, ուստի և յամ կողմանց արժանի ածային իրացն ցուցեալ լինի։ Ոչ ասաց թէ որպէս զինուորքն պատմեցին քեզ. այլ դարձեալ խոնարհութիւն պատմէ զամ։

«Յառաջքան զչորս աւուրս, ասէ, մինչև ցայս ժամ կայի յաղօթս յինն ժամն 'ի տան իմում, և ահա այր մի եկն եկաց առաջի իմ 'ի հանդերձս սպիտակս։ Զինչ է զոր ասէս յիններորդ ժամուն։ Ինձ թուի թէ ժամանակս և ժամն սահմանեալ էր նա անձին իւրում աղօթելոյ. այսպէս փութայր յաղօթս ստուգագոյն և բարի վարուք, նա և աւուրս ոմանս. և վասն այսորիկ ասէ. «Սկսեալ յառաջքան զչորս աւուրս մինչև ցայս ժամ»։ Տեսանեմ որչափ է աղօթից զօրութիւն. զի յորժամ աՀեաց բնական բարին, յայնժամ հրեշտակն եկեալ երևէր նմա։ Իսկ երևումն հրեշտակին թուի ինձ յերկրորդում աւուր աղօթիցն լինել, որպէս զի լինել այսպէս, որ երկրորդ և յերրորդում աւուր առ Պետրոս առաքէր, և 'ի չորրորդումն եկն առ նա։ Եւ ոչ ասէ թէ հրեշտակ երևեցաւ ինձ. այլ այր մի. զի այնպէս խոնարհամիտ և առանց պարծանաց էր հոգի նորա։ Իսկ պայծառ հանդերձիւք երևեալ հրեշտակն, զի զկեանս աւետարանէր։

«Յետ ասէ. Կուռնելիէ, լսելի եղեն աղօթքդ, և ողորմութիւնքդ յիշատակեցան առաջի այ։ Եւ արդ յղեա 'ի Յոպպէ և կոչեա զՍիմոն՝ որ կոչեցեալն էր Պետրոս. նա մտեալ է 'ի տուն Սիմոնի խաղխորդի մերձ 'ի ծով. որ եկեսցէ և խօսեսցի ընդ քեզ։ Եւ ես իսկ և իսկ յղեցի առ քեզ. և դու բարիոք արարեր զի եկիր. արդ մեք ամենքն առաջի այ կամք լսել զամենայն հրամայեալ է քեզ 'ի տեառնէ»։ Տեսանեմ զի վասն այնորիկ հարցանէր Պետրոս թէ յինչ պէտս կոչեցէք զիս, զի զբանս զայս ասասցէ նա՝ թէ առաջի այ կամք լսել զամենայն հրամայեալսն քեզ 'ի տեառնէ։ Զի այնչափ մեծ էր նորա հաւատքն և բնական բարին, զի անդէն գիտացեալ թէ ոչ ինչ մարդկային ասաց Պետրոս թէ ամենայն ինձ. ըստ որում և ինքն ասէ՝ թէ առաջի այ կամք լսել, և ոչ առաջի մարդոյ։ Այնպէս երկիւղիւ պարտ է ունկնդիր լինել ծառայից այ։ Տեսանէք թէ որպէս էր այրն պատշաճ իմաստութիւն զարթուցեալ, և արժանի էր այսմ ամբարեաց։ «Եբաց Պետրոս զբերան իւր». յայտ է զի և լուութիւնն ուսուցանէր։

ԵՓՐ. «Յետ ասէ. Ճշմարտութիւն հասեալ եմ, զի ոչ

գոյ անկառուԹի առաջի ՝այ . այլ յամ ազգս որ երկընչին'ի նմանել և գործեն զարդարուԹի, ընդունելի է նմա» ։ Զի և 'ի մեջ հեԹանոսաց՝ որ ԹուԷին մեզԹէ անարգ են, եԹէ գտանիցի ոք որ պաշտէ զնա ՃշմարտուԹիՀ, ընդունելի է առաջի նորա ։

ՈՍԿ . Օ սոյն զայս և Պաւղոս ասէ՝ Թէ «Փառք և պատիւ ՝ամի որ գործէ զբարի, եԹէ հրեայ և եԹէ հեԹանոս» ։ Եւ զոր ասէս այս ինչ է, ԹէՀ այժմ ՝ամ ոք որ գործէ զարդարուԹի, ընդունելի է նմա . եԹէ 'ի Պարսիկս իցէ կամ 'ի ՊարԹևս կամ'ի Մարս կամ յայլս . 'ի տարածեալ և յառատանալ հաւատոյս՝ ընդունելի են նմա ։ Որպէս զնեբքինին եԹովպացի ոչ անտես արար . ապա յաղագս ՝ածապաշտիցն զիարդ ասիցէ ոք անտես առնել . զի նա ոչ զոք 'ի բաց մերժէ յիւրմէ . զի ԹէՀ զկախարդս ոչ արար անտես և ոչ զաւազակն և ոչ զպոռնիկն , յոյժ մանաւանդ որ զարդարուԹիւն գործեն և կամակից փրկուԹիՀ իւրեանց լինին ամենեին ։

Ա՝յլ ինչ իցէ , ասէն , եԹէ իցեն ոմանք հեՀզամիտք և հանդարտք և ոչ իցեն կամեցողք բարձրագունիցն , այսինքն 'ի Քն հաւատոցն ։ Աւադիկ բաւական պատՀառ կորստեան է զոր ասեսդ՝ ԹէՀ ոչ կամին զբարձրագոյնն ։ Եւ այլ ազգ . այնպիսւոյն հեՀզամիտ ոչ ասեմք ,այլ այնմ՝ որ զարդարուԹի գործէ և յամենայնի ամբիծ է և առաքինի , և զայ երկիւղն ունիցի որպէս պարտն է . և զայնպիսին ՝ածՀ միայն գիտէ , որոց գովուԹիւնն ոչ 'ի մարդկանէ՝ այլ յայ է . որպիսի և Կուռնելիոս էր հաՀոյ և ընդունելի ՝այ , և 'ի մի անգամ լոյն այնպիսի կենայ ՝ՀԱՍ։ Աչլ և այժմ եԹէ հրեշտակ եկեալ լինէր , ասէն , ԹերևաՀ այնպէս իւրաքանչիւր ոք հաւատայր ։ Աստեմք , ԹէՀ և այժմ յոյժ մեծագոյն նշանք և սքանչելիք լինին և ՝ածային յայտնուԹիք . բայց ոչ ոք զգաստանայ ։ «Որ գործէն զարդարուԹի » ասէ ։ ԱչդարուԹիւն զամենայն առաքինուԹիս ասէ ։ Եւ տես ԹէՀ որպէս ամփոփէ զիսորհուրդս նոցա , զի մի Թուիցեն իբրու 'ի կարդէ բազմաց գերազանցեալս գոլ ։ Աչպա սկսանելով զվարդապետուԹիւն՝ պահէ զաշնուականուԹի հրեիցն ։

« Օ ջանն , ասէ , առաքեաց որդւոցն Իսրայէլի » ։

Մի թէ սակն առնլով որոց մերձ պատահէցան Հրեայքն . քաւ լիցի . զի նախ քան զայս ասաց՝ թէ ամենայն որ որ երկնչի 'ի նմանէ և գործէ զարդարութիւն, ընդունելի է նմա ։ Ապա զի ասելովն 'ի սկզբանն՝ թէ զբանն առաքեաց որդւոցն Իսրայէլի, նախ զնոսա հաւանեցուսցէ որք 'ի թլփատութենէ անտի եկեալ էին ընդ նմա , իբրև պատասխանի առնելով նոցա ։ Սակն վասն և զկուռնելիսս հարկ է ասել զոր ինչ կամէր , զի հանդերձեալ էր նոցա իսկ ընձեռել զբանն քարոզութեան . վասն որոյ վաղվաղակի ասէ՝ զոր առաքեաց որդւոցն Իսրայէլի ։ Եւ այսու ետ Հրէիցն զմեծն և զառաջին պատիւն . զոր և Քս ասէր . « Ոչ ուրեք առաքեցայ , եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի » ։

Ապա հայեաց 'ի խորագոյն գիտութիւն ասացելոցս ։ « Զբանն, ասէ, առաքեաց աւետարանել խաղաղութիւն 'ի ձեռն Յեսի Քրիստոսի . սա է ամենայնի տէր » ։ Նախ յաղագս անսկիզբն ծննդեանն որ 'ի Հօրէ՝ խօսի , և էական բնութիւնն . ըստ այնմ. « Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած , և Աստուած էր Բանն » . և ապա վասն մնօրինական կարգացն . ուստի և զնոյն անուանս 'ի մէջ բերէ , 'ի ձեռն Յեսի Քրիստոսի ։ Եւ ցուցանէ զնա զոյգ և մի տեր ամենեցունն գոլով ։ Զայսոսիկ յոյժ բարձրապէս խօսի . քանզի առ հոգւոյ բարձրագունի էր բանն և զամենայն ջերմապէս ընդունողի , և ոչ որպէս Հրեայքն ։ Ապա կազմէ թէ որպէս է տէր ամենեցուն ։ « Զոր առաքեաց , ասէ , աւետարանելով » ։ Ոչ դատապարտութիւն և պարտս ծառայաբար 'ի վերայ հասուցանելով, այլ տիրաբար աւետիս կենաց և խաղաղութիւն ընդ այս տալով յայս , ասէ , առաքեալ եղև ։

Ապա և կազմէ զնոյն յայնցանէ զոր ինչ գործեաց յլինդ հանուր հրէաստան , որոց և զնոսին իսկ ածէ վկայս ասելով . « Դուք ինքնին գիտէք զբանն , որ եղև ընդ ամենայն հրէաստան » ։ Ոչ ասաց թէ գիտէք զՅս , զի ոչ գիտէին . այլ զբանն ասէ , այսինքն զգործսն մեծամեծս զառ 'ի նմանէ արարեալսն և ասացեալսն . զի ածային էր և ոչ մարդկային , զի նոքին իսկ վկայեին վասն նորա թէ Որդի այս է ։

« Վկսեալ 'ի Գալիլէէ յետ մկրտութեան Յովհան-

նու »։ Ապա և յայտմանէ ստուգէ. զոր քարոզեաց, ասէ, Յովհաննէս. իբրև թէ վասն նորա եկեալ 'ի մկրտութիւն, զի ամենեցուն զնա ուսուցցէ թէ սա է Որդին ՝ այ։ Ասացեալ զուղղութիւս գործոցն Յոհի, այսինքն աւետարանել զնաղաղութիւն, դարձեալ վասն նորին ասէ. « ԶՅոհան 'ի Նազարէթէ »։ Եւ քաղաքին ևս անուամբն հաստատէ զբանն։ « Զոր օծն ՝ այ Հոգւով սրբով և զօրութիւն »։ Եւ այս ուստի իցէ յայտ. նախ 'ի բարութեցն զոր արար. ապա 'ի բժշկութեցն և 'ի բազում զօրութեցն, որով և բանսարկուին յաղթեաց։

« Որ շրջեցաւ բարի առնել և բժշկել զամենայն ըմբռնեալսն 'ի սատանայէ »։ Ստուստ ցուցանէ զբազում կուրութիւս և խաւարմունս գիւական գոլ, և խեղութիւս մարմնոց առ 'ի նմանէ լեալս։ Որպէս և Քն ասէր՝ թէ « Մարդասպան էր 'ի սկզբանէ ». և թէ « Կապեաց սատանայ ». և թէ « Համբդ և խուլ այս, եկ 'ի դմանէ »։ Արդ զայս ամենայն զօրեղապէս գործեաց, զի ՝ այ էր ընդ նմա։ Զոր և Նիկոդեմոս ասէր. « Գիտեմք զի յայ եկեալ ես. զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել զոր դուդ առնես, եթէ ոչ ՝ այ իցէ ընդ նմա »։ Արդ կամի ցուցանել իբրև 'ի Հօրէ զամենայն եղեալ ըստ տնօրէնութեան. զոր և ինքն Քն 'ի բազում տեղիս յայտ առնէր զՀօր գործակցութիւն։

« Յե մեք եմք վկայք ամենայնի զոր արար յերկրին Հրէաստանի և յԵրուսաղէմ »։ Զի թէ զնոսա նախ կոչեաց վկայս եղելոցն 'ի Քեռ՝ դուք ինքնին գիտէք, ասելով, զբանն որ եղև, յայժ մանաւանդ զնոքեանս 'ի ՃԱՀ ածէ վկայս։ Եւ դուք էք, ասէ, վկայք և մեք։ Եւ յորժամ եցոյց թէ յայ եղև առաքեալ և ՝ այ էր, ապա 'ի վերայ ածէ՝ թէ սպանաւ։ Տեսաք նես զի ոչ ուրեք թաքուցանեն զխաչն. այլ յետ այլոցն ամենայնի և զեղանակն ասէ զխաչելութիւն։ « Զոր և սպանին, ասէ, կախեալ զփայտէ. զնա ՝ այ յարոյց յերրորդ աւուր և ետ նմա յայտնի լինել. ոչ ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս յառաջագոյն ընտրելոցս յայ »։ Որպէս նախ քան զայս զգործսն Քեռ 'ի Հայր վերաբերեաց, այսպէս և զայն ասէ՝ թէ ՝ այ

յարոյց գնա. և թէ մեզ յայտնի եղև ընտրելոցս յայ. և սակայն Քն գնասա ընտրեաց։ Բայց և զայն իսկ յանձ վերագրէ, զի այն իսկ էր ամենայն բարեաց գլուխ՝ հաւատալ թէ յայ Հօրէ եղև ամենայն։

«Որք կերաք, ասէ, և արբաք ընդ նմա յետ յարուն նորա 'ի մեռելոց». Ցեսանէք զայս իսկ հաւատի նշան 'ի հաստատութիւն յարութեան տուեալ։ Եւ ընդէր, ասեն, յարուցեալ նշանս ոչ արար, այլ միայն եկեր և արբ։ Քանզի մեծ նշան իսկ յարութէ էր ինքն զինքն յարուցեալ, և ոչ ինչ էր հնար լինել քան զնա մեծագոյն. այլ ուտելն և ըմպելն զյարութէն ստուգէր։ «Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն և վկայութի դնել՝ թէ նա է սահմանեալ յայ դատաւոր կենդանեաց և մեռելոց»։ Բարիոք և 'ի դէպ հանէ զլսողսն 'ի բարձրագոյնսն, և ցուցանէ զամենակալ տէրութիւն Քոյ. բայց և զահագինն յաւելու զդատաստանն։ Ապա և զառ 'ի մարգարէիցն վըկայութիւն 'ի վերայ ածէ. «Նմա, ասէ, ամենայն մարգարէք վկայեն»։ Զի մի ունիցին պատճառս յանգիտութիւն անկանել, և ուժգնագոյն 'ի մարգարէիցն կազմէ զբանն. զի վասն նոցա մեծամեծ կարծիս ունէին։

Եւ յորժամ երկիւղիւն սասանեցոյց, յայնժամ 'ի վերայ էած զներուն թողութէ։ Եւ զայս ոչ յիւրմէ, այլ առ 'ի մարգարէիցն զասացեալսն. «Թողութիւն մեզաց առնուլ անուամբ նորա ամենայն յուսացելոց 'ի նա»։ Ապա իսկ է նշան, ասէ, թէ ճշմարիտ ած և յայ էր Քն և 'ի հանդերձեալ լինելոցն յետ այնորիկ։ Վասն այսորիկ և զմարգարէսն ածէ աստանօր 'ի մէջ. ըստ որում և Եսայի ասէ. «Նա զմեզս մեր բառնայ և վասն մեր չարչարի». և Երեմիա. «Քաւիչ եղէց անօրէնութեանց նոցա, և զմեղս նոցա ոչ եւս յիշեցից». գնոյն և ամենեքեան իսկ։

ԵՔԻ. Զարդ մինչդեռ Պետրոս մատուցեալ պատմէր զբարոզութէն տեառն մերոյ թէ ուստի և ուր սկսաւ և ուր կատարեաց 'ի ձեռն խաչին, և վասն յարութէ նորա և վասն քառասուն աւուրն զի կաց մնաց և ապա վերացաւ, և զի վկայ էն նմա ամենայն մարգարէքն, և զի քաւի ամենայն որ միանգամ հաւատայ և մկրտի յանուն նորա, ահա անդէն Հոգին նոր եկն

'ի ձեռն լեզուաց և բնակեցաւ 'ի վերայ ամենայն լը-
սողաց բանին. և սկսան նոքա խօսել 'ի լեզուս լեզուս,
որպէս և կարգ պատմութիւնս ցուցանէ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Արդ որ 'ի ձեռն հաւատոյ թողութիւնս այսմիկ արժանացաք, և քաւեալք հոգիս կալք եղաք, գիտելով զմեծութիւն պարգևացն այ, մի վատթար գնացիք թշնամանեսցուք զայն. զի ոչ վասն այնորիկ թողու զմեզս զի համարձակեսցուք 'ի չարիս, այլ զի դարձցուք և լաւագոյնք լիցուք վասն մարդասիրութեանն նորա։ Արդ մի զբարերարութիւն պատճառս չարին ցուցցուք, ըզնեղելոյն և զերկայնմտութիւն այ արհամարհելով։ Եւ այս առ խորհրդազգածն. իսկ երախայք և չև աս խորհրդազգածքն փութասցին հասանել մկրտութեանն շնորհի և մի յապաղել, զի մի յանկարծադէպ ինչ վրիպակաւ տուժեսցին զմեծ պարգևսն։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐԲՈՐԴ

ՈՍԿ. «Լ՚Ի մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանդեաւ Հոգին սուրբ 'ի վերայ ամենեցուն որ լսէին զբանն»։ Տես զայ տնօրէնութիւն. զի ոչ ետ աւարտել բանին, և ոչ հրամանաւ Պետրոսի լինել մկրտութիւն. այլ քանզի լսողքն զիւրեանց զմիտսն ցուցին սքանչելի գոլով, և վարդապետութիւնն սկիզբն եղև, և հաւատացին թէ թողութի կայ մեղաց, յայնժամ 'ի վերայ եկն Հոգին։ Եւ այս իսկ լինէր յառաջագոյն տրնօրինաբար առ 'ի պատասխանի ունել Պետրոսի։ Եւ ոչ միայն Հոգին եկն 'ի վերայ, այլ և լեզուօք ևս խօսեին։ Վասն որոյ «Զարմացան որք 'ի թլփատութէ անտի հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի, զի և 'ի հեթանոսս պարգևք Հոգւոյն սրբոյ զեղուին. քանզի լսէին 'ի նոցանէ խօսել լեզուս և մեծացուցանել զաստուած»։ Տես, ոչ ասէ թէ զարմացաւ Պետրոս, այլ որք 'ի թլփատութէն եկեալք էին ընդ նմա. վասն զի նա գիտէր զինչ լինելոցն էր։ Այլ նոքա ընդ այն իսկ մանաւանդ զարմանային՝ թէ սոքա զիարդ զՀոգին ընկալան։ Զի յորժամ լուան յետոյ որք 'ի հրէաստան էին՝ թէ հեթանոսք հաւատացին, ոչ զարմացան. այլ այժմ, յորժամ զՀոգին հնորհեաց նոցա ասէ։

Իսկ Պետրոս կանխագոյն եղև զարմացեալ յորժամ զտեսին ետես. վասն որոյ և ասէր. «Ինձ եցոյց ասէ ոչ զոք անսուրբ ասել 'ի մարդկանէ». քանզի 'ի վերուստ գիտէր զայս, և յառաջ կազմէր զբանն, զի հեթանոսք այնուհետև ոչ էին հեթանոսք 'ի հաւատալն. բայց ոչ ինչ էն զարմանք այն, զի նախ քան զմկրտութիւնն առին զՀոգին։ Ցուցանէ և Պետրոս թէ 'ի մինչ այս ինչ ոչ եղև. զի ոչ որպէս այլքն եղեն նոքա մկրտեալք, այլ բազմապատիկ լուսագոյնք։ Վասն այսորիկ այս ա մենայն լինէր, զի երևեսցի թէ ասէ էր որ առնէրն. զի 'ի մեծութէ եղելոցն հաւանեսցին լուել խոշեալ-

քին 'ի Պետրոսէ . և մի ունիցին ինչ ասել վասն հաւատացեալ հեթանոսաց , այլ հաւասարս ինքեանց զնոսա համարեսցին ։ Զի թէ և 'ի Կեսարիա և Յերուսաղէմ յետ այնչափ գործոց յերկրայութիւն անկանէին ,զինչ ապա կրէին թէ այնպիսի գերազանցութիւն էին եղեալ իրքն ։

Ուստի և Պետրոս առեալ պատճառս դարձաւ 'ի թլփատեալսն անդ որ ընդ նմա էին ։ «Պատասխանի ետ և ասէ զնոսա . մի թէ զջուրն ոք արգելուլ կարիցէ առ 'ի չկրտելոյ զնոսա , որք և զՀոգին սուրբ ընկալան որպէս և մեք »։ Տես ոչ վերացոյց զբանն . քանզի ասելովն՝ միթէ զջուրն ոք արգելու ։ յայտ արար թէ յոյժ զնոյն կամէր ։ Եւ այսպիսի մտօք և բանիւք սպառնացեալ լինի արգելողացն և ասողացն թէ չէր պարտ այսմիկ լինել ։ Ամենայն ինչ եղև , ասէ . այսինքն որ կարևորն էր և մեծն՝ զոր և մեք մկրտեալ եմք ։ ապա զփոքրս ո՞ արգելուցու։ «Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յսի Քրսի »։ Յետ պատասխանի տալոյն ապա հրամայեաց նոցա մկրտել ։ խրատելով զնոսա որ եկեալն էին՝ իրացն վՀարմամբ . քանզի զայրացմամբ զայրացեալ էին Հրեայքն ։ Վասն այնորիկ յառաջագոյն տայ պատասխանի , և մանաւանդ իրացն աղաղակելով , ոչ լեզուօք միայն զոր խօսէին , այլ և յառաջ քան զմկրտութիւն ընկալան զՀոգին՝ որ գուշակէր ժողովրդեանն Հրէից թէ յայ եղև կոչումն հեթանոսաց ։

«Յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ »։ Զի այնու հետև յոյժ ընտանեբար առ նմա լինէին առկայացեալ . որով և նա վայելչապէս վստահացեալ եկաց մնայ առ նոսա ։ Արդ թէպէտ էր վկայ և միՆորդ այսմ իրաց տեսիչն Կուռնեղիոսի և Շմաւոնի և գալ Հոգւոյն 'ի նոսա յառաջ քան զմկրտիլն , և զի յամենայն լեզուս իբրև զառաքեալսն խօսեցան և նոքա , սակայն ոչ վասն այնորիկ լինէին Հրեայքն ընտանեբար առ նմա տրամակայեալք , այլ եպերեցին թլփատեալքն զՇմաւոն իբրև էին Յերուսաղէմ . ըստ որում ասէ . « Լուան առաքեալքն և եղբարքն որ էին 'ի կողմանս Հրէաստանի , զի և 'ի հեթանոսս ընկալան զբանն այ ։ Բայց յորժամ եկ Պետրոս Յերուսաղէմ , խղձէին 'ի նմանէ որ 'ի թլփատութենէն հա-

ւատացեալքն, և ասէին՝ Թէ Եմուտ առ արս անթլփատս և եկեր ընդ նոսա »։ Ցեսարդ զնախանձն զոր ունէին յաղագս օրինացն. զի ոչ յարժանաւորութենէն Պետրոսի եղեն վերհերեալք, ոչ 'ի նշանացն որ լինէին, ոչ յուղղութենէն վՀաբելոյ, և թէ որչափ էր փրկութիւն ընդունողացն զբան նորա։ Այլ յետ այսչափ իրաց վերփոքրագունիցն այնոցիկ հարցափորձեալ զիրսն թլփատեալքն խղձէին 'ի նմանէ. ոչ առաքեալքն, քաջ լեցի. այլ Հրեայքն այլք՝ գայթակղեալք ոչ սակաւ։

Այլ տես թէ զինչ լինէին յառաջարկեալ. ոչ ասէին թէ ընդէր պատմեցեր նոցա զբանն, այլ թէ և կերակուր ընդէր կերար ընդ նոսա։ Իսկ Պետրոս առ այսպիսի ցրտագոյն բանս ոչ ընդդիմադրեալ լինի վիճողաւանս, զի ցրտագոյն էր ՀՀմարտապէս. այլ զայն ինչ որ մեծն է՝ բերել յառաջ. զի ասէ. Նոքա Հոգւոյն սրբոյ հաղորդք եղեն, զիարդ ընդ նոսա հացիւ հաղորդել ոչ է պարտ։

Այլ թէ վասն սամարացւոցն ընդէր ոչ եղև այսպիսի նախանձ առ Հրեայսն՝ այլ և նոքին հակառակն, ասեմ. զի ոչ միայն նախ քան զմկրտութիւնն ոչ առին նոքա զՀոգին, այլ յետոյ ուրեմն. և անդանօր ոչ տրամեցան Հրեայքն, այլ լուեալ առաքեցին առ նոսա զՊետրոս և զՅովհաննէս։ Դա և աստանօր ոչ զայս ինչ ամբաստանէին զի գնաց առ հեթանոսս և խօսեցաւ, զի գիտէին թէ ՀՀծային շնորհին էր գործ. այլ ընդէր, ասէին, կերար ընդ նոսա. յայնմանէ խղձէին։ Եւ այլ ազգ. զի ոչ այնչափ էր օտարութիւն սամարացւոց առ Հրեայս, որպէս առ այլոց հեթանոսաց։ Այլ և ամբաստանէին նոցա տնօրինաբար լինի եղեալ, զի 'ի ձեռն պատասխանւոյն Պետրոսի ուսանիցին թէ նա ոչ ինչ էր պատՀառ. և թէ մանաւանդ և ոչ մի ինչ յայսցանէ եղև հանՀարով նոցա իմաստասիրեալ, այլ Հոգւոյն էին պատգամք, և ՀՀմ յՀՀմի ՀՀծ. զի նա արար զՀՀմ, և մի ինչ ածցեն զմտաւ այլ ազգ։

Սմին վասն ոչ միայն պարզաբար ետ պատասխանի Պետրոս, այլ յոյժ խոնարՀութիւն. և առանց շփացութեան «Սկսաւ պատմել նոցա կարգաւ և ասէ. Ես էի 'ի քաղաքին Յոպպէ յաղօթս »։ Եւ ոչ ասէ՝ Թէ ընդէր կամ զինչ պատՀառաւ։ «Եւ տեսի 'ի զարմացն

ման տեսիլ՝ ինքանել անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի, զչորեցունց տնտոց կախեալ յերկնից, և եհան մինչև առ իս, յոր պշուցեալ հայեի. և տեսի զչորքոտանիս երկրի և զգազանս և զսողունս և զթռչունս երկնից. և լուայ բարբառ որ ասէր ցիս. արի, Պետրոս, զնն և կեր»։ Այն իսկ բաւական էր հաւանեցուցանել զի երևեցաւ, այլ և ձայնիւ ևս յաւելոյր։ «Եւ ասեմ. քաւ լիցի, տէր, զի ոչինչ և անմաք ոչ երբէք եմուտ 'ի բերան իմ»։ Տեսանէք, զի ես զիմն արարի, ասէ. զի ասացի ընդդէմ՝ թէ ոչ երբէք կերայ։ Զի զայս իսկ ասէին՝ թէ եմուտ առ արս անթլփատն և եկեր ընդ նոսա. ըստ որում և զայս առ նոսա խօսի։ Բայց առ Կուռնելիոս ոչ ասաց զայս, զի չէր պիտոյ։

«Պատասխանի ետ ինձ, ասէ, երկիցս անգամ բարբառն յերկնից. զոր ՅԾ սրբեաց, դու մի խառնակ համարիր. այս եղև երիցս, և վերացաւ դարձեալ ՅՄ յերկինս»։ Ընդդիմադիրեցի, ասէ, և նա դարձեալ ասաց՝ թէ զոր ՅԾ սրբեաց, դու մի պիղծ համարիր. և ոչ այնպէս լուայ մինչև երիցս անգամ կրկնեաց՝ զոր ՅԾ սրբեաց, դու մի խառնակ համարիր։

Լու ահա անդէն երեք արք եկին կացին առ ասպարանիցն ուր ես էի՝ առաքեալք 'ի Կեսարիայ առ իս»։ Արդ այնոքիկ որ ասացանն՝ բաւական էին հաւանեցուցանել զնոսա. բայց և 'ի ձեռն այսոցիկ զոր ասէս՝ զնոյն յարդարէ։ Եւ հայեաց թէ որպէս տայ պատասխանի. ոչ արժան համարի զառն անուն առ նոսա 'ի կիր արկանել. զի որչափ հեզութիւն բարբառի առ նոսա, այնչափ մանաւանդ ըմբռնէ զնոսա։ Բայց և պատուով իսկ յիշէ զարան, և առաքեալս անուանէ. ոչ անարժան համարի զվարդապետին անուն առնուլ 'ի վերայ սոցա, զի և սոքա իսկ յայ էին առաքեալք։

«Ասէ ցիս Հոգին երթալ ընդ նոսա և մի ինչ խրդՃել»։ Տեսանես զի Հոգւոյն էր օրինադրութիւն, զի Հոգին հրամայեաց ինձ գնալ, ասէ. նմին իրի իսկ ոչ դանդաղեցայ։ «Եկին ընդ իս և սոքա վեցեքին եղբարքս»։ Ոչ ինչ է քան զայսպիսի բարս խոնարհագոյն յորժամ զեղբարցն վկայութիւն 'ի վերայ ածէ։ «Եւ մտաք 'ի տուն առնն այնորիկ», ասացել առ նոսա՝ թէ ՅԾ առաքեաց զիս առ ձեզ. և ոչ այնպէս մկրտեցի

տակաւին։ «Եւ նա պատմեաց մեզ որպէս ետես ըզ-
հրեշտակն 'ի տան իւրում. զի կայր և ասէր ցնա. ա-
ռաքեա 'ի Յոպպէ և կոչեա զՍիմոն զկոչեցեալն Պետ-
րոս՝ որ խօսեսցի բանս ընդ քեզ, որով կեցցես դու և
ամենայն տունքո»։ Եւ ոչ ասաց զառ 'ի հրեշտակէն ասա-
ցեալն ցԿուռնելիոս՝ թէ աղօթք քո և ողորմութիւք ելին
յիշեցան առաջի ՀՍ. զի մի ինչ ընդդիմացեալ երև-
եսցի նոցա օրք անթլփատս ասէին զնոսա. այլ զինչ
ասէ. «Խօսեսցի բանս, որով կեցցես դու և տունքո».
քանզի այս իսկ վայելչապէս ախորժելի լինէր առ Հր-
ռեայսն։ Եւ ոչ ինչ ասէ յաղագս հեղուլոյ առնն, նա
և ոչ թէ Հոգւոյն հրամայելով և ՀՍ առաքելով 'ի
ձեռն հրեշտակի անդուստ կոչելով 'ի Կեսարիոյ, և
աստուստ յայտնութիւնն լուծանելով զիրացն խիղճ.
ինձ զինչ պարտ էր առնել։ Այլ ոչ ասէ յայտնանէ
և ոչ ինչ, այլ վերջին իրաքն զնոսա զգուշացուցանէ.
որ և ինքն ըստ ինքեան անհերկուանալի էր նշանն։

Արդ ընդէր այս ինչ միայն ոչ եղև, այլ և Հոգին
յայտնեցաւ և խօսէն լեզուօք։ Զի առաւելութեամբ
եղելոցն ցուցցի ոչ յառաքելոցն սկսեալ այսոքիկ. զի
թէ նա ինքնին զնացեալ էր, և ոչ մի ինչ յայտնանէ
եղեալ՝ յոյժ թերևս Հրեայքն խոցեալ լինէին։ Վասն
այսորիկ 'ի վերուստ բանիւն զմիտս նոցա ընտանեցու-
ցանէ և ասպա ասէ. «Որք և զՀոգին Սրբ ընկալան որ-
պէս և մեք». և յառաջ քան զայս՝ թէ «Իբրև սկսայ
խօսել, եկն Հոգին Սրբ 'ի վերայ նոցա»։ Եւ ոչ այսու
շատանայ և ոչ այսու՝ թէ որպէս 'ի վերայ մեր 'ի սկզբ-
բանն. այլ և զբանն տեառն վերստին յիշեցուցանէ
զոր ասէր. «Յովհաննէս մկրտեաց 'ի Ջուր, բայց դուք
մկրտիցիք 'ի Հոգին Սրբ»։ Ոչ ինչ եղև, ասէ, Նորոգ ինչ
կամ օտար. այլ զոր ինչ յառաջագոյն ՓԿ խօսեցաւ՝
թէ մկրտիցիք 'ի Հոգին Սրբ. և այլ ոչ էր պարտ մկըր-
տել, քանզի աւարտեցաւ մկրտութիւնն յայ, զի զՀՍ
ինչ ՀՍ գործեաց. ՀՍ մկրտեաց զնոսա, և ոչ ետ Վասն
այսորիկ ոչ ասէ՝ թէ ես հրամայեցի նոցա մկրտել,
այլ եցոյց թէ ինքն ոչ ինչ արար. զի զոր ինչ մեք ըն-
կալեալ էաք, ասէ, Նոքա զայն առին։

«Իսկ արդ եթէ զՀասարակաց պարգևն ետ ՀՍ նո-
ցա, որպէս և մեզ 'ի Հաւատալն 'ի տէր Յիսուս ՓԿ,
ես զինչ կարող էի արգելուլ զՀՍ»։ Յոյժ ամաչեցու-

ցանելով և ծանրամտութիւն է բանս. նա և ոչ ասաց յետոյ՝ թէ զայս գիտելով լուեցէք, այլ ընդունի ըզ-
յանդգնուն նոցա։ Եւ ամբաստանելով տայ նոցա պա-
տասխանի. «Ո՞ՀՐ էի, ասէ, արգելուլ զՆՐԱ»։ Եւ այսու
մեծապէս խնու զբերանս նոցա. վասն այսորիկ յաւել
զայն՝ թէ զհասարակաց պարգևն. զի մի թողացուս-
ցէ նուազագոյնս ինչ բան զինքեանցն զնոցայն կար-
ծել։ «Հաւատացելոց, ասէ, 'ի տէր ՅԻՍՈՒՍ ետ ՆԱՆ ըզ-
հասարակաց պարգևն որպէս և մեզ». զի և հաւա-
սար է և հասարակաց ամ ազգաց որ հաւատան, և ոչ
Հրէից միայն. զի զնոսն որ հաւատան, սրբէ և մաքրէ։
Եւ ոչ ասաց՝ որպէս ձեզ, այլ որպէս մեզ. զի մի ինչ
անարժանս զնա կրեալ համարեսցին, կամ թէ մոլեալ՝
յորժամ եդ զՀԵԹԱՆՈՍՍ հաղորդս եղեալ Հոգւոյն։
«Լուեալ զայս լուեցին և փառաւոր առնէին
զՆՐԱ և ասէին. ուրեմն և 'ի ՀԵԹԱՆՈՍՍ ետ ՆԱ զա-
պաշխարութիւն կենաց»։ Տեսանես զի 'ի հանդիսաբա-
նութենէն Պետրոսի եղև ամ ինչ բարիոք. զի պատմե-
լով նորա զլեալսն՝ փառաւոր առնէին զՆՐԱ, ասէ. զի
զգաստացան և երկուցեալք և հանդարտեալք և խո-
նարհեալք եղեն 'ի բանից յայսցանէ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այսպէս և մեզ պարտ է յընկերացն բարութիս
փառաւորել զՆՐԱ և մի տրտմել ընդ յաջողուածս ինչ
հոգեկանս կամ մարմնականս, այլ մանաւանդ 'ի բա-
բիսն նախանձել և առ ուղղութիւնս ապաշխարութի-
զանձինս մեր զարթուցանել։ Եւ մի պղերգութիւն ըզ-
փոքր ժամանակս անցուցանել, մանաւանդ յեկեղե-
ցւոջ 'ի ժամու աղօթից անպղաղ մնօք, և մի ծաղր
լինելով զբուցատրութեամբ և յօրանչմամբ և այլով
անկարգութեամբ. այլ մեծաւ ահիւ և սարսափ-
մամբ կալ առաջի ՆԱՅԻՆ խորհրդոյն 'ի շահ անձանց
և յօգուտ տեսողացն, ոչ միայն մերձաւորաց, այլ և
հեռաւորաց ըստ նմանութեանցն բարոյչացն զորս ոչ
խափանեաց 'ի բարւոք ընթացիցն վիշտք մարմնականք։
Այլ աստուստ մանաւանդ այսու հետև բացեալ եղև
դուռն համարձակութեան առ ՀԵԹԱՆՈՍՍ քարոզելոյ,
ըստ որում ասէ.

ՃԱԼՈՒ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Եւ ցրուեալքն 'ի նեղութէն որ եղև 'ի վերայ Ստեփանոսի՝ հասին մինչև 'ի Փիւնիկէ և 'ի Կիպրոս և յԱնտիոք»։ Ոչ փոքր ինչ ուղղութիւն եղև հալածումն այն. զի այնոցիկ որ սիրեին զնա՝ յամի գործակից լինի 'ի բարիս։ Իսկ յանդգնեալքն առնոսա 'ի հալածել ոչ արդեօք կարէին այլ ինչ առնել քան թէ զի սիրեցին զվարդապետն, որպէս զի Ճահաւորութիւն փութացեալ լինէին հաստատել զեկեղեցիսն։ Եւ տես զնոցա քաջութիւնն. զի ոչ որպէս մեք ողբովք և արտասուօք 'ի վայր կործանեալ լինիմք 'ի պատահել ինչ նեղութեց, այլ մեծ և բարի գործոյ տուեալ զանձինս յոլովագոյն դիւրութիւն քարոզելոյն զբանն իբրու հեռագոյն եղեալ յարգելողացն, 'ի Հրէից ասեմ, և առ մարդկան հասեալք որք աներկիւղ էին 'ի Հրէից։ Եւ տես ուր տարածեցաւ նոքօք քարոզութիւն. զի հասին, ասէ, 'ի Փիւնիկէ, 'ի Կիպրոս և յԱնտիոք։ Արդ մինչև 'ի Կիպրոս հասին, ասէ, որ 'ի մէջ ծովուն է, ուր յոլովագոյն էր անհոգութիւն յերկիւղէ Հրէիցն։

«Ոչ ումեք խօսէին զբանն, բայց միայն Հրէիցն»։ Ոչ իբր երկնչելով 'ի հեթանոսաց, այլ զօրինականն պատուելով քան զհեթանոսս. և այս իսկ անպատասխանի առնէ զՀրեայն առաջի Քան, որ ոչ երբեք արգել 'ի նոցանէ զպատՃառս փրկութեան։ Ցիրաւի ապա այնչափ իբր եղեն վասն կուռնեալիս, զի այնպիսի էր յօժարութիւն նորա, և այլոց հեթանոսաց. զի յորժամ Ստեփանոս քարկոծեալ եղև 'ի Հրէից և առաքեալքն տանջեցան և Պաւղոս երկիցս վշտացեաւ, յայնժամ հեթանոսք ընկալան զբանն, յայնժամ սամարացիք։ Սմին վասն և Պաւղոս ասէր՝ թէ «Ձեզ նախ կարևոր էր քարոզել զբանն այլ. զի դուք անարգեցէք զնա, ահաւասիկ դառնամք 'ի հեթանոսս»։

«Այլ էին ոմանք 'ի նոցանէ արք կիպրացիք և կիւրենացիք, որք մտեալք յԱնտիոք խօսէին ընդ Յոյնսն, աւետարանէին զտէր Յիսուս։ Տես 'ի ձեռն փոքունց զամենայն ինչ ուղղեալ և զբարոզութիւն անձեցեալ. զի ոչ իբրև զկարգսդիս յինքեանս ասացին, թէ մեք կիպրացիք և կիւրենացիք գոլով զիարդ այսպիսի պայծառ և մեծ քաղաքի համարձակիմք քարոզել. այլ 'ի շնորհսն այ հաւատալով ձեռն արկանէին 'ի վարդապետութիւն բանին։ Բայց և ոչ նոքա անարժան համարեցան առ 'ի նոցանէ ուսանել ինչ։ Եւ զի օրքա յունարէն խօսէին, գիտելի է և յԱնտիոք այնպիսիս գոլ ընդ որս խօսէին։

Ուրեն ստայոգ առասպելախօսքն որք զանուանեալ դարձն Անտիոքու շաղակրատեն, և զՊետրոս և զՅովհաննէս ասեն երթեալ անդ զառաջինն և քարոզել զէն, և տանջեալք և խղեալք և ոչ ինչ վնարեալք, մինչև զՊաւղոս ասեն 'ի Թիկոնս հասեալ նոցա. անյարմար և անհաւան զրուցատրութիւնքն խաբին և խաբեն։ Զի ահաւասիկ Ղուկաս ոչ զոք յառաքելոցն, այլ կիպրացիս ոմանս և կիւրենացիս գոլ ասէ զառաջին քարոզիչսն Անտիոքու որպէս լսես։ Եւ զի ընդ Յոյնսն խօսէին, ոչ զՀրէայսն անտես առնելով. կամ վասն ոչ գիտելոյ երբայեցերէն՝ թերևս Յոյնս զՀրէայսն կոչէ։

«Այլ էր ձեռն տէն ընդ նոսա. և բազմութիւն հաւատացելոց դարձան 'ի տէր»։ Զձեռն տէն աստ զնշանացն զօրութիւնն ասէ. այսինքն զի նշանս գործէին։ Տեսանես թէ ընդէր եղեն պիտոյ նշանքն, զի բազմութիւն հաւատացէ։ Հայեաց դարձեալ զանմտութիւն այնոցիկ՝ որ 'ի մտաց իւրեանց գրեցին զանուանեալ դարձն Անտիոքու. զի ահա 'ի ձեռն կիպրացւոյ քարոզչաց ասէ՝ թէ բազմութիւն հաւատացելոց դարձան 'ի տէր։ «Այս եղև բանս այս յականջս եկեղեցւոյն որ էր յԵրուսաղէմ՝ վասն սոցա. և առաքեցին զԲառնաբաս մինչև յԱնտիոք»։ Տես զառաքեալսն ամենեցուն համանդամայն փոյթ արարեալս իբրև մի տուն զտիեզերս հոգալով։ Այսուհետև թէ յԱնտիոք հաւատացին, առաքեցին անդ զԲառնաբաս. առաքեն դարձեալ և մարգարէս։

Լոյս ընդէր արդեօք այսպիսի քաղաքի ընդունելով զանն՝ ինքեանք ոչ եկին, այլ զԲառնաբաս առաքեցին։ Նախ զայս ասեմ. զի այսպէս կամեցաւ Հոգին, և նոքա զամենայն ինչ ըստ նորա կամացն գործէին։ Եւ այլ ազգ. վասն զի բազում երկար էր միջոցն յԵրուսաղէմ, ոչ էր պարտ առաքելոցն առաժամայն մեկնել անտի, զի մի փախստականս գոլ կարծեսցեն զնոսա 'ի Հրէից։ Զի յորժամ դատակնիք արեանն Քրիստոսեալ լինէր 'ի վերայ նոցա հաւատացելոցն, յայնժամ մեկնեալ լինէին. ոչ իբր զարհուրեալք 'ի հինէն, զի ահա առ այնոսիկ որ հանդերձեալ էին պաշարել զԵրուսաղէմ՝ գնացեալ լինէին, և յետ վախճանի առաքելոցն ապա լինէր պաշարումն Երուսաղէմի։ Եւ ընդէր առ Պաւղոս ոչ գրեցին երթալ յԱնտիոք, այլ զԲառնաբաս առաքեցին։ Զի տակաւին ոչ ևս գիտէին զնորա քաջութիւն, զսա առաքեցին։

«Որ իբրև եկն և ետես զշնորհսն ՅՍ, ուրախ եղև»։ Ոչ զփոյթ մարդկանն ետես, ասէ, այլ զշնորհսն ՅՍ. զի այս իսկ զաւգմութիւն դարձոյց։ «Զորս և մխիթարէր զամենեսեան, յօժարութիւն սրտի կալ նոցա 'ի տէր»։ Զինչ կամի ասել մխիթարէին, զի 'ի հալածողացն ոչ նըշանակէ վշտանալ նոցա. յայտ է ապա զի քաջալերէր հանդերձեալ յուսովն 'ի վաստակս առաքինութեան ըստ հաւատոցն արժանապէս գնալ։ «Զի էր այր զուարթամիտ և լի Հոգւով սրբով և հաւատովք»։ Յայտ առնէ զի յոյժ քաջագոր էր այրն և անկեղծ, և յոյժ ցանկայր փրկութիւն մարձաւորացն, և խոնարհամիտ էր և նէրողական. զոր և վասն բարեյօժար կամացն զոր ունէր յառաջադրութիւն սրտին՝ ներբողելով ասէ՝ թէ լի էր Հոգւով սրբով, զի Հոգին սուրբ առ այնպիսիսն հանգչի։

«Եւ յաւելաւ ժողովուրդ բազումք տեառն»։ Տեսանէս 'ի ձեռն փոքունց զմեծամեծս գործեցեալ. յաղագս որոց ասացեալ է՝ եթէ զոչինչս սչխարհի ընտրեաց Ած։ Զի որչափ աննշանք էին, այնչափ մանաւանդ շնորհքն նոքօք փայլեալ լինէին. որով և տնօրէն նաբար լինէր Բառնաբայ ազգ գալ։ Եւ քանզի բազմութիւն յոյժ էր հաւատացելոցն, և ոչ աք էր որ խափանէր, վայելչապէս բղխեաց հաւատն։ Եւ թէ ընդէր

նախ քան զայս յորժամ դժուարինքն եղեն Յերուսաղէմ և հալածումն՝ ոչ առաքեցին յԱնտիոք զԲառնաբաս, վասն զի առ Երուսաղէմացիսն անպարապաց եալ էին։ Եւ դարձեալ այսպէս տնօրինեալ էին, զի Հրէից տացեն պատասխանի. զի Հեթանոսք քան զնոսա յառաջեալ լինէին 'ի հաւատս, և ոչ այնչափ փութոյ հանդիպեալք։ Բայց և ոչ զայրացան անտիոքացիք, զի յառաքելոցն ոչ առաքեցին առ նոսա, այլ վարդապետօքն շատացան. զի այնպէս ամենեքեան ե՛ռային 'ի լուր բանին։ Եւ որպէս հող պարարտ ընկալաւ զանձն ՅԻ քաղաքս այս, և յոյժ եղոյց զպտուղ իւր, և յաւելաւ ժողովուրդ բազում տեառն։

Բայց ոչ այսու շատացաւ Բառնաբաս. զի անձն ՅԾՃասէր ոչ յագի միշտ յառաջել 'ի բարիս։ Սմին վասն «Եղ 'ի Տարսոն խնդրել զՊաւղոս. և գտեալ զնա ածՅԱնտիոք»։ Եւ ընդէր 'ի Տարսոնէ 'ի բաց կացոյց զնա և աստանօր ած։ Զի աստանօր առաւել էր բարեացն յոյս, և քաղաքն մեծագոյն և բազմութիւն յօժարք, և մանաւանդ զի ոչինչ աստանօր կրեցին փորձուիք. և Պաւղոս քարոզէր, և ոչ և՛ս հարկ լինէր փախչել։ Եւ տես զամենայն հնօրհացն ՅԻ գործեցեալ, և ոչ 'ի Պաւղոսէ, 'ի ձեռն փոքունց սկիզբն առեալ իրացն։

Տես և յայսմիկ զԲառնաբաս զերանելն, զի ոչ հայեցաւ յիւրմն միայն առանձինն, այլ ընթացաւ 'ի Տարսոն վասն Պաւղոսի. քանզի գիտէր իսկ զի ոչ փոքր ինչ փրկութիւն տնօրիներ Հոգին անդ հաստատելոյն Պաւղոսի. և հարկաւորապէս եէն առ նահատակին. զի մի միայն ինքն, այլ և զնա ածցէ 'ի տեղի հանդիսին։ Այլ և առ ո՞ՉՈՐ արդեօք գայր. առ զօրավարին իսկ, առ մենամարտիկ քաջին, առ ուժեղ առիւծուն. և ոչ ունիմ զինչ ասացից որչափ և ասացից՝. առ շանն որ սականին սպանչին առիւծուց, առ հզօր զուարակին, առ պայծառ լապտերին, առ բերանն այն՝ որով տիեզերք շատացեալ լինէին նովաւ։ Եւ ասեմ, զի տնօրինաբար նախ վասն նորա խուզէին Հրեայքն, զի մի նա պարփակեալ լիցի Յերուսաղէմ՝ փողն երկնային և ձայնն քարոզութեան։

1 Յայնն յաւելու Գերազանցութիւն Պաւղոսի արարին եկեղ։

Բայց տես թէ որպէս յամենայնի զչարութիւն Հրէից 'ի պատշաճ պէտս եկեղեցւոյ 'ի կիր արկանէ Քս, զառ 'ի նոցանէ հալածեալսն վարդապետս առաքելով տիեզերաց, զի հանդերձեալ էր ընդ երկուս լինել քարոզութիւն. սմին վասն և Կուռնելիոս իրքն յայնժամ յառաջեաց, որով համարձակագոյնք եղեն քարոզել հեթանոսաց. զոր և Պաւղոս ասէ վասն իւր և վասն Բառնաբայ՝ թէ «Աչք հաւանուն ետուն պետրոսեանք, զի մեք 'ի հեթանոսս և նոքա 'ի թլփատութիւն։

«Լաւ եղև, ասէ, նոցա զայն ողջոյն ժողովել յեկեղեցին և ուսուցանել ժողովուրդ բազում. և անուանել նախ յԱնտիոք զաշակերտսն քրիստոնեայս»։ Ոչ փոքր գովութիւն է այս այնմ քաղաքի. այսու իսկ ամենեցուն հանդէպ կարող է կալ, զի բերանոնքն Պաւղոսի այնչափ վայելեաց ժամանակաւ յառաջագոյն 'ի պարծանս ամենայն քաղաքաց։ Քանզի ջերմք էին 'ի հաւատս, յօժարամիտք և փոյթք 'ի լսել զբանն կենաց. վասն որոյ և նախկին աստանօր ՅԾային անուանն արժանացան։

«Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յԵրուսաղէմ մարգարէք յԱնտիոք»։ Եւ վասն էր արդեօք. զի պարտ էր և ողորմութիւնն պտղոյ աստանօր տնկել։ Եւ տես թէ զիարդ հարկաւորապէս դասք դասք մի զմիոյ կնի հետևէին. որոց յառաջնումն և ոչ մի զբ յերևակայն և մեծամեծայն եղև վարդապետ, այլ զկիպրացիս և զկիւրենացիս ունէին վարդապետս. և ապա զմեծագոյնսն ընկալան՝ զՊաւղոս և զԲառնաբաս. զի սոքա գերազանցեալ էին քան զնոսա, զի զՀոգին սուրբ ունէին վարդապետ. այժմ և մարգարէք ևս իջին։

«Յարուցեալ մի ոմն 'ի նոցանէ անուն Ագաբոս՝ նշանակեաց Հոգւոյն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղև առ Կղաւդեաւ»։ Արդ զի մի կարծիցեն թէ վասն զի քրիստոնէութիւն 'ի ներքս եմուտ և եղև սոքին, և զի դեռ 'ի բաց կացին յառաջագոյն, վասն այնորիկ ասէ՝ Հոգին։ Բայց ոչ ինչ էր աբանչելի լինել սովոյն. զի և Քս յառաջագոյն զնոյն ասաց։ Եւ քանզի պարտ էր վաղվաղակի յետ խաչին լինել սովոյն, այլ վասն նեղութեանցն և հալածանացն որ յառաքեալսն եղև, երկայնամտեաց ՅԾ։ Եւ մինչ դեռ 'ի նոյն

էին տակաւին, սով մեծ լեալ լինէր գուշակելով Հրէիցն զհանդերձեալ չարիսն, և առնուլ'ի միտ թէ վասն նոցա իսկ էր այն պատուհասն. Եւ զի պարտ էր ապաքէն երկնչել յայնմանէ և դադարել յուսնակա-նաց Հրէիցն յապիրատութենէ. քանզի և նոքա իսկ բուն Հրէիցն չարեաց կցորդեցին, փոխանակ զի պարտ էր նոցա ընտիրս և լաւս լինել։ Զի որ ինչ և լինքեանց հնար էր, առնէին, տանջէին, սպանանէին, յամենայն տեղիս հալածէին։

Զ. Յլզայսպիսի չարիսն պարտ էր, ասէն, 'ի բաց բառնալ։ Աւ որս ասեմ, թէ ընդէր ապա փոխյառաջ զնոյն իսկ ասաց՝ թէ յաշխարհի աստ նեղութեան ունիցիք։ Իբրու թէ ասիցես՝ թէ պարտ էր ոչ մկրտել, զի մի՝ նեղութիւն ունիցիմք. 'ի բաց տար։ Իսկ եթէ հարկաւոր կարեւոր է մկրտելն, յոյժ մանաւանդ և նեղութիւնն։ Աւ տես թէ երբ լինի սոցին. յորժամ հեթանոսք 'ի հաւատս եկին. որոց և սոցին լինի փրկութիւն պատՀառ, գուռն 'ի դէմս ողորմութիւն, բազում բարութեաց առիթ։ Աւ և ձեզ այժմ զնոյն ասէ Հոգին թէ սխորժելիք. բայց ոչ կամիք։ Արդ յառաջագոյն ասէ զգալն սովոյն, զի նախ պատրաստեսցին յողորմածութիւն. զի յառաջ քան զայս ոչ էին հրեաստանեալքն 'ի կարօտութիւն կամ 'ի սովի։ Բայց բարւոք մտածութիւն ոչ յաղագս սովոյն նոքա ասէին որ աւետարանեին, զի մի ումեք ծանր թուեսցի, այլ մարգարէքն զայն պատմէին։

« Լայց յաշակերտաց անտի որպէս զիարդ կարող ոք էր, իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ որոշեցին առաքել 'ի պէտս եղբարցն՝ որ բնակեալ էին 'ի հրեաստանի. զոր և արարին իսկ. առաքեալ առ երիցուանսն 'ի ձեռն Բառնաբայ և Սօղոսի »։ Տեսանես ընդ հաւատալն համանգամայն պաղաբերեալս զնոսա. ոչ միայն իւրայնոցն և մեծաւորաց, այլ և հեռագունեցն բացակայնաց։ Եւ զայսմանէ իսկ ասէ Պաւղոս՝ թէ « Ձեռն ետուն հաղորդութեան ինձ և Բառնաբայ. զի մեք 'ի հեթանոսս, և նոքա 'ի թլփատութենէն. բայց միայն զի զաղքատսն հոգասցուք հասարակաց, զոր և ես իսկ փութացայ զնոյն առնել»։ և այժմ տակաւին Յակոբոս եղբայրն Յովհաննու կենդանի է։

Ալլ հայեաց ընդ յօժարութիւն սոցա. զի ոչ սպասեցին հասանելոյ սովոյն, այլ յառաջագոյն առաքեցին զՊաւղոս և զԲառնաբաս, զի պաշտօն արասցեն հրեաստանեայցն որպէս և կարող էր իւրաքանչիւր ոք։ Եւ տես զի առաքելովքն յերուսաղէմ այլք ոմանք յայս գործ յորդորեալ լինէին։ Իսկ յԱնտիոքայ Պաւղոս և Բառնաբաս ընուն զպաշտօնն՝ տանելով զտուրս նոցա յերուսաղէմ։ Եւ ոչ փոքր էր այս տնօրէնութիւն սոցա տանելն, քանզի սկիզբն էր ողորմութեան բարեաց, և ոչ էր պարտ լինել գայթակղութիւն։ Դիտեա և զայս ևս, զի այնուհետև կարիք սովոյն 'ի ներքս մուծանել զհեթանոսաց հաղորդութիւնն տրոց զեղեալսն յողորմածութիւն։ Իսկ հրեաստանեայքն որ երբեմն խղձէին 'ի կերակրոց հեթանոսաց, ընդունէին ահա այժմ զառ 'ի նոցունց տուեալն։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ այժմ ոչ զայս առնէ 'ի մէջ, զի մանաւանդ սով է դժուարագոյն քան զայն. քանզի ոչ է հաւասար հասարակաբար կրելն պատուհաս այնմ. զի ամենեցունց յառատութեան լինելով միայն տնանկք իցեն 'ի սովն. նա զի և անդ տուողքն տնանկք էին։ Սըմին վասն ասէ՝ թէ որպէս կարող էր իւրաքանչիւր ոք։ Արդ սով կրկին է, որպէս և առատութիւն կրկին. սով դժուարին՝ ոչ լսել զանն ՈՒՅ. իսկ միւսն կարօտութիւն մարմնոյ։ Արդ յառատանալ բանին՝ հոգւոյ լիութիւն. իսկ մարմին կերակրեալ 'ի ձեռն ողորմութեան. որպէս և յայնժամ տնանկքն որ 'ի հրեաստան վայելեալք լինէին, և որք յԱնտիոք տուեալք զինչս. և սոքա մանաւանդ վայելէին քան զնոսա։ Այլ այժմիկ և մեք տնանկք գոլով 'ի ժամու սովոյ՝ յորժամ ոմանք հարկաւոր կերակրոյն կարօտին, սերմանեսցուք ըզկրկնակի ողորմութիւն 'ի ցնծութիւն նոցա, որով մեք իսկ առաւել 'ի խրախութիւն լինիմք ողորմութիւնքն ՈՒՅ։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՎ ՑԵՐՈՐԴ

«Բ՝նդ ժամանակս ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ՝ձեռն չարչարել զոմանս յեկեղեցւոյն, և սպան զՅակոբոս զեղբայրն Յովհաննու սրով»։ Ընդ ժամանակս ընդ այն, ասէ. յայտ է զի յամս Կղաւդեայ, զկարգ ասացելոցն պահելով. զի այս իսկ սովորութիւն է գրոց։ Բայց Հերովդէսս այս ոչ է նա որ զՅովհաննէս գլխատեաց, այլ նորին որդի՝ Թոռն առաջնոյն Հերովդէի։ Սա կոչի և Ագրիպպաս. և սորա որդի է միւս Ագրիպպաս որ առ Փեստոսիւ։ Այլ հաւասիկ դարձեալ միւս Ամ փորձութիւն՝ի վերայ աշակերտացն հասանէ. և տես թէ որպէս շարամանեալ լինին իրողութիւնք սոցա։ Որպէս յառաջն իսկ ասացի՝ի ձեռն գիւրութիւն և նեղութիւն ամենայն ինչ նիւթեալ լինելով. բայց այժմ ոչ տակաւին Հրեայքն և ոչ ժողովուրդն, այլ թագաւորն իսկ հալածէ. զի որչափ մեծ է իշխանութիւն, դժուարին է մարտն. և այնպէս զի և առ ինորհուկս առներ Հրէիցն, առնելով զոր ինչ կամէին։

«Յետ սպան զՅակոբոս զեղբայրն Յովհաննու սրով»։ Էր և այլ ոմն Յակոբոս՝ եղբայր տեառն. սմին վասն նշանակէ զեղբայրն Յովհաննու։ Եւ ոչ ելթէ վայրապար ինչ իբրև հարևանցի պատահմամբ սպան զնա, այլ քանզի յոյժ սաստիկ էր սա ընդդէմ Հրէիցն առաւելեալ՝ի քարոզութեանն քան զամենայն առաքեալսն. և զի ինքեանք Հրեայքն վասն խորհրդական խրատուն Գամալիէլի արգելեալ լինէին՝ի սպանմանէ առաքելոցն։ Դա և այլ ազգ. քանզի պատՃառս մահու ոչ կարէին գտանել,՝ի ձեռն այլոց զսպանութիւն պատրաստէին։ Ուստի ապա և երդմամբք հաւանեցուցին զՀերովդէս անյապաղ փութով զնա սպանանել, զի մի այլ ինչ իրք պատահեսցի և եղիցի զեր-

ձեալնա. որպէս նախ քան զայս 'ի նոյն իսկ յերուսաղէմ Պաւղոս, կամ որպէս յետոյ առ Պետրոս եղև։ Եւ նա որպէս գաղան չար վայրագաբար և անսրբապէս 'ի վերայ հասեալ լիներ, և առանց ատենի և քննութեան սպանանէր զնա. և ընդոյր ասացեալն առ նա 'ի քէն՝ թէ «Զբաժակն իմ ըմպիցէք և զմկրտութիւնն իմ մկրտիցիք»։

Այլ թէ ինդրէ ոք թէ ընդէ՞ր ներեաց ՅԾ, ասեմք թէ առաջին վասն Հրէիցն, զի 'ի միտ առցեն՝ թէ և սպանեալք լինելով աշակերտքն՝ յաղթեն թշնամեացն. որպէս առ Ստեփաննոսիւ եղև։ Երկրորդ տեղի տալով թշնամեացն, յետ ընդոյն զցասումն զղջանալ 'ի մոլորութենէն։ Երրորդ ցուցանելով թէ այն իսկ ներողութիւն և երկայնմտութիւն նորա եղև։ Չորրորդ յայտնի առնել զնոցա զարիութիւն. զի այնպէս անխնայ տային զանձինս իւրեանց 'ի մահ վասն Յայ։ Հինգերորդ զի մի ոք ասիցէ թէ վասն այնորիկ աներկիւղ համարձակին 'ի մահ՝ ակն ունելով 'ի բաց կորզել զնոսա Յայ. վասն այնորիկ թողացուցանէր սպանանել զնոսա, և մանաւանդ զգլխաւորսն իսկ զՍտեփաննոս և զՅակոբոս. զի և գլուխ ամենայն աշակերտացն երեքս այսոքիկ էին Պետրոս և Յովհաննէս և Յակոբոս, Ջերմաջերմ՝ 'ի քարոզութիւն քան զայլսն։ Եւ այս իսկ յաւէտ դատապարտութի՛ էր սպանող Հրէիցն. զի այնուհետև ցուցեալ լիներ ոչ մարդկային գոլ քարոզութիւն, հաւանեցուցանելով զնոսին՝ թէ այն ինչ ոչ 'ի բաց կացուցաներ զնոսա կամ խափաներ 'ի քարոզութենէն, այլ յետ սպանանելոյն առաւել ևս զօրանայր և Հշմարտապէս լցեալ լիներ քան մարգարէին՝ թէ «Համարեցաք որպէս զոչխար 'ի սպանդ»։

«Որբև ետես թէ հաճոյ է Հրէիցն, յաւել ևս ունել զՊետրոս»։ Ո՛վ բազում պղծութենէն և ամբարշտութենէն Հերովդի. հաճոյութի՛ էր սպանումն, և այնպիսի սպանումն տարապարտուց, ուստի յայտնի լինի մեզ չարութի՛ թագաւորին, զի անտեղի և պիղծ ցանկութի՛ Հրէիցն պատեալ պաշարեալ էր։ Որոյ պարտ էր զնոցին ներհակն առնել, 'ի բաց հատանել զարշաւանս մոլորութենէ նոցա. իսկ նա մանաւանդ վերատարածէր՝ իբրև դահիճ ոմն գոլով հիւանդաց, այլ

ոչ բժիշկ։ Եւ այն զի բաղում օրինակս ունէր երկիւ-
ղի. նախ զպապուն իւրոյ և ապա զՀօրն, թէ որպէս
մին վասն մանկանցն կոտորածոյ դժնդակագոյն կը-
բեաց չարիս, իսկ միւսն զՅովհաննէս գլխատեալ՝ պա-
տերազմ դժուարին յարոյց ինքեան, որով և անկաւ
իսկ յարքայութէ։ Իսկ սա կարծրացեալ սրտիւ ոչ 'ի
նոսա հայէր, այլ անմտաբար՝ տես թէ յաղագս որոց
ոմանց և կամ որպիսի իրօք չնորհս առնէր նոցա, ըս-
պանմունս առնելով վայրապար և մնոտի։

«Եւ էին, ասէ, աւուրք բաղարջակերաց»։ Դար-
ձեալ այսու զառաւել չարաբարութիւն Հրէիցն յայտ-
նէ թէ յորպիսի աւուրս սպանանել ոչ արգելուին.
մանաւանդ թէ այլ ինչ ոչ գործէին յայնմ ժամա-
նակի։ «Զոր իբրև կալաւ, ասէ, եդ 'ի բանտի և մատ-
նեաց չորից չորրորդաց զինուորաց պահել զնա»։ Քան-
զի երկնչէր, կարծելով թէ յերկիւղէն որ վասն Յակո-
բայ՝ Պետրոս տեղի տայցէ. և կամելով ունել զնա,
յամուրս արկ 'ի բանտի պահապանօք։ Այլ այս իսկ
նշանակ էր առաւել ցասման և երկիւղի. զի ոչ բան-
տիւ միայն, այլ և այնքան զինուորօք պաշարէր զնա։
«Եւ կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն»։
Եւ թէ զիարդ ոչ այնպէս վաղվաղակի սպան զնա որպէս
զՅակոբոս, Թուի թէ ըստ որում Ղուկաս յայտնի ա-
բար զպատճառն՝ թէ էին աւուրք բաղարջակերացն.
կամ մանաւանդ զի կամէր զնա կտտամահ խայտա-
ռակել սպանմամբ։

«Եւ Պետրոս 'ի պահեստի էր 'ի բանտին»։ Այլ
որչափ ամրագոյն էր բանտն, այնքան սխրալի եղև
ցոյցք իրացն. և այն իսկ լինէր յաղագս Պետրոսի, զի
ընտիր երևեսցի՝ զիւրն արուեթն ցուցանելով։ «Եւ
աղօթք ստէպ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ
Ած»։ Քանզի խստագոյն էր տագնապն, և յաղագս
գլխաւորին էր խնդիրն. վասն որոյ և փութով աղո-
թիւք առ Ած կարդային։ Եւ զի Յակոբայ սպանումն
զարհուրեցոյց զնոսա, և Պետրոսի 'ի բանտ արկանէին,
առ որ մեծ գթասիրութիւն տրամակայեալք առ վար-
դապետն ոչ խուճապեալք և խռովեալք եղէն, այլ
միաբան յաղօթս կային, և դարձան 'ի Ճշմարիտ մար-
տակցութիւնն և յանդիմամարտ ձեռն ապաւինեալք՝

ոչ ասէին թէ խոնարհք և ընչինք գոլով մեք զիարդ յաղագս նորա աղօթեսցուք որ մեծն է, այլ զի սիրով և միաբանութիւն զիրսն առնէին. սմին վասն և աւելին զոր հայցեցին։ Զի որչափ բռնադատութիւն գործեցին թշնամիքն և զգուշութիւն պահէին, այնչափ փութագոյնս արարին զնոսա և ջերմս։ Եւ զի 'ի տօնին զփորձութիւնն 'ի վերայ ածին, զի նոցա ընտրութիւնն և համարձակութիւնն երևեսցի։

«Իբրև կամեցաւ ածել զնա Հերովդէս, 'ի գիշերին յայսմիկ էր Պետրոս 'ի քուն 'ի մէջ երկուց զինուորաց։ Տես զզարմանալիս. զի լուծեալ էն յաղօթս, իսկ կապեալն 'ի քուն ննջեալ անհոգութիւն։ Եւ զիարդ Պաւղոս 'ի բանտին 'ի գիշերի հակէր Հիզայիւ, և սա ննջէր։ Վայելչապէս. զի նա հակելոյն դուռն հաւատոյ ցուցցէ 'ի վիշտս և զչարութիւն աղօթից. իսկ սա ննջելոյն զաներկիւղ լինելն 'ի մահուանէ որ վասն ՅԻ. ըստ որում և ինքն ոչ զանգիտէր ինչ կամ դողայր. այլ 'ի նոյն իսկ գիշերին յորում հանդերձեալ էր ածել 'ի սպանդ, ուրախացեալ յանհոգս ննջէր, զամենայն ինչ յանձ ապաստան արարեալ։ «Եւ էր կապեալ կրկին շղթայիւք 'ի մէջ երկուց զինուորաց»։ Տես ըզբազմապատիկ զգուշութիւն սպանողացն. որովք յայտնի լինի նոցա չարութիւնն և սորա արութիւնն։

«Եւ պահապանք առաջի դրանն պահէին զբանտն. և ահա հրեշտակ տեառն եկն եկաց 'ի վերայ, և լոյս ծագեաց 'ի տանն»։ Յայնմ գիշերի յայսմեցաւ հրեշտակն, որ 'ի վաղուն սպանելոց էր զնա Հերովդէս. և լոյս ծագեաց, զի տեսցէ և լուիցէ Պետրոս, և մի առ այսր երևոյթի ինչ կարծիցէ։ Եւ զլոյսն ոչ որ եթէս բաց 'ի նմանէ. զի թէ այնպէս եղև և տակաւին կարծէր երազ գոլ վասն անակնկալի սքանչիցն, թէ այնպէս չէր լեալ՝ յորպիսի կարծիս ոչ անկանէր. քանզի յոյժ ճակատամարտեալ էր ընդդէմ մահու, առ որ փութալով ոչ երկնչէր, այլ յանհոգս կայր. նա զի և բաղում աւուրս ՅԻՍալով նորա 'ի բանտին և ոչ փրկիլն առնէր զայն։

«Եւ խթեաց զկողն Պետրոսի, զի այնպէս 'ի խոր ննջէր, և յարոյց զնա և ասէ. արի վաղվաղակի»։ Զինչ է յարոյցն և ասէ արի։ Թուի թէ ընդ զար-

թուցանելն զնա խթելով, զի ընկողմեսեալ էր, նստոյց զնա՝ թերևս զձեռանէ կալեալ. զի յարոյց ասէ զնըստոյցն. որպէս զայն՝ թէ «Կանգնեցաւ և նստաւ մեռեալն». և «Տաբիթայն նստաւ կանգուն»։ «Եւ ասէ ցնա. արի վաղվաղակի». զի մի պղերգասցի. վասն զի քնակիցք էին զինուորքն։ Եւ զի մի խափանեսցեն զնա կապանքն, իսկոյն անկան շղթայքն 'ի ձեռացնորա։

«Յետ ասէ ցնա հրեշտակն. ածզգօտի քո, և արկ զհողաթափս յոտս քո. և արար այնպէս»։ Ցուցանէ հրեշտակն այսու ամենայնիւ թէ ոչ թշնամւոյ չարաբարոյ դաւաճանութեամբ, և ոչ բարեկամի վշտակից փութով լինէր այն. զի ոչ ոք փութալով ակամ հատանել՝ այնչափ ընդ ինքն հոգ տանի, մինչև առնուլ զհողաթափս, գօտի ածել և ձորձս շուրջ արկանել. որպէս ասաց, արկ զձորձս քո և եկ զկնի իմ։

«Յետ եղեալ երթայր զհետ, և ոչ գիտէր թէ ճշմարիտ իցէ որ ինչ եղև նմա 'ի հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել»։ Բարուոք. զի թէ որպէս և էրն, և այնպէս ճշմարիտ գոլ կարծէր զեղեալսն յառաջնմէ, թերևս զարհուրեալ լինէր և 'ի յահէն զյիշատակ իրացն մոռանայր։ Բայց այժմ որպէս յերազի հեշտեաւ տեսանելով առանց խռովութեան էր։

«Յետ իբրև անցին նոքա ըստ մի պահն և ըստ երկուս, եկին մինչև 'ի դուռն երկաթի»։ Ո՞ւր են հերձուածողքն, որ ամենայնի գիտակ համարին զանձինս և քննեն. ասասցեն մեզ այժմ զորպէսն. ահաւասիկ Պետրոս էանց ըստ մի պահ և ըստ երկու և տակաւին կարծէր երազ տեսանել, և մանաւանդ զի այս ամենայն եղև հաւանեցուցանելով զնա թէ չէր իրքն կարծիք. վասն որոյ և զգօտին ընդ մէջ ածել հրամայէր, և զհողաթափսն յոտս արկանել, և խթելոցն զբուռնն 'ի բաց թօթափեաց. զի գիտասցէ թէ ճշմարիտ է. և իսկոյն անկանել շղթայիցն 'ի ձեռացն և ասել արի վաղվաղակի՝ որ ոչ էր զարհուրեցուցչի այլ հաւանեցուցչի՝ ոչ պղերգանալ. այլ նմա թուէր երազ տեսանել վասն գերազանցութեան եղելոցն։ Ապրդ եթէ Պետրոսի թուէր երազ տեսանել առ այնչափ ժամն, և այն զի ինքնին զգօտին ածէր և զհողաթափսն ագանէր, զինչ արդեօք այլ ոք կրեսցէ վասն ածայնոցն ան-

հասանելեաց։ Լուսոյն այժմ օրք ունայնս պանծան։

«Լ՚ակն, ասէ, մինչև 'ի դուռն երկաթի՝ որ հանէր 'ի քաղաքն, որ և ինքնին բացաւ նոցա»։ Աւրդ զի յԵրուսաղէմ ըմբռնեցաւ Պետրոս և արկաւ 'ի բանտ, այն ահա յայտ է յասելոյն յետ սակաւուց զՀերովդէս իջեալ 'ի Հրէաստանէ 'ի Կեսարիա։ Իսկ զինչ այն՝ թէ «Եկին 'ի դուռն երկաթի՝ որ հանէր 'ի քաղաքն»։ Լեառն Սիոն 'ի մէջ Երուսաղէմի փակեալ էր հզօր պարսպօք, որ և միջնաբերդն կոչիւր, որպէս 'ի մակաբայեցիսն կայ. յորում էր արքունիքն և ապարանքն սեպհական զնդիցն. 'ի ներքս անդ էր և բանտն, ուստի եհան զՊետրոս և ած մինչև 'ի դուռն որ հանէր յարտաքին քաղաքն 'ի նոյն յԵրուսաղէմ. որ և ինքնին բացաւ, ասէ։ Եւ ահաւասիկ իւրովի բացումն երկաթի դրանցն երկրորդ նշան՝ ոչ փոքր քան զառաջին եղեալսն։

«Լ՚ս մտեալ անցին ընդ փողոց մի. և վաղվաղակի 'ի բաց եկաց 'ի նմանէ հրեշտակն»։ Եւ զի 'ի ներքս լեալքն յոյժ սքանչելագոյնք էին. այլ այս մարդկեղէն էր զինի հետևել. սմին վասն յորժամ ոչ ինչ էր որ խափանէր զնա, յայնժամ 'ի բաց եկաց հրեշտակն. զի թէ յորժամ եհան 'ի բանտէն և 'ի բաց լինէր, ոչ արդեօք յառաջեալ լինէր Պետրոս այնպէս խափանողաց գոլով, զի Ճշմարտապէս զարհուրեցուցիչ լինէր իրքն։ «Եւ Պետրոս իբրև 'ի միտս եղև՝ ասէ. այժմ գիտեմ Ճշմարտիւ թէ առաքեաց տէր զՀրեշտակ իւր և փրկեաց զիս 'ի ձեռաց Հերովդի և յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն Հրէից»։ Յորժամ 'ի բաց եկաց հրեշտակն, յայնժամ իմացաւ Պետրոս և ասէ՝ այժմ ծանեայ, և ոչ նախ քան զայս։

Լ՚ս ընդէր արդեօք լիներ այնպէս ոչ զգալ Պետրոսի հաւաստի զեղեալսն. և մանաւանդ այնպիսի ազատութեան հասեալ, որ մեծամեծ նշանս ունէր ոչ առաւօք գոլոյ։ Ասեմ՝ թէ զի յանկարծակի կամեցաւ նմա հեշտութենէ արկանել. զի յետ ազատելոյն յամենայնէ ապա առցէ զիրացն զգայութեն. որ և այն չէր փոքր ինչ նշան. որպէս եղև այնոցիկ՝ որոց աչքն կալեալ էին, զի մի ծանիցեն զՅն, և ապա բացան և ծանեան զնա։

Լ. Եթէ որ ասիցէ թէ ընդէր ոչ 'ի ձեռն ինքեանց իսկ առաքելոցն այսպիսիքս լինելին նշանք՝ այլ հրեշտակօք, ասեմ՝ թէ վասն զի այսպէս պատուէր զնոսա ետ, 'ի ձեռն հրեշտակաց զնոսա յափշտակելով. իսկ յայլս ոչ հրեշտակ, այլ ինքեանք իսկ առաքեալքն գործէին զոր ինչ և պարտ լինէր։ Եւ թէ զիարդ առ Պաւղոսիւ այսպէս ոչ եղև, զի անդ հաւատալ պարտ էր բանտապետին. իսկ աստ ազատել միայն Պետրոսի. այնպէս զանազանաբար զամենայն ինչ յօգուտն մեր անօրիներ ետ։

Լ. Այլ թերևս ասիցէ որ, թէ ընդէր ոչ թողացոյց զնա անկանել 'ի ձեռս Հերովդի, և ապա անդուստ յափշտակեաց, զի այն իսկ աւելի զնա 'ի զարհուրումն ածէր, իսկ այս անհաւատալի լինի եղեալ։ Ասեմ, թէ այդպէս լինէր, թերևս ոչ մարդիկ իսկ զոլ կարծեցեալ լինէին բազմաց։ Եւ այլ ազգ. առ Ստեփաննոսիւ զինչ ոչ արար. ոչ եցոյց որպէս հրեշտակի զերեսս նորա։ Տկնա զինչ և աստանօր յամենայնէ որ բաւական էր հաւանեցուցանել զնոսա՝ պակաս եղև. այլ ոչ կամեցան շահել զիրկութիւն։

«Լ. Լեալ 'ի միտս». յայտ է Պետրոս. այսինքն թէ ուր էր, և թէ ոչ միայն գնալ պարզաբար պարտ էր, այլ իմաստալ զնորս՝ բարերարին և օրհնութիւն և գոհանալով փառաւորել։ «Եկն, ասէ, 'ի տուն Մարիամու մօրն Յովհաննու՝ որ կոչեցաւն Մարկոս»։ Եւ ոմանք դեօք էր սա։ Թերևսնա էր որ միշտ ընդ նմա շրջէր. զի վասն այնորիկ զմականուն նորա յաւել Մարկոս, որ և գրեացն իսկ զաւետարանն՝ որ կոչի անուամբ նորա։ Ի տուն մօր սորա եկն, ասէ, «Ուր էին բազումք ժողովեալ և աղօթս առնէին»։ Տես 'ի գիշերի աղօթս առնելով որչափ ինչ կատարէին. և թէ որչափ բարի է նեղութիւն, զի իբրև զուարթունս զնոսա գործեաց։ Տեսեր զշահ սպանմանն Ստեփաննոսի. տես արդ և զանտիս զայսմ՝ թէ որչափ էր ամենեցուն օգտակարութիւն։ Եւ զի ուսանիցիս թէ ոչ սաստելով ՃՃ անիրաւացն մեծ ցուցանէ զաւետարանն, այլ նոքօք անիրաւողքն, ոչ ինչ կրելով իւրոցն 'ի զղջումացն չարաչար. և զնեղութիւն ըստ ինքեան եցոյց մեծամեծ շահս գոլով. զի մի մեր անձանց ամենևին զա-

զատութիւն՝ խնդրեսցուք, և ոչ թշնամեաց զվրէժ-խնդրութիւն։

«Այլ՝ի բախել զդուրս տանն՝ մատեաւ աղախին մի ունկն դնել, որում անուն էր Հռովդէ. և ծանուցեալ զձայնն Պետրոսի, ՝ի խնդալոյն ոչ եբաց զդուրսն. ՝ի ներքս ընթացեալ պատմեաց թէ Պետրոս առդրանն կայ»։ Դիտեա թէ որպէս և աղախինքն նոցա երկիւղածք էին և սուրբք. զի իբրև ծանեաւ զրարբառ նորա, թողն բանալ նմա զդուրսն, և յուրախութենէ անտի իւրմէ փութացաւ նա աւետիս տալ ընկերացն։ Բարւոք և այն իսկ եղև, զի մի նոքա յանկարծակի տեսեալ զնա զարհուրեսցին և թերահաւատեսցին. այլ կանխաւ զդայն լսելով կրթեսցին միտք նոցա. որ և մեր է սովորութիւն զայս առնել։ Եւ զի աղջիկն այն փութայր զի ինքն տայցէ զաւետիսն, զի աւետիք էր Ձշմարտապէս, իսկ նոքա ոչ ունելով ակն իրաց՝ զայս յանձն ոչ առնուին, այլ ասեն ցնա. «Մոլիս. և նա պնդէր թէ այսպէս է. և նոքա ասեն թէ հրեշտակ նորա իցէ»։ Եւ զայս Ճշմարիտ ասացին, զի իւրաքանչիւր ուրուք հրեշտակ գոյ. զոր և Քրիստոս՝ թէ «Հրեշտակք նոցա յերկինս է»։ Զի՞նչ էր խորհուրդ հրեշտակին, կամ ընդէ՞ր զայն կարծէին։ Ի ժամանակին առին զակնկալութիւն այնմ լինել։

«Այլ Պետրոս ստէպ բախէր, զի հաստատեսցէ թէ ինքն է և ոչ հրեշտակն։ Իբրև բացին, տեսին զնա և զարմացան. և նա ձեռամբ ցուցանէր նոցա լռելյ. որպէս զի լուիցեն զառ՝ի նմանէ ասացեալն։ Քանզի փափաքելի էր այնուհետև Պետրոս բազում իրօք աշակերտացն՝ ոչ ապրելոյն միայն, այլ և առ նոսա հաստատելոյն և վաղվաղակի՝ի բաց գնալոյն։ «Եւ պատմեաց նոցա որպէս տեր եհան զնա՝ի բանտէն»։ Որովհետև այնուհետև իմանային իւրքն զնմ՝ մինչ հաւատաւոր. իմանային և օտարքն եթէ կամեցեալ էր, բայց ոչ կամեցան զոգուտն իւրեանց։ Իսկ այս և առ Քրիստի եղև բազում անգամ, և յարութեան առաւել. բայց ոչ կամեցան օգտել։

«Այլ ասէ. պատմեցէք Յակոբայ և եղբարց զայս»։

՝ Միւսն գրեթէ։

Տես որպէս խոնարհ էր և ոչ փառասէր. ոչ ասաց թէ ամենեցուն որ յամենայն տեղիս են պատմեցէք, այլ եղբարցն միայն. ասացէք, ասէ, Յակոբայ և եղբարց, զի խնդասցեն և զի մի հոգասցեն։ Եւ տես՝ նոքա 'ի ձեռն սոցա իմանային, մեծքն 'ի նուաստից. և ոչ սոքա 'ի ձեռն նոցա. զի խոնարհագոյն կողմանն մեծապէս փոյթ առնէին։ Զնոյն արասցուք և մեք, և մի թաքուսցուք զաքանչելիսն այ. այլ վասն մերոյ օգտի փուլթասցուք զայնոսիկ հուչակել և առ 'ի յայլոց շինութիւն։

«Եւ եկն գնաց անտի յայլ տեղի»։ Տես զհոգաբարձու և զխոնարհ հոգին Պետրոսի, ոչ ուրեք վաղվաղակի կամեցաւ գնալ մինչ չև եւս էր աւետիս տրւեալ իւրոցն. զի որպէս աքանչելի էր կամաւ յանձն առնուլ 'ի կապանս մտանել, նոյնպէս աքանչելի էր ոչ յառաջագոյն գնալ մինչև պատմեսցէ իւրոցն զամենայն։ Եւ ընդէր գնայր յայլ տեղի. զի ոչ փոքձէր զաՀ և ոչ արկանէր զանձն իւր 'ի փորձութիւն։ Բայց և զայս եւս արարին պետրոսեանքն յորժամ հրամանն ընկալան՝ թէ մտէք դարձեալ 'ի տաՀարն և խօսեցարուք ընդ ժողովրդեանն։ Ա՛յլ սմա զայս այժմ ոչ ասաց հրեշտակն. բայց լռելեայն 'ի բաց կալոմն և 'ի գիշերի հանելոմն ոչ ետ իշխանութիւն վերստին 'ի նոյն դառնալ։ Նա և այս եղև, զի ուսանիցիմք թէ և մարդկօրէն բազումինչ տնօրինեալ եղև. զի զայսնմա եթող առնել. և ոչ դարձեալ 'ի նոյնն անկանել բանտ։ Բայց տես զի յետ գնալոյ նորա ոչ ասացին թէ հրեշտակ նորա է, այլ յառաջ. զի և 'ի տեսանելն գնա դրդուեցաւ կարծիքնոցա. ըստ որում և նա ստէպ բախէր, զի մի առ աչք համարեսցին. զի թէ հրեշտակն էր՝ ոչ բախէր արտաքոյ զդուրսն, և ոչ յայլ տեղի գնացեալ լինէր 'ի տուէ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այմանեայսուք հակողացն այնոցիկ, և մի զամենայն գիշերն քնով ծախեայսուք. զի ահա ոմանք և ոչ շուրջ անգամ առնուն 'ի մահիճս զամենայն գիշերն իբրև զմեռեալսն. զի ոչ վասն այնր եղև գիշեր՝ զի հանապազնընջիցեմք։ Այլ թէ ասիցես՝ վաստակեալ եմ 'ի տունջեան և ոչ կարեմ յառնել, այդ բարուրքն է. հայեաց 'ի Ճանապարհորդս, 'ի պղնձագործս և 'ի դարբինս և յայլ ձեռաբուեստս, զմեծ մասն գիշերին 'ի գործ յարուցեալս։ Պատկառեա՛ թէ և ոչ յումեքէ՝ 'ի գիշերապահացն, որք զամենայն գիշերն շրջին մեծամեծս գոչելով, ընդ սառնամանիս և ընդ անձրևս բերեալք. և նոքա վասն մարդկային ահի և վասն քոյոյ ընչից. արի և դու վասն ոգւոյքոյ հանդերձ կնաւ և որդւովք և աղախնովք, որպէս նոքա զորոց վերագոյն լուաք։ Ցիշեա զԴաւիթ, որ թագաւոր գոլով զամենայն գիշերս արտասուէր. փութա և դու արտասուօք դալարեցուցանել 'ի գիշերի զտապացեալ ոգիդ տունջեամբ։ Եւ առ այս յոյժ օգնական լինի քեզ գիշերային խոր լռութիւնն 'ի յիշատակ մահուդ զքեզ ածելով, տեսանելով քո զդուռոցս և զամիրսուս ընդարմացեալս քնով իբրև զմեռեալս։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

«Բ ԲՐԵՒ այգ եղև, էր խռովութիւն մեծ 'ի մէջ զինուորացն, զի արդեօք Պետրոսն եղև»։ Զի որ ինչ եղևն առ նա 'ի հրեշտակէն, անցայտ 'ի զինուորացն եղև. և զի թէ և զնոսա ևս ընդ Պետրոսի հանեալ էր հրեշտակին, փախուստ գոլ կարծեցեալ լինէր իրքն։ Ա՛յլ քանզի ոչ գոյր ընդ նոսա զոր այնչափ զգուշութեամբ պահէին, մեծապէս իսկ խռովէին յահէն Հերովդի, միանգամայն զարմացեալք ընդ իրսն։

ԵԹԲ. «Իսկ Հերովդէս իբրև խնդրեաց զնա և ոչ եգիտ, հարցեալ զպահապանսն հրամայեաց սպանանել»։ Զի զորս ուրախ արար մանուանմն Յակոբայ, տրտմեցուսցէ մանուամբ սպանչացն առաքելոյն։

ՈՍԿ. Ա՛յլ թերևս տարակուսեսցի որ՝ թէ ընդէր անտես արար ՅՈՒՇԺամ զմանկունսն կոտորեալս վասն Քրիստի, և այժմ դարձեալ զզինուորսն սպանեալս 'ի պատճառս Պետրոսի, և մանաւանդ զի հնար էր յետ Պետրոսի և զնոսա ազատել։ Ասեմ, թէ որպիսի՞ միտս եղև այժմ, ասա ինձ. զի ահա մանկունքն որ անիրաւ զաւրիս կրեցին, հանգիստ գտեալ շահեցան և ոչ միասեցան։ Իսկ ընդէր և ոչ վասն Յակոբայ ասես զայդ. զի և զնա ոչ փրկեաց։ Ա՛յլ քանզի անհասանելիք էին գործք նորա, և ոչ ոք բաւէ քննել։

Իսկ յաղագս զինուորացն ասեմք՝ թէ զի այժմ չէ ժամանակ դատաստանի իւրաքանչիւր ումեք զարժանն հատուցանել։ Եւ այլ ազգ. ոչ եթէ Պետրոս ընկէց զնոսա 'ի ձեռս նորա, այլ զի պարտեալ եղև՝ այն մանաւանդ տրտմեցուցանէր զնա. որպէս զնորուն պապն խաբեն 'ի մոգուցն բարկութիւն վաւէր և ծառնակ կացուցաներ, նոյնպէս և սա կիզոյր բարկութիւն. վասն վրիպելոյն 'ի սպանանելոյ զՊետրոս զզինուորսն սպանանէր անիրաւաբար։ Վասն զի հարցանելոցն զպա-

հապանան՝ ապաքէն լուաւ 'ի նոցանէ զտոյգն, զի կա-
պանքն այնպէս կային անկեալ, և զի մինչև ցայն դի-
շեր ընդ նոսա էր. այլ նա այնմ միտ ոչ առնէր. կամ
զգայր զաբանչսն, այլ զնոսա ապանանէր առ ամբար-
տաւան ցաստանն։

Զ. Ա որ ասելի է, թէ ով անզգամ, ոչ տեսանես զի
երկաթքն ոչ լուծեալ է և ոչ փշրեալ, և պահապանքն
'ի ներքս, և արտաքուստ բանան փակեալ, և յորմն
տանն ոչ ակն հատեալ. և այսք ամենեքին գոչեն՝
զի ոչ մարդկային էր յափշտակելն նորա։ Արդ զոսոս
ընդէր դատապարտես. մի թէ սոքա փախուցին. ընդ-
էր և ոչ ինքեանք ընդ նմին փախեան, գիտելով զան-
ներելի դառնութիւնդ քո։ Այլ թերևս ինչ առեալ
արձակեցին. այլ ուստի տայր, որ և աղքատի տալ ոչ
ունէր։ Այլ պարտ էր յայսցանէ սքանչանալ նմա և
'ի միտ առնուլ՝ թէ ուծային և ոչ մարդկային էր գործ-
ն, և զարհուրել զի յանիրաւ իրս յանդգնէր։ Բայց
այնուհետև 'ի ձեռն սպանման նոցա ամենեցուն յայտ-
նի լինէր նորա չարութիւն և ոչ սքանչելիքն։ Եւ դու
տես զՀմարտութիւն Ղուկայ, զի զայսոսիկ ոչ թաք-
ուցանէ. և թէ զիարդ միաբանի միւս աւետարան-
չին։ Թէպէտ զմանկանցն սա ինչ ոչ Ճառեաց յաւե-
տարանին. բայց զՅովհաննուն միայն։ «Եւ ինչեալ 'ի
հրեաստանէ 'ի Կեսարիա և անդ լինէր»։ այսինքն
Հերովդէս։ Յայտ է ասա զի Յերուսաղէմ գործեաց
զվերագոյն պատմեալս և զսպանումն Յակոբայ։

ԵՒՍ. Այս իբրև առ Պետրոս վերիպեցաւ 'ի չար կա-
մանցն, յամօթ եղև և տարակուսեալ էջ 'ի Կեսարիա,
յայն որ ասի թէ Պէննադա է նա. յորում էր 'ի յի-
շատակ սքանչիցն տեառն առ կինն տեռատես՝ պատ-
կերն պղնձի։

ՈՍԿ. «Այս էր Հերովդէս ցաստամբ ընդ տիւրացիս
և ընդ սիդոնացիս»։ Ընդէր զայս պատմեցիս յիշէ ասա,
կամ զինչ միաբանութիւն ունի յառաջիկայս։ Եւ կարի
'ի Ճահ. զի զչարութիւն նորա մասամբ ինչ յայտնեաց,
կամի և զամբարտաւանութիւն նորա ցուցանել, և զայ
դատաստանին վՃիռն. զի յամենայնի զՀմարիտն ցուց-
ցէ, բերէ զայս 'ի միջ թէ էր նա ցաստուցեալ ընդ սի-
դոնացիս։ «Եւ նոքա առ հաստակ եկին առ նա»։

ինձ թուի զի և զնոսա 'ի պատասխանիս ածելով զՀետ տարեալ լինէր. քանզի ցասկոտ և խռովասէր միտս ունելով բարկացեալ էր 'ի վերայ նոցա, և զՀրեայսն հաՃեցուցանել կամէր։ « Իսկ Ծուրացիք 'ի բանի աբարեալ զԲղաստոս սենեկապետնորա խնդրէին զխաղաղութիւն »։ Տես թէ զիարդ իբրև տառապեալ մի 'ի մտաց դիւբաւ 'ի բարկութիւն յուզէր, և անազատ գոլով 'ի ձեռն միոյ սենեկապանի 'ի հաշտութիւն փոխէր, յամենայնի ծառայ գոլով Հանդիսին։ Եւ քանզի վասն սովոյն վտանգի որ 'ի վերայ կայր, զոր վերոյ յիշեաց, աղաչէին նոքա կերակրել զաւառի նոցա յարքունուստ։

« Իսկ յաւուր միում երևելոջ Հերոդիադս զգեցեալ էր զՀանդերձ թագաւորութեան և նստէր յատենի, և հրապարակաւ խօսէր ընդ նոսա »։ Տես որպէս մնափառ էր այրն. զի Հանդերձեալ տալ նոցա զձիրն՝ հրապարակաբանէր յատենին։ Իսկ Յովսեպոս ասէ՝ թէ Հանդերձս պայծառս յարծաթոյ պՃնեալ զգեցեալ էր. ուստի ընդ շողոյ արեգականն 'ի վերայ անկանելոյ Ճառագայթք արձակէին. և այսպէս նստէր 'ի տես խաղուն հրապարակախօսելով առ նոսա։ « Եւ ամբոխն աղաղակէր՝ թէ՝ այ է բարբառն և ոչ մարդոյ »։ Տես զնոցա սուտակասպասութիւն թէ զնչ աղաղակէին, ՃԾ կարդալով զմարդ մահկանացու։ Տես և զառաքելոյն խոհեմութիւն, զի զնա որ զաղգս բոլորովին այնպէս հաՃեցուցանէր, նոքա զնա ատէին։

« Այլ անդէն եհար զնա հրեշտակ տեառն, փոխանակ զի ոչ ետ փառս այ. և եղեալ որդնալից ատամակեցաւ »։ Ոչ փոքր օգուտ եղև այս ինչ առ 'ի գիտել և 'ի միտ առնուլ զիրաւունս այ. զի տես թէ որպէս վաղվաղակի դատաստանն արդար Հաս 'ի վերայ. թէ պէտ և ոչ վասն Պետրոսի, այլ վասն նորին դառոյ բարձրամտութեանն։ Ասէ՝ ամբոխն աղաղակեցին, նմա զինչ մեղ էր։ Ա յս. վասն զի ախորժելով զայնպիսի ձայնն ընկալաւ, զի զանձն արժանի գոլ կարծեաց խաբեբայիցն աղաղակին։ Վասն այսորիկ մանաւանդ և խաբեբայքն խրատեալ եղեն մի յանդգնել տարապարտուց յայնպիսի իրս։ Տես դարձեալ զերկաբանչիւրսն արժանիս գոլ պատուհասի. զնոսա ինացեալս, և զնա տանջեալ։ Զի չէ այժմ ժամանակ դատաստանի

հատուցման . այլ նոցա թողացուցանէ, զի յայնմանէ շահեսցին զփրկութիւն անձանց . և զնա յաւէտ դատապարտեալ տանջէ զանբժշկելին ախտացեալ ։

Լուրդ Յովսեպոս ասէ՝ թէ զաւուրս հինգ 'ի խիստ հիւանդութիւն անկաւ 'ի տես ուսմկին ։ Եւ քանզի բազումք ոչ գիտացին զայն եթէ հրեշտակ տեառն էհար զնա, աւետարանիչն եդ և զայս իսկ որպէս և գիտեր Հոգւով զՀշմարիտն ։ Սակայն և անգիտանալն զայն բազում օգուտ էր , խորհելով նոցա թէ վասն ազաղակին եղև այն և վասն սպանման Յակոբայ և վասն զուր կոտորածի զինուորացն ։ Եւ տես , զի յորժամ զառաքեալսն սպան , ոչ ինչ այնպիսի գործեցաւ . այլ յորժամ զսոսա՝ դատապարտեցաւ ։ Եւ զի եկեալ առնա սուտակասպաս լինելին ասելով զի թէպէտ ցայժմ մարդ մահկանացու Համարեաք զքեզ , այլ այժմ գիտացաք ՅԾ գոլ զքեզ , իսկ և իսկ ապա 'ի կրունկն ամբարհաւաճ բարբառոյն յորդուցոս զեռեալ գաբելապես , և ողջմիտքաբար տանջանօք քակեալ զկենցաղն՝ այլ ոչ լինի երևեալ վիրագն ։ Լուրդ պարտ էր 'ի միտ առնուլ զայս Հրէից , թէ նա լուաւ միայն թէ ՅՅ ձայն է և ոչ մարդոյ . և մանաւանդ ինքն ոչ ինչ ասացեալ և զայնպիսի կիլս կրեաց , ապա յոյժ մանաւանդ և ՔՇ , եթէ ոչ էր ՅԾ , զոր և ինքն միշտ ասէր՝ եթէ « Բանն զոր խօսիմ , ոչ է իմ , այլ Հօրն որ առաքեացն զիս » . և « Իմ թագաւորութիւնս չէ յայսմ աշխարհէ » . և զայլս օրինպիսիս ։

« Լոյս բանն ՅՅ ՅՅԷր և բազմանայր » ։ Տես զՅՅ տնօրէնութիւնն և զՀանգիստ նոցա զմեծ լեռ նեղութիւնն , և բազում բարիս 'ի նորա պատուհասին ։ Քանզի այսոցիկ այսպէս եղեալ , Հաւատացեալքն բազմացեալք լինէին ։ « Բառնաբաս և Սօղոս դարձան յԵրուսաղէմ իբրև կատարեցին զպաշտօնն » ։ Զայն ասէ զպաշտօն , զի տարան նոքա զԹոշակն 'ի պէտս սրբոցն որ յԵրուսաղէմ , առեալ ընդ իւրեանս և զՅՅովհաննէս՝ որ կոչեցաւն Մարկոս ։

« Լոյս էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք և վարդապետք , Բառնաբաս և Շմաւոն կոչեցեալն Նիգեր , և Ղուկիոս կիւրենացի , և Մանայէն դայեկորդի Հերովդի չորրորդապետի և Սօղոս » ։ Տա-

կաւին յառաջագոյն զԲառնաբաս և զայլսն յիշէ. զի ոչ եւս էր Պաւղոս պայծառացեալ և ոչ նշանս ինչ գործեալ։ Մինչդեռ 'ի պաշտաման տեառն կային և պահէին, ասէ Հոգին սուրբ »։ Զինչ է 'ի պաշտաման տեառն կալն։ Զբարոզութիւնն կոչէ պաշտօն։ Արդ պահն կատարէին և պաշտօն. զի գիտասցես թէ բարոզումն արթնութիւն պէտք էր։ « Ասէ Հոգին սուրբ »։ Եւ որպէս ասաց ցնոսա.'ի ձեռն մարգարէիցն թերևս. վասն այսորիկ յառաջագոյն ասաց՝ թէ մարգարէք էին յեկեղեցւոջն։

Արդ դիտեա այսուհետև զիշխանական զօրուն Հոգւոյն սքի. զի պահելով նոցա, ասաց, ասէ Հոգին սուրբ. « Որոշեցէք ինձ զԲառնաբաս և զՍօղոս 'ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զգոսա »։ Զի՞արդ արդեօք համարձակիցի ոք ոչ նորին հայրական իշխանութիւնն գոլ ասել զայսոսիկ։ Եւ քանզի զՊաւղոս Քա կոչեաց յառաջագոյն, որ և ասաց իսկ « Անօթ ընտիր է նա ինձ »։ և ինքն զՀօրն իսկ ասէ, « Ա՛յլ ոչ, ասէ, յորժամ կամեցաւ՝ որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ, և կոչեաց զիս 'ի ձեռն ընտրեցեալ իւրոց աւետարանել զՈրդին իւր ինձ »։ Իսկ ասա ասէ Հոգին սուրբ՝ որոշեցէք ինձ 'ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զգոսա։ Ա՛յլ զի յայտնի լիցի թէ որ Հօր ասի՝ այն Որդւոյ է և Հոգւոյն, և որ ինչ Որդւոյ և Հոգւոյ՝ նոյն և Հօր։ Եւ զի ոչ ասաց որոշեցէք տեառն՝ այլ ինձ, զմիութիւն իշխանութիւնն այսու եցոյց։ Իսկ զինչ է որոշեցէքն ինձ 'ի գործ. այս ինքն յառաքելութիւն։ Ա՛յլ զայս առնէ Հոգին, զի մի իցեն նոքա հասարակաբար ընդ այլոցն. քանզի եւ տես զնոսա մեծագոյն զօրութիւն ունելով և բազմաց հնարաւորեալ զիրկութիւն, շատ համարեցաւ միայն լինել նոցա։

« Յայնժամ պահեալ և աղօթս արարեալ՝ եդին ձեռս 'ի վերայ նոցա և արձակեցին »։ Տես որչափ ինչ մեծ է պահքն և բազում բարեաց պատճառք. քանզի պահելով նոցա ասաց Հոգին՝՝ որոշեցէք ինձ։ Եւ յորժամ պարտ էր ձեռնադրել, պահս ընդ աղօթից լծակցեցին և եդին ձեռս 'ի վերայ նոցա։ Տես 'ի ձեռն որոց ոմանց եղին ձեռնադրեալք. Ղուկիոսի կիւրենացւոյ, Շմաւոնի և Մանայէնայ. զի իմասցին թէ 'ի

ձեռն Հոգւոյն եղև ամենայն. զի ոչ նորա, այլ Հոգւոյն սուրբ. զի որչափ դէմքն նուազագոյնք էին, այնչափ ՝ի շնորհքն մեծապէս լիներ ՝ի նոսա։ Արդ ձեռնադրեալք եղեն այնուհետև յառաքելութիւն, իբրև իշխանութիւն քարոզել և առնել սքանչելիս, զորս և համանգամայն ձեռնադրեալք ՝ի բաց արձակեցին։ Արդ զիարդ ապա ինքն ասէ. «Ոչ ՝ի մարդկանէ և ոչ ՝ի ձեռն մարդոյ»։ Այո. զի ոչ եթէ մարդ ոք զնա կոչեաց և աշակերտեաց, այլ Ա՛ծ. այս է՝ ոչ ՝ի ձեռն մարդոյ. ըստ որումն և աստանօր զարձակիլն ասէ ոչ յումեքէ, այլ ՝ի Հոգւոյն սրբոյ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ վերստին յիշեցուցանեմ զկարևոր պիտանութիւն պահոց. բայց ոչ այնչափ պնդութիւն խեղդ արկանեմ անսուաղ լինել, և ոչ զչափաւոր կերակուրն խափանեմ՝ որ տիրապէս է վայելումն. այլ յանչափ որկորստութիւն և ՝ի մեսասկար արբեցութիւն ուժգին սաստիւ ՝ի բաց լինել հրամայեմ, որ մանաւանդ ապականիչ է հոգւոյ և մարմնոյ, և բազում աղմկով և խառնվութիւն զհոգին պաշարէ, և քան զդիւահարսն դժընդակագոյն զզուանօք լցկէ։ Զի ո՞ւմ վայ, եթէ ոչ որոց յամենն ՝ի գինւոջ։ Եսաւ յորկորստենէ կորոյս զանդրանկութիւն. ժողովուրդն նստաւ ուտել և ըմպել և կռապաշտել։ Խնայեա՛ ՝ի քեզ և տես ՝ի նահատակսն զի անսօր և նրբագոյն մարմին զօրեղ է։ Ա՛ռ և ՝ի մեծոյ օրինակ զժուժկալ պահեցողս, զորոց Ղուկաս պատմաբանեաց։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

«Լ. Ի նոքա առաքեալք 'ի Հոգւոյն սրբոյ ելին 'ի Սելևկիա »։ ՅԱնտիոք լինի Պաւղոս ձեռնադրեալ 'ի Հոգւոյն, քարոզել ուր առաքեսցի։ Ա՛յլ դուս յորժամ լսես թէ 'ի Հոգւոյն առաքեցան, մի խնդրեր հասու լինել ամենայնին. զի ոչ միայն ձեռնադրեալք եղեն 'ի Հոգւոյն, այլ և 'ի բաց առաքեցան։ Ա՛ռդ ելեալք 'ի Սելևկիա, ոչ դեգերեին անդ յերկար. գիտելով զի 'ի մերձաւոր քաղաքէն Տարսոնէ առեալ լինին բազում օգտակարութիւնք։ Ա՛յլ առ կարևորսն փութալով «Անտի նաւեցին 'ի Կիպրոս »։ Իբրև ոչ գոլով անդանօր դաւաճանուէ. մանաւանդ զի ընդարձակեսցի քարոզութիւն. քանզի ՅԱնտիոք բաւական էին այնք։ և Փիւնիկէ մերձ էր 'ի Պաղեստին. իսկ Կիպրոս ոչ էա։

«Լ. Ի հասեալք 'ի Սաղամինա, որ էր մայրաքաղաք Կիպրացւոց, պատմէին զբանն ՅԱ »։ Քանզի ՅԱնտիոք զամ մի ողջ արարեալ, պարտ էր և անդանօր գնալ։ և ոչ հանապազ աստ ևեթ նստել. այլ զի և նոքա մեծագոյն վարդապետաւքն վայելեսցեն։ «Եւ 'ի ժողովս Հրեիցն նախ պատմէին զբանն ՅԱ »։ զամենայն փոյթ նոցա արարեալ յառաջագոյն, զի մի վիճաբանագոյնս[1] զնոսա գործեսցեն։ » Ունէին և զՅովհաննէս պաշտօնեայ »։ զՄարկոս ասէ, քանզի երկանուն էր։ «Եւ շրջեալ ընդ ամենայն կղզին մինչև 'ի Պափոս »։ Ի մայրաքաղաքէն սկսեալ անցանէին ընդ բոլոր կղզին. եկին 'ի Պափոս, և անդ առ արմատ ցաւոցն հասանելով[2] զՀոգեմոնն աշխարհին ուղղել փութացան։

«Լ. Գտին անդ զայր մի մոգ սուտ մարգարէ հրեայ, որում անուն էր Բարեյեսուս »։ Որպէս անդ Սիմոն մոգ, դարձեալ և աստանօր երևի մոգ հրեայ՝ անուն Բարշուսա։« Որ էր ընդ փոխանակի բդեշխին »։ այս

1 Միւսն յիմաբանագոյնս։ 2 Միւսն հոգանելով։

է զի շրջէր նա ընդ անթ հիպատին Սերգեայ Պաւղոսի առն խմատնոյ . որոյ աղաչեցեալ զԲառնաբաս և զՍօղոս՝ խնդրէր լսել զբանն ՝այ։ Այլ խմաստուն ասէին զանթ հիպատն՝ ոչ է ըստ ակնառութեան . և ահա յիրացն տեսջիր թէ ո՛րպէս ոչ բաղում բանից կարօտացաւ , և զիարդ իւրովի աղաչանօք կամեցաւ լսել նոցա։ Բայց և զանուանն ևս զնորին ասէ , որ զառաջինն Սերգեա զոլով , յայտ է զի զերկրորդն նորոգ կոչեցին Պաւղոս։ Եւ սքանչելի են սորա իրքն . զի նախ ըմբռնեալ կախարդութիւն մոգին և կամէր լսել զբանս առաքելոցն։ Զայս ինչ և սամարացիքն արարին, զորս էրբե�մոպշեցուցանէր Սիմոն։ Բայց տես աստ զառաքեալսն.զի ընդ կախարդինն ոչ ինչ ասէին մինչև ինքն էտ զպատՃառն, այլ միայն զբանն ՝այ պատմէին։ Եւ քանզի զայլսն տեսին հաւատացեալս , և առ մի միայն հայէին առ անթ հիպատն , զի և նա հաւատասցէ։

«Այլ ընդդէմ եկաց նոցա Ելիմաս մոգ , զի այսպէս թարգմանի անուն նորա. խնդրէր շրջել զփոխանակ բդեշխին 'ի հաւատոց »։ Տես զնախանձութիւն և զնշանութիւն յամենայնի պատՃառ չարեաց վատթարացն , որպէս սմա . զի ահա յորժամ այլոցն քարոզէին, ոչ կարի վշտանայր մոգն . իսկ յորժամ առ հոգեւոնն եկեալ լինէին քարոզել նմա , յայնժամ մոլեր ընդդէմ կացեալով։

Այլ աստանօր 'ի բաղդատութիւն յաղթութեան պայծառ երևի , կախարդութեն յաղթահարեալ լինելով . վասն զի Սօղոս որ է Պաւղոս , զի յետ ձեռնադրութեն փոխեցաւ անուն նորա որպէս Պետրոսին և այլոցն , «Սա լցեալ Հոգւովն սրբով » , զի մի զասացեալսն սրտմտութիւն գոլ կարծիցես , «Հայեցաւ 'ի նա և ասէ . ով լի ամենայն նենգութեամբ և խորամանկութեամբ որդի սատանայի »։ Ոչ են բանքս անարգողի , այլ յանդիմանողի զծածկեալ չարութեն 'ի նմա . զի զխիստսն և զանամեթն այսպէս պարտ է զարհուրեցուցանել։ Լի , ասէ , ամենայն նենգութիւ , ոչ ինչ նուազեալ 'ի չարեաց։ Լի խորամանկութիւն . զի կեղծաւորութիւն կայր , փրկութեան ձևով կորուսանել խնդրելով զանթիպատոն։ Որդի , ասէ , սատանայի . զի զնորին գործէր զգործ , յորմէ և կախարդութեն կորուսիչ։

« Թշնամի ամենայն արդարութեան » . զի ամենայն արդարութիւն այն իսկ էր զոր քարոզէրն ։ Բայց այսու և զկենցաղն նորա յանդիմանել չար և զեղխ գոլ ։ « Ոչ լուաս 'ի Թիւրեղոյ զՃանապարհս տեառն զուղիղս » ։ Ոչ ասաց թէ ընդդէմ ոչ դադարեաս դարձուցանել զանթիպատդ , այլ ընդդէմ Թիւրեաց զուղիղ Ճանապարհն տեառն ։ Ոչ ընդ մեզ մարտնչիս , ասէ , այլ ընդդ ուղիղ Ճանապարհին տեառն ։ Զայսոսիկ գովելով ասէ , զզշմարտութիւնն ցուցանելով ։

« Լաւ արդ ահա ձեռն տեառն 'ի վերայ քո , և եղիցիս կոյր չտեսանել զարև մինչև 'ի ժամանակ մի » ։ Զեռն զներգործութիւն Հոգւոյն ասէ . և այս ոչ էր պատուհաս , այլ բժշկութիւն եթէ կամիր ։ Գրեթէ այսպէս ասէ , թէ ոչ ես առնեմ զայս , այլ ձեռն ՅՍ . և ահա եղիցիս կոյր ։ Որով ինքն ածեալ եղև , կամէր և զնա ածել . բայց աստ ոչ լոյս որպէս շուրջ զՊաւղոսիւ փայլեաց ։ Իսկ ասելն՝ թէ մինչև 'ի ժամանակ մի , ոչ էր պակաս նշան քան զկուրացուցանելն ։ Եւ դարձեալ տայ նմա այսու յոյս թէ կամեսցի . զի ոչ էր բանն տանջողն , այլ դարձուցանողն . զի թէ տանջել միայն կամէր , հանապազ սահմաներ 'ի վերայ նորա զկուրութիւն ։ Բայց այժմ ոչ այսպէս , այլ առ ժամայն , զի զանթիպատն շահեսցի , և նմա տացէ 'ի չարեացն ապաշխարել . վասն զի ոչ ախորժէին առաքեալքն պատուհասելով զթշուառականսն երևելիք լինել , մանաւանդ ըզթշնամիսն . զի առ ընտանիսն վայելչապէս պատահի այս , այլ առ օտարսն ոչ և . զի մի 'ի հարկէ հաւատալն կարծիցի և յերկիւղէ ։

« Լաւ անդէն անկաւ 'ի վերայ նորա մէգ և խաւար , և շրջէր խնդրեր առաջնորդս » ։ Զարդ նշան կուրութենն առաջնորդին խնդրելն էր . և այն յայտնի առնէր զոր յոգւոյն նորա էր կուրութիւն ։ Եւ թէ ընդդէմ ոչ այլ ինչ նշան արար , զի թերևս այն ոչ լինէր այսմ հաւասար առ 'ի յըմբռնել զթշնամին . զոր յառաջագոյն ամբաստան լինելով եցոյց արժանի գոլ կրելոյ զայս , զի զյառաջագոյն ըմբռնեալսն կախարդութիւնն այնպիսի պատուհասիւ պարտ էր խրատել . որպէս գէտքն և մոգքն առ Մովսէսիւ 'ի ձեռն խաղաւարտից խրատեալք լինէին ։

« Յայնժամ տեսեալ փոխանակի բդեշխին զիրսն որ եղեն, հաւատաց՝ զարմացեալ ընդ վարդապետութեան տեառն։ Տես զի նորա խաւարմամբն անթիւ պատն ոչ միայն հաւատաց, այլ զարհուրեալ և զարմացեալ յառաջագոյն՝ ետես զի ոչ լոկ բանք և պատրանք էին այն։ Եւ տես թէ նա որչափ սէր և ցանկութիւն ունէր առ վարդապետութիւնն, ի սկզբանէ գոլով այնպիսի։ Բայց ոչ յամէն նոքա ի տեղւոջն, զի հաւատաց անթիւ պատն. և ոչ թուլացեալ կակղանան դիւրութիւնն և պատուոյն, այլ իսկոյն ի գործ բանին՝ որ յայնկոյս էր ի գաւառն դիմեն։

« Լու ամբարձեալ ի Պափէ պաւղոսեանց՝ եկին ի Պերգէ Պամփիւլեայ »։ Ամբարձան ասելոյն զարաղաձեպ փոյթ ընթանալոյն կամի յայտ առնել։ « Յովհաննէս մեկնեալ ի նոցանէ դարձաւ յԵրուսաղէմ »։ Չհեղգութիւն նորա յայտ առնէ այսու. իբրու զի ընդերկարաձիգ այնու հետև առնէին նոքա Ճանապարհ. և մանաւանդ զի նա պաշտօնեայ էր, և նոքա ունէին զհոգն և զտագնապն. այլ ոչ բարկացան ինչ առաքեալքն ի վերայ նորա. զի ոչ կարեւոր ինչ էին իբրք նորա, այլ ի գործ անդր փութային։ « Նոքա գնացեալ, ասէ, ի Պերգեայ եկին յԱնտիոք Պիսիդեայ »։ Տես զիարդ համառօտէ շարագիրն, և ոչ մի ըստ միոջէ պատմէ մեզ։

« Լու մտեալ, ասէ, ի ժողովուրդն յաւուր շաբաթու՝ նստան »։ Դարձեալ հրէական ձևով ի ժողովուրդն մտանեն, որպէս զի մի մարտուցեալք լիցին կամ հալածեալք, այլ զի նախ բանին Ճանապարհ հորդեցին. ըստ որում և ոչ յառաջագոյն սոքա խօսեցան, այլ ի նոցանէ յորդորեալք իբրև զօտարս ոմանս ի բանն յորդորելով զնոսա։ « Եւ յետ ընթեռնլոյն զօրէնս և զմարգարէս՝ առաքեցին առ նոսա ժողովրդապետքն և ասեն. արք եղբարք, եթէ իցեն ի ձեզ բանք միսիթարութեան առ ժողովուրդդ, խօսեցարուք »։ Տես ժողովրդապետան տակաւին զայս իսկ առանց մխանաց արարեալք. բայց յետ այսորիկ ոչ ևս։ Առ որս ասելի է. եթէ զայսոսիկ ախորժելիք դուք, յայժ մանաւանդ պարտ էր ձեզ միսիթարել ուրախութիւն։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Այլ առաղ թշուառութեանս, զի իշխանասիրութիւն զամ ինչ վերՙի վայր կործանէ. որոց առաջնորդք որպէս կուրաց պիտոյ են։ Այլ երանի թէ առաջնորդս խնդրէին այնպիսի կոյրքն, և ոչ յառաջ վազէին այլոց լինել առաջնորդք։ Այլ թէպէտ բուռն է անտես այս, այլ երկիւղն այ բաւական է զսա յաղթահարել. զի թէ յերկիւղէ կամ յամենոյ մարդկան բազում անգամ զանտաւոր յարձակմունս մեր խափանեմք, քանի՞ և թէ զերկիւղն այ առաջի աչաց ունիցիմք՝ մնոտի փառաց ցանկութե՛ յաղթեմք։ Եւ տես թէ զիարդ և զայս ուղղեցին առաքեալքն, որպէս ասէ. և եթէ փառս սիրես[1], զաստուծոյինն սիրեսջիր։

1 Միւսն ֆառաւէր է։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

«ՅՈՏՆ եկաց Պաւղոս»։ Արդ յառաջագոյն ասացելովքն ոչ փոքր ինչ յաղագս Պետրոսի իմացեալք, այսուհետև զՊաւղոսի զիրսն իմասցուք։ Ասատանօր առաջին Պաւղոս քարոզէ. քանզի այլ ոչ ևս էր երկեալ անդ։ Եւ տես զնորա հանձարն. զի ուր էր բանն սփռեալ, անդուստ զանց առնէր. և ուր չև ևս էր հասեալ, անդանօր դեգերէր. որպէս և ինքն գրելով ասէ՝ թէ «Ամենայն առատացաք աւետարանել, ոչ ուր անուանեցաւ Քս, զի մի ի բերև յայլոյ հիման վերայ շինեցիս»։ Եւ այս բազում արուեստ նորա էր. զի 'ի սկզբանէ աբանչելի էր այրն, խաչեալ աշխարհի և ձակատամարտեալ առ ամենայն տեսակս ձգանց. գիտէր որչափ հնորհս ընկալաւ, և հաւասարակշիռ զփոյթն 'ի նեղբս մուծանէ։ Ոչ զանդիտեաց 'ի Հրէիցն յառաջագոյն յորժամ 'ի մէջ բազմութեանն սպառնացելոցն յԵրուսաղէմ էր. և ասատ դարձեալ 'ի մէջ նոցա մտանէ։ Եւ տես թէ որպէս լինի տնօրինեալ 'ի Հոգւոյն ոչ քարոզել Պաւղոսի առ Երուսաղէմացիսն. զի այն միայն իսկ շատ էր անդ՝ լսելն թէ հաւատաց. այլ քարոզելով ոչ ներէին թերևս վասն ատելութեանն զոր ունէին առնա. սմին վասն և 'ի հեռաւոր տեղիս գնաց՝ ուր ծանօթ ոչ գոյր, և անդ քարոզէ։

Այլ տես այժմ զբառնարաս տեղի տալով Պաւղոսի. և զիարդ ոչ. այնմ զոր ինքն ածէր 'ի Տարսոնէ. այլ որպէս Յովհաննէս Պետրոսի յամենայնի տեղի տայր և մանաւանդ պատկառելի և մեծ քան զնա գոլով։ Բայց քանզի ամենայն ուրեք 'ի հասարակաց օգուտն հայէին, և ոչ յանձանց մեծարանս, տեղի տային միմեանց։

Եւ ընդէր յոտն յառնէր Պաւղոս. զի սովորութիւն էր այսպէս առնել։ «Շարժեաց, ասէ, զձեռն»։ Նոյնպէս և շարժել ձեռինն 'ի լսելն յորդորելով։ Եւ տես

թէ օրպէս բանին Ճանապարհ հորդէ. նախ գովութիւն ասացեալ թէ «Արք իսրայէլացիք». ցուցանելով նոցա անուամբն այսու զլաւագոյն մատակարարութիւնն ՝ի. զի հասարակաց փրկութեան որ Քրիստոս՝ զնահապետս նոցա հաՃեցաւ լինել սկզբունս։ Իսկ ասելովն «Եւ ոչք երկնչիք յայ», թուի թէ զեկամուտսն՝ի հեթանոսաց ասէ։ Այլ ոչ ասաց՝ թէ և որ՝ի ձեզ եկք են, զի մի թուիցի օտարացուցանել զնոսա յԻսրայէլ. այլ ասէ՝ ոչք երկնչիք յայ. կամ թէ զնոյն ինքն զերկիւղն ՝ի ասէ։

Ի՞նչ ժողովրդեանս այսորիկ Իսրայէլի ընտրեաց ըզհարսն մեր»։ Տես զիմաստութեան նորին և զդիր բանին՝ թէ զիարդ կամ ուստի սկսանի. զՃշ կարդալով, որ է հասարակաց ամենայն մարդկան արարիչ։ Եւ՝ի սկիզբն բանին ցուցանէ՝ի վերուստ՝ի նահապետացն զերախտիսն նորուն մեծապէս առ նոսա գոլով, որպէս և Ստեփաննոս առնէր։

«Այլ զժողովուրդն բարձրացոյց, ասէ, ՝ի պանդխտութեանէ երկրին եգիպտացւոց, և՝ի բազուկ բարձր եհան զնոսա անտի»։ Ահաւասիկ զառաջին ուղղութիւն ոչ նոցա ինչ զնէ, այլ երախտեացն ՝ի. նա, ասէ, ընտրեաց և բարձրացոյց և յաղթութեան զգեցոյց։ Եւ այսորիկ ոչ եթէ նոցունց ինչ էր գովութիւն, զի ոչ եթէ հայցեցին և նա ետ։ Եւ յորժամ՝ի բաղմութեան աՃեցին յԵգիպտոս, ասէ, յայնժամ զաքանչելիսն առաւել ապրար վասն նոցա։ Զսոյն և մարգարէքն յիշեն միշտ՝ որ ինչ յԵգիպտոս եղեն իրքն։ Եւ տես թէ օրպէս զժամանակաւոր պատահարացն զանց առնէ և զնոցանէ զամբաստանութիւնսն՝ի մէջ ոչ ածէ, այլ նոցին թողացուցանէ խորհել և միայն զայ մարդասիրութիւնն յիշեցուցանէ։

«Եւ իբրև քառասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապատին» ասէ։ Ապա և զընակութիւն երկրին որ տուաւ ցեղիցն վիՃակաւ, ասէ. «Եւ քակեաց զազգս եօթն յերկրին Քանանու, և ժառանգեցոյց նոցա զերկիրն նոցա»։ Ապա և գյոլովութիւն ժամանակացն ասէ. «Իբրև ամս չորեքհարիւր և յիսուն. և յետ այնորիկ ետ նոցա դատաւորս, զկնի անապատին և Յեսուայ ասէ, մինչև՝ի Սամուէլ մարգարէ»։

Աստանօր զզանազան անօրինեալ իրքն՝ որ ըստ նոցա էր՝ յայտնէ. զի 'ի ձեռն յիշելոց զիրսն որ յԵզեկիայսոսէ և այսր՝ բաւական լիցին լսողքն 'ի միտ առնուլ զառ ինքեանս զբարեմտութիւն նոցա։

«Եւ անտի յառաջ ինդրեցին, ասէ, Թագաւոր»։ Եւ ոչ ասէ զանգիտութիւն և զանօրէն յանդգնութիւն նոցա, այլ յամենայնի զայ մարդասիրութիւն։ «Եւ եւ, ասէ, նոցա զՍաւուղ որդի Կիսեայ այր յազգէ Բենիամինի, ամս քառասուն. և իբրև փոխեաց զնա, յարոյց նոցա զԴաւիթ Թագաւոր, որում և ասաց վկայութիւն, յայտ է թէ առ Սամուէլ. գտի զԴաւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն կամս իմ»։ Յոյժ վայելչապէս զԴաւիթ միայն գովեստիւ դնէ. և ասացելովքս ցուցանէ՝ զի 'ի նմանէ էր Քս. որ ոչ էր փոքր վկայութիւս այս առ 'ի հաւատալ՝ 'ի նմանէ լինել Քսի։ «Ի սորա զաւակէ, ասէ, ըստ աւետեացն յարոյցեալ Իսրայէլի զփրկիչն Յն»։ Արդ վերագոյն ասացելովքս յայտ արարնոցա՝ թէ և այժմ ըստ առաջին սովորութեանն զՈրդին իւր առաքեաց ՅԾ առ մշակսն յայգին, որպէս և զծառայսն յառաջագոյն. իսկ ըստ աւետեացն զայն ասէ՝ զոր առ Դաւիթ և առ Աբրահամ և մարգարէիքն կանխաձայնեալ։

«Ի՞նչ յառաջագոյն քարոզութեանն Յովհաննու առաջի երեսաց մտի նորա, միրտու թէ ասպաշխարու թէ ամենայն ժողովրդեանն Իսրայէլի։ Եւ իբրև ընդոյր Յովհաննէս զընթացսն, ասէր՝ զո՞ ոք կարծէք զինէն թէ իցեմ. չեմ ես այն. այլ ահա գայ զկնի իմ, որում չեմ արժանի զկօշկիս ոտիցն լուծանել»։ Բերէ 'ի մէջ զՅովհաննէս հանդերձ մեծամեծ վկայութիւնքն զոր քարոզէր։ Սոյնպէս և Յովհաննէս աւետարանիչ գրելով զսկիզբն աւետարանին փութալով առ նա ասպաւնի, քանզի մեծ էր անուն նորա յամենայն տիեզերս։ Եւ ոչ ասէ զիրսն յինքեանէ, այլ զնորին վկայութիւս յառաջ բերէ։ Յովհաննէս վկայէ զնմանէ, ասէ. և ոչ վայրապար. այլ զի ամենեքեան նմա ընծայէին զփառսն՝ թէ նա է Քն։ Եւ նա 'ի բաց ընկենոյր զայն յիւրմէ, որ ոչ փոքր ինչ էր առնէն զայս. զի և ոչ իսկ է հաւասար զպատիւ փառացն զոր ոչ ոք տայ և զայն զոր ա-

մենեքեան ընօրհեն՝ 'ի բաց վարել յինքենէ. և ոչ զայն միայն, այլ և այնչափ ամիսոիմամբ զինքն 'ի խոնարհ մատուցանել։

«Լ՚ՔՐ եղբարք՝ որդիք աբրահամեան տոհմին, և որ 'ի ձեզ երկիւղածք իցեն յայ»։ Դարձեալ 'ի Հօրէ ան-տի կոչէ զնոսա, զի որդիքն հօրն նմանեսցին։ «Ձեզ, ասէ, բանս այս փրկութեան առաքեցաւ»։ Յա-մենայնի զայն Ձեռի ցուցանել՝ թէ ընտանի է նոցա բարին, զի մի իբրև օտարի ումեմն հայեցողք եղեալ փախչիցեն։ Աստանօր զձեզդ ոչ Հրէիցն տայ. այլ ա-սելովն՝ ձեզ բանս այս, այնոցիկ ասէ՝ որ 'ի բաց լինին պատառեալ յայնցանէ՝ որ սպանանել զՔրիստոս յանդգնե-ցան։ Եւ յայտ առնէ զասացեալս միւս բանն զոր 'ի վերայ բերէ. «Բայց որ բնակեալ են Յերուսաղէմ հանդերձ իշխանօքն նոցա անծանօթք եղէն 'ի նմանէ. և ըստ բարբառոյ մարգարէիցն, որ զամենայն շաբաթ-սքն ընթեռնուին, դատեալ կատարեցին»։ Ոչ գիտա-ցին զնա, ասէ. և որպէս կամ զիարդ ոչ գիտացին՝ Յովհաննու այնչափ քարոզելով։ Նա և մարգարէքն, ասէ, աղաղակեին։ Աստ դնէ և այլ ամբաստանութիւն։

«Եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խընդ-րեցին, ասէ, 'ի Պիղատոսէ սպանանել զնա»։ Ոչ էր այս անգիտութիւն. քանզի դիցուք թէ իբրև զՔրիստոս ոչ ընդունէին զնա. սպանանէին ընդէր, և զայն յայլազ-գւոյն խնդրելով։ Տեսանէս որչափ փոյթք էին 'ի սպա-նանել։ Ասէ և զյեղանակ մահուն. զի յայտ լիցի թէ առ 'ի դատելոյն զնա անիրաւաբար՝ դատեալ կատա-րեցին, ասէ. այն է զի ամենեքեան դատապարտեցին զնա թէ մահապարտ է։ Մի հանդամայն և զնոցանէ մեծապէս ամբաստանէ, զի առն այլազգւոյ մատնեցին զնա. զի ոչ ասէ թէ հանդիպեցան իրացն, այլ խընդ-րեցին, և ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ սպանին զնա. զոր և Պետրոս ասաց՝ թէ 'ի դատելն նոցա ար-ձակել Արդ անգիտութիւն էր այս սխալանք. քաւ լիցի։

Լ՚ՍԼ քանզի յոյժ սիրեր զնոսա Պաւղոս և կամէր զիրկուութիւն նոցա, տես թէ որպէս և յաղագս նոցա պատասխանատուն հանդարտօրէն, թէ ոչ գիտացին զնա. և ոչ զայս միայն, այլ և ցուցանել փութայ՝ թէ այսպէս պարտ էր լինել, անօրէնութիւն դնէ զիրսն գոլ

ասելով . « Եւ իբրև կատարեցին զամենայն որ վասն նորա գրեալն էր » ։ Քան զոր զինչ մեծագոյն ժարհութիւն նշանակ , զի ձաղեցին Թքին կատակեցին և հաւանեցուցին զՊիղատոս 'ի խաչ հանել զնա ։ « Եւ ի՞նչ ուցեալ 'ի փայտէն եդին 'ի գերեզմանի » ։ Տես զի 'ի նոցանէ Թաղեցաւ , որոց խոստացեալ էր լինել փրկութիւն ։

« Այլ ՝՝՝ մեծ յարոյց զնա 'ի մեռելոց » ։ Տեսանես և զսա 'ի նմին Հոգւոյ շարժեալ որպէս Պետրոս , այնպէս 'ի վեր և 'ի խմնարհ զչարչարանսն , զգերեզմանն և զյարութիւնն քարոզելով ։ Այլ ուստի է յայտ թէ յարեաւ , կամ ո՞վ են վկայք , զայս դարձեալ ցուցանէ 'ի նոցունց իսկ 'ի վկայիցն և ապա 'ի գրոց ։ « Երեւեցաւ , ասէ , աւուրբք բազմաք այնոցիկ՝ որ ելեալ էին ընդ նմա յԵրուսաղէմ , այսինքն 'ի Գալիլեէ 'ի հրեաստան . որք և արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն » . առ այն որ սպան զնա ։ Արդ եթէ ոչ ՝՝՝ մեծայինն զօրութիւնն հաստատեալ էին և ստուգեալ թէ ՝՝՝ է Քս , ոչ տային այսպիսի վկայութիւն առ սպանողսն և արիւնահեղս ։

Ապա և 'ի գիրս ապաւինի ուժգին առնելով զվկայութիւնն ։ « Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն որ առ հարսն եղեալ էր . զի զնոցն ՝՝՝ կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅն » ։ Զխոստումն , ասէ , հարքն ընկալան . իսկ զկատարումն դուք » ։ Ապա ըզ Դաւիթ և զԵսայի ածէ վկայս ասացելոցն՝ զհաւատարիմն և զայտնիսն ։ « Որպէս և 'ի սաղմոսին գրեալ է յերկրորդում . Որդի իմ ես դու . ես այսօր ծնայ զքեզ » ։ Այսու յայտ առնէ թէ Որդի է ՝՝՝ , որոյ և այլ վկայութիւնքն 'ի սաղմոսի անդ հետևին ։

« Այս զի յարոյց զնա 'ի մեռելոց , և ոչ ևս դառնալոց է յապականութիւն . այսպէս ասէ Եսայեաւ՝ թէ տաց քեզ զսրբութիւնս Դաւթի զհաւատարիմն » ։ Ասա զի զգուշութիւն պարտ է հայել յասացեալս , նախ յիշեսցուք զասելն Ամասիայ քրմի Բեթելայ առ ՝՝՝ մեծայինն Ամոս , թէ « Երթ գնա և մի ասա մարգարեանար , զի սրբութիւն թագաւորի է » ։ Ուստի իմանամք ապա սրբութիւն Դաւթի ասել՝ կամ զվայելչութիւն խորանին զոր պատրաստեաց կանգնեաց Դաւիթ , և հանգոյց անդ զտապանակն՝ յորում կարգեաց և զսաղմոսանուագսն , կամ զիշխանութիւն աթոռոյն ա-

սէ սրբութիւն և զփառս թագաւորութիւնն Դաւթի, որ յարութիւնն Քրիստոսի հաստատեցաւ. ըստ այսմ թէ «Յաթոռն Դաւթի նստցի». և նա ինքն է եկեղեցի այ, յորոյ վերայ թագաւորեաց Քրիստոս, սրբեալ զնա միանձնական, զոր հաւատարիմ ասելումն նշանակէ։ Յայս հայի և այն՝ թէ «Տաց քեզ զհեթանոսս»։ Իսկ 'ի կէս օրինակս՝ տաց ձեզ, ասէ, զսրբութիւնս Դաւթի. յայտ է զՔրիստոս, որ իւրով յաւիտենականնոր ուխտիւն, այսինքն իւրով արեամբն ոչ միայն տանն Դաւթի, այլ և ամենայն աշխարհի եղև սրբութիւն։

«Զանգի և 'ի միւսումն ասէ. ոչ տացես ՝ողջ քում տեսանել զապականութիւն»։ Այսու զհաւասարազօր՝ փրկագործութիւն Հօր և Որդւոյ յայտնէ, ոչ տացես ասէն։ Բայց 'ի միտ առ յասացելոցս՝ անապական քարոզեալ զնա և նախ քան զդնիլն 'ի գերեզմանի՝ որ է տեղի ապականութեան. զի ոչ ասէ թէ վերառցես զնա յապականութենէ, այլ ոչ տացես զնաւ տեսանել կամ զփորձ առնուլ. զի կարկեսցէ զասացողսն այ լայլելի գոլ զնա։

Այս տես թէ զիարդ ոլորէ զբանն մանուածով 'ի նա հապետացն, 'ի մարգարէիցն, 'ի զաւակէն որ ըստ աւետեացն. ապա զՅովհաննէս 'ի մէջ ածէ ընդ այլ մարգարէսն, զորոց և ասէ դատելով լցին զամենայն գրեալսն։ Ապա վկայս յարութեանն զառաքեալսն ածէ. ապա զԴաւթի վկայութիւնն շարամանելով զՀինգն և զնորս. որպէս զի 'ի ձեռն երկաքանչիւրոցն հաւատարմացուսցէ զբանն քաղցրութիւն։ Քանզի թէ ասացեալ էր՝ թէ ըմբռնեցէք զնա դուք և սպանէք, 'ի միտս իւրեանց օտարացուցանէր զնոսա. ամին վասն ոչ իբր ընդ քաղասպանից խօսի, և ոչ որպէս օտար բարութիւնս ընձեռելով նոցա. այլ ընտանի և հաղորդ։ Քանզի յոյժ փափաքելի էր նոցա անունն Դաւթի. ապաքէն 'ի ձեռն որդւոյ նորա, և ընդ թագաւորութիւն նորա զնոսա լինել ասէ։ Եւ տես թէ զիարդ գովեստիւ յիշէ զԴաւիթն և զմեծ վկայութիւնն այ ածէ 'ի մէջ վասն նորա, թէ «Գտի զԴաւիթն որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմում»։

Այլ զի մի այսորիւք նախասացեալքն զԴաւթի

1 Միւսն զհաւասարազօրութիւն քրիստոսորդեանն։

գոլ կարծիցին՝ ածէ 'ի վերայ. «Աչալ Դաւիթի յաչ գի անդ իւրում պաշտեաց գնած, և 'ի կամն ոչ քաղաքավարեալ ենջեաց»։ Որպէս Պետրոս յառաջագոյն խօսի զնմանէ իբր զսկզբնաւոր զիրէ, առ որ աւետիքն ոչ եղեն։ «Պարտ է, ասէ, համարձակութեամբ ասել վասն նահատակին Դաւթի»։ Եւ ասա ոչ ասէ Պաւղոս թէ վախճանեցաւ, այլ թէ յաւելաւ առ Հարս իւր և ետես զսպականութիւն։ Տեսանէս թէ որպէս սա ուժգին բանիւք բարբառի։ Զայս իսկ ոչ ուրեք ասաց Պետրոս այսպէս։

Լաւ իբրև ամրացոյց զբանն որ վասն յարութեանն Քրիստոսի, համարձակապէս և աւետեաքն յորդորէ. «Ցայտնի լիցի ձեզ, արք եղբարք, զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց աւետարանի. և յամէ յորմէ ոչ կարացէք օրինաքն Մովսէսի արդարանալ, սովաւ ամ որ հաւատայ՝ արդարանայ»։ Եւ ընդէր ոչ ած զվկայութիւնն 'ի ձեռն որոյ հաւատալի էր՝ եթէ թողութի մեղաց սովաւ տուեալ լինի։ Քանզի այս էր մեծագոյն փոյթն՝ ցուցանել եթէ յարեաւ. և այսմիկ խոստովանելի և ղեալ, ապա և այն իսկ աներկբայելի լիներ 'ի ձեռն այսմ։ Եւ այլ ազգ. քանզի կամէր զնոսա 'ի փափագուն ածել մեծագունիս այս մահու, որով թողութի մեղաց աւետարանի. ապա ուրեմն ոչ 'ի բաց լքեցելոց էր մահն նորա, այլ մարգարէութեաց լրումն։ Նա և սքանչելի, զի թագեալն 'ի գերեզմանի թողութիւն զմեղս առաւել քան զօրէնսն։ Եւ ոչ ասաց թէ յորմէ ոչ կամեցայք, այլ թէ զոր ոչ կարացէք օրինաքն Մովսէսի արդարանալ. սովաւ որ հաւատայ, ո և իցէ արդարանայ, յօրինացն ոչ ինչ շահելով։ Արդ այս որքան երախտիք ոչ իցէ. վասն այսորիկ յետոյ եդ զթողութիւնն և մեծագոյն զսա ցուցանէ, յորժամ անհնար էր օրինաքն լինել այսմիկ։

Լոյս փոխաբերեալ լինի բանիւն, 'ի վերայ նոցա հասուցանելով զերկիւղն և զսպառնալիսն. նախ ցուցեալ զփափաքելին նոցա զօրէնսն արտաքս ելեալ, զի ոչ կարացին նովաւ արդարանալ. և 'ի պատշաճին դեղերի՝ թէ որ հաւատայ, արդարանայ. և եթէ մեծամեծք եղեն բարութիքն նոցա հաւատովքն՝ ցուցանէ 'ի հպատակ լինելն, և գժնդակ չարիք յոչ լսելոյն։ Իսկ Ստեփաննոս վայելչապէս զայս ոչ առնէր,

զի 'ի սպառնալիսն միայն և 'ի նոցա չարութիւն զբանն հանգուցանէր. քանզի հանդերձեալ էր մեռանել, տեսեալ զնոսա 'ի սպանանել և ոչ յուսանել պատրաստս. այլ և ցուցանէր թէ վայելչապէս օրէնքն քակել լինի։ Իսկ սա ոչ ևս այսպէս. այլ սպառնայ և երկեցուցանէ միայն, և 'ի հեշտանս զբանն հասուցեալ՝ յիշեցուցանէ ասա մարգարէութիւս պատմութեամբ, առ որս բազում կրեցին չարիս. և զայս 'ի կատարման բանին շարադրէ ասելով. «Զգոյշ լերուք, գուցէ եկեսցէ 'ի վերայ ձեր սպառնալիք մարգարէին. տեսէք արհամարհոտք և զարմացարուք և եղծարուք»։ Տես թէ օրպէս խոշորագոյն գոլով բանին համառօտեալ լինի։ Մի հասցէ 'ի վերայ ձեր առ այլս ասացեալն՝ թէ գործ մի գործեմ՝ ես յաւուրս ձեր, գործ՝ որում՝ ոչ հաւատայցէք եթէ ոք պատմեսցէ ձեզ։ Արդ մի սքանչանայք, ասէ, եթէ անհաւատալի ձեզ թուի գոլ իրքս այս. զի այսմ այսպէս լինել յառաջագոյն 'ի վերուստ առ հարքն ասացեալ է։ Եւ զի խիստ և բազմախնամութեամբ էր դիտողութիւն բանիցս, և եթէ նոքա բուսանդակապէս լսելով 'ի միտ ոչ առին, այլ աղաչէին դարձեալ զնոյն լսել, ոչ ինչ էր սքանչելի։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ զարհուրեսցուք, գուցէ և առ մեզ հանդիպեսցի ասացեալս՝ թէ զգոյշ լերուք արհամարհողք. քանզի բազմատեսակ չարիք 'ի մեզ հաստատեալ են, թէպէտ և մեզ թուի թէ 'ի խաղաղութիւն եմք։ Եւ քան զբոլորսն այս իսկ է դժնդակագոյն, զի ոչ Ճանաչեմք թէ 'ի չարիս եմք։ Եւ մի ինձ զլոկ գալն յերկեղցիս 'ի կատարելութիւն սակի դիցես. այլ թէ զինչ շահիցէ ոք գալովն ասա. զի յիւրաքանչիւր յաճային զրոց դեղ առցէ վերայ հոգւոյ իւրոյ. թէպէտ և ոչ զամենայն 'ի միում աւուր, այլ մասն ինչ այսօր և մասն ինչ վաղիւ։ Եւ մի ասիցես թէ ոչ պոռնկիմ. զի ահաւասիկ ընչասէր ես։ Տես, Ճնչղուկ թէպէտ ոչ ամենայն մարմնովն, այլ միով ոտամբ ըմբռնի, 'ի կորուստ երթայ. ապա և մեզ ամենայն ախտից զգուշանալ պարտ է ոգեկանաց, հնչականաց և մարմնականաց. զի կատարեալ լիցուք փրկեալք 'ի փառս Քրիստոսի։

ՃԱՌ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ

«Իբրեւ եղին անտի, աղաչէին 'ի միւսում շաբաթուն խօսել նոցա զնոյն բանս»։ Տեսեր զհանճար բանիցն Պաւղոսի. ընդ որ ոչ միայն յայնմ ժամու սքանչացան, այլ և ցանկութիւն արկ նոցա երկրորդ լսողութիւն. քանզի ասացեալքն իբրև զսերմանիս ոմանս 'ի խոր անկեալ։ Եւ զի ոչ երկայնաժամանայն և ոչ պատմեաց բանիւ ընդ երկար, որպէս զի կակղացուսցէ դեռ ևս զմիտս նոցա և ընտանեցուսցէ ինքեան, և մի տարտամն և հեղգս գործեսցէ զնոսա՝ յանկարծակի զամենայն 'ի լսելիս նոցա հեղլով։ Ասաց թէ թողութիւն մեղաց 'ի ձեռն նորա աւետարանի մեզ. բայց թէ ո՞րպէս՝ ոչ յայտ արար զոր և խնդրէին իսկ ուսանել։ Եւ տես զի յետ այսորիկ զՊաւղոս քան զԲառնաբաս յառաջագոյն դնէ Ղուկաս։

«Իբրև արձակեցաւ ժողովուրդն, ասէ, զհետ երթային բազումք 'ի Հրէից անտի և 'ի պաշտօնէից եկամտից հետանոսաց զՊաւղոսի և զԲառնաբայ, որք խօսէին ընդ նոսա և հաւանեցուցանէին զնոսա կալ մնալ 'ի շնորհն այ»։ Տեսանես զյոժարութիւն լսողացն. զի 'ի ձեռն բանիցն ոչ միայն կապակցեցաւ ընդ նոսա ամբոխն, այլ և աղաչէին զնոյն լսել. իսկ 'ի ձեռն գործոց զփոյթն ցուցանէին զհետ գնալով նոցա։ Խակնաբա ոչ միայն ընդունէին զնոցին հնազանդութիւն, և ոչ խարեութիւն զնոցա իրն համարէին, այլ ամենայնիւ աղաչէին զնոսա կալ մնալ 'ի շնորհն այ։ Եւ ընդէր ոչ վաղվաղակի մկրտեցին զնոսա։ Չի տակաւին ոչ էր ժամ. այլ հաւանեցուցանել պարտ էր, որպէս զի հաստատութեամբ 'ի հաւատս կացցեն և մնասցեն։

«Այս 'ի գալ միւսոյ շաբաթուն գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն այ։ Իբրև տեսին Հրէայքն զամբոխն, լցան նախանձու. և ընդդէմ դար-

ձեալ ասացելոյն 'ի Պաւղոսէ՝ Հայհոյէին»։ Իսկ նախ քան զայս ընդդէմ ոչ հակառակէին. զի չև և ս էին շաբ ժեալ նախանձու. քանզի 'ի ձեռն ախտիս այսորիկ ամենայն ուրեք կորնչէին Հրեայքն. որք իբրև տեսին զի կրկին խօսէլն պայծառագոյն արար զնոսա, խոցեալք նախանձու և զայլս խոցոտել կամէին. և որք յառաջագոյն աղաչէին կրկին խօսել նոցա, այժմ ոչ միայն ընդդէմ կալով հակառակին, այլ և հայհոյեն և ասելի չարութիւն ոչ երբեք իրօք իւիք լինի դադարեալ։

«Համարձակեալ Պաւղոսի և Բառնաբայ ասէին. առ ձեզ նախ պարտ էր խօսել զբանն այ. և քանզի դուք մերժեցէք զնա և ոչ արժանիս համարեցայք զձեզ կենացն յաւիտենականաց, ահաւասիկ դառնամք 'ի հեթանոսս»։ Տես յարժանի և 'ի չափու լեալ զհամարձակութիւն առաքելոցն և զգեղեցկութիւն բանիցն իմաստութիւն. զի 'ի վիճաբանել Հրէիցն ոչ անարգեցին ինչ զնոսա, և ոչ ընդարձակեալ 'ի բացեայ գնալով տարածեցին վաղվաղակի զբարոյութիւն, մինչև պատասխանի արարեալ նոցա, և անպարտս յամբաստանութիւն զինքեանս առ իւրեանցն ցուցեալ, և ասա մանաւանդ էառուն զանձինս 'ի հեթանոսս։ Զի թէ Պետրոս պատասխանուոյ կարօտանայր առ կատակողն, յոյժ մանաւանդ սոքա։

Այս ասելովն թէ ձեզ նախ, եցոյց թէ յառաջագոյն նոցա պարտ էր խօսել զբանն քան հեթանոսաց. և ասելովն թէ պարտ էր, զնոյն յայտ արար թէ հարկաւոր էր իրքն։ Իսկ նոքա զոր ինչ առ մարգարէսն առնէին ասելով մի խօսիք ընդ մեզ յանուն տեառն, զնոյն առնեն և աստ. զոր և ասելովն՝ թէ դուք մերժեցէք զնա, զայս ինչ յայտ առնէ՝ թէ ոչ զմեզ, ասէ, մերժեցէք, այլ զբանն տեառն. զի ոչ եթէ առ մեզ է ամբարտաւանութիւնդ առ 'ի ձէնջ, այլ ընդ այ։ Եւ զի 'մի՝ որ բարեացն հաղորդագոյ կարծեսցէ զնոսա յասելն՝ թէ ոչ արժանիս դատին զինքեանս կենացն յաւիտենից, սմին վասն ասաց՝ թէ դուք մերժեցէք զնա։ Եւ ոչ ասաց թէ անարժանք էք. և տանջանք և վայ կայ և մնայ ձեզ. այլ թէ դուք համարիք զանձինս։ Բազում հեզութեամբ և համարձակութիւն լի է բանս։

Լ։ քանզի անպատասխանիս արար զնոսա, ասա ա-
սէ՝ յայսմ հետէ դառնամք 'ի հեթանոսս։ Տես և ասա
զառաւել գութն. ոչ ասաց թէ 'ի բաց թողումք ըզ-
ձեզ, այլ որպէս թէ հնար է մեզ դարձեալ ասասանօր
դառնալ։ Եւ զի ասաց՝ դառնամք 'ի հեթանոսս, զայս
վկայութիւն 'ի մարգարէէն հաստատէ, ցուցանելով թէ
այսմ լինել առ հեթանոսս ոչ 'ի ձերոյդ եղև ամբար-
տաւանութիւն։

«Լ։ Այլ քանզի այսպէս պատուիրեաց մեզ տէրն». և
ձեզ 'ի բաց ելանել և նոցա 'ի ներքս մնանել. ոչ առ
'ի մէնջ, այլ առ 'ի ձէնջ եղև, որ և յառաջ էր քան ըզ-
ձեզ յայ կարգեալ։ «Եդի, ասէ, զքեզ 'ի լոյս հեթա-
նոսաց լինելքեզ փրկութիւն։ Զայս ասա զՀաւատացն ա-
սէ, իսկ փրկութիւն զդիտութիւն. որ և է իսկ փրկութիւն
մեծ՝ գիտելն յո հաւատաց, որ կարողն է փրկել։ Եւ
զի մի զայս լսելով հեթանոսացն կարծիցեն թէ ինք-
քանց փրկելո

ընկալեալ 'ի նոցանէ։ Եւ յայտ առնէ այսու՝ թէ ոչ դադարեալ զանգիտեցին ինչ առաքեալքն վասն նախանձու նոցա, այլ 'ի գործն քարոզութեան յաւելուին. զի և մեզ ուսուսցեն թէ վասն այլոց նախանձու և հակառակութեան զբարին ոչ է պարտ խափանել։ Եւ տես դարձեալ թէ որպէս զբանն այ առաքելովքն հալածելով Հրեայքն յինքեանց՝ այլոց մեծամեծ բարութիս կազմեն. զի ահա ոչ 'ի քաղաքին միայն, այլ և 'ի գաւառսն սփռեցին զքարոզութիւն։

« Բայց Հրեայքն գրգռեցին զպաշտօնեայ կանայս զգաստս և զգլխաւորս քաղաքին, և յարուցեալ հալածանս 'ի վերայ Պաւղոսի և Բառնաբայ և հանին 'ի սահմանաց իւրեանց »։ Տեսանես թէ որչափ իրս վըՃարեցին հակառակորդքն քարոզութեան, և թէ յորպիսի յանդգնութիս և 'ի չարութիս զոր ինքեանք ոչ զօրեցին՝ ետուն հաւանութիս գլխաւորաց և կանանց զգաստից տիկնաց և մեծամեծաց քաղաքին. և զնոսա 'ի մարտ յարուցեալ արարին և նեղութիս Պաւղոսի և Բառնաբայ, և հալածեցին զնոսա 'ի սահմանաց անտի իւրեանց։

« Եւ նոցա թօթափեալ զփոշի ոտից 'ի վերայ նոցա՝ եկին յԻկոնիոն »։ Ասատանօր ահագին իրօքն զոր արարին, երկիւղ արկանէին նոցա. զի այնպէս այնուհետև հրամայեաց Քս, թէ « Որ ոչ ընկալցին զձեզ, զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք 'ի վկայութիւն նոցա »։ Եւ նոքա ոչ եթէ վայրապար զայն ինչ արարին, այլ յորժամ 'ի նոցանէ հալածեալ եղեն։ Ա՛յլ այս աշակերտացն ոչ ինչ արար մնաս, այլ առաւել կային և մնային 'ի բանին տեառն. զորոց և ասէ՝ թէ « Աշակերտքն լնուին խնդութիւբ և Հոգւով սրբով »։ Թէպէտ հալածեալս տեսին զվարդապետսն. զի կարիք նեղութիւն ոչ 'ի բաց բառնայ զՀամարձակութիւն վարդապետացն և ոչ զփոյթ աշակերտաց։ Կամ թէ զնոցանէ առ որս չոգանն՝ ասէ թէ լնուին խնդութիւբ և Հոգւով սրբով. զի եկին հասին վարդապետքն նոցա. զի բազում է բնութիւբ զօրութեան աւետարանին։

« Եւ եղև յԻկոնիոն 'ի միասին մտանել նոցա 'ի ժողովուրդն Հրէից և խօսել նոյնպէս »։ Զինչ է 'ի միասին մտանելն. յայտ է զերկոցունցն նշանակելըզ-

Պաւղոսի և զԲառնաբայ 'ի մտանելն 'ի Ժողովսն և քարոզել զբանն , նոյնպէս որպէս յԱնտիոք ։ « Մինչև հաւատալ Հրէից և Յունաց բազմաց յոյժ » ։ Դարձեալ 'ի Հրէից Ժողովսն մտանեն ։ Տես թէ որպէս ոչ ինչ զանգիտէին 'ի նոցանէ . այլ և ասացեալ բազումս սեպհականութիւն թէ դառնամք 'ի հեթանոսս, սակայն 'ի բաց բառնան՝ դարձեալ առ նոսա մտանելովն՝ զպատճառս և զպատասխանիս նոցա ։ Իսկ Յոյնս ասա՝ զայնոսիկ թերևս ասէ , որ յունարէն խօսէին 'ի նոցանէ . վասն զի 'ի միջի նոցա բնակեալ էին ։

« Բայց անհաւանս Հրեայքն , ասէ , որք ոչ հաւանեցան , յայտ է՝ յարուցին և չարացուցին զանձինս հեթանոսացն 'ի վերայ եղբարց » ։ Դարձեալ զհեթանոս յարուցանեն 'ի վերայ , իբրև թէ ինքեանքն ոչ չատանալով 'ի չարիսն ։ Զինչ է յարուցինն և չարացուցին . այսինքն դաւաճանեցին զառաքեալսն բազումն չարախօսելով զնոցանէ . և զի անամբոխք էին հեթանոսքն , փոխադրեցին զնոսա չարութիւնս զիարդարդեաց ոչ գնացին անտի . զի ոչ եղեն հալածեալք , այլ մարտուցեալք միայն հակառակելով , և զամենայն ինչ յոյժ ապաստան արարեալ ։

« Բազումս ժամանակս շրջէին համարձակեալք տեառնէն վկայութիւն և բանիւ շնորհայ իւրոց , տալով նըշանս և արուեստս լինելոյ 'ի ձեռս նոցա » ։ Աբդ մի նուազութիւն իրս կարծիցես զասէն Պաւղոսի զՅոյն , « Որ վկայեացն առաջի պոնտացւոյ Պիղատոսի » . քանզի այն իսկ վկայութիւն յայնժամ յորդորեր և գործէր զհամարձակութիւն առաքելոցն ։ Հանդերձ բանիւ շնորհացն և . այսինքն որով բազումս ժամանակս շրջելով նշանս և արուեստս առնելով համարձակեալք լինէին ։ Բայց հանդերձ սոքիմք առաւել ևս համարձակոյնս առնէր զնոսա յօժարութիւն իւրեանց ։

« Այլ եղեն հերձուածք 'ի բազմութիւն քաղաքին . ոմանք էին 'ի Հրեայսն և ոմանք յառաքեալսն » ։ Ոչ փոքր ինչ էր հերձանիլն 'ի միմեանց . և այս է զոր ասաց Փա .« Ոչ եկի տալ խաղաղութիւն , այլ սուր » ։ Իբրև եղև դիմել հեթանոսացն և Հրէից իշխանաքն իւրեանց 'ի թշնամանել և 'ի քարկոծել զնոսա , ազգ եղեալ նոցա փախեան 'ի քաղաքս լիկոնացւոց և 'ի Լիւստրոս և 'ի Դերբէ և շուրջ զգաւառաւն , և անդ աւետարանէին ։

Հայեաց դարձեալ թէ որպէս 'ի Ճահ տարածանել կամելով զքարոզութիւն յամենեսեան, և յետ տարածանելոյն ՃՀմամբ՝ դարձեալ զնոսա արտաքս հանեն։ Այլ իբրև արշաւէին նոցա դառն ցասմամբ ազգ եղև առաքելոցն, ոչ կացին մնացին անդէն, այլ խնամարկեալ հաւատացելոցն՝ զի մի առաւել բորբոքեսցեն զցասումն դիմելոցն 'ի վերայ ինքեանց՝ փախեան ոչ միայն 'ի քաղաքէն, այլ և 'ի գաւառէն ևս։

Սակայն հալածումն յամենայնի մեծամեծս գործէր բարութիւս. զի հալածիչքն լինէին պարտեալք և ամաչեցեալք. և հալածեալքն պայծառք և ընտիրք երևեալք։ Որպէս ահա «Այր ոմն լիւստրացի տկար յոտիցն նստեր կաղ յորովայնէ մոր իւրոյ, որոյ երբէք չէր գնացեալ. սա լուաւ զխօսեալն Պաւղոսի, որ հայեցեալ 'ի նա և տեսեալ թէ ունի հաւատս փրկութիւն՝ ասէ մեծաձայն. քեզ ասեմ յանուն տեառն մերոյ Յի Քրիստոսի, յոտն կաց 'ի վերայ ոտից քոց ուղիղ. և վազվազեր և գնայր»։ Տես զնորա իմաստութիւնն. լսեր, ասէ, զասացեալսն 'ի Պաւղոսէ, զի ոչ ինչ ինասէր կաղութիւն զիոյթ լսողութենն. առ որ հայեցեալ Պաւղոսի ծանեաւ զհաւատս նորա թէ արժանի է կենաց, քանզի փութով ընկալաւ զբանն յօժարութիւն. իսկ առ այլոցն նորին հակառակն լիներ, քանզի յառաջագոյն զմարմնոս բժշկէին և ապա զհոգիսն։ Այլ սա ոչ այնպէս. այլ նախ 'ի հոգին նորա հայեցաւ Պաւղոս և ասաց ձայնիւ մեծաւ։ Ընդէր ձայնիւ մեծաւ. առ 'ի հաւատալ բազմութեանն։ Իսկ նա վազվազէր ընդէր. զի այն էր ստուգագոյն նշան առողջութեան, կամ զի անփորձ իսկ էր գնալոյ։

«Եւ ժողովրդոյն տեսեալ զոր արարն Պաւղոս՝ բարձին զձայնս իւրեանց լիկոներէն և ասէն. ՃՃՔ նըմանեալ մարդկան իջին առ մեզ. և կոչէին զԲառնաբաս Դիոս, որ է Զեւս, և զՊաւղոս Հերմէս, քանզի նա էր առաջնորդ բանին»։ Արդ զայսոսիկ զբանս յիւրեանց բարբառն լիկոնտերէն խօսէին, թէ ՃՃՔ նմանեալ մարդկան։ Բայց ոչ ևս յայտնէին զայս առաքելոցն. սմին վասն և նոքա ոչ ինչ նախ ցնոսա ասէին. իսկ յորժամ տեսին զզոհս և զպսակս, յայնժամ և զՀանդերձս պատառեցին։ Իսկ զի կոչէին զԲառնաբաս Արտամազդ և զՊաւղոս Հերմէս, որ համբաւեալն էր

առ նոսա շահից վերատեսուչ, ինձ թուի վասն յերեսաց արժանատես և պայծառափայլ գոլոյ զԲառնաբաս. իսկ Պաւղոս 'ի բանն զարմանալի. որով և անուամբք նմանեցուցանէին։ Հերմէս կոչէին վասն քաջաբան Հարտարախօսուն. զի Պաւղոս էր, ասէ, առաջնորդ բանին. և իբրև աստուածոց զոհել կամէին։ «Զի քուրմն Դիոսի որ կայր առաջի քաղաքին, ցուլս և պսակս հասուցեալ 'ի դուռն տանն ուր էին առաքեալքն հանդերձ բազմութիւն՝ կամէր զոհել»։ Ահաւասիկ միւս ևս փորձութիւն ոչ փոքր, 'ի բազում անչափուն կարծեաց զնոցանն։ Բայց և առատանօր առաքելոցն առաքինութիւն երևի, թէ զիարդ յաղթ զամենայն վերապրէին։ Բայց դու տես զհեթանոսաց պարզմտութիւն և զհրէիցն չարագործութիւն. զի հեթանոսքն 'ի ձեռն գործոց ցուցանէին թէ լսելոյ արժանի են՝ հրամանի առաքելոցն և հնազանդութիւն, և այնպէս պաշտէին զնոսա 'ի նշանայն միայն։ Իսկ Հրէայքն ոչ միայն գայթակղէին 'ի քարոզութիւնն, այլ և հայհոյէին և իբրև զմահապարտս հալածէին։ Ասէ սոքա ոչ միայն ոչ գայթակղէին, այլ և բերկրեալ խընդային, և իբրև զաստս պաշտէին և ընծայս նուիրէին։ Ասէ թէպէտ բարեմտութիւն էր 'ի նոցունց, սակայն անգիտութիւն էր գործն և մեծ. սմին վասն ոչ ներեցին առաքեալքն իրացն, այլ փութացան 'ի փարուս այ զիրողութիւնն յեղափոխել, և ոչ անձանց։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ոգին և մեք նմանեսցուք. ամենայն ուրեք զխոնարհութիւն ողջունելով փախիցուք 'ի փառասիրութիւն։ Թէպէտ և թուիցիմք ուղղել ինչ, մի մեզ, այլ այ գրեսցուք, որպէս և էն իսկ. զի զինչ ունիմք զոր ոչ իցէ յայ առեալ. և զնոյն ինքն զհաւատս, զոր մատուցանեմք ընծայ։ Եւ թէ ունիցիմք բան և ընսրհ վարդապետուն, մի չփառասցուք այնուհիկ, և մի փանդրունահարաց նմանեսցուք, հրձուեցուցանող ևեթ ցրբտաբանելով, զի գովեսա շահեսցուք. այլ զի զլսողսն շահեսցուք։ Մի զհետ շարադրութիւն և գեղեցկութիւն բառից գնալով, այլ զօրաւորս բարբառել. որովք ըզլսողսն կարիցեմք նկարել 'ի պատկերն այ։

ՃԱՌ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՔՆԵՐՈՐԴ

«Եւ լուեալ առաքելոցն Բառնաբայ և Պաւղոսի՝ պատառեալ զհանդերձս իւրեանց արտաքս վազեցին յամբոխն. աղաղակեցին և ասեն. արք, զի՞նչ գործեք զայդ. մեք ձեզ նմանողք կարեօք մարդիկ եմք»։ Տես զամենայն ինչ ուժգնութիւն առնելով առաքելոցն, պատառեցին զհանդերձս, վազեցին արտաքս, աղաղակեցին ուժգին. զամենայն իսկ զայսոսիկ հաստատուն ընտրութիւն Հոգւոյն սրբոյ գործելով, որ և ասէայր իսկ զլեալն զայնոսիկ և սգայր. քանզի սուգ էր Ճշմարտապէս և սուգ անմխիթար, եթէ հանդերձեալ էին ՝ի ՝ն ՝ն ՝ն ՝ն կարծիլ և կռապաշտութեան ՝ի ներքս մուծանել զոր ՝ի քակել եկին։ Այլ զի այս իսկ գործ և կազմուած բանսարկուին էր, սմին վասն և ոչ նոքա իրացն հանդարտեցին. այլ նախ առաջին տեսութիւն զարհուրեցուցին զնոսա զհանդերձանն պատառելով։ Զայս իսկ և Յեսու Նաւեայ առնէր ՝ի պարտել ժողովրդեանն։ Եւ դու մի՛ կարծիցես զայս ինչ անարժան գոլ բարեկարգութեան նոցա. առնէին զայս, զի թերևս այլ ազգ ոչ լինէին խոփանեալ զայնչափ արշաւանս չարին, կամ զայնպիսի հրդեհն շինուցանել։ Այլ այսուիկ ուսանիմք, զի յորժամ ՝ի պատշաճիցն իմիք պարտ իցէ լինել, մի և մի՛ ինչ յիրաց հրաժարեսցուք։

Այլ տես և զբանն չափաւորեալ առ զարհուրմանն։ «Մեք ձեզ նմանեալ կարեօք մարդիկ եմք»։ Վաղվաղակի յառաջին բանիցն գրգռեցուցին զաչսն. ոչ ասացին պարզաբար մարդիկ, այլ ձեզ նմանեալ. և ոչ այսու շատացան, այլ յաւելին՝ թէ ընդ կարեօք անկեալ։ Տես զնոսա ՝ի փառասիրութեան կարեաց մաքուրս. ոչ միայն զի ոչ ցանկային փառաց, այլ և ըղձուեալսն ՝ի բաց բախէին։ Որպէս Պետրոս ասէր. «Ընդ մեզ զի՞ էք պշուցեալ»։ և Յովսեփ. «Ո՞չ ապաքէն Աստուծոյ էր մեկնութիւնն». և Դանիէլ. «Ինձ ոչ

առ իմաստութիւն որ յիս՝ յայտնեցաւ այս »։ և Պաւ-
ղոս այլուր. «Ոչ եմք անձամբ բաւական խորհել »։ և
ասա՝ թէ «Կարեօք մարդիկ եմք »։ Բայց այսպէս յա-
սելս յայտնի արարին՝ թէ քան զդոսա մեծագոյն եմք,
զոր դուք ասատուածս անուանեք. զի դոքա մեռեալք
են և ոչ են կենդանիք, թող թէ աստուածք։ Սմին
վասն զի մի թուիցին պատուել զկուռսն յոչ թողա-
ցուցանելն զոհել ինքեանց, հանդերձ ուսուցանելովն
և սպառնալիս ևս խառնել լի սքանչմամբ։

« Լոյս աւետարանեմք ձեզ, ասէ, յայդպիսի ունայ-
նութեց դառնալ յաստ կենդանի՝ որ արար զերկինս և
զերկիր, զծով և զամենայն որ 'ի նոսա »։ Եւ այս իսկ
մանաւանդ զնոսա խափանեաց զզոհել, յասելն թէ
յայդպիսի ունայնութեց դառնալ յաստ։ Եւ ոչ ինչ
յաղագս աներևութից իմանալեացն բարբառին, այլ
և ոչ ուրեք զմարգարէսն յիշեն առ սոսա, զի ոչ էին
գիտակ. այլ յերևելի արարածոցս կազմեն ճանաչել
նոցա զՃշմարիտն ած որ արար զամենայն և նախախ-
նամէ, և վկայք՝ նոքին իսկ արարեալքն և նախախ-
նամեալք։ Եւ եթէ ամենեցուն գոյացուցիչ է և
խնամիչ, ընդէր ոչ և զմարդիկ նախախնամէ, ահա
յետագայ բանիւս և զայն ևս յայտ առնէ։

ԵՓՐ. « Որ յանցեալ ազգսն թոյլ ետ ամենայն
հեթանոսաց գնալ զՃանապարհս իւրեանց». այսինքն
զի թողին զպաշտելն զնա՝ թոյլ ետ, այսինքն անփոյթ
արար. զի մի կարծիցեն թէ կարօտութիւն նորա որ
ապաստանն էր 'ի նոսա, ստիպեաց զնա, զի 'ի սկզբ-
բան անդ հաստատեսցէ զնոսա։

ՈՍԿ. Բայց աւասիկ զայս ոչ ասաց, քանզի առ փու-
թայեալն ՃԵպի. այսինքն ցուցանել թէ ած դոյ։
Եւ ոչ աստանօր յիշէ զանունն ՓԷի. այլ զի՞նչ. «Սա-
կայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող, ասէ,
բարերարութիւնքն տալով յերկնից անձրևս և ժամա-
նակս պտղաբերս, ընուլ կերակրովք և ուրախութիւն
զսիրտս ձեր »։

ԵՓՐ. Լոյսինքն զի թէպէտ անփոյթ արար զնո-
ցանէ, սակայն երկրպագանել կռոցն՝ նոցա ոչ կամէր.
սմին վասն և ոչ եթող զանձն իւր ՄՌանց յայտնի
վկայութեան, բարերարութիւնքն տալով անձրևս յերկ-

նից. զի բարեօքն որ յերկնից՝ Ճանաչել և օրհնել ըղ-
տեր յերկնից պարտէին նոքա։ Այսու օրքան ըղ-
կուռսն մեծամեծս էին, 'ի ձեռն սոցուն կարէին
Ճանաչել զտէրն։ Զի թէպէտ ոչ առաքեաց մարգա-
րէս 'ի մէջ հեթանոսաց, այլ ծառայքն իւր որ էն
տարերք՝ հանապազորդ զտեղի մարգարէութեան
ընուին։

ՈՍԿ. Արդ թէպէտ զայսպիսի միտս յայտնէն ասա-
ցեալքն՝ թէ ոչ եթող զինքն առանց վկայութեան, սա-
կայն ոչ կամեցաւ յայտնի բանիւ զամբաստանութիւնն
զնոցանէ առնեցուցանել. այլ մանաւանդ առ ՝ած ա-
մենևին փութայ ածել զնոսա ինքեամբ։ Եւ զի իմաս-
ցին թէ զնոսա ինքեանս ոչ է պարտ զոհիւք փառաւո-
րել քանզի մարդիկ էին. այլ մանաւանդ արժանի ՝այ
մատուցանել պաշտօն, որ արար զամենայն և ինամէ
մարդասիրութիւն։

Եւ ոչ կարի յաՃախ յամէ 'ի բանսն որ յաղագս
՝այ. այլ զիջանէ 'ի նորին ինամսն ըստ լսողացն շահու
և օգտութեան։ Եւ տես թէ ո՞րպէս զանխաբաբ զա-
բախօսութիւնն եդ, նոցա այնչափ բարութիւք 'ի նմանէ
վայելելով, և ոչ իբրև զերբախտաւոր և զնուցող Ճա-
նաչելով զնա։ Եւ նորա մանաւանդ զայս ամենայն
արարեալ նոցա, ոչ էր պարտ թողացուցանել, այլ
տանջել զնոսա արժան էր։ Բայց ոչ ասէ զայս յայտ-
նապէս. այլ զինամսն ցուցանէ զնորա. տալով, ասէ,
անձրևս և ժամանակս պտղաբերս։ Այսպէս և
Դաւիթ ասէր. «Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ
իւրեանց լցեալք եղեն». և 'ի բազում տեղիս 'ի սաղ-
մոսս անդ յաղագս գոյացուցանելոյ զամենայն ՝այ պատ-
մէ։ Զայսոսիկ բերէ 'ի մէջ և Երեմիաս. «Տէր, ա-
սէ, արար զերկիր զօրութիւք, և խորհրդով իւրով ձը-
գեաց զերկինս, և 'ի տալոյ զձայն իւր ընուս զբազմու-
թիւնս երկինս»։ Արդ Պաւղոս նախ զարարչու-
թիւնն և ապա զնախախնամութիւնն զոր 'ի ձեռն անձ-
ևաց և պտղաբերութիւնն ասաց. որպէս զի այսպիսի
բարերարութիւք խրատեսցէ զնոսա. «Ինուլ, ասէ, կե-
բակրովք և ուրախութիւք զսիրտս ձեր»։ Տեսանէս զբա-
բերարութիւնն. զի ոչ միայն ըստ բաւականի և պիտոյից
տայ զկերակուրն, այլ բազում պատուասէր առա-
տութիւք։

«Եւ զայս ասացեալ հազիւ լռեցուցին զժողովուրդն առ 'ի չզոհելոյ նոցա. այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս»։ Եւ դարձեալ զհանդերձս պատառեցին և այսպիսի բանիւք հազիւ լռեցուցին, եթէ զայս ոչ էին գործեալ զինչ արդեօք լինէր. յայտ է զի թէ ոչ էին արարեալ զայս, կարծեցեալ լինէին թերևս այլ ինչ զոհիւք և նուիրօք խոնարհել և ցանկալ պատուոյն այնմիկ յինքեանս։ Յիրաւի ապա առ այս իսկ ընդդիմացեալ կային առաքեալքն, զի 'ի բաց դարձուցեն զմոլորութիւն զայն։ Եւ այսոքիւք առաւել աքանչելիք եղեն։

«Եւ 'ի շրջել նոցա և յուսուցանել՝ եկին հասին յԱնտիոքէ և յԻկոնիոնէ Հրեայքն. և 'ի վիճել նոցա համարձակութիւն՝ պատրեցին զժողովուրդն 'ի բաց կալ 'ի նոցանէ, և ասէին թէ ոչ ինչ Աշմարտութիւն ասեն, այլ զամենայն ստեն. և քարկոծեալ զՊաւղոսն քարշէին արտաքս քան զքաղաքն, և համարեցան զնա մեռեալ»։ Ո՛վ հրեական յանդուգն և լիրք չարութիւնն, որք Աշմարտապէս որդիք էին սատանայի։ Ոչ միայն առ իւրեանց քաղաքօքն, այլ և արտաքոյ հեռի լինքեանց 'ի հանդէսն՝ որ այնպէս պատուէր զնոսա, յանդգնեցան մտանել և այսպիսի ինչ առնել, ոչ զարհուրելով յորոց պատուէին զնոսա. և այնչափ փութային խափանել զքարոզութիւնն և կործանել զհաւատս ժողովրդոցն, որչափ առաքեալքն կանգնել փութային։ «Պատրեցին, ասէ, զժողովուրդն 'ի բաց կալ 'ի նոցանէ». այնչափ՝ մինչ զի քաղաքն որ 'ի ձեռն բժշկութիւն կաղուն՝ պատարագօք աստուածս կարդային զնոսա, 'ի ձեռն չարախօսութիւն մարդոց Հրէից քարամբք քարկոծեցին զՊաւղոս և քարշեցին ընկեցին արտաքս։ Ասատնօր լցեալ լինէր ասացեալն առ նա՝ թէ «Հատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ՝ 'ի տկարութիւն կատարի»։ Եւ այս իսկ մեծ էր քան զկաղն յարուցանել։

Արդ հեթանոսականքն իբրև զաստուածս կարծէին. իսկ սոքա հաւանեցուցանէին քարկոծ առնել։ Բարիոք այս ինչ լինէր. քանզի ոչ իսկ էր յօգուտ ամենեցուն աքանչանալ ընդ նոսա. այլ 'ի նոյն քաղաքին յորում՝ այնպէս աքանչելիք երևեցան, կրէին

զդժուարինն։ Նա և այս իսկ զտեսողն շահեցուցա-
նէր, զոր և ինքն ասէր՝ Թէ «Գուցէ ոք աւելի հա-
մարեսցի յիս քան զոր տեսանիցէ յիս կամ լսիցէ յինէն։

ԵՓՐ. «ԼՀՒ 'ի պատել զնովաւ, ասէ, աշակերտացն՝
յարեաւ եմուտ 'ի քաղաքն»։ Իբրև օրն տարաժա-
մեցաւ և աղտամուղտ եղեն, գաղտուկ մուծին զնա
աշակերտքն 'ի քաղաքն։

ՈՍԿ. Ցեսանես զնա եռացեալ ոմն և հրացեալ
դարձեալ 'ի նոյն քաղաքն մտանել. յայտ է ահա զի
Թէպէտ և երբեմն տեղի տայր,այն վասն սփռելոյ բա-
նին էր. և դարձեալ զի ոչ էր պարտ զնոցայն բորբո-
քել զցասումն։ Այսոքիկ քան զիրս նշանացն ոչ էին
նուազագոյն։ Բայց և զնոսին իսկ այս գործէր պայ-
ծառագոյնս. և առաւել ևս պատրաստեր առ 'ի խրն-
դալ. զի ոչ ուրեք ասէ Թէ դարձան խնդալով զի նը-
շան արարին,այլ զի արժանի եղեն վասն անուանն ան-
արգելոյ։ Եւ զայս իսկ 'ի Քեզ լինելին ուսեալ, Թէ
«Ընդ այն մի խնդայք, Թէ այսք հնազանդին ձեզ».
զի Ճշմարիտ և զուտ խնդութիւն է կրել ինչ նեղութիւս
վասն Քեզ։ Ապա ընդ ամենայն քաղաքն անցեալ լի-
նելին, որպէս ասէ.

ԵՓՐ. «ԼՀՒ 'ի վաղիւ անդր եկ Բառնաբաւ հանդերձ
'ի Դերբէ. աւետարանեալ 'ի քաղաքին յայնմիկ և
աշակերտեալ զբազումս՝ դարձան 'ի Լիւստրա և յԻկո-
նիոն և յԱնտիոքա հաստատել զանձինս աշակերտելոցն
և միսիթարել կալ հաստատուն 'ի հաւատն. և Թէ բա-
զում նեղութիւք պարտ է մեզ մտանել յարքայութիւն
այ»։ Արդ նովին հարուածովքն իբրև զինու մտա-
նելին 'ի վերայ հալածչացն 'ի Լիւստրէ և յԻկոնիոն
և յԱնտիոքա, ուր հալածեցին զնոսա. ոչ եթէ ա-
ծել զվերսն 'ի վերայ հալածչացն,այլ զի հաստատես-
ցեն զաշակերտսն աւետարանին որ անդէն նեղեալն
էին, Թէ 'ի նեղութեանդ յորում դուք էք, և մեք
'ի նմին եմք, որով պարտ է ձեզ մտանել յարքայու-
Թիւն այ՝ որ 'ի ձեռն մեր քարոզի ձեզ։

ՈՍԿ. ԼՀՒ տես զի յառաջագոյն 'ի Դերբէ լինելին
ելեալ, հանգիստ տալով հալածչացն 'ի բարկութիւնն.
և յայնժամ դարձեալ 'ի Լիւստրա և յԻկոնիոն և
յԱնտիոքա, զի 'ի սրտմտելն նոցա՝ հպատակեին տե-

զի տալով, և դադարելով նոցա 'ի չարէն՝ դարձեալ 'ի վերայ հասանէին քարոզել։ Արդ հայեաց զի ոչ զամենայն ընդ հիւ, այլ և իւրական փուքթով մատակարարէին. «Հաստատելով, ասէ, զանձինս աշակերտելոցն». որպէս զի հաստատեալ էին նախ քան զայս. բայց զնոցն մանաւանդ յաւելուն անչարժս յօրինելով զնոսա։ Նախ ասէին զնեղութիւն. զի յորժամ հասանիցէ՝ մի եղիցին գայթակղեալք. զայսպիսի բանս ասէին և զայսպիսի գործ ցուցանէին։ Եւ այս իսկ 'ի Ճահ լինէր 'ի ձեռն առաքելոցն. ոչ վասն առաքելոցն միայն, այլ և վասն աշակերտացն. զի իմասցին անդստին 'ի սկզբանն վաղվաղակի և զքարոզութիւն զօրութիւն. և եթէ ինքեանց ևս պարտ է այնպիսի կիրս կրել, զի արիապէս կացցեն. և մի միայն 'ի նշանսըն հայեսցին, այլ յոյժ մանաւանդ և առ փորձութիւնսն։ Վասն որոյ և ինքն Պաւղոս ասէր՝ թէ զնոյն փոյթ կալարուք ամենեքեան զոր ուսարուքն և լուայք և տեսէք յիս։ Բայց տես զի հալածանք զհալածանս յաջորդէր փոխարկելով, մարտք, պատերազմունք, քարկոծութիւնք. և թէ որպիսի էր յորդորումն 'ի բազմանալ աշակերտացն, կամ՝ որպէս լինէին հաւանեցուցել զանընդել մարդիկն, առ սկիզբն՝ առաջին զնեղութիւնսն քարոզելով. ապա յաւելին և այլ մխիթարուն։

ԵՓՐ. «Զեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյն երիցունս. և աղօթս արարեալ հանդերձ պահօք յանձն արարին զնոսա տեառն՝ յոր հաւատացեալն էին»։ Տեսանէս զզօրութիւն աւետարանին. զի 'ի քաղաքս յայսոսիկ ուստի հալածեցին զնոսա հանդերձ աւետարանութիւն զոր քարոզէին, ահաւասիկ երիցունս և սարկաւագունս աներկիւղ վստահութիւն առնէին 'ի նոսա։

ՈՍԿ. Այլ ընդէր 'ի Կիպրոս ոչ ձեռնադրեցին երիցունս և ոչ 'ի Սամարիա։ Զի Սամարիա հուպ իսկ էր յառաքեալսն և Յերուսաղէմ, և Կիպրոս յԱնտիոք, ուստի բանն զօրացեալ լինէր։ Բայց և ասատնօր բազում մխիթարութեան կարօտանային որք 'ի հեթանոսացն էին, որոց պարտ էր բազում ինչ ուսանել. զորս և պահս կատարելով ուսուցանէին ժուժկալ լինել առ փորձութիւնսն. և աղօթս առնելով և

հանդերձ պահօք դարձեալ ձեռնադրութիւն լինէին։ Ահաւասիկ դարձեալ պահք, որով է իսկ մաքրութիւն անձանց մերոց։ Եւ տես զքերմութիւն Պաւղոսի. աղօթիւք, ասէ, տեառն յանձն արարին զնոսա։

«Եւ շրջեալ ընդ Պիսիդեայ եկին 'ի Պամփիլիա. և խօսեցեալ 'ի Պերգէ զբանն տեառն՝ իջին յԱտալիա»։ Այսչափս. շրջէին ընդ ամենայն դաւառսն, զի մի լեցի կործանեալ երկայնելով խորհուրդ աշակերտացն, թէ կործեցեալ աստուածքն այնպիսիս ախտանան սաստիկ նեղութիւք. եկին առ նոսա և պատմեցին զկամն՝ 'ի նեղութիս, որով և մխիթարեցան իսկ։ «Եւ անդուստ, ասէ, նաւեալ գնացին յԱնտիոք ուստի էին յանձն արարեալ շնորհացն՝ 'ի գործն զոր կատարեցին»։ Տես զանձութիւն Հոգւոյն և զշաւասարութիւն ընդ Հօր. զի 'ի Հոգւոյն առաքեալ 'ի գործն՝ շնորհացն՝ ասէ, արարեալ զայն։

Այլ ընդէր դարձեալ յԱնտիոք եկեալ լինէին. զի անդանօր պատմեսցին զամենայն զլեալսն։ Նա և այլ ազգ ևս. մեծ իրս լինի անօրինեալ, զի պարտ էր այնուհետև համարձակութիւք քարոզել հեթանոսաց։ Արդ եկեալ եղեն զայսոսիկ պատմելով, որպէս զի գիտասցեն զայն։ Եւ անօրինեալ եղև 'ի Հոգւոյն յայնժամ ինքանել Յերուսաղէմն՝ այնոցիկ՝ որք արգելուին զհաղորդիլն միաբանութիւք ընդ հեթանոսաց. զի այնուհետև քաջալերեալ վստահութիւն՝ համարձակութիւք Յերուսաղէմն գնասցեն առ հեթանոսս. զի և պաւղոսեանք Յերուսաղէմ եղանիցեն վասն խնդրոյն և ընդհանրական օրէնս սահմանեսցեն։ Զայսոսիկ յարդարեալ՝ գալո

զի վայելչապէս ձեռնադրեալ եղեն 'ի Հոգւոյն։ Կա և այլ ազգ աստանօր գալն կաղմէ, ցուցանելով զբարս նոցա թէ յանձնահաճութեամբ ազատք էին, զի եկեալ ցուցանեն զհամարձակութիւնն, զի առանց նոցա հեթանոսաց քարոզեցին։ Դարձեալ զկպատակութիւնն. զի զոր ինչ արարին, եկեալ արդ նոցունց զնոյն վերաբերիցեն. և զի այնչափ ուղղութիւս արարեալ՝ ոչ եղեն բարձրամտեալք։ Եւ տես զեռանդոտ հոգին Պաւղոսի. զի ոչ հարցանէ զոք իբր ուսանել ինչ՝ Ճակատամարտելով վասն հեթանոսաց, այլ վաղվաղակի զոր պարտն էր խօսել առ հեթանոսս՝ խօսի. վասն որոյ և ասէ՝ թէ «Ոչ զգացուցի մարմնոյ և արեան, և ոչ ելի առ որ յառաջ քան զիս էին առաքեալքն». քանզի այնչափ էր ջան նորա և յօժարութիւն, մինչ զի ոչ ոք այնպէս փայլեաց։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այսպիսւոյ և մեք պէտս ունիմք յօժարութիւն և ջերմութիւն հոգւոյն, ընդ մեզս Ճակատամարտելով. զի այլ ազգ ոչ կարեմք հանդիպել արքայութիւնն, բայց թէ խաչիւ։ Մի ապա հեղգասցուք, զի պատերազմ սաստիկ կայ առաջի ոչ ընդ մարմնոյ և ընդ արեան, և դժնդակ քարկոծանք քան թէ առ Պաւղոսիւ. այսինքն նախատանաց բանիւք. այլ արասցուք զոր ինչ նա արար։ Եւ զինչ. զի քարկոծեալ դարձեալ եմուտ 'ի քաղաքն բարեբանելով զքարշիչսն։ Եւ դու ապա մի բարկանար ընդ նախատինսն, այլ յաղթեա չարին բարեբանելով և շինջո զհուր ցասման. և մի աշակերտեսցիս չարին, որ զքեզ 'ի ցասումն շարժելով բանիւք ինչ՝ կամի զի փոխեսցիս զարշելիս բարբառել քան զարբեալսն։ Այլ պարուրեա զքեզ հեզութիւբ և երկայնմտութիւբ, և խոնարհ մտածութիւբ իբր 'ի մոխիր թաղեա զհուրն բարկութիւն, զի պսակ առցես յաղթութիւն։

ՃԱՌ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

«ԵՐՋԻՆ ժամանակս ոչ սակաւս ընդ աշակերտս»։ Զի մեծ գոլով քաղաքն Անտիոք՝ կարօտանայր վարդապետացն։ «Եւ ոմանք ի Զեալ 'ի հրէաստանէ ուսուցանէին զեղբարս, եթէ ոչ թլփատիք ըստ օրէնսացն Մովսէսի, ոչ կարէք ապրել»։ Էին սոքա 'ի Հրէից անտի աշակերտեալք 'ի պետրոսեանց։ Այլ զի թէպէտ և 'ի Քս հաւատացեալք էին, զթլփատութիւն և զօրէնսն Մովսէսի պահէին սոքա. և իբրև տեսին թէ հեթանոսք առանց այսորիկ հաւատացին 'ի Քս, ի՞նչ նոքա յԵրուսաղէմէ յԱնտիոք, տակաւին ուսնելով և զցաւս արծաթասիրութեան. կամէին յայլմէ յայլս փոխադրել զայնոսիկ որք 'ի հեթանոսացն էին։ Սկսան ասել թէ ըստ քարոզութեանն Պետրոսի և ընկերացն նորա ոչ հաւատայք դուք, ոչ կարէք ապրել։ Եւ ահա Պաւղոս օրէնսգէտ էր մանաւանդ քան զնոսա. բայց զայս ինչ ոչ կրէր յինքեան։

Ա.յլ քանզի անդուստ ի՞նչն նոքա, և աւանդն զոր ուսուցանէին՝ ոչ էր ստուգագոյն. զի որ յԵրուսաղէմն էին, այնպիսի ինչ ոչ հրամայէին 'ի վերայ հեթանոսաց. թէպէտ և իրաւապէս իբր յայ գոլով ուսեալ առաքեալքն՝ վասն շահելոյ զՀրեայսն առաժամայն ոչ հրամայէին խափանել զսովորականսն, այլ 'ի հեթանոսաց ոչ այնպիսի ինչ պահանջէին. և պաւղոսեանքն առաւել համարձակապէս խափանէին զՀրէական.և այս իսկ 'ի նախանձ էած զորս 'ի Հրէիցն էին։ Եւ ոչ ասէին թէ թլփատութեան պարտ է առնել լոկ, այլ յայժ ստիպով. զի թէ ոչ արասցեն, ասէն, կեալ ոչ կարեն. որոյ ներհակն մանաւանդ լինել պարտ էր. զի թլփատելոցն իսկ ոչ կարէին կեալ։ Տեսանե՞ս զփորձութեան ստէպ 'ի վերայ հասեալ նեղբուստ և արտաքուստ։ Այլ բարիոք անօրինեալ լինէր 'ի Հոգւոյն Պաւղոսի մնալ լինելով։

ԵՓՐ. Որ և կացոյց իսկ մաքառումն ընդդէմ նոցա, և ասաց ոչ խափանել զօրէնսն և զթլփատութիւն 'ի Հրէից. զի ցարդ և առ առաքեալսն զօրէնսն և զթլփատութիւնն պահէին նոքա։ Աւլ արժան է, ասէ, զի ամենայն մարդ յորում էր՝ յորժամ հաւատաց, 'ի նոյն կացցէ. այսինքն զի Հրեայքն կացցեն մնասցեն 'ի թլփատութեանն՝ որոց պետրոսեանքն քարոզէին, և հեթանոսք մնասցեն առանց թլփատութեան որպէս 'ի մինչ հրամայեցաւ, իսկ իբրև սոքա լուծանել զօրէնսն ոչ կամէին, և կողմն Պաւղոսի պահել ոչ հաւանէին, գազանացան կացին ընդդէմ ինքեանքն Յերուսաղէմ, և կամէին ասել զդատաստանն առաջի առաքելոցն և ծերոցն 'ի հրէաստան։

Իսկ պաւղոսեանքն զի մի լուծցեն առանց առաքելոցն զոր ինչ առաքեալքն վասն տկարութեան Հրէիցն պահէին, անցանեն գնանոքա Յերուսաղէմ, զի անդ դէմ յանդիման առաքելոցն խափանեսցեն զօրէնսն և զթլփատութիւն, զոր ոչ առանց նոցա խափանել կամեցան. զոր և յայտ իսկ առնէ յասելս, թէ «Եւ 'ի լինելն ոչ սակաւ հակառակութեան և խնդրոյ Պաւղոսի և Բառնաբայ ընդ նոսա, եդին ելանել Պաւղոսի և Բառնաբայ և ոմանց 'ի նոցանէ առ առաքեալսն և երիցուսն Յերուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ»։ Եւ տես, ոչ ասաց Պաւղոս թէ զնարդ ոչ իցեմ հաւատարիմ օրէնսդրութիւն յայսչափ նշանաց վկայեալ։ Աւլ վասն նոցին որք զայսն ասէին և վասն հեթանոսաց հաւատացելոց հաւանեալ եղև ելանել հանդերձ Բառնաբաւ ընդ նոսին Յերուսաղէմ։

Այս տես ասասնօր զառաքինութիւն նոցա. զի ոչ գնացին դաւաճանել զայնսոսիկ որք ԱՅՆտիրոջն ինքին, մինչև նոքին հարկեցին գնալ. որք և այնպէս իսկ խոկային զպատուասիրութիւն, զի ոչ գիտելով առաքելոցն եկին յայնպիսի իրս յանդգնեալք։ Աւլ պաւղոսեանքն ոչ ինչ 'ի նոցանէ յառաջ հասուցին կանխաւ առառաքեալսն Յերուսաղէմ. իսկ յորժամ 'ի նոցունց հարկեալ գնոցին բանսն ցուցին, յայնժամ ուժգնագոյնս գրեցին առաքեալքն յանդիմանելով զնոսա իբրև զնաւոլիս։

Աւրդ յերեթանն իւրեանց պաւղոսեանքն պատմե-

ցին Թլփատելոցն զոր ինչ արար ՝ուծ ՝ի ձեռն նոցա անթլփատից . ըստ որում ասէ . «Նոքա յուղարկեալք յեկեղեցւոյն շրջեցան ընդ Փիւնիկէ և ընդ Սամարիա, պատմէին զդարձն հեթանոսաց, և առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարցն» ։ Զի յորժամ իմացան ամենեքեան զլեալսն՝ի հեթանոսս և առ սամարացիսն , խնդացին յոյժ ։ «Եւ հասեալք յԵրուսաղէմ և ընկալեալք յեկեղեցւոյն և յառաքելոցն և յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ արար ընդ նոսա Նոքօք ՝ուծ» ։ Պատմութիւնս այս ոչ էր պատուասիրութիւն և ոչ վերստին ցուցանելոյ զանձինս կամ լուսն առնլոյ թերութիւն իրիք , զի ոչ էին պատուասէրք , այլ և ոչ թերիք ինչ . այլ էր պատասխանատուութիւն վասն քարոզութեն առ հեթանոսս , որով խընդային նոքա ընդ դարձն հեթանոսաց ։

«Յարեան ոմանք ՝ի հերձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք , և ասեն թէ պարտ է թլփատել զդոսա և պատուիրել պահել զօրէնսն Մովսէսի» ։ Տես զի որք տարան զպաւղոսեանսն ՝ի դատաստան, թէպէտ և այսոցիկ զոր ինչ պատմեցին պաւղոսեանքն ՝ի ձեռն երիցանցն՝ կամէին ՃՀմարտել , այլ յիւրեանց անտի զոր ինչ ինքեանք կամէին՝ ոչ կամեցան լռել ։ Վասն զի յանդիման երիցանցն իսկ ասացին թէ պարտ և պատշաՃ է ձեզ թլփատել զհեթանոսս և պահել զօրէնսն Մովսէսի ։

ՈՍԿ . Խաղում էր Հրէիցն յուզախնդիր լինելն և յետ հաւատոցն տակաւին օրինադրելոյ անձանց , և ոչ հաւանելով առաքելոցն , և զայնպիսի իրս ՝ի նոսա թողլով ։

ԵՓՐ . Այլ վասն զի դատաստան մեծ էր ընդ ժողովուրդն և ընդ հեթանոսս, և ընդ առաքեալսն և ընդ ընկերս իւրեանց , եկին ժողովեցան առաքեալքն և քահանայքն հանդերձ ժողովրդեամբն,զի տեսցեն զինչ վՃիռ եղցէ վասն բանիս այսորիկ ։ «Եւ յետ բազում խնդիր լինելոյ յոտն եկաց Պետրոս և ասէ ցնոսա » ։ Վասն զի յառաջ եկաց Պաւղոս Յերուսաղէմ ասել յանդիման Շմաւոնի և ընկերաց նորա ընդդէմ օրինացն, որպէս և ասացն իսկ յԱնտիոք յանդիման նորին ընդդէմ պահպանուն օրինացն։ Իսկ Շմաւոն՝ այն

որ յԱնտիոք լուեալ կայր, իբրև յառաջ մատուցեալ Պաւղոս ասէր ընդդէմ օրինացն յԵրուսաղէմ, ընդ-կէցաւ 'ի նա Հոգին սուրբ, և սկսաւ ասել ընդդէմ օրէնսհաստատացն այսպէս.

ՈՍԿ. «Լ՚ըք եղբարք, դուք ինքնին գիտէք զի յաւուրցն առաջնոց 'ի միջի ձերում ընտրեաց բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւետարանի և հաւատալ»։ Տես զՊետրոս 'ի վերուստ 'ի սկզբանէ անտի մեկնեալ զատեալ 'ի հրեական իրողութեց. այլ վասն նոցին տկարութեան մինչև ցայժմ ըստ Հրէից և օրինացն վարելով։ Սակս որոյ և տեղի տայ յառաջագոյն լինել խնդրոյն յեկեղեցւոջն, և յայնժամ ապա ինքն խօսի։ «Դուք ինքնին գիտէք» ասէ. թերևս մատ էին ամբաստանողքն զնմանէ երբեմն յաւուրսն կուռնելիու և 'ի ներքս մտողքն ընդ նմա 'ի տուն նորա։ Սմին վասն զնոսին ածէ վկայս. «Զի յաւուրցն առաջնոց, ասէ, ընտրեաց ՝ած»։ կանխաւ, ասէ, յառաջին աւուրսն, և ոչ այժմ։ Ի միջի ձերում, այսինքն 'ի Պաղեստին. կամ թէ ձեր իսկ մատ լմնեալով ընտրեաց ՝ած։ Ոչ ասէ թէ կամեցաւ, այլ ընտրեաց ՝ած, ասէ, բերանով իմով։ Տես թէ ո՞րպէս ցուցանէ զ՝ած 'ի ձեռն ինքեան բարբառեալ։ Եւ ոչ մարդկային ինչ ասէ, և ոչ ասէ թէ լսել այնոցիկ որ 'ի թլփատութենէն, այլ հեթանոսաց. զի ոչ փոքր ինչ և այս զօրաւոր առնէր զիրս հեթանոսաց բերանովն Պետրոսի լսել բանին աւետարանի և հաւատալ։

Եւ այսոքիկ ոչ էին փոքր առ 'ի խրատ Հրէիցն հաւատալ և ոչ ընդդէմ դառնալ, տեսանելով ըզհաստատութեան իրացն հեթանոսաց 'ի կանուխ ժամանակէն, 'ի տեղւոյն՝ ուստի ՝ած խօսէր, յընտրութենէն՝ թէ զոր ՝ած սրբեաց, 'ի Հոգւոյն՝ որ վկայեաց լեզուաք զընտրութենն. զոր և ցուցանէ ոչ հնորհացն պարզաբար, այլ առաքինութեամբ նոցա վկայութեամբ զայսոսիկ լինել. այսինքն զի ոչ նոցա նուազագոյն ինչ հնորհեաց հայելով յուղղութիւն սրտից նոցա, զի յամենայնի սիրտ ուղիղ խնդրէ. որպէս յաղօթսն ասէին՝ դու տէր, սրտագէտ ամենայնի. բստ որում և 'ի վերայ ածէ՝ թէ «Սրտագէտն ՝ած վկայեաց նոցա»։ Զատ 'ի Հոգւոյն վկայութենն տարաւ եհան զնոսա. «Տալով

նոցա, ասէ, զՀոգին սուրբ որպէս և մեզ. զի յառաջ քան զիմասէն ցնոսա պահել զօրէնս կամ թլփատել, եւ նոցա ՝ի՛ զՀոգին սուրբ խօսելով նոցա յամենայն լեզուս, որպէս և մեզ առաքելոցս։

Այլ զի ամենայնիւ հաւասարէ զՀեթանոսս, տես զի ածէ՝ի վերայ՝ թէ «Ոչ ինչ ընտրութիւն արար՝ի մէջ նոցա և մեր»։ Յորժամ եցոյց թէ վկայեաց նոցա, յայնժամ համարձակ զմեծս զայս բարբառեցաւ բան. զոր և Պաւղոս ասէ, թէ «Ոչ թլփատութիւն ինչ է և ոչ անթլփատութիւն. զի զերկոսեանն շինեսցէ յինքեան։ Եւ տես. ոչ ասաց թէ ոչ արար ՝ի՛ ածէ ընտրութիւն՝ի՛ մէջ նոցա և այնոցիկ որ՝ի՛ թլփատութեանէն. այլ՝ի՛ մէջ մեր, այսինքն առաքելոցս. և թէ լաւագոյն էաք մեք քան զնոսա պահպանութիւն օրինացս, սակայն հաւատովքն ոչ ինչ արար ընդ մեզ և ընդ նոսա խտրոց։

Այլ զի մի անարգանս օրինացն զերսն գոլ կարծիցեն, դնէ անդէն զՀաւատն. «Հաւատովք, ասէ, սրբեալ զսիրտս նոցա»։ Ի հաւատոց միայն ասէ այսպիսեացս հանդիսիլ. և այսոքիկ առ՝ի խրատ Հրէիցն էր և կարող յուսուցանել՝ թէ հաւատոց միայն պէտք են և ոչ գործոց և ոչ թլփատութիւն։ Ա՛յսոցիկ ամենեցուն սերմանիս՝ի Պետրոսի հանդիսաբանութեանս կայ. զի ոչ միայն վասն հեթանոսաց պատասխանատրելով զայսոսիկ ասէ, այլ և զնոսա խրատելով՝ի բաց կալ յօրինացն. զի յայսմ հետէ ոչ ևս ինչ ըստ օրինացն կատարուին։

«Արդ ընդէր փորձէք զՀՃ, դնել լուծ՝ի վերայ պարանոցի աշակերտացն զոր ոչ հարքն մեր և ոչ մեք կարացաք բառնալ. այլ ընդհօքն՝ՅՀ հաւատամբ ապրել որպէս և նոքա»։ Տես թէ որպէս յահագինսն տարաւ եՀան. ցուցանելով զնոսա՝ի տագնապի որք յօրէնսն էին, իսկ զսոսա ազատս։ Զի զոր ինչ ոչ կարացին օրէնքն, այսինքն ապրեցուցանել, զայն կարաց հաւատն։ Եւ յայսմանէ արտաքս արկանելով ցուցանէ զնոսա՝ի կորստեան։ Եւ ոչ ասաց թէ՝ի թերահաւատութեանէ էք դուք, քանզի ծանր էր այս. այլ զնոյն իսկ յայտնէ այլովք բանիւք յասելն.

ԵՓՐ. Արդ զի դատիք զխորհուրդս՝ՅՀ, զի այսինքն

է փորձել զնոծ. զի զոր ինչ էա մեզ ոչ հաւատովք և օրինաբն, էա զնոյն և հեթանոսաց հաւատովք առանց պահպանութեան օրինաց։

ՈՍԿ. Եւ այլեւս. փորձել է զնոծ ասելդ՝ թէ ոչ էին կարող կեցուցանել հաւատք, և զի յաւելուլ ամենք դնել 'ի վերայ պարանոցի աշակերտացն. և ոչ ասէ թէ հեթանոսաց, թէպէտ զնոցանէ խօսի զլուծն թըլ-փատութեան և զօրինացն։ Այս ուրեմն անհաւատութեան իբք է զօրէնսն 'ի ներքս բերել. յորմէ ցուցանէ և զնոսա ոչ ինչ շահեալ. և զամենայն ինչ առ օրէնսն դարձուցանէ՝ ասելով ծանր և դժուարին, և ոչ առնոսա, այլ 'ի նոցանէ զչարախօսութեան 'ի բաց հատանէ բանիւն «Զոր ոչ մեք, ասէ, և ոչ հարքն մեր կարացաք բառնալ»։

Եւ յորժամ 'ի բաց մաքրեաց յառաջագոյն զխոշոտութեան բանին, ապա յայնժամ ցուցանէ ոչ զօրէնսն ջար, այլ զնոսա տկարս. սմին վասն և 'ի վերայ ածէ. «Այլ շնորհօքն Ցայ հաւատամք ապրել որպէս և նոքա»։ Որչափ զօրութիւն լի են բանքս այսոքիկ. զոր և Պաւղոս 'ի ձեռն բազմաց առ հռովմայեցւոյն ասէ, զայնոսիկ Պետրոս 'ի ձեռն սակաւուց ասաց։ «Զի թէ Աբրահամու գործովք էր արդարացեալ, ասէ, ուներ ուներ պարծանս, այլ ոչ առ Ցած»։ Տեսանէս, զի այսոքիկ բանք՝ նոցա մանաւանդ էր 'ի խրատ, թէպէտ և պատասխանիս վասն հեթանոսաց էր։ Եւ թէ առանց պատճառանաց զայսոսիկ էր ասացեալ, կասկածէր զնոցանէ զի մի ասիցեն թէ զիշխանութենէ բուռն հարեալ առանց երկիւղի լինի բարբառեալ։

Տես յամենայնի զառ 'ի թշնամեացն իբս առ նոսա լինելով պատճառ փրկութեան հասարակաց. զի թէ Հրեայքն ոչ լինէին շարժեալ, թերեւս ոչ լինէին այսոքիկ ասացեալ, և ոչ որ յետ այսոցիկ։ Այլ թէ և կամէին հեթանոսք յառաջագէմ լինելոյ ոչ ինչ իմանային եթէ պարտ է նոցա զօրինացն անտես առնել։ Այլդու տես, զի ոչ 'ի մարդարէից արար ընդ նոսա վարդապետութիւն, այլ 'ի հասեալ իրողութեանցն որոց նոքին իսկ վկայք էին. որով և վաղվաղակի 'ի հաւանութիւն գային լուելով 'ի խնդրոյն. զի հաճեցան երիցունքն 'ի բանսն Շմաւոնի, և առանց մաքառման խափանեցաւ մաքառումն 'ի ձեռն հաւանութեան Հոգւոյն։

«Լռեաց, ասէ, ամենայն ժողովուրդն, և լսէին Բառնաբայ և Պաւղոսի պատմելոյն որչափ արար ՅԾ նշանս և արուեստս 'ի ձեռն նոցա»։ Վայելչապէս և նոքա այնուհետև վկայեն և զքանն զօրացուցանեն ասացելովքն։ Եւ տես ոչ ինչ ասեն զոր 'ի Հրէից ընդդիմադարձութիւնքն, այլ զոր ինչ արարն նոքօք ՅԾ։ Ա՞հաւասիկ ոչ լոկ բանից վերացումն', այլ որ ինչ 'ի ձեռն իրաց և արդեանց վճարմունք էին 'ի ձեռն Հոգւոյն։ Ա՞յլ սակայն և այնպիսի նշանս ունելով տակաւին հեղաբար լինէին բարբառեալ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Օ՛ի մեծ բարի է հեզութիւն յամենայնի, մանաւանդ յայսմիկ, զի սովաւ յաղթել կարասցուք բարկութիւն։ Եւ թէպէտ երեկ տրամաբանեցաք վասն բարկութեան, դարձեալ զնոյն երկրորդեմք. զի և դեղոյ ինչ, որ ունի զօրութիւն ողջացուցիչ վիրի, բազումանգամ պիտոյանամք նմա։ Ա՞յսպէս և վասն հոգւոց փրկութեան մի ձանձրասցուք զնոյն ինչ լսել. այլ բժըշկել կամելով զոգիս 'ի ցասմանէ՝ խրատեսցուք նախ զՀՊարտութիւն։ Եւ զայս սրպէս. մի յօտար իրս, այլ 'ի մեզ ինքեանս հայեսցուք. գիտասցուք, զի թէ կամիք՝ հրեշտակս 'ի մարմնի լինիմք, յօժարութիւն ուղղելով զառաքինութիւնս. և եթէ կամիք՝ օձս և ծնունդս իժից։ Ջանասցուք ապա լաւագունին ժամանել պատուոյ։

1 Միւսն Վերացուցանն։

ՃԱՌ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

«Եւ յետ լռելոյն նոցա պատասխանի ետ Յակոբոս և ասէ. արք եղբարք, լուարուք ինձ»։ Է սա եղբայր տեառն մերոյ. որ և առաջին եպիսկոպոս յառաքելոյն եկաց Յերուսաղէմ։ Եւ զի եպիսկոպոս էր տեզուոյն, սմին վասն և յետոյ խօսեցաւ. և այն իսկ՝ ասէ «Ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան», ասասանօր լցեալ լինի։ Ա՛յլ տես զմիաբանութիւն եկեղեցւոյն, զի ոչ ինչ բարձրամտութիւն երևի ասասանօր. յետ Պետրոսի և Պաւղոսի լինի բարբառեալ, և ոչ ոք զնա լռեցուցանէ։ Դա և Յակոբոս թէպէտ 'ի վեր ելանէ քանիւ յատենին, այլ ոչ յաւիրշատակէ զբանն. քանզի բաղում էր բարեկարգութիւն։ Ոչ ինչ Յովհաննէս ասասանօր խօսի, և ոչ այլ ոք յառաքելոյն, այլ լռեն. քանզի նմա էին ընձեռեալ զիշխանութիւն։ Եւ ոչ ցասնուն ինչ կամ տրտնջեն. զի այնպէս մաքուր էր 'ի կարեաց անձինք նոցա։

Բայց տես և զսորա հանճարեղ իմաստութիւն, զի անդէն 'ի հնոյն ստուգէ զբանն 'ի մարգարէիցն. և զի ոչ ունէր ինչ յայտնութիւն իրս ցուցանել, որպէս Պետրոս և Պաւղոս. և բարիոք տնօրինեալ լինի 'ի Հոգւոյն, զի 'ի ձեռն նորա լինին այնոքիկ՝ որ ոչ էին հանդերձեալ բնակել Յերուսաղէմ։ Իսկ սա զի ոչ այսպէս ուսուցանէր զՀրեայսն, այսինքն լուծանել զսովորական օրինացն պահպանութիւն, ոչ լինէր ինչ վասն այսորիկ պարտական. քանզի իբրև զտկարս կամէր շահել զնոսա, և ոչ 'ի բաց պատառել։

Բայց տես և աստ զհամաձայն միակամութիւնն. Շմաւոն, ասէ, պատմեաց որպէս յառաջագոյն ՅԾ այց արար առնուլ ժողովուրդ 'ի հեթանոսաց անուան իւրոյ»։ Բաղում աստանօր երևի հեղութիւն սորա. և զի նախ 'ի սկզբանն ուժգնագոյնս խօսեցաւ Պետրոս, իսկ սա հանդարտագոյն. զի այսպէս պարտ է այնմ

որ 'ի մեծի զօրութենէ և 'ի պատուի իցէ, 'ի ծանրագոյնն այլոց տալ տեղի և ինքն 'ի հանդարտագունեցն երևիլ։ Եւ բարիոք ասաց՝ թէ Շմաւոն պատմեաց, զի ցուցցէ թէ և ինքն ըստ նորա կամացն հաճայնել կամի։ զի Շմաւոն ոչ էթէ 'ի մոռաց իւրոց գուշակեաց, այլ մարգարէական տեսութիւն, որպէս ասէ Հոգւոյն Եղոյգ նմա. «Զի յառաջագոյն ասէ այս աբար 'ի սկզբանն առնուլ ժողովուրդ։» Նա և ցուցանէ կանուխ գոլ զիրսն. այսինքն զի հեթանոսք յանուն Յսի հանդերձեալ էին զի խոստովանեսցին, որպէս զի կատարեսցին բանք մարգարէից՝ որ կանխեցին քարոզելոցն առնուլ ժողովուրդ 'ի հեթանոսաց, այսինքն ընտրել, ոչ վայրապար՝ այլ անուան իւրոյ, որ է 'ի փառս իւր։ Եւ ոչ միայն ոչ լինի ամաչեցեալ յանուն իւր ընտրել զհեթանոսս, այլ և մեծագոյն փառս համարի։

Եւ տես զկատարեալ հանդիսաբանութիւն սորա, որով 'ի կատարումն իրաց 'ի վերայ հաստատեալ ասէ. «Ասյամ, ասէ, միաբանին բանք մարգարէիցն։» Ասատանոր մեծ իսկ նշանակեալ լինի 'ի մարգարէիցն՝ թէ նախ քան զամենեսեան էին ընտրութիւն կոչեցեալ հեթանոսք։ Եւ քանզի Պետրոս ժամանակաւ յայտներ զընտրութիւն, բայց հաւատարմութիւն յառաջնոցն ոչ ունէր, զի ոչ եթէր 'ի մէջ զկանխասացութիւնն մարգարէից. վասն որոյ և սա զյառաջասաց վկայութիւն 'ի մէջ բերէ. «Յետ այսորիկ ասէ, դարձայց և շինեցից զյարկսն Դաւթի, զանկեալն և զկործանեալն նորա վերստին շինեցից և կանգնեցից։» Եւ զիարդ շինեցաւ և ոչ մանաւանդ կործանեցաւ. թէ յետ Բաբիլոնի եւեթ իմացուք զխոստումն, այլ ստուգագոյն քննութիւն թագաւորութի Դաւթի այժմ ելև հաստատեալ, յորժամ ծնեալ որդի նորա թագաւորէ ամենայնի, որ կանգնեաց զորդիս մարդկան՝ որ մեղաւք էին գլորեալ. զի եղեն բնակարան որդւոյն Դաւթի։ Զի զինչ շահ էր տանց քաղաքին Դաւթի և անշունչ յարկացն շինութի. և ոչ ինչ։ Եւ զինչ ինչաս 'ի կործանմանէ նոցին յորժամ ամենեքեանն Հոգւոյն Սրբոյ հաստատեալ արժանի եղեն, և զՀոգիս իւրեանց ախորժելով 'ի ձեռս նորա աւանդեն։ Քանզի Դաւիթ

պայծառագոյն այժմ Երդև յորժամ ամենայն տիեզերքը երգէ զերգս օրհնութեան։ Երդ այն զոր ալի շինուածն կատարեցաւ. ապաքէն և այսմիկ կատարել պարտ է. վասն որ «Զի խնդրեսցեն մնացորդք մարդկան զտէր»։ Զի անշնչին շինուածով ոչ խնդրեցին հեթանոսք զտէր, յայտ է. այլ այսու իսկ կանգնեցաւ քաղաքս այս 'ի ձեռն առ 'ի Դաւթայ ծնիցելոյն, որով խնդրեցին մնացորդք մարդկան զտէր. այսինքն 'ի Հրէից հաւատացեալքն։

«Եւ ամենայն հեթանոսք յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ տէր»։ Ցուցանէ թէ քաղաքին շինութեանն պատճառ եղև կոչումն հեթանոսաց. զորս և ըստ մարգարէութեանն կարգի երկրորդս ըստ դասու 'ի ներքս մուծանէ, յորոց վերայ կոչեցեալ է անունն Քոյ։ «Ասէ տէր՝ որ առնէ զայս ամենայն»։ Ոչ միայն ասէ, այլ և առնէ։ Ապա ուրեմն այս այ է գործ։ Եւ ապա յաւելու զհաւատարմութեան եղելոցն՝ թէ ոչ ինչ է նոր, այլ 'ի սկզբանէ ամենայն յօրինեալ էր ասէ։ «Յայտնի է 'ի յաւիտեանց». այսինքն յայտնի և գիտելի էր միշտ այ՝ գործն զոր 'ի ձեռն մարգարէիցն լցեալ եղև յաւուրս մեր։

Երդ քանզի ոչ զայս ասէին ընդդիմախօսքն՝ թէ ոչ է պարտ զնոսա ընդունել հաւատովք, այլ թէ և հանդերձ թլփատութեանն և օրինօքն է պարտ, որոց ընդդէմ օրինադրեաց Պետրոս հաւաստեաւ թէ ոչ է պարտ զերկոսեան, ընդէր սա այնու հետև հրապարակաբանէ կրկին»։ Այո և յոյժ վայելչապէս. զի զոր ինչ օրինադրել պարտ էր Պետրոս, 'ի ներքս մուծանէ. իսկ զկանուխ ընտրութիւնն մեր անդուստ 'ի վերուստ զոր ոչ գիտէին, զայն սա ասաց. զի այս իսկ առաւել քան զամենայն զարհուրեցուցանէր զլսողսն։ Ապա 'ի դէպ ժամու զարժանն առնելոյ 'ի ներքս մուծանէ ասելով. «Վասն որոյ և ես իրաւունս համարիմ»։ Բարիոք ասէ իշխանութիւն՝ թէ ես իրաւունս համարիմ. այսինքն թէ այսպէս ասեմ բարի գոլ. և որչափ կայ 'ի կարի իմում, հաստատեմ զրանս Շմաւոնի։ Եւ քանզի հեթանոսք ոչ էին լուեալ զօրինացն, վայելչապէս զայսոսիկ հրամայէ առ յօրինացն. զի մի թուիցի ապախտ արարեալ զնա։

Բայց սակս թէ որպէս ոչ թողացուցանէ զնոսա առ յօրինացն զայսսոսիկ ուսանել և լսել. այլ նախ քան զօրինացն զիւրն ասելով. ոչ ասէ յօրինացն զայսոսիկ լուարուք. այլ զինչ. «Մեք, ասէ, դատեցաք և իրաւունս հանարիմք մի նեղել զայնսոսիկ՝ որ 'ի հեթանոսաց դառնան առ ՅԾ». այսինքն մի յեռս դարձուցանել զոր ՅԾ կոչեաց առ ինքն. և այդոքիկ խրատելոք զարձուցանէն յայ. ապա ուրեմն զայդ ասելով ընդ այ մարանիքք։ Եւ ոչ ասաց թէ մի գայթակղեցուցանել զնոսա կամ յեռս դարձուցանել, զոր Պաւղոս յայտնի առ գաղատացիսն ասէ. այլ մի նեղել, այսինքն մի թախանձեցուցանել և ստիպել զնոսա 'ի պահպանութիւն օրինացն։ Ցուցանէ այսու զպահպանութիւն օրինացն ոչինչ գոլ ուղղութիւն, այլ միայն թախանձութիւն։ «Այլ տալ, ասէ, թուղթ առ նոսա՝ խորշել 'ի կերակրոց կռաց և 'ի պոռնկութենէ և 'ի մեռելոտւոյ և յարեանէ։ Հարկաւորապէս նախ 'ի զոհեալ կերակրոց խորշել հրամայէ. զի զոր զոհնն հեթանոսք, դիւաց զոհնն. ուստի 'ի բաց կամի զատուցանել զՀաւատացեալսն 'ի հաղորդս լինելոյ դիւաց։

ՀԻՒՐ. ԵՐ. Օ 'ի բազուկն 'ի կերակուրդ մեղանչեն. ոմանք 'ի զոհեալ անդր անխտիր մատչին. ոմանք 'ի մոյ պահել պահեն, բայց գատեն զայնսոսիկ որ ուտեն. և պէսպէս ինն 'ի կերակրոց բանի անդ՝ բազմաց ոգիքն պղծին 'ի տգիտութենէ ուսելոյ անտի. և յօգտել պատճառանաց պահելոյ 'ի մոյ և 'ի գինւոյ, ոչ իբրև պիղծ ինչ հանարելով, այլ զի վարձուց սակն ունիմք. զի ջանասուր կերպիւրս արհամարհելք՝ զմեղեալ. նաև սեղանն վայելչացուք. սերմանելք արտասուօք, զի ցնծութիւն հնձեսցուք։ Ընդ մի գաւաթ զոր ուտեն ինչ զնան տեսարութիւն մարդոյ կամ ընդեն փոքր մի գրիչ զնան ասասարան։ Մի ասար հանարիր զքիս, զի գիտեսցէ զայրագիտան Ուսուցիչն և ասէ. «Ընդ բերան առնել կանայս, և մեռեալն 'ի կերակրոց զոր ՅԾ հաստատաց վայելել հաւատացելոց». Եւ թէ մեղեալ իցես 'ի տգիտութենէ, մի իբրև 'ի պղծութենէ, այլ զնան երկիւղս բարութիւնն որ պահեցէք։ Ընդոյր լեր մի ուտիցես յայնմանէ որ կռաց առաքի եղեալ են - զի զնան կերակրոց և Տարտարոս որ այսր եղեալ էր առ-

ռաջնորդէր՝ փոյթ եղև գրել առաքելովքն և երի-
ցամէջն ամենայն հեթանոսաց զլեռաւոր թուղթ մի ։
«Նախ , ասէ , խորշել ձեզ 'ի զոհելոյ կռոց կերակրոց
և ապա 'ի հեղձուցելոյ և յարենէ» ։ Զի բազումք այն
են 'ի մարդկանէ՝ որ իբրև չար գաղանք ինչ օրինակի
կեանս կան , պիղծ գաղանաց օրինակ զսրիւնն խորո-
վեն և զհեղձուցիկն ուտեն անխտիր ։ Այլ դու որ Քրիս-
ծառայդ ես , կարգ դիր երկիւղածութիւն զհրամայ-
եալսն ուտել , և անխտիր զոչ հրամայեալսն չուտել ։
Զոր ոչ ասաց միայն , այլ և Պաւղոս հրամայէ՝ «Թէ որ
ասիցէ թէ այդ զոհեալ է , մի ուտիցես» ։ Եւ 'ի պոռ-
նկութենէ , ասէ , խորշել . զի և այս իսկ պղծութիւն է
հոգւոյն և մարմնոյ ։ Եւ 'ի մեռելոտուց , ասէ՝ որ է
հեղձուցիկ ։ Զոր ոչ միայն օրէնքն պիղծ ասէն , այլ և
յՊետրոս զեն և կեր ասաց Հոգին , զոր ետես 'ի կտաւ
անդր . և ոչ ասաց խեղդեա և կեր ։ Զի թէպէտ և
անդր առ բարս մարդկան հայեր խորհուրդ կենդա-
նեացն , այլ և ուտելոյ ևս օրէնք կային առաջի . զի
վասն այնր իսկ և Հրեայքն խղձէին 'ի Պետրոսէ՝ թէ
կերար ընդ անթլփատսն ։ Արդ զի զեն , ասաց , և
կեր , ամէն վասն և ասաս չուտել գրէ զմեռելոտի ։

Այլ որք անխտիր կամին ուտել զհեղձուցիկ , ծի-
ծաղելի իմն ասեն . ոչ թէ զմեռելոտի ուտելն հրաժեշտ
տայ՝ ասէն , այլ զհեղձուցանել զմարդ ծեր կամ զհի-
ւանդ . որպէս առնեն , ասեն , դեռ ևս հեթանոսք ։ Նա
և Ջատագով առնուն այսմ թէ ահա և զձուկն ոչ զե-
նումք՝ որ է մեծ կենդանի , այլ առանց զենման ու-
տեմք , և չեն ինչ մեղք . այսպէս և ոչ մեռելոտի ։ Զա-
որս ասելի է՝ թէ ով վեհք , այսպէս ասելդ յոյժ հե-
ռի է 'ի կարգէ գրելոցս աստ . զի աստ հրամանք ա-
ռաքելոցն յօրինացն Մովսէսի , վասն որոյ և մերձա-
կայ վեճն էր Հրեիցն . զայսոսիկ միայն պահել հրա-
մայեն հեթանոսացն , և զայլսն ոչ պահել ։ Եւ զի ոչ
թէ յայնժամ վասն զմարդ հեղձուցանելոյ հաւատաս-
ցեալ հեթանոսացն վիճէին Հրեայքն խափանել զայն ,
այլ կամէին զի հաւատացեալ հեթանոսքն թլփատես-
ցին , և զամենայն կերակրոց խտրուխան՝ որ յօրէնսն էր՝
պահեսցեն ։ Այլ ոչ կամեցաւ Հոգին նր զլուծ օրի-
նացն որ վասն կերակրոց խտրութիւն դնել 'ի վերայ նոր-

ընծայ հեթանոսացն, բայց միայն զկարևորս զՀար-
կաւորս զայսոսիկ։ Տես և զկարգ բանին. 'ի հեղձու-
ցելոյ ասէ, որ է 'ի մեռելոտւոյ. և ոչ ասէ 'ի հեղձու-
ցանելոյ, զի զքո անՀաՀ կարծիսդ բառդ սկսանդիս-
մանէ. զի զՀեղձուցելոյն՝ մեռելոտւոյ ասէ։ Տեսա-
նես, ոչ ասէ ներգործական հեղձուցանելոյ, որ է մե-
ռուցանելոյ ըստ քեզ. այլ թէ 'ի հեղձուցելոյ, որ է
միջակ կամ կրաւորական, օտար 'ի քո կարծեացդ։
'Նա և ձուկն թէպէտ և ոչ զենուսք, չէ մեռելոտի. և
թէ զիարդ, ես ասեմ. Մեզ օրէնք հրամանն այ է. և
ած որ և զձուկն մեզ 'ի յուտել է, ոչ ուրեք հրամայ-
եաց զենուլ զնա. զի յօրէնսն Մովսէսի ոչ հրամայեաց,
և 'ի նորումն Պետրոսի՝ վասն չորքոտանեաց և սողնոց
և թռչնոց ասաց զեն և կեր, և ոչ վասն ձկանց. թէ-
պէտ և տիրապէս բանն առ մարդիկ հայի։ Այլ մի
ինձ ընդդէմ ասիցես՝ թէ ուրեմն և զծովու թռչունս
ոչ է պարտ զենուլ։ Երկակենցաղք են այնք, ովգու. և
ընդ այլսն ևս թռչունս երկնից ասին. ուստի և զենուլ
զնոսա հարկ է. այլ զձկունս ոչ ուրեք ասաց զենուլ,
տինա և ինքն ած եկեր զձուկն առանց զենման, և
ոչ խոտեաց մեռելոտի։ Արդ զոր ած ոչ ասաց մեռե-
լոտի, մարդ մի ասիցէ. միթէ օրէնս իշխեմք դնել այ.
ոչ ապաքէն զորս զենուլ հրամայէ՝ զենուլ պարտիմք.
և վասն որոց ոչ հրամայէ, ով իշխեսցէ քննիչ լինել։
«Եւ յարենէ» ասէ. զի մի կերիցեն հանդերձ արեամբ։
Զի բազումք իբրև զպիղծ գաղանս զարիւնն խորո-
վեն և ուտեն։

Եւ զի յօրէնսն բազում ուրեք գրեցաւ չուտել
զարիւն, և կարևոր համարեցաւ Հոգին 'ի նորումս
զայս օրինադրել չուտել զարիւն։ Այլ զի օրք կամին
և զարիւն անխտիր ուտել, զայս ասաց՝ թէ խորշել և
յարենէ, չսպանանել ասէն. այլ ոչ կամին երթալ
զՀետ բանիս։ Զի այն ինչ 'ի Քս հաւատացեալ հե-
թանոսքն ոչ երթէ սպանուելոս գործելով որոշելին 'ի
Հրեէիցս, այլ չխտրելովն զկերակուրս և անթլփատու-
թիւն։ Որով Հրեայքն խտրութիւն կերակրոց ըստ օրի-
նաւն և թլփատութիւն պարկեշտս գոլ թուէին, և
զՀեթանոսս ևս ընդ սոքօք մուծանել կամէին։ Վասն
որոյ առաքեալքն յօրինացն Մովսէսի միայն զՀար-

կաւորս զայսոսիկ պահել հրամայեն հեթանոսաց, այս-
ինքն չուտել մեռելոտի և ոչ զարիւն և ոչ զոհեալ
կերակուր, և չպոռնկել և զայլն որ ինչ յօրէնսն
խարուեթիւնք կերակրոց մանրաքննին և շաբաթուց
պահպանութիւնք և լուացմունք մարմնականք հան-
դերձ թլփատութեամբն անփոյթ առնել։ Զի զայլ-
սն զորս պահել պարտ է յօրինացն, լրմամբ ևս ա-
ւետարանն ունի։ Եւ թէ ասիցես, միթէ և զպոռ-
նկելն չգտանի աւետարանն ընդէր և ասա եղաւ, ա-
սեմ՝ թէ այո. այլ վասն յոյժ հարկաւոր գոլոյն և
ասա եղաւ. որպէս և Պաւղոս բազում ուրեք սասան-
պոռնկութեան։ Եւ դարձեալ առնեցուցանել կամելով զօ-
րինադրութիւնս եդին ասա. վասն զի և առընթեր
վէճն Հրէից որոց պատճառաւ այսոքիկ օրինադրեցան
հեթանոսաց, ոչ վասն պոռնկելոց հեթանոսացն էր,
այլ զի թլփատեսցին հեթանոսք և զօրէնսն պահես-
ցեն խարեալով զկերակուրս. որոց ոչ անսալով առա-
քելոցն՝ զայսոսիկ միայն հարկաւոր համարեցան գրով
օրինադրել հեթանոսաց. «Տալ, ասէ, առ նոսա
թուղթ՝ խորհել 'ի զոհելոյ կռոց և յարբենէ 'ի հեղ-
ձուցելոյ և 'ի պոռնկելոյ։

ՈՍԿ. Եւ ընդէր արդեօք և վասն Հրէիցն ոչ զնոցն
գրեսցուք։ Այլ վասն զի ոչ գրեմք, ոչ եթէ վասն զի
պարտ է նոցա աւելի ինչ քան զայս պահել, այլ քան-
զի Մովսէս ընդ նոսա խօսի։ «Զի Մովսէս, ասէ, յաղ-
գացն առաջնոց, վասն այսորիկ որ ազգի ազգի տեղիքս
են, զքարոզիչս իւր ունի ըստ ամենայն շաբաթուց
ընթերցեալս»։ Տես ուրչափ զիջանէ ըստ օրինացն՝ ուր
ինչս ինչ չէր։ Արդ 'ի վերայ կացոյց զՄովսէս վարդա-
պետ օրինաքն. և հնորհեաց նմա պատիւ՝ որ ոչ ինչ 'ի
հաւատոց խոփանէր զՀրեայսն, յորդորելով լսել նմա
ըստ այնոցիկ, և 'ի բաց տանելով յօրինացն զորս 'ի
հեթանոսացն էին։ Տեսանես զմեծիմաստ հանճարե-
ղութեն նորա. 'ի ձեռն նորա թուեցաւ զօրէնսն պա-
տուել, 'ի վերայ կացուցանելով զնա իւրոցն. 'ի ձեռն
այնորիկ 'ի բաց տարաւ զհեթանոսս 'ի նմանէ։ Ապա
այնուհետև հասարակաբար լինի աւանդութիւն։

«Յայնժամ, ասէ, հանոյ թուեցաւ առաքելոցն
և երիցանցն ամենայն եկեղեցեաւն արս ընտրեալս

'ի նոցանէ առաքեալ յԱնտիոք ընդ Պաւղոսի և ընդ Բառնաբայ. զՅուդա զկոչեցեալն Բարսաբա և զՇիղա, արս գլխաւորս, գրեալ առ եղբարս 'ի ձեռն նոցա զայս ինչ։ Վայելչապէս խորհին զայսոսիկ. և կամելով զի հաւատարմագոյն իրքն լինիցին, առաքեն զսա 'ի յինքեանց արձակեալսն, զի առանց կասկածանաց լինիցին որ ընդ Պաւղոսին էին. և ապա ոչ պարզաբար բանիւ լոկով, այլ հաստատութիւն 'ի ձեռն գրոյ օրինագրեն զայս ինչ. «Առաքեալք և երիցունք և եղբարք յԱնտիոք և 'ի Սիւրիա և 'ի Կիլիկիա եղբարց որք 'ի հեթանոսաց էք՝ ողջոյն»։ Բարիոք ըստ պատուոյ գնեն զկարգ դասու երեսացն 'ի սկիզբն թղթոյս, պահելով զվայելչականն. և զայն ոչ չփայտութիւն ինչ, այլ առանց պաճուճանաց պարզաբար վասն հարկի յայտնելոյ զդէմն յորոց բանն։ «Բնակելոց, ասէ, յԱնտիոք և 'ի Սիւրիա և 'ի Կիլիկիա»։ Ուր ցաւն ծնեալ եղև և սկիզբն առ, անդ և զդեղն առաքեն վաղվաղակի, 'ի դէմս ածելով առ որս բանն։ «Եղբարց որ 'ի հեթանոսաց էք». զորս և ընտանիս և եղբարս արար հաւատաւն 'ի Քս. առ որս նախ ինքն մտեալ հանդէպ ողջունիւն զոր պատուիրեաց տալ արժանաւորացն։

Այլ տես թէ որպէս ծանրաբար գրեն յաղագս նոցա որ դաւաճանողքն էին։ «Քանզի լուաք՝ թէ ոմանք իբրև 'ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք խախտելզանձինս ձեր. ասեն թլփատել և պահել զօրէնսն, որոց ոչ հրամայեցաք»։ Շատ և բաւական է չարախօսութիւնս 'ի վերայ անճուճաճաճութեան նոցա և յանդգնութեան. և այսպիսի բանք արժանի իսկ է առաքելոյն հեգզութեան, ոչ ինչ առաւելքան զայս ասելով զնոցանէ դժուարագոյն. այլ միայն 'ի մին հայելով դարձուցանել յայնմանէ զոր ինչ եղեալն էր. զի այս իսկ և զնոսա որ անդանօր խազմարարքն էին, 'ի խոստովանութիւն ածէր։ Ոչ ասացին թէ խաբեբայք պատրողք խռովարարք, այլ լոկ՝ թէ ոմանք իբրև 'ի մէնջ։ Եւ զի մանաւանդ ուր պարտն էր ասել զայս, և [1] որ այս պիսիքն են, զայս Պաւղոս առնէ, որպէս յորժամ

[1] Միւսն՝ որդիներն են... [illegible]

սէ. «Ով լի ամենայն նենգութիւն և խորամանկութիւն». և «Զգոյշ լերուք 'ի շանց անտի»։ Բայց աստանօր ուղղութեան հաստատուն լինելով այսմ տակաւին ոչ էր պէտք։

Այլ տես զի ոչ գրեցին՝ թէ ոմանք իբրև 'ի մէնջ հրամայեցին ձեզ զօրէնսն պահել. այլ թէ խռովեցուցին բանիւք խախտել զանձինս ձեր, այսինքն անպատրաստ առնելով։ Ոչ է իսկագոյն այլ ազգ քան զայս բան, ոչ և մի ոք ուրեք այսպէս ասաց. զյառաջագոյն հաստատեալ զհոգիսն ասէ խախտել, որպէս 'ի շինուածի ուրեք, զառ 'ի նոցանէ լեալսն փոխաբերելով և խախտելով. ասէն Թլփատել, զոր ոչ հրամայեցաք և ոչ արարաք այդպիսի իրաց խարութեան։

«Հաճոյ թուեցաւ մեզ միաբան Ժողովելոցս արս ընտրեալս յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր ընդ Բառնաբայ և ընդ Պաւղոսի. որք որք մատնեցին զանձինս իւրեանց վասն անուան տեառն մերոյ Յն՝ Քն՝»։ Արդ զի ամենեցուն այս յայտնի լեցի թէ քննութիւն 'ի միասին դատաստանաւ և իրաւամբք գրեցին զայսոսիկ և ոչ հարևանցի բռնաբար, միաբան Ժողովելոցս ասէ։ Իսկ ասելովն՝ թէ արս ընտրեալս առաքել առ ձեզ, ոչ զորս հանդիպեցան ասէն, այլ զառաջինսն 'ի ընտրէս Հոգւոյն։ Եւ զի մի թուիցի կարծիք ինչ կամ դաւաճան գոլ Պաւղոսի և Բառնաբայ առաքելն զնոսա, բառնան զկծրիծս զայս յասելն՝ ընդ սիրելիս մեր ընդ Բառնաբայ և Պաւղոսի։ Եւ եթէ սիրելիք են, ապա ոչ արհամարհէն զնոսա։ Եւ ապա ցուցանեն գոլութիւն զիսոյնն պաւղոսեանց վասն անուանն տեառն, որով վկայեալ լինին հաւատարիմք գոլ յամենայնի։ Եւ տես զմեծ վկայութիւնն 'ի վերայ Պաւղոսի և Բառնաբայ. «Որք», ասէ, «որք մատնեցին զանձինս իւրեանց վասն անուան տեառն մերոյ Յն՝ Քն՝»։ Եւ եթէ մատնեցին զանձինս վասն տեառն, ապա և նոքա արժանի եղեն հաւատարմութեան։

«Արդ առաքեցաք զՅուդա և զՀիղա, և նոցա 'ի բանից զնոյն պատմել. զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ և մեզ, մի ինչ աւելի բեռն դնել ձեզ»։ Զի և 'ի բանից զնոյն պատմեսցեն ձեզ, ասէ. զի պարտ էր ոչ միայն թղթին լինել, այլ և բանից. զի մի ասիցեն թէ

յափշտակեալ եղև Թուղթն և չէ Ճշմարիտ, կամ այլ ինչ փոխանակ այլոց գրեցան. վասն այսորիկ գո-վութիւն որ յաղագս Պաւղոսի էր, եխից զբերանս նոցա։ Վասնորոյ և ոչ միայն Պաւղոս և Բառնաբաս լինին եկեալ, այլ և այլք առաջինք յեկեղեցւոյն, զի մի կասկածանօք լիցի գալուստ նոցա. քանզի նոքա 'ի Թիկուսս հասեալ լինին աւանդութեան. ոչ միայն զի Յերուսաղէմ էին, այլ զի և հաւատարիմք էին, որ, պէս ասաց զնոսա արս ընտրեալս զՅուդա և զՇիղա, զի մի հաւատար զնոսին համարեսցին այնոցիկ՝ որ այնպէս մտրեալ էին. ըստ որում և յաւել՝ թէ վասն էր առաքեցան. «Զի 'ի բանից զնոսն պատմեսցեն» ասէ։

«Զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ և մեզ, մի ինչ աւելի բեռն դնել ձեզ։ Ընդէր ասելով թէ հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ, յաւելին՝ թէ և մեզ. զի մանաւանդ շատ էր ասելն՝ թէ Հոգւոյն սրբոյ։ Արդ Հոգւոյն ասէն, զի մի կարծիցեն մարդկայինս ինչ զգրեալ սրն, այլ ՚ի ծային. զի մարդկային խորհրդով ոչ էր հնար զայս ինչ իմանալ և ուղղել գիւրաւ զթերութիւն սխալանացն, այլ Հոգւոյն միայն կարօտանայր իրքս այս։ Իսկ և մեզ զի ուսանիցին թէ և նոքա ընդունողք եղեն այնոցիկ, և մանաւանդ 'ի թլփատութեան գոլով։ Նա զի և առ մարդկան որ տակաւին տակաւրագոյնք էին՝ էր բանն. երկուցեալք լինէին սոքա՝ թէ գուցէ խախտիցին տկարքն, սմին վասն յաւելին՝ թէ և մեզ, առ 'ի հաստատութիւն նոցին։

«Մի ինչ աւելի բեռն դնել ձեզ» ասէն։ Դարձեալ բեռն և ծանրութիւն զօրէնսն կոչէն։ Այլ ցուցանէ ոչ ըստ զինքեանս գոլ բանն, և ոչ զի խնայէին ինչ 'ի նոսա, և ոչ իբրև առ տկարաց, այլ զնոցին հանդարտակն։ Ասելովն թէ մի ինչ աւելի բեռն դնել ձեզ, զի այլքն քան զայս այժմ աւելորդք են։ Քանզի բազում էր և ծերոց և վարդապետացն Հրէից պատուիրանք և զգուշութիւն. այլ այն աւելորդ ծանրութիւն էր։ Եւ տես զի 'ի վեր և 'ի խոնարհ զօրէնսն ծանրագոյն կոչէն։

«Այլ միայն 'ի կարևորացս յայսոցանէ, ասէ. 'ի բաց կալ 'ի զոհելոյ կռոց և յարբենէ և 'ի հեղձուցեալոյ և 'ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս՝ բարւոք

առնէք. ողջ լերուք։ Արդ զայսոսիկ 'ի նորումն ոչ հրամայէ յաւետարանին, և ոչ ուրեք յաղագս այսոցիկ խօսեցաւ Քս. այլ յօրինացն զայսոսիկ առնելով այլոքն ամենայնիւ խափանեն զօրէնսն անգործ թողեալ. զի ըստ աւետարանիս հետեւեալ աւելորդ էր այլն ամենայն թլփատութիւն հանդերձ։ Եւ զի մի ասիցեն թէ ընդէր ոչ յօրինաց անտի ուսանիցին վասն խափանելոյ անպատշաճ գործոցս այսոցիկ, ելոյց ասելովն՝ թէ 'ի բաց կալ 'ի կարեւորացս յայսցանէ. զի ցուցցէ թէ և ոչ Հրէից աւելի ինչ քան զայս պարտ է պահել 'ի Մովսիսէ. և այսպէս 'ի բաց ելոյծ զամենայն օրէնսն։ Եւ որով թուէք զօրէնսն պատուել առ 'ի նմանէ առնելով զայսոսիկ, նոքին մեզ ուսուցանէ զայսոսիկ միայն առնելովն. իսկ զայլսն անգործ թողեալ։

Լ։ Զի մանաւանդ բաղում անգամ ընդ թղթոցն Յուդա և Շիղա ընդ նոսա յաղագս պահելոյ զայսոսիկ խօսեցան, բայց զի երեւեսցին և զօրէնսն պատուել՝ ասէ զօրինացն պատուիրանսն. և զայս ոչ որպէս առ 'ի Մովսիսէ ասելով, այլ իբրև յառաքելոցն։ Եւ զի բաղում պատուիրանս յայտ արասցէ, զմին բաժանեաց յերկուս. զայն՝ թէ յարենէ և 'ի հեղձուցելոյ 'ի բաց լինել, և ասա 'ի զոհելոյ և 'ի պոռնկութէ. Զի այսոքիկ թէպէտ և մարմնականք են, սակայն հարկաւորք են առ 'ի պահել հաւատացելոց. զոր և Նոյի պատուիրեաց ՅԱԾ. քանզի մեծամեծ չարիք յայսց իրաց անուանին և գործին, ցուցանէ՝ թէ այլքն յօրինացն ոչ են կարեւորք այժմ յաւետարանիս, այլ աւելորդք են. իսկ սորա հարկաւորք են առ 'ի պահել. յորոց պահեալ, ասէ, զանձինս՝ բարւոք առնէք։ Ելոյց այսու՝ թէ ոչ ինչ հեթանոսացն պակասէ, այլ թէ այս իսկ շատ է, և ամենայն օրէնքն կատարեցաւ։

ԵԹԷ. Զի իբրև զայս ամենայն պահեսջիք, ասէ, առանց թլփատութեան և պահպանութեան օրինացն, ընկալջիք զՀոգին Սուրբ խօսել զամենայն լեզուս. որպէս ընկալան ընկերքն ձեր կուռնելեանքն՝ որ ընտրեցան յառաջ քան զձեզ։

ՈՍԿ. Կարող էին ասել զայս և առանց գրոյ. այլ որպէս զի նորագիր օրէնք լիցին, վասն այսորիկ գրով։ Եւ դարձեալ ցուցանէն՝ թէ հաւանեալ լինին օրի-

նացն, և 'ի նոցանէ առնուն ասել զայսոսիկ։ Ա՛յլ տես յամենայնի հարկաւորապէս զՀեթանոսաց ուղղութեսկիզբն 'ի պատճառէ Հրէից 'ի ներքս մտեալ. զի նախ քան զայս իսկ ամբաստանեալ 'ի նոցանէ վասն առ Կուռնելիոս մտանելոյն տայր պատասխանի Պետրոս. և կարգաւ պատասխանատուութեան զամենայն ինչ ասացեալ նոցա դիւրընկալ առնէր զբանն։ Այդպա Հրէիցն ընդդէմ դառնալով Պաւղոսի և Հայհոյելով այնպէս եկն 'ի հեթանոսս։ Աստանօր դարձեալ այլ անյափութիւն տեսանելով 'ի Հրէից ոմանց 'ի ներքս մուծեալ, այնպէս դադարեցոյց զօրէնսն. զի ընդդիմաբանութիւն որ եղև՝ թէ պարտ է թլփատել զդոսա՝ տնօրինաբար էր, զի յետ ընդդիմաբանութեան աւանդն հաստատուն եղև. զի և զՊաւղոսի կամն հաստատեցին. ստուգեալ զնոյնն գովեցին զնորա առաջարկութիւն, և սքանչացան ընդ նորն. և այսպէս հանգուցին զՀեթանոսս յօրինացն ծանրութենէ։

Այս նոքա արձակեալք իջին յԱնտիոք. և ժողովեալ զժողովուրդն ետուն զթուղթն, և ընթերցեալ ուրախ եղեն 'ի վերայ մխիթարութեանն։ Տես սուղ ինչ թուղթ՝ ոչ ինչ յաձախ բանս ունելով, ոչ կարմ ձարտասանութեամբ բանից և ոչ համարագրութիւք ինչ և ոչ հրամանք ահագինք, և զտիեզերս բաւական եղև կրօնից 'ի կրօնս փոփոխել. և յիրաւի, քանզի Հոգւոյն էր օրինադրութիւն. որով և ուրախ եղեն մխիթարեալք։ Այլեւս ապէս ուրախ եղեն. զի օրինակ ինն, դրդուեալք եին 'ի բանից խռովեցուցչացն։ Եւ զի ոչ եղև զրաւ մաքառմանն պաւղոսեանց ընդ նոսա յԱնտիոք, այլ իբրև ընդ դատախազս ոմանս դիմեալ ելին Յերուսաղէմ, անդ առնուլ զվճիռ վիճմանն. և սոքա կային մնային դեռ ևս 'ի կասկածի, գուցէ հաճաձայն գտցի խռովչացն օրէնքն առաքելոցն։ Իսկ իբրև լուան զգրեալսն 'ի նոցանէ ըստ վերոյասացեալ օրինակիդ ցուցման, ուրախ եղեն, զի հանգուցին զնա յաւելորդ կասկածանաց։

«Յուդա և Շիղա, քանզի և նոքա մարգարէք եին, բանիւք բազմօք մխիթարէին զեղբարս և հաստատեին»։ Բարիոք վճարելով յոր ինչ եկեալն էին. յետ ընթեռնլոյ թղթին ասա և ինքեանք մխիթարեն բանիւ, որպէս զի յամենայն կասկածանաց ազատ լիցին.

զի և ինքեանք, ասէ, մարգարէք էին և ոչ վարդապետք։ Զնոցին հաւատարմութեան աստանօր ցուցանէ. քանզի կարող էր մանաւանդ Պաւղոս միութիւն զնոսա բանիւ. բայց սոցա էր պարտ, սմին վասն և 'ի խաղաղութիւն հաստատեն զնոսա։ Քանզի ընդ Պաւղոսի վիճելով յառաջագոյն էին տարամակարդք. այնպէս 'ի մի հաւաքեալ զեկեղեցին, և անձնապատրաստ զգուշութիւն հաստատեալ և ուսուցեալ դարձան խաղաղութիւն։ «Եւ եղեալ անդ, ասէ, ժամանակս ինչ՝ արձակեցան խաղաղութիւն յեղբարցն առ առաքեալսն»։ Եւ ոչ և ես էր խռովութիւն յայնմ հետէ։ «Եւ հաճոյ թուեցաւ Հիղայի մնալ անդէն». ասէ Սիղուանոս՝ որ շրջէր ընդ Պաւղոսի։

Այսպէս հետև և մեք մի գայթակղեսցուք վասն հերձուածողացն։ Զի տես ահա առ սկիզբն քարոզութեան՝ թէ որչափ էին գայթակղութիւք. ոչ ասեմ զառ 'ի յարտաքնոցն և ելեալ, զի այնուրիկ և ոչ իսկ էին գայթակղութիւք, այլ առ 'ի ներքնոցն. որպէս նախ եղև Անանիային. երկրորդ տրտունջ Յունաց առ հեբրայեցիս. երրորդ Սիմոնի կախարդին. չորրորդ ամբաստանողքն զՊետրոսէ վասն Կորնելիու. ապա սոքն. ապա գլուխն չարեաց Հերոդէս։ Իսկ այժմ խռովեցուցիչքն որք 'ի թլփատութեան շրջել ջանային զնորընծայսն 'ի հեթանոսաց, բայց ոչ ոք ինաստեցաւ. զի ոչ գոյ բարւոյ երբէք լինել, և չար ընդ նմա ոչ բաղկանալ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Մի զարհուրեսցուք ապա թէ ոմանք յազգի ազգի հերձուածս զառաջանին. այլ պինդ կացցուք 'ի Ճշմարիտ կրօնս, զի այս իսկ դիպուած մանաւանդ պսակէ զմեզ. որպէս չարչարիչքն պսակաց առիթ լինէին վկայիցն։ Զի ոչ և միոյ հակառակողի գոլով՝ ոչ երևեսցի մեր առ ՅԾ սիրոյն ջերմութեան. այլ ընդ գայթակղութիւնս անվնաս անցանել՝ մեծաց գովեստից արժանաւոր։ Արդ այնու հետև ուսուցանէր Պաւղոս և ոչ լինէր խռովութիւն և ոչ մարտ, որպէս ուստի պատմութեանս կարգ. ըստ որում ասէ.

ՃԱՌ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

«Բ ԱՅՍ Պաւղոս և Բառնաբաս շրջէին յԱնտիոք ուսուցանել և աւետարանել և այլովք բազմաք զբանն տեառն»։ Ոչ վայրապար դեգերին անդ, այլ ուսուցանէին և աւետարանէին։ Եւ զինչ արդեօք ուսուցանէին։ Զայն ինչ հաւատացեալսն հաստատէին. յայտ է՝ և որ ոչն էին հաւատացեալ՝ դարձուցանէին, զբազումս ունելով արբանեակս 'ի գործն։ «Իսկ յետ աւուրց ինչ, յայտ է ոչ բազմաց, ասէ Պաւղոս ցԲառնաբաս. դարձցուք և շրջեսցուք զեղբարքք ըստ ամենայն քաղաքաց յորս քարոզեցաք զբանն տեառն՝ թէ որպէս ունիցին»։ Տես զբազումս խնամակալութիւն, և մանաւանդ զՊաւղոսի. զի հարկ առնէր Բառնաբայառ 'ի տեսչութիւն բացագնացութիւն. զի և այլոց քաղաքաց լիցին ընձեռեալ զբանն։ Քանզի բազում էին յայնժամ գայթակղութիւք, ըստ որում կարօտանային նոցա գալստեանն որինչ խնդիրքն էին առ 'ի լուծանել, բարիոք թուեցաւ խրատս այս յայսանօր Բառնաբայ։

«Եւ կամեցաւ տանել ընդ իւր զՅովհաննէս զկոչեցեալն Մարկոս։ Բայց Պաւղոս աղաչէր՝ թէ զմեկնեալն 'ի նոցանէ 'ի Պամփիլիայ և զչեկեալն ընդ նոսա 'ի գործն մի առնուլ ընդ ինքեանս. և եղև գրժտութիւն մինչև մեկնել նոցա 'ի միմեանց, Բառնաբայ առնուլ զՄարկոս նաւել 'ի Կիպրոս, և Պաւղոսի ընտրեալ զՀիղա՝ ել, յանձն արարեալ շնորհացն Այ յեղբարց անտի»։ Զայլոց առաքելոցն զբարս յառաջագոյն նշանակեաց մեզ Ղուկաս, որպէս ցուցաք 'ի նախկին քննելոյդ վասն հեղութիւն, անախտութիւն և բոլորովին առաքինութիւն նոցա։ Արդ այժմ և զսոցանէ յայտ առնէ թէ ոմն քաղցր էր և մանաւանդ նեղողական, այսինքն Բառնաբաս. և ոմն ստուգագոյն և խիստ՝ Պաւղոս. քանզի զանազան էն շնորհքն. զի և այն շնորհք և այս՝ յայտ է. բայց մին ըստ այլ

բարուց մարդկան պատշաճի և միւսն ըստ այլ. որպէս զարժանն գիտէ հոգին. և եթէ փոխոխեալ լինին այսոքիկ, այնուհետև բոլորն անպիտան լինի։

Պատանեմք և առ մարգարէսն այսպիսի ինչ զանազան կամն և զանազան բարս. որպէս Հեղիաս խիստ էր, և Մովսէս հեզ. նոյնպէս և աստանօր, զի Բառնաբաս կակղագոյն և ներողական գոլով կամէր առնուլ և զՅովհաննէս Մարկոս. բայց Պաւղոս աղաչէր մի առնուլ։ Տես զստուգութիւնն և զբազումս հեզութիւն Պաւղոսի. զի մանաւանդ ոչ էր հարկ աղաչել, առ ձեռն ունելով զիրաւացի ամբաստանութիւնն, զի զմեկնեալն 'ի նոցանէ մի առցեն ընդ ինքեանս։ Որպէս զօրավարքն ոչ կամեսցի զայն որ զկահ զինուցն բերէ՝ ունել հանապազ հեշտ և կրակասէր, նոյնպէս և ոչ առաքեալն։ Սակայն աղաչէր, զի պատկառէր 'ի Բառնաբայ բազում խոնարհութիւն իբրև հաղորդ գոլով նորա ընդ այնքան իրս, և ընդ նմա շրջելով զայնքան ժամանակս։ Բայց Բառնաբաս և ոչ այնպէս անսայր կամ անտես առնէր զոր Պաւղոս ստոյգ ոչ կամէր։

Յոսիպի ինչ լեալ երևի և առ այ և մարդկան. զի ոմն աղաչէ և ոմն բարկացեալ լինի. որպէս յորժամ մա Մարիամու Մովսէս աղաչէ, և ոչ ոչ պատասխանէ «Թէ հօր իւրոյ թաքեալ էր ընդ երեսս նորա, ոչ ամաչէր». և դարձեալ վասն ժողովրդեանն աղաչէ Մովսէս, և ասէ, «Թոյլ տուր ինձ ջնջել զդոսա». և առ Սամուէլ, «Մինչև յե՞րբ սուգ առնուցուս»։ Եւ 'ի ձեռն երկաքանչիւրոցն մեծ բարութիւնք վարէին։

Նոյնպէս և աստանօր Պաւղոս բարկացեալ լինի և Բառնաբաս ոչ։ Բայց թէպէտ բարկուի գոլ թուի, այլ մանաւանդ է անօրէնութիւն. զի պատշաճն իւր տեղի քարոզելոյ առցէ երկաքանչիւր որ։ Այլ որս օգտակարապէս և գժտութիւնն եղև, զի և նա խրատեսցի վասն որոյ այն եղև, և մի թուեսցի գոլ իրքն խաբէութիւն։ Նա զի թէ ոչ էր հանդերձեալ իրքն ուղղութիւն լինել, թերևս և ոչ իսկ բարկանային. զի Պաւղոս որ հրամայէր՝ թէ արեգակն 'ի վերայ բարկութեանն մերոյ մի մտցէ, որ և յամենայնի ինքն անսացեալ լինէր, անտանօր ոչ եղև անսացեալ. և Բառնաբաս դարձեալ որ այնպէս սիրէր զՊաւղոս, որպէս

զի նախ քան զայս ինչ՝ տանել զնա առ առաքեալսն, և զալ խնդրել զնա 'ի Տարսոն, և զողորմութիւնն հասապակաց 'ի միասին տանել յերուսաղէմ, և զիրսն որ ըստ աւանդութիւնն էր վասն ոչ թլփատելոյ՝ հասարակաբար յանձն առնուլ, ոչ թերևս վասն այսպիսի իրաց սաստեալ և բարկացեալ լինէր։ Այլ զինչ. ուրոյն առնէն զանձինս 'ի միմեանց, զի խրատեսցեն և աւանդեսցեն 'ի ձեռն բաժանմանն զայնոսիկ՝ որ կարօտեալն էին նոցա վարդապետութեան։

Օ։ «Եղև, ասէ, գժտութիւն մինչև մեկնել նոցա 'ի միմեանց»։ Արդ զի հանապազ ներգործութիւն Հոգւոյն ածէր զնոսա յայնչափ յառաջադիմութիւն՝ յայտ է. որով կարեմք իմանալ՝ թէ մեկնէին նոցա 'ի միմեանց ոչ էր մարդկային. և ոչ գժտութիւն նոցա ըստ մարդկայինն իրաց նշանակ էր։ Եւ մանաւանդ զի ոչ ասէ՝ թէ բարկացաւ Բառնաբաս ընդ աղաչանսն Պաւղոսի, այլ թէ գժտութիւն եղև 'ի մէջ նոցա։ Եւ եթէ նա ոչ եղև բարկացեալ և ոչ սա, զայսոսիկ գիտելով մի ապա վայրապար զնոյնս ընթերցցուք, այլ բազում ընտրութիւն. զի զամենայն ինչ 'ի գրոց ուսանիմք և խրատիմք. զի ոչ եթէ մնոտի է գրեալ. զի մի յորոց շահել պարտ է, տգիտութիւն 'ի նոցանէ փնտռեալ լիցուք. որպէս բժշկական դեղք և զինք զինուորական ոչ գիտելով՝ 'ի կիր արկանողացն փնտռեն և կորուսանեն։ Արդ ոչ եղեն կամաք տարբերեալք, այլ զի ոչ զինչեալ եղեն ըստ իրերաց։ Եւ զի մեծ բարի էր մեկնիլն նոցա. և պատճառ իրողութեանն, այսինքն մեկնելոյ նոցա, յայսմանէ էառ՝ 'ի բարւոյն։ Եւ զի ոչ թշնամութիւն եղեն 'ի միմեանց գնացեալ. քաւ լիցի. զի տեսանես զկնի այնորիկ զԲառնաբաս բազում գովուն հանդիպեալ 'ի Պաւղոսէ 'ի Թուղթսն գրելով։

«Գժտութիւն, ասէ, եղև»։ Ոչ թշնամութիւն և ոչ վիճաբանութիւն. այնչափ միայն կարաց առնել գժտութիւնն իբրև մեկնել զնոսա 'ի միմեանց. զի զոր երկաքանչիւրոք կարծէր պատշաճ գալ, զայն իրսն յետ գժտութենէն միւսն ոչ եղև յանձն առեալ վասն առ ընկերն հաղորդութեան։ Ինձ թուի և խորհրդաբար լինել մեկնութիւնն, և սիրով ցմիմեանս ասել՝ թէ քանզի ես ոչ կամիմ և դու ախորժես, զի մի՝ եղեցի մաբտ

կամ խեթ 'ի միջի մերում, բաժանեսցուք զտեղիսն բարոզութեան։ Իսկ եթէ յոյժ հպատակելով միմեանց զայս առնէին. քանզի կամէր Բառնաբաս զի հաստատեսցի իրքն Պաւղոսի, վասն այնորիկ գնաց։ Ոչ թէ մեք այսպիսի բաժանմամբ լինիցք բաժանեալ, որիշ որիշ գնալով 'ի քարոզութեան։

«Բառնաբաս առեալ զՄարկոսնաւել 'ի Կիպրոս»։ Ոչ ապաքէն, ասեն, չար արար Բառնաբաս, և զնարդ ոչ էր անտեղի վասն այնպիսի իրաց փոքու այնչափ ընդդիմանալ կամ յառնել ընդդէմ Պաւղոսի։ Ասեմք, թէ յառաջանալով իրին ոչ ինչ եղև չար. զի թէ 'ի միասին գոլով բոլորին ազգաց շատացեալ լինէին, ապա 'ի բաց մեկնելովն 'ի միմեանց առաւել մեծ եղև բարեացն տարածումն։

ԵՓԲ. Այս և այլ ազգ. զի դիւրաբար ոչ թողուին զմիմեանս. ըստ որում այնպէս տնօրինեցաւ, զի մի երթիցեն կողմանքն երկոքեան 'ի միում գաւառի, լինի պատճառ զի անջրպետեսցին ուրոյն ուրոյն երթալ և քարոզել 'ի գաւառս գաւառս ըստ նմանութեան՝ զի անջրպետեցաւ Աբրահամ 'ի Ղովտայ. զի Աբրահամ եղիցի ուսուցիչ 'ի մէջ քանանացւոցն, և Ղովտ 'ի մէջ սոդոմայեցւոց։

ՈՍԿ. Այլ դու աբանչացիր ընդ աշակերտին Ճշմարտախօսութիւնն, զնարդ ոչ զայսպիսի իրս թաքուցանէ. զի մարթ էր նմա ասել խառն 'ի խուռն՝ թէ մեկնեցան 'ի միմեանց։ Այլ և պարտ էր, ասեն, մեկնել 'ի միմեանց առանց բարկանալոյ։ Ասեմք՝ թէ մանաւանդ այսու ցուցանին մարդկային պարտ էր լինել առ 'ի հաւատարմութիւն տնօրէնութեան, յոյժ մանաւանդ առ սրբոք, զի մի ոք աւելի քան զմարդկային բնութիւնս համարեսցի զնոսա։ Կա և այլ ազգ. ուստանիմք այսու՝ թէ բարկանալն ոչ է յոռի, յորժամ վասն այսպիսի իրաց իւրաքանչիւր ոք խորհեսցի մեկուսանալ, և հանդերձ իրաւացի բանիւ զընտրութիւն առնել։ Արդ եթէ զիւր ոք խնդրելով իրս և զառ ինքն պատիւս՝ բարկացեալ լինի, բարիոք ասես չար. ապա թէ խրատել և ուսուցանել իւրաքանչիւրքն կամելով զմարդիկ, ոմն զայս Ճանապարհ գնալով և ոմն զայն,

որպիսի ամբաստանութիւնէ այս։ Քանզի բազումք ինչ և մարգկային տրամախոհութիւն առնէին. զի ոչ էին իբրև զքարինս անշարժք։

Լաւդ տես զի յոլովս շահեցուցանէ զՄարկոս մարդս այս. զի զՊաւղոսի զահագին խրատն և զանշն դարձոյց 'ի վերայ նորա, և 'ի Բառնաբայ քաղցրութէն տակաւին 'ի բացեայ մնալ ոչ ետ որպէս յառաջքն։ Սակս որոյ և մարտ վասն այնր խիստ եկեալ լինի, բայց առ մի կատարած շանշն հանդիպի։ Քանզի զՊաւղոս տեսանելով Մարկոսի յօժարեալ 'ի բաց կալ զնա յինքէնէ, երկեաւ յոյժ և ստգտաւ զանձն իւր. և զԲառնաբաս տեսանելով այնպէս նմա փոյթ արարեալ, յոյժ սիրեաց զնա. և ուղղեալ լինէր աշակերտն 'ի ձեռն մարտի վարդապետացն, Աքինդինի և նա հեռի էր 'ի գայթակղելոյ։ Զի եթէ վասն անձանց իւրեանց պատուոյ զայն ինչ առնէին, յիրաւի լինէր գայթակղութիւն. իսկ եթէ վասն փրկութիւն միոյ աշակերտի ծուլացելոյ վիճաբանէին, իբրև առ 'ի ցուցանել զայն իրս՝ որ զնա պատուական և մեծարգոյ գործէր, բարիոք և նա խորհեցեալ և ընկեցեալ ըզհեղգուն իբրև զանտեղի իրս՝ փոյթ լինէր 'ի բարինզոր ընդ իւր առեալ Բառնաբայ նաւէր 'ի Կիպրոս։

Լաւդ ո՞ որ լաւագոյն, ասեն, խորհեցաւ. որ էանն ընդ իւր զնա, թէ որ եթողն։ Ասեմք՝ թէ ըստ Հոգւոյն կամաց եղև երկոքին, և մեզ չէ քննել։ Սակայն զի մեծ եղև տնօրէնութիւն բանին, ասեմք՝ զի ուր Պաւղոս երթալոյ էր, հանդերձեալ էին երկիցս արժանանալ տեսչութիւն. պարտ էր զի և նոքա արժանասցին, առ որս գնալոց էր Բառնաբաս։ Դա և այս խիստ տնօրինական էր Բառնաբայ երթալ անդր. քանզի կիպրացիք ոչ այնպիսի իրս ընդդիմակս ցուցին, որպէս որք յԱնտիոքն էին և այլքն. ըստ որում և նոքա մանաւանդ կարօտանային բարուցն կակղագունի բաւականացեալ նովաւ։ Իսկ սոքա այնմիկ պէտս ունէին, որ ստուգագոյնն էր Պաւղոս. որ և ոմանց սաստկ և զայլս յորդորէ, և հրամայէ զբարին առնել առ ամենեսեան առանց ձանձրանալոյ. ըստ որում և ինքն զամենայն ինչ առնէ և ուղղէ և խրատէ, զոմանս միամիտս և յօժարս առեալ յարբանեկութիւն.

որպէս ասէ՝ թէ «Պաւղոսի ընտրեալ գԵ՚իղա». վասն զի պանչելի էր այրս այս և յոյժ մեծագոյն 'ի շնորհս Հոգւոյն։

Իսկ զինչ այն՝ թէ «Յանձն արարեալ շնորհացն այ յեղբարց անտի»։ Յայտ է, աղօթս արարին, աղաչեցին զնա։ Եւ տես յամենայնի մեծ բարութեանց պատՃառ և կարող լեալ զաղօթս եղբարցն։ Եւ հայեաց ընդ իմաստութիւն Պաւղոսի. զի ոչ յառաջագոյն յայլ քաղաքս եկեալ լինին, այլ նախ ընդունողաց բանին այց առնէ տեսչութիւն։

«Շրջեր, ասէ, 'ի կողմանս Աւորուց և կիւլիկեցւոց, հաստատեր զեկեղեցիսն»։ Ահաւասիկ առ որս զթութիւն յառաքելոյ անտի ունկնդրն զի տարցին առ նոսա, նախ առ այսոսիկ շրջի. զի ոչ համարեր իմաստութիւն գործ զանօգուտ ընթացսն զնոքօք զանց առնելով։ Զոր և մեր իսկ սովորութիւն է առնել. զի նախ զառաջինսն խրատեմք, զի մինոքա խափանիչք այլոցն լինիցին։ Արդ տես զնա յարուցեալ հանապազ և հոգացեալ, և երբեք նստել և հանգչել յանձն ոչ առեալ. մանաւանդ բիւրուց վշտաց համբերելով։ Տեսանես զի ոչ էր 'ի զանգիտութիւն յառաջագոյն դառնալն յԱնտիոք. և այժմ առանձնանալն ոչ էր զանգիտելի ինչ. այլ դառնայր 'ի տեսութիւն, որպէս և բժիշկք առ հիւանդացն առնեն։ Եւ զկարիս իրացն այց առնելոյ յայտնեաց նախ ասելովն ցԲառնաբաս, «Դարձցուք առ որս պատմեցաք զբանն՝ թէ որպէս ունիցին». քանզի յիրաւի յայսմ՝ անգիտանայր և շրջեր տեսանել։ Բայց և զայս իմասցուք՝ թէ որպէս այնու հետև հետիոտս ընդ ցամաք Ճանապարհորդէին, շրջելով առ ամենեսեան, զի այնպէս շահեցուսցեն զաղազումն։ Իսկ յորժամ փութոյ պէտք լինիցին, յայնժամ նաւու ընթանային. բայց այժմ ոչ ևս։

«Լինն եհաս 'ի Դերբէ և 'ի Լիւստրա. և ահա աշակերտ ոմն էր անդ անուն Տիմոթէոս, որդի կնոջ հրեի հաւատացելոյ և հօր հեթանոսի, որ վկայեալ էր 'ի Լիւստրացւոց և Իկոնացւոց եղբարց. զսա կամեցաւ Պաւղոս ընդ իւր տանել, և առեալ թլփատեաց զնա վասն Հրէիցն որ էին 'ի տեղւոջն յայնմիկ»։ Աշակերտ զբրիստոնեայսն ասէ տակաւին. որպէս

նախքան զայս ասաց՝ թէ ընդէր դնէք լուծ 'ի վերայ պարանոցի աշակերտացն։ Եւ էր սա կիսակատար ոմն 'ի հրէութեէ. զի հօր հեթանոսի էր որդի։ «Որ վկայեալ էր, ասէ, 'ի լիւստրացւոց և յիկոնացւոցն էր բարց»։ Տես աւասիկ զի մեծ էր ընտրեալն որ առ Տիմոթէոս, և մանաւանդ առաքինութեի նորա. վասն զի յորժամ 'ի բաց եկաց Բառնաբաս, զայլ ոմն հաւասարարդ նորա գտանէ Պաւղոս. յաղագս որոյ ասէ առ նա գրելով. «Զմտաւ ածեմ զարտասուսն քո և զանխեղծ հաւատն որ են 'ի քեզ, որ յառաջագոյն բնակեցաւ 'ի հանոյ քումդ Ղովիդեայ և 'ի մօր քումդ Եւնիկեայ. հաստատեալ եմ թէ և 'ի քեզ իցէ»։ Եւ քանզի հեթանոս գոլով հօր նորա՝ վա՞ որոյ և թլփատեաց զնա, զայն որ մայրն իւր ոչ թլփատեաց։ Տեսանէս աւասիկ լուծեալ զօրէնսն. զի անթլփատ էր նա, թէպէտ և մեծ էր. կամ ընդ հօրն զի հեթանոս էր, կամ զի յետ քարոզութեանն և հաւատոցն եղև ծնեալ սա. և թէ չէր այսպէս, թերևս ոչ գրէր առնա, թէ «Ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես»։

ԵՓՐ. Արդ առեալ թլփատեաց զնա. ոչ թէ առանց ընտրութեէ գործելով գայս, այն որ զամենայն ինչ ընտրող իմաստութիւն գործէր, այլ քանզի հանդերձեալ էր աւետարանել Տիմոթէոս զաւետարանութիւն Հրէից ընդ ամենայն տեղիս, զի մի վասն անթլփատութենն անարգեսցին զքարոզութի նորա, ըստմտաւ ածէ խորհեցաւ թլփատել զնա. ոչ թէ զի զթլփատութիւն հաստատեսցէ նովաւ խափանիչն թլփատութէ, այլ զի աւետարանութիւն 'ի պատճառս անթլփատութեէ նորա մի ՀՀեղջեալ գտանիցի նովաւ։ Այնր աղագաւ վասն հեթանոսացն այնոցիկ փոյթ ոչ առնէր։

ՈՍԿ. Քանզի բանին պարտ էր սերմանել, այն էր մեծագոյն. վասն այնորիկ և թլփատեաց զնա, զի մեծ էր ուղղութիւն որ լինելոց էր յայնմ իրաց։ Տեսանէս 'ի հակառակիչն մեծ բարի լեալ, ըստ որումմ զպատճառն յայտնի մեզ Ղուկաս. «Վասն Հրէիցն, ասէ, որ էին 'ի տեղիսն յայնոսիկ». զի թերևս ոչ լինէին յանձն առեալ Հրեայքն յանթլփատ լսել զբանն։ Եւ տես զուղղութիւն. թլփատեաց, զի զթլփատութիւն

խափանեսցէ. և ոչ այս միայն, այլ և զաւանդութիւնն քարոզէր զառաքելոյն, որ ընդդէմ թլփատութեանն։ Ահա մարտ և 'ի ձեռն մարտին շինութիւն. ոչ առ 'ի յայլոց մարտուցեալ լինելով, այլ ինքեամբ զներհակս ոմանս առնելով. այնպէս զեկեղեցին շինէ հաւատովք. աւանդութիւն 'ի ներքս մուծանէ ոչ թլփատել, և ինքն թլփատէ հանդերձ հաւատովք։

Նշմարտապէս զարմանալ պարտ է ընդ հանճար իմաստութեանն Պաւղոսի. զի նա որ այնչափ մարտ և ինդիր արար ընդդէմ թլփատութեանն, և զամենայն ինչ շարժեաց 'ի վերայ, և ոչ նախ 'ի բաց եկաց մինչև ուղղեաց զամենայն. և յորժամ աւանդն ամենայն առաքելոյն հաստատեցաւ, յայնժամ առեալ զաշակերտն թլփատէ. ոչ միայն զայլս ոչ խափանէ, այլ և ինքն զնոյն գործէ. քանզի զամենայն ինչ ըստ պատշաճի տեսանէր։ Ոչ վայրապար և յանկարծադէպ ինչ առնէր, այլ յառաջահոգ նախատեսութիւն. նա և որ ինչ սքանչելին է, զի զհետ իւր առեալ տանէր զնա։ Այլ այնուհետև ոչ դեղերի առ տեղեօքն այնաբիւրք իբրու վասն այցարարութեան հասարակաց եկեալ. այլ հեռաւորացն տեսութիւն յառաջեալ լինի։

«Իբրև անցանէին ընդ քաղաքսն, աւանդեցինն նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յառաքելոյն և յերիցանցն՝ որք յԵրուսաղէմ. և եկեղեցիքն հաստատեին 'ի հաւատս, և 'ի ձեռն նշանացն որ լինէին՝ յաւելուին 'ի թիւն հանապազօր»։ Տեսէ՞ր զթլփատութեան շահն. վասն այնորիկ թլփատեր զաշակերտն. զի ոչ միայն ինքս չարար թլփատութեան, այլ և մեծամեծս շահեցոյց։ «Եւ շրջեցան ընդ Փռիւգիա և ընդ կողմանս գաղատացւոց, արգելեալք 'ի Հոգւոյն Սրբոյ խօսել զբանն յԱսիա»։ Արդ զՓռիւգիա 'ի հարաւակողմ և զԳաղատիա 'ի հիւսիս կողմ թողլով 'ի մէջերկրեայսն փութային. քանզի է իսկ Փռիւգիա 'ի հիւսիսոյ կուսէ սահմանակից ծովուն կիպրացւոց. իսկ Գաղատիա 'ի հարաւոյ կուսէ սահմանակից ծովէ եղերն Պոնտոսի։

«Այլ եկեալ առ Միւսեաւ, թեւակոխէին երթալ 'ի Բիւթանիա. և ոչ համարձակեաց նոցա Հոգին»։

Աղդ զի արգելեալ եղէն, զի մի ումեք խօսեացին զգ-
բանն այ 'ի գաւառին ասիացւոց, ասէ։ Բայց թէ ընդ-
էր արգելան, ոչ յաւել. խրատելով զմեզ հաւանու-
թիւն հնազանդել միայն այ, և ոչ զհանգամանս իրաց
ինչ խնդրել։ Դա և զայս ևս ուսուցանէ՝ թէ բազում
ինչ մարդկապէս խորհէին և առնէին։

«Լոյս անցեալ ընդ Միւսիա իջին 'ի Տրովադա. և
տեսիլ երևեցաւ 'ի գիշերին Պաւղոսի. այր ոմն մա-
կեդոնացի կայր աղաչէր զնա և ասէր՝ անցեալ 'ի
Մակեդոնիա օգնեսցես մեզ»։ Ընդէր տեսիլ երևի
և ոչ Հոգին սուրբ խօսի ընդ նոսա։ Վայելչապէս այս
լինի. զի նախ 'ի յասիացւոցն նա արգել և խափա-
նեաց զնոսա. և այժմ տեսիլ երևեցուցանէ, քանզի
կամէր առ մակեդոնացիսն ձգել զնոսա քարոզութիւն.
վասն որոյ և յանուրջս որպէս բազմաց 'ի աջցն երև-
եալ կոչէ զնոսա։ Դա և 'ի սկզբանն սա տեսիլ ետես.
այր ոմն մտեալ և եդեալ 'ի վերայ նորա ձեռս, և
յետոյ 'ի ձեռն հրեշտակի խօսի ընդ նմա քա 'ի գիշե-
րի. «Մի երկնչիր, ասելով, Պաւղէ. կայսեր ևս
պարտ է քեզ յանդիման լինել։» Աղդ վասն այնորիկ
զնա անդանօր ձգէ Հոգին, զի 'ի հեռաւորս տարա-
ծեալ լիցի քարոզութիւնսմին վասն և խափանեալ եղև
դեգերելառ այլովք քաղաքօքն. անդ զնա փութա-
ցուցանելով քան, թերևս վասն զի ասիացիք հան-
դերձեալ էին վայելել վարդապետութիւն Յովհաննու
աւետարանչի բազումժամանակս։ Դա թերևս և առ-
ժամայն ոչ յոյժ կարօտացեալ լինէին լսել զբանն, և
անշահ լինէր զնալն առ նոսա. այլ անդ գնալ պարտ
էր ուր հաւատոյն բացեալ էր դուռն վաղվաղակի։
Այլ տես զի ոչ 'ի ձեռն հրեշտակի, որպէս Փիլիպ-
պոսի կամ Կուռնելիու, այլ 'ի ձեռն տեսլեան յայտ-
նեալ լինի նմա մարդկեղէն իրօք և ոչ ոգեայն. քանզի
ուր դիւրագոյն է հաւանելն՝ մարդկօրէն երևի, իսկ
ուր բազում է բռնութիւն՝ ոգեայն լինի յայտնութիւն։
Եւ քանզի Պաւղոս միայն 'ի քարոզելն իսկ լինէր
փութացեալ, ըստ որում բաւական էր առ այն իրս ա-
նուրջ միայն երևել նմա. իսկ զոչ քարոզելն ոչ առնոյր
յանձն և ոչ լինէր նմա դիւրընկալ։ Վասն որոյ զայն
իրս Հոգին սուրբ յայտնէ և արգելու։ Այսպէս և ան-

դանօր Պետրոսի Հոգին տայր հրաման երթալ ընդ նոսա և մի խղձել. զի ոչ արդեօք զդիւրադոյնսն լիներ գործեալ Հոգին, այլ շատ և բաւական էր ա-նուրջն միայն։ Ա՛յսպէս Յովսեփայ զի դիւրաբար հաւաներ, անուրջ լիներ երևեալ վասն կուսին, իսկ այլոց արթնութիւն. որպէս Կուռնելիու, և նորին իսկ սմա այժմ։ Դա և երևելն ոչ պարզաբար հրամայե-լով էր, այլ աղաչելով և զկարիսն յայտնելով իբրև 'ի մեծ վտանգէ զերծանել. «Օգնեսցես մեզ» ասէ։

ԵՓՐ. Ա՛յդ զի մի խափանեսցին նոքա 'ի մէջ այնո-ցիկ որ ոչ լսէին նոցա, յայտնեցաւ նոցա երթալ 'ի Մակեդոնիա զի դէտ ակն ունէին նոցա և բիւրա-նացիքն. որպէս զի արգելան նոքա յասիացւոց։ Ա՛յդ զի փութասցին նոքա երթալ 'ի Մակեդոնիա՝ ուր պատ-բաստեցաւ նոցա, երևեցաւ Պաւղոսի իբրև այր մա-կեդոնացի, զի մատուցեալ աղաչէր և խնդրէր 'ի նմա-նէ զի երթիցէ օգնեսցէ 'ի Մակեդոնիա։ «Եւ իբրև զտեսիլն ետես, վաղվաղակի խնդրեցաք ելանել 'ի Մա-կեդոնիա, տեղեկացեալք եթէ հրաւիրեաց զմեզ տեր աւետարանել նոցա. և ելեալ 'ի Տրովադա դէպ ու-ղիղ գնացաք 'ի Սամոթրակէ. և 'ի վաղիւ անդր 'ի նոր քաղաք, և անտի 'ի Փիլիպպուսպոլիս՝ որ է առաջին վիճակ մակեդոնացւոց քաղաք Կողոնիայ. և անդ 'ի քաղաքին դադարեալ մեր աւուրս ինչ»։

ՈՍԿ. Ա՛յդ ասէ յանուանէ զգլխաւոր տեղիսն իբրու կերպագրութիւն. և ցուցանէ թէ առ մեծագունօքն զտեղի առեալ դադարէին, զայլովքն զանց առնելով ա-սել մի ըստ միոջէ։ Ա՛յդ երթեալ նորա առ այնոսիկ որ կարօտէին բժշկութեան, տեղեկացեալ ասէ՝ թէ կոչեաց զմեզ տեր. այսինքն ուր պարտն է և արժան։ Դա և Պաւղոսի տեսանելն և ոչ այլոյ ուրուք, և արգելուլն 'ի ձեռն Հոգւոյն, և առ սահմանօքն լինելովն, յայտ-ցանէ յամենեցունց հաստատեալ՝ անդ դիմէին յօ-ժարութիւն. զի փութով նաւարկութիւն զայս երևե-ցուցանէ՝ եթէ բռնութիւն էր արգելեալ։ Տես զի ոչ եղև արգելեալ յորժամ ծանեաւ, այլ փութով 'ի ըս-կիզբն և յարմատն մակեդոնացւոց 'ի Փիլիպէ մը-տեալ և անտի սկսանէր։ Իսկ Կողոնիայն իշխանութիւն ինչ անուն է քաղաքին. որպէս թէ ասել քաղաք իշ-խանութիւն։

ՑՈՐԴՈՐԱԿ

Լ՚ԶՈԴ որպէս վերագոյն ասացի զգուշութիւն հպեսցուք ՚ի գիրս, զի մի ՝ի՚նասիցիմք յորոց շահելն է պատշաձ. զի բազումք իսկ ՝ի՚նասին վեր ՝ի վերոյ ՝ի գրեալսն մատչելով։ Եւ այս է պատճառն. զի ոչ որ ինչ մեզ յօգուտն է յայն փութամք, այլ յօտարոտիսն ՝ի կազմածս տանց և ՝ի շահս ստացուածոց զորս փութամք յարդարել, և զՀոգիս մեր խարխալեալ տեսանելով անտես առնեմք. զչունսն և զբազէսն իմաստասիրել կրթեմք յորսոցն իրս, զի զորսն ըմբռնեալ և ՝ի՚բաղցոյ ստիպեալ՝ տեառն մնան և ոչ ուտեն. զի մի ՝ի գովեստիցն և յառատ վայելմանցն վրիպեալ զանս և առցեն։ Զառիւծուց ցասումն նՀանջել կրթեն, և զանձինս իւրեանց քան զնոսին անարգագոյնս և գազանայինս առնեն։ Եւ որս ասելի է՝ թէ ով դուք, թէ ՝ի սրբոց ուրուք ոչ խորժէք առնուլ օրինակ ուղղութեան, ասելով թէ նոքա մեծք էին Պետրոս և Պաւղոս, գոնէ ՝ի շանցդ և ՝ի բազէիցդ խրատեցարուք արՀամարՀելով զմերձակայսս վասն Հանդերձելոցն մեծամեծ խոստմանց. որոց լիցի մեզ Հասանել ՝ի Քրիստոս։

ՃԱՌ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Եւ յաւուր շաբաթու ելաք արտաքոյ քաղաքին առ գետափն, ուր համարէր աղօթս մատուցանել. և նստեալ խօսէաք ընդ ժողովեալ կանայսն»։ Տես դարձեալ զՊաւղոս ըստ Հրէիցն արարեալ, և 'ի ժամանակէն և 'ի տեղւոյն։ Յաւուր շաբաթու, ասէ. քանզի յայնմ աւուր դատարկացեալ 'ի միասին ժողովէին բազմութիւն Հրէիցն արտաքոյ քաղաքին. զի առ լսողութիւն յոյժ 'ի Ճահ էր տեղն այն, ազատ գոլով 'ի խաւՃապէց և 'ի զբաղմանց։ Ի տեղի, ասէ, ուր օրէն էր լինել ուխտի աղօթիցն։ Զի ոչ միայն 'ի ներքոս 'ի քաղաքն ժողով լինէր Հրէից, այլ և արտաքոյ աղօթիւք ուխտ կատարէին, որպէս տեղի ինչ որոշեալ. զի և էին իսկ մարմնականագոյն Հրեայքն։ Եւ տես զխոնարհութիւն առաքելոյն. զի ոչ մեծագոյն թուէր նոցա քաղաքն այն մեծ Փիլիպպուսալիս, այլ արտաքոյ ելեալ նստեալ խօսէին ընդ ժողովեալ կանայս։ Ահաւասիկ և որ գրեացն զպատմութիւնս, ոչ լինի ամաչեցեալ վասն 'ի Ճահ առ կանայսն խօսելոյ. որպէս զի առ պարապս թէ լինելով առաւել հուպ լինէին յասացեալսն կանայքն։ Այլ ընդէր միայն ընդ կանայսն։ Քանզի գիտէր որոց արժան էր խօսել զբանն. որ և անդէն իսկ արդիւնք քարոզութեան երևեցաւ։

«Օ ի կին ոմն անուն Լիդիա ծիրանեվաՃառ 'ի թիւատիր քաղաքէ, երկիւղած յայ՝ լուաւ, զորոյ տէր իսկ եբաց զսիրտն անսալ բանիցն Պաւղոսի»։ Հայեաց զխոնարհութիւն Պաւղոսի թէ դիարդ ընդ ամենեսեան զիջանէր։ Տես և զիմաստասէր կինն թէ որպէս փութով հաւատաց, և ոչ ինչ խափանեաց զնա մեծութիւնն. և զի մեծարգոյ էր, յարուեստն իւրմէ յայտնի էր. Բայց զի առանց բարձրամտութեան էր և խոնարհ, և Ղուկաս վկայէ՝ թէ երկիւղած էր յայ, և թէ յառաջագոյն կուռեաց զնա ՃԾ և եբաց զսիրտ

նորա. ապա ուրեմն ՝այ կարօտանամք բանալ զսիրտս մեր։ Աւլ ՝ածմ բանայ զսիրտս ախորժողաց. զի է տեսանել զսիրտս հեռացեալս որք ոչ կամիցին. արդ բանալն ՝այ էր, իսկ ՝ուշ լինելն 'ի բարիսն՝ կնոջն. որպէս զի ՝ածայլինն և մարդկայինն 'ի միասին գալ պէտս ունին։

«ԼՀ իբրև մկրտեցաւ, ասէ, ինքն և իւրքն ամենայն, աղաչէր և ասէր. եթէ համարիք զիս հաւատացեալ տեառն, մտեալ 'ի տուն իմ ագերուք. և բռնադատեաց տարաւ զմեզ»։ Աքանչելի էր հաւատք կնոջն. զի տես թէ որպէս հաւանեցոյց զամենեսեան որ ընդ իւրն էին. ապա հայեաց և ընդ իմաստութիւն նորա թէ զիարդ աղաչէր զառաքեալսն, կամ թէ որպէս խոնարհութիւն և իմաստութիւն լի են բանք նորա. զի ոչ այլ ինչ նշան տայ աղաչանացն, բայց զայն միայն որով ապրեցաւն։ Ոչ ասաց՝ թէ ընտրեցէք զիս մանաւանդ քան զմեծագոյն կանայսն. այլ թէ համարիք զիս հաւատացեալ տեառն, յոյժ մանաւանդ և ձեզ. և եթէ ոչ իցէք երկուաց եալ և համարիցիք զիս՝ ասէ, այսինքն եթէ ընտրեցէք զիս ընձեռելով ինձ այսպիսի խորհուրդ, ապա կատարեցէք գալովդ ձերով։

Ոչ ինչ քան զաղաչանս զայս է պատկառելի. զո՞ որ արդեօք ոչ կակղացուցանէին բանքս այսոքիկ։ Ոչ հայցեաց, ոչ աղաչեաց պարզաբար. այլ զնոսա թողացոյց ընտրոյ տեարս լինել. այնպէս հարկեաց ուժգնաբար և բռնադատեաց բանիւքս այսոքիւք, մինչև հաւանեցոյց զառաքեալսն։ Եւ ոչ ասաց՝ առ իս, այլ առ բազումս խոնարհուէն՝ 'ի տուն իմ ագերուք, ասէ։ Ա՛մենպիսի յօժարութիւն ՀՀմարտապէս հաւատարիմ էր կինն, զի այնպէս վաղվաղակի պտղաբերեաց՝ շահ մեծ զՀաւատն վարկանելով և զմտանելն նոցա 'ի տուն իւր։ Եւ ոչ համարձակեցաւ նախ քան զլուսաւորութիւն խնդրել. այլ իբրև մկրտեցաւ, ընկալաւ զառաքեալսն այնչափ աղաչանօք. բազմապատիկ յոլովագոյն սա քան զԱբրահամ։

ԼՀ ընդէր լինէին կամեցեալ որք ընդ Պաւղոսին էին։ Որպէս զի բռնադատելոցն՝ զանձինս երևեցուսցեն ազատս յերախտիս պահանջելոյ, և զկինն կոչես-

ցեն այնու 'ի մեծագոյն յոժարութիւն. կամ դարձեալ զի զպատուիրեալսն 'ի Քեզ կատարեսցեն՝ թէ «Յոր քաղաք մտանիցէք, նախ հարցանիցէք թէ ո՞ 'ի նմա արժանի է, և անդ լինիջիք»։ Եւ այսպէս զամենայն ինչ վասն անօրէնութեան աւետարանին արարեալ լինեին։ Արդ և մեք զայսոսիկ ուսանելով մի ամաչեսցուք ընդ աղքատութիւն և անպատուութիւն։ Ա՛ռ մշակի լիներ ագեալ Պետրոս. առ ծիրանավաճառի և օտար կնոջ Պաւղոս. յամօթ եղև և անդանօր մեծամտութի։

«Այլ եղև մինչ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ աղախին մի, զոր ունէր այս հարցուկ. որ շահս բազումս տայր տերանց իւրոց մուսելովն։ Նա զհետ եղեալ Պաւղոսի և մեր՝ աղաղակեր և ասեր. արքս այս ծառայք ՝ի բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանապարհս փրկութիւն. և զայս առներ 'ի բազումս աւուրս»։ Դեռն այն էր զոր Ապողոնն անուանէին, որ և զհարցուկութիւնս առներ. զոր և 'ի տեղւոջն յայնմիկ Պիւթիոն ասասուած անուանէին հեթանոսքն։

ԵԹԷ. Այլ զիարդ կամ որպէս դեռն այն զայսոսիկ բարբառեր։ Ցայտ է, զի կամ կաշառս վարկաներ զայն առաքելոցն՝ զի մի հանցեն զնա յաղջկանէն, կամ որպէս խաբեր դիւթութիւքն իւրով և տայր կարծիս թէ զՃշմարիտն ասիցէ. զի և վասն անհաւատի հրամանատուութենն շեղիչ և պատրիչ կոչէին զնա։ Կամեցաւ խաբել և այսու որ Ճշմարիտս էր. զի վկայ առ Ճշմարտութի անդ՝ ընդ որդւոյն Ճշմարտութեանն կեղծաւորեր գոլ։

ՈՍԿ. Այլ ոչ եղև ընդունելի առաքելոցն յարգելն և գովելն նորա. զոր օրինակ և ոչ առ տերն նոցա դեռն այն որ զտնէն նոցա 'ի մէջ Հրէիցն քարոզեր։ Նմանապէս և Պաւղոս արգելու զնա, քանզի նենգութիւն և չարաբանութիւն զայն իւր առներ։ Իսկ Պաւղոս մեծ հանճարեղութիւն խորհեալ, զի մի հաւատալի արասցէ զքան նորա. զի թէ ընկալեալ էր զվկայութիւն նորա, զքազումս 'ի հաւատացելոցն պատրեր խաբելով իբրև ընկալեալ 'ի Պաւղոսէ որպէս Ճշմարիտ։ Վասն այնորիկ ոչ առնու յանձն լսել զդիւական ասացեալսն, զի

դադարեցուցէ զնա վասն իւր ասել ինչ. զոր և Քն զնոյնս բաղումանգամ առնէր։

Լուս տես զի նախ զինչանելոյն այսն'ի կիր արկանէր զբանն, իբրև թէ այնու պատրել կարասցէ զմիտս նոցա, երկուցեալ առ իւրոյ կորստեանն։ Կա և Պաւղոս յառաջագոյն ոչ ընդունեցաւ զբանն, այլ մերժեաց զնա'ի բաց, ոչ կամելով արկանել պարզաբար զանձն իւր'ի նշանս. այլ յորժամ կարի ստիպեաց այսն առնելով զայն, և զգործն ևս զնոցա ցուցանէր. «Պատմեն ձեզ, ասէ, զՀանապարհս փրկութեան։ Այլ ով պիղծ և ամենապիղծ, եթէ գիտես այսուհետև՝ եթէ Հանապարհ փրկութեան պատմեն, ընդէր ոչ կամաւ յաղջկանէդ արտաքս ելանես։ Այլ զոր ինչ Սիմոն կամեցեալ լինէր ասելով «Տուք ինձ զիշխանութիւն զայդ, զի յորոյ վերայ դնիցեմ ձեռս, առցէ Հոգի սուրբ», զայս իսկ և սա առնէր. քանզի ետես զնոսա քաջընտիրս լեալ քան զինքն. ըստ որում և այսու կեղծաւորեալ զինքն իբրև Հշմարիտ երևեցուցանէր. և այսպէս ակն ունէր թողեալ լինել յաղախինն, իբրու թէ զնոյն զնոցայն քարոզէ այնուհետև։ Այլ եթէ օրհնութեան բերանոյ մարդոյ մեղաւորի ոչ է գեղեցիկ կամ ընդունելի այ, յոյժ մանաւանդ առ'ի դիւէն ասացեալն. սմին վասն յայնժամ և Պաւղոս սաստեաց նմա ելանել յաղջկանէն։

«Օ այրացեալ, ասէ, Պաւղոս դարձաւ և ասէ ցայսն. պատուիրեմ քեզ յանուն Յսի Քրի, ել'ի դմանէ. և ել'ի նմին ժամու։ Իբրև տեսին տեարք նորա թէ հատաւ յոյս շահի նոցա, առեալ զՊաւղոս և զՀիղա ձգեցին'ի հրապարակս առ իշխանսն, և ածեալ զնոսա առ զօրագլուխսն ասէն. արքս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր. ինքեանք Հրեայք են, և պատուիրեն մեզ օրէնս զոր ոչ է մեզ արժան ընդունել և ոչ առնել, զի Հռոմայեցիք եմք»։ Զինչ է այն թէ զայրացաւ Պաւղոս. այսինքն զչարագործութիւն տեսեալ զդիւին. ըստ որում գրէ՝ թէ «Ձեմք անտեղեակ խորհրդոց նորա». վասն որոյ և արտաքս վարէ զնա։

ԵՓՐ. Լուս փոխանակ վարձուց բժշկութեան զոր պարտէին Պաւղոսի տեարք աղջկանն, խռովեցուցին

զքաղաքն 'ի վերայ նորա. և յօրէնս Հրէից զոր ոչն քարոզեաց նոցա, զրպարտէին զնա։

ՈՍԿ. Բայց տես զդժնէութեն դիւին. զի յորժամ կեղծաւորութեն ոչ կարաց ընդ միտ մտանել Պաւղոսի, ապա կամեցաւ զնոսա 'ի բարկութեն արկանել, որով և զայլսն 'ի բարկութեն դրդեալ շարժեաց 'ի վերայ նոցա. որք և սուտ բանիւք, որ ամենայն ուրեք պատՀաս է չարեաց, զրպարտէին զնոսա։ Ո՛վ հեթանոսական կարծրութեանն. ախորժէին դիւահարել աղջկանն, զի այնու ինքեանք շահս շահեսցին։ Եւ տես զխռովարարութեն զիոյթ. ոչ ասացին զոր ինչ էրն՝ եթէ զդևն հանին կամ յաստուածս ամբարշտեցան. զի այսնուազագոյն երևէր առնոսա՝ որ զիշխանութեն ունէին. այլ 'ի խաղմարարութեն ելանեն, որպէս Հրէայքն՝ թէ «Ամենայն որ թագաւոր անուանէ զանձն, հակառակ է կայսերը»։ Այսպէս և սորա. «Արքս այս, ասեն, խռովէցուցանեն զքաղաքս մեր». և ամբարհաւաճաբար գոչէին, աղաղակաւն զլսողսն զարհուրեցուցանել խորհելով։

«Խռովէցուցանեն, ասեն, զքաղաքս մեր»։ Չինչ առնելով չար, ով դուք. կամ որպիսի գործովք։ Եւ ընդէր ոչ նախ քան զայդ ձգեցէք զդոսա յատեանն. մանաւանդ որ յամենայնի անսայք դիւին, ընդէր ոչ և աստանօր. նա ասէ՝ թէ ծառայք այ բարձրելոյ են. և դուք ասէք՝ թէ խռովէցուցանեն զքաղաքս. նա ասէ՝ թէ պատմեն ձեզ զՀանապարհս փրկութեան. և դուք ասէք՝ թէ պատմեն մեզ օրէնս զոր չէ արժան ընդունել։ Տեսանեն, ոչ և դիւին զնոսա անսացեալս. այլ առ մի ինչ հայեցեալ՝ յարծաթոյն շահս։ Հրեայք են, ասէ. անուամբն դատաՀանէին իբրու ատելի իրօք։ Զոր ոչ է արժան ընդունել, ասեն, զի հռոմայեցիք եմք. վաղվաղակի զիրսն յամ բաստանութիւն ածեն։ Ո՛վ անմտութեանն բանիցն. ոչ քննեցին, ոչ ետուն բանից տեղի. մանաւանդ այնպիսի նշանս տեսեալ, որով պարտ էր երկիր պագանել և իբրև զփրկիչս և զերախտաւորս ընդունել։ Քանզի թէ ինչս կամիք հաւաքել, ընդէր այսպիսի փարթամութեն գտանելով ոչ 'ի վերայ ընթացեալ եղէք. այսմիկ պայծառագոյն առնել հնար էր ձեզ, որ

զգևան հալածելիք, քան թէ նոցին դիւացն հաւանել։ Ահաւասիկ և նշանք տեսին, այլ ընչասիրութիւնն յա-
Ճախեաց զբրութիւն։

«Լոյս կուտեցաւ, ասէ, ամբոխն 'ի վերայ նոցա». զի առ այսպիսի իրս վաղվաղակի ընթանան մարդիկ։ Բայց 'ի կուտել ամբոխին 'ի վերայ նոցա, տես զնոսա ոչ տալով պատասխանիս և ոչ ընդդիմադրելով. որով և մեծապէս այնու արժանիք սքանչանալոյ լինին. ըստ որում ինքն ասէ. «Յորժամ տկարանամ, յայն-ժամ զօրանամ». և թէ «Շատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի». քանզի և 'ի հեզութիւնն սքանչելիք երևին։

ՈՍԿ. ԵՓՐ. «Լոյս զօրագլուխքն պատառեցին զՀան-դերձս իւրեանց. և հրամայեցին գան հարկանել զնոսա, և բազում վէրս եդեալ 'ի վերայ նոցա արկին 'ի բանտ, և պատուիրեցին բանտապետին զգու-շութիւն պահել զնոսա» Արդ քաղաքապետքն պատա-ռելով զզգեստս իւրեանց՝ զխռովութիւն ամբոխին դա-դարեցուցանել կամէին. զի մի եղիցի, խափանէին նո-քա։ Եւ քանզի տեսին զամբոխն զայրագինս 'ի վե-րայ հասեալ, գանիւքն զսրտմտութիւնն հանդարտե-ցուցանել կամէին։ Եւ առ 'ի հաճել զկամս ժողովրդեանն որ ժողովեալ էր, պրկեցին զպաւղոսեանսն և տարան եդին զնոսա 'ի տան բանտին. և պատուէր ետուն զգուշութիւն պահել զնոսա, կամելով դեռ ևս լսել յաղագս նոցին իրաց։ Արդ զամենայն զգործսն Պաւղոս առնէր և զսքանչելիսն և զվարդապետութիւնն. իսկ վշտացն և Շիլաս հաղորդէր։

«Լոյս առեալ զայնպիսի պատուէր արկ զնոսա 'ի ներքին բանտն»։ Բազում էր սրտմտութիւնն, որով և նա իսկ դարձեալ 'ի ներքսագոյն բանտն արկ զնոսա։ Որ և այս իսկ մնօրինաբար լինէր վասն մեծամեծ սքանչելեացն՝ որ հանդերձեալ էր լինել. զի որչափ զգուշագոյն էր բանտն, նոյնչափ և սքանչելիքն պայ-ծառագոյն։ Եւ ոչ միայն այսու, այլ զի և զոտս նոցա պնդեաց 'ի կոձեղ, 'ի փայտն զոր ներքսն անուա-նէին։

ՑՈՐԴՈՐԱԿ

Լ՚ԸՍ և մեք զայս ստէպ յիշեցուսցուք անձանց որ-
չափ նեղութիւն կրեցին նոքա զնոյ գործն գործելով.
և մի զգիջային և շփոթեալ զբաղմամբ կեանս խնդ-
րեսցուք և զմնասակար խրախճանութիւն. զի ոչ ինչ
է անպիտանագոյն քան թէ մարդ յար հանդստեամբ
և խրախութիւն փափկացեալ։ Զի ոչ միայն առաքի-
նութիւն հոգւոյ է այնպիսին աղկաղկ՝ի խոհեմութէ
և յարութէ, այլ և մարմնով և՛ թոյլ և ցաւագին.
իսկ աշխատեալն մարմնով պնդակազմ և առողջա-
կան։ Որպէս ջուր ոչ դադարեալն՝ այլ ընթացեալն է
յստակագոյն. և երկաթ՝ ոչ խափանեալն որ՝ի ժան-
գոյ ծախի, այլ շարժեալն՝ի գործ իբրև զարծաթ
փայլէ։ Հեղգասցուք և կարի յամրագոյն՝ի չարիս
լիցուք. զի էն որ հսկեն՝ի չարիս, որոց լաւ երենջերն
լոկ՝ քան՝ի չարիս հսկել՝ի գիշերի։ Ա՚յլ մանաւանդ
յաղօթս և՛ի բարի գործս յարուցեալք[1] թօթափեսցուք
զկրկին թմբրութիւնս, հայելով յօրինակս ուղ-
ղութէ զոր ունի կարգ բանիս։

1 Միւսն յօրացեալք։

ՃԱՌ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՎ ՑԵՐՈՐԴ

«Եւ 'ի մէջ գիշերին Պաւղոս և Շիղա կային յաղօթս և օրհնէին զԱծ. և ունկն դնէին նոցա կալանաւորքն։ Զի՞նչ երբէք հաւասար լիցի անձանցս այսոցիկ. քանզի հարեալ և գանս բազումս առեալ անարգեցան չարչարեցան, զվերջին վտանգսն կրեցին. 'ի կոձեղ պնդեցան զգուշութիւն, և այն 'ի ներքնումբանտի. սակայն և այնպէս 'ի քուն կալ ոչ յանձն առնուին, այլ ամենագիշեր օրհնութեամբ հսկէին։ Տեսանես թէ որչափ բարի են նեղութիւնք առ Ած ասէր անձինս։

Արդ քննեսցուք զգիշերքս զայսոսիկ որ առ մեզ՝ առ այնմ գիշերոյ. զի նոքա զամենայն գիշերս օրհնէին զԱծ, իսկ առ մեզ զի՞նչ. դայլայլիկք, արբեցութիւք, պակշոտութիւք, կակուղ անկողինք և քուն խոր զամենայն գիշերն, 'ի մահուանէ ոչինչ զանազանեալ, յումեքէ ոչ երկնչելով. կամ արթնութի՞ քան զքուն դժուարագոյն։ Զի ոմանք ննջեն անզգայաբար. և ոմանք արթունք եղկելի կայիւք նեղութի՞ս կարկատելով, յաղագս ընչից ցնորելով թէ որպէս չարիս հատուսցեն զրկողացն փութալով, թշնամութիս խոկալով պատգամս անարգողականս և խորհուրդս չարաբարոյս ըստ իւրաքանչիւր աւուր 'ի միտս ընտրելով. այսպէս 'ի գիշերի զհուրն բարկութե՞ բորբոքեն զանտեղիսն գործելով։ Ա՛յլ նոքա վասն այնորիկ թերևս հսկեն 'ի կապանսն և 'ի չարչարանսն, զի զմեր լուծեալ դանդաղութիս՝ և այս առանց կապանաց՝ ուսուսցեն զգաստանալ. քանզի յայնպիսի նեղութե՞ էին, և ոչ բռնութի՞քնոյ ըմբռնեաց զնոսա. ոչ վերքն ցաւուցին, ոչ երկիւղն 'ի տարակուսանս արկ. զի մանաւանդ այնոքիկ էին որ յարուցանէին զնոսա, և բազում հեշտութիւն ի առնէին. որով ուրախացեալ օրհնէին զԱծ։ Եւ դիտեա թէ որպէս 'ի բանտին Պետ-

բոս 'ի քուն կայր. տնօրինաբար և այն իսկ եղև. և հրբեշտակն եկեալ երևեալ լինէր նմա միայնոյ, և այլ ումեք ոչ էր պարտ տեսանել զոր ինչ եղևն։ Իսկ աստ Պաւղոս արթուն էր և բարձրաձայն յօրհնուելս. և բանալելիքն եղեալ ամենեցուն յայտնի զհաւատացեալս։

«Յե՛ւ եղև յանկարծակի, ասէ, շարժումն մեծ մինև շարժել հիմանց բանտին. և բացան անդրէն դրունքքն ամենայն, և ամենեցուն կապանքն լուծան»։ Վասն էր եղև շարժումն. զի զբանտապետն զարթուսցէ։ Իսկ դրունքն բացան, զի տեսեալ աքանչասցին ընդ եղեալսն։ Այլ կալանաւորքն զբանալ դրանցն ոչ տեսին. ընդէր. զի թերևս ամենեքեան փախուցեալ լինէին, և յայնժամ հանդերձեալ լինէր զանձն իւր սպանանել բանտապետն։ Եւ ընդէր ոչ այլ ինչ նշան հաւատալոյ եղև նորա. զի այս իսկ բաւական եղև հաւանեցուցանել զնա, մանաւանդ 'ի փոյթ ձգելով. որ և ինքն իսկ տաղնապեցաւ յահէն։ Զի ոչ այնպէս պարզաբար եղեալ աքանչելիք զմեզ վերացուցանեն, որպէս այնք որ 'ի մեր փրկութեան յարմարին։ Եւ զի մի թուեսցի ինքնին լինել շարժմանն և այլքն զարմանք, ընդ նմին հետեւեցաւ վկայելով նմին։ Իսկ 'ի գիշերի լինի երևեալ, զի ոչ առ 'ի ցոյցս՝ այլ առ 'ի փրկութեան առնելին զամենայն։

ԵՓՐ. Ա՛ռդ եղև դղրդումն 'ի քաղաքի անդ, և դրունքք բանտին բացան, և կապանք արձակեցին թափեցան 'ի նոցանէ. և զի մի եղեցի տրտմութեան բանտապետին որ հաւատացելոցն էր, որ 'ի նոցանէ ոչ խոսեաց. զի վասն այսորիկ բանտապետն արժանի եղև մկրտութեան աւազանին ընտանեօք իւրովք որպէս ասէ. «Խրև զարթեաւ բանտապետն և ետես բացեալ զդրունս բանտին, ձգեաց զսուսերն և կամէր երթալ զիւրովին. կարծէր փախուցեալ զկապեալսն։ Եւ կոչեաց 'ի ձայն մեծ Պաւղոս և ասէ. մի ինչ գործէր ընդ անձն քո չար, քանզի ամենեքեան աստ եմք. խնդրեաց լոյս և դիմեաց 'ի ներքս, և զահի հարեալ անկաւ առաջի Պաւղոսի և Շիղայի. և ածեալ զնոսա արտաքս ասէ. տերք, զինչ պարտ է ինձ առնել զի ապրեցայց»։ Տեսէր թէ որպէս աքանչելիքն ըմբռնեաց զնա. և զի զարմացաւ մանաւանդ ընդ մարդասիրութեան Պաւ-

զոսի. զարհուրեցաւ ընդ արիութիւն, զի կարելով փախչել և ոչ փախեաւ. և զի արգել զնա 'ի սպանմանէն, Եւ զայն վայելչաբար առնէր Պաւղոս. զի բանտապետն այր բարեբարոյ էր և ոչ չարաբարոյ։ Զի թէպէտ 'ի ներքսագոյն բանտն էարկ զնոսա, այլ զայն ոչ յինքեանէ արար, այլ պատուէր այնպիսի ընկալաւ 'ի զօրագլխացն. իսկ ինքն զարհուրանօք և խռովութիւն լի էր ընդ իրսն։

Այլ ընդէր ոչ նախ քան զձգելն զսուսերն կոչեաց զնա Պաւղոս. վասն զի զարհուրումն առաւել զնա 'ի հաւանումն ածէր։ Նմին վասն լուա եկաց Պաւղոս մինչև ետես զչարիսն, և ապա աճապարեալ ասաց. մի, զի ամենեքեան աստ եմք։ Իսկ նա փութացեալ 'ի ներքս անկաւ առ ոտս կապելոցն կապանապահն և ասէ. տերք, զինչ պարտ է ինձ առնել զի կեցցեմ։ Հայեաց 'ի Ջան նորա. զի ոչ այնու իսկ զի փրկեալ 'ի սրոյն եղև՝ հաստատեցաւ 'ի կենաս, այլ ընդ զօրութիւնն և ընդ մարդասիրութիւնն զարհուրեալ այլ ինն կեանս խնդրէր։ Տեսեր թէ զինչ անդանօր եղև մինչև էին 'ի բանտն և 'ի կապանս, և զինչ աստանօր կապեալ. անդ՝ ուր նշանօք աղախինն ազատեցաւ 'ի դիւէն, 'ի բանտ արկին զնոսա, զի թժշկեցին զնա յայսոյն. իսկ աստանօր միայն զդուրս բանտին բացեալ ցուցին, և բացեալ զդրուսն սրտի նորա և լուծին զնորա կապանսն ներքինս. իսկ լոյսն լուցեալ զլոյսն որ 'ի սրտի նորա էր՝ փայլեցոյց և զնաւարն հալածեաց։ Անկաւ առաջի. բայց ոչ հարցաներ թէ որպէս եղև այս կամ զնարդ. այլ վաղվաղակի ասէ, զինչ արարից զի կեցցեմ։

Իսկ նոքա ասեն. հաւատա 'ի տեր Յն Քն, և ապրեսցիս դու և ամ տուն քո. և խօսեցան նմա զբանն տեառն և ամենեցուն որ էին 'ի տան նորա»։ Տես զի վաղվաղակի քարոզեցին զբանն, և ցուցին զլեալսն առնա մարդասիրութի. զի մանաւանդ այն իսկ զնա և զայլսն ձգէր 'ի հաւատս, զի անվնաս պահեցին զնա. այլ և զամենայն տուն նորա կենաց արժանի առնեն և փրկութեան։

«Այլ առեալ զնոսա 'ի նմին ժամու գիշերոյն լուացաց 'ի վերոց անտի, և մկրտեցաւ ինքն և իւրքն ա-

մինչեւ ան ոգէն վաղվաղակի. և ածեալ զնոսա 'ի տուն իւր՝ եդ առաջի նոցա սեղան և ուրախ եղև ամենայն տանն, հաւատացեալ յԱծ։ Հայեաց 'ի ջերմ հաւատն. լուաց զնոսա, և մկրտեցաւ ինքն և տուն իւր. լուաց զնոսա և լուացեալ եղև. զնոսա 'ի գանիցն լուաց, և ինքն լուացեալ եղև 'ի մեղաց. կերակրեաց, և կերակրեցաւ զհայն երկնաւոր և ուրախ եղև։ Եւ զի մանաւանդ ոչ ինչ երևեալ եղև, բայց բանք միայն և յոյս քաղցունք, և այն իսկ նշան էր սերտ հաւատոցն նորա. և զի զամենայն հոգս երկրաւոր և զերկիւղ մարդկային 'ի բաց եթող վաղվաղակի։ Զինչ վատթարագոյն քան զանտի կապանաւսն. կամ զինչ քան զնա կարծր և խիստ է դատանել կամ զարհուրեցուցիչ. այլ սակայն յայսցանէ փոխեալ 'ի ձեռն հաւատոցն սքանչելի լեալ, որով և բազում պատուով ընկալաւ զնոսա։ Եւ տես ոչ զի 'ի մահուանէ փրկեցաւ՝ ուրախացաւ, այլ զի հաւատացեալ եղև յԱծ։

«Այլ իբրև այդ եղև, առաքեցին զօրագլուխքն զնուիրակն և ասեն. արձակեա զարդդ զայդոսիկ»։ Թերևս զօրավարքն գիտային զոր ինչ եղևն՝ զմեծամեծ աքանչելիսն. և այսպէս ոչ համարձակէին յինքեանց թողուլ զնոսա, այլ 'ի բանտապետն առաքէին իբրև զաղտագողի իմն հանել զնոսա։

ԵՓՐ. Ապահի հարան և երկեան աստարիտայքն Ճոխք քաղաքին 'ի շարժմանէ անտի, և Ճշմարտեալ գիտացին՝ թէ արդարեւ 'ի պատճառս նոցա եղև շարժումն այն, բայց խոստովան լինել 'ի նա ոչ կալան յանձին. առաքեցին ծածուկ հանել զնոսա։ «Եւ պատմեաց բանտապետն զբանս Պաւղոսի՝ թէ առաքեցին զօրագլուխքն զի արձակիցէք. արդ ելէք և երթայք խաղաղութիւն». այսինքն զգուշութիւն, ոչ երկընչելով։ Եւ այլ ազգ աստ. քանզի արտաքոյ տագնապի ախորժէր զնոսա լինել, զի մի կարծիցեն յետոյ դարձեալ յայնցանէ ամբաստանեալ լինել՝ յաւելթէ խաղաղութիւն։ «Իսկ Պաւղոս ասէ զնոսա. «Դան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս անմեղս հռովմայեցիս արկին 'ի բանտ, և արդ լուռելեայն հանեն զմեզ. ոչ այդպէս. այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ»։ Եարդ

քանզի յօրէնս հրէութեան զրպարտեցան 'ի նոցանէ աւուրբ յառաջ, ասեն հռովմայեցի եմք, հեռի և զատ յօրինացն Հրէից և 'ի տանջանաց քաղաքապետացն. ոչ եթէ հանցեն զմեզ գաղտուկ իբրև երախտաւորք ինչ լինելով առ մեզ, այլ զի նոքա իսկ եկեսցեն հանցեն զմեզ։

ՈՍԿ. Արդ զօրագլխացն համարձակելով ելանել, Պաւղոս ոչ ելանէր այնու. այլ երկեցուցանէր զնոսա, զի մի կարծեալ լիցին աղաչելով արձակիլ, և զի զայլսն ևս հաւատացեալսն 'ի համարձակութեան հաստատեսցէ։ Բայց տես, ով սիրելի, զիմաստութեան բանից նորա. զի կրկին և երեքկին էր ամբաստանութեան. զի հռովմայեցի եմք, ասէ, և անմեղ առանց դատապարտութեան, և գանահարեալք 'ի հրապարակի։ Եւ ոչ ասաց՝ թէ գան հարեալ զմեզ որ նշանս գործեցաք. զի նոքա ոչ ինչ այսոցիկ փոյթ առնէին. այլ որ ինչ մանաւանդ շարժէր զտրամախոհուն նոցա երկիւղիւ՝ զայն ասէ. «Զարս անմեղս հռովմայեցիս» ասէ։ Տեսանե՞ս զի մարդկայինն իրս բաղումն կազմէին։ Արդ զի մի թուեսցի ումեք իբրև դատապարտ ոք և մեղաւոր արձակել զնոսա, մի այսորիկ ասաց Պաւղոս՝ թէ «Գան հարեալ զմեզ արս անմեղս եդին 'ի բանտի. արդ ոչ ելանեմք. այլ եկեսցեն ինքեանք հանցեն զմեզ». զի մի իբրև ընդհոս ինչ նոցա զիրսն համարեսցին։ «Եւ պատմեցին զօրագլխացն նուիրակքն զբանսն. զահի հարան իբրև լուան թէ հռովմայեցիք են»։ Երկեան իբրև գիտացին թէ հռովմայեցիք են. այլ ոչ զի տարապարտուց արարին ընդ նոսա զայն։

ԵՓԲ. «Այլ եկեալ աղաչեցին զնոսա. և իբրև հանին, աղաչէին գնալ 'ի քաղաքէն»։ Արդ զի եղիցի 'ի նոսա ընդհոս այս, եկին և խնդրեցին 'ի նոցանէ՝ թէ ոչ գիտացաք թէ արդար էիք դուք. որպէս զի շարժուն իսկ գուշակեաց վասն ձեր. արդ ընդհոս ինչ հայցեմք 'ի ձէնջ զայս, ելէք գնացէք 'ի քաղաքէ աստի. գուցէ թէ յետ շարժմանս ժողովեսցին 'ի վերայ ձեր նոյն մարդիկ՝ որ յառաջ քան զշարժուն ժողովեալ էին։

ՈՍԿ. «Այլ ելեալ 'ի բանտէն մտին առ Լիդիա. և տեսեալ զեղբարսն՝ մխիթարեցին զնոսա և գնացին»։

վայելապէս. զի ոչ էր պարտ զհիւրընկալն զնախկի հաւատացեալն և զտուն նորա Թողուլ յաշխատութիւն և 'ի հոգս, այլ պարտ էր միսիթարել զնոսա։ Այլ տես զզանազանապէս տնօրինեալ շնորհացն Թէ որպէս Պետրոս էլ 'ի բանտէն յառաջագոյն կամ որպէս սա. և մանաւանդ երկաբանչիւրքն առաքեալք գոլով։ Արդ ելին 'ի քաղաքէն ոչ նոցա ինչ հաւանելով, այլ 'ի քարոզութիւն փութալով, և քաղաքին 'ի ձեռն նշանացն բաւականապէս շահս գործելով։ Եւ զի պարտ էր այնուհետև ոչ մօտ լինել նոցա, զի սքանչելիքն մեծագոյն երևեսցին՝ գործողացն 'ի բաց գընալով. յայնժամ ինքնին մանաւանդ սքանչիցն գոլով. զի բանտապետին հաւատքն փոխանակ ձայնի հնչեր յամենեցունց լսելիս։

Զ. Ինչ այսոցիկ հանգոյն լինիցի յորժամ կապեալն զայլս լուծանէ, 'ի բանտի գոլով զայլս արձակէ, և 'ի ձեռն ինքեան մեկին կապեալ լինելոյն՝ զկապողն իւր 'ի կրկին կապանաց արձակէ։ Այսոքիկ Հշմարտապէս շնորհաց են գործք։ Արդ մի զքանչելիսն միայն որ 'ի շնորհացն՝ այլ և զայսոսիկ զկապանս յամենայն ժամ յիշեսցուք. որ կապեալ գոլով զկապանապահն հաւանեցոյց։

Ա. Այլ թերևս առ այս ծիծաղելով ելլենացիք՝ զո՞վ ասեն, հաւանեցուցին կամ ո՞ւմ յաղթեցին. ոչ ապաքէն վատթար մարդոյ տառապելոյ և միտս ոչ ունողի, նա և բազում չարեօք լցելոյ, որով և դիւրաւ ըմբռնեալ եղև 'ի նոցանէ. և այլքն որ իբրև զսա, ներքինին, բանտապետն, ծառայք, կանայք և նոյնպիսիք։ Զայսոսիկ նոքա։

Ա. Այլ զի՞նչ կարիցեն ասել յորժամ յառաջ բերեմք զայնոսիկ որք յիշխանութիւն էին, զՀարիւրապետն, զդեղէնն, նա և զբոլոր տիեզերս և զնոսին իսկ զթագաւորս և զիմաստասէրս ըմբռնեալ 'ի նոցանէ. և կերպարանօք հաւանութիւն ևս սքանչելի. զի ոչ հանգիստ ինչ կամ շահս մարմնոյ խոստանային, այլ զնոցին հակառակսն. այսինքն Թէ պարտ է հաւանելոցն բազում չարչարանս կրել և մեռանել։ Այս իսկ ըսքանչելի ցուցանէ զզօրութիւն աւետարանին։

ՑՈՐԴՈՐԱԿ

Հայոցիկ վիճակեալ մեր՝ մի աղաւաղեսցուք ծուլութիւն և դանդաղանօք զմեծութիւն կրօնիցս։ Յարիցուք յաղօթս, թէպէտ և ոչ բազումս, զոմանք մի և երկու աղօթս կատարեսցուք. բացցուք աղօթիւք ոչ զբանսն, այլ զերկինս. լուծցուք աղօթիւք զկապանս մեղաց։

ՃԱՌ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

«ԼՍ՝ ի շրջեալ ընդ Ամփիպոլիս և ընդ Ապղոնիա, եկին 'ի Թեսաղոնիկէ՝ ուր էր Ժողովուրդն Հրէից»։ Դարձեալ զիտոբրագոյն քաղաքօքն զանց առնէին առ մեծագոյնսն փութալով. որպէս զի 'ի նոցունց իբրև յաղբերէ իմն հանդերձեալ էր բանն հոսել առ մերձաւորսն։ «Եւ ըստ սովորութեան Պաւղոս եմուտ առ նոսա»։ Եւ զի վերագոյն ասաց՝ թէ դառնամք 'ի հեթանոսս, արդ ընդէր առ նոսա մնանէ։ Վայելչապէս. քանզի ոչ թողոյր զնոսա բնաւին 'ի բաց, զի բազում սէր առ նոսա ունէր. և լուր նմին իսկ. «Եղբարք, ասէ, իմ հաճութիւն սրտի և աղօթք առ Ած վասն նոցա է'ի փրկութիւն». և «խնդրեմ նզով լինել վասն եղբարց իմոց՝ որ են իսրայէլացիք»։ Այլ զայս ինչ առնէր վասն խոստմանն Այ և փառացն. և զի մի 'ի նոցայն բնաւին վերջոտնել գայթակղութիւն լինիցի հեթանոսաց 'ի հաւատս անդր. ըստ որում և աստաւնօր վասն նորին իրաց փութայր։

«Եւ 'ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա 'ի գրոց» Զի 'ի շաբաթս իսկ դատարկացեալ այնմիկ պարապէին. իսկ 'ի գրոց, քանզի զայս և Քս առնէր, 'ի վեր և 'ի խոնարհ 'ի գրոց վարդապետելով. և ոչ առմենայն իրօք ուրեք 'ի նշանացն կամէր հաւատալի լինել, քանզի և առ այն իսկ հակառակաբար կային իբրև մոլորեցուցիչս և կախարդս դաւաճանելով. իսկ 'ի գրոց հաւանեցուցանելով ոչ ունի տեղի այնպիսի չար կարծեաց։ Եւ 'ի բազում տեղիս գտանեմք զՊաւղոս վարդապետութիւն հաւանեցուցեալ զնոսա. որպէս և ՅԱՅտիրոք Պիսիդեայ նախ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Այ։ Այսպէս մեծ է առ 'ի գրոց վըկայութիւն հաստատութիւն։

«Լանայր և դնէր առաջի, թէ պարտ էր Քզի չարչարել և յառնել 'ի մեռելոց. և թէ նա է Քն

Յն զոր ես պատմեմ ձեզ»։ Տեսանէս, զի յառաջ քան զամենայն զչարչարանսն քարոզէն։ Ա. Յսպէս պարծէին նովաւ և ոչ լինէին ամաչեցեալք. քանզի գիտէին զայն իսկ փրկիչ աշխարհի, և թէ պարտ էր չարչարել Ճշմարտապէս և յառնել. քանզի յոյժ իսկ այս քան զայն սքանչելի է և մեծ։ Զի եթէ որ ոչն ինչ մեղաւ, 'ի մահ ետ Հայրն զնա, զի զայս նշանակէ պարտ էր ասէն, ապա յոյժ մանաւանդ և յարոյց զնա։ Եւ զի մի կարծիցեն նոքա թէ ինքեամբք զոբացան առ այն, այսինքն սպանանել զՔն, այլ զի ՝ած թոյլ ետ, պարտ էր չարչարել Քն՝ ասէ. որով ցուցանէ թէ երկու իրք մատակարարեցաւ լինել. նախ զի մի իրքն վրէժինդիրքն օրինացն մեծամտեսցեն Հրեայք 'ի սպանանել զնա, զի ինքեանք իսկ լուծանիցին զօրէնսն. և դարձեալ զի մի սոքա զանգիտասցեն իրքն սուտք և պարտապանք դատապարտութեան. սմին վասն յաւել՝ թէ որ չարչարեցաւն և յարեաւն, նա է Քն Յն զոր ես պատմեմ։

«Այս ոմանք 'ի նոցանէ հաւանեցան և վիճակեցան Պաւղոսի և Շիղայի». յայտ է 'ի Հրէից անտի։ Բայց պաշտօնէիցն հեթանոսաց էր բաղմութիւն յոյժ, և 'ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք»։ Պաշտօնեայս կոչէ զհաւատացեալսն 'ի հեթանոսաց՝ յաղագս հաւատոցն և գործոցն բարեպաշտութեան է հանդերձ մեծամեծ տիկնամբք, զորոց բաղմութիւն մի ըստ միոջէ ոչ աճեցուցանէ ըստ թուոյ կարգաւ, այլ հանուռօտ զամենայն. ըստ որում և ոչ զնորին Պաւղոսի հանդիսաբանութիւն յամենայնի զգրի հարկանէ։ Եւ նոքա այսպէս. իսկ Հրեայքն զնորին հակառակն գործէին, յամենայնի նախանձոտք և չարք գոլով։

«Նախանձեցան, ասէ, Հրեայքն, և առեալ արս ոմանս դառնիկս անօրէնս՝ ամբոխս արարեալ խռովեցուցին զքաղաքն»։ Տեսանէս. զի թէպէտ և բազումէին հեթանոսք, բայց ոչ կարծէին զինքեանս շատանալ 'ի խազմարարութիւն առանց Հրէից. քանզի և ոչ ունէին իսկ պատճառս իրաւացի զայլս վերդովելոյ։ Իսկ Հրեայքն հանապազ զայնպիսի անօրէնութիւն 'ի կիր արկանէին ժողովելով առ ինքեանս արս չարախօսս։ «Եւ կուտեալ առ ապարանսն Յասոնի՝

ինդրէին ածել զնոսա 'ի հրապարակն. և իբրև ոչ գտին զնոսա 'ի տանն Յաստնայ, քարշէին զՅաստն և զոմանս եղբարս առ քաղաքապետն»։ Ո՛վ ամբարիշտ բռնութի՛ն. 'ի տանցն քարշէին զնոսա վայրապար 'ի հրապարակն։ «Բազոքք բարձեալ՝ թէ որք զաշխարհս խռովեցուցին, նոքա և այսր հասին, զորս ընկալեալ է Յաստնի. և սոքա ամենեքեան հակառակ հրամանացն կայսեր գործեն. թագաւոր զոմն ասեն զՅ՚ս»։ Հակառակ կայսեր ասեն, զի նոր արքայ ընդ կայսեր քարոզեն։ Տեսանե՞ս զամբարիշտ ամբաստանութի՛ն. յայսմամբուն թի՛ այսու զնոսա դաւաճանէին. ոչ ինչ վասն աւանդելոցն հակառակ ունել ասէին ընդ օրէնացն։ Քանզի այնու ոչ կարէին խռովեցուցանել զքաղաքն, յաղագս որոյ առ այլ ինչ ամբաստանութի՛ն զրպարտէին զնոսա. զոր և Քոի առնէին։

«Եւ խռովեցուցին զժողովուրդն և զքաղաքապետն՝ որ լսէին զայս, քանզի զահի հարան և երկեան զօրագլուխքն յայսմ հմբաւոյ. և առեալ ելբարեխաւորութի՛ն առ Յաստնայ և յայլոցն՝ արձակեցին զնոսա»։ Զայս արարին Ճոխք քաղաքին, զի յաձուցցեն զամբոխն՝ որ կուտեցաւ 'ի վերայնոցա։ Եւ յլ հայեաց ընդ սքանչելիս և մեծ սէրն Յաստնի, որ 'ի վիշտս և 'ի մահտուեալ զանձն իւր՝ զինքն բաւական յերաշխաւորութիւն տալով, զՊաւղոս 'ի բաց արձակեաց, զանձն իւր մատնեալ յաղագս նորա։

«Ոչայց եղբարքն, ասէ, վաղվաղակի գիշերայն յուղարկեցին զՊաւղոս և զՇիղա 'ի Բերիա. որք իբրև հասին անդ, 'ի ժողովուրդն Հրէից գնացին, զի սոքա էին ազնուականագոյնք քան որ 'ի Թեսաղոնիկին էին. որք ընկալան զբանն ամենայն յօժարութի՛ն. հանապազ քննէին զգիրս թէ իցէ այս այսպէս»։ Եւ դիարդ գրէ Պաւղոս՝ թէ մեք 'ի հեթանոսս, և պետրոսեանքն 'ի թլփատութիւն անդ. և ինքն ընդ Հրէիցն առներ զվարդապետութի՛ն։ Եւ յլ ըստ առաւելութի՛ն առներ զայն։ Եւ զի պարտ էր նմա և ընդ Հրէիցն խօսել, որպէս և պետրոսեանքն 'ի հեթանոսս. զոր և ասեն իսկ զարմացեալք՝ եթէ ետ ո՞ւմ 'ի հեթանոսս ապաշխարութի՛ն կենաց։ Եւ այսպէս նոքա ընդ հեթանոսացն միաբանեցան, թէպէտ և մանա-

ւանդ 'ի թլփատութեն քարոզութիւն անդ որոշեալ գոլով։ Այսպէս և սա գլխովագոյն փոյթն առ նոսա ցուցանէր. սակայն և առ նոսա ոչ պղերգանայր, զի մի կարծիցեն զինքեանս 'ի բաց ձեղքեալս։

Լ։ զի՞արդ ասէ՝ թէ նախ 'ի ժողովս Հրէիցն մտանէր. այո. քանզի զհեթանոսս 'ի ձեռն Հրէիցն հաւանեցուցանէր, որովք ընդ նոսայն լինէր խօսեցեալ։ Քանզի գիտէր եթէ այս իսկ մանաւանդ հեթանոսաց է պատշաճաւոր առ 'ի հաւատոյներածութիւնքսատ ասելոյ նորին «Որչափ եմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առնեմ. թերևս նախանձ արկիցէ Հրէիցն մարմնով իմով և ապրեցուցից զոմանս 'ի նոցանէ»։ Դա և ամենայն իսկ թուղթք նորա ընդ Հրէիցն լինի մարտուցեալ։ Սոքա, ասէ, որք 'ի Բերիա աշնուականագոյնք էին. այսինքն հեգք և խոնարհք և բարեբարոյք, ոչ ինչ չար գործելով. զի ոմանք հաւանեցան, և այլք ոչ ինչ 'ի չարագործութի եկին։ Եւ զի աշնուականք էին, ըստ առաքինութեան բարեառոյմք էին. ուստի և ոչ վայրապար ըստ սովորութեան իրիք, այլ մեծաւ ստուգութիւն քննէին զգիրս առ 'ի յօրինաց և 'ի մարգարէից ուսանել զճշմարտութիւնն։

«Լ։ բազումք 'ի նոցանէ հաւատացին». այսինքն 'ի Հրէից։ Տես հաւատարմացեալ զասէն զնոցանէ ազնուականս գոլ, զի բազումք հաւատացին։ «Եւ 'ի Յունաց կանանց զգաստից մեծամեծաց և յարանց ոչ սակաւք»։ Դարձեալ և աստանօր բազմութիւն 'ի հեթանոսաց ընծայէր։ Իսկ Հրեայքն չարաբարոյք իջին և անդ, զի իւրեանց հակառակութիւն զՊաւղոս 'ի հեռաւոր տեղիս առաքեսցեն, որով առաւել բանն զօրանայր։ Զի որովք հալածելն կարծէին, յամենայնի տարածեալ լինէր քարոզութիւն։

«Զի իբրև գիտացին, ասէ, որ 'ի Թեսաղոնիկէ Հրեայքն էին՝ թէ և 'ի Բերիա պատմեցաւ 'ի Պաւղոսէ բանն այ, եկին և անդ շարժել և խռովեցուցանել զժողովուրդն»։ Տես զյանդգնութիւն վայրապար. զի վրդովելով և նախանձելով 'ի վերայ գիմեալ լինէին. քանզի արք վաճառականք էին և յանիրաւութի սովորեալք. և մանաւանդ զի քաղաքն մեծագոյն էր։ Եւ

այս ոչ ինչ է պանչելի, 'ի մեծագոյն քաղաքի լինել արս վատթարագոյնս. զի մանաւանդ յայնպիսումն լինին վատթարագոյնքն, ուր և խռովութեանն պատճառք բազումք են. որպէս և 'ի մարմնի ցաւք դժբնդակագոյն ունին զնիւթն և զկերակուրն, նոյնպէս և աստանօր։ Որպէս և որք Յիկոնիոն և Յանտիոքն էին Հրեայքն արարին։ Որով դատապարտելք ոչ միայն զանձանց, այլ և զայլոց կորստեան հատուցին զիրաւունս։ Զայսոսիկ և Պաւղոս ասէ. «Որք արդեալուին զմեզ խօսել հեթանոսաց զի ապրեսցին, զի կատարեսցեն զմեզս իւրեանց յամենայն ժամ»։

«Յայնժամ վաղվաղակի զՊաւղոս առաքեցին եղբարքն գնալ մինչև 'ի Ծովեզրն. և մնացին Հիլդա և Տիմոթէոս անդէն։ Եւ սանեն ամենայն ուրեք զնա և առ զի տալով և դադարելով, և բազում ինչ մարդկային իմաստութիւն յօրինելով։ Եւ այժմ անօրինաբար փախուցեալ լինի, և ոչ զանգիտելոյ վասն. զի թէ չէր անօրինաբար, ապա դադարեալ լինէր 'ի քարոզութէն. և նոքա ոչ առաւել լինէին զայրացեալ։ Բայց յայսմանէ երկուս իրս անօրինիւր. զի և նոցա ցասումն շինանէր, և քարոզութէն առաւել առնէր։ Ապայ և եղբարքն ևս յարժան և իմաստաբար զայս առնէին. զի յորժամ նոցին անկարգ յանդգնութէն 'ի վերայ եհաս ամբոխել և խռովեցուցանել զքաղաքն, յայնժամ զՊաւղոս միայն արձակէին. քանզի յաղագս նոքա առաւել լինէին երկուցեալ, զի մի դաւ ինչ կրեսցէ, իբրև գլուխ և վարդապետ գոլով նոցա։ Ապա պէս ոչ յամենայն ժամ շնորհքն ներգործեալ լինէին. այլ թողացուցանէր զնոսա և մարդկային ինչ առնել յարուցանելով զնոսա և զարթուցանելով և 'ի հոգս արկանելով։

Եւ տես արդ, զի մինչև ցփիլիպպեցւոց քաղաքն միայն հասոյց զնոսա, յայլոցն արգելելով. և անդ 'ի Փիլիպէ 'ի ձեռն տեսլեան փութացուցանելով ածէր զնա. վասն որոյ և վաղվաղակի հասին անդ, այսինքն 'ի Փիլիպէ. բայց անդուստ և յառաջ 'ի ձեռն տեսլեան ոչ ևս։ Իսկ Պաւղոս զսէրն և զփոյթն և յայսմ առաւել ցուցանէր, յամենայնի զառաւելն խորհելով և առնելով. որպէս 'ի բազում իրաց յայտ է։ «Զի

ահա Քո հրամայեաց, ասէ, որոց զաւետարանն ա-
ւետարանեն, յաւետարանեն կեալ». այլ ինքն ոչ առ-
նէր այնպէս։ Ոչ առաքեաց զնա Քո մկրտել, այլ ա-
ւետարանել միայն. այլ և զայն առնէր։ Եւ տես թէ
որպէս հասարակակրօն էր ամենեցուն և առաւել
և ս. զի «Պետրոս, ասէ, 'ի թլփատութենն և ես, ասէ,
'ի հեթանոսս» 'ի յոլովագոյն մասին։

Այլ ընդէր ոչ տեսեաց աստանօր 'ի Բերիա. կամ
ընդէր ոչ նշանս արար. զի թէ անդանօր 'ի Լիւստրոս
յորժամ քարկոծ արարին զնա՝ բազում ժամանակս
տեսեր, ապա մանաւանդ և աստանօր պարտ եր, ընդէր
ոչ արար այնպէս։ Քանզի ոչ հանապազ կամեցեալ
լինէր Պաւղոս զի նշանք լինիցին. զի բան զնշանս առ-
նել ոչ նուազ սքանչելիք էին հալածելոյն յաղթել
առանց նշանաց։ Եւ Քո իսկ զնոյն կամէր, զի առանց
նշանաց յաղթեսցեն. որպէս և ինքն Քո յայնժամ 'ի
շրջելն յերկրի 'ի բազումս տեղիս կամեցեալ լինէր յաղ-
թել Աշմարտութեն։ Սմին վասն և ոչ առաքեալքն
հանապազ ընթանային նշանօք, որպէս և Պաւղոս ա-
սէ՝ թէ «Հրեայք նշան հայցեն և հեթանոսք զիմաս-
տութի խնդրեն. այլ մեք քարոզեսցուք զՔո 'ի խաչ
ելեալ»։ Զայսոսիկ տամք 'ի յաղթութի, զոր և ոչ
նշանքն կարեն հաւանեցուցանել. իսկ մեք զայս քա-
րոզելով, ասէ, հաւանեցուցանեմք։ Որպէս զի մեծ
նշանքն այս իսկ էր՝ խաչիւ և մահու յաղթել աշխար-
հի։ Եւ տես ահա առաւելութի քարոզութենն իրրու
սքանչելի նշանօք ընթացեալ. զի պարտ էր այսու հե-
տեւ՝ վասն բազմութի հաւատացելոյն մեծագոյն լինել
նշան քան թէ զայլ ինչ։ Եւ զայնոսիկ առնէին 'ի բազ-
մութի զօրանալ հաւատացելոցն, տեղի տալովն և 'ի
վերայ հասանելոյն։ Արդ յուզարկեցին զնա մինչև
'ի ծովեզրն, զի մի լեցի նենգողացն դիւրաւ հասա-
նել նմա. զի առժամայն զնա յափշտակել կամէին.
և զայս ըստ ինքեանց։ Սոքա բերիացիքս մեծ իրս գոր-
ծեցին և հանդերձ նոսաւ վճարեցին և ուղղեցին։

ԵԹԷ. Արդ եհաս մինչև 'ի ծովեզրն տեղի տալով. քայլ
արդեալ զնա Հոգին Սրբ 'ի քարոզելոյ. զի գուցէ սպա-

1 Յերկոսին օրինական այնուհետեւ գրամաբեր։

նանիցեն զնա։ «Եւ որք տանէին զՊաւղոս, ածին զնա մինչև ՅԱԹԷՆՍ. և առեալ 'ի Պաւղոսէ պատուէր առ Շիղա և Տիմոթէոս, զի վաղվաղակի եկեսցեն առ նա ՅԱԹԷՆՍ. և նոքա գնացին առ նա իբրև ընկալան զպատուէրն»։

ՑՈՐԴՈՐԱԿ

Հայեաց և տես յասացելոցս թէ որքան սիրով աշակերտքն հոգային զվարդապետէն և փութային զերծուցանել զնա և ապրեցուցանել։ Ա՛յլ այժմ՝ ոչ այսպէս. այլ Ռեղքեալք 'ի միմեանց, մեծքն չփանան և փոքունքն նախանձին։ Արդ մի այսպէս. այլ փութասցուք 'ի սէր միաբանութեան, զի վայելեսցուք օգնականութիւն միմեանց 'ի հոգևոր իրս և 'ի մարմնաւոր։ Զի վասն այսորիկ և աղօթեմք վասն ամենայն աշխարհի խաղաղութեան և վասն առաջնորդաց. զի մեծ է զօրութիւն միաբանութեան որպէս յայտ է յօրինակէ մարմնոյ. զի անդամքն զմիմեանց հոգալով՝ ամենայն ինչ ըստ պատշաճի կազմի։ Ա՛յլ 'ի չար միաբանութենէն փախիցուք և բարւոյն հաղորդեսցուք։

ՃԱՌ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՍԿ. «ԵՒ ՅԱՆԹԷՆՍ 'Ի ՄՆԱԼ ՆՈՅՆ ՊԱՒԼՈՍԻ, ՁԱՅՐԱՆԱՅՐ ՀՈԳԻ ՆՈՐԱ 'Ի ՆՄԱ. ԶԻ ՏԵՍԱՆԷՐ 'Ի ԿՌԱՊԱՇՏՈՒԹԵ ԶՔԱՂԱՔՆ»։ Յիրաւի զայրանայր. զի նոքա առաւել քան զամենեսեան պատուէին զկուռսն, մինչ զի ոչ էր այլ ուրեք այնչափ կռապաշտութիւն տեսանել։ Բայց զայրանալ աստանօր ոչ զբարկանալ ինչ ասէ, և ոչ թէ կագ ինչ կռուոյ կամ վիճաբանութեան շարժէր զնոսա։ Նա և տնօրինեալ լինի 'Ի Հոգւոյն և ակամայ իսկ կալ և մնալ նմա անդանօր սպասելով աշակերտացն։ Այլ զի՞նչ է զայրացեալն լինել. այսինքն եռանդնոտ սրտիւ յարուցեալ իմն և 'Ի նախանձ վասն փառացն Այ շարժեալ։ Քանզի 'Ի բարկութէն և 'Ի վիճմանէ[1] հեռի են հնորհքն. ոչ կարէր հանդուրժել նոցին մոլորութէն, այլ մաշէր զայն ամենայն տեսանելով։

ՆԱՁ. ԵՒ ԱՅԼԱԶԳ. Հոգին նը յերանելումն զայրանայր 'Ի Պաւղոսի. իբրև հոսանք ինչ զեղեալ յառաքելական յոգւոջն նեղէր, ոչ գտանելով յանարժանսն տեղն յառաջելոյ ինքեան։ Եւ յաղագս այնորիկ ընդ ճեմնականս և ընդ եպիկուրեանսն մարտնչէր։

ՈՍԿ. «ԵՒ ԽՕՍԷՐ 'Ի ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ ԸՆԴ ՀՐԵԱՅՍՆ ԵՒ ԸՆԴ ՊԱՇՏՕՆԵԱՅՍՆ, ԵՒ 'Ի ՀՐԱՊԱՐԱԿՍՆ ԶԱՄԵՆԱՅՆ ՕՐ ՈՐՈՅ ԵՒ ՊԱՏԱՀԷԻՆ»։ Տես դարձեալ զնա ընդ Հրեայսն և ընդ պաշտօնեայսն, որք էին եկք զրուցատրելով. զի ընդ ամենայն տեղիս Հրեայք բնակէին։ Քանզի ցրուեցան նախ քան զգալուստն Քրի, համանգամայն և օրինացն լուծանելով։ Արդ ամենեցուն քարոզէր Պաւղոս, միանգամայն ուսուցանելով մարդկան ըզբարեպաշտութիւն։ Այլ աքանչելի է թէ զի՞ ոչ ծիծա-

[1] Միան 'Ի գ՝ գ՝՝՝

զեցան զնովաւ իմաստասէրքն վաղվաղակի, ընդ ան-
արգանին ընդ նուազունսն խօսելով նորա։ Քան-
զի հեռի էր այն վարդապետութիւն յիմաստասի-
րութենէն, ոչ և մի ինչ ունելով բարձրաւզութի և
հպարտութիւն. բայց ոչ իմանային զասացեալսն 'ի
Պաւղոսէ։ Զի որպէս արդեօք իմանալ կարէին ուր
ստոյիկեանք զմարմինս ասէին ած՝ և եպիկուրեանք
երանութի զհեշտութի համարէին. ուստի և ոչ կա-
բային 'ի բարձրագոյնսն և 'ի մեծամեծսն ելանել, ա-
մենևին տկարք գոլով 'ի հաւատս. բայց միայն վկայ-
ութի ընկալան 'ի Պաւղոսէ իւրեանց պատահարացն
և անազատութենէն։

«Ամանք յեպիկուրեանցն և 'ի ստոյիկեանց փիլիսո-
փայիցն հակառակէին ընդ նմա, և ոմանք ասէին՝ զինչ
կամիցի սերմնաբաղս այս խօսել. իսկ այլք, թէ օ-
տարոտի իմն դից Թուի պատմիչ լինել. քանզի զՅն և
զյարութիւն աւետարանէր»։ Արդ քանզի աթենացիքն
ոչ ևս իւրեանց օրինաւքն լինէին վարեալ, զի և նոքա
ստորանկեալ եղեն ընդ հռովմայեցւովքն. ուստի կա-
մեցան բանս ապստամբութի արկանել 'ի վերայ Պաւ-
ղոսի. քանզի զայլ իրս տեսանէին զի խօսէր նա, և
կարծէաք առ նա վարանէին, և անդէն վաղվաղակի
'ի նախատինս արկանէին՝ սերմնաբաղ զնա կոչելով.
քանզի ընդաւոր մարդ ոչ ընդունի զվարդապետութի
հոգւոյն ՅՍ, զի յիմարութի է նմա։ Ուստի և ասէ-
ին. «Օտարոտի իմն դից Թուի պատմիչ լինել»։ Դիս
զաստուածսն կոչէին. քանզի էր իսկ քաղաքն նոցա
լի պատկերօքս և կռովք դիւաց։ Քանզի զՅն և զյա-
րութիւն աւետարանէր, նոքա և զյարութիւն աստու-
ած ոմն գոլ կարծէին. իբրու սովորեալք արուս ոմա-
նս աստուածս և էգս աստուածուհիս պաշտել։

«Այս առեալ զնա ածին յԱրիսպագոսն և ասէին.
կարասցո՞ւք իմանալ թէ զինչ է նոր վարդապետու-
թիդ՝ որ 'ի քէն պատմի. օտարացուցիչս իմն բերես 'ի
լսելիս մեր. կամիմք գիտել՝ թէ զինչ կամիցի այս լի-
նել»։ Արդ ածին զնա յԱրիսպագոսն երկեցուցանել
կամելով. և ոչ որպէս զի իմասցին միայն զբանսն, այլ
զի և տանջեսցին ևս. զի անդանօր զսպանանելոց
դատակնիքն սովոր էին քննել։ Տես արդ, զի և ուսա-

նելոյն յուսոնն յամենայնի զնորաձևութիւն ամբաս-
տանելին։ Եւ քանզի խօսողաց և բանիբուն արանց էր
քաղաքն Նոցա, ասէ. «Աթենացիքն ամենեքեան և
եկեղն օտարք ոչ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ
կամ լսել նորագոյնս»։ Աստանօր զայն ինչ նշանակէ՝
թէ ամենևին յայն իսկ պարապեալ էին հանապազ
'ի խօսս և 'ի լուր. սակայն զայնսոսիկ օտարոտիս գոլով
կարծէին, զոր ոչ երբէք էին լուեալ։

«Այսպէս Պաւղոս 'ի մէջ Արիսպագոսի և ասէ. արքա-
թենացիք, ըստ ամենայնի իբրև պաշտօնասէրս տեսա-
նեմ զձեզ»։ Հայեաց աստ զբարձրացեալ Հոգին Պաւ-
ղոսի զիարդ հորդէ ճանապարհ բանին, և զիարդ ի-
ջանէ ըստ Նոցա, իբրև ներբողելով ինն զնոսա թուի։
Բայց ոչ իբր փաղաքշական կամ սուտակասպասս. այլ
թէ առ դիցն պաշտօն երկիւղածագոյն տեսանեմ
զձեզ, այսինքն բարեբնկալք և յօժարք։ Այպա 'ի բաղ-
նէն առեալ պատճառ՝ բարբառերգայնիւ 'ի մէջ Նոցա.
«Քանզի շրջեալ ասէ, և տեսեալ զպաշտամունս ձեր՝
գտի բագին մի, յորում գրեալ էր՝ անծանօթի ՅՈ.
զոր դուք յանծանօթս պաշտէք, ես զնոյն պատմեմ
ձեզ»։

Օ ինչ է անծանօթի ՅՈ. քանզի աթենացիք ըստ
ժամանակս ժամանակս բազում աստուածս ընկալեալ
եղեն և 'ի բացարձակ սահմանաց և 'ի գերագոյն դը-
բից, որպէս և զտաճարն Աթենայ և զայլս այլ ուս-
տեք։ Այպա երկուցեալ թէ գուցէ երբէք այլ ոմն իցէ՝
որ Նոցա ոչ է ծանօթ, և այլք այլ ուրեք պաշտեին, յա-
զագս յոլովագոյն թերևս զգուշութիւն և նմա բագին
կանգնեցին. և քանզի աստուածն ոչ էր յայտնի, մա-
կագրեալ եղև 'ի Նոցանէ՝ անծանօթի ՅՈ։ Ինտի առ-
նու սկիզբն և պատճառ Պաւղոս և ասէ՝ թէ զայն
իսկ պարտ է գոլ Ցոի, և մանաւանդ ամենեցունց ա-
մենակալ ՅՈ. զնա ես պատմեմ ձեզ, ասէ։ Տես թէ
որպէս ցուցանէ Նոցա նախ ընկալեալ զնա. և ոչ ինչ
օտար կամ նորաձև ձեզ մատուցանեմ, ասէ։ Քանզի
'ի վերս և 'ի խոնարհ զայս ինչ ասէին՝ թէ օտարոտի
ինն պատմէ, և թէ զինչ է նորաձևդ այդ վարդապե-
տութիւն զոր արկանես 'ի լսելիս մեր, ահա վարդապա-
կի զկասկած մտաց Նոցա 'ի բաց խլէ, զՅԾ կարդա-

լովարարիչ ամենայնի. 'ի ձեռն որոյ կործանեաց զամ իրս իմաստասիրացն։

«Գ. Ծ, ասէ, որ արար զաշխարհս և զամ որ 'ի նմա, նա երկնից և երկրի տէր է»։ Քանզի եպիկուրեանքն ինքնին ասէին լեալ զարարածս, և յանհատից 'ի հիւղէ զմարդն. իսկ ստոյիկեանքն մարմին և հուր ասացին ամենայնի պատճառ, յորոց և զոգիս մարդկան. իսկ սա ցուցանէ՝ թէ գործ նորա է աշխարհ և որ 'ի նմա։ Տես համառօտ վարդապետութի և հաւատի։ Նա և զայս ևս հայեա՝ թէ զինչ էր որ նոցա օտար թուէր. թէ ՈՒԾ զաշխարհս արար. և զոր ինչ այժմ 'ի հանդիպմանէ կարգաց աշխարհի բազումք գիտեն և յիրաց եղելոց հանապազ, զայսոսիկ աթենացիքն իմաստուն համարեալքս չգիտէին, և ոչ գլխաւոր փիլիսոփայքն։ Արդ եթէ արար զաշխարհս՝ յայտ է թէ և տէր է սորա։

Տեսանէս որպիսի ինչ ասաց ՈՒԾուԹեն՝ ծանօԹուԹի. զգոյացուցանելն յոչէից զամենայն, որ և Որգուոյ սեպհական ասի։ Նա և մարգարէքն յամենայնի զայսոսիկ ասէին, ՈՒ իւրական առանձինն գոլ զգոյացուցանելն. և ոչ որպէս նոքա՝ որ զայլ ոմն գոլ ասէին արարիչ, և ոչ զնոցն տէր. և նիւԹ անեղ համբաւէին աստանօր։ Հայեաց ընդ իմաստուԹիւն Պաւղոսի Թէ որպէս զիջեալ ըստ նոսա՝ առասպելաբար 'ի բազնէն սկսանելով զիւրն, և անտի այնուհետև հաստատէ զՀմարտուԹիւն, և զնոցայն զամենայն 'ի բաց բառնայ։ «Նա է, ասէ, երկնից և երկրի տէր»։ Եւ զոր աստ յաղագս Հօր՝ այլուր յաղագս Որդւոյ գտանեմք ասացեալ երկնից և երկրի տէր գոլ. զորնոքա աստուած գոլ կարծէին զերկին և զերկիր։

Յլզի մի կարծեսցեն որպէս մի 'ի բազմաց գոլ զնա, ուղղէ բանիւն զոր 'ի վերայ ածէ. «Ոչ 'ի ձեռագործ տաճարս բնակէ, ասէ, և ոչ 'ի ձեռաց մարդկան պաշտի իբր կարօտ իմիք»։ Տեսանէս Թէ որպէս ընդ փոքրում 'ի ներքս մուծանէ զիմաստասիրուԹիւն կատարեալ, և որպէս ծիծաղլի զելլենական իմաստուիքն։

ԵՓՐ. «Ոչ 'ի ձեռագործ տաճարս բնակէ» ասէ

։ Միւսն վերադարձն։

իբրև զկուռս ձուլածոյս ձեր. և զոհիւք որովք գևքն պաշտին, նա ոչ պաշտի. և յինչ ոչ է կարօտ ամենեցուն տուին։

ՈՍԿ. Այս զի Թէպէտ 'ի տաճարս բնակէ, ոչ յայնպիսիս որ 'ի մարդկանէ շինին, այլ 'ի մարդկային ոգիս։ Եւ այսու զմարմնական պաշտօնն զնա՞մ 'ի բաց երարձ, եւ զիարդ. ոչ բնակեալ էր 'ի տաճարսն որ յԵրուսաղէմ էր։ Ոչ արդեօք. այլ անտի ներգործելով զօրութիւնս՝ կարծեցաւ Հրէիցն Թէ արդ 'ի ձեռագործի բնակէ։ Իսկ սա ցուցանէ Թէ ոչ 'ի ձեռաց մարդկան պաշտի ՝ուծ, այլ յառաքինութիւն. քանզի անկարօտ գոլով նա՝ զայսոսիկ ոչ երբեք խնդրէ։ « Ոչ ուտեմ ես զմիս զուարակաց, ասէ, և ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ »։

Այս 'ի վեր հանեալ զնոսա 'ի գեանաքարշիցս՝ զևս մեծագոյնս գնէ պատասխանելով։ Ոչ է, ասէ, շատ և բաւական այս զայ իմանալ Թէ անկարօտ է, Թէպէտ մեծ և ՝ուծային է այս. բայց պարտ է հանդերձ այսու և զայս ևս գիտել. « Զի նա տայ, ասէ, ամենեցուն կեանս և շունչ և զամենայն ինչ »։ Ըստ ամենայնի երկու նշանակք են յատուկ ՝ուծութեան. ինքեան ոչ և միոյ իրիք կարօտանալն, և ամենեցուն զամենայն ինչ շնորհէ։ Արդ ած աստանօր զՊղատոն՝ որչափ յաղագս ՝այ իմաստասիրեաց, որչափ Եպիկուրոս. և ամենայն շաղփաղփութիւն է առ այսորիկ. « Նա տայ, ասէ, շունչ և կեանք »։ Ահաւասիկ և հոգւոյ գոյացուցիչ ասէ զնա և ոչ ծնող։

Դարձեալ հայեաց Թէ որպէս 'ի բաց բառնայ յաղագս նիւթոյ ՝ուառս. « Արար, ասէ, 'ի միոջէ արեանէ զամենայն ազգս մարդկան բնակեալ 'ի վերայ երեսաց ամենայն երկրի »։ Արդ այսոքիկ յոյժ լաւագոյն և մեծք են առ 'ի գիտել քան զնոցայն, և որչափ ըստորոգութիւն արարին նոքա անհասիցն և նիւթոյն։ Իսկ սա ցուցանէ Թէ ոչ է մասնական տէրութիւնոքա, և ոչ հոգի մարդոյ 'ի նոքին բնութիւն է. այլ որպէս ամենեցուն, նոյնպէս և սոքա էացուցիչ է։ Եւ ինքն ոչ մարմին է և ոչ մարմնաւոր բնութիւն կարօտանայ. այլ 'ի սուրբ միտս և 'ի պատշաճ իմաստութիւն հանդէր. և ոչ յառաստղելաբանեալ մասնական դիրքն, ոմն հրոյ

համբաւեալ և ոմն ջրոյ և միւսն այլոյ վերատեսուչք. այլ ամենայնի ինքն է, ասէ, արարիչ։

Լսիր իբրև զմարդոյ խօսեցաւ, թէ զոր դուք յանծանօթս պաշտէք. ապա եցոյց՝ թէ ոչ 'ի տեղւոջէ բընակէ. և յայնժամ ասաց՝ բայ ՅԱԾ է. և յայտ ասաղ է, զի զամենայն արար. իսկ որ ոչ արար զամենայն, և ոչ ՅԱԾ է։ «Զի աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն 'ի ներքոյ երկնից»։ Յայժ մեծագոյն աւանդութիւս 'ի ներքս մուծանէ, թէպէտ և մանաւանդ զայլ բարձրագոյնսն ոչ ասաց, քանզի որպէս տակաւին ընդ մանկունսն խօսէր ընդ կարծեալ իմաստունսն. նա և այսոքիկ յոյժ մեծագոյն էին առ այնոսիկ զոր նոքայն գիտէին։

Զդ զարարչութիւն, զտէրութիւն, զանկարօտութիւն, զպատճառն ամենայն բարութեաց յայտնի արարեր. իսկ առ մեզ զիարդ ապա բնակէ ՅԱԾ։ Ալլ չէ, ասէ, ժամանակ։ Ալլ հայեաց ընդ աքանչելի բարերարութիւն. 'ի միոյ արենէ, ասէ. այսինքն 'ի միոջէ առնէ այսչափ անհամար բիւրս մարդկան ընդ տիեզերս առնելով և արարեալ ինքն զնոյնս շարունակէ, տուեալ շունչ և կեանս ամենեցուն։ Ապա և զայսոսիկ ցուցանէ՝ թէ Ճանաչէին զնա ոչ դժուարին էր և ծանր. զի և ոչ իսկ էր հարկ շրջել և խնդրել զաստուած, այլ ըստ սահմանադրութեան էիցս 'ի նմանէ դիւրին էր այս։

«Ի հաստատեաց, ասէ, կարգեալ ժամանակս և սահմանադրութիս բնակութեանցս խնդրել զՅԱԾ, զի թերևս զննիցեն զնա և գտանիցեն»։ Զայս ինչ կամի յայտնել ասացելովքս՝ եթէ սահմանեաց ՅԱԾ խնդրել զինքն. բայց ոչ հանապազ և յամենայն ժամ զայս սահմանեաց, այլ առ կարգեալ ժամանակս. ցուցեալ այսու՝ թէ այժմիկ ոչ խնդրելով գտին, այլ յիմարեցան։ Իսկ նա էր յայտնի և որպէս 'ի միջի ամենեցուն կալով առ 'ի զննել զնա և շօշափել. նա զի և թէ կոյրք էին, կարէին շօշափել. զի ոչ թէ սմա էր յայտնի և նմա ոչ, կամ աստ երևէր և այլուր ոչ, կամ յոյսմ ժամանակի էր և յայլում ոչ. զի ըստ ամենայն ժամանակս և ըստ ամենայն սահմանադրութիս յայտնի էր. զի ոչ տեղեաւ փակի և ոչ

ժամանակաւ. այսպէս մնօրինեաց լինել և զարա-
բածս։

ԵՓՐ. Ի՝ անդի սոքա իսկ մանաւանդ ընձեռէին մարդ-
կան զգիտութիւն, յամենայն տեղւոջ գոլն երկնից զար-
դուն իւրով, յամենայն ժամանակի հաստատուն կալ
երկրի։ Եւ զի մեկնեաց զժամանակս ամարայնոյ և
ձմերայնոյ, և կարգեաց սահմանս ծովու և ցամաքի
և որդւոցն Նոյի, զի խնդրեսցեն յայտնեաւքս զծա-
ծուին. այն որ նա ինքն է պատճառ ամենայնի։

ՈՍԿ. «Ի՝ այս և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեք
'ի մէջն. զի նովաւ կեամք և շարժիմք և եմք»։
Տես դարձեալ՝ այր արժանի զոր ասէ՝ թէ ոչ միայն ըզ-
կեանս ետ և զշունչ և զամենայն ինչ, այլ և զգլուխն
ամենայն բարութեաց. այսինքն զի 'ի գիտութիւն ին-
քեան էած զմարդիկ տալով զայսոսիկ, 'ի ձեռն որոց
կարէիք գտանել զնա և հասանել բարւոյն, այլ ոչ
կամեցարուք խնդրել. և մանաւանդ հուպ գոլով նո-
րա և ոչ հեռի և ոչ 'ի միոջէ ումեքէ 'ի մէջն։ Բաբէ,
ամենեցուն հուպ է որ ընդ ամենայն տեղիս տիեզե-
րաց. զինչ իցէ քան զայս մեծագոյն։ Տես որպէս 'ի
բաց բառնայ զմանանականսն։ Եւ զի՝ ասեմ թէ ոչ հե-
ռի է, ասէ. զի այսպէս հուպ է, որպէս զի առանց
նորա ոչ է հնար կեալ ումեք. «Զի նովաւ, ասէ, կեամք
և շարժիմք և եմք»։ Որպէս առ մարմնաւոր յարա-
ցուցի է տեսանել. զի որպէս անգայտութիւն օդոյ յա-
մենայն տեղւոջ հեղլով և ոչ հեռի գոլով յումեքէ,
այլ մանաւանդ ներքոյ և վերոյ մեր և շուրջ և ամե-
նայն ուրեք, առանց որոյ անհնար է կեալ շնչաւորի,
նոյնպէս և զայ ասէ։ Տես որպէս զնախախնամութիւն
նորա ասէ և զամենակալ շարունակութիւն, զգոլն ա-
մենայնի առ 'ի նմանէ, զներգործէն, զոչ կորուսա-
նէն։ Եւ ոչ ասաց 'ի ձեռն նորա կեամք, այլ որ առա-
ւել հուպ էր՝ նովաւ, ասէ։

«Որպէս ոմանք և 'ի ձերոց Ճարտարացն ասացին՝
թէ նորա և ազգ իսկ եմք»։ Զայս իսկ Թեմիստիանոս
և Արիստոս քերթողք ասացին։ Արդ ոչ առ 'ի հաւա-
սարութիւն բնութեանն այ և մարդկան ասաց զանս քեր-
թողացն՝ թէ նորա ազգ եմք. զի նոքա զայս բան

[1] Միւսն «էրիոն» այն։

զՔրիստոս ասացին, իսկ սա յաղագս Հիմարիտ գոյացուցչին առնու. ոչ զնոցն զնոցայն ըստ նոցա ասելով. քաւ լիցի· այլ որ ինչ իսկապէս յաղագս ՅԻ ասել վայելէր՝ առնու զբանս նոցա։ Քանզի և բագինն նմա ասաց, բայց ոչ հանգոյն այնոցիկ զոր նոքայն պաշտէին. զի բազում ինչ նախ ասէին և գործէին, ոմանք վասն ՅԻ, թէպէտ և ոչ գիտէին թէ վասն այր էր։ Զի ասա ինձ, յաղագս որ ուրուք ասէին և գործէին իսկապէս անծանօթի ՅԻ։ յաղագս գոյացուցչին արարածոց, թէ յաղագս գիւին. յայտ է թէ յաղագս գոյացուցչին. զոր և առնու իսկ զդիր բագնին և ուղղէ զմոլորեալ կարծիս նոցա. զի զՅԻ ոչ Հանաչէին, բայց զգիւացն զՀետ երթային և գիտէին։ Արդ ասէ՝ թէ ամենայն լի է Աստուծովն և ոչ Զեւսով պղծով ումեմն մարդով և թքալից եղելով և կախարդով։

Լսուցայն՝ թէ նմա և ազգ եմք, ոչ նմանապէս ըստ նոցին կարծեաց ասաց Պաւղոս. քաւ լիցի· այլ այլովք մտօք։ Զի ազգ դոլ ՅԻ զմեզ ասաց, այսինքն նովաւ եղեալք և խնամեալք և ընտանիք գոլով և հուպք առ նմա, իբրև թէ մատակայք և դրացիք։ Նա և զայսոսիկ ասէ զքերթողացն բանս. զի մի դարձեալ ասիցեն՝ թէ օտարոտիս մուծանես 'ի լսելիս մեր։ Եւ այսպէս ոչ ընդ նոսա ինչ հակառակի, այլ առ 'ի նոցունց եղելոյ բաղնէն և յասացելոյն զապացոյցն տուեալ 'ի վերայ ածէ. «Եւ արդ որովհետև ազգ եմք ՅԻ, ոչ պարտիմք համարել ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի, որ 'ի Հարտարութէ և 'ի մտաց մարդոյ քանդակեալ իցէ, զՅԻ ակամն լինել նմանող»։ Ահաւասիկ ածէ 'ի մէջ զարարիչն։ և ոչ ասէ՝ թէ մեզ ոչ է պարտ համարել ոսկւոյ կամ արծաթոյ մեաց ելոյ գոլ զՅԻ նման՝ որ չէ նման, այլ պիղծ և ամենապիղծ. այլ որ ինչ խոնարհագոյն էր, զայն ասէ՝ թէ մեզ ոչ էր պարտ կարծել այսպէս։ ոչ պարտիմք համարել ասէ. քանզի յոյժ գերագոյն և 'ի վեր քան զայսոսիկ է ՅԻ։ Իսկ այսոքիկ ժամանակաւորք են և մարմնք, որոց չէ պարտ ասել զՅԻ նման. զի ո՞ որ իցէ մարմին և ժամանակ և որք 'ի ժամանակի, ասա ինձ։ Տեսանես թէ որպէս զանմարմին բնութիւն

'ի ներքս եմք։ քանզի մարդկեղէն տրամախոհութիւն յորժամ 'ի կարծիս մտանէ, մարմին և միջոց ժամանակի զմտաւ ածէ։ Արդ ոչ պարտիմք, ասէ, որոց 'ի մարդկեղէն մտաց քանդակեալ իցէ, զաստուածայնն զոլ համարել նմանող։

Արդ թերևս ասիցէ ոք։ ոչ այսպիսի ինչ կարծեմք, այլ առ բազում յոյժ տկարսն էն բանք սորա։ քանզի թէ եմք նման այ մեք, ըստ հոգւոյ միայն և ոչ ըստ մարմնոյ։ իսկ զգալեացս ոչ եմք նման ըստ հոգւոյ մեք, ապա յոյժ մանաւանդ և ոչ ածէ։ Բայց ոչ ասէ զայս, այլ առաջամայն 'ի թանձրամտութենէն 'ի բաց տանի զնոսա։ Նա և ոչ ընդ այլ իրիք մարդկային մտածութիւն արկեալ լինի, ասէ։ զի զոր արուեստ կամ մտածութիւն եգիտ, զիարդ այն ինչ ածէ իցէ։ իսկ եթէ այնք աստուածն էն, ապա և 'ի քարի գոյացութիւն այ իցէ։ ոմ անտեղութիւն։ Բայց տես և զմեղադրութիւն։ զի նուազ կեցեալ լինիմք, ասէ, և ոչ գտանեմք զնա։ Այս կրկին է ամբաստանութիւն։ զի զնա զանշարմարիտն զայսմանէն ոչ գտին, և զայսպիսի սուտս գրէին։ որ ոչ այնմիկ զոր կարծեցին՝ տրամախոհութիւն նոցա ճշմարիտ է ըստ իրին։

Եւ քանզի սասանեցոյց զհոգիս նոցա, ցուցեալ՝ զի պատասխանի անգամ ոչ ունէին, դառնայ ցուցանել՝ թէ զինչ դարձեալ այժմ իցէ խնդրելի։ « Բայց զժամանակս անգիտութենէն անտես արարեալ այ, արդ զայս պատուիրէ մարդկան՝ ամենայն ումեք ապաշխարել։» Ապա զիարդ ոչ և մի ոք տանջեալ լինի յոչ կամողացն զղջանալ։ Արդ զայս ոչ յաղագս անցեալոցն կամ այժմու յանդգնելոցս ասէ, այլ բարեհաւանիցն։ յաղագս որոյ պատուէր տայ, ասէ, և ոչ պահանջէ 'ի ձէնջ դատաստան։ Ոչ ասաց թէ ոչ ետես և ոչ ասաց թէ թողացոյց։ այլ զանգիտութենէն մոլորուածն՝ որ հաճոյ եղև աշխարհի խոտորել յայ, անտես արար, ասէ։ այսինքն ոչ կամեցաւ ստիպել և նեղել ինչ զնոսա, և ոչ պահանջեաց դատաստանս իբրու յարժանեաց գոլով տանջանաց։ Անգիտացայք, ասէ, և ոչ կամաւ չար գործեցէք։ Բայց 'ի ձեռն վերագոյն ասացելոցն յայտ արար եթէ կամաւ գործեցէք։ Արդ պատուիրէ, ասէ, ամենայն ումեք ընդ ամենայն տեղիս

զղջանալ։ Ամենայն ումեք ընդ հանուր ասելովս՝ 'ի բաց տանի զմասնական կարծիս յաղագս ոչ. որպէս հեթանոսք զոմն հրոյ արարիչ ասեն 'ի դիցն, և զայլ ոմն երկնի. այլ ոչ ծած բոլորից է տեր, ասէ։

«Բանզի հաստատեաց օր՝ յորում պարտ է դատել զաշխարհս արդարութիւն 'ի ձեռն առնն, որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն, յարուցեալ զնա 'ի մեռելոց»։ Նախ զահագին օրէնս յիշէ և զարդար դատաստանէն, և այսու երկեցուցանէ զնոսա և շարժէ ահիւ զտրամախտութիւնս նոցա։ Եւ ապա զչարչարանսն Քրիստոսի յայտ առնէ, և յայնժամ 'ի վերայ ածէ զյարութիւն նորա 'ի Հօրէ. զի յայնմանէ և հանդերձելոցն հաւատացեն լինել ամենեցուն յարութիւն։ Եւ ընդ որ հակառակէին և դժուարէին ընդ յարութիւն, հաստատուն ցուցանէ գոլ։ Զի թէ ճշմարիտ է ասացեալն դատաստան, յայտ 'ի յարութիւնն է. զի ընդ նմին ընդ յարութիւնն ամենայն կազմեալ լինի իբրև դատաստանին։ Եւ զի զամենայն ճշմարտութիւն ասաց Քրիստոս, յայտ է յորմէ յարեաւ, զի 'ի ձեռն նորա Հայր դատելոց է աշխարհ. յայտ է որով սահմանեաց նովաւ տալ հաւատս ամենեցուն. որ և կամքք Հօր չարչարեցաւ և յարեաւ։ Այլ զի իբրև զմարդոյ զՔրիստոս խօսի, և այս մեծ իմն հանճարով, զի ըստ տկարութեան ընդունողացն կշռէ զբանն։ Արդ զի ամենեցուն հնարհեաց հաւատս, 'ի յառնելոյ նորա 'ի մեռելոց յայտ է։ Այլ տես զի և դատաւոր զնա 'ի ներքս մուծանէ, զի ճշմարտապէս դատել պարտ է. զի թէ ոչ յարեաւ Քրիստոս, ոչ լինիմք դատեալ. ապա թէ յարեաւ, ստուգապէս դատելոցք եմք. զի վասն այնորիկ մեռաւ և յարեաւ 'ի մեռելոց, զի կենդանեաց և մեռելոց տիրեսցէ։

Արդ պատուիրէ ամենեցուն զղջանալ. զի՛ ամենեքեան կալցուք եմք առաջի բեմին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր ոք իւրով մարմնոյն զոր ինչ գործեաց եթէ բարի և եթէ չար։ Զի ահաւասիկ և յաղագս ամենեցուն յարութիւն բան 'ի ներքս եմոյծ. զի ոչ այլ ազգ դատեալ լինի զտիեզերս։ Իսկ յարուցեալ զնա 'ի մեռելոց՝ յաղագս մարմնոյն ասէ, զոր և այր իսկ կոչէ. զի նա մեռաւ և եղաւ 'ի գերեզմանի։ Եւ

քանզի առ Եղենայիսն, որպէս արարչութեն և յոչ
էից զաշխարհս գոյացուցանելոյն իրք, նոյնպէս և դա-
տաստանին բան մանկանց գիւտք են և խաղ, և ար-
բեցութիւն ցնորեալ մարդկան։

ՑՈՐԴՈՐԱԿ

Լ. Յլ և մեք լուիցուք զասացեալս թէ պատուիրեա
ՀԾ ամենեցուն զղջանալ. և զոր ինչ յանգէտ աթենա-
ցւոցն պահանջեաց, առաւել ևս մեք որ յաղագս այսո-
ցիկ ստուգապէս գիտեմք, գործեսցուք զայն ինչ, որ
մեզ օգտակար է։ Ընտանասցուք ՀՅ, և մի կացցուք
ընդ նմա թշնամութիւն. այլ հաստատեսցուք 'ի սէր
նորա։ Եւ թէ որպէս ուղղեսցուք առ նա զսէրն, այս
է օրինակն և արուեստ, որով մարթասցուք ուղղել
զսէրն։ Զի հանապազ զմտաւ ածցուք ընդ հասարա-
կաց բարեգործութիւնն և զայն ինչ զոր մեզ յատուկ
իւրաքանչիւր ուրուք բարեգործեաց, թէ քանիցս
անգամ 'ի դժնդակ պատահարաց և 'ի հիւանդու-
թեց և 'ի մահու կասկածելի վչտաց եհան։ Ցիշես-
ցուք թէ զինչ և քանիս մեղաքնամ, և 'ի նմանէ քա-
նիս բարեգործեցաք. և սիրեսցուք զնա, ոչ միայն
վասն բարեգործելոյն, այլև վասն ներողերկայնմտու-
թեան. զի մի խստութիւն սրտից գանձեսցուք զբարկու-
թիւն մեզ յաւուր արդար դատողութեան ՀՅ։

ՃԱՌ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԻՍՆԵՐՈՐԴ

«Լ ԲՐԵՒ լուսան գլարութիւն մեռելոց, ոմանք ծաղր առնէին, կէսքն ասէին՝ լուիցուք 'ի քէն վասն այդոր իկ միւսանգամ. և ապա Պաւղոս եկ գնաց 'ի միջոց նոցա»։ Տես զի նախ մեծագոյն կրէր փորձութիւն. իսկ յԱթենս ոչ կրէ այնպիսի ինչ. այլ միայն մինչև ցծաղր առնել ամենայն ինչ վէճարեալ լինէր։ Իսկ առ Հրեայսն բազում էր գժուարութիւն. զի յոյժ խստագոյն էին ընդ նմա և ընդ կրօնսն թշնամեցեալք։ Արդ ընդէր արդեօք մինչ չև ևս էր հաւանեցուցեալ զնոսա, և զի բանիցն ասացելոցն 'ի նմանէ ունկնդիր եղեալք, և դարձեալ լսել նմին հանդերձեալ լինէին, և վշտաց և հալածանաց ոչ գոլով այնպէս փութացեալ լինի զԱթենս թողուլ Պաւղոս։

ԵՓՐ. Յիրաւի. քանզի աթենացիք որ մինչև ցայս վայր լուան նմա, վասն յարութեանն լսել նմա ոչ հանդուրժեցին, և յաղթահարեցան և ասացին՝ թէ վասն այդորիկ յայլում ժամու լուիցուք քեզ։

ՈՍԿ. Լու զի գիտէր թերևս, եթէ ընդ երկար կալով առ նոսա ոչ ինչ մեծ զնոսա շահեցուցանել էր հնար։ Եւ տես զնոցա թանձրամտութիւն՝ թէ որչափ մեծամեծս և թանձրագոյնս լուեալ ոչ առին 'ի միտ. այլ լսելով գլարութիւն մեռելոց խաղ առնէին. զի շընչաւոր մարդ ոչ ընդունի զիրս հոգւոյն։ Զի մանաւանդ օտար լոյց ցանկացողք գոլով՝ սակս այնր 'ի միտ ոչ առնուին, և ոչ յայն ինչ փութային. այլ որպէս զի միշտ ունիցի նորագոյն ինչ ասել, որ և 'ի բաց կալ էտ նմա 'ի նոցանէ. վասն որոյ եկ և գնաց 'ի միջոց նոցա։ Զի այս իսկ էր նոցա սովորութիւն որպէս ամբաստանէին իսկ՝ եթէ օտար դից թուի պատմիչ գոլ. որ և այն իսկ յոյժ էր տարակուսելի, զի իբրև զմի յանուանեալ դիցն համա[illegible] դ[illegible]. բայց սակայն և այնպէս հաւանեցոյց զԴիոն[illegible]ացին զգլխաւորն աթենացւոց

և զայլս յոլով, զորոց ասէ. «Եւ ոմանք արք անկեալք 'ի նա հաւատացին. ընդ որս էր և Դիոնեսիոս արիսպագացին, և կին մի անուն Դամարիս, և այլք ընդ նոսա»։ Զի թէպէտ և ամենեքեան ոչ հաւատացին, այլ ոմանք հասու լինելով քարոզութեանն և վարուցն հոգևորաց՝ վաղվաղակի ընկալան զանն, իսկ այլքն ոչ ևս, բաւական թուեցաւ Պաւղոսի արկանելն միայն անդ զսերմանիսն հաւատոյ։

«Ելեալ այսորիկ մեկնեալ Պաւղոսի յԱթենացւոց անտի՝ եկն 'ի Կորնթոս»։ Արդ 'ի Կորնթոս 'ի ձեռն Հոգւոյն ածեալ լինի, ուր զտեղի առնուլ և դադարել առ նոսա պարտ էր. քանզի բազում ժողովուրդ հաւատալոց էր անդ, զի ոչ էին զարմանդիրք որպէս ա-թենացիքն։ «Եւ եգիտ զոմն Հրեայ, անուն Ակիւղաս յազգէ պոնտացի, այն ինչ եկեալ յԻտալիայ, և Պրիսկիղա կին նորա, վասն հրամանին Կղոդեայ որոշել զամենայն Հրեայս 'ի Հռոմէ»։ Տես թէ որպէս 'ի ձեռն հալածականացն Հրէից 'ի Կղոդեայ քաջ ևս այնուհետև օրէնքն քակեալ լինէր։ Եւ զԿղոդիոս կայսր յիշէ ասա, զի ընդ յերկարումն կենացն Պաւղոսի յաւուրս նորա՝ յառաջեալ լինէր քարոզութիւն ամենայն ուրեք. իսկ զկնի նորա յաւուրս Ներոնի կատարեցաւ։

Արդ յայնմհետէ 'ի հրամանէն Կղոդեայ բորբոքեալ լինէր առ Հրեայսն պատերազմ վասն յամառութեան իւրեանց. և 'ի Հռոմայ իբրև վնասապարտք և արժանիք հարուածոց և դատապարտութեան արտաքսեալ լինէին, և զի ողջախոհացին և զողջացին 'ի չարեաց իւրեանց։ Թերևս վասն այնորիկ մնօրինեալ լինի 'ի Հոգւոյն, զի զՊաւղոս իբրև զկալանաւոր կապանօք տարցին անդ՝ ամբաստանեալ 'ի Հրէից, զի մի իբրև հրեայ անդուստ հալածեսցի, այլ որպէս օտարացեալ 'ի Հրէից. և ընդ կարգաւ դատաստանի գործառնութեան ունելով անդանօր պահեալ լիցի։

«Եւ իբրև եկն 'ի Կորնթոս, եգիտ, ասէ, զոմն Ակիւղաս պոնտացի յազգէ. և յարեցաւ 'ի նոսա։ Եւ վասն զի համարուեստ էր, եղև առ նոսա և գործէր. քանզի էին խորանակարք արուեստիւ»։ Արդ պոնտացի գոլով սա, ոչ յԵրուսաղէմ և ոչ մերձ 'ի նա փութայ գալ, այլ հեռագոյն ընտրէր բնակել։ Ար-

սմա ագանի Պաւղոս. և հանապազորդեալ յամէլով անդ՝ ոչ ամաչէր։ Բարէ որպիսի արժանս և իրաւունս առնոսա եգիտ յարակցելով առ նոսա։ Վայելչապէս. քանզի պարտ էր գործել, որպէս զի անդանօր 'ի կո-ընթոս առաւել պարտ էր նմա ոչ առնուլ ինչ վասն սուտ առաքելոցն. որպէս ասաց թղթելով առ նոսա՝ թէ «Յորում պարծին, և նոքա իբրև զմեզ գտանի-ցին». և թէ «Ոչ արգելցին պարծանքս իմ'ի կողմանս աքայեցւոց». և թէ «Ոչ 'ի գործ ինչ արկաք զիշխա-նութիս զայս»։ Ըստ որում անօրինեալ եղև, զի ան-դանօր յարեսցի 'ի նոսա իբրև 'ի Ճահ պատրաստ գո-լով զօթևանն, և ընտիր առ գործակցութիւն. զի քան զարքունական ապարանսն այն յոյժ նմա 'ի Ճահ և վայ-ելուչ էր։ Եւ գու ով սիրելի, մի ծաղր համարեսցիս զայնպիսի խոնարհութիս. զի որպէս մրցականին մայ-տանն գիւր 'ի դէպ է, և հիւանդի կակղագոյնքն 'ի դեղոց, և պատերազմողի սուսերն երկաթի և ոչ սա-կի, նոյնպէս և այն նմա։

«Եւ խօսէր 'ի ժողովրդեանն ըստ ամենայն շաբա-թուց, և հաւանեցուցանէր զՀրեայսն և զհեթանոսս»։ Գործեալ լինէր, ասէ, քարոզելով. ամաչեցուցանէ ապա մեզ, որք և առանց քարոզելոյ դատարկութիւն կենցա-ղավարիմք։ «Իբրև իջին 'ի Մակեդոնիա Շիղաս և Տի-մոթէոս, ստիպէր Հոգւոյն Պաւղոս դնել վկայութիւն Հրէիցն թէ Յեսուս է Քրիստոս»։ Զի՞արդ Պաւղոս ոչ 'ի բաց կացեալ լինի 'ի նոցանէ բաղում ստգտանօք և եր-կիւղիւ. քանզի նախ յայտնեաց զպատճառն ասելով. «Ձեզ նախ պարտ է խօսել զբանն». ըստ որում և ամենայն ուրեք զնոյն առնէր, նախ 'ի նոցանէ սկսեալ զքարոզութիւնն։ Իսկ աստ վկայութիւն դնէր նոցա Հո-գւոյն շարժեալ, զի մի ունիցին այնուհետև ինչ պա-տասխանի. և 'ի բաց կալցին նշանակ տայր և առաւել զնոսա զկծեցուցանէր։ «Եւ յընդդէմ դառնալ նոցա և հայհոյել՝ թօթափեաց զձորձս իւր և ասէ ցնոսա. արիւն ձեր 'ի գլուխս ձեր. քաւեալ եմ ես. յայսմհետէ 'ի հեթանոսս երթամ։ Եւ գնացեալ անտի՝ ե-մուտ 'ի տուն ուրումն՝ որոյ անուն էր Տիտոս Յուստոս, պաշտօնեայ Աստուծոյ, որոյ ապարանքն էին մերձ 'ի ժողով-ետղն»։

ԵՓՐ. Լրդ յընդդէմ դառնալ նոցա, իբրև ետես թէ հրեայքն թշնամանելով թշնամանեն զնա, թողեալ զզգեստս իւր, որպէս ուսաւ 'ի տեառնէ իւրմէ և ասէ. մի եկեսցէ արիւն ձեր զկնի քարոզչացն՝ որ զոր հանապազ 'ի նեղութիս պէսպէս վշտաց զաւետարանութիւն տեառն ձերոյ աւետարանեն ձեզ։ Այլ եկեսցէ զկնի ձեր բարբառն որ ասաց՝ թէ ոչ կամեցան լսել լինձ. որպէս և դուք զի ոչ կալարուք յանձին լսել լինձ։ Արդ երթամ ես 'ի հեթանոսս, որք պատրաստեալ են ոչ մեռանել մեռաք իբրև զձեզ. այլ զի կեցցեն մեռաք, զոր դուք ոչ կամեցարուք։

ՈՍԿ. Լու 'ի բաց եկաց 'ի նոցանէ. այնուհետև մաւանդ ակն ունելով ձգել զնոսա առ ինքն։ Քանզի ընդէր իսկ ապա թողոյր զտունն յորում էր, և գայր մերձ 'ի ժողովարանն և 'ի տուն ժողովրդապետին. ոչ ապաքէն վասն այսորիկ զոր ասաց ցիս. զի և ոչ վիշաս ինչ ետես անդանօր։ Եւ քանզի նախ վկայութիւն դնէր նոցա վասն Քրիստի և ուսուցանէր, իսկ 'ի չհաւանել նոցա թօթափէր զձորձս և վկայութիւն դնէր նոցա և առաւել երկիւղ, որպէս զի ոչ բանիւ միայն՝ այլ և իրօք զնոսա զարհուրեցուսցէ. զոր և մարգարէքն առնէին յաճախ։ Նա և ուժգին խօսելով ընդ նոսա. «Ահաւասիկ ձեր 'ի գլուխս ձեր. քաւեալ եմ ես. այսուհետև 'ի հեթանոսս երթամ». այս իսկ զբազումս 'ի նոցանէ հաւանեցոյց։ Այս ուրեմն և մեք պարտապան լինիմք արանց բազմաց, եթէ ոչ հանապազ նոցա զնոցն վկայութիւն տացուք զկենացն որ առ ՅԾ։ Իսկ նա զայս ասէ որպէս և այլուր. «Այսուհետև աշխատ որք զիս մի արասցէ». երկիւղ առաւել արկանելով նոցա։ Զի ոչ այնպէս զարհուրեցուցանէր զնոսա սպառնալիք պատուհասին, որպէս այս զկիծեցուցանէր. զի և զնոսա կամէր հաւանեցուցանել. վասն որոյ և առ հեթանոսս փութացեալ լինի։

Այլ և յետ ասելոյն՝ թէ 'ի հեթանոսս երթամ, առ սոսա խօսել ոչ լինի հեղգացեալ. զի ծանիցուք թէ ոչ հրաժարելոյ աղագաւ զայն ասէր, այլ սակս յարուցանելոյ զնոսա և 'ի նախանձ յորդորելոյ։ Վասն որոյ և ոչ հեռի ուրեք, այլ 'ի տանն որ մերձէր 'ի տունն Կրիսպոսի ժողովրդապետին՝ մնանէր, որպէս զի նա-

խանձ արկցէ նմա մերձաւորութիւն։ Իսկ Տիտոս Յուստոս ասա զաշակերտէն ասէ. և վկայէ և զաւուրն նորա, առ որ մնեալ աշակերտեաց զժողովրդապետն. որպէս ասէ. «Կրիսպոս ժողովրդապետն հաւատաց 'ի տէր ամենայն տամբ իւրով. և բազմաց 'ի կորնթացւոցն լուեալ հաւատային 'ի տէր և մկրտէին»։ Տես անդէն վաղվաղակի զժողովրդապետն Հրէից հաւատեալ ամենայն տամբ իւրով. և այս իսկ բաւական էր 'ի փոյթ վասն Հրէիցն ածել զՊաւղոս. զի ահա յետ ասելոյն թէ յայսմհետէ 'ի հեթանոսս երթամ, աշակերտեաց զժողովրդապետն։

ԵԹԷ. Զքո թէպէտ և 'ի Հրէից մի ոմն միայն 'ի ծերոց ժողովրդեան հաւատաց, այլ հեթանոսք կորնթացիք միանգամայն ժողովուրդ բազում մկրտեալ լինէին։

ՈՍԿ. Իսկ Կրիսպոսոս այս է, վասն որոյ գրէ. «Ոչ զոք 'ի ձէնջ մկրտեցի, բայց միայն զԿրիսպոսոս»։ Սա ինձ թուի երկանուն գոլ, որ և Սոսթենէս կոչեցեալ լինէր, այր հաւատարիմ յաւետարանն. վասն որոյ և դան հարեալ լինէր 'ի Հրէիցն. որ և հանապազ մատ գոլով Պաւղոսի, զոր և եղբայր անուանէ 'ի սկիզբն նոցին թղթին։

«Այլ ասէ տէր 'ի գիշերի տեսլեամբ ցՊաւղոս. մի երկնչիր, այլ խօսեաց և մի լռեր, զի ես ընդ քեզ եմ. և ոչ ոք ընդդէմ դարձցի քեզ 'ի չարչարել զքեզ, զի ժողովուրդ բազում է իմ 'ի քաղաքիս յայսմիկ»։ Տես 'ի ձեռն որքան իր աց հաւանեցուցանէ զնա կալ 'ի տեղւոջն յերկար և խօսել զբանն անդադար՝ երևմամբն և առաւել ընտանութիւն խնամոցն. զի և ոչ մեծագոյն վիշտք 'ի վերայ նորա լինելոց է այնուհետև. և բազմութիւն հաւատալ և ժողովրդապետին՝ բաւական էր 'ի փոյթ զարթուցանել զնոսա։ Իսկ ասելոյն թէ մի երկնչիր՝ հանէ զերկիւղն 'ի մտաց նորա. զի ոչ 'ի չարչարանացն զանգիտէր, այլ 'ի հակառակութիւն Հրէիցն. զի չարչարանքն և անհաւանութիւն ոչ այնպէս տրամեցուցանէր զՊաւղոս, որպէս հակառակութիւնքն. զի այս իսկ և քան զվիշտս դժուարագոյն էր։ Վասն որոյ յայնժամ երևի նմա Քն, յորժամ հակառակ հայհոյութիւնքն եղեն. և ասէ խօսեաց և մի լռեր, զի ոչ ոք ընդդէմ դարձցի քո 'ի չարչարել զքեզ։ Զի ոչ հանա-

պաշ թողացուցանէր զնոսա կրեալ զչարչարանս, զի մի լեցին տկարագոյնք։

Այլ թէ ասիցէ ոք, թէ զիարդ յետ այսց բանից միաբան Հրեայքն հասին 'ի վերայ նորա, սակայն 'ի միտ առցէ՝ զի ոչ ինչ կարացին առնել, բայց միայն ածին զնա առ անթ հիպատն. և որ ինչ մանաւանդ ուրախ առնէր և համբառնայր զանձն նորա, զայն յետոյ ասէ ցնա տէրն՝ թէ ժողովուրդ բազում է 'ի քաղաքիս յայսմիկ. զի իբրև ոչ ոք մեղանչէ քեզ, զարգուսն աշակերտես դու ասա։

«Այս նստաւ անդ տարի մի և ամիսս վեց. և ուսուցանէր նոցա զբանն տեառն»։ Եւ իբրև յաճախեաց լինել անդ, ոչ համբերեցին Հրեայքն իբրև տեսին թէ աշակերտեաց նա զՏԵԱՌՆՈՍ։ «Եւ Գաղիոնաւ փոխանակաւ բդեշխին աքայեցւոց յարեան միաբան Հրեայքն 'ի վերայ Պաւղոսի և ածին զնա յատեանն և ասէին՝ թէ արտաքոյ օրինաց պատրէ սա զմարդիկ պաշտել զԱստուած»։ Յամենայնի հակառակելով Հրեայքն ընդ Ճշմարտութիւն, յետ տարւոյ միոյ և վեց ամսոյ միաբան 'ի վերայ հասեալ լինէին. և յորժամ ոչ կարէին օրիւօք իրաւանց վարել, բռնութեամբ վարէին. և զայն որ հանապազ օր ըստ օրէ ուսուցանէր նոցա յօրինաց անտի, զրպարտեցին առաջի հոգեմտնին և ասեն՝ թէ արտաքոյ քան զօրէնսն ուսուցանէ սա որդւոց մարդկան երկնչել յայ։ Իսկ նա ոչ ինչ անսայր նոցա. ուստի և ոչ ինչ կարօտ եղև Պաւղոս վասն այնորիկ տալ պատասխանի։

«Զի իբրև մերձ էր, ասէ, Պաւղոս բանալ զբերան իւր, ասէ Գաղիոն ցՀրեայսն. եթէ էր ինչ անիրաւութիւն, այսինքն թէ զիրաց քաղաքիս էր բուռն հարեալ Պաւղոս անիրաւութիւն, կամ խարդախութիւն չարեաց, ով Հրեայք, 'ի դէպ էր ինձ անսալ ձեզ. ապա թէ խնդիրք ինչ էն վասն բանի և անուանց և օրինաց ձերոց, տեսէք ձեզէն, զի դատաւոր այդպիսի իրաց չկամիմ լինել. և մերժեաց զնոսա յատեանէ անտի»։ Տես թէ որպէս հանձարեղ էր այրն. զի ոչ ասաց վաղվաղակի թէ չէ ինձ փոյթ այդպիսի իրք, այլ թէ էր, ասէ, անիրաւութիւն բռնութիւն, ով Հրեայք, 'ի դէպ էր ինձ անսալ ձեզ։

ԵՓՐ. Այս թէ չար ինչ գործեաց ըստ օրինաց ձերոց, կամ թէ բանք անարժանք կայցեն 'ի վարդապետութենէ դորա, կամ թէ զոր ինչ դուք ասէք՝ դա ոչ առնու ձեզ յանձն, կամ թէ արատ ինչ ունիցիք դուք վասն վարդապետութեան դորա կամ 'ի վերայ առնուանց և օրինաց ձերոց, այսինքն վասն արքային Քրիստոսի որ գրեալ է յօրէնսն, զայն դուք գիտէք որ ինչ 'ի միջի ձերում է ձեզոյն առանձինն։ Բայց ես ոչ առաքեցայ դատել զայնոսիկ՝ որ խափանեն զպահպանութիւն օրինացն։

ՈՍԿ. Այսու առանց պատասխարանի արար զդատաստանն, և պայծառ եղև յաղթութիւն։ Եւ այս իսկ մանաւանդ բարձրացոյց հպարտութիւն զկորնթացիսն և անհաւանս արար։ Զի ոչ եցոյց զինքն նոցա իրաւամբ դատաստանի իշխան, և ոչ ցածոյց զյանդգնութիւն նոցա. զի ոչ էր հաւասար դիմաբանութիւն յաղթելն և իմանալն, թէ չէր փոյթ Դաղիոնի յաղագս իրին։ Եւ առեալ ամենեցուն Յունացն զՍոսթենէս ժողովրդապետն հարկանէին առաջի ատենին. և ոչ ինչ զայնմանէ փոյթ լինէր Դաղիոնի։ Յոյնս աստանօր զայնոսիկ զՀրեայսն ասէ, որ Յունաց բարբառովն խօսէին։

ԵՓՐ. Յոյնք հաւատացեալք հարկանէին զՍոսթենէս գլուխ ժողովրդեանն։

ՈՍԿ. Ովմանութիւն. զի յետ մերժելոյ յատենէն և յամենի լինելոյ, 'ի յանդգնութենէն ոչ դադարէին։ Իսկ դատաւորին ոչ ինչ փոյթ էր զայնմանէ. թէպէտ որ լինէրն, մանաւանդ անարգանք էր նմա. բայց իբրև զանիրաւս և զյանդգնեալս թողոյր զնոսա։

ԵՓՐ. Այս զի մի իբրև տեսանիցէ հոգեմանն, ինդրիցէ վրէժ անարգանաց նորա, այսինքն զՍոսթենեայ, եղև իբրև չտեսեալ, զի առաւել ևս յաՀախեսցին հարուածք նորա։

ՈՍԿ. Այլ տես զՀեզութիւն նորա. զի գան հարեալ ոչ ինչ ասէր. այլ և իշխանութիւն ունելով ոչ ինքն զնոսա հարկանէր, զի ինքն իսկ ունէր զիշխանութիւն ժողովրդեանն։ Այլ քանզի խրատեալ լինէր 'ի ձեռն հաւատոցն, որպէս զի և դատաւորն իմանայր թէ ով որ էր հեզ կամ որքան էրնա հանդարտ. և ոչ փոքր ինչ շահ

արար աշակերտացն Դաղիոնի մօտ պատահէլն։ Ուստի յայտնի եղև սոցա հեղութիւն և նոցա յանդգնութիւն. զի յատեան ածելովն յայտ արարին, թէ դատաւորաւ կան հրամանի կարօտանան այնպիսի իրողութիւնք։ Եւ թէպէտ նա այնպիսի վէճիւ էտ, զի մի դաբձեալ աշխատ առնիցեն զնա՝ թէ ոչ կամիմ զայդպիսի իրս դատել, ձեզէն տեսէք, որպէս Պիղատոս՝ թէ ըստ ձերոց օրինացն դատեցարուք, իսկ նոքա ամենայնի անիրաւք գոլով իբրև արքեալք և մոլեք այնպէս՝ի չարիսն յամառեալք լինէին. զորոց արքեցութիւնն իմաստասիրական հեղութիւն տանէր Սոսթենէս։

ՑՈՐԴՈՐԱԿ

Սմին հեղութիւն և մեք նմանեսցուք երկայնամիտ լինելովաւ այնոսիկ որ հարկանեն զմեզ թշնամանօք, անյիշաչարութիւն իբրև խաղաղական օդով անխռով պահելով զնաւ խորհրդոց մերոց. զի խաւար է ցասումն և մրրիկ բարկութիւն։ Եւ որպէս նաւակոծեալքն ոչ գիտեն զոր ինչ՝ի նաւէն արտաքս ընկենուն, նոյնպէս բարկացեալքն ոչ գիտեն կալ՝ի բարեկարգութիւն։ Աղդ ստացուք պարծանս յաղթութիւն յայնպիսի մարտի անցասումն մնալով. զի ոչ անարգեալք, այլ անարգողն մնասանդ յամենեցունց պախարակի։

ՃԱՌ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ

«ԲԱՑՑ Պաւղոսի տակաւին մնացեալ աւուրս բազումս առ եղբարս։ Այսինքն՝ զի թողութեան և հարուածս ընդունելոյ Սոսթենեայ ոչ փութովմեկնի Պաւղոս 'ի նոցանէ. զի պարտ էր նմա տակաւին կալ սպասել, զի մխիթարեսցէ զնոսա և հաստատեսցէ մի ձանձրանալ 'ի նեղութիւնս։ «Եւ հրաժարէր նաւէր յԱսորիս». զի ցանկայ հասանել դարձեալ յԱսորիս։ Քանզի անդանօր հրաման առ զաշակերտեալսն կոչել քրիստոնեայս, անդանօր աւանդեալ եղև 'ի Հոգւոյն 'ի պաշտօն առաքելութեան. տուեալ նմա ըզնորհսն՝ այ ըստ որում պարտ էր զիրսն ըստ աւանդելոյն նմա անդէն վէճարել։ «Եւ ընդ նմա Պրիսկիլա և Ակիւղաս փոքրել զգլուխս 'ի Կենքրա քանզի ուխտադիր էր։ Տես յորժամ օրէնքն քակեալ եղեն, թէ որպիսի մտօք տակաւին սոքա ըմբռնեալ էին. զի այն իսկ հրեական էր, խուզել զգլուխն ըստ ուխտի։ Արդ եկն ընդ Պաւղոսի 'ի Կենքրոն 'ի նաւահանգիստն կորնթացւոց. զի անդ եղեալ էր ուխտ Ակիւղասի խուզել զհերս իւր. պարտ էր և պատարագ մատուցանել 'ի ձեռն քահանային, յոր ինչ եղև լեալ 'ի յանցանս՝ քաւել 'ի ձեռն այնորիկ։

ԵՓՐ. «Բայց իբրև եհաս յԵփեսոս, զնոսա եթող անդ և ինքն մտեալ առ ժողովուրդն խօսէր ընդ Հրեայսն. և աղաչէցին զնա բազում ժամանակս լինել անդ, և ոչ առ յանձն. այլ հրաժարեալ 'ի նոցանէ ասէ. դարձեալ շրջեցայց առ ձեզ՝այ կամաքդ»։ Արդ եկն եհաս Պաւղոս յԵփեսոս և ընդ նմա ակիւղասեանք, և խօսեցաւ 'ի ժողովրդեանն անդ. և խնդրեցին 'ի նմանէ զի մնասցէ առ նոսա, և ոչ առ յանձն ընդերկարել առ նոսա. վասն զի ուր փութացեալն էր, պարտ էր գնալ։ Սակայն ոչ պարզապար եթող զնոսա, այլ հանդերձ խոստմամբ միւսանգամ ակն ունել գալըս

տեան նորա կամքն ՝այ, Զայս ասէ, զի և զնոՅ աղաչեսցեն վասն գալոյ նորա , զի կամեսցի ։

ՈՍԿ. Լրթող նա զակիւռասեանս յԵփեսոս, յիրաւի իրրու զուսուցիչս. քանզի այնչափ ժամանակ ընդ նմա լինելով, բազում ինչ ուսեալ լինէին։ Եւ սակայն ՝ի հրեական սովորութենէն դեռ ևս ոչ լինէր զնոսա հեռացուցեալ։ Ակհաւասիկ և կին նՅ և պարկեշտ Պրիսկիլղա ուսուցիչ յաւետարանն. և քանզի ոչ կամեցաւ զնոսա ընդ իւր շրջեցուցանել , այլ թողուլ զնոսա յԵփեսոս, բայց նորա յետ այնորիկ ՝ի Կորնթոս բնակեցան։ Ակյլ և մեծամեծ իրս վկայէ զնոցանէ ՝ի բազում տեղիս , և առ հռովմայեցիսն գրելով ողջունէ զնոսա ։ Ուստի ինձ թուի, թէ յետ այնորիկ չոգան ՝ի Հռոմ իբրև թէ գաւառասիրելով զտեղին զայնոսիկ, ուստի արտաքս անկեալ եղեն յաւուրս Կղոդեայ։ Եւ որպէս ինձ թուի՝ թէ և այլ հաւատացեալքն անտի էին ՝ի Հռոմայ, և դարձեալ անդ էին ժողովեալ յաւուրս Ներոնի. զի ոչ վաղվաղակի ՝ի բաց ելեալ լինէին բնաւին ՝ի հայրենի տեղեացն ։

« Լսեալ յԵփեսեայ և իջեալ ՝ի Կեսարիա , ել և ետ ողջոյն եկեղեցւոյն յԵրուսաղէմ։ Ոչ եթէ վայրապար փութացեալ լինի զգաչն ՝ի Կեսարիա , և միւսանգամ և յայլ գաւառսն , այլ զի իւրով գալըստեամբն հաստատեսցէ զնոսա ։ «Եղջ յԱնտիոք և եղեալ անդ ժամանակ ինչ, ել շրջել կարգաւ ընդ գաղատացւոց յաշխարհն և ընդ Փռիւգիա , հաստատել զամենայն աշակերտեալսն» ։ Յայն տեղիսն հաստանէր՝ յորս նախ ժամանակաւ ինքն եկեալ էր։

« Հրեայ ոմն Ապեղէս աղեքսանդրացի յազգէ, այր Ճարտարարան , եկն Եհաս յԵփեսոս. և էր զօրաւոր գրովք» Ակհաւասիկ և բանաւորք այնուհետև փութացեալ լինէին և յաշակերտութի յօժարեալ ։ Տեսանէս զԱՀուն քարոզութեն։ « Սա էր տեղեկացեալ Ճանապարհին տեառն և եռայր հոգւով. խօսէր և ուսուցանէր Ճշմարտութիւն վասն Յեսի . գիտէր միայն զմկրտութիւն Յովհաննու . սա սկսաւ համարձակել յանուն տեառն ՝ի ժողովրդեանն. և լուեալ ՝ի նմանէ Ակիւղայ և Պրիսկիլղայ առին զնա առ իւրեանս , և Ճշմարտագոյնս պատմեցին նմա զՃանապարհն ՝այ» ։

Արդ զի՞արդ, եթէ զմկրտութիւն Յովհաննու միայն գի-
տէր նա, որպէս եռացեալ լինէր Հոգւովն. զի Հոգին այն-
պէս ոչ լինէր ոտուեալ։ Եւ եթէ որ յետնորա էին, զորոց
զկնի սորա պատմէ Ղուկաս՝ կարօտացան մկրտութենն
Քրիստոսի, յոյժ մանաւանդ և սա ևս կարօտացեալ լինէր։
Այլ զինչ պարտ է ասել. զի ոչ եթէ վայրապար եղ
զերկաքանչիւրսն ըստ կարգի, այլ զի ուսցուք զՀնամա-
բիսն։ Արդ կամ էր սա 'ի հարիւր և քսանիցն մկրը-
տելոց Հոգւովն ընդ առաքեալսն, կամ թէ ոչ այնպէս,
ասեմք՝ թէ որ ինչ եղև առ Կուռնելիոս, եղև և առ
սմա։ Բայց ինձ թուի՝ թէ ոչ ինչ գիտէր ստուգապէս
եթէ մկրտել նմա ոչ է պարտ։ Զի թէ որք 'ի Յովհաննէ
էին մկրտեալք և յետ այնորիկ դարձեալ մկրտեալ լի-
նէին, ասպա և աշակերտացն Յովհաննու ոչ էր պարտ
զնոսն առնել։ Այլ տես զնա. ստուգապէս խօսէր յա-
ղագս Քրիստի, բայց կարօտ էր այլումստուգութեանն վար-
դապետութեան։ Եւ այսպէս ոչ գիտելով զամենայն,
վասն բազում յօժարութեանն Հոգւովն սրբով որպէս
կուռնելիանքն։ Ուրեմն սմին վասն տնօրինեաց Հո-
գին Թողուլ Պաւղոսի զակիւղասեանսն Եփեսոս, որ-
պէս զի սորա 'ի նոցանէ ծանուցեալ զուղիղն, այնպէս
զօրացեալ մնցէ 'ի Կորնթոս։ Եւ տես զամենայն ինչ
նոցա հաւատով և սիրով ուղղեալ, և ոչ ուրեք մա-
խանք կամ յաղաղանք. Ակիւղաս ուսուցանէ, և մա-
նաւանդ ինքն ուսանի. խորհեցաւ Պաւղոս գնալ, և
գրով ուղարկեն։

«Իբրև կամեցաւ, ասէ, նա գնալ յԱքայիա, որ է
Ելլադա բնաշխարհն կորնթացւոց, յօժարեալ եղբարս-
ցն գրեցին առ աշակերտսն ընդունել զնա. որ իբ-
րև եհաս անդր, բազում նպաստ լինէր հաւատացե-
լոցն, քանզի պնդագոյն զՀրեայսն յանդիմանէր հրա-
պարակաւ, ցուցանելով գրովք թէ Քրիստոս է Յիսուս։ Արդ
ակիւղասեանք ստուգագոյն պատմեցին Պաւղոսի. այլ
և յորդորեցին ևս գնալ յԱքայիա, զոր և ինքն փու-
թայր. և ետուն նմա գիր վկայութեան, զի անծա-
նօթ էր այրն։ Իսկ նորա գնացեալ բազում օգուտ գոր-
ծէր. զի յոյժ հմուտ էր գիտութեամբ գրոց, որպէս վկայ-
եաց։ Եւ զի հաստատուն էր հաւատովք, և այնպէս
զգնացսն կատարէր քարոզելով. զի վասն սորա գրէ

Պաւղոս . « Ես մնկեցի , Ապողոս ջուր եւ » . զի յետ մեկնելոյն Պաւղոսի եհաս 'ի Կորնթոս . զոր և դարձեալ եղբայր իւր անուանէ ասելով . « Այլ վասն Ապողոսի եղբօր յոյժ աղաչեցի » ։ Արդ սա 'ի հանդիպի յանդիմանելով զՀրեայսն՝ զհամարձակութիւնն զիւր ցուցեալ լինէր . և համարձակութիւնն զօրութի նորա զոր ունէր 'ի գրոց՝ լինէր յայտնի . իսկ հաւաստեաւ 'ի գրոց ցուցանելոյն հմտութիւն երևիւր ի մաստութեանէ նորա ։ Քանզի ոչ համարձակութիւնն միայն ըստ ինքեան կատարէ ինչ՝ ոչ գոլով զօրութեան , և ոչ զօրութիւն վնարէ ինչ՝ ոչ գոլով համարձակուն . որով և նա յանդիմանէր զՀրեայսն , ասէ ։ Իսկ զիարդ է , զի ոչ երբէք սոցա ինչ առնէին , այլ 'ի վերայ Պաւղոսի հանապազ լինէին հասեալ ։ Ճահոդակի այս ինչ լինէր . վասն զի գիտէին զի նա էր գլուխ ամենեցուն , և զի մեծ էր անուն և գործքն Պաւղոսի ։

ԵՓՐ . Կամեցաւ Պաւղոս 'ի կամն անձին իւրոյ գընալ յԵրուսաղէմ . և դարձոյց զնա Հոգին յԱսիա , զոր և պատմէ ։ « Եղև , ասէ , մինչդեռ Ապողոսն 'ի Կորնթոս էր , Պաւղոսի շրջեալ զվերին կողմամբքն , և ինջեալ յԵփեսոս և գտեալ զոմանս յաշակերտացն՝ ասէ ցնոսա , եթէ Հոգի սուրբ ընկալարուք 'ի հաւատալն ։ Եւ նոքա ասեն . այլ և ոչ եթէ Հոգի սուրբ գուցէ՝ լուեալ է մեր ։ Եւ ասէ . իսկ յինչ մկրտեցարուք ։ Եւ նոքա ասեն . 'ի Յովհաննու մկրտութիւն ։ Եւ ասէ Պաւղոս . Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն և ասէր , զի որ գալոցն է յետ նորա , 'ի նա հաւատասցեն , այսինքն 'ի Քրիստոս ։ Իբրև լուան , մկրտեցան յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի ։ Եւ 'ի դնելն 'ի վերայ նոցա Պաւղոսի զձեռն՝ եկն Հոգին սուրբ 'ի վերայ նոցա . խօսէին լեզուս և մարգարէանային . և էին ամենն արք իբրև երկոտասան » ։

ՈՍԿ . Ալերին կողմանս զնախկին յիշեցեալսն ասէ զգաղատացեալ աշխարհն , և զորս ըստ Կեսարիայ Կապադովկիոյ և զայլսն . ընդ որս շրջեալ այնպէս եկն յԵփեսոս ։ Եւ գտեալ զոմանս յաշակերտացն՝ ոչ ասաց նոցա թէ հաւատայք 'ի Քրիստոս , այլ թէ Հոգի՞ սրբ ընկալարուք , զի գիտէր թէ չունէին . բայց կամեցաւ հարցանել ցնոսա յօրդորելով զմիտս նոցա , զի իմա-

ցեալ զիւրեանց պակասուն, զկատարեալն խնդրեսցեն։ Եւ տես, զի բազում իրօք սոքա հեռագոյն էին յԱպողոսէ, որք և ոչ գիտէին եթէ է իսկ Հոգի Սրբ. և ոչ միայն վասն Հոգւոյն չէին լուեալ, այլ և զԲա ոչ գիտէին։ Իսկ յինչ, ասէ, մկրտեցայք. 'ի Յովհաննու, ասէն, մկրտութենէն։

Արդ սոքա յԵփեսոս գոլով ուստի արդեօք ունէին զՅովհաննու մկրտութիւնն։ Թերևս գնացեալ եղեն յայնժամ յԵրուսաղէմ, յորժամ մկրտէին Յովհաննէս. որ և ստոյգ այսպիսի է։ Եւ զիարդ ապա և նոքա որպէս զԱպողոս Հոգի ոչ ունէին։ Զի ոչ էին եռացեալ այնպէս, և ոչ յօժարաբար մտադիր եղեալ գրոց ամենայնի որպէս նա։ Զիարդ և սոքա ոչ առնէին մկրտութիւն։ Ապ նորայն, ինձ թուի թէ այս իսկ է, զի բազում էր համարձակութիւն նորա։ Բայց Պաւղոս ոչ ասաց ցնոսա թէ չէ ինչ մկրտութենն Յովհաննու, այլ թէ անկատար է նա և ոչ զայս յաւել, այլ միայն ուսուցանէր՝ թէ Յովհաննէս յապաշխարութիւն մկրտեաց, զի հաւատասցեն յայն՝ որ եկն զկնի նորա Քա։ Տեսանես, զի և 'ի Քա ոչ հաւատային նոքա տակաւին. յայտ է յասելոյն՝ թէ «Ի նա որ գալոցն է յետ նորա, մկրտեսցին». վասն որոյ և մկրտեցան յանուն տեառն Յսի։

Այլ ընդէր ջրոյ պէտք էին կրկին, զի 'ի ջուր մկրտեալ էին։ Հարկաւորապէս. զի զկատարեալ խորհուրդն աւանդէր նոցա, և զօրինակն 'ի բաց բառնայր. զի այն Յովհաննու յայսպիսի բիւրապատիկ պարգևաց լոկ էր, զի ջուր միայն էր և ապաշխարութիւն. ուստի և անկատար էր, և ոչ Հոգի և մեղաց թողութիւն։ Որով և 'ի նոյն իսկ 'ի նորոգ մկրտութէն մարգարէանան. զորս և Յովհաննէս քարոզութիւն 'ի նոյն իսկ Քնին ածէ զնոսա, և ցուցանէ թէ մկրտութենն Յովհաննու զայս ուսուցանէ յասելն՝ թէ «Ես մկրտեմ զձեզ ջրով. այլ որ զկնի իմ գալոցն է, նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով և հրով»։ Եւ 'ի գնելն Պաւղոսի 'ի վերայ նոցա զձեռն, առին Հոգի սուրբ. խօսեին լեզուս և թարգմանեին յանձանց։

Բայց տես զհաւատս նոցա և զդիւրահաւան բարս, որով և յայտնապէս զՀոգին սուրբ ընկալան նման

առաքելոցն, և զնորհացն և առաւելութիւն. զի բազում նշանօք, լեզուօք և մարգարէութեամբ զՀոգին առնուին. և յայնժամ մարգարէութիւն յաՃախ տայր Հոգին։ Բայց բազումք լինէին և սուտ մարգարէք ընդդէմ Ճշմարտութեան։ Իսկ որ 'ի Հոգւոյն սրբոյ ընկալեալք էին, յոյժ երևելիք լինէին։ Ասէ զայս ասասցուք, թէ նշանք ոչ ինչ են օգուտ առ 'ի կատարուումն. զի որպէս որք ոչն տեսին զՔրիստ և հաւատացին՝ երանելիք են, նոյնպէս և որք առանց նշանաց հաւատացին. իսկ նշանախնդիրքն յանդիմանին և ասէ. «Թէ ոչ նշանս ինչ տեսանիք, ասէ, ոչ հաւատայք»։ Արդ զի զգլուխն ամենայն բարութեաց առաք մկրտութիւն, այսինքն զթողութի մեղաց, զարդարութիւն, զՀաղորդութիւն ընդ Հոգւոյն, զորդեգրութիւն, զկենաց յաւիտենականս, զինչքան զայս աւելի նշանս կամիցիմք։ Եւ զի նշանք խափանեցան, այլ ունիմք հաւատս, յոյս, սէր, որ կան և մնան։

ՅՈՐԴՈՐԱԿ

Օ այսոսիկ խնդրեսցուք, յաւէտ զսէր՝ որ մեծ է քան զամենայն. որոյ առ մեօք անուանն է մնացեալ միայն, իսկ գործ և ոչ ուրեք. այլ օգտեալք 'ի միմեանց։ Եւ մի ասիցես թէ մի եկեղեցի ունիմք և մի աւանդութիւն, և յիւրաքանչիւրում աւուր ընդ միմեանս ոչ մարտնչիմք. այլ զի ոչ սէր հարազատ և անսասանելի ունիմք, պատանաց և սպեղանեաց պէտս ունիմք։ Արդ որպէս ուղղեսցուք զսէրն։ Զբացքարձականսն սիրոյ 'ի բաց խզեսցուք. նախ զմախանս և զյաչաղանս և զայլս։ Եւ չէ այս բաւական՝ ոչ լինել ումեք թշնամի. այլ պարտ է և սիրել։ Եւ այս զիարդ ուղղի ասա. Զինչ առնէ տուփումն մարմնոյ. ոչ ապաքէն գեղեցկութի մարմնոյ. ապաքէն և հոգիս գեղեցիկս կալցուք, և իցեմք իւրեանց սիրելիք։ Զի ոչ միայն սիրել պարտ է, այլ և սիրեցեալ լինել։ Նախ զի քան զամենայն ինչ զայս ուղղեսցուք՝ զի նախ սիրեցեալք լիցուք, և այնպէս ուղղի և սիրելն և։

ՃԱԼՈՒ ՓԱՌԱՍՆԵՐՈՒԴ ԱՌԱՋՆԵՐՈՒԴ

«Այ մտեալ 'ի ժողովուրդն համարձակեր ամիսս երիս. խօսէր և ուսուցանէր վասն արքայութեան այ։ Տեսանէս, յամենայնի զանձն իւր նախ 'ի ներքոյ ժողովրդոյն Հրեից մրցեալ, և այնպէս արտաքս ելանել. քանզի ամենայնի, որպէս ասացի, նախ 'ի նոցա նէ կամի առնուլ բանի պատճառ, զի հեթանոսք նախանձեսցին և դիւրաւ զնա ընկալցին, և հեթանոսացըն ընդունելով Հրեայք զղջացեալ լիցին։ Իսկ զինչ համարձակելն իցէ. ոչ խոշորուի ինչ կամ խստութիւն, այլ զի առ վիշտն Ճակատամարտեալ՝ յայտ յանդիման լինէր բարբառեալ, ոչ թաքուցանելով զաւանդն. զի յաղագս քաղցրագոյն իրաց լինէր խօսեցեալ։ Ո՞վ որ յաղագս թագաւորութեան երկնից լսելով ոչ լինէր յօժարացեալ. սակայն անհաւան Հրեայքն ոչ. վասն որոյ ասէ. «Իբրև ոմանք խստանային և ընդդէմ դառնային բամբասել զՃանապարհն առաջի բազմութեանն, մեկնեալ 'ի նոցանէ որոշեաց զաշակերտսն. հանապազօր խօսէր 'ի դիւանին Տիւրանեայ ուրուսն»։ Ցիրաւի զբրիստոնէութիւն Ճանապարհ կոչէին. զի նա է Ճանապարհ, որ տանի յարքայութիւն երկնից։

«Մեկնեալ, ասէ, որոշեաց զաշակերտսն»։ Եհատ զարաբանութիւն նոցա, և ոչ կամէր բորբոքել զնախանձն, և ոչ 'ի հեռի յոլովագոյն արկանել։ Եւ զի պարտ էր 'ի նոցունց 'ի բաց կացուցանել զաշակերտսն, 'ի նոցանէ կամէր առնուլ սկիզբն՝ զի արժան էր ոչ ընդ նոսա ժողովել նոցա, և ոչ վայրապար առնել զայն. վասն որոյ և ստէպ թախանձեցուցանէր զնոսա փոխել յանհաւանութիւն։ Եւ զի բամբասել ասէ նոցա զՃանապարհն, յայտ առնէ զի Հրեայք ոմանք չարաչար բանիւք զրպարտէին զՊաւղոս, որոյ ոչ ինչ չար ասէր ընդդէմ նոցա չարաչար 'ի նոցունց լսելով։ Զի

աստուստ և մեք ուսցուք մի ընդդիմադրել չարաբա-
նողացն։ Եւ զի խօսէր ինքն ըստ իւրաքանչիւր ա-
ւուր, և այնու ընտանեցուցանէր զլաւումն, և չարա-
չար կրելովն ոչ 'ի բաց վազեաց 'ի նոցանէ և ոչ բա-
ժանեալ եղև։

«Հանապազ խօսէր 'ի դիւանին Տիւրանեայ»։
Տես զլաւութիւն առնն, զիարդ լինէր վերակացու և
քարոզիչ զերկեամ մի. Թերևս 'ի գլխաւորացն գո-
լով սա և իւրքն, քանզի հաւատացեալք էին և յոյժ
հաւատացեալք. վասն որոյ իբրև զմեծ արանց պատ-
մէ մեզ գնոցանէ՝ թէ հանապազ խօսէր 'ի դարպա-
սին Տիւրանեայ։ Հայեաց դարձեալ զի բամբասողա-
ցըն զվարդապետութիւնն աստանօր ոչ տայ պատասխա-
նի Պաւղոս, որպէս և այլուր. իբրու զի 'ի հեթանո-
սացն հաւատալով բազմանային, այլ և 'ի Հրէից ոչ
օակաւք։ Վասն որոյ և զտեղի վարդապետութիւնն ոչ
վայրապար ուրուք, այլ ուր էր պարապումն 'ի խռո-
վութեն՝ խնդրեցին յապարանսն Տիւրանեայ։ Որով
և զաշակերտսն խրատեցին ոչ յառնել 'ի տրտմութի
ընդդէմ բամբասողացն. այլ տեղի տալով և մեկնելով
զաշակերտսն 'ի ժողովարանէն Հրէից. և ոչ գնալով
'ի քաղաքէ անտի՝ ցուցանէին յամենայնի վանել զլա-
րութիւն վասն փրկութեն նոցա։

«Լու այս եղև զերկեամ մի, մինչև ամենայն բնակ-
չացն ասիացւոց լսել զբանն տեառն, Հրէից և հեթա-
նոսաց»։ Տես որչափ ինչ 'ի գլուխ եհան վերակա-
ցութի բանին և դադարեցն անտանօր Պաւղոսի. զի
յերկարեցաւ քարոզութիւն, մինչ զի ամենեցուն լսե-
լի եղև բանն, որք միանգամ բնակեալ էին Ասիա։

«Լու զօրութիւնս ոչ օակաւս առնէր ասծ 'ի ձեռն
Պաւղոսի. մինչ զի 'ի հիւանդս տանել 'ի քրտանէ նո-
բա թաշկինակս կամ վարշամակս, և մերժել 'ի նոցա-
նէ ախտիցն և այսոց չարաց եղանել»։ Տեսանես ըզ-
զօրութի մարմնոյն, զիարդ զգեցեալ էր զՔՀ. և որպէս
Պետրոս յերուսաղէմ, սա աստ գործէր զբժշկութի
ամենեցուն. ոչ ինքեամբ միայն և ձեռն դնելով,
այլ և 'ի ձեռն հանդերձիցն բացէ 'ի բաց. ոչ զգեն-
լով ևեթ նոցա, այլ և առեալ 'ի վերայ ինքեանց դը-
նէին զդաստառակն, զզունարն կամ զգօտին, և ան-

դէն ողջանային 'ի ցաւոց, և չար դեւքն ելանէին։ Եւ վասն այնորիկ ոչ թողացուցանէր նմա երբեմն Հոգին գնալ յԱսիա, այսմ ժամանակի սպասելով որպէս ես կարծեմ։

Երդ որք յելլենացւոցն թերահաւատեն վասն յարութեն՝ զմոխիրն տեսանելով 'ի գերեզմանս, զայնպիսի գործս տեսեալ հաւատացեն՝ այ զօրութեն։ Ուստի և այսպիսի իրք գործէին, զի չարաբանքն ՝ պարտեալ յամօթ լիցին, որք զնոյն իսկ զաւանդութեն գաւաճանէին բամբասելով։ Բայց դու միտ դիր, քանզի արտաքնոցն փորձութիւնքն դադարեալ եղեն առ ժամանակ մի. իսկ որ առ 'ի դիւացն՝ սկսեալ եղև։

«Յանդգնեցան ոմանք և 'ի շրջող Հրէիցն՝ որք երդմնեցուցիչքն էին, անուանել 'ի վերայ այնոցիկ՝ որ ունէին այսս չարս՝ զանուն տեառն Յսի, և ասէին. երդմնեցուցանեմ զքեզ 'ի Յս զոր Պաւղոս քարոզէ, էլ 'ի դմանէ»։ Տես զհրեական հեղգութեն 'ի հաւատս, և զտարտամութեն. տեսանէին զհանդերձն Պաւղոսի ներգործելով զմեծամեծս, և 'ի միտ ոչ առնուին. զի զինչ մեծ քան զայսպիսի իրս լինիցի։ Իսկ նոքա փոխանակ հաւանելոյ և զղջանալոյ, 'ի հակառակն ևս դառնային։ Բաբէ թէ օրչափ էր հաւատոցն զօրութիւն և օրչափ անուանն Պաւղոսի, որով և նոքա 'ի նախանձ գրգռեալք 'ի փառասիրութեէ. որպէս և Սիմոն մոգ սակս հաւատարիմ և իրաւ զինքն երևեցուցանելոյ խնդրէր զշնորհսն Հոգւոյն Պզոյ, նոյնպէս և սոքա յաղագս նորին իրաց զայն ինչ առնէին սակս իրաւացուցանելոյ զինքեանս յոր ինչ կամէին։ Տես, հաւատալ ոչ կամէին, այլ 'ի ձեռն անուանն կամէին հանել զդևսն։ Ո՛վ բազում տարտամութիւն նոցա և անհաւանութիւն, զի եղկելիքն և թշուառականք ոչ ասացին դիւին թէ հաւատամք 'ի Յս զոր Պաւղոսն քարոզէ, զի ասելով զայս առաւել պայծառագոյնք լինէին և յաղթեին նմա, և այնու ընտանացեալ լինէին տերութեն Յսի. այլ թէ երդմնեցուցանեմք և հրամայեմք քեզ յանունն Յսի, էլ 'ի դմանէ։

Երդ ասաց Ղուկաս և զբանս անմտութեան նոցա,

1 Սիւան չարաբաստ։

ցուցեալ թէ ոչպէս առանց ծանրութեան պատմէ զա-
մենայն, և ոչ դաւաճանէ ինչ կամ պարսաւէ զնոսա.
զի այս իսկ առնէր զառաքեալսն սքանչելիս, հեզութեն
և անփչաչարութեն նոցա։ Զի այն ինչ որ առ փիլի-
պէցիսն եղև, զխուճապն ասեմ զոր հասոյց Պաւղոս
հարցկին դիւի՝ որ էր յաղախինն, և զսոսա հերքէր
ողջախոհ առնել, բայց ոչ առնուին 'ի միտ։ Եւ ընդ-
դէր արդեօք զրջէին երդմնեցուցիչքն այն։ Սակս փաբ-
թամութեն ընդդէմ ժողովելոյ. ըստ որում և ոչ պատ-
մէին զիրսն. այլ իբրև շուրջ ընթացեալ լինէին այ-
նուհետև քարոզելով, որով և վատնդեալ լինէին։

«Յին ուրուն Սկեւեայ հրեի քահանայապետի
եօթն որդի, որ զայս առնէին»։ Ասէ և զանուն հօրն
նոցա և զթիւ նոցա, տալով այնոցիկ որ յայնժամ
էին՝ նշան հաւատարմութեն գրելոցն նմի։ Զայս առ-
նէին՝ ասէ։ Եւ զիարդ արդեօք Պաւղոս ոչ երբէք սաս-
տեր նոցա։ Կարծեմ թերևս անտես գոլ իրացն և ոչ
յայտնի. զի զանխլաբար զայս առնէին, մինչև յան-
դիմանեալ եղև տակարութեն նոցա. վասն որոյ և այն-
պէս տնօրինեալ եղև, զի ամենեցուն իրքն յայտնե-
ցան։ Եւ դու միտ դիր հրէական պիղծ մտացն, զիարդ
մոլեալ լինէին տակաւին յետ այնքան ներգործու-
թեանցն, յանուանէ անտի Յեսի իրաւանալ կամելով. զա-
մենայն ինչ վասն փառաց և ընչից առնէին. զՅՀ ա-
սէին և զՊաւղոս յաւելուին, իբրև մեծ զոմն կարծե-
լով զնա. իսկ զՅՀ ոչ այնպէս կարծէին։

ԵՓՐ. «Պատասխանի ետ այսն չար և ասէ ցնոսա.
զՅՀ գիտեմ և զՊաւղոս Ճանաչեմ. բայց դուք ո՞վ
էք»։ Դուք, ասէ, խզեալք ողնաբեկեալք 'ի դիւաց, ո՞վ
էք որ գիւաց ելանել հրամայէք. և կարՃատեաց զնա-
սա դևն յաղ և յահեակ և ելան զնոսա 'ի տանէ անտի։

ՈՍԿ. «Ի վազեաց, ասէ, այրն՝ յորում էր այսն
չար, և ըմբռնեալ զերկոսին յաղթահարեաց զնոսա,
մինչև մերկ և վիրաւորս փախչել 'ի տանէ անտի»։
Ապա ուրեմն անուն Քրիստոսի ոչ ինչ առնէ, եթէ ոչ լի-
նի հաւատով կարդացեալ։ «Որ հաւատայ յիս, ասէ,
մեծագոյնս առնէ գործս քան զոր ես գործեմ։ Իսկ
այս կատարեցաւ 'ի ստուերէ մարմնոց առաքելոցն. որ
և 'ի հանդերձիցն Պաւղոսի լինէին սքանչելիք։

Բայց դու տես և զարմացիր զնարդ իւրովք գործովքն զիւրսն ակամայ քակէր ստատանայ, և զիարդ զէնք նորա 'ի հակառակութեն նմա 'ի կիր արկեալ եղեն. զի արժան է աստանօր զբանչանալ՝ թէ ընդէր գեն ոչ լինէր գործակից երդմնեցուցչացն մոլորութեն, այլ կշտամբէր զնոսա և զնաբէութեն նոցա յայտնի առնէր։ Ինձ թուի թէ յոյժ սրտմտեալ էր. որպէս թէ մի ոք, որ յաղագս չարութեն և վատթարութեն իւրոյ 'ի վերջին տագնապն անկեալ և 'ի թշնամւոյ ումեմնէ տառապելոյ կշտամբեալ լինի, ոչ կարէ հանդարտել, այլ զամենայն իսկ զցասումն 'ի նա կամի թափել. այնպէս լինէր անդ։

Լսէ զի մի թուիցի արհամարհիլ և դատարկանալ անուանն Ցեսի, նախ խոստովանեալ դիւին՝ ասէ, զՅՅ գիտեմ. և ապա էառ իշխանութեն 'ի վերայ նոցա. ցուցանելով թէ ոչ էր անուանն տկարութեն, այլ նոցունց պատրանացն էր ամ. զի թէ ոչ էր այնպէս, առ Պաւղոսիւ ընդէր ոչ այսպէս լինէր. զոր և ասէր դեն՝ թէ զՊաւղոս Ճանաչեմ, դուք ով էք։ Վասն որոյ կռփեաց խստագոյնս զգլուխս նոցա և պատառեաց զհանդերձս նոցա։ Աստ ցուցեալ լինի դիւացն զորութեն մեծ ինն գովով յորժամ ընդ անհաւատիցն ունիցի կռիւ։

Լսէ վասն էր ոչ ասաց թէ ով է ՑՅ։ Քանզի երկուցեալ լինէր, զի մի և ինքն խստիւ տանջեսցի. այլ և կեղծաւորէր, իբրու զի թողութեն լիցի նմա և մի մատնեսցի 'ի տանջանս յառաջ քան զժամանակն տանջանաց. և նոքա փոխարէն վրէժս գտեալ լիցին առեալ, որք խաղային 'ի վերայ նորա. զՅՅ գիտեմ, ասէր, և զնայն Պաւղոսի Ճանաչեմ զոր քարոզէ։ Արդ պարտ էր ասել՝ թէ զփրկիչն տիեզերաց զյարուցեալն 'ի մեռելոց. այլ ոչ կամէին խոստովանել զփառս նորա, ըստ որում յաղթահարեալք էին 'ի նմանէ։ Այլ առ մոլին ասէին, զի դուք ոչ հաւատայք, այլ միայն անուամբն շատանայք ասել զայդ, իսկ էք և ոչ Քրի, դիւրայաղթք էք և տկարք։ Բազում էր առ նոսա ցասումն դիւին. զՅՅ գիտեմ, ասէ. ապա դուք յամօթ լերուք ոչ գիտացեալդ. զՊաւղոս Ճանաչեմ. մի կարծէք թէ արհամարհելով ինչ զնոսա ոչ առնեմ զասացեալսդ 'ի ձէնջ։ Բազում էր երկիւղ դիւին զոր ունէր յա-

նուանէն Յիսուսի, և ոչ իշխեր այլ ազգ ասել կամ առնել։ Ընդ էր առանց լանիցս այսոցիկ ոչ պատառեաց զհանդերձս նոցա, և այնպէս ելից զցասումն իւր։ Այլ քանզի երկնչէր և դողայր յանմատոյց զօրութենէն, թերևս և ոչ այնչափ զօրացեալ լիներ եթէ ոչ նախ ասացեալ էր զայն։

Արդ տես յամենայնի զգևան բարեմտագոյնս, և ոչ յանդգնելով հակառակախօս եղեալ և ոչ ամբաստանեալ զառաքեալսն և ոչ զՔրիստոս։ Զի անդ ասէին «Գիտեմք զքեզ, սուրբդ ՝ի՝». և դարձեալ «Դու ես Որդի ՝ի՝». իսկ ասա, «Արքս այս ծառայք ՝ի՝ բարձրելոյ են». և «ԶՅիսուս գիտեմ և զՊաւղոս ճանաչեմ»։ Զի յոյժ երկնչելով դողային և 'ի սրբոցն ևս, զի այնչափ ուսնէին զօրութիւն, ըստ որում յիշէ զՊաւղոս, զի մի կրեսցէ զայն ինչ զոր կրեաց հարցուէն որ յաղխինն։ Արդ զայնպիսի վիշտս կարէին և առաքեալքն հաստատել խաբեբայիցն. զի թէ գործողացն զայնպիսի հարուածս՝ այսինքն դիւացն՝ յաղթողք էին, յոյժ մանաւանդ և նոցա. բայց առ ժամայն ոչ արարին. ուստի ցուցեալ լինի նոցին հեղութիւն, զի հալածեալք գոլով 'ի նոցանէ՝ այնպիսի իրս չառնէին. և հաճեցուցեալ նոցդ դևքն՝ զնորին հակառակն ընդ նոսա գործէին։

Արդ այս ինչ և առ Քրիստս եղև, զի անուամբն և օտարքն դևս հանէին։ Բայց յայնժամ ոչ եղև արգելեալ պատուհասիւ, զի դեռ սկիզբն էր իրացն։ Նա և Յուդա գողացեալ ոչ լիներ պատուհասեալ. իսկ Անանիա և Սափիրա և սպանան ևս։ Բազումք 'ի Հրէիցն հակառակելով ընդ աւետարանին՝ ոչ կրեցին չար. իսկ Ելիմաս կուրացեալ եղև. զի ոչ ամենեքեան ասատէն դատին, տակաւն այլովք փորձութիւքն. և այս իսկ եղև պիտանացու և յօգուտ բազմաց։

«Զի այս յայտնի եղև, ասէ, ամենայն Հրէից և հեթանոսաց, որ բնակեալ էին Յեփեսոս. և անկաւ երկիւղ յամենեսին 'ի նոսա, և մեծանայր անուն տեառնէն Յսի։ Տես ամենայն ուրեք զմարդիկ ոչ այնպէս քաղցրագունիւք դարձուցեալ, որպէս ահագին իրօք և երկիւղիւն։ Զի յորժամ Անանիա և Սափիրա պատուհասեցան, եղև երկիւղ մեծ 'ի վերայ ամենայն եկեղեցւոյն, և յայլոցն ոչ ոք իշխեր մերձենալ

'ի նոսա . և աստանօր յորժամ վարչամակաւ և այլովք կատաւովք զամենայն ցաւս բժշկէին և զդևսն հանէին, ոչ այնպէս զգաստանային . և յետ այնորիկ յորժամ դէն զայն գործէր, յայնժամ երկիւղիւ մեծաւ ըմբռնեալ լինէին։ Եւ մեծանայր անուն տեառնն Յեսի . մինչ զի զայն որ իբր ընդ խաղ լինն արկանելով վայրապար յիշէին, յայնմհետէ և ոչ միոյ ուրուք համարձակել յայն, և ոչ ըստ հանդիպման անգամ զանունն իշխէին անուանել . այնպէս անկաւ երկիւղ մեծ 'ի վերայ ամենեցուն։

Այլ ոչ այս միայն, «Ամբ և բազումք 'ի հաւատացելոցն գային և խոստովան լինէին և պատմէին զգործս իւրեանց»։ Տեսանէս զի երկիւղն և 'ի խոստովանութիւն արկ զնոսա . քանզի յայսանի երևեցոյց նոցա թէ ամենագէտ է՝ ած , և նորին յառաջգիտութիւն մեծագոյն իսկ նշանս այս եղև . յորմէ զարհուրեալ իւրաքանչիւր, 'ի խոստովանութիւն փութային նախ քան թէ առ 'ի դիւացն յանդիմանեալ , և անձամբ զանձինս քննէին՝ երկնչելով զի մի զնոցն կրեսցեն։ Զի յորժամ օգնական և մարտակից նոցա դևքն այսմ ամբաստանողք իցեն , որպիսի՞ այնուհետև յոյս կայցէ նոցա . բայց միայն գործեցելոցն խոստովանութիւն։ Զի այնչափ հաստատեալ զօրացան 'ի հաւատս , զի երկնչէին ինչ թաքուցանել 'ի Պաւղոսէ , զփորձ առեալ զնորա և 'ի ձեռն դիւացն ևս առնել այնպիսի կշտամբութիւն։ Այլ ևս ապա եկեալք լինէին յայն , զի խոստովանէին . և բովանդակ այնոքիկ որ գործէին զիարդախութիւն, զղջանային։

«Այլ բազումք 'ի կախարդասարացն որք հաւատային՝ բերէին զգիրսն , այրէին առաջի ամենեցուն . և համարեցան զգինսնոցա , և գտանէին արծաթոյ բիւրս հինգ. և այնպէս բանն այ աճէր և զօրանայր»։ Ամբ զայն ինչ առնէին , գիտելով այնուհետև զի ոչ ինչ շահ էր 'ի նոցանէ , յորժամ և ինքեանք իսկ դևքն զայնպիսի իրս առնէին։ Ամբ այս ինչ բաւական էր զամենեսեան դարձուցանել . բայց մի սքանչանար , զի զչար և զանհնազանդ բարս ոչ ոք հաւանեցուցանէ . և 'ի նոցն իսկ յերդմնեցուցչացն տեսցուք թէ որպէս կարծր է չարութիւն , զի զայնպի-

սի անցս կրեալ չէղէն լաւագոյնք։ Եւ տես այսպիսի նշանաց լինելով թէ որպիսի չարիք յետ սակաւ ժամանակի լեալ լինի. զի այնպէս մարդկային բնութիւն իսկոյն 'ի մռաացօնս գայ բարւոյն, ոչ 'ի հարկէ, այլ ազատ կամաք, որովք և կարող ապա և ողջախոհ լինել։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ մի սքանչացուք թէ այնպիսի նշանաց լինելով ոչ ամենեքեան դարձեալ եղէն. զի և առ մերովք ժամանակօք յոլով ինչ այնպիսի լինի։ Ո՞չ Հերու թագաւորեաց ՅԾ զքաղաքս ամենայն, և քանի՞ ապարանք կործանեցան. ուստի զարհուրեալք ամենայն չարագործք զգաստացեալք եղէն, և յետ երից աւուրց դարձեալ յիւրեանց չարիս վերստին դարձան։ Եւ քանի՞ ոմանք 'ի վտանգս եղեալք իսկոյն 'ի զղջումն եկին, և դարձեալ նոյնք եղէն։ Այս իսկ մանաւանդ զկամաւ չարանալն մարդկան յայտնէ. զի թէ բնական էր, ապա և ոչ բնաւ իսկ փոփոխեալ լինէր 'ի բարին։ Այլ զի քան զդէս չար են մեղք, մի խնդրեսցուք զդէս հանել. այլ մանաւանդ 'ի մեղաց զանձինս և զայլս ազատել։ Ցաղթեսցուք բարկութիւն, տարցուք անարգանաց, և մեծ է քան զդէս հանել։

ՃԱՌ ՔԱՌԱՄԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

«Այ՝ իբրև եղև այս, եդ Պաւղոս 'ի մտի Հոգւոյն չքջել ընդ Մակեդոնիա և ընդ Ասիայ և գալ Յերուսաղէմ»։ Ոչ և սմարդկապէս աստանօր անօգուտս բարբառեալ լինի. զի թէ պայմանաւ հաստատեալ էր անցանել անդանօր, ոչ և զտեղի առեալ յամէր Յեփեսոս, և զաշակերտեալսն միայն առաքէր 'ի Մակեդոնիա։

ԵՓՐ. «Ասէր՝ թէ յետ երթալոյն իմոյ անդր, պարտ է ինձ և զՀռոմ տեսանել»։ Այսինքն զի իբրև տեսցէ նա զՄակեդոնիա և զԱքայիա՝ որ է Եղլադա, ապա դարձցի և եկեսցէ Յերուսաղէմ. զի ոչ թողուին տեսանել նմա զգաւառս զայսոսիկ Հրեայքն՝ որ 'ի Հրէաստանին բնակէին։

ՈՍԿ. Ոչ ետ ակն ունէր նա զի յետ այսորիկ և 'ի Հռոմ քաղաք երթիցէ և ուսուսցէ. զոր ահաւասիկ և մարգարէանայ ասելով. «Պարտ է ինձ և զՀռոմ տեսանել»։ Թերևս մխիթարելով զնոսա որք Յեփեսոն էին, իբրև ոչ ամայի մնացեալք 'ի նմանէ, այլ որպէս զի դարձեալ հուպ լինելոց է առ նոսա. և թէ պարտ է զթագաւորական քաղաքէն բուռն հարկանել, զի և այս ևս մխիթարութի էր։ Այլ և յարուցանէ մարգարէութիւն զանձինս աշակերտացն։

«Առաքէ երկուս 'ի պաշտօնեիցն իւրոց, զՏիմոթէոս և զԵրաստոս 'ի Մակեդոնիա, և ինքն մնաց ժամանակս ինչ Ասիա»։ Արձակէ զաշակերտսն 'ի Մակեդոնիա, և ինքն մնաց Յեփեսոս, բաւականապէս դեգերելով և յամելով անդ. ապա փոփոխեալ լինի անտի։ Եւ որպէս 'ի սկզբանէ յանձն առեալ էր Յասորիս գնալ, նոյն դարձեալ 'ի Մակեդոնիա դառնայ՝ ցուցեալ ասա թէ ոչ ամենայն ինչ իւրով զօրութիւն լեալ լինի, այլ ըստ Հոգւոյն կամաց և զօրութեան։ Սմին վասն յառաջ ասէր զերթն իւր 'ի Մակեդոնիա

վան աշակերտացն, զի ոչ ևս ընդ երկար տևէին մեկուսանալ 'ի նմանէ. ըստ որում յորդորէ զնոսա յասելն կանխաւ. «Զի թէ յԱթէնս, ասէ, նախ տեսեցաք մնալ վասն ձեր, ապա և այժմ կանխեսցուք ըզդալն 'ի Մակեդոնիա առ ձեզ» Եւ դարձեալ քանզի ոչ ընդ երկար էր կալոց 'ի կողմանս Մակեդոնիոյ, աշակերտաքն յառաջ առաքմամբ անդ տայ քաջալերս ակն ունելնմա։ Երկուս միայն առաքէ անդ, և զգաւլուսն իւր խոստանալով յօժարագոյնս քան զամենեսեան առնէ զնոսա, և ինքն տակաւին մնայ յԱսիա։ Վայելչապէս և յիրաւի, զի անդ էր գուռզուութիւն իմաստասիրացն. և կալով լինի դարձեալ ընդ նոսա տրամաբանեալ, քանզի բազում էր երկիւղ դիցապաշտութիւն նոցա, զոր և ընդերկարելով անդ՝ լուծանէր։

«Լուս եղև 'ի ժամանակին յայնմիկ խռովութիւն ոչ սակաւ վասն Ճանապարհին»։ Ճանապարհ զգնացս աւետարանին ասէ. իսկ խռովութիւն՝ զհալածանսն մեծ՝ որ եղև 'ի ձեռն Դեմետրի ոսկերչի. զի վասն այսորիկ իսկ և գրէր առ կորնթացիսն՝ թէ «Ոչ կամիմ զձեզ տգէտս լինել վասն նեղութիւն մերոյ եղելոյ յԱսիա». քանզի խոստացեալ լինէր 'ի Կորնթոս գընալ և ոչ ժամանեաց, փութով պատասխանի տայ իբրև ոչ հեղգացեալ, այլ 'ի նեղութէն խափանեալ։ Եւ ասէ զփորձութիւն զիրսն Դեմետրի՝ որով ընդդիմաբանեալ լինէին։ Զի թէպէտ և եղև նշան կրկին, այլ դարձեալ վիշտք 'ի վերայ յառնէին. և այսպէս ամենայն ուրեք շարամանեալ լինէին իրողութիւնքն 'ի նեղութիւն և յանդորրու։

«Իսկ Դեմետրիոս ոմն անուանեալ արծաթագործ գործէր զմեհեանս արծաթիս Արտեմայ դիցն, և տայր Ճարտարացն լինել ոչ սակաւ շահս. որ և ժողովեաց իսկ զձեռագէտս արուեստին և ասէ. արք, դուք ձեզէն իսկ գիտէք, զի յայսմ գործոյ էր շահ մեր. և տեսանէք և լսէք զի ոչ միայն զեփեսացւոցս, այլ գրեթէ զամենայն իսկ ասիացւոց Պաւղոսս այս հաւանեցուցեալ շրջեաց բազում ժողովս, ասելով թէ ոչ են աստուածք ձեռագործք»։ Ո՞րպէս հնար էր մեհենատաճարս արծաթիս առնել։ Թերևս իբրև տապանակս փոքունս լիներ. որպէս ասի և տաճարս

փղոսկրեայ։ Ապա բաղում էր պատիւն Արտեմեայ յԵփեսոս, ուր և տաճար նորին երբեմն հրդեհեալ այնպէս տրտմեցոյց զնոսա, զի է զանուն անգամ այրեցմանն չկամէին յիշել. այլ որպէս թէ իւր կամաւք եղև այն ասէին։

Այլ տես ամենայն ուրեք զընչասիրութիւն պատճառս կռապաշտութիւնք. և նոքա որոց աղախինն՝ վասն ընչից, և ոչքա վասն ընչից գրգռէին զաղմուկն։ Ոչ որպէս թէ զարբեպաշտութիւնն նոքա փոյթ ունէին տաճնապել, այլ իբրու ինքեանք զշահիցն առաջարկութիւն ոչ ունելով։ Եւ հայեաց զարբութիւն առնն. քանզի ինքն փարթամ էր յոյժ, և ոչ էր նմա այնչափ ինչս և տուգանս անգործ մնալն. իսկ այլոցն բազում էր իրրև տնանկաց գոլով և յօր ըստ օրէ գործաւորութէն կերակրելով. բայց նոքա ինչ ոչ ասէն, այլ ինքն։ Եւ տես նախ զնոսա հաղորդս առնելով, ապա զվիրաս կարեացն առաջի դնէ և խուռվի զքաղաքն ամենայն։

ԵՔՐ. Իբրու ասէր՝ թէ այսուհետև ոչ գոյ մեզ վարձ վաճառոյ, զի գտանէաք մեք 'ի կոնքաց անտի զոր առնէաք. զի ուսոյց և աշակերտեաց Պաւղոս զԱսիա, զի հաւատացեն թէ ոչ են աստուածք՝ որ 'ի ձեռն որդւոց մարդկան իցեն արուեստագործեալ. և զի յայսմ արուեստէ էր մեզ կեալ, առանց այսր ահա տաճնապիմք 'ի սով անկանել։

ՈՍԿ. Լու արդ սոյն իսկ ասացեալքս 'ի նմանէ բաւական էր զնոսա 'ի բարեպաշտութիւն ածել. որպէս Զի թէ մի մարդ այսպէս և այսչափ զորէ իրրու փոփոխել զամենեսին և 'ի տաճնապի կացուցանել զիրս աստուածոցն, յայսմանէ պարտ էր զմտաւ ածել՝ թէ որպէս հզօր է նորին ածն. և զի յոյժ մանուանդ նա տացէ ձեզ զայն ինչ, յորմէ կասկածէքն. այսինքն զպէտս կարեացն։ Այլ նոքա տառապեալք և ցուրտք ոմանք ոչ զայս ինչ զմտաւ ածէին, այլ զայն ինչ առնէին զոր արարին։ «Տեսանէք, ասէ, և լսէք». զի այնպէս յայտնի էր ամենեցուն, որ ինչ եղեալ լինէր 'ի ձեռն Պաւղոսի։ Այսպէս Պաւղոս զամենայն Ասիա հաւանեցուցեալ փոխեաց, ասէ։ Այսպէս յառաջագոյն ըմբռնեաց զանձինս նոցա։

ոչ բռնութիւն արար, ասէ, այլ հաւանեցոյց. տակաւն ասէին թէ չէն աստուածք 'ի մարդկանէ ձեռակերտեալքն՝ կործանէ զարուեստս մեր։ Եւ ոչ զմտաւ ածէին՝ թէ որ այնչափ կարացեալ լինի առնել, նմա պարտ է հաւանել։ Այլ տես վասն որոյ իրի արարչին հեթանոսք. «Աստ, ասէ, թէ 'ի մարդկանէ եղեալքն չէն աստուածք»։ Յիմի յարուեստսն մերում դնէ զանն, զի խռովեցուցէ զմարտարն։ Եւ ապա որ ինչ մանաւանդ տրտմեցուցանէ զնոսա, զայն յեւոյ դնէ։

«Եւ ոչ այս միայն ճգնէ, ասէ, զմեր կողմնս գալ 'ի յանդիմանութիւն, այլ և զմեծի աստուածոյն Արտեմայ մեհեանն յոյժ ինչ հմարեալ. նա և քակեալ ես իցէ մեծութիւն նորա, զոր Ասիա և ամենայն տիեզերք պաշտեն»։ Այլոցն ամենայնի, ասէ, ոչ առնեմ փոյթ. այլ զի մեծին այ Արտեմայ տաճարն 'ի տապնապի կայ կործանել։ Ապա զի մի թուիցի սակս իրացն վճարման ասել զայս, տես թէ զինչ յաւելու. «Զոր բոլոր տիեզերք պաշտեն» ասէ։ Ի միտ առ թէ որպէս ելոյոյ մեծագոյն զզօրութիւն Պաւղոսի, զամենեսեան եղկելս, անզօրս և տառապեալս երևեցուցանելով, և թէ այր մի հալածեալ խորտնակաւ այնչափ զօրացեալ լինի։ Տես առ 'ի թշնամեացն զմեծ վկայութիւնն զՊաւղոսի և զայլոց առաքելոցն, զի կործանէին զպաշտամունս նոցա. ուստի լիւսորացիք անդ զուարակս և պսակս մատուցանէին, և ասաս ասն թէ տապնապէ զմեր կողմնս գալ 'ի յանդիմանութիւն. զոր և Հրեայքն ասէին՝ թէ «Լցէք զամենայն տեղիս ուսմամբ ձերով». և զԲեմ՝ թէ «Աշխարհս ամենայն զկնի նորա գնաց». և դարձեալ՝ թէ «Որք զաշխարհս խռովեցուցին, նոքա և այսր հասին»։

«Օ այս իբրև լուան, լի եղեն բարկութիւն»։ Յորժամ՝ յաղագս Արտեմայ լուան և վասն արուեստին իւրեանց վատթարելոյ. զի այսպիսի է վաճառականաց սովորութիւն. 'ի հանդիսմանէ ուրուք յափշտակեալ՝ լինին բորբոքեալ. վասն որոյ և նա քննութիւն բորբոքէր գնոսա, զոր պարտ էր նոցա ուղիղ քննութիւն 'ի վերայ հասանել իրացն։ Բայց տես և գնոսա դիւրհաւանս ոմանս և արհամարհելիս. որպէս զի հաձե-

լի եղև կալ ամենեցուն նոցա առաջի նորա։

«Խարկութիւն, ասէ, աղաղակէին և ասէին. Մեծ է Արտեմիս Եփեսացւոց. և լցաւ քաղաքն խռովութիւն։ Արդ ձայնիւն իւրեանց կարծէին պարսպել զմոլորութիւն և ընդդէմ կալ ՚ի ծեղէն Հոգւոյն զօրութեան։ Ճշմարտապէս ըստ բանի ուսմանն մանկունք անմիտք էին ելեւնացիք։ Փարթամութիւն մեր, ասէ, յայսմ գործոյ է զոր Պաւղոս անվաւեր առնէ։ Արդ ով տարաժիտք, որպէս հաւանեցայց այր մի նուաստ, որպէս այնչափ յաղթեաց սոլորութիւն, զինչ արարեալ կամ զինչ ասացեալ. զի ահա ոչ է այսչափ գործ առն միոյ. զի ասէին Պաւղոսի միայն՝ շատ եղև Ճշմարտեալ բազում ժողովրդոց թէ չէն աստուածք ձեռագործք։ Արդ եթէ այնպէս դիւրըմբռնելի է աստուածոցդ իրքն ՚ի ձեռն բարեպաշտութիւն, պարտ էր կանխաւ և ստգտեալ լինել ՚ի ձէնջ. ապա թէ զօրաւոր՝ ոչ այդպէս վաղվաղակի կործանել. բայց զի յայտնի լիցի ձեզ, ով անհանձարք, թէ ծեղէն զօրութիւն էր որ ներգործէր։ Տես զանիմաստն, զի որպէս մեծապոյն ինչ ասելով և լսելով լի եղեն սրամտութիւն և ասէին. «Մեծ է Արտեմիս Եփեսացւոց». քանզի ըստ քաղաքին նախնի աստուածք էին նոցունց Արտեմիսն և Դիոպետայն. վասն որոյ և այնպէս մոտեալ լինէին զի ՚ի ձեռն ձայնին մարթասցին վերբստին ստանալ զպաշտօն նոցա, և զեղեալ հաւատն յիծ ՚ի բաց լուծանել։

«Լչ լցաւ, ասէ, քաղաքն խռովութիւն։ Տեսանէս անկարգ բազմութիւն. վայրապար աստ խռովին հեթանոսք, ընդ որս խռովեցան աստ և Հրեայք՝ որք և յամենայն տեղւոջ նոցունց յանդգնեցելոցն առաջի կացեալ լինէին հաւանութիւն. այնպէս ոչ ունէին իրաւունս պատճառանաց և ոչ լրումն ինչ պարծանաց կամ փառաց։ «Դիմեցին առ հասարակ ՚ի թեատրոնն, յափշտակեցին զԳայիոս և զԱրիստարքոս մակեդոնացի զուղեկիցսն Պաւղոսի» և քարշեցին զնոսա ՚ի թեատրոն անդր, որպէս զՅասոն Հրեայքն։

«Բայց Պաւղոս իբրև կամեցաւ մտանել յամբոխն, ոչ թողին զնա աշակերտքն»։ Կամէր զի մտցէ անդ հանդիսաբանել և զՀալածանս առնուլ ՚ի խօսս

վարդապետութեան 'ի դէպ, զի լուեցուցէ զդիւական մոլորութիւնն որ 'ի կուռսն։ Բայց աշակերտքն դիտեա թէ որչափ յաղագս նորա նախախնամութեան 'ի կիր արկանէին յամենայնի, և յառաջնմէ իսկ հետէ տեսցես զինչսն նոցին, որպէս և ասա։ Ի սկզբանն արտաքս հանէն զնա ուրեք ուրեք, զի մի վասն նորա խրստագոյն վերս առցեն։ Այլ այժմ և տնօրինաբար և հոգած կամաք դիմէր Պաւղոս յօժարութիւն 'ի թեատրոնն մտանել, զի մի աշակերտքն ընդ եղեալ խռովութիւնն զարհուրեսցին. որք և ոչ նմա ինչ կրեալ տանջանս կամեցեալ լինէին։

«Ասմանք և յասիապետացն որ էին նորա բարեկամք, յղէին առ նա և աղաչէին մի տալ զանձն 'ի թեատրոնն». այսինքն յանկարգ հանդիսին հոսումն. աղաչէին՝ գիտելով զյօժարութիւն նորա. այնպէս ամենայն հաւատացեալքն սիրէին զնա. և Պաւղոս հաւանեալ լինէր, զի ոչ էր մնափառ և ոչ պատուասէր։ «Այլք այլ ինն աղաղակէին. զի էր ժողովն նոցա խռովեալ»։ Բանզի բազմութիւնն այնպիսի է, վայրապար իրացն հետևեալ լինի. որպէս նիւթ 'ի հուր արկեալ զբոց խռովութիւնն բորբոքէ։

«Եւ բազումք 'ի նոցանէ ոչ գիտէին թէ վասն ոյր ժողովեալ իցեն։ Եւ յամբոխէն բազմութիւն յառաջ կալան զԱղէքսանդրոս»։ Յառաջ ածէին զԱղէքսանդրոս Հրեայքն տնօրինաբար վասն ինքեանց, չարաբանել զՊաւղոսէ. այլ ոչ ժամանէր բարբառել ինչ։ «Զի իբրև ածին, ասէ, զնա յառաջ Հրեայքն, Աղէքսանդրոս շարժեաց զձեռն, կամէր պատասխանի առնել ամբոխին»։ Եւ վասն որոյ իրի արդեօք կամէր Աղէքսանդրոս դարբին տալ պատասխանի. միթէ նա՞ լինէր ամբաստանեալ։ Ոչ. զի ոչ էր նա 'ի գործակցացն Պաւղոսի, այլ 'ի ներհակացն. այլ իբր ժամանակ գտեալ իւրոյ չարութիւնն՝ զամենայն ինչ յետս դարձուցանել խորհէր զհաւատացն իրս և առաւել բորբոքել զցասումն հանդիսին կամէր. ըստ որում և նորին բանքն տնօրինաբար խափանեալ եղև։

«Իբրև գիտացին, ասէ, թէ այրն հրեայ է, միաբարբառ եղեալ ամենեցուն իբրև ժամս երկուս՝ աղաղակէին Եթէ մեծ է Արտեմիս Եփեսացւոց»։ Մանա-

կական՝ և անմտութեանէ էր Հնմարտապէս տրամախսո-
հութեան. իբրև երկնչելով զի մի շինանիցի պաշտօն
նոցա, ստիպ գոչէին։ Զամն երկուս անդ նստաւ Պաւ-
ղոս. և տես թէ որքան տակաւին հեթանոսացն էր
մոլութիւն և չարութիւն և ցասումն առանց կարգի։

Բայց բարիւք և դպրապետն սաստկապէս յառաջ
կալով լռեցոյց զամբոխն, տուեալ զհաւանութիւն քա-
զաքացւոյն և ասէ. «Այրք երիտասարդք, իսկ ո՞վ է՝ի
մարդկանէ որ ոչ գիտէ զերիտասարդաց քաղաքս քուրմն
մեհենադարգս մեծին Արտեմեայ գիշն և Դիոսպե-
տեայ։ և կալ ուստեք ընդդէմ նորա և խափանել ոչ
որ կարէ։ Իբրև ոչ գոլով յայսմանի վիճաբանել ինչ առ
գիսն, յայնժամ իսկ յառաջագոյն շինուցին զբրբա-
մութիւն նոցա։ Իսկ ո՞վ է Արտեմիսն։ Կայս հմար-
ուեալ աստուածուհին, որ և՝ի տիւրացւոց և՝ի լակո-
նացւոց պատուիւր հիւրասպանութիւն։ Իսկ Դիոսպե-
տեայն միւս տաճարի անուն կոչեցեալ լինէր։ Ո՞վ որ,
ասէ, ոչ ճանաչէ զերիտասարդաց քաղաքս»։ Զայն ինչ
ասէր յաղագս որոյ երկուսցեալն էին։ Զայնիւ ձե-
բով, ասէ, ոչ ինչ աւելի առնելոյ կամ հաճե-
լի ցուցանէր զդիսն։ Եւ ոչ ասաց թէ՝ որ ոչ ճա-
նաչէ զԱրտեմիս, այլ թէ զերիտասարդաց քաղաքս.
քանզի այն իսկ հանդարտեցոյց և հաճեցոյց զնոսա։
Արդ ընդ էր խնդրէր, ասէ, զայդ իբր՝ որ ամենեցուն
յայտնի է։ Իսկ նորա իբրև բարեպաշտութիւն ձևա-
ցուցանելով ոչ կամէին առնել ըստ հրամանի դպրա-
պետին։ Այլ նա ոչ եթէ հանդարտապէս բուռն հար-
կանէ զնոցանէ։

«Լու զի այդ այդպէս է անշուշտ, ասէ, պարտ է
ձեզ հանդարտել և մի ինչ յանդգնութիւն գործել»։
Ցուցանէ թէ անբանապէս եկին՝ի միասին։ «Աջէք
մատուցէք զարսդ զայդոսիկ այսր, ոչ մեհենակապու-
տքս և ոչ հայհոյիչս աստուածոցն մերոց»։ Զայսոսիկ
սուտ առ հանդէսն ասէ, որպէս զի նորա լուեսցեն և
հեզադոյնք լինիցին. զի հնարէր դադարեցուցանել
զխռովութիւնն։ Զի եթէ Դեմետրիոս և որք ընդ նմա
Հարտարքն, ասէ, ունիցին ինչ ընդ ումեք բանս, յա-
տեան երթիցեն, և դատաւորքն գոն, և ամբաստան

լինիցին զմիմեանց. իսկ եթէ վասն այլ իրիք խնդիր իցէ, յօրինաւոր ժողովն վճարեսցեն։

ԵՓՐ. Այս Դեմետրիոս անարգ և լկտի, ասէ, նա և մանկունք Ճարտարութեան իւրոյ, թէ դատ ինչ ունիցին ընդ միմեանս՝ յառաջ կացցեն և ցուցցեն հոգեմնին. և թէ այլ ինչ խնդիր իցէ, յօրինաւոր ժողովն վճարեսցի։

ՈՍԿ. Անզի երիս ժողովս լիներ որք ըստ օրինացն նոցա էին յիւրաքանչիւրում ամենան. իսկ այն առանց օրինաց էր։ Ասէ՝ թէ ոչ էր պարտ սակս շինական և ինչին ամբաստանութեան հատարակաց ժողով առնել։ Եւ այսու ապա և զարհուրեցոյց արհամարհեաց և տարակուսեցոյց զնոսա ասելով. «Բանզի և մեզ վիշտ վտանգի է»։ Ի մեծ ինն աղմկի եմք՝, ասէ, և՝ի ծանր աշխատութեան անկեալ։ «Ընդ կռուոյս այսր աւուր առանց իրիք յանցանաց լինելոյ, զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ վասն ժողովոյս այսորիկ»։ Ոչ միոյ իրիք պատՃառի գոլոյ մրրկիդ այդմիկ, յաղագս որոյ ոչ կարասցուք բան պատասխանուոյ հատուցանել։ Տես զիարդ՝ թէպէտ և անհաւատ էր տակաւին, ուրպէս հանՃարեղ էր և զարժանն քննէր. որով և այնպէս իսկ շինջոյց զցասումնն։ Զի որպէս գիւրաւ[2] բորբոքեալ եղև, նոյնպէս և գիւրաւ շինջուցեալ։

«Օ այս ասացեալ արձակեաց զժողովն»։ Տեսանես զիարդ՝ ՃԾ տեղի տալով փորձութեանցն գալ՝ի վերայ առ՝ի յարուցանել արիս, և հմուտս գործել զաշակերտսն և ուժգնագոյնս առնելով՝ի նոյնն։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Օյ և մեք մի՝ի վայր անկցուք՝ի փորձութեանցն հատանել, զի նա տացէ զօրութիւն հանդուրժելոյ։ Ոչ ինչ այնպէս սիրելիք առնէ և՝ի միասին կապէ և ջղջէ[3] զանձինս հաւատացելոց որպէս նեղութիւն։ Նա և

[1] Մին աղիւս և միան աղաղակի բաղխեալ։ Էմ։

[2] Միան գի-բոբ-բոքեալ։ գի-բաղքէ։

[3] Ի մի օրինակն ևեթ կայ՝ Ե

գիւրալուրս կազմէ զվշտացեալսն 'ի լսողութիւն ածայ-
ին բանին. զի 'ի հանգստի գոլով տաղտկանան 'ի լսել.
իսկ 'ի նեղութիւնս բազում յօժարութիւն լսեն։ Եւ թէ
ասես՝ թէ Հրեայքն զիարդ ոչ լսէին. 'ի կարձմտու-
թէն։ Նախ զի տկարք էին. երկրորդ զի բազում էր
վիշտն։ Այլ ասա զչափաւորէ 'ի բանս. զի նեղութիւնն
յիմաստասիրութեան յարուցանէ զնեղեալն, իսկ հան-
գիստ 'ի խայտառակութեան գրգռէ։ Եւ նկարեա տունս
երկուս, մին սգոյ և միւսն հարսանեաց. և դարձեալ
բանտ և տեսարանք. և գտցես զմին լի ամենայն հա-
մբաստութիւն և զմիւսն լի ամենայն անկարգութիւն։

։ Միւսն դի լոքաւոր է բանս։

ՃԱՌ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԻՈՐԴ

«Լ՚Ի յետ դադարելոյ ամբոխին կոչեաց Պաւղոս զաշակերտսն և մխիթարեաց »։ Պարտ իսկ էր լինել բազում մխիթարութեանն ի խռովութենէն յայնմանէ. զոր և բաւականապէս արարեալ Պաւղոս և այնպէս արծարծեալ զհոգիսնոցա,ողջոյն ետև ելեալ գնաց՝ի Մակեդոնիա։ «Եւ շրջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ և ընդ երկար բանիւ վարդապետութեամբ մխիթարեալ զնոսա՝ եկն յԵլլադա»։ Տես յամենայնի՝ի ձեռն բանին զամենայն ինչ ուղղեալ քան թէ՝ի ձեռնն՝նշանաց։

ԵՓՐ. «Իսրև արար անդ ամիսս երիս, եղև նմա դաւ՝ի Հրէից, մինչդեռ կամէր ելանել յԱսորիս. խորհուրդ կալաւ դառնալ՝ի Մակեդոնիա»։ Քանզի նենգեցին Հրեայքն՝ի վերայ նորա, կամեցաւ գնալ յԱսորիս, և դարձոյց զնա Հոգին՝ի Մակեդոնիա։

ՈՍԿ. Լ՚ալզի ցուցանէ մեզ ստէպ ստէպ զնա փութացեալ յԱսորիս, որոյ պատճառն եկեղեցին էր, որ անդ և յԵրուսաղէմ մեծ գոլով. բայց սակայն արգելոյր զնա փափաքն որ վասն ուղղութեանն այլոց։ Բայց ահա դարձեալ հալածեալ՝ի Հրէիցն որ յԵլլադա՝ եկեալ լինի՝ի Մակեդոնիա։ «Եւ երթային ընդ նմա մինչև յԱսիա Սոսիպատրոս Պիւռիա բերիացի, և՝ի Թեսաղոնիկեցւոց Արիստարքոս և Սեկունդոս և Դայիոս դերբացի և Տիմոթէոս, և ասիացիք՝ Տիւքիկոս և Տրոփիմոս. սոքա յառաջեալ մնային մեզ՝ի Տրովադա»։ Յառաջագոյն երթեալ պատրաստէին զՀանապարհս նորա. այսինքն զգուշացուցանէին զեկեղեցիսն կազմել զոր ինչ միանգամ պարտ էր ուղղել զբարեկարգութիւնս նախ քան զգալ նորա. զի ոչ փոքր ինչ էր երկիւղն՝ի Հայաստանեայս նորա, որ ընդոստուցանէր զայնոսիկ՝ որ հանդերձեալս էին ընդունել զգալուստ նորա։ Լուր նմին իսկ. «Գուցէ,

ասէ, եկիցէ՛ զանիցէ՛ զնեզ որպէս ոչ կամիմ, և զանիցիմ ձեզ որպէս դուք ոչ կամիցիք»։

«Յե մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակեր-ացոյ՝ի Փիլիպպեայ, և եկաք առ նոսա՝ի Տրոադա մինչև աւուրս հինգ. անդ դադարեցաք աւուրս եօթն»։ Քանզի զոմանսն Թուի ինձ եթէ փութայր առնել՝ի մեծագոյն քաղաքն փիլիպպեցւոց, ուր սքանչելեայն իրք որ ըստ բանտին էր՝ եղև։ Այս երբորդ անգամ գալուստ նորա՝ի Մակեդոնիա։ Եւ քանզի բազում լաւութիւն վկայէ զփիլիպպեցւոցն, վասն որոյ և անդանօր զաւուրս ոմանս դեգերեալ լինի. իսկ հասեալ՝ի Տրոադա՝ դադարէ զաւուրս եօթն։

«Յե յաւուր միաշաբաթու մինչդեռ ժողովեալ էաք բեկանել զհացն, Պաւղոս խօսէր ընդ նոսա զի գընալոց էր՝ի վաղիւ անդր, և յերկարեաց զբանն մինչև՝ի մէջ գիշերին»։ Արդ զի աւուրքն պենտեկոստէից էին յայնժամ, յայտ է. բայց տես թէ որպէս ամենայն ինչ վարկպարազի է համաբեալ առ քարոզութիւն։ Եւ քանզի կիւրակէ էր, մինչև՝ի մէջ գիշերին, ասէ, խօսեցաւ. այլ և զգիշերն իսկ զամենայն՝ի վարդապետութիւն ծախեալ. քանզի ինդիր ինչ բանի՝ի մէջ անկեալ յերկարաձգեաց զվարդապետութիւնն. զի այնպէս և ոչ գիշերի դադարէր երբէք, այլ յայնժամ մանաւանդ վարդապետէր և առ նոյն իսկ ընթրեացն ժամու։ Եւ տես թէ որպէս և սեղանոյն Պաւղոսի հաղորդք էին ամենեքեան. ուստի Թուի ինձ և առ սեղանոյն նստեալ և առնէր զվարդապետութիւն։ Ովերանելի ընթրեայն և մեծի ուրախութեան. զմըտաւ ածէք ինձ, իմ իմիք նման էր տուն այն, ուր լապտերքն էին և բազմութի ժողովրդն. յորում և Պաւղոս՝ի մէջ նոցա գոլով խօսէր և վարդապետէր. յորում և առ պատուհանսն իսկ բազումք հասեալ լինէին, զի տեսանիցեն զեղեալսն և լսիցեն զձայն երկնաւոր փողոցն, և հայեսցին զզուարթ և զուրախաբար զինդալի և զհրեշտականման երեսն զայն։ Եւ ընդէ՞ր՝ի գիշերին զբանն խօսէր։ Զի հանդերձեալ էր՝ի վաղիւն ելանել անտի, և այնուհետև այլ ոչ լինէին տեսանել զնա, զորս որպէս տկարագոյնս գոլով հաստատէր։ Եւ զի բազում էր հեշտութի լսո-

զայն առ 'ի լուրն, և յորժամ հատուցած տայր բանին՝ նորա պատճառաս տային յերկարելոյ յօժարութիւն. և պղերգացելոցն սաստէին մանաւանդ զի լուիցէն զձայնն Պաւղոսի։ Վասն այնորիկ և ոմն մեռեալ իսկ եղև. քանզի հնարեցաւ բանսարկուն տրտմեցուցանել զնոսա 'ի տօնին, սակայն ոչ կարաց։

ԵԹԷ. Վասնզի խօսելով Պաւղոսի յառաւօտէ մինչև 'ի մէջ գիշերին, ննջեաց պատանեակն և անկաւ յերից աստիճանաց՝ զի նստէր նա անդ՝ և աւանդեաց զոգին։ Եւ էջանկաւ Պաւղոս 'ի վերայ նորա, և առ կեցոյց զնա ըստ որում պատմէ. «Էին, ասէ, լապտերք բազումք 'ի վերնատանն՝ ուր էաք ժողովեալ, և նըստէր ոմն երիտասարդ Եւտիքոս անուն 'ի վերայ պատուհանին և նիրհէր 'ի քուն թանձրութեանէ. և 'ի խօսելն Պաւղոսի յաճախ՝ ընկղմեալ 'ի քնոյ անտի անկաւ յերրորդ դատիկանէն 'ի վայր և բարձաւ մեռեալ։ Եւ իջեալ Պաւղոս անկանէր զնովաւ, առնոյր զնա ընդգիրկս և ասէր. մի խռովիք, զի ոգի սորա 'ի սմին է. և էլ երեկ զՀայն և ճաշակեաց. և բազում ևս խօսեցաւ մինչև ցառաւօտս»։

ՈՍԿ. Արդ տես ինձ զտեսարանն և ժողովարանն թէ ուրպէս էր 'ի միասին եկեալ, և զնշանն թէ որպիսի։ Ի պատուհանի էր նստեալ 'ի տարաժամ գիշերին. այնչափ էր փափաք լսողութեանն։ Արդ ամաչեսցուք զայսոսիկ լսելով։ Ամլ Պաւղոս, ասէն, յայնժամ խօսէր։ Ամսայուք՝ թէ մանաւանդ ոչ յայնժամ և ոչ այժմ Պաւղոս, այլ Քն որպէս անդ՝ նոյնպէս և աստ. բայց ոչ օր լսէ և կամ 'ի միտ առնու։ Ոչ պատուհան այժմ, ոչ քաղց, ոչ քուն թախանձէ. այլ սակայն ոչ փափաքանօք և ջերմութիւք լսեմք, ոչ անձկութիւն տեղոյ 'ի ոչ այլ ինչ այսպիսեացս և ոչ մի։ Եւ այս իսկ է սքանչելի, զի համբակ գոլովոչ լինէր պըղերգացեալ և 'ի քնոյ տագնապեալ, բայց ոչ թողեալ և 'ի բաց կացեալ. նա և ոչ զարհուրեցաւ 'ի վշտէն, զի մի անկանիցի. ուր և ոչ 'ի պղերգութէ ինչ նիրհեաց, այլ 'ի ձեռն բնական կարեացն։ Եւ դու միտ դիր, զի այնպէս ամենեքեան եռացեալք էին յօժարութիւք, յոր և յեռաձեղուանն էին խտացեալք թանձրութիւք, և զի դեռ եկեղեցի ոչ էր անդ։

Այ զարհուրելի, ասէ, զի հոգի սորա 'ի սմա է։ Ոչ ասաց թէ մեռաւ՝ բայց յառնէ, զի ես յարուցանեմ զդա. այլ միայն զվախթարական զբանն ասաց՝ թէ հոգի սորա 'ի սմին է։ Ո՛վ մեծի խնամարհութեան և աւանց հպարտութեան հոգւոյն. զի միանգամայն ընդ մըխիթարական բանին զնշանսն որ եղև յայնմ երեկոյի՝ ամենեին յիշելիք առնելովնոցա, այնու հետև բեկեալ զհայն Ճաշակեաց, և այլ ինչ հատուած ոչ էր բանին և ոչ խափանեաց։ Տես զընթերիսն առանց յաւելուածոյ. վասն որոյ և խօսէր մինչև յառաւօտ, և ապա էլ և գնաց։ Մի՞թ դիր թէ օրպէս զցայգն արթնութիւն անցուցանէին. զի այնպիսի էին սեղանքն՝ պարկեշտութիւն և լոկ. որպէս զի Ճաշակեալ դարձեալ 'ի բաց առնել լսողացն, և 'ի նոյն իսկ 'ի սեղանն յաւէտ առ լսողութիւն 'ի Ճահ գալ։ Եւ զանազանիմք 'ի շանց և 'ի խոզից, ասա ինձ. տեսանէք որպիսի և որչափ է տարբերութիւն մեր 'ի նոցանէ։

«Այլ ածին զպատանին կենդանի, և մխիթարեցան ոչ սակաւ»։ Վայելչապէս. զի կենդանի զհամբակն ընկալան և զյարութիւնն տեսին, և այնպիսի նշան եղև։ Արդ 'ի բազում տեղիս Պաւղոս յաշակերտացն մեկնեալ լինի. զի աւասիկ դարձեալ նա ընդ ցամաքն հետի գնացեալ լինի։ «Իսկ Ղուկաս և որ ընդ իս՝ մըտեալ 'ի նաւ, ամբարձաք յԱսոն. և անտի ակն ունէաք միւսանգամ առնուլ զՊաւղոս. զի այնպէս պատուիրեալ էր, մինչ ինքն զցամաքաւն երթալոց էր. և իբրև դիպեցաւ մեզ յԱսոն, առեալ զնա եկաք 'ի Միտիլինէ»։ Արդ 'ի Թեթևագոյնն գնոսա յորդորելով, և զխստագոյն աշխատութիւնն ինքն ընդունելով հետի գնացեալ լիներ համանգամայն և բազում ինչ անօրինելով կրթելով զաշակերտսն և խրատելով զնոսա մեկնելոյն յիւրմէ։

«Եւ անտի նաւեալ, ասէ, 'ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քիայ, և 'ի միւս օրն հասաք 'ի Սամոս, և անտի 'ի Տրոգիլոն, և 'ի վաղիւ անդր եկաք 'ի Մելիտոն. զի 'ի մտի եդեալ էր Պաւղոսի նաւել առ Եփեսեաւ»։ այսինքն նաւելով զանց առնել ընդ Եփեսոս։ «Որպէս զի մի լցցի նմա ժամանակ ինչ յամել յԱսիա. այլ փութայր զի թէ հնար ինչ իցէ նմա,

զօրն պէնտէկոստէից երթալ Յերուսաղէմ »։ Ընդ-
էր կարգէ ասա Դուկաս թէ ուր էկին կամ ուր գնա-
ցին։ Վայելչասէս զի ցուցցէ մեզ զՔանն Պաւղոսի
և զփոյթն, եթէ ուր զտեղի առէալ յամէր, և կամ
ընդ որ կողմամբ նաւէլով զանց առնէր։ Եւ զպատճա-
ռըս չմոռանէլոյն յԵփեսոս յայտնէ. զի մի լուցի նմա, ա-
սէ, յամէլ յԱսիա։ Քանզի եթէ անդանօր հասեալ
էր, ոչ էր հնար զանց առնէլ որպէս խորհէալն էր. զի
ոչ կամէր տրտմեցուցանէլ զայնսոսիկ՝ որ աղաչէին զնա։

«Եւ փութայր, ասէ, զօրն պէնտէկոստէից առ-
նէլ Յերուսաղէմ »։ Եւ զինչ էր փոյթ և վերացու-
թիւն՝ դիտմանն այնորիկ։ Ոչ վասն տանին ինչ, այլ
վասն բազմութենն անդր ժողովելոյ համանգամայն. զի
և այսու զՀրեայսն հաւատացեալս զիւրեաւ ածէր և
'ի փոյթ յորդորէր իբրև պատուէլով ինն զտանն. իսկ
զթշնամին ըմբերանէլով յամօթ առնէր։ Տեսանես
և մարդկապէս զնա շարժեալ. փութայր, ասէ, թէ
հնար իցէ. զի մի կարծիցեն զնա 'ի վեր գալ քան
զնութենն մարդկան, տեսանէլով զնա և փութացեալ
և ոչ հանդիպեալ բազում անգամ։ Զի նոքն և սքան-
չելի արքն այնոքիկ նոյն բնութենս մերոյ հաղորդք էին,
բայց կամաց ոչ էս. վասն որոյ և բազում շնորհս յոյ
յանձինս իւրեանց բարձեալ բերէին։

Տես ահա զՊաւղոս թէ որչափ և յանձնէ իւրմ-
անօրինէ. զի մի, ասէ, տացուք հատուած կամեցո-
ղացն տեսանել և օգտիլ 'ի մէնջ, և մի յամէլոցն բիծ
ընկալցի պաշտօնս և փոյթս մեր։ Ահա կենցաղ ան-
հասանելի, և դարձեալ զինչութենն ըստ ամենայնի. զայս
ինչ տնօրէնութիւն լինի ասացեալ որով է իսկ 'ի ծայրա-
գոյն բարձրութենն հասանել. այսինքն բազում գթով
զինչմամբն։ Զի նա որ գերազանցեաց զամենեքումբք
զպատուիրանսն Քոյ ընդլ, այսպէս դարձեալ ամենե-
ցուն խոնարհագոյն էր՝ ընդ ամենայնի ամենայն լի-
նելով, զի շահեսցի զամենայն, և 'ի բազմապատիկ վիշ-
տս տալով զանձն համբերութիւն բազմաւ 'ի նեղուս
և յայլն։ Եւ այսու ամենայնիւ բազում է փափաք
նորա առ Քո. զի թէ այս ոչ իցէ, այլն պամենայն ա-

։ Միւսն Վերադարձեալ։

ւելորդ է. Նա և տնօրէնութիւն իրք պիտոյ է յառաքի-
նութիւն և անհաս կենցաղոյ . և այսպէս ընդ ամենե-
ցուն վերատգնել . ըստ որում ասէ. «Ո՞՞ոք տկարանայ
և ես ոչ տկարանալիմ» ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Զ անասցուք զի զայսպիսի բանս և մեք համարձա-
կեսցուք գոչել . ՝ի վերուստ ընկեսցուք զանձինս վասն եղ-
բարց . թէպէտ հուր իցէ կամ երկաթ , ընկեսա ՝ի
ներքս զանձնքս, սիրելի, զի թափեսցեսս զանդամն Քրիստ։
Աշակերտակից լեր Պաւղոսի՝ որ բազում չարչարանս
յանձն առ վասն թշնամեաց։ Զմահեաց Մովսէսի՝ որ
ետես զրկեալ զերդայրն և վրէժխնդիր եղև , և ՝ի մեծ
վիշտս զինքն արկ և ոչ ինչ զնոյ տրանջեաց ։ Վշտաս-
ջիր և դու , հեծեա և ցաւեա , թէպէտ և յիրաւի զոք
յոյ տանջեալ տեսցես . զի զայս սիրէ ՝ուծ . զայս ուղ-
ղեցին ՝ներքն՝ ցաւելով ընդ բեկումն Խարայելի ։ Եւ տես
զմնամոտ սէրն Պաւղոսի ՝ի՛ բան հնարի շահեցուցա-
նել զամենեսեան . զի թէպէտ գնալով ոչ գնաց յԵ-
փեսոս վասն վերոյ ասացեալ պատճառին , ապա այլ
ազգ տնօրինեալ զիրս նոցա, և ոչ թէ վասնոցին օգտի
պղերգանայ ինչ ։

ՃԱՌ ՔԱՌԱՄԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

«Ի Մելիտեայ յղեալ յԵփեսոս՝ կոչեաց զԵ-
րիցուսն եկեղեցւոյն. և իբրև եկին առ նա, ասէ ցնո-
սա. դուք ձեզէն գիտէք»։ Հայեաց ընդ մեծութի
գթոյ նորա, զի ոչ վասն առաջիկայ փութոյն զնո-
սա անտես առնէ. այլ կոչելով զիշխանս եկեղեցւոյն՝
'ի ձեռն նոցա ընդ եկեղեցւոյն խօսի։ «Դուք ձեզէն
գիտէք, ասէ, յօրէ յառաջնմէ յորմէ եկի յԱսիա ո՛ր-
պէս զամենայն ժամանակս եղէ ընդ ձեզ ծառայել
տեառն ամենայն խոնարհութիւ»։ Աւրժան է զարմա-
նալ, թէ ո՛րպէս Պաւղոս 'ի կարիս հարկի անկեալ ըզ-
մեծամեծս ասէ յաղագս անձին իւրում։ Որպէս Սա-
մուէլ յորժամ աւանդէր Սաւուղայ զիշխանութիւն,
առաջի նորա ասէր ցժողովուրդն. «Մի թէ առի ինչ
'ի ձէնջ. դուք վկայ էք և ա՛ծ». և Դաւիթ 'ի թերա-
հաւատէն Սաւուղայ ասէր. «Արածելով իմ զխա-
շինս հօր իմոյ, յորժամ գայր արջ կամ առիւծ, ձե-
ռամբ կալեալ բեկանէի զնոսա». և ինքն իսկ Պաւ-
ղոս այլուր. «Եղէ անզգամ, զի դուք ստիպեցէք»։
Այլ և ա՛ծ իսկ զսոյն առնէ, զմեծամեծս յաղագս
իւր ասելով. ոչ պարզաբար, այլ յորժամ յոմանց
թերահաւատեալ լինիցի. և զայս գտցես ընդ բազում
տեղիս. որպէս զայն՝ թէ «Ես եմ որ հաստատեցի զեր-
կիր և արկի հիմունս երկրի»։ Այսպէս և աստա-
նօր առնէ Պաւղոս. յառաջագոյն զնոսա ածէ 'ի վկայ-
ութիւն, զի մի կասկածիցես՝ թէ պաճուճանաց բանք
եւեթ իցեն։

«Դուք ինքնին գիտէք» ասէ. զնոսին իսկ զլսողսն
կոչէ վկայս ասացելոցն, իբրև ոչ արդեօք ստեալ ա-
ռաջի նոցա. այս է քաջութիւն վարդապետի, յորժամ
իւրոց ուղղութիւնցն վկայս զաշակերտեալսն ունիցի։
Եւ որ ինչ սքանչելին է, ոչ զմի օր, ասէ, կամ զերկուս
զայս առնելով կատարեցի, այլ զամենայն ժամանա-

կլս որ եղէ 'ի միջի ձերում՝ ծառայել տեառն ամենայն խոնարհութեամբ։ Մի՞ թէ դիր թէ զինչ առաւել պատշաճ՝ գոլ ցուցանէ իշխանաց. ատել զամբարտաւանութիւն, վասն զի հարկ է առաջնորդացն առանց բարձրամտութեան գոլ. զի խոնարհութիւն է հիմն և արմատ ամենայն բարեաց. որպէս և Քն ասէ. «Երանի՝ աղքատաց հոգւովք։» Եւ ոչ ասէ պարզաբար խոնարհութիւն, այլ ամենայն խոնարհութիւն. քանզի բազում տեսակք են խոնարհութեան, բանիւ, գործով, առ իշխանս, առ իշխեցեալս. և այլ բազում յեղանակս ասացէ որ խոնարհութեան։ Արդ են ոմանք որ ոչ են այսպիսիք. և զի մի թուիցին բարձրամտեալք, յառաջ արկանէն հիմն խոնարհութեան զլսողացն կարծիս լուծանելով միայն։ Իսկ սա ամենայն խոնարհութիւն եղէ, ասէ. և այժմ ոչ 'ի բարձրամտութիւն ասեմ զոր ինչ ասեմ։ Եւ որ և ս հանդարտագոյնն է՝ յաւելու. յամենայնի հաղորդութիւն բազմաւ եղէ ընդ ձեզ, ասէ, ծառայելով տեառն։ Հասարակաց առնէ զուղղութիւնն և ոչ ինքեան առանձինն։

Լ։ զինչ, ասէն, ունիք առ ինձ բարձրամտել։ Ասեմ, զի բազումք են 'ի մարդկանէ որ հպարտացեալ բարձրամտին առ նմա. իսկ նա և ոչ առ աշակերտսն եղև բարձրամտեալ։ Այս իսկ է ուղղութիւն վարդապետի, զի իւրոց ուղղութեանն զաշակերտսն համեմատս առնիցէ։ Այպա և յարութիւնն ասէ, ոչ փառաբաշխելով ինչ, այլ 'ի նայն գնոսա յորդորելով։

«Դաղումարտասուք, ասէ, և պէսպէս փորձութիւք որ դիպեցան ինձ 'ի նենգութեաց Հրէից»։ Տեսանեա՞ զի վշտանայ և ցաւագնի վասն եղելոցն՝ տեսանելով զանհաւատութիւն նոցա։ Բայց ասա և զանյիշաչարութիւն թուի յայտ առնել. քանզի յոյժ ախտացեալ լինէր վասն կորուսելոցն՝ որ նենգութիւս առնէին առ նմա։ Նա և խնդայր և ս, զի յայնմ դաշնէ էր՝ որ խնդային, զի վասն անուանն Քոյ արժանի եղէն անարգելոյ. զոր և ինքն ասէ. «Այժմ խընդամ 'ի չարչարանս իմ որ վասն ձեր է»։ և դարձեալ՝ թէ «Այժմանայն յաձախութիւն թեթև նեղութիւս մերոյ 'ի յաւիտենական առաւելութիւն զմեծութիւն փառացն գործէ 'ի մեզ»։ Այլ զայսոսիկ թեթև նե-

զութիւն ասէ խոնարհելով. և ասա ցուցանէ զօրութիւն իւր, և ոչ այնչափ զօրութիւն որչափ զհամբերութիւն։ Զարաշար ախտացեալ լինէի, ասէ. այլ ձեռք հանդերձ. և որ դժուարին էր, 'ի ձեռն Հրէից՝ ասէ։ Աւյսու զսէրն իւր եդ և զօրութիւն։

Տես աստանօր պատկեր նկարագրիր վարդապետութեան. և զինչ այն. «Որպէս ոչ ինչ զանգիտեցի, ասէ, յօգտակարացն չպատմել ձեզ»։ Ցուցանելով այսու՝ թէ առանց մխիթարանաց էր և առանց դանդաղութեան և լի պատշաճաւորօքն։ Քանզի է ինչ որ ոչ է պարտ, և ոչ կարօտանայր ուսուցանել. զի որպէս թագուցանելն զպիտանացու իրս մխիթարանաց է, նոյնպէս և զամենայն ասել տարտամութեան է. սմին վասն յաւել զօգտակարսն։ Եւ ոչ ասացի միայն, ասէ, այլ և ուսուցի. զի և ոչ զբանս զայսոսիկ յանձնէ 'ի բաց եդի։ Եւ զի զայս իսկ ցուցանէ, տես զինչ ասէ. «Պատմել ձեզ և ուսուցանել ձեզ հրապարակաւ և առանձին»։ Աւյսու զբազում տառապանս իւր և զյոլով փոյթն և զյօժարութիւնն ցուցանէ։

«Տալ վկայութիւն, ասէ, Հրէից և հեթանոսաց»։ Յայսմանէ ուսցուք և մեք, զի թէպէտ և ոչ ինչ շահ ցուցանեմք, սակայն ասել պարտ է. զի վկայութիւն տալն այս իսկ է, յորժամ առ այնոսիկ խօսեացուք՝ որ ոչ առնուն 'ի միտ։ Վկայեցուցանեմ, ասէ Մովսէս, զերկինս և զերկիր. և ասա Պաւղոս՝ թէ «Վկայութիւն տալով Հրէից և հեթանոսաց զապաշխարութիւնն որ առ Ած»։ Զի՞նչ է արդեօք զոր վկայեցուցանես։ Որպէս զի կենաց ուղղութիւն և բարեաց գործոց փոյթ առնիցեն, և զղջացեալ 'ի գործս իւրեանց եկեսցեն առ Ած։ Զի և ոչ Հրեայքն իսկ գիտէին զԱծ որպէս պարսն էր գիտել վասն գործոց իսկ իւրեանց վատթարաց և վասն զՈրդին Այ ոչ գիտէին, որով է և զՀայր գիտել. զոր և ասէ առ նմին. «Եւ զհաւատսն որ 'ի տէր Յս Քս»։ Արդ վասն այսորիկ ասեմ զայսոսիկ, զի զոսոյն իսկ զայսոսիկ վասն ոչ հաւանելոյն ունիմ զծապէս ամբաստանել։

Եւ քանզի յառաջագոյն ահաբեկեաց զնոսա ասացելովքս, ապա 'ի վերայ էած. «Եւ արդ աւասիկ ես կապեալ Հոգւովն երթամ յԵրուսաղէմ. և որ

ինչ անգ ընդ իս անցանելոց իցէ, չգիտեմ։ Վասն էր ասէ զայս. զի կամի զնոսա պատրաստս գոլ հանապազ 'ի նոյն, այսինքն վշտաց ակն ունել հանապազ և հոգւոյն հպատակ կալ։ Ապաքէն այսպէս գնաս անդ իբրև անդէտ. քաւ լիցի. այլ գիտեմ զի առաձեռն նեղութիւնս ածեալ լինիմ։

«Զանգի Հոգին սուրբ ըստ քաղաքաց քաղաքաց վկայէ ինձ և ասէ, թէ որպիսի դժուար կապանք և նեղութիւք ինան քեզ»։ Բայց զայս ասէմ, զի և դուք միտ նեղութիւն սպասել ակն ունիցիք, թէպէտ և առձեռն ոչ իցէ։ Եւ զի մի կարծիցէք ողբալով իմ զայսոսիկ ասել, «Զի ոչ իւիք համարիմ զանձն իմ պատուական որպէս կատարել զընթացս իմ ուրախութիւն և զպաշտօնն զոր առի 'ի տեառնէ Յեսու»։ Տեսանեմ, զի ոչ պարծանաց և ոչ ողբոց են բանքս այսոքիկ, այլ խոնարհութիւն և խրատելոյ զնոսա և իւր չարչարակցելոյ նոցա յայնոսիկ՝ որ ինչ լինելոց էին, այսինքն 'ի գալոյ ծանուցեալն՝ գայլոց և զթիւրն խօսողաց։ Եւ ոչ ասաց թէ նեղիմք և վշտանամք, բայց պարտ է համբերել. և ոչ մեծարելով ինչ զանձն իւր խօսի, այլ ուսուցանելով զնոսա 'ի ձեռն առաջնոց բանիցն զխոնարհութիւն իւր և զօրութիւն և զհամարձակութիւն. այսինքն ոչ սիրեմ զանձն իմ և ոչ նախապատուեմ, քան թէ կատարել զընթացս իմ ուրախութիւն և ըզպաշտօնն Յեսի։ Զայսոսիկ ասելով յարուցանէ զանձինս նոցա, և հաւանեցուցանէ մի միայն ոչ լինել փախստական, այլ և արիաբար կրել զամենայն. վասն որոյ և ընթացս զպաշտօնն կոչէ. միոյն ցուցեալ ըզպայծառութիւն և զփոյթ ընթացիցն՝ վասն որոյ և ընթացս ասէ, և միւսոյն զպարտս պաշտամանն։ Պաշտօնեայ եմ, ասէ, և զայսոսիկ ձեռիմ կատարել, և ոչ ինչ առաւել քան զայս խնդրեմ։

ԵՓՐ. Զի իբրև սկսաւ ասել՝ Ճշմարտիւ զինչ անցք անցանելոց էին ընդ նա Յերուսաղէմ 'ի քահանայից և 'ի դպրացն, բայց նա վասն սրբոցն որ էին Յերուսաղէմ՝ երթայր միխիթարել զնոսա, և դարձեալ զի ցուցցէ՝ թէ չարչարանք ոչ երկիցուցանեն ինչ զնա, զի ահա անսիղձ աներկիւղ առանց զանգիտելոյ ընդ առաջ փութացեալ երթայր ընդ-

գէմ նեղութեանց , բայց սակայն յաւել և ասէ՝ թէ չէ համարեալ ինձ անձն իմ պատուական քան զվաստակս աւետարանին կենաց և քան զպաշտօն աւետարանին քանի որ 'ի տեառնէ մերմէ ընկալայ . այսինքն զի վկայեցից Հրէից և հեթանոսաց ։

ՈՍԿ . ԼՀ տես՝ ոչ ասաց քարոզել կամ ուսուցանել , այլ վկայ լինել աւետարանի ընդհանուր ։ և այսու միութարէ զնոսա , զի մի ինչ ցաւագնեալ լիցին 'ի վիշտս չարչարանաց անկանելով ։

ԵՓՐ . ԼՀ քանզի հանդերձեալ էր ծանրագոյն ինչ ասել՝ թէ սուրբ եմ ես յարենէ ձեր ամենեցուն, զի ոչ ինչ լիմանցն պակասեցուցի խրատուց , և զի զամենայն նեղութիս համբերեցի փոխանակ աւետարանին զոր աւետարանեմ ձեզ . զի ոչ եկի յայլ խորհուրդ , այլ յայս միայն՝ զի մրցելով իմ ընդ մահ և ընդ կեանս զօգուտն ձեր գուշակեցի ձեզ ։

ՈՍԿ . ԼՀ զի հանդերձեալ էր այսու 'ի վերայ նոցա ընկենուլ զամենայն ծանրութիւն և զբեռն, վասն որոյ յառաջագոյն կակղէ զմիտս նոցա ասելով. «Եւ արդ աւասիկ գիտեմ ես՝ թէ ոչ և ես տեսանելոց էք զերեսս իմ դուք ամենեքեան , յորս շրջեցայ քարոզել զարքայութիւն այ» ։ Կրկին է մխիթարութիւն. զի զորս ոչ գիտէին, յայտնէ նոցա՝ թէ ոչ և ես տեսանելոց էք զերեսս իմ. և զերեսն ասելով ոչ տեսանել նոցա, յայտ առնէ՝ թէ հոգւով և մտօք ընդ ձեզ եմ ։ Եւ զի վայելչապէս վկայութիւն դնել ձեզ ասացի, ասէ, զի ոչ և ես եմ հանդերձեալ գալ առ ձեզ ։

«Վասն որոյ վկայութիւն դնեմ ձեզ յաւուր յայսմիկ զի՝ սուրբ եմ ես յարենէ ամենեցուն ձեր . քանզի ոչ խորշեալ վերհրեցայ ինչ պատմել ձեզ զամենայն կամն այ» ։ Տեսանես թէ որպէս երկեցուցանէ, և մանաւանդ գրաւէ զնոսա 'ի հարկ, յաշխատութիս տալ զանձինս և 'ի նեղութիս , և ամիսոիս լինել յամենայն զբաղմանց ։ ԱՀյլ ցուցանէ և հարկ զիրսն համարել, այսինքն խրատել և ոչ երբեք լռել յասելոյ ։ ԱՀպա ուրեմն որ ոչ խրատէ հանապազ , յայտ է թէ պարտական գտանի արեան նոցա, այսինքն մահուանցա ։ Զոյն իսկ զայս և ցմարգարէն ասէր ՀԾ՝ թէ «Զարիւնն 'ի ձեռաց քոց խնդրեցից» ։ Ցուցանէ այ-

սորիւք, զի թէ զոր ինքն ասաբ և նորա զայն ոչ առ-նիցեն, պարտապան արեան ինքեանք գտանիցին։ Եւ թուի պատասխանի նոցա տալ զասելն՝ թէ ոչ երբեք հեղգացայ կամ դանդաղեցայ չպատմել ձեզ զամենայն կամն ՚ի։ Յայտ է զոր յաղագս հասեալ ի-բացս որ գան ՚ի վերայ մեր կամքն ՚ի, որովք հնարքի ուղղել զմեզ առ ՚ի փրկութիւն նեղութիւն կամ ընդարձակութիւնք. որ թէպէտ մի են կամքն ըստ դիտողութեան, այսինքն ՚ի փրկութիւն մեր, այլ զանազանեալ են ըստ տեսակի. վասն որոյ և զամենայն կամս, ասէ, զի՝ պատմեցի ձեզ, և վասն Հնմարիտ առաքինութեան զոր պարտ է ուղղել մեզ ըստ կամացն ՚ի։

ԵՓՐ. Յայց ասա և առաւել զարհուրեցուցանէ զնոսա և ՚ի զգուշութիւն ածէ. զի առ փորձութիւնն հանդերձեալս՝ որ յետ մեկնելոյ նորա էր գալոց, աբիաբար զամենայն զնորայսն յանձին բերիցեն զքաջութիւն։ Սմին վասն և ասէ անդէն. «Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ տեառն զոր ապրեցոյց արեամբն իւրով»։

ՈՍԿ. Լրկուս իրս հրամայէ նոցա. այսինքն և անձանց հոգ տանել առ ՚ի փրկութիւն, և ժողովրդեանն. զի վարդապետի ոչ զայլս միայն ուղղել շահ ինչ ունի։ «Երկնչիմ, ասէ. գուցէ որ այլոցն քարոզեցի, ես ինքն անպիտան գտանիցիմ»։ Այլ և ոչ անձին իւրում միայն փոյթ առնելն ունի ինչ փրկութիւն. զի ինքնասէր է այնպիսին, զանձին միայն խնդրէ զօգուտ, նրմանեալ այնմ՝ որ զքանքարն յերկրի թագոյց։ Քանզի ոչնախապատուելի է մերս փրկութիւնքան զՀօտին. այլ յորժամ մեզ ինքեան հոգասցուք, յայնժամ և զՀօտին փրկութիւն խնդրեսցուք։

«Յորում եդ, ասէ, զձեզ Հոգին սուրբ»։ Տեսանէս՝ առ ՚ի Հոգւոյն ունել զձեռնադրութիւն. հովուել ասէ զեկեղեցի տեառն։ Աճառասիկ և այլ իմն կարևոր և մեծ, զի տեառն է եկեղեցին՝ ասէ։ Եւ երկրորդ փութոյ կարիս. «Զոր ապրեցոյց արեամբն իւրով» ասէ. ցուցանէ յոյժ մեծ և պատուական զիրսն. զի ոչ եթէ յաղագս փոքու իմն է տարդնապս, այլ վասն այնմիկ՝ յաղագս որոյ տէրն և զարիւնն

իւր ոչ խնայեաց։ Բայց այսու և մեծապէս մխիթարէ զնոսա. զի թէ իւրով արեամն ապրեցոյց զմեզ, ասէ, ապա և պաշտպան և փրկիչ մեզ լիցի առանց պատճառաի։ Եւ արդ նա զի զՔրիստոսին հաշտեցուսցէ՝ զարիւնն եհեղ, դու և ոչ զարաբեկանին լեալս կամիս հոգալ և պահել։

ԵՓՐ. Լոյս զի հովիւս կարգեալս 'ի Հոգւոյն ասաց զնոսա, որպէս տէրն զՊետրոս, վասն որոյ թէպէտ զստուգութիւն՝ առաքելոցն մարգարէանայ, որ հանդերձեալ լիցին աստանդել զՔրիստապարՀն կենացն, սակայն զկարգ ասացելոցն պահելով ՀաՀողակի զՀետ բերէ. «Քանզի գիտեմ ես, ասէ, թէ յետ իմոյ ելանելոյ գայցեն գայլք յափշտակողք՝ որ ոչ խնայեսցին 'ի Հօտդ»։ Դարձեալ յայլ կողմ աւասիկ դարձուցանէ, և հրամայէ արթուն և պատրաստ կալ և երկնչել յիրացն որ լինելոյ են. որպէս յորժամ ասէ՝ թէ ոչ է մեզ կռիւ ընդ արիւն և ընդ մարմին, այլ ընդ այս խնչ և ընդ այն։ Եկեսցեն, ասէ, գայլք ծանուցանք յետ իմոյ գնալոյս։

ՈՍԿ. Ո՛վ մեծի վտանգիս. զի աւասիկ կրկին են չարիքդ, զի դու մնա ոչ լինիցիս և գայլքն 'ի վերայ հասանիցեն։ Աբդ ընդէր գնայցես՝ զայս յառաջագոյն գիտելով։ Զի Հոգին, ասէ, ձգէ զիս. կապեալ Հոգւոյն երթամ, ասէ։ Եւ արդ զինչ այնչափ վարկանես զանձն քո. զի թէ գնայցես՝ մեռանիցիմք։ Ոչ զայս ինչ ասեմ, ասէ, թէ հեռանալս իմ զայս գործէ։ Այլ զինչ. «Յարիցեն 'ի վերայ գայլք յափշտակողք»։ Եւ ոչ ասաց թէ վասն իմոյ հեռանալոյն, այլ յետ իմոյ հեռանալոյն, այսինքն յետ իմոյ գնալոյն։ Եւ մանաւանդ և յայնժամ եղև այս մինչդեռ ինքն ընդ նոսա էր. բայց յետ այնորիկ կարի յոյժ։

Լոյս ապա որ ինչ դժուարագոյնն էր, յաւելու. և որպէս որ ինչ յետ Մովսէսի և Յեսուայ ասացաւ խոտորել ժողովրդեանն, նոյնպէս և անդ ցուցանէ։ «Եւ 'ի ձէնջ, ասէ, յարիցեն արք՝ որ խօսիցին թիւրս»։ Որքան ծանր և դժուարին են իրքն, յորժամ ազգական իցէ մարտն, որում մեծ ջան և առաւել արթ-

1 Մխան զպարիսն։

նութեն պիտոյ է յիրսդ. քանզի եկեղեցի է՝ որով մեծ իսկ է տագնապս, զի և արեամբ Քրիստոսի տէրն փրկեաց զնա. վասն որոյ ուժգին պարտ է մարանելոյ ընդդէմ յափշտակողացն և գայլոց։ Նա և կրկին իսկ է լինելոց մարտ, արտաքուստ 'ի գայլոցն և 'ի ներքուստ 'ի ձէնջ։

Այս և զպատճառն իսկ յաւելու. «Ձգել, ասէ, զաշակերտսն զէնի իւրեանց»։ Քանզի ոչ եթէ վասն այլոց իրիք եղեն ոմանք հերձուածք, այլ միայն վասն այսոցիկ՝ որով 'ի փառասիրութենէ և 'ի հպարտութենէ գային։ Եւ ոչ 'ի Կորնթոս միայն զայս առնէին, զի զաշակերտսն բաժանէին, այլ և յԱսիա։ Բայց զնփեսացիս ոչ այնպէս նախատէ գրելով առ նոսա. զի ոչ երբէք եղև հարկ և կարիս գրել ինչ. իսկ Կորնթացւոցն ասէր՝ թէ «Ոչ արգելան պարծանքս իմ 'ի կողմանս աքայեցւոց»։ Այլ զի օգտեն գայլքն, զինչ իցէ այսմիկ մխիթարութիւն՝ ասա մեզ։

«Այսն այսորիկ արթնեալ կացէք և յիշեցէք, զի զամս երկուս ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր որ 'ի ձէնջ»։ Տես թէ որքան գերազանցութիւն են եղեալքդ. արտասուօք, զցայգ և զցերեկ, և զիւրաքանչիւր որ։ Ոչ մեծութիւն հոգւոյն. զի ոչ թէ յորժամ զբազումս ոչ տեսանէր՝ յայնժամ խրնայէր յիրս առնելոյ և ասելոյ, այլ հանդերձ բազմօքն գիտէր և յաղագս միոյ անձին զամենայն ինչ առնէր։ Արդ այսպէս զնոսա 'ի միասին և հաւաքեաց և աբար մի եկեղեցի։ Շատ և բաւական են, ասէ, այսոքիկ յինէն ձեզ օրինակ լինել. զի զերկամեայ ժամանակ կացի միացի 'ի միջի ձերում, որով բաւականապէս հաստատեցայք, ասէ, և հզօրապէս արմատացայք։ Տեսանեմ զի արտասուքն վասն այնորիկ էին. զի յորժամ զզջանայցէ և ցաւագնի չարն, ցաւագնեա և արտասուեա դու, թերևս բեկեալ խոնարհի և 'ի միտ առնուցու և նա։ Որպէս և հիւանդք յորժամ տեսանիցեն զբժիշկս հաղորդեալ 'ի կերակուրս դեղոցն՝ և ինքեանք յորդորիցին, սոյնպէս և աստ յորժամ տապացեալն չարութեամբ տեսանիցէ զքեզ հաւաչելով, կակղանայ, զինքանէ. քաղցրանայ և 'ի մեծ առողջութիւն գայ հոգին։

«Ի տուէ և 'ի գիշերի, ասէ, ոչ դադարէցի արտասուօք խրատել զիւրաքանչիւր ոք։ Այսոքիկ Թերեւս վասն մեր վայելչապէս ասացեալ եղէն. և Թուի իսկ յատկապէս վասն վարդապետաց գոլ զանս, բայց է հասարակաբար և առ աշակերտսն. քանզի զինչ այլ ասէ, քան Թէ այսպէս՝ զոր այժմ լիսս տեսանէք առնել։ Ապա Թէ ոք ասիցէ, Թէ ես ասեմ իսկ և աղաչեմ և արտասուեմ 'ի տուէ և 'ի գիշերի՝ այլ աշակերտսն ոչ հաւանի, այլ վասն այսորիկ ասէ՝ Թէ վկայուցեալ դնեմ յաւուրս յայսմիկ, զի դու ուսանիցիս. զոր և ինքն ասէ՝ Թէ սուրբ եմ ես յարենէ ամենեցուն, զի ոչ դանդաղեցայ պատմել ձեզ ըզկամն այ։ Զի այս իսկ է վարդապետի, քարոզել և ուսուցանել, ոչ դադարել ցցայգ և ցցերեկ. իսկ յոչ հաւանել լսողաց՝ զհետ գայ այն՝ Թէ սուրբ եմ ես յարենէ ամենեցուն, զոր պարտն էր առնել՝ արարի։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Լաւդ Պաւղոսի որ զամենայն ինչ վասն փրկութեան աշակերտելոցն համբերէր, պատշաճ էր զայս ասել՝ Թէ սուրբ եմ ես յարենէ ամենեցուն. այլ մեք զի բիւրս գիտեմք զանձանց, զայս ոչ համարձակիմք ասել, այլ զմոլեսին՝ Թէ ինձ բարկացաւ տէր վասն ձեր։ Զի ահաւասիկ զօրհանապազ պատառեալ լինիմ գոչելով, 'ի բաց կացէք 'ի տեսարանաց, յերդնելոյ, յագահելոյ. և ոչ լսեն, կամ ծիծաղին զմեզ։ Եւ հաւատացէք ինձ, զի վասն իմոյ փրկութեան թողեալ՝ զձերն ողբամ. զի զինչ յայս իցէ վարդապետի յորժամ հօտն ապականեալ իցէ, և զաւրդ կացցէ առաջի այ։ Նա Թէ և մաքուր իցէ յարենէ ամենեցուն, այլ և այնպէս զանբուժ տրտմութիւն կրիցէ. զի և հարք յաղագս մանկանց զանբժշկականն ախտացելոց խառվին և զնծին, Թէպէտ և ինքեանք ոչ լինին մեղադրեալք. այսպէս ամենայն ինչ դուք իմ էք։ Եւ եղիցի ձեզ ապրել, և ինձ հատուցանել վասն ձեր պատասխանի. զի և առ բազում սիրոյն որ առ ձեզ՝ ոչ հոգամ զի 'ի ձեռն իմ կեցիք, այլ զի կեցէք՝ 'ի ձեռն ում և իցէ։

ՃԱՌ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Լոր արդ յանձն առնեմ զձեզ ՝ այ և բանի շնորհայ նորա, որ կարողն է շինել և տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենայն»։ Զոր ինչ ՝ի թուղթսն գրելով առնէր Պաւղոս, նոյնպէս և խորհրդակցելով զողջաբական յորդորումն յաղօթս կատարէ. քանզի յոյժ երկիւղ էարկ նոցա ասելովն՝ թէ գայցէն գայլք յափշտակողք, զի մի առաւել զարհուրեցուսցէ զնոսա՝ ածէ ՝ի վերայ զմխիթարութիւնն։ «Եւ այժմ, ասէ, որպէս և հանապազ, յանձն առնեմ զձեզ ՝ այ և բանի շնորհայ նորա»։ Շնորհէն, ասէ, կեցուցանէ զձեզ Ստեպ յիշեցուցանէ նոցա զշնորհսն որով հասին ազատութիւն և կենաց. փութ ադոյնս այսու առնելովզնոսա իբրև պարտապանս, և հաւանեցուցանելով վստահանալ յայն՝ որ կարողն է վերըստին շինել, ցուցանելով թէ շինեալ եղէն Աստուծով։ Եւ ապա վերստին զհանդերձելոցն յոյսն յիշեցուցանէ. «Տալ ձեզ, ասէ, ժառանգութիւն ընդ սուրբս ամենայն»։ Որով և ուսուցանէ եւ՝ թէ պարտ է այնմ յուսով յարբարակից լինել սրբոցն։

Լայա դարձեալ՝ի յորդորումն ածէ զբանն ասելով. «Արծաթոյ կամ ոսկւոյ կամ հանդերձից ոչ ուրուք ՝ի ձէնջ ցանկացայ»։ Զարմանն ամենայն չարեաց ՝ի բաց խլէ, զարծաթասիրութիւնն։ Եւ ոչ ասաց թէ ոչ առի, այլ թէ ոչ ցանկացայ. և ոչ դարձեալ ասաց թէ ոչ ետուք, այլ թէ բնաւ իսկ ոչ ցանկացայ, զի մի թուլցի ՝ի չտալոյ նոցա գոլ չառնուն. և ոչ ասաց թէ ոչ և միոյ իրաց ցանկացայ ՝ի հարկաւորացն, զի մի դարձեալ համարիցին թէ չարախօսէ զնոցանէ։ Բայց զայն իսկ լինի նշանակեալ՝ի վերայ ածելովն զայն՝ որ յոյժ մեծն է քան զայսոսիկ չառնուլն, այսինքն զայլս ոմանս կերակրելն, և զայն յիւրական երկոց. զոր «Դուք ինքնին գիտէք, ասէ, զի զկիտս իմ և ո-

բաց ընդ իս էին՝ պաշտեցին ձեռքս այս. և զամենայն ինչ ցուցի ձեզ, զի այսպէս պարտ է վաստակել և դարմանել զՀիւանդսն։ Տես զնա զգործն 'ի կիր արկեալ ոչ պարզաբար, այլ բաղում աշխատութիւն. զի ոչ միայն զլինն, ասէ, այլև զորոց ընդ իսն էին զպէտսն լցի։

Ա. Յսպիսի փութով վաստակէր այր՝ որ 'ի տուէ և 'ի գիշերի քարոզէր, վարդապետէր, ուսուցանէր արտասուօք զիւրաքանչիւր ոք խրատելով։ Այլ և երկիւղ ևս արկանէ նոցա. զամենայն ինչ, ասէ, ցուցի ձեզ, և ոչ ունիք ապաւինել յանգիտութիւն, զի 'ի ձեռն գործոց տեսէք յիս և ծանեայք՝ թէ այսպիսի աշխատութիւն պարտ է գործել։ Եւ ոչ ասաց յամենայն ընչից գերադոյն լինել և թափուր, զի ոչ զօրեին առ այն. այլ զինչ. 'ի դարման և յօգուտ հասանել տկարաց, ասէ, և ոչ պարզաբար ամենեցուն։

Լ. Քանզի եցոյց համարձակութիւն առ վիշտսն որ 'ի գայլոցն, զախտակցութիւն առ հիւանդսն, զվարդապետութիւն համարձակութիւն, զխոնարհութիւն, զանստացուածութիւն. բայց այս իսկ քան զանստացուածքն լինել մեծագոյն է, 'ի չքաւորութիւն իւրական երկօք դարմանել զՀիւանդս. քանզի առ այնոսիկ որ ունէին ինչս, ասաց թէ՝ «Վաճառեա զինչս քո և տուր աղքատաց»։ Իսկ յորժամ աղքատ գոլով զնոյն առնիցէ, քան զամենայն այս իսկ է վերագոյն՝ յորժամ ոչ ինչ յումեքէ առնլով և զայլս ևս կերակրիցէ, զինչ այնմ հաւասար լինիցի։ Արդ միտ դիր առաքինութեանցն կարգի. առաջին աստիճան է 'ի բաց ընկենուլ զիւրսն. երկրորդ ինքեամբ բաւական լինել անձին իւրում. երրորդ և այլոց ևս մատակարարել. չորրորդ քարոզին և իշխանութիւն ունողին առնուլ՝ ոչ առնուլ. որպէս զի յոյժ քան զանստացուածն գոլ սա լաւագոյն է։ Այսպիսի իրօք, ասէ, օգնեսջիք տկարաց 'ի գործոց ձեռաց, քանզի յօտարաց ընչից տալ դիւրին է. սմին վասն յաւելու. «Ցիշել, ասէ, զբանն տեառն Յսի զոր ինքն իսկ ասաց. երանելի է մանաւանդ տալն քան զառնուլն»։ Եւ զի մի ոք կարծեսցէ զվերագոյն ասացեալն առ նոսա զբանն որպէս յինքեանէ օրէնս տալովնոցա, զի և յայլում տեղւոջ ասէր՝ թէ որպէս ունիքդ զմեզ ձեզ օրինակ, սմին վասն զառ 'ի

Քսակ ասացեալն երբեր 'ի վերայ ։ Իսկ եթէ աւետարանիչքն զայս չգրեցին , չէն ինչ զարմանք . քանզի բազում ինչ այն է զոր թողին և ոչ գրեցին , որպէս և ասէ իսկ Յովհաննէս ։ Իսկ Պաւղոս Հմամբակ առնոյր 'ի վկայութիւն զասացեալսն 'ի տեառնէ , զոր և գիտէր իսկ 'ի ձեռն Հոգւոյն զամենայն եղեալսն և զասացեալս . կամ թերևս 'ի բաղմապատիկ գրելոյ բանիցն այս յայտ լցէ ։ Եւ ոչ ասաց թէ չար ինչ է առնուլն , այլ թէ լաւագոյն ինչ է ոչ առնուլն ։

Եւ քանզի աղօթս առնէր վասն նոցա և ողբէր յորդորական բանիւ , ցուցանէ զնոյն և գործով . և տես . « Զայս իբրև ասաց , ասէ , եղեալ ծունր առ ծովեզերքն ամենեքեանքն՝ եկայ յաղօթս » ։ Ոչ հաբեւանցի զայս առնելով , այլ ընդերկարելով բազում զղջմամբ . և զայն առնէր առ 'ի միխիթարութիւն նոցա . նա և ասէրն՝ թէ յանձն առնեմ զձեզ ՝այ , բազում միխիթարութիւն էր ։ « Եւ բազում լալիւն եղև ամենեցուն . և անկեալ զպարանոցսն Պաւղոսի համբուրէին . մորմոքէին մանաւանդ 'ի վերայ բանին զոր ասէ՝ թէ ոչ ևս տեսանելոց են զերեսս նորա » ։ Ասաց՝ թէ գայցեն գայլք ծանուցեալք 'ի ձեզ . ասաց՝ թէ մաքուր եմ ես յարենէ ամենեցուն ձեր . բայց յաւէտ քան զամենայն այս իսկ 'ի տագնապի կացոյց զնոսա՝ ոչ ևս տեսանելն զնա . քանզի և այս իսկ առնէր զմարան դրժուարին ։ Տես զի այնպէս սիրէին զնա և այնպէս հիմնացեալք և հաստատեալք էին 'ի նա , զի ոչ տեւէին 'ի գթոյ նորա ժամանակաւ ։

« Եւ անկեալ զպարանոցսն նորա լային » ասէ ։ Լալն յայտնէ զտրամադրութիւն զթոյն առ նա , և զհաստատուն սէրն ցուցանէ . որպէս յարտասուէին Յեսի ասէին՝ տեսէք որչափ սիրէր զՂազար . իսկ զպարանոցսն անկանելն իբրու թէ յետին զուգախառն միաւորութիւնն հրաժարական ողջունիւն խանդաղատելով փարել զնովաւ , և 'ի բազում հրապարակաբանութենէն առաւել առնլով զսէրն և զփափաք նորա ։ Զի թէ մեր ըստ ժամանակի ինչ 'ի միմեանց մեկնելով հեծեմք և յոգւոյ հանեմք , և մանաւանդ գիտելով թէ դարձեալ ընկալցուք զմիմեանս , որչափ նոքա զվերջինն 'ի միմեանց անջատելով . և կարծեմ իսկ

թէ Պաւղոս ուժգին լացեալ լինէր։ «Եւ յուզարկէցին զնա 'ի նաւ անդր»։ Ի Ծովէզերին 'ի բաց կալուն ցուցանէին զբռնադատութիւն գթոյն և զիրացն անհնարութիւն, իբրու բռնի 'ի նմանէ մնալով. և յոյժ վայելչապէս, զի 'ի Ծովն մտանել նոցա չէր հնար։

«Եւ իբրև եղև մեզ, ասէ, ելանել և մեկնել 'ի նոցանէ, հանդէպ գնացեալ եկաք 'ի Կոս. և 'ի վաղիւ անդր 'ի Հռոդոս, և անտի 'ի Պատարա. և գըտեալ նաւ մի զի երթայր 'ի Փիւնիկէ; ելեալ 'ի նա գնացաք. և յայտ եղեալ Կիպրեայ, թողաք զնա 'ի ձախակողմն, նաւեցաք յԱսորիս և իջաք 'ի Տիւրոս, քանզի անդ էր նաւն թափելոյ զբեռինսն. և գըտեալ զաշակերտսն կացաք անդ զաւուրս եօթն, որք ասէին ցՊաւղոս 'ի ձեռն Հոգւոյն՝ մի ելանել Յերուսաղէմ»։ Զինչ այն՝ թէ հանդէպ գնացեալ եկաք 'ի Կոս. փոխանակ ասելոյ՝ թէ ոչ պատ առնելով եկաք և ոչ դեգերեցաք յայլ տեղիս, և ապա եկաք 'ի Հռոդոս և անտի 'ի Պատարա։ Տես զնա յոյժ փութացեալ և գտեալ նաւ մի զի երթայր 'ի Փիւնիկէ. թերևս զի յորսմ էին՝ զտեղն առնոյր անդէն 'ի Պատարա. սմին վասն և յայլ նաւ փոխադրեալ լինէին. և ոչ գտանելով նաւ 'ի Կեսարիա գնալով յոր փութայր, այլ 'ի Փիւնիկէ և 'ի Կիպրոս և յԱսորիս։ Իսկ թողուլն զԿիպրոս 'ի ձախակողմն՝ ոչ վայրապար է ասացեալ, այլ յայտ առնելով թէ և ոչ հուսալինել կամէր յԱսորիս. այնպէս փութայր։ Ապա կացեալ 'ի Տիւրոս զաւուրս եօթն առ եղբարսն, զի այնուհետև յորժամ հուսալ եղէն յԵրուսաղէմ, ոչ պէտք դարձեալ ընթանայր. որք ասէին ցՊաւղոս 'ի ձեռն Հոգւոյն մի ելանել Յերուսաղէմ։ Ապրդ մարգարէացան և նոքա յաղագս նեղութեան նորա և չարչարանաց. և այս 'ի Հոգւոյն անօրինեալ եղև ասել 'ի ձեռն նոցա, զի մի վայրապար կարծիցեն ասել Պաւղոսի զայնոսիկ իբրու բարուրք և յօրինուած բանի համարելով։

«Եւ իբրև եղև մեզ կատարել զաւուրսն, ելեալ գնացաք»։ Տես զՊաւղոս երբեմն հաւանեալ յորժամ Հոգին ոչ խափանէր. զի յորժամ ասացին մի տար զանձն քո 'ի թէատրոնն, ոչ եհատ, բաղում անձ-

գամ արտաքս հանին զնա և հաւանեցաւ. և դարձեալ 'ի ձեռն պատուհանի իջեալ վանդակաւ փախչէր։ Իսկ յորժամ բազում աղաչէին զնա այնոքիկ որք 'ի Տիւրոս և 'ի Կեսարիա և կապելով ևս բիւր դժուարինս կրել նմա յԵրուսաղէմ, նախ ասէին, և ոչ յանձն առնոյր. և մանաւանդ ոչ զդժուարինսն յանձանց ինչ ասէին, այլ զոր ինչ Հոգին ասէր յառաջագոյն։ Արդ եթէ Հոգին հրամայեր, ասէն, նա ընդեր հակառակէր։ Քանզի և ինքն ևս 'ի ձեռն Հոգւոյն գիտէր զամենայն. իսկ նոքա ոչ յոր ինչ Հոգին յորդորէր զայն առնէին, այլ լոկ զդժուարինսն նմա ասէին, և եթէ Յերուսաղէմ ելանել ոչ է պարտ։ Իսկ Հոգին զնա փութացուցանէր և կանխաւ նոցա յայտ առնէր զլինելոցն, զի մի անգիտութիւն զնա 'ի փորձութիւնս անկեալ համարեսցին։

«Յուզարկեալ զմեզ, ասէ, ամենեցուն հանդերձ կանանաքք և որդւովք մինչև արտաքոյ քաղաքին»։ Տես օրչափ էր անձկալի սէր նորա առ նոսա և մխիթարութիւն։ «Եդեալ ծունր առ ծովեզերն՝ կացաք յաղօթս և հրաժարեցաք 'ի միմեանց և ելաք 'ի նաւն, և նոքա դարձան յիւրեանց տեղիս. և մեք զնաւն առ խթեալ 'ի Տիւրոսէ՝ հասաք 'ի Պտղոմիդա։ Զինչ է առ խթեալն. այսինքն զնաւարկութիւն Ճեպովք վարելով 'ի Տիւրոսէ հասաք 'ի Պտղոմիդա. այլ ստուգաբանողքն յեղանակաւ առդ՝ նախդիր, իսկ խթեալ զնաւն՝ որպէս խթանաւ ինչ զդրաստ ընդոստուցանելով առ Ճեպփութիւն. զի վաղ իսկ ցուցանէ հասեալ 'ի Պտղոմիդա։

«Այուհետեալ, ասէ, եղբարցն՝ եղաք առ նոսա օր մի, և 'ի վաղիւ անդր եկաք 'ի Կեսարիա. և մտեալ յապարանսն Փիլիպպոսի աւետարանչի՝ որ էր մի յեօթանց անտի, ազաք առ նմա։ Նորա էին դստերքն չորք կոյսք և մարգարէք»։ Եւ զի թէպէտ և մարգարէք էին, այլ ոչ սոքա նախ ասացին Պաւղոսի մինչև եկն Ագաբոս։ «Եւ 'ի լինելն մեր անդ աւուրս բազումս»։ Արդ 'ի Պտղոմիդա մնայ օր մի, և 'ի Կեսարիա յոլովս կայր։ «Այլ ոմն 'ի հրեայսն մարգարէ անուն Ագաբոս, և եկեալ առ մեզ՝ առեալ զգօտին Պաւղոսի կապեաց զձեռս և զոտս իւր և ա-

սէ. այսպէս ասէ Հոգին սուրբ, զայրն որոյ գօտիս այս է, այսպէս կապեսցէն յԵրուսաղէմ Հրեայքն և մատնեսցեն 'ի ձեռս հեթանոսաց։ Որ կանխաւ վասն սոցին ազգեաց, նա զայսոսիկ ասէ։ Եւ տես զոր ինչ մարգարէքն առնէին աւուց տեսութիւն զլինելոցն պատկերագրելով, յորժամ յաղագս գերութեանն խօսէին. որպէս Եսայի և Եզեկիէլ, զնոյն և սա արար։ Դա և որ դժուարինն էր՝ յաւել, թէ «Ի ձեռս հեթանոսաց մատնեսցեն»։ Եւ ոչ ասաց՝ թէ զՊաւղոս կապեսցեն, զի մի թուեսցի պայմանաւ ասել. այլ թէ «Զայրն որոյ գօտիս այս է». ապա ուրեմն և գօտի ունէր։

«Իբրև լուաք զայս, աղաչէաք մեք և որ 'ի տեղւոջն էին, չելանել նմա յԵրուսաղէմ»։ Եւ վասն զի ոչ կարէին հաւանեցուցանել զնա, վասն այնորիկ և զլալ կանէին, զի գէթ այնու ածցեն զնա 'ի հաւանութիւն։ «Յայնժամ պատասխանի ետ Պաւղոս. զի՞նչ գործէք, զի՞ լայք և ՀՄՆԵՑՈՒՑԱՆԷՔ զսիրտ իմ. քանզի ես ոչ միայն կապելոյ, այլ և մեռանելոյ յԵրուսաղէմ պատրաստ եմ վասն անուան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Տեսանէս զիոյթն. զի մի լուեալ կարծիցես 'ի հարկէ գալ զոր ասէին՝ թէ կապեալ Հոգւովն երթամ յԵրուսաղէմ, այլ և ոչ անգիտութիւն ինչ 'ի վերստ անկեալ համարիցիս զնա, վասն այնորիկ նախ ասացեալ եղէն այնոքիկ։ «Զի՞, ասէ, լայք և ՀՄՆԵՔ զսիրտ իմ»։ Ոչ ինչ գորովագութիւն սէր քան զայս է տեսանել. տեսանէր զնոսա արտասուեալ, և ցաւագին վշտոք լինէր վասն նոցա, այն որ ոչ ախտանայր յիւր փորձութենէն։ Յիս, ասէ, անիրաւիք զայդ առնելով. զի ես ընդ չարչարանս ուրախ եմ և խնդամ և ոչ վշտանամ, 'ի վերայ ձեր լամ և ոչ 'ի չարչարանս իմ. վասն որոյ և կամաքս մեռանել յօժար եմ։ Իբրև տեսին թէ ոչ խոնարհի յայն, ապա հանդարտեցին, յորժամ ասաց՝ թէ ՀՄՆԵՔ զսիրտ իմ։ «Եւ 'ի չանսասն նորա լուեցաք և ասեմք. տեառն կամք լիցին»։ Տեսանէս զիմաստասիրութիւն մեծ. տեսանէս զգորովագութիւնն. զնմանինչ յանծ ապաստան առնէին, զի նորա կամաքն ինասցէ նա 'ի մահուանէ. զի ծանեան այնուհետև 'ի նմանէ գալ զայն։

«Լուս յետ աւուրցն այնոցիկ հանդերձեալ ելանէաք յԵրուսաղէմ»։ Զինչ է հանդերձեալն. այսինքն զիրս

Հանապարհորդութեան և զպէտս առեալք։ «Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի կէսարացւոց»։ Սոցա զկնի Պաւղոսի ելանելն զՔերմառանդ զուրն առ Պաւղոս և զաղաւթս յօժարութիւն ցուցանէ։ «Եւ տանէին զմեզ առ որուս վանս ունելոց էաք՝ Մնասոնի ուսումն կիսարացւոյ առաջին աշակերտի»։ Իսկ ընդէր առ Մնասոնի ունէին վանս և ոչ յեկեղեցւոջն. քանզի այսպէս ոչ կամէին ծանրանալ եկեղեցւոյն, այլոյ ուսումն գոլով հիւրընկալ նոցա ասպնջականութիւն. այլ և ոչ զարժանս ինչ հիւրոյթս պահանջէին։ Իսկ յորժամ յաղագս աւանդութեանցն ելանէին, յեկեղեցւոջն իջանէին. իսկ յայժմ առ աշակերտի ուսումն առաջնոյ։ Ցուցանէ այնուհետև բաղում ժամանակս քարոզութեան. ուստի և թուի լինել զհետ բաղում ամաց լինել այժմ գալուստն նորա Յերուսաղէմ։

«Եւ 'ի մտանելն մեր Յերուսաղէմ, ինդութիւն ընկալան զմեզ եղբարք»։ Այսինքն. զի տակաւին խաղաղութիւն լինէին իրքն, և իրողութիւք նորա առ Հրեայսն ոչ այնպէս մարտնչելով էր։ Բայց տես ըստ կարգի զաւուրսն զնամ. յետ բաղարջակերացն նաւեալ 'ի Փիլիպպէ 'ի Տրովադա եկին զկնի հինգ աւուրց, և անդ արարին աւուրս եօթն, որ միահամուռ լինի երկոտասան. ապա Լասոն և 'ի Մելիտինէ և 'ի Տրոգիլոն և Հանդէպ Քիայ և 'ի Սամոս և 'ի Մելիտոն, որ լինին աւուրքն ութ և տասն։ Եւ 'ի տեղւոջն ուր խօսեցաւ ընդ երիցունսն հինգ օր, որ լինի քսանեբորդ երրորդ։ Ապա անտի 'ի Կոս և 'ի Հռոդոն և 'ի Պատարա, որ լինի քսան և վեց. և 'ի Տիւրոս աւուրս եօթն և 'ի Պտղոմիդա օր մի, միանգամայն մինչև 'ի Կէսարիա բովանդակին աւուրքն երեսուն և չորք. և անդ կացեալ զաւուրս բաղումս այնուհետև անդուստ 'ի վերայ ածէ զնոսա մարգարէն Ագաբոս. և այնպէս պենտեկոստէն լցեալ լինէր. զոր և անդ Յերուսաղէմ զայն առնէին, որում և ըղձայր Պաւղոս զօրն պենտեկոստէ առնել Յերուսաղէմ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Բ.Արդ զՊաւղոս հիւրընկալէին յայնժամ։ Այլ թերևս ասիցէ ոք 'ի ձէնջ՝ թէ և ինձ տայր ոք զՊաւղոս հիւրընկալեալ, բազում յոժարութիւն ընդունէի։ Ասեմ՝ թէ ահա զտէրն Պաւղոսի ունիս հիւրընկալեալ և ոչ ախորժես. «Զի որ ընդունի զմի ոք 'ի փոքրկանցս, ասէ, զիս ընդունի»։ Տես զի օրհնափ փոքր իցէ եղբայրն, Քո մանաւանդ 'ի ձեռն նորա կերակրի. զի որ զմեծն ընդունի, բազում անգամ և անափառութիւն առնէ. իսկ որ զփոքրն, մաքրապէս վասն Քոյ է. և որ զՔո ընդունի, զվարձս զՔո հիւրընկալողն առցէ. և ոչ ընդունողն՝ զպատուհաս. արդ ինքն է պատուեալն և 'ի ձեռն փոքունց և անարգեալն։ Փութասցուք ընդունել զնա, զի ընկալցի զմեզ յարքայութիւն իւրում. տացուք նմա հայ, զի տացէ մեզ արքայութիւն. տեսցուք զնա կապեալ, զի տեսցէ զմեզ լուծեալ. փութասցուք ընդ առաջ օտարացն ըստ օրինակին Աբրահամու, զի նորին արժանասցուք վարձուց։

ՃԱՌ ԲԱՌԱՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

«Լ ՎԱՂԻՒ անդր եմուտ Պաւղոս ընդ մեզ առ Յակոբոս. և եկին ամ երիցունքն. և ողջոյն տուեալ նոցա պատմէր մի ըստ միոջէ զոր արար ած 'ի հեթանոսս 'ի ձեռն պաշտաման նորա»։ Այս Յակոբոս առաջին եպիսկոպոս էր Յերուսաղէմ. և յառաջ իսկ քան զայս Պաւղոս առ սա լիներ առաքեալ Յանտիոքայ Ասորւոց. և այժմ նախ առ սա մտանէ տալ ողջոյն և լսել զամ ինչ 'ի նմանէ և պատմել զոր ինչ ինքն արար։ Սա էր եղբայր տեառն այր մեծ և սքանչելի, և առ Հրեայսն իսկ զարմանալի երևեալ։ «Եմուտ, ասէ, առ նա մեօք Հանդերձ»։ Տես ձև օրինակի առանց մեծամտութեան։ Եկին և այլքն յորժամ լուան։ Դարձեալ նոցա զիրսն հեթանոսաց պատմէ, ոչ մատիաւելով. քաւ լիցի. այլ զայ մարդասիրութեան ցուցանելով և զնոսա բաղում խնդութեամբ ընկալ։

«Լ՝ նոցա լուեալ փառաւոր առնէին զած»։ Ոչ զնա գովէին և սքանչանային, զի ոչ նա այնպիսի ձևով պատմէր, որպէս թէ յինքն վերաբերեալ զամ ինչ։ «Եւ ասեն ցնա. տեսանե՞ս, եղբայր, թէ քանի բիւրք են հաւատացելոցն Հրէից, և ամքն նախանձաւորք օրինացն են. բայց իրազեկ եղեն վասն քո՝ թէ ասես տամբութեամբ ուսուցանես 'ի Մովսիսէ որոց 'ի հեթանոսս ամ Հրեայք են. ասես մի թլփատել նոցա զորդիս և մի ըստ կրօնիցն գնալ»։ Տես զնոսա թէ որչափ զարհուրանօք և երկիւղիւ խօսին վասն նոցա. Հայեաց և զայն, զի ոչ որպէս եպիսկոպոս հակառակելով ընդդէմ նորա զրուցատրէ. այլ զնա ինքն առնուն կցորդ կամացն, որպէս թէ վազվաղակի առաջաբանիւն պատասխանատրելոյ եթէ և մեք զսոյն զոր առնեն, ոչ ախորժէաք։ Տեսանե՞ս զիրացն հարկ և զկարիս պիտոյիցն վասն Հրէից. օրքան բիւրք են, ասէ, Հրէից հաւատացելոց և 'ի միասին եկելոց։ Եւ

զայս խոնարհութիւն. զի ոչ ասաց թէ տես զրքան բիւ-
բրս դարձուցեալ ածաք 'ի հաւատս, այլ թէ են, և
սոքա ամենեքեան նախանձաւորք օրինացն։ Կրկին
պատճառք, և բազմութիւն և կամքն. զի թէ սակաւք
էին, և արհամարհել հասանէր զնոցին խնդիրն. և
այն իսկ ծանր էր. թող թէ բազումք և ամենեքեան
վրէժխնդիրք 'ի կողմն օրինացն։ Ապա և երրորդ
պատճառ. ամբաստան եղեն վասն քո, ասէ։ Եւ ոչ ա-
սաց թէ լուան. այլ թէ այսպէս իրացն հաւատացին
և ուսան, մինչև տրտնջեցին և ասին վասն քո թէ ապրս-
տամբութիւն ուսուցանես յօրինացն և 'ի Մովսիսէ։

«Արդ զինչ լինիցի» ասէ։ Պարտ է այսուհետև
զբազմութիւնն 'ի միասին ժողովել վասն քո։ «Արդ
զայս արա զոր ասեմք քեզ». այսինքն իրրև խորհրդ-
ակցելով և ոչ հրամայելով։ Եւ զինչ արդեօք այն
իցէ։ «Են, ասէ, 'ի մեզ արք չորք ուխտագիրք յան-
ձինս իւրեանց. զնոսա առեալ սրբեացիս ընդ նոսա, և
ծախեա ինչ 'ի նոսա». այսինքն 'ի քո կողմանէ զօրի-
նացն արարեալ միաբանեսցիս ընդ նոսա, զի գերծցեն
զգլուխսն։ Քանզի այսպէս օրէնքն հրաման տային
զնոսի ուխտին կատարման գերծուլ. զի և այն իսկ է
ուխտաւորացն առանձին յուխտին գոլով թողուլ
զհերսն։

«Եւ գիտասցեն, ասէ, ամենքն թէ զորոց իրազեկն
եղեն զքեզ՝ ոչ ինչ է, այլ միաբանիս և դու պահել զօ-
րէնսն»։ Զի լինիցի գործով զղատասխանին առնել
և ոչ բանիւ. որով ծանիցեն թէ ոչ ինչ է որ զքեզ
լուան. և առաւելութիւն դու իսկ պահես զօրէնսն։
Զի ոչ այս միայն էր փութալի, այսինքն ոչ ուսուցա-
նել զայս ոչ պահել, այլ զի և ինքն ևս պահեսցէ զօ-
րէնսն։ Եւ զնմանէ ասէ, թէ հեթանոսք իմասցին զոր
առնեմն, և գործով իմով այսու ճշմարտեցից զնոսա։
Ոչ, ասէ, զի յորժամ և մեք իսկ Հրէից վարդապետաց
զրեցաք առ նոսա մի ինչ զօրինացն փոյթ առնել բաց
'ի սակաւուց, ապա և վասն քո ոչ ինչ վասն այսր ածեն
զմտաւ։ Սմին վասն յաւելու և ասէ. «Բայց վասն
հաւատացելոցն հեթանոսաց մեք առաքեցաք որպէս
և ընտրեցաք մի ինչ այնպիսի պահել նոցա. բայց
զգուշանալ նոցա՝ 'ի կռոց զոհելոյ և յարևնէ և 'ի հեղ-

ձուցելոյ և 'ի պառնկութիւն »։ Աստանօր պատկառեցուցանելով իմն ասէ. որպէս մեք նոցա հրամայեցաք, և մանաւանդ Հրէից գոլով քարոզք մեք, զօրձակիցք մեզ և դու ինքն յայսոսիկ։

Ա՛իսա զկնի թէ որպիսի իրօք հաւանեցուցանէին զՊաւղոս ցուցանելով թէ այն անօրէնութիւն և զկնանել էր, և ոչ հատուած քարոզութիւնն. ուր և նոքա իսկ օրէնսդիրքն խոստմանն նոքա լինէին առ հեթանոսս։ Տես և զՊաւղոսի հեզութիւն. ոչ ասաց՝ թէ կարող եմ և զՏիմոթէոս ածել վկայ զոր թլփատեցին, և առաւել հնար է ինձ հաւանեցուցանել զնոսա քանիւ. այլ հաւանեցաւ նոցա, և զնա զոր ասացին՝ արար։ Եւ այնուամ յոյժ ըստ պատշաճի եղև. զի ոչ էր հաւասար՝ քանիւ պատասխանի առնել, նա զի և ոչ միոյ ուրուք էր զիտելի իրքն Տիմոթէայ, և ինչս ծախել և գործով զկատարումն օրինացն ցուցանել. զի այս իսկ անկասկած 'ի Պաւղոսէ առնէր զամենեսեան։

Այլ և ոչ ասաց դարձեալ՝ թէ զինչ է զոր ասէքդ, ոչ է պարտ զոր 'ի հեթանոսս են հաւատացեալք՝ ուսուցանել ոչ թլփատել, և ոչ շատ է աստանօր ըզնոյնս ոչ քարոզել. այլ զոր ասէին՝ յանձն առնոյր. զոր և գրէր իսկ այլուր՝ թէ «Եղէք ընդ Հրէայսն 'ի ներքոյ օրինացն, զի զոր ընդ օրինաւքն իցեն՝ շահեսցայց»։ Արդ տես զինչ ասէին. պարտ է քեզ, ասեն, բազում ինչ առնել, զի հաւանեսցին նոքա՝ թէ և դու իսկ զօրէնսն պահես. մի ինչ յայսմանէ երկիցես, քանզի զինչութիւնք իրողութիւնս եւ ոչ յառաջադոյն յայն իրս յորդորեցին զնա մինչև նախ ասացեալ էր զանօրէնութիւն բանին և զշահ, ցուցանելով և առաջի դնելով զբազմութիւնն որ յԵրուսաղէմ էր. զի և այն իսկ առնէր Պաւղոսի հանդուրժել այնպիսի իրաց զոր ասէին, և ոչ ընդդէմ յառնել նոցին կամացն։ Արդ արա, ասեն, զոր ասեմք քեզ՝ միայն աստանօր, զի արտաքոյ Երուսաղէմի ոչ է պատշաճ՝ զայսոսիկ առնել քեզ։

«Յայնժամ Պաւղոսի առեալ զարսն՝ 'ի վաղիւ անդր ընդ նոսա սրբեալ եմուտ 'ի տաճարն յայտ առնել ըզկատարումն աւուրցն սրբութիւն, մինչև մատեաւ 'ի վերայ իւրաքանչիւր ուրուք 'ի նոցանէ պատարագ»։

Եւ արդ քանզի վայել էր նոցա ըստ օրինացն զառուբս ամենս անդ 'ի տաճարին գեղերել, այլ նա ոչ վերբս-տին սկիզբն առնէր աւուրց. զի յորժամ իրքն անօ-րէնութիւն էր, ոչ ինչ պիտոյանայր այնպիսի ինչ իրաց. այլ 'ի վաղիւ անդր իսկ և իսկ առեալ զարսն՝ ընդ նո-սա սրբեալ եմուտ 'ի տաճարն, յայտ առնելով՝ այսպես-քըն խոստովանել զկատարումն աւուրցն սրբութեան։ Զի ինքն էր որ յայտնի առնէր զանձն իւր զիջանելով ըստ օրինացն. ըստ որում Պետրոս յամբաստանելն ոչ լռեաց, պարզաբար հաստատելով զիւրն աւան-դութիւն. այլ զիջեալ ընդ նոսա արար պատասխանի՝ թէ ես ոչ կամիմ, և Հոգին կամեցաւ։ Եւ զոր ինչ սա աստանօր արար, զնոյն և Պետրոս յառաջագոյն. իսկ Հրեայքն նոյնպէս և առ նմա զչարութիւն։

«Լոյս իբրև մերձ էին եօթն աւուրքն 'ի կատա-րել, տեսեալ զնա 'ի տաճարն ասիացւոց Հրէիցն, ընդ որս մանաւանդ յերկար ժամանակ շրջեալ եղև Պաւ-ղոս, զեղուին զնովաւ զամենայն ամբոխն. և արա-կեալ 'ի նա ձեռս՝ աղաղակէին. արք իսրայէլացիք, օգնեցէք. այս այր է որ հակառակ ժողովրդեանն և օրինացն և տեղւոյս այսորիկ ամենեցուն ամենայն ու-րեք ուսուցանէ. մինչև հելլենասոս ևս եմոյծ 'ի տա-ճարն և պղծեաց զսուրբ տեղիս։ Քանզի էր յառա-ջագոյն տեսեալ զՏրոփիմոս զեփեսացի 'ի քաղաքի անդր ընդ նմա. զոր կարծէին թէ 'ի տաճար անդր եմոյծ Պաւղոս»։ Տես աստ յոյժ անօրէնութիւն ե-ղեալ զիրսն. զի յետ հաւանելոյ Հրէիցն հաւատացե-լոց վասն կարծեացն զՊաւղոսէ ոչ ինչ գոլ յայնժամ, ապա անհաւատքն 'ի վերայ հասեալ եղեն, զի մի և սոքա հաւատացեալք ընդ նոսին լիցին միաբանեալ 'ի չարչարել զՊաւղոս։

Լոյս դիտեա զնուռվարար բարս նոցա ամենայն ու-րեք, և թէ ոչպէս վայրապար աղաղակէին 'ի միջի կա-լով առ 'ի զարթուցանել զցասումն ամենեցուն։ Արք իսրայէլացիք, օգնեցէք՝ ասեն. որպէս ուսումն դժուա-բակալի և անմբռնելոյ անկանելով 'ի ձեռս նոցա։ Եւ ոչ այնու միայն թէ «Հակառակ ժողովրդեանն ամենայն ուրեք ուսուցանէ» մեծ առնէին զչարու-թիւն, այլ որ ինչ մանաւանդ զարհուրեցուցանէր ըզ-

նոսա և առաւել 'ի բարկութիւն ածէր, տաճարն և օրինքն, զայն 'ի մէջ բերին. զոր և վասն Յանփանոսի ասէին։ Հեթանոսս, ասեն, եմոյծ 'ի տաճարն և պղծեաց զսուրբ տեղիս։ Եւ զի մանաւանդ յաւուրսն Փոխիսկ Երին ոմանք անդ 'ի հեթանոսաց, զի երկիր պագանիցեն, և ոչ ինչ այնպէս զչարեին. քանզի այնոքիկ որ յօժարեին արդեօք 'ի հեթանոսաց երկիր պագանել 'ի տաճարին, ոչ ևս օրինաց կարօտանային և ոչ զատաստանաց։ Հայեաց և ընդ Պաւղոս՝ ոչ և մի ինչ ամբաստան եղեալ զառաքելոյն, թէ նոքա նախ եղեն պատճառ այսպիսի վշտացս։

«Շարժեցաւ, ասէ, քաղաքն ամենայն, և կուտեցաւ ժողովուրդն. և առեալ զՊաւղոս ձգէին արտաքոյ տաճարին, և վաղվաղակի փակեցան դրունքն, և ինդրէին սպանանել զնա»։ Վասն այնորիկ ձգէին զնա արտաքս, զի փութով կամէին սպանանել զնա, և ոչ յոլովագոյն ներողութիւն առնել զայն. և հարկանէին զնա անդադար։ Իսկ նա յայնժամ ոչ ինչ տայր պատասխանի, զի թերևս ոչ լսէին նմա 'ի խիստ գառնութենէն որպէս 'ի չար գիւէ ինն շարժեալք. բայց յետոյ յոյժ իրաւապէս առնէր զպատասխանին։

«Լուաս զրոյց 'ի հազարապետ գնդին՝ եթէ խառնվեալ է ամենայն Երուսաղէմ. որոյ անդէն առեալ զզօրականս և հարիւրապետս դիմեաց 'ի վերայ նոցա. և նոցա տեսեալ զհազարապետն և զզօրականսն՝ դադարեցին 'ի հարկանելոյ զՊաւղոս։ Յայնժամ մատուցեալ հազարապետն կալաւ զնա և հրամայեաց կապել կրկին շղթայիւք»։ Որպէս թէ այնուիկ մխիթարել զնոսա և ցածուցանելով զսրտմտութիւն ամբոխին, այլ և գիտել կամելով զստոյգն։ «Հարցանէր թէ ով իցէ և զինչ իցէ արարեալ. այլք այլ ինն աղաղակէին զնմանէ յամբոխին»։ Յայտ է, անկարգ բազմութիւն խառնվութիւն լցեալք ոչ ակն ածէին զանդէպսն և զանիրաւսն ժայթքել։

«Իբրև ոչ կարաց գիտել զստոյգն վասն ամբոխին». յայտ է՝ վասն անմտանս միմանց ամբաստանելոյն զնքմանէ ժխորելոյն։ «Հրամայեաց ածել զնա 'ի բանակն Իբրև Եհաս յաստիճանսն, դէպ եղև բառնալ բերել

զնա զօրականացն՝ վերամբարձ, յայտ է վասն բռնութեան ամբոխին. քանզի զհետ երթայր բազմութեան ժողովրդեանն և ասէին. բարձ զդա»։ Զի՞նչ է բարձ զդա. այսինքն որպէս և առ մեզ ասի՝ թէ ըստ սովորութեան հռովմայեցւոց 'ի պատուհաս տանջանաց արկ զդա, կամ թէ սպան իսկ. զի զահի հարեալ էին և երկնչէին, զի մի փախիցէ։

«Զ՝ինչդեռ մնանելոց էր Պաւղոս 'ի բանակն, այսինքն ուր դատողական կայանքն էր, ասէ ցհազարապետն՝ եթէ արժան իցէ ինձ խօսել ընդ քեզ»։ Յորժամ առ աստիճանսն եհաս բերեալ, թերևս զի չէին այնուհետև ամբոխն ձեռնհաս 'ի նա, յայնժամ աղաչեաց զհազարապետն խօսել ինչ և պատասխանի տալ ժողովրդեանն։ Բայց տես որպիսի հեզութիւն և հանդարտապէս խօսի. եթէ արժան իցէ ինձ խօսել, ասէ։«Եւ նա ասէ. յունարէն գիտե՞ս. մի արդեօք դու իցես եգիպտացին՝ որ յառաջ քան զայս աւուրս ապստամբեցուցեր և հաներ յանապատ չորս հազարս արս սիկարեանս»։ Զկարծիս անօրինացն հազարապետն 'ի մէջ բերեալ հարցանէր, մի արդեօք սա նա իցէ։ Զի էր նա ոմն պատրիչ և խաբեբայ, յանդուգն, չարագործ և ապստամբեցուցիչ։ Քանզի կարծեաց բանսարկուն թաքուցանել 'ի ձեռըն նոցա զՀնչմարտութիւնն և հաղորդս առնել նոցա ամբաստանութեանն զբռ և զառաքեալսն, այլ ոչ զօրեաց։ Քանզի նոքիմբք պայծառագոյն երևեցաւ Հնչմարտութիւնն՝ ոչ ինչ մնասեալ 'ի հնարից բանսարկուին, այլ մանաւանդ պայծառապէս ծագեալ։ Զի եթէ ոչ էին երևեալ կախարդքն և մոգքն, և ոչ սոքա յաղթողք լինէին բազմաց. Թերևս ոք չար կարծեաք 'ի վերայ սոցա հասեալ լինէր։ Իսկ յորժամ և նոքա այնպիսիք երևեցան և հակառակողք, այսինքքն կախարդքն և խաբեբայքն, այն իսկ արար զսոսա աքանչելիս. զի ասէ.« Հերձուածք լինելոց են. զի որ 'ի ձեզ ընտիրքն իցեն, երևեսցին». և Գամաղիել ասէր, թէ «Յառաջ քան զաւուրս զայսոսիկ յարեաւ Թեւդաս ասել զանձնէ՝ թէ իցէ մեծ ոմն»։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Լ. յսուհետև մեք մի ցաւագնեսցուք. զի և այժմ հերձուածք են, յորժամ և սուտ քրիստոսք 'ի վերայ յառնել խորհեցան և յառաջ քան զգալուսան Քրիստի և յետ այնորիկ, որպէս զի թագուսցեն զՀշմարտութիւն 'ի մարդկանէ. այլ Հշմարտութիւնն փայլեաց և յամենայնի յայտնեցաւ։ Եւ յս իսկ և յաւուրս մարգարէիցն եղև, և գտան հակառակ սուտ մարգարէք. այլ 'ի նոցին համեմատութէն մանաւանդ փայլեցին Հշմարիտքն. զի զառաջութիւնն ցաւքն յայտնեն և զլոյսն խաւարն և զպարզն մթրիկն. այժմ ոչ գոյ ասել հեթանոսաց՝ թէ մոլորեցուցիչք էին, քան զի ինքեանք յանդիմանեալք եղեն։ Եւ յս և յաւուրսն Մովսէսի եղև. տեղի ետ ՈՒծ մոգուցն, զի Մովսէս մի եղիցի համարեալ մոգ. թողացոյց զնոսա ապշեցուցանել զամենեսեան, մինչև ցոր վայր ապշեցուցանել մոգուքն հնար էր. այլ ընդ երկար ոչ կարացին պատրել, այլ ինքեանք զպարտութիւն խոստովանեցան. և հանապազ նոցն լինի։

ՃԱՌ ԲԱՌԱՄԽԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

«Լսէ Պաւղոս. ես եմ այր Հրեայ՝ի Տարսոնէ կիլիկեցւոց, ոչ աննշան քաղաքի քաղաքացի»։ Տեսանես, զի յորժամ ընդ արտաքինսն խօսի, ոչ հրաժարէ զառ՝ի յօրինացն օգնականութենէ՝ի կիր առնուլ. որպէս և այժմ հրեայ զինքն ասելով։ Աչլ և քաղաքաւն ևս զնա ամաչեցուցանէր. որպէս և յայլուամ տեղւոջ դարձեալ այսպէս ասէր՝ի Հանդիսի՝ թէ «Զարս անմեղս հռոմայեցիս գոլով արկին՝ի բանտ»։ Եւ զի ասայ՝ թէ դու իցես եգիպտացին, վաղվաղակի անուամբն զնա յայնպիսի կարծեաց՝ի բաց եհան, յայտ արարեալ՝ թէ սա ոչ էր նա և ոչ յայնպիսեաց երբեք։ Այս զի մի կարծիցի զանուն միայն ունել հրեայ, յառաջ բերէ և զպաշտօնն։ Եւ քանզի յայլուամ տեղւոջ օրինաւոր ըստ Քրի կուլ զանձն իւր, արդ զիարդ այժմ ասէ զայս. ընդէր ոչ ուրացաւ զհրեութիւն։ Քաւ լիցի, զի հրեայ էր և քրիստոնեայ, որչափ պարտ էր պահել զօրէնսն. քանզի և օրինացն մանաւանդ քան զայլս նա լինէր անսացեալ. որ՝ի Քս հաւատայր։ Որպէս և ցՊետրոս ասէր. «Մեք բուն հրեայք եմք, և ոչ՝ի հեթանոսաց մեղաւորք»։

«Լսեմ զքեզ ասէ, հրամայեա ինձ խօսել առ ժողովուրդն»։ Եւ այսու նշանակէր թէ ստեալ ոչ լինի, և ոչ է իրաց ինչ պարտասպան՝ որ այնպէս պատրաստն գոյր առ՝ի տալ պատասխանի և կամէն համարձակ խօսել՝ի մէջ հանդիսի Հրէիցն զկնի ամբոխելոյ նոցա։ Տես այր կարգաւոր, տես անօրէնութիւն բարւոքյօրինեալ. զի եթէ հազարապետն ոչ էր եկեալ և ոչ էր զնա կապեալ, թերևս ոչ լինէր զհազարապետն աղաչեցեալ. և ոչ ինքն իսկ կարօտացեալ բանի պատասխանւոյ, և ոչ թերևս այնչափ լռուեալ հանդիպեալ։

«Եւ հրամայէն նորա Պաւղոս կացեալ՝ի վերայ

աշտիՃանացն՝ շարժեաց զՁեռն ժողովրդեանն։ Միտ դիր զի և 'ի տեղւոյ անտի եղև նմա դիւրութիւն. որպէս զի բարձրագոյն կալով կապանօքն հրապարակաբանել։ Զինչ այսմ հաւասար իցէ զարմանալի. կըրկին երկաթի կապանօք կապեալ տեսանելով զՊաւղոս հրապարակաբանելով. զմարդ ոչ խռովեցաւ այնքան հանդէս թշնամեաց տեսանելով և իշխանին 'ի վերայ հասանելով։ Ա՛ռդ նախ առաջին 'ի բաց արար զնոսա 'ի ցամանել շարժելով ձեռինն. ապա տես թէ որպիսի խոնարհութիւն սկսանի 'ի բանն. և զոր ինչ 'ի յեբրայեցւոց թղթին 'ի հարցն և 'ի մարգարէիցն արար սկիզբն, զնոյն և աստանօր յառաջագոյն ազգ ակցութեան ձայնիւն զնոսա առ ինքն ձգելով։

«Լու իրրև բազում լուութեան լիներ, ասէ, սկսաւ բարբառել հեբրայեցւոց բարբառովն և ասէ. արք եղբարք և հարք, լուարուք ինձ այժմ առ ձեզ պատասխանատուութեանս։ Տես 'ի մարգահաՃուեան և առերեսս խօսելոյ ազատեալ զբանն և բազում հեզութեան ունելով. զի ոչ ասաց թէ տեարք, և չասաց կատարեալ աւագութիւն. այլ եղբարք, զոր ինչ մանաւանդ փափաքէին լսել։ Զի ոչ եմ օտար, ասէ, ես 'ի ձէնջ և ոչ հակառակորդ ձեր, այլ եղբայր ձեր և որդի։ Ա՛յս իսկ պատուոյ է՝ հարս ասէին. իսկ եղբարս՝ հարազատութեան։ Լուարուք, ասաց, ոչ վարդապետութեանս և ոչ հրապարակաբանութեան, այլ պատասխանատուութեան. 'ի կարգի աղաչողի զանձն իւր կացուցեալ։

«Իրրև լուան թէ հեբրայեցւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա, առաւել ևս դադարեցին 'ի լռութիւն»։ Տեսանես թէ որպէս ըմբռնեաց զնոսա համաձայնութիւնն. զի ունէին իսկ Հրեայքն պատկառումն առ լեզուն այն։ Եւ դու միտ դիր՝ թէ որպէս նախ Ճանապարհ հորդէ բանին, և այնպէս ապա սկսանի և ասէ. «Ես եմ այր հրեայ, ծնեալ 'ի Տարսոն կիլիկեցւոյ, սնեալ 'ի քաղաքիս յայսմիկ, առ ոտս Գամաղիէլի խրատեալ»։ Նախ զայս գնէ զոր ինչ մանաւանդ փափաքէին լսել քան զամենայն ինչ, հրեայ զինքն կոչելով։ Իսկ վասն 'ի Տարսոն զինքն ծնեալ ասելոյն, զի մի դարձեալ կարծիցին զազգն նորա այլ գոլ, զպաշտօն նորա 'ի վերայ ածՃ՝ թէ սնեալ 'ի քաղա-

քիս յայսմիկ. և այսու զբաղում փոյթն ցուցանէ զծնողացն իւրոց զոր ունէին յաղագս պաշտամանն։ Որոյ վասն զայնպիսի հայրենիս թողեալ և այնչափ անտի հեռացեալ, անդանօր հաճեցաւ մնուցանել զՊաւղոս վասն օրինացն։ Ցեսանեմ թէ որպէս 'ի բնէ 'ի վերուստ զօրէնսն պահեր։

Եւ զայսոսիկ առ նոսա ոչ պատասխանատրէ միայն, այլ և ցուցանէ՝ թէ ոչ մարդկային դիտողութիւն ածեալ եղև 'ի քարոզութիւնս, այլ ածեղէն զօրութիւն։ Զի ոչ արդեօք այսպէս ընդ երկար խրատեալ զոլով օրինօքն՝ վաղվաղակի փոփոխեալ լինէր։ Եւ եթէ 'ի բազմաց ոք էր, յիրաւի էր զայն ինչ կասկածել. իսկ եթէ յայնցանէ էր, որ մանաւանդ յօրինացն ըմբռնեալ էին, ոչ էր մարթ վայրապար փոփոխել առանց զօրաւոր և մեծ պատճառի իրիք։

Այլ զի թերևս ասէր ոք արդեօք, եթէ ոչ ինչ առնէ այդ՝ զի աստանօր մնար. զի կամ վաճառականութիւն կամ ըստ այլ իրիք պատճառի եղև գալոյ քո աստանօր. սմին վասն ասէ՝ առ ոսս Դամասկոսի։ Եւ ոչ ասաց լոկ առ նմա, այլ առ ոսս. զի այսու զժուժկալութիւն և զհամբերութիւն և զփոյթն զոր առ լսողութիւնն ունէր և զբաղում առ առնն զպաստկառումն՝ ելոյց։ Եւ ոչ ասաց խրատեալ օրինօքն, այլ ըստ հնմարտութիւն հայրենի օրինացն նախանձայոյզ էի՝ այ։ Ցուցանէ այսու՝ թէ 'ի բնէ 'ի վերուստ այնպիսի ոմն էր, և ոչ միայն պարզաբար գիտող օրինացն։ Այսոքիկ թուին յաղագս նոցա վկայութիւն ասացեալ. բայց յոյժ հակառակ էր նոցա, եթէ այնպէս քաջ գիտելով զօրէնսն 'ի բաց եթող զնա։

Այս զի մի ասիցեն թէ զիարդ ոչ վրէժխնդիր լիներ նիս նմա և սիրէս զնա՝ եթէ ստուգապէս գիտող ես օրինացն, սմին վասն յաւելու. «Նախանձայոյզ էի՝ այ». ոչ վայրապար նախանձայոյզ, այլ յոյժ սաստիկ։ Եւ քանզի մեծամեծս յաղագս ինքեան գոսումեիս ասաց, ապա հասարակաց առնէ զբանն, 'ի վերայ ածելով թէ « Որպէս ամենեքեան դուք այսօր »։ Եւ ցուցանէ զնոսա ոչ մարդկային դիտողութիւն առնել զայն, այլ զածային նախանձն 'ի կիր արկանելով։ Եւ այսոքիւք յառաջահաս լինելով 'ի միտս նոցա, և ըմբռնելով զնոսա իրօքն՝ որ ոչ ինչ էր ինչ։

Այսպա և զնշանսն որ յաղագս ինքեան է, 'ի մէջ բերէ ասելով. «Որ զնոյն Ճանապարհ վարէի մինչև 'ի մահ, կապել և մատնել 'ի բանտ արս և կանայս»։ Եւ այս ուստի արդեօք յայտ իցէ. 'ի ձերոց վկայութեցդ. ըստ որում և զնոյն քահանայապետն իսկ և զամենայն ծերակոյտն կացուցանէր վկայս ասելով. «Որպէս և քահանայապետդ վկայէ ինձ և ամենայն ծերակոյտդ»։ Եւ քանզի ասաց թէ նախանձայոյզ էի իրրև զձեզ, ասա ցուցանէ 'ի ձեռն գործոցն՝ թէ առաւել էր քան զնոսա. զի ոչ եթէ միայն այսպիսի էի, ասէ, զի ըմբռնեցից 'ի տանջանս զաշակերտսն Յն, այլ և զքահանայապետն իսկ 'ինոյն յարուցանէի. և ոչ ասա 'ի քաղաքիս միայն, այլ և 'ի բաց արձակ տեղիս լինէի գնացեալ. և ոչ առ արսն միայն լինէի թափանցեալ, որպէս և դուք, այլ և առ կանայսն՝ կապելով և 'ի բանտ արկանելով։

Անընդերկուանալի էր վկայութիս, անպատասխանելի էր Հրէիցն։ Տես թէ որքան վկայս էած, զծերակոյտն և զքահանայապետն և զայնոսիկ որ 'ի քաղաքին էին։ Հայեաց 'ինորա պատասխանին որպէս ոչ հաւսպ եղեալ 'ի զանգիտութիւնն, այլ մանաւանդ 'ի վարդապետութի և 'ի յորդորումն և յողբանս. զի եթէ ոչ քարեղէնք էին լսողքն, նայեցեալ հաւանէին ասացելոցն։ Արդ մինչև ցայս վայր զնոսա իսկ ուներ վկայս. իսկ այն զոր զկնի այսր ասէ, առանց նոցին վկայութեան էր։

«Յորոց, ասէ, և թուղթս առեալ առ եղբարս որ 'ի Դամասկոս, երթայի ածել և անտի կապեալս յԵրուսաղէմ, զի պատժեացին։ Եւ եղև ինձ 'ի գնալն և 'ի մերձենալ 'ի Դամասկոս, զմէջաւուրքն յանկարծակի յերկնից փայլատակեաց լոյս սաստիկ զինև. և անկայ յերկիր և լուայ բարբառ որ ասէր ցիս, Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես զիս. և ես ետուս պատասխանի և ասեմ, թէ ո՞վ ես դու, տէր»։ Արդ և այսոցիկ հաւատարիմ պարտ էր լինել 'ի յառաջագունէիցն նորա գնացից, 'ի յիրացն ընտրողութէ։ Զի որպէս պարծի, կամ զի՞նդ յետս կացեալ եղև անդէն Ճեռալ յայնց իրաց յոր փութայրն։ Արդ ընդէր զայնչափ նախանձն 'ի բաց ընկէց յանկարծակի,

ասա ինձ . միթէ պատուոյ ակնկալութիւն ունելով . և սակայն զնորին հակառակն հանդուրժէր ։ Ալ հանդստեան արդեօք . և այս իսկ ոչ եղև նմա ։ Իսկ զինչ էր որ զնա հաւանեցոյց ։ Ոչ է հնար մարդկայինն մտածութիւն գտանել , այլ միայն ՅԾեղէնն զօրութիւնն էր , որ զիրսն առնէր ։ Արդ զայսոսիկ 'ի նոսա թողեալ՝ ընտրութիւն իրողութեանցն առնել , ինքն միայն պատմէ զեղեալն ։

« Օ մէջաւուրքն , ասէ , փայլատակեաց զինև լոյս սաստիկ , և անկայ յերկիր» ։ Տես որչափ էր զերազանցութիւն լուսոյն . յայտ է ահա ոչ միայն այնու զի յաղթէր արեգականն , այլ և որով կուրացոյցն իսկ զնա , և զի ընկէց և յերկիր . այլ զի վերածողական և ոչ սոսկ պատուհասողական ' էր եղեալն առ նա , « Էրուայ , ասէ , ձայն որ խօսէր ընդ իս , Սաւուղ Սաւուղ , զի՞ հալածես զիս» . յայտ առնելով ձայնին այսու բանիւ զպատճառ զարկուցանելոյն զնա յերկիր և կուրացուցանելոյն զաչս նորա . և զի թէպէտ յայնմ տանջեցաւ կուրութիւն , այլ և ոչ 'ի միտն ։ Ուստի յուշի կալով իմ , ասէ , և գիտելով զոր ինչ անցին ընդ իս անցք , ետու պատասխանի՝ թէ ո՞վ ես դու , տէր , որ զայսպիսի անցս ընդ իս զօրեզասպէս գործես , ամբաստանելով և հալածեալ լինելոյ քոյ ։ « Եւ ասէ ցիս . ես եմ Յն նազովրեցի զոր դու հալածես» ։ Բարւոք և զքաղաքն յիշեաց որ նոցա յայտնի էր , որպէս զի ծանիցեն նոքա . այսպէս և Պետրոս և այլ առաքեալքն ասէին՝ Յն նազովրեցի . և ինքն իսկ Յն վկայէր՝ թէ այնու հալածեալ լիներ , մարմնաւորութիւն իրօք՝ յայտ է ։

« Բայց ընդ որ իսն էին , զլոյսն տեսանէին , այլ զձայնն ոչ լսէին որ խօսէր ընդ իս ։ Եւ ասեմ՝ զինչ արարից , տէր . և ասէ ցիս . յարուցեալ երթիցես 'ի Դամասկոս , և անդ պատմեսցի քեզ վասն ամենայնի զոր հրամայեալ է քեզ առնել ։ Իբրև ոչ տեսանէի 'ի փառաց լուսոյն այնորիկ , զձեռանէ ձգեալ 'ի նոցանէ որ ընդ իսն էին՝ մտի 'ի Դամասկոս» ։ Արդ միթէ պարծելով ինչ ստեղծաբանիցէ ինն զայսոսիկ . և

1 Միւսն պարտեսասան։

ոչ էրրէբ. քանզի որ ընդ նմայն էին, վկայք էն, որք և զձեռանէ նորա կալեալ մուծին ի Դամասկոս. որք և զլոյսն տեսին, թէպէտ զձայնն ոչ լուան։ Ա՛յլ զի ի միասում տեղւոջ ասէ՝ թէ «Որ ընդ նմայն էին՝ ըզձայնն միայն լսէին, բայց տեսանէին և ոչ ինչ», և ասա՝ թէ «Զլոյսն տեսին, և զձայնն ոչ լուան», ոչ էն այսոքիկ միմեանց հակառակք. զի ձայնքն երկու էին, Պաւղոսին և տեառն. և անդ ձայն զՊաւղոսին ասէ զոր լսէին՝ թէ «ով ես տէր. իսկ զայն որ խօսէրն ընդ նա՝ թէ զի հալածես զիս, ոչ տեսանէին, բայց զլոյսն միայն։ Իսկ ասա ձայն զտեառնն ասէ. զի զայնոքիկ որ խօսէրն, ասէ, ընդ իս՝ զձայնն ոչ լուան. և ոչ ասէ թէ ոչ ինչ տեսին, այլ թէ զլոյսն տեսին։

Ի՛դդ ընդէր և նոքա ոչ կուրացան։ Ինձ այսպէս թուի՝ թէ և նոցա ոչ երևեցոյց նոյնպէս և զասստիկ լոյսն. կամ զի ոչ կամեցաւ, զի վկայք իրացն լինիցին որ վասն Պաւղոսի. կամ զի չէին ինչ օգտելոց յայնմանէ, բայց միայն Պաւղոս։ Ոչ ոք, ասէ, լուաւ ըզձայնն։ Յայժ վայելլապէս եղև այն, զի նմա միայն պարտ էր ձայնին այնմիկ արժանանալ. իսկ թէ և նոքա լուեալ էին, թերևս ոչ նոյնչափ լինէր սքանչելի, քանզի թանձրամիտքն տեսու թէ առաւել հաւանին։ Զլոյսն տեսին նոքա և ոչ այնչափ զարհուրեալք եղեն. զի առ նոքօք լոյսն ոչ այնչափ ներգործեաց, որչափ առ նմա. կուրացոյց զնորա զաչսն վասն այնց իրաց՝ որ պատահելոց էին նմա. բայց և նոցա իսկ ետ վերստին տեսանել զնոյն լոյսն և հաւատալ՝ թէ կամեցեալ լինէին։ Բայց ինձ թուի թէ անօրինաբար նոքա ոչ հաւատացին անդէն իսկոյն, որպէս զի իցեն վկայք հաւատարմագոյնք։

«Լու՛ ասեմ. զինչ արարից, տէր»։ Տես զնա իրև՝ ի գանից ինն կշտամբանաց իմաստնացեալ, վայելչապէս ուսանել, հայցելով հետևել կամաց իրբատաղին։ «Լու՛ ասէ ցիս. յարուցեալ երթիցես՝ ի Դամասկոս, և անդ պատմեցից քեզ զարժանն»։ Տես՝ զի որ զարկոյցն, նա կանգնէ. զի որպէս ոչ պարզաբար անկաւ, և ոչ իւրովի յառնէ. և ոչ ինչ թողու առանց վկայութեան, այլ ածէ բոլորովին զքաղաքն՝ ի վկայութիւն, որք և տեսին զնա կուրացեալ և զձեռանէ նորա առեալ այլոց։

«Լինելիս ոմն այր երկիւղած, ասէ, ըստ օրինացն վկայեալ յամ բնակչացն՝ որ 'ի Դամասկոս Հրեայքն էին, եկն եկաց առ իս և ասէ. Սաւուղ եղբայր, 'ի վերս հայեաց։ Եւ ես նոյնժամայն 'ի վերս հայեցայ 'ի նա։ Ահաւասիկ դարձեալ այլ վկայ ածէ 'ի մէջ. և տես որպէս զնա հաւատարիմ առնէ. «Այր, ասէ, երկիւղած ըստ օրինացն»։ Այսպէս ոչ էր օտար, այլ բուն իսկ և վկայեալ յամենայն Հրէիցն, որք անդ էին։ Ապա 'ի ձեռն իրացն եղելոց հաստատէ զվկայութիւնն՝ թէ «Նոյնժամայն 'ի վերս հայեցայ 'ի նա և տեսի»։ Տեսանէս 'ի ձեռն դիմաց և իրաց խառնեալ զվկայութիւնն. ըստ դիմաց՝ յընտանեաց իսկ և յօտարաց, որք էին քահանայք և երիցունք և այնոքիկ որ Ղանանայարհորդակից էին նորա. իսկ ըստ իրաց՝ այն իսկ զոր ինչ առնէրն և զոր ինչ կրէրն, և իրքն իրացն վկայէին և ոչ միայն դէմքն. ապա ոչ օտար դիմաց վկայութիւն էր Անանիայինն. ապա նոյն իսկ իրքն, այսինքն վերստին տեսանէն. ապա և մարգարէութիւնն մեծ զոր Անանիա ասէր. «Ահ հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ Ղանաչել զկամս նորա և տեսանել զարդարն»։ Բարւոք ասաց՝ հարցն մերոց. զի ցուցցէ ըզնոսա ոչ գոլով Հրեայս և ոչ որդիս հարցն, այլ օտարս յօրինացն և թշնամիս և ոչ նախանձախնդիրս օրինացն։ «Ճանաչել, ասէ, զկամս նորա». ապա այն իսկ էր կամք նորա, և ոչ զոր նոքայն առնէին։ Տեսանէս թէ որպէս 'ի կարգի պատմութիւն վարդապետութիւն յօրինէ։ «Եւ տեսանել, ասէ, զարդարն»։ Առ ժամայն ասէ այսպէս և ցուցանէ, զի թէ սա արդար էր, նոքա պարտապանք էին և դատապարտք, և ոչ արդարք։

«Լսել, ասէ, բարբառ 'ի բերանոյ նորա. զի ելցեցես վկայ նորա առ ամենայն մարդիկ՝ որոց տեսերն և լուար»։ Տեսանէս թէ որպէս զիրսն վերացուցանէ. վկայ, ասէ, վասն այնոցիկ՝ զոր տեսեր և լուար՝ եղիցես, և ոչ մասնիչ։ Առ ամենայն մարդիկ, ասէ. ոչ միայն առ համազգիս, այլ և առ օտարս և անհաւատս. զի վկայ այն իսկ է, որ ոչ զգիտողն և էթ, այլ և զանգիտսն հաւանեցուցանէ, և 'ի ձեռն երկաքանչիւր զգայութեանց հաւատարմացուցանէ. որոց տեսերն և լուար՝ ասէ։

«Այլ արդ զի՞ հեղգաս, ասէ, արի միրտեաց և լուա զմեզս քո՝ի կարգալ զանուն նորա»։ Աստանօր մեծ իսկ բարբառեցաւ. զի ոչ ասաց՝ թէ յանուն նորա միրտեսջիր, այլ թէ կարդացես զանուն նորա, այսինքն զՔՍ։ Եւ եցոյց զնա ՅԾ գոլ. զի ոչ է պարտ զայլ ոք կարդալ, բայց միայն զՅԾ. զի և զմեզս թողուլ՝ նորա միայն է իշխանութիւն։ Ա՛ռ այս ՅԱՄ՝ ասաց զընտրութիւն նորա յայ. ոչ այժմէն և ևթ, այլ անդուստ՝ի վերուստ յառաջագոյն. ըստ որում գրէ զնոյն և ինքն իսկ առ եփեսացիսն։ Եւ եցոյց և թէ զոր քարոզէրն՝ յայլ լուաւ զՅԱՄ. և յայտ արար զանձնէ իւրմէ ոչ՝ի հարկէ եկեալ յայն, այլ դիւրաւ՝ի կամաց իւրոց հետևեալ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Աստուածի վկայս և մեզ պարտ է լինել, և ոչ մատնել զայն ինչ յոր հաւատարմացաքն. ոչ միայն յաղագս հաւատոյն ասեմ, այլ և յաղագս վարուց առաքինութիւն։ Արդ զիարդ վկայեսցուք ՅԾ այնոցն, թէ բանիւ քարոզիցեմք, և գործովք զհակառակ նորին առնիցեմք. զի թէ ոք ասիցէ գոլ զինքն քրիստոնեայ, և այլով ՅԱՄԻՒ հրեարէն վարի, բաւական՝ն իցէն լոկ բանքն առ՝ի ցուցումն հաւատոյն. և ոչ երբէք։ Ա՛յսպէս և ոչ մեք բանիւ խոստովանելով թէ յարութիւն է և բազում բարութիւք, արհամարհեսցուք զաստի իրս՝ զի յուսացեալ բարեացն հասցուք։

ՃԱՌՈՒ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

«Այ եղև ինձ 'ի դառնալն Յերուսաղէմ և կալ յաղօթս 'ի տաճարին, լինել 'ի զարմացման և տեսանել զնա զի ասէր ցիս. փութա եւ Յերուսաղէմ վաղվաղակի, զի չեն ընդունելոց զքո վկայութիւնդ վասն իմ։ Եւ ես թէ որպէս անդէն 'ի ներքս 'ի հանդէսն 'ի վկայութիւնս մրցէ զանձն իւր։ Զկնի առաջնոյ տեսլեանն եկի, ասէ, Յերուսաղէմ, և դարձեալ տեսի այլ տեսիլ ահագին. զոր և զարմացուն և թրմբրութի կոչէ առ 'ի նշանակել զանբաւելի երևումն։ «Կալով, ասէ, յաղօթս եղէ 'ի զարմացման»։ Յայտ առնէ թէ ոչ լոկ տեսիլ էր, այլ սոսկալի. վասն որոյ և յաղօթս կալով նորա երևեցաւ։ Եւ զի ոչ բաւեաց առնուլ զհանդամանս երևմանն, զարմացումն կոչէ։ Եւ զի առանց վկայութե էր այս տեսիլ, յելից իրացն առնու զսորայն հաւատարմութե. զի ասաց՝ թէ չեն ընդունելոց զքո վկայութիդ, և չընդունեցան։ Յայտնէ և զայս՝ թէ ոչ երկնչելով 'ի վշտացնոցա փախեաւ, այլ զի ոչ էին ընդունելոց զվկայութենորա։ Ապա և զիւրն պատասխանի 'ի մէջ բերէ և ուսուցանէ զնոսա՝ թէ մանաւանդ 'ի մտածութէ պարտ էր նոցա զայս ճանաչել և ամենևին ընդունել զնորա քարոզութիւն։

«Այ ասեմ, ասէ, տէր՝ ինքեանք իսկ գիտեն, զի ես էի որ 'ի բանտն տայի և գան հարկանէի ըստ ժողովրդոյն զհաւատացեալսն 'ի քեզ»։ Ոչ ընդդիմախօսելով Քրիստի ասաց զայս. քաւ լիցի. այլ կամեցաւ իմանալ զիրացն զայատճառն, որ այնպէս հրաշափառ թուէր՝ թէ ընդէր Հրեայքն ոչ են ընդունելոց զնորա վկայութիւնն վասն Ցոի. բայց զայն ոչ ասաց նմա Քրիստոս, այլ միայն ասաց նմա գնալ։ Վասն որոյ յաւել՝ թէ «Եւ յորժամ հեղոյր արիւնն Յստեփաննոսի վկայի քո, ես ինքն էի որ 'ի վերայ կայի և կամակից լինէի սպանմանն նորա»։ Յայտ առնէ ամենայնիւ որպէս զի վասն այսորիկ պարտ էր նոցա ընդունել զնա։

Լուսանոր երկուս կաղմէ իրս. մի զի պատասխանի նոքա ոչ ունէին զՊաւղոս Հալածելոյն, զի ոչ վայելէ չապէս և ոչ ըստ իրաւանց հալածէին զնա. և երկրորդ ուսուցանէ թէ ՅԾ է Քս. զայն իսկ որ առանց ակնկալութեան էր՝ մարգարէանալով, և ոչ 'ի լեալսն առ ժամայն հայելով միայն, այլ զհանդերձեալսն յառաջագոյն գիտելով թէ չէն Հրեայքն ընդունելոց զքո վկայութիւնդ վասն իմ, թէ պարտ է քարոզել զնա ՅԾ։ Ա՛յլ զնորդ ապա նախ ասէր Քս՝ թէ «Կրեսցէ զանուն իմ առաջի ազգաց և թագաւորաց և որդւոցն Իսրայելի»։ Ա՛յս. բայց զայս ոչ ասաց թէ հաւատասցեն առանց պատՃառի, կամ թէ հաւանեցուսցէ։ 'Նա և այլ ազգ. քանզի Հրեայքն և յայլ տեղիս հաւանեալ լինէին. իսկ աստանօր ոչ էս, յորում մանաւանդ հաւանել պարտ էր՝ գիտելով զնորա զառաջին յօժարութիւն։

Օ՛ի տես դարձեալ թէ ուր կամ առ ո՞ բանս վախՃանի. 'ի զօրաւոր գլուխ մնալորութեան՝ եթէ սա ինքն էր որ հալածէրն. և ոչ միայն հալածէր, այլ և բիւր ձեռօք սպանանէր զՍտեփաննոս։ Ա՛րդ յիշեցոյց նոցա զչար սպանութիւնն և զդժուարին. իսկ նոքա յայնժամ մնանանդ ոչ հանդուրժեցին, քանզի յոյժ սովաւ կշտամբեաց զնոսա։ Եւ մարգարէութիւն Քոի լցեալ լինէր՝ թէ չէն ընդունելոց զքո վկայութիւդ. և չարաչարութիւն և ամբաստանելն յոյժ Ճշմարիտ գոլ զնոցանէ ստուգէր և զնախանձն նոցա չարաչար յայտնէր 'ի վկայութէնն զոր վասն Քոի տայ։ Տգնասպեալքն՝ ոչ ներէին Հրեայքն ամ հրապարակախօսութենն նորա. այլ 'ի լսելն թէ ասաց ցիա՝ զնա դու, զի ես 'ի հեթանոսս հեռաւորս առաքեցից զքեզ, յոյժ լցեալք ցասմամբ աղաղակէին որպէս առ Ստեփաննոսիս, և ասէին՝ բարձ զդա. զոր և առ Քոիս 'ի ժամ խաչին ասէին։ Ո՛հ անհանՃար մոլեգնութենն. ընդէր արդեօք ստիպէք բառնալ զայրդ. զի ՅԾ խօսեցաւ ընդ դմա, և զի հնազանդեցաւ դա լսել՝ այ. աստի ուսանիմք թէ զնիստ և զանհնազանդ հոգի ոչ ինչ կարէ կակղել։

«Լու ունկն դնէին նմա, ասէ, մինչև ցայս բան. ապա բարձին զձայնս իւրեանց և ասեն. բարձ զդա յերկրէ, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ»։ Ով ամենա-

դաժանք, դմա՛ ոչ է պարտ կեալ՝ յամի հպատակելու մեզ ոչ. և մերոյ ամբարշտութեդ պարտ է կեալ, ողպիզծք և մարդասպանք։ « Եւ յաղաղակէին նոցա և ընկենուլ զՀանդերձս և զփոշին ցանել յօդս՝ հրամայեաց հազարապետն մուծանել զնա 'ի բանակն. ասէր դանիւ հարցանել զնա, զի գիտասցէ վասն որոյ յանցման այնպէս աղաղակէին զնմանէ »։ Տես զնոցա զանմիտ կատաղութիւն, աղաղակելովն և զՀանդերձսն ընկենելով և զփոշին յօդս ցանելով, յայտ առնելով զդժնդակ բարկութիւն իւրեանց իբրև 'ի գիւէ մոլեալք. և զի դժուարին լինիցի հակառակութիւն, երկեցուցանել կամելով զիշխանն։

Այլ տես՝ ոչ ասէն զպատՃառն, քանզի ոչ ինչ ունէին ասել. այլ միայն աղաղակելովն զարհուրեցուցանել կարծէին։ Եւ յորժամ ասացին՝ թէ չէ պարտ դմա կեալ, յայնժամ հազարապետին պարտ էր քննել 'ի նոցունց ինքեանց և 'ի դատախազիցն իմանալ. և քան զնա հարցանել՝ զի ծանիցէ զպատՃառն 'ի նոցանէ որ աղաղակէին՝ մանաւանդ պարտ էր հարցանել և իմանալ, թէ իրացն ասացելոց իրաւացեալք լինիցին։ Այլ վայրապար իշխանութիւն ընորհուկս առնէ Հրէիցն. զի ոչ զայն ինչ խնդրէր զի իրաւամբք գործիցէ, այլ միայն զի դադարեցուսցէ զանիրաւ ցասումն նոցա։

« Այլ իբրև պրկեցին զնա փոկովք, ասէ Պաւղոս ցՀարիւրապետն որ 'ի վերայ կայր, եթէ զայր Հռոմայեցի և անարատ պարտ իցէ դան հարկանել։ Արդ միթէ ստիցէ արդեօք զայս Պաւղոս. օն անդր, քաւ լիցի. քանզի Հռոմայեցի էր ստոյգ, ընդ իշխանութիւն նոցին գոլով. վասն որոյ և ասէ զայս, զի խափանեսցէ զանիրաւ դատաստանն։ Եւ եթէ ոչ այլ ինչ երկնչէր արդեօք զի մի անիրաւ և սուտ ըմբռնեալ 'ի Հռոմայեցի զինքն ասէին, մեծագոյն ինքն հատուսցէ պատուհաս։ Եւ տես զի ոչ լոկ ասէ զայս, այլ յաւելու՝ թէ զայր անարատ։ Զայս ասելովք կրկին առնէ զամբաստանութիւն. մի զանիրաւութիւն նոցա յայրն անարատ, և երկրորդ զի Հռոմայեցի էր աղատ գոլով. քանզի մեծ ունէին յայնժամ զգոլն Հռոմայեցի։ Եւ զի ասի՝ թէ յԱդրիանոսէ թագաւորէ ՃամՔն որ ընդ

իշխանութիւն հռոմայեցւոցն էին՝ Հռոմէ ասէին։ Եւ զի Ադրիանոս զկնի ժամանակացն Պաւղոսի էր. թերեւս այսպէս իցէ։

ԿԻՐ. Օ՛ի Պաւղոս ոչ էր պաղեստինացի, այլ կիլիկեցի, բուն իսկ ընդ հռովմայեցւովք գոլով։

ՈՍԿ. Լաւ քանզի դիւրին էր նմա արհամարհել զհարկանէին համբերութիւն, բայց զի մի արհամարհելի դիւրաւ երեւեսցի նոցա, վասն որոյ այժմ 'ի յոլովագոյն երկիւղ արկանէ զնոսա. զի գոնս անիրաւաբար զնովաւ արկանէին. ըստ որում և վասն իրաւանց ոչ մինչ փոյթ առնէին և կամ բնաւ իսկ սպանանէին զնա. բայց յորժամ զայն ասաց, ոչ ևս համարձակէին։ Տես թէ որպէս տեղի տայ ճանչ լինել բազում մինչ մարդկօրէն, և առ սովաւ և առ այլոցն։ Եւ միտ դիր թէ որպէս 'ի կասկածի եղէն և յանձն առին պատճառ արձակելոյ գոլ զնա զասելն հռոմայեցի. որք զառաջինն ոչ կասկածէին իբրև 'ի անանկէ ուրուք։

«Այլ իբրև լուաւ Հարիւրապետն, մատուցեալ առ հազարապետն պատմեաց և ասէ. զինչ կամիս առնել, քանզի այրն այն հռոմայեցի է։ Մատուցեալ հազարապետն ասէ ցնա. ասա դու ցիս՝ հռոմայեցի՞ ես. և նա ասէ՝ այո։ Պատասխանի ետ հազարապետն. ես բազում գլխոց զզինուորութիս զայս ստացայ։ Ասէ Պաւղոս. ես ծնեալ իսկ 'ի դմին եմ. և վաղվաղակի 'ի բաց կացին որ հարկանելոցն էին զնա. և հազարապետն իսկ երկեաւ իբրև գիտաց թէ հռոմայեցի է. և զի կապեալ ևս էր զնա»։ Այս ուրեմն ոչ էր սուտ՝ հռոմայեցի ասէն, և հազարապետն յիրաւի երկչիւղ էր։ Ասելովն իւրով Պաւղոս՝ եթէ 'ի դոյն իսկ ծնեալ եմ, յայտ արար թէ հօր հռոմայեցւոյ էր ծնունդ։

ԿԻՐ. Լաւ ոչ անենչանի ուրուք, այլ պատուեցելոյ. զի և բազումք 'ի Հրէից յայնժամ բնակէին 'ի Հռոմ։ Իսկ ոմանք ասեն՝ թէ գնոց իսկ ստացեալ էր հայր նորա զհռոմայեցի գոլն 'ի հռոմայեցւոցն, որպէս հազարապետն ասէր՝ թէ ես բազում գլխով ստացայ զիշխանութիս. զոր զզնոցն ասեն նշանակել գլխովքն։ Այլ զինչ արգեօք յայսմանէ լինի. միտ դիր. արձակեալ անդէն 'ի կապանացն։ Իջոյց զնա առ Հրեայսն։

«Եւ 'ի վաղիւ անդր, ասէ, կամէր գիտել զՀնմարիսն թէ զինչ չարախօսութիւն իցէ զնմանէ Հրէիցն. արձակեաց զնա և հրամայեաց կոչել զքահանայապետսն և զամբատեանսն. և ինքուրեակ զՊաւղոս կացոյց 'ի մէջ նոցա»։ Արդ հաղարապետն զի առեալ նախ զնա 'ի բաց եհան 'ինոցանէ, և ինքն 'ի բաց գնաց՝ տեսեալ զյանդգնութիւն նոցա. և եթէ ոչ՝ թերևս 'ի ձեռս սըւեալ էր զնա նոցա. և եցոյց այնու՝ զի կամաւ և ոչ ըստ իրաւանց կրէր Պաւղոս զոր ինչ կրէր 'ի նոցանէ։ Եւ այնպէս իրօքն պատասխանի արար նոցա. այսինքն 'ի բաց առնելովն զնա 'ի նոցանէ բանիւ և ոչ կամելով տալ նոցա պատասխանի. քանզի յոյժ մեղադրէր նոցա։ Բայց զայն՝ զի դարձեալ հանդգնեղիցի, վայելչապէս արար. քանզի եցոյց նոցա՝ եթէ զոր ինչ անիրաւեալն սպանանեն, և մանաւանդ ամբիծ գոլով նորա, իրքն անիրաւութիւն էր. և զի լուծեալ զնա ի՞նչոյ յատեանն, զայս 'ի սկզբանն պարտ էր առնել. վասն որոյ մանաւանդ տարակուսէին Հրէայքն. և ինքն ոչ ընդ բազմութիւնն և ոչ ընդ հանդիսին խօսի։

«Իսկ Պաւղոս հայեցեալ յատեանն ասէ. արք եղբարք, ես ամ ուղիղ մտօք գնացեալ եմ առաջի այ մինչև ցայսօր»։ Այսինքն ոչ գիտեմ զանձն իմ անիրաւ ինչ եղեալ առ ձեզ, և ոչ արժանի կապանացս այսոցիկ գործեալ ինչ. զի և ոչ 'ի մարդիկ հայեի, այլ առաջի այ ցուցանեի զուղղութիւն, որում սուտ և թիւր լինել այ անհնար է։ «Եւ քահանայապետն Անանիա հրամայեաց սպասաւորացն հարկանել զբերան նորա։ Յայնժամ Պաւղոս ասէ ցնա. հարկանելոց է զքեզ ա՞ծ, որմ բռեալ. և դու նստիս դատել զիս ըստ օրինաց, և առանց օրինաց հրամայես զիս հարկանել։ Եւ որ շուրջն կային ասեն. զքահանայապետ այ հայհոյե՞ս։ Եւ ասէ Պաւղոս. ոչ գիտեի, եղբարք, եթէ իցէ քահանայապետ. գրեալ իսկ է՝ զիշխան ժողովրդեան քո ոչ հայհոյեսցես»։ Ընդէր պատասխանատրէ Պաւղոս 'ի հարկանելն զինքն իբրև չարախօսելով իմն, և ապա 'ի վերայ ածէ՝ թէ զիշխան ժողովրդեան քո ոչ հայհոյեսցես. քանզի թէ չէր իշխան, զայլ ոք վայրապար պարտ էր անարգել. և զնմանէ ինքն ասէ, «Բամբասելին զմեզ՝ օրհնեաք». իսկ ասասա-

հոր զներ Հակն առնէ. ոչ անարգէ միայն, այլ և անի-
ծանէ. կամ զիարդ ոչ գիտէր թէ քահանայապետ էր։
Տեսցուք զայսոսիկ։

Լ՚Արդ ասեմք՝ թէ համարձակութիւն մանաւանդ են բան-
քիս քան թէ ցաստան. ոչ կամէր դիւրաւ արհամար-
հելի լինել, և անիրաւ գործոյն յառաջ գալ։ Զի թէ
հաւարապետն արձակէր զնա և ինայեր ինքն հարկա-
նել 'ի մատնել զնա նմա Հրէիցն, ապա զիարդ նոքա
զայն առնէին, և քահանայապետին պաշտօնէիցն տալ
հրաման հարկանել զնա՝ մանաւանդ յանդգնութիւն
էր գործ։ Վասն որոյ և նա ոչ առ սպասաւորին տա-
բածանէր զբանն որ Եհար, այլ առ այն՝ որ հրամայ-
եաց։ «Հարկանելոց է զքեզ ՝ն» ասէ։ Ոչ բարկու-
թիւն էր բանս, այլ մարգարէութիւն. որպէս դիպելոց
էր նոցա չարիքն, զոր և Քս դուշակեաց յառաջա-
գոյն։ Իսկ որմ բռնեալ՝ զմարմնաւորս փոյթն ասէ, զոր
և ինքն իսկ Քս դերեզմանս բռնեալս ասաց զնոսա. զի
զարտաքինն, ասէ, սրբէք. և ներքինն ձեր լի է ամ-
չարութիւն։ Արդ ոչ էր անարգանաց այսպէս ասելն
որպէս կանխաւ ասացի. ապա թէ ոչ՝ և զառ 'ի Քսէ
ասացեալն թերևս անարգանս ասասցէ՝ որ՝ թէ «Վայ
ձեզ, զի նման էք գերեզմանաց բռնելոց». և «Դուք
'ի հօրէ սատանայէ էք»։

Լ՚այ, ասէ, թէ նախ քան զհարկանելն էր ասացեալ,
ոչ էր բանն ցաստան, այլ համարձակութիւն։ Այլ ես
նախ ասացի զպատճառն՝ թէ զի յանդգնութիւն նոցա
էր գործն. և մանաւանդ Քս 'ի բազում տեղիս ան-
արգեաց զՀրէայսն՝ ինքն 'ի նոցանէ անարգեալ լի-
նելով. որպէս յորժամ ասէ. «Զիարդ կարէք դուք
հաւատալ». և «Մի կարծէք թէ ես չարախօս եմ ըզ-
ձէնք առ Հօր. գոյ որ չարախօսէ զձէնք». արդ ոչ էր
այն անարգանք. քաւ լիցի։ «Դու նստիս, ասէ, գա-
տել զիս ըստ օրինացն». փոխանակ ասելոյ՝ դու պար-
տական գոլով և բազում տանջանաց արժանի ըստ օ-
րինացն, իսկ զիս անօրէնութիւնդ դատիս։ Տես արդ թէ
որպէս զարհուրեցաւ քահանայապետն 'ի նոքին հա-
մարձակութենէն. զի զոր 'ի դէպ էր անդրէն դարձու-
ցանել զնա՝, զհարուսն և զկսկծելի բանսն, ողբէն
մանաւանդ՝ թէ զքահանայապետ ՝ն հայհոյէս։ Ապա

յետոյ կամեցաւ և նա ցուցանել թէ ոչ վասն երկիւ-
ղի և ոչ թէ զի չէր արժանի Անանիայն այն լսել զայ-
նոսիկ՝ ասաց այսպէս թէ գրեալ է, այլ օրինացն[1] հա-
ւանելով ասասնօր. որով և նոքա յոյժ հաւանեալ՝
լուռ լինէին։

Իսկ ընդէր ոչ գիտէր թէ քահանայապետ էր նա։
Վայելչապէս. քանզի փուլթով փոփոխէին, և կարգ օ-
րինացն եղծեալ էր, և նա ընդ երկար ժամանակաւ
հեռացեալ էր 'ի Հրէիցն. և տեսանելով զնա 'ի միջի
հանդերձ այլովք բազմօք, ոչ կարէր գիտել յայտնա-
պէս՝ թէ քահանայապետ իցէ, բազմայ գոլով նոցա
և զանազանից։ Իսկ զայս բան առ նոսա տարածանե-
լով և պատասխանատրելով թուի ինձ թէ օրինացն լե-
նի հպատակեալ։ Եւ ընդէր արդեօք ինքն հրեայ գո-
լով, անդանօր մնալ և խրատեալ, ոչ բնակէր ընդ
նոսա դեգերելով։ Վայելչապէս. քանզի կամէր խա-
փանել զօրինացն իրս, և աւետարանին քարոզութիւն
բազում իրս հակառակ նոցա կազմել. սմին վասն
յամ տեղիս հալածական եղեալ փախուցեալ լինէր։

Այլ տես որչափ հեզութիւն ընդ նոսա խօսի. «Ոչ
գիտէի, ասէ, եղբարք՝ եթէ իցէ քահանայապետ»։
Եւ զի ոչ հեգնելով ասաց, 'ի վերայ ածէ զՀշմարիտ օ-
րէնսն. «Գրեալ է, ասէ. զիշխան ժողովրդեան քո
ոչ հայհոյեսցես»։ Եւ իշխան տակաւին խոստովանի
զնա։ Արդ զի մի ասիցեն թէ Հշմարիտ է զոր ինչ
լուան զնմանէ վասն օրինացն արհամարհելոյ, զի ա-
հա և զքահանայն առաւել քան զօրէնսն անարգեաց
նա, ընթանայր նա յօրէնսն բանիւ զոր ասաց. և յօ-
րինացն զոր երկրորդեաց նա՝ յայտ արար որոց նրս-
տեալ դատեին զնա՝ իբրև զօրինազանց, եթէ պահէր
նա զօրէնսն և սիրէր զնա։ Զի թէպէտ և փոքր փոքր
ինչ խափանէր, զի զթլփատութիւն և զշաբաթս լու-
ծանէր նա, այլ նոքա մեծամեծօք ևս լուծանէին զնա.
զի 'ի հրեշտակս և 'ի հոգիս և 'ի յարութիւնն զոր քա-
րոզէր օրէնքն, նոքա ոչ խոստովանէին. առ որս ըղ-
համարձակութիւնն 'ի Հահ ցուցանէր Պաւղոս։

1 Միւսն օրաբոյն։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ասցուք և մեք զհեզամտութիւն և զհամարձակութիւն, զի երկոքումքքս իցէ մեք կատարեալք։ Եւ բազում ստուգութիւն պէտք են որոշել զսոսա 'ի ներհակացն. զի ընդդէմ է համարձակութիւնն յանդգնութիւն, և հեզամտութիւնն անարիութիւն։ Արդ տեսցուք՝ գուցէ զչարութիւնն իբրև զառաքինութիւն ողջունիցեմք։ Եւ լինի այս ոչպէս. յորժամ զայլս զրկեալ և անիրաւեալ տեսանելով լռեմք, անիրաւուն է. իսկ յորժամ մեք զրկեալք հանդուրժեմք, հեզամտութիւն. և յորժամ անձանց վրէժխնդիր լինիցիմք, յանդգնութիւն է. և յորժամ յաղագս այլոց աշխատիմք, համարձակութիւն. և ուղղեմք զայս, թէ յախտից ազատք իցեմք։

ՃԱՌՈՒ ՔԱՌԱՄԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ՈՍԿ. «ԲԲԵՒ գիտաց, ասէ, Պաւղոս, եթէ մի կողմն սադուկեցւոց է և միւսն փարիսեցւոց, աղաղակէր 'ի մէջ ատենին. արք եղբարք, ես փարիսեցի եմ, որդի փարիսեցւոյ. վասն յուսոյ և յարութեան մեռելոց ես ահաւասիկ դատիմ»։ Դարձեալ մարդկապէս բարբառի, և ոչ յատուկ ինքնիւն վայելէ և յայսմիկ և յայն՝որ յետ այսորիկ է։ Եւ քանզի կամեցաւ հերձուլ յերկուս զբազմութիւնն զայն՝ որ չարաչար միաբանեալ էին հակառակ նմա, և զոր ասաց՝ Ճշմարիտ էր աստանօր և ոչ սուտ. քանզի փարիսեցի էր 'ի ծննդենէ և 'ի նոյն օրինաքն վարժեալ։ Եւ զի մի թուիցի սուտակասպաս լինել յասելն փարիսեցի գոլ զինքն, 'ի վերայ էած՝ թէ «Վասն յուսոյ և յարութեան մեռելոց դատիմ ես»։ Եւ քանզի նոքա ոչ ախորժէին ասել թէ ընդէր դատեն զնա, հարկի այնուհետև ինքն ասել։ Եւ զայս ասելով, 'ի չարախօսութէ նոցա և 'ի դաւաճանութէ ազատեաց զանձն իւր. որով և նոքա յամօթ եղեն։

«Եւ զայս իբրև ասաց, եղեն հերձուածք փարիսեցւոցն և սադուկեցւոց, և պատառեցաւ բազմութիւն. քանզի սադուկեցիքն ասէին՝ չիք յարութիւն և ոչ հրեշտակք և ոչ հոգի. բայց փարիսեցիքն խոստովանին զերկոսեանն. և եղև աղաղակ մեծ»։ Տեսանե՞ս զի ոչ ինչ անմարմին գիտեն սադուկեցիքն, թերևս և ոչ զոյծ ասեն գոլ անմարմին, յոյժ թանձրասիրտք գոլով և մարմնասէրք. վասն որոյ և ոչ զյարութիւն ախորժեն գոլ կամ հաւատան լինել, թանձրամիտք և կոյր մտօք, անհաւատք գոլով և մարմնոք և էթ նման ընչաւորաց։ Արդ 'ի պատճառս յարութեան որ հաւաստին է, ոմանք կալան յանձին, և կէսք ոչ հաւատացին. և այնոքիկ՝ որ զի ամենեքեան ընդդէմ նորա էին, եղեն ընդդէմ միմեանց մեծապէս վիճմամբ։

«Յոսն կացին ոմանք 'ի դպրաց անտի 'ի կողմանէ փարիսեցւոց . հակառակէին և ասէին , ոչ ինչ չարախօսութիւն գտանեմք յառնս յայսմիկ ։ բայց եթէ Հոգի խօսեցաւ 'ի դմա կամ հրեշտակ »։ Ընդէր յառաջ քան զայս բան վասն նորա ոչ եռուն նոքա այսպիսի պատասխանի . յորժամ ընդ նոսա եղև , յայնժամ զպատասխանին տան վասն նորա։ Տեսանեա, յորժամ ախտն առեալ տան՝ թէ որպէս գտեալ լինի ճշմարտութիւն։ Որպիսի կամ զինչ ամբաստանութիւն է վասն նորա , ասեն . բայց եթէ հրեշտակ կամ Հոգի խօսեցաւ 'ի դմա։ Տես և զհանձար իմաստութեան Պաւղոսի, ոչ ինչ տուեալ նոցա պատճառս առ 'ի կարծել անարգելոյ նմա զօրէնսն ։

«Այլ 'ի բազմանալ ամբոխին , երկուցեալ հազարապետն թէ գուցէ ձեղքիցի Պաւղոս 'ի նոցանէ , հրամայեաց զօրականին իջանել յափշտակել զնա 'ի միջոյ նոցա և ածել 'ի բանակն »։ Երկնչի այնուհետև հազարապետն , զի մի սպանցեն զնա , քանզի գիտաց թէ հռոմայեցի է . և ոչ էր իրքն առանց վշտի , այսինքն սպանանիցն Պաւղոսի ։ Տեսանեա , զի յիրաւի զանձն իւր խոստովանեցաւ հռոմայեցի գոլ . զի եթէ ոչ էր ասացեալ զայն , թերևս ոչ էր նա երկուցեալ այժմ , և ոչ զօրականաք մեծաւ բռնութիւն 'ի միջոյ նոցա զնա յափշտակեալ ։ Տիւնա քանզի և լուաւ իսկ հազարապետն , զի ազատեցին զնա յամբաստանութենէ փարիսեցիքն , և դատ արարին վասն նորա , այնուհետև մեծաւ համարձակութիւն յափշտակէ զնա 'ի միջոյ նոցա . այլ և նոյն իսկ ասացեալքն 'ի նոցանէ զՊաւղոսէ թէ հրեշտակ կամ Հոգի խօսեցաւ 'ի նմա , իմաստութեամբ լի են ։

ԵՓՓ . Դարձեալ դասակն Հռոմոց յափշտակեցին զնա , և 'ի տան բանտի վասն հրէիցն և սպանողաց իւրոց թաքուցին զնա . և զի հանդերձեալ էին փութով սպանանել , յայնչափ վշտացն եղև ճողոպրեալ ։

ՈՍԿ . «Այլ 'ի վաղուեան գիշերին եկաց առ նմա տէր և ասէ . քաջալերեաց , Պաւղէ . զի որպէս վկայեցեր վասն իմ Յերուսաղէմ , պարտ է քեզ և 'ի Հռոմ վկայել։ Ի միտ առ և զերևումն Քրիստի՝ թէ որչափ

լի է մխիթարութիւն։ Յառաջագոյն գովէ զնա՝ թէ որպէս վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ. ապա և զանյայսն ոչ թողացոյց, այլ յայտնեաց նմա զգնալոյն՝ի Հռոմ, որ և ահագին էր. զի անդ ոչ միայն գնասցես, ասէ, այլ և՝ի մեծագոյն պսակս հասանիցես վկայելով վասն իմ յայնմ մեծ քաղաքին։

Բ. Այլ ընդէր ոչ նախ քան զանկանելն՝ի վիշտս երևեցաւ Քս։ Վայելչապէս. վասն զի հանապազ՝ի վիշտս մխիթարէ ՅԾ. զի յայնժամ մեծ և փափաքելի երևեալ լինի մխիթարիչն, և՝ի տաղնապի նեղութենն կրթելով զմեզ։ Կա և այլ ազգ. քանզի յայնժամ նախ քան զայս վիշտս՝ի դիւրութեանէր, նեղողուի գտեալ և արձակեալ՝ի կապանաց. բայց այժմ հանդերձեալ էր ընդունել զդժուարինսն՝ի նոցանէ, այսինքն ըզդաւ մահու։

« Օ՛ի իբրև այդ եղև, արարեալ ժողով Հրէիցն՝ նզովեցին զանձինս ոչուտել և ոչ ըմպել մինչև սպանցեն զՊաւղոս. և էին աւելի քան զքառասուն որոց զայս ընդ միմեանս երդումն արարեալ էր։ Յորժամ տեսին պիղծքն այնոքիկ զամենայն զոր կամէին խափանեալ և անվնաս՝ի ձեռն ինքեանց այնուհետև յանդգնին զամենայն ինչ առնել, կամեցեալ զնա ըսպանանել յառաջ քան զայս, և եղև խափանեալ. բայց ոչ երբէք դադարեն՝ի չարութենէ այնչափ վրիպեալ լինելով, և տակաւին լկտին։ Տես արդ որչափ մանաւանդ տնօրինեցաւ. որպէս զի՝ի մոլեգնութենն թուլացեալ լիցին նոքա, ուսանելով զայնոսիկ՝ի ձեռն որոց հնար էր նոցա զղջանալ. բայց ոչ ինչ նուազ՝ի վերայ հասեալ լինին չարութիւն։ Եւ տես թէ որպէս ուժգինք էին և յորդորք՝ի չարութի, և նզովեցին զանձինս. ապա ուրեմն յամենայնի և հանապազ նզովեալք են նոքա. քանզի զանձինս փակեցին՝ի նզովս, և զՊաւղոս ոչ կարացին սպանանել։ Եւ քառասուն այր համանդամայն. զի այնպիսի է ազգն այն. յորժամ յաղագս բարւոյ իմիք պարտ է միաբանել, և ոչ երկուս եկեալ լինին՝ի միասին. իսկ յորժամ յաղագս չարի, հանդէսք խմբից և դունդք բոլորովին. նա և զիշխանսն ևս հաղորդս առնուն կատարել զչար։

« Մատեան, ասէ, առ քահանայապետն և երիցունսն և ասէն. նզովիւք նզովեցաք զանձինս ոչ ինչ Հաշակէլ մինչև սպանցուք զՊաւղոս »։ Ընդէր, զինչ չար արար ապաքէն. զի կեանս աւետարանեաց ձեզ. զի առ ՅԾ կամեցաւ ածել զձեզ։ Ցեսս ջան անչափ առ 'ի կատարելոյ զչար։ « Բայց դուք զգացուցէք Հաղարապետին Հանդերձ ատենիւն, զի իջուսցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք Հշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. և մեք յառաջ քան զմատչելն նորա պատրաստեմք 'ի սպանանել զնա »։ Ահա բանք աւելորդք և լի անմտութեամբ։ Ո՞չ երկիցս առ ձեզ հրապարակաբանեաց. ո՞չ փարիսեցի զինքն գոլ խոստովանեաց. և առաւել քան զայս զինչ առնէ։ Այսպէս ոչ երկնչէին 'ի չարեաց. ոչ դատաստանք 'ի նոսա, ոչ օրէնք. այսպէս քան զամենայն մարդիկ էին յանդգնութեանք և խրոխտք. և զկամսն խոստովանէին, և ըզգործն չարութեանէ պատմեն։

« Այս լուեալ քեռորդւոյն Պաւղոսի զդաւաճանութիւն՝ եկն եմուտ 'ի բանակ անդր, պատմեաց Պաւղոսի. և կոչեցեալ առ իւր զմի 'ի հարիւրապետացանտի ասէ. զպատանիս զայս տար առ Հազարապետն, զի ունի ինչ պատմել նմա. և նորա առեալ զնա տարեալ առ Հազարապետն »։ Այս իսկ անօրէնութեանն ՅՍ էր, որ ոչ զմտաւ ածին նոքա թէ լուիցէ պատանին զդաւաճանէն իւրեանց։ Եւ զիարդ Պաւղոս ոչ զարհուրեցաւ. քանզի զմտաւ էած զլսէն զբանն պատանւոյն՝ թէ ՅՍ է գործս այս և նա կարող է փրկել. և զամենայն ինչ 'ի նա ընկեց։ Սակայն և ոչ այնպէս զանձն իւր թողացոյց. այլ ասաց Հազարապետին ըզդարանագործութիւն. Հաւատաց Քրիստի և եկաց։

Ցեսս դարձեալ զի և մարդկային նախախնամութիւն լինի փրկեալ. զի Հազարապետն ոչ թողացոյց իմանալ ումեք և ոչ հարիւրապետին, զի մի լինիցի իրքն յայտնի։ Եւ նա տարաւ զպատանեակն առ Հազարապետն և ասէ. « Կապեալն Պաւղոս կոչեաց զիս և աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ, ունի ինչ պատմել քեզ։ Եւ առեալ զձեռանէ նորա Հազարապետին՝ զնաց մեկուսի. Հարցանէր թէ զինչ ունիս խօսել ընդ իս. և նա ասէ՝ Հրեայք միաբանեցին ա-

զաչէլ զքեզ, զի՝ի վաղիւ զՊաւղոս ի՝ջուսցես յատեան, իբրև թէ կամիցին ՁՀմարտագոյնս ինչ հարցանել վասն նորա. արդ դու մի անսայցես նոցա, քանզի դարան գործեալ է նմա՝ի նոցանէ արանց աւելի քան զքառասուն. որք նզովեցին զանձինս ոչ ուտել և ոչ ըմպել մինչև սպանցեն զնա, արդ պատրաստ են և սպասեն քում հրամանիդ։ Այլ հազարապետն արձակեաց զպատանին, պատուէր տուեալ մի ումեք ասել թէ զայս զգացուցեր ինձ »։

Արդ երևեցաւ նմա տեր և քաջալերեաց զնա. և յետ երևելոյն՝ դարձեալ թոյլ ետ նմա մարդկապէս կեալ։ Եւ զիարդ այս ոչ զարհուրեցոյց զնա և ոչ ասաց թէ ուրեմն խաբեցայ՝ի Քէնէ, այլ հաւատաց Քէնի։ Թէ պէտ և հաւատաց, սակայն և այնպէս ոչ յանհոգս եղև. այլ զոր ինչ առնել պարտ էր՝ի մարդկային իմաստասիրութէնէ, ոչ մատնեաց։ Բայց դու տես զչարութէնէ նոցա. հարկ եդին զնզովն անձանց իւրեանց։ Ահա պահք սպանուլեան մայր. որպէս հարք նոցա պահեցին պահս և սպանին զՆաբովթ արդար. որպէս Հերովդէս զհարկն որ յերդմանէն՝ եդ զանձամբ և սպան զՅովհաննէս, նոյնպէս և սոքա. զի այսպիսի է արուեստ բանսարկուին, ձևով բարբնկալութէ դնէ զորոգայթն։

Այլ զի մանաւանդ պարտ էր մատչել առ նա և պարտաւորել զնա և պատճառս գտանել մահու և դատարան՝ի միասին հաւաքել, այլ քանզի այսորիւք ոչ ինչ կարացին գտանել, և ոչ ըստ մտաց իւրեանց զոր սովոր էին՝ի սկզբանէ՝ի մարդարէիցն՝ վՀարել ինչ, տայա յայս գան՝ որ ինչ ոչ է քահանայից, այլ աւազակաց. ոչ իշխանաց, այլ ապականչաց։ Նա և գիշխանն իսկ զՀազարապետն՝ որ անիրաւս ինչ ոչ կամէր առնել, ապականել՝ի մտաց ձեռնարկէին։ Բայց տնօրինեցաւ զի և նա իմանայցէ զնոցա դաւաճանութիւն. զի ոչ միայն յոչ ունելոյն ինչ ասել, այլ և՝ի լռելեաւն դաւաճանելոյն կշտամբեցին զանձինս իւրեանց ոչ երբէք ուղիղս գոլ։ Քանզի իբրև լուաւ հազարապետն զերդումն քառասուն արանցն՝ որ երդուան սպանանել զՊաւղոս, գողացաւ զնա՝ի գիշերի և՝ի ձեռն Հռոմոյ ետ տանել զնա առ Փելիքս հոգեմտն՝ի Կեսարիա. յաղագս որոյ և յայնժամ ասաց ցհա-

բիւրապետն, յորժամ զայն ինչ պարտ էր առնել։
« Կոչեաց, ասէ, երկուս 'ի հարիւրապետացն և ա-
սէ. պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի
երթիցեն մինչև 'ի Կեսարիա, և հեծեալս եօթանա-
սունս և տիզաւորս յաջմէ և յահեկէ կողմնապահս
երկերիւր՝ յերից ժամուց գիշերոյն, և գրաստ պատ-
րաստական յոր հեծուսցեն զՊաւղոս. որպէս զի ի ջուս-
ցեն ապրեցուսցեն զնա»։ Տեսանէս զնոցին չարութիւն
որչափ հարկս հասուցին և հարիւրապետացն. զի թէ
նոքա այնչափ փոյթ նզովիւք յանձինս առին և զա-
մենայն տագնապս, յոյժ մանաւանդ և նմա պարտ իսկ
էր զայս առնել. յիրաւի և զգուշանայր փութով։ Եւ
սեա թէ որպէս 'ի ձեռն դատաստանի արտաքնոյն
Պաւղոս ամբիծ գտանի, որպէս Քն առ Պիղատոս։ Տես
և զչարուն նոցա անգործ 'ի բաց քարձեալ։ Մատանե-
ցին զնա, զի դատապարտեսցեն և սպանցեն. այլ նո-
քին հակառակն լինէր, և կեցեալ նմա և ամբիծ գը-
տեալ։ Նա զի թէ ոչ էր եղեալ այսպէս զգուշութի
վասն նորա, ըմբռնեալ լինէր. և եթէ ոչ էր զգու-
շացեալ նմա այսպէս, և կորուսեալ 'ի Հրէիցն լինէր,
եթէ հասեալ էր ըստ իւրեանց մտացն դատապարտել։
Այլ իշխանն Լիւսիաս ոչ միայն յայնմ ամբարիշտ
արշաւանաց Հրէիցն ազատեաց զնա, այլ և յայլոց
բազում իրաց։ Եւ միտ դիր թէ որպէս պաշտօնեայ
նորա լինի երկիւղիւ, կամ որպէս նա ապրեալ լինի
առանց վշտաց հանդերձ այնչափ բանակաւ։ Ի դէպ է
և յետ առաքելոյն զնա այսպէս 'ի գիշերի 'ի վաղիւն
մտցել քահանայապետիցն առ հաղարապետն հայ-
ցել զնա և յամօթ լինել. քանզի ոչ կամեցեալ լի-
նէր նա գիտելով զնոցին նենգութիւն, և ոչ յանձն առ-
նոյր զխնդիրն։ Բայց և այն լինէր 'ի նոցանէ չարիքն
որով առաւել հաւատաց եղելոց դաւաճանութեանցն
'ի նոցանէ. զի և զայն իսկ վայել էր նոցա չարութեան
առնել, և դաղտ իմն զՊաւղոս սպանանել։ Իսկ նա
այնչափ զգուշութիւն առաքեալ գիշերի զՊաւղոս առ
Փելիքս դատաւոր, գրեաց թուղթ՝ որ ունէր օրինակ
զայսմ։ Կլաւդիոս Լիւսիաս առ քաջ դատաւորդ Փելիքս
ողջոյն։ Զայրս զայս կապեալ 'ի Հրէից և մերձ 'ի
սպանանել 'ի նոցանէ՝ հասեալ 'ի վերայ զօրականաւ
ապրեցուցի, իմացեալ թէ հռոմայեցի է. կամեցայ զի-

տել զվնասն վասն որոյ ամբաստանէին զդմանէ. իջուցեալ զդա յատեան նոցա, զոր գտի ամբաստանեալ զդմանէ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինացն. և ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց ունէր վնաս։ Իբրև ազդ եղև ինձ նենգութիւն յայրդ լինելոյ 'ի նոցանէ, յղեցի առ քեզ. հրաման տուեալ և չարախօսացն խօսել զդմանէ առաջի քո. ողջ լեր։ Ահա թուղթ՝ որ պատասխանի ունի վասն նորա։ Ոչ ինչ գտի, ասէ, 'ի դմա արժանի մահու կամ կապանաց. և չարախօսութիւն եղև վասն նոցա մանաւանդ՝ քան թէ վասն նորա. և այսպէս անիրաւ գտեալ՝ մահապարտք լինէին 'ի սկզբան անդ յառաջագոյն։ Ապա և յատեան նոցա իջուցի զդա, և ոչ այնպէս գտի ամբաստանուն։ Եւ զի պարտ էր նոցա վասն յառաջագունէին անիրաւս ինքեանց երևելոյ զարհուրել և յամօթ լինել, նոքա դարձեալ ձեռն արկին զնա սպանանել։ Վասն որոյ առաքեցի առ քեզ, ասէ, զի դարձեալ պայծառագոյն լիցի բանն՝ որ յաղագս դորա. և զչարախօսսն ևս առաքեցի առ քեզ, զի 'ի քում դատաստանիդ՝ ուր այնպիսի իրք առաւել ստուգագոյն քննի, դա ամբիծ գըտանիցի։ Արդ եթէ ազատեալ էր զՊաւղոս 'ի պատճառէն, ընդէր զչարախօսսն ընդ նմա առաքէր։ Դարձեալ իբրու ստուգագոյն լինել քննուէ վայելչապէս։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Օ՛ի այսպիսի են այ տնօրէնութիւնքն. 'ի ձեռաց յորոց ինչասէլ կարծիմք, 'ի ձեռն նոցին գտանեմք զօգտութիւն։ Այս ինչ և առ ամենայն սրբովքն եղև. այսպէս Յովսէփ դաւաճանեալ 'ի կնոջէն, 'ի զգուշութի լիներ հաստատեալ. և Յակոբ յեղբօրէն դաւաճանեալ, մեծապէս խնամք պարսպիւր։ Այսպէս և սա արձակեալ լինի 'ի Կեսարիա, զի և անդանօր յանդիման չարախօսացն խօսեսցի վկայելով առ մեծագոյն տեսարանի և պայծառ լսարանի։ Զի այսու ամենայնիւ անպատասխանի Հրեայքն լինիցին. և ոչ ևս ունիցին ասել, եթէ տեսեալ էաք զՊաւղոս՝ հաւատացեալ էաք. և եթէ 'ի նմանէ լուեալ էաք ուսանելով վասն Քրիստոսի, յանձն առեալ էաք։ Արդ և այս պատասխանիս 'ի նոցանէ 'ի բաց հատեալ եղև։

ՃԱՌՈ ՅԻՄՆԵՐՈՐԴ

«Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ զՊաւղոս ածին գիշերայն յԱնտիպատրիս. և 'ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա երթեալս՝ դարձան 'ի բանակն. և նոքա մտին 'ի Կեսարիա, և տուեալ ցդատաւորն զթուղթն՝ առաջի կացուցին նորա և զՊաւղոս»։ Որպէս թագաւորի մեծի զօրք առաջի գնալով այնչափ բազմութիւն այնպէս ելանէր Պաւղոս ընդ դուռն երուսաղէմի։ Իսկ գիշերի վասն երկիւղի արշաւանաց անօրէն հանդիսին մոլեւոցն բարկութիւն։ Եւ քանզի 'ի բազաքէն զգուշութիւն հանին գնա, մինչև 'ի տեղին նշանաւոր Անտիպատրիս կոչեցեալ յուղարկելով գնա, ապա յայնժամ բազմութիւն անդրէն դարձեալ 'ի բաց կացին 'ի նմանէ։ Թերևս ոչ այնչափ զգուշութիւն արձակէին գնա արտաքս, եթէ ոչ և ինքն իսկ հազարապետն զհետ հանդիպեալ էր անձամբ իւրով։ Եւ զայս առնէր առ 'ի ցուցանել թէ նոցին սպանութիւնն ուժգին էր, և զի մի ինքն ընդ այնր մեղադրեսցի. զի և ահագին երևէր նոցա մահն տարապարտուց, իսկ Հրէիցն ոչ ևս։

«Եւ իբրև ընթերցաւ, ասէ, եհարց թէ յորմէ նահանգէ իցէ. և ստուգեալ եթէ 'ի Կիլիկեայ է, լուայց քեզ, ասէ, յորժամ և չարախօսքն քո եկեսցին. և հրամայեաց յապարանսն Հերովդի պահել զնա»։ Հաւասիկ պատասխանի ետ վասն նորա Լիւսիաս թըղթոփն կանխաւ. իսկ որ լուաւն, աճապարէ դարձեալ 'ի կապանս արկանել զնա։

«Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն Անանիա հանդերձ ծերովք ոմամբք և Ճարտարախօսաւ Տերտիղաւ ոմամբ. որք և զդատաւորին վասն Պաւղոսի»։ Տես զյանդգնութիւն նոցա թէ որքան էր. Թէպէտ և բազում իրօք յամեթ եղեն և արգելիւք խափանեցան, սակայն 'ի չարէն ոչ 'ի բաց կացին.

այլ եկեալ լինին, զի և անդ յամօթ լիցին։ Այլ զդա-
ցուցին առանձինն դատաւորին ամբաստանելով ըզ-
Պաւղոսէ յոլովս նախ քան զՀանդէս առեալն։

«Եւ 'ի կոչէն, ասէ, զնա՝ սկսաւ Տերտիղոսն ամ-
բաստան լինել և ասել. բազում խաղաղութիւն գտեալ
'ի քէն և իրաց ուղղութիւն ազգիս այսորիկ քով խնա-
մով, ամենայնիւ ամենայն ուրեք ընդունակալ եմք,
քաջդ Փելիքս, ամենայն գոհութիւն։ Եւ զի հաւատոցին
ասել ինչ պարտ էր, տես օրպէս վաղվաղակի յառա-
ջաբանին իբրու զխռովեցուցիչ և զյանդգնագործ
խորհեցաւ մատնել զնա. և զի դու, ասէ, զայս ամե-
նայն խնամս արարեր Հրէից։ Եւ այսպէս գովասանու-
թիւն առնապարէ ըմբռնել զդատաւորն։ Այս ձևանայ՝
իբրև այն թէ բազում ինչ ունելով ասել զանց առնէ։

«Դայց զի մի, ասէ, առաւել աշխատ արարիցս ըզ-
քեզ, աղաչեմ լսել մեզ կարճ 'ի կարճոյ քոյին հեզու-
թիւնդ։ Եւ քանզի յառաջագոյն քան զայսոսիկ ընդ
երկար բանիւք ամբաստանութիւն ընդ դատաւորին
առանձինն 'ի Պաւղոսէ հրապարակաբանեաց Տերտի-
ղոս հակառակ Պաւղոսի, այժմ գիտացեալ թէ աշ-
խատեալ լինի, ոչ ասաց լոկ՝ թէ լուր զոր ասելոց եմ.
այլ թէ աղաչեմ լուր մեզ կարճ 'ի կարճոյ քոյին հե-
զութիւնդ, զոր ոչ դարձեալ ընդերկարեմք այժմ. և այս
իսկ հեզութիւն էր նշան իշխանին՝ բազում բանիցն ուն-
կլն դնել։ Եւ դու տես զնորին ճարտարութիւն. յայտ
առնէ թէ և յայնժամ յատենի անդ պատշաճ գոլով
նմա բազում ինչ ասել զՊաւղոսէ, բայց վասն ոչ աշ-
խատ առնելոյ զիշխանն սակաւ ասէ. և թէ նախ քան
զայս յաճախս ասաց՝ ոչ յիշէ, այլ յամբաստանելն
փութայ։

«Զանզի դատաք, ասէ, զայրս զայս ապականիչ և
խռովիչ ամ Հրէից՝ օրք են ընդ տիւեղերս։ Տես օրպէս
'ի ցանկութիւն ածէ տանջանաց զդատաւորն, եթէ
հանդերձեալ էր զտիեղերաց դղրդեցուցիչն ըմբռնել,
և իբրև մեծի ուղղութիւն առեալ լինելով մեծամեծս
խորհել։ Ո՛վ ապերախտ բարուցն. ամ Հրէից, ասէ,
խռովութիւն շարժէ։ Զոր պարտ էր այնու հետև իբրև
զերախտաւոր և հասարակաց ազգին փրկիչ քարոզել,
նոքա զայս ասէին։ «Եւ առաջնորդ է, ասէ, նազո-

բացւոց հերձուածոյն»։ Քանզի թուէր այսպէս նա-
խատելի գոլ իբրեն նազօրացւոցն. զի Նազարէթ նը-
ւաստ և աննշան էր 'ի մէջ նոցա։ «Որ և զտաճարն ևս
կամեցաւ պղծել առաջի մեր»։ Եւ թէ որով իրաւ՝ ոչ
ասէ, զի ծանր զվնասն երևեցուցէ. և զիւրեանց
կողմն այսպէս բարձրացոյց. և տես զնոցայն ոչպէս
նուազեցուցանէ։

«Օ՞ որ կալաք, ասէ, և ըստ մերոց օրինացն դա-
տել կամեցաք»։ Տես զչարաբանութիւնն՝ իբրև զմիշտ
փախստական զոմն և դժաւարբմբռնելի դաւաճանէ
զնա. և թէ հազիւ հանդիպեցաք նմա։ Եւ մանա-
ւանդ նա ոչ էր փախստական, այլ ելօթն աւուրս ու-
նէր 'ի տաճարին։ «Կամեցաք, ասէ, ըստ օրինացն
մերոց դատել»։ Տես ոչպէս անարգել զօրէնսն. միթէ
օրինա՞ցն էր հարկանելն սպանանելն կամ դարան
գործել անիրաւութիւն։

«Լ՞կեալ Լիւսիաս հազարապետ մեծաւ բռնութիւն'ի
ձեռաց մերոց եհան, հրամայեաց և չարախօսաց նո-
րա գալ առ քեզ. յորմէ դու իսկ բաւական լիցիս 'ի
վերստին դատեալ՝ամի հասու լինել զորոց մեքս ամ-
բաստանեմք զդ՝ամնէ»։ Դիտեա զի և Լիւսիայ չարա-
խօսութի՛ն հետևի 'ի բանէս. զի զոր ոչ էր նմա պատ-
շաճ՝ ասէ, բազում և մեծաւ բռնութիւն համարձա-
կեալ'ի բաց եհան 'ի մէնջ։ Ցուցանէ այսու՝ եթէ
դաւաճանեալ լինին ինքեանք'ի դատաստանս, օտարս
զոլով դատաւորացն և ոչ Հրեայս. և եթէ ինքեանք
ոչ թախանձեցուցանէին այժմ զնա, եթէ ոչ Լիւսիաս
հարկէր, և եթէ ոչ էր նորայն իրաւունք զի յափշտա-
կեցին զայրն, և զի վնասակարութիւնքն Պաւղոսի առ
մեզ էին, ապա և դատաստանին որ վասն այնր՝ պարտ
էր առ մեզ լինել։ Եւ զի այսպէս է դիտողութի՛ բա-
նիս, տես զոր 'ի կարգին ասէ. նա բազում բռնութիւն
եհան 'ի մէնջ, դու վերստին քննեա։ Եւ ոչ զԼիւսիայ
չարախօսել համարձակի. թէպէտ և ներող էր այրն
Փիլիպս. բայց և ոչ լոկ զանց առնէ և հայցէ թէ այժմ
վերստին պարտ է 'ի սկզբանէ դատել զնմա։ Այլ զի
մի սուտ երևեսցի, զնոյն իսկ զՊաւղոս կացոյց անձին
իւրում չարախօս ասելով. «Յորմէ հնար է քեզ վերը-

1 Միւսն լարաբարոյութիւնն։

տին դատելով գիտել զնմա»։ «Մի խաբանեցին Հրեայքն և ասեն. այդ այդպէս է»։ Եւ այսու բանիւ վկայք ասացելոցն եղեն միաբան չարախօսքն։ Իսկ Պաւղոս առ այն զինչ տայ պատասխանի. միտ դիցուք։

ԵՓՐ. Օ՛ի իբրև ասաց Հռետորն վասն խաղաղութեանն ժողովրդեան նոցա և վասն խռովութեանն որ յամ տեղիս յուզէր՝ ի վերայ նոցա Պաւղոս, անդուստ հրամանն եղև Պաւղոսի պատասխանի տալ վասն անձին իւրոյ։ «Պատասխանի ետ Պաւղոս յակնարկել նմա դատաւորին խօսել՝ ի բազումամեայ լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ»։ Ապա ուրեմն ոչ օտար է Պաւղոս և ոչ նորեկ օր և ոչ յանդգնարար, թէ՝ ի բազում ամաց գիտէ զդատաւորն։

ՈՍԿ. «Յօժարութիւն վասն իմոց իրաց պատասխանի առնեմ»։ Բարւոք՝ ի վերայ բերէ զիւր իրաւունս միայն. և ոչ հայի առ քահանայապետն, և ոչ հակառակի ընդ հանգէսն և ընդ չարախօսսն։ «Քանզի կարող ես գիտել զի ոչ ինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան յորմէ հետէ ելի երկիր պագանել յԵրուսաղէմ. և ոչ՝ ի տաճարին գտին զիս ընդ ումեք խօսեցեալ և կամ ժողովս արարեալ բազմաց, ոչ՝ ի ժողովուրդսն, ոչ՝ ի քաղաքի, և ոչ յանդիմանն կարէն առնել քեզ վասն որոյ այժմ չարախօսեն զինեն»։ Արդ այսպիսի բանք ոչ են խռովեցուցչի կամ խաբեբայի՝ որ իւրոյ արդարութիւնն քննիչ և վկայ զդատաւորն կացուցանէ. այլ այն մանաւանդ էր խռովարարի, զոր նայն ասաց՝ թէ կալաք և մեզէն դատել կամիցուք։

ԵՓՐ. Իսկ սա յառաջ եկաց և ասէ. Համարեցան զիս մոլի և կատաղի և խռովիչ ժողովրդեանն. գիտակ լեր, հոգեմոն, զի՝ ի քաղաքի դոցա սակաւ աւուրք են իմ և ոչ շատ ինչ. և՝ ի տաճարի անդ իբրև երկիր պագանելի ես, եկին գտին զիս. և ոչ եթէ ժողովուրդ առանձինն ժողովեալ ուսուցանելի ես։ Արդ եթէ՝ ի ժողովրդեանն իւրեանց արտաքս քան զքաղաքն կամ անգէն՝ ի քաղաքին ոչ կարէին որսալ և գտանել զիս ժողովեալ ժողովուրդ զի ուսուցանելի, և զիարդ յորում այս՝ամ՝ յանցանք ոչ գտան՝ մատուցեալ ամբաստանեն իբրև զխաբեբայէ զինեն։

ՈՍԿ. Լոյս քանզի նոքա անիրաւաբար զսա խռո-

վեցուցիչ ասէին, իսկ սա զիրաւունս խնդրէ, ըստ որում և յաժարութիւն վասն իւր ասաց տալ պատասխանի, ապա նախ 'ի ժամանակէն ցուցանէ, և զնոցա հակառակութիւն լուծանէ. զի բաղում ամաց էր չարախօսութիւն նոցա, ասաց թէ երկոտասան օրէ յորմէ հետէ ելի Յերուսաղէմ։ Եւ այս զինչ առնէր. զի ոչ այսպէս վաղվաղակի 'ի սակաւ աւուրս առ 'ի հաստատութիւն շարժել կարէի զոր, կամ ես ինքն 'ի հաստատութիւն գալ կարէի։ Եւ քանզի չարախօսն ոչ ինչ ունէր ցուցանել Յերուսաղէմ, տես զինչ ասէր. «Որ յայմ տիեզերս են Հրեայք, խռովէ զա»։ Վասն այսորիկ Պաւղոս առ այն ձգէ զբանն ասասանօր ասելովն՝ թէ «ելի երկիր պագանել». այսչափ հեռի եմ, ասէ, 'ի խռովութիւնս շարժելոյ։ Եւ յայսոցիկ իրաւունս գեղերի. որ և զօրաւոր իսկ էր ընդդէմ նոցա, թէ ոչ 'ի տաճարին և ոչ 'ի քաղաքին և ոչ 'ի ժողովրդեանն գտին զիս ընդ ումեք խօսեցեալ. որ և ճշմարիտ իսկ էր։

ԵՓՐ. Այլ սակայն թէպէտ և քրիստոնեայ ևս իցեմ, որպէս ասենդ, սակայն զնոցա մերոց զաբրահամեանց՝ որ առանց օրինացն պաշտեցին զնոցա, պաշտեմ և ես. իբրու յօրէնս և 'ի մարգարէս որ ինչ գրեալն են, հաւատամ ես։

ՈՍԿ. Այլ տես զՏերտիղայն բանն յառաջագոյն որպէս 'ի մարտի կացեալ և խռովութիւնս յարուցանելով. իսկ սա՝ թէ որպիսի հեղութեամբ տուեալ լինի պատասխանի։ «Բայց զայս խոստանամ քեզ, ասէ, թէ ըստ Ճանապարհին զոր կոչեն հերձուած, այնպէս պաշտեմ զՀայրենի ածն. հաւատացեալ ամի որ ինչ յօրէնս և 'ի մարգարէս գրեալ է»։ Նոքա զսա 'ի բաց մեկնէին յօրինացն. սա ընդ նմին ածէ և ընտանեցուցանէ օրինացն զանձն իւր։ Եւ դու միտ դիր զիարդ ոչ յառաջ բերէ զբանն յանարգանս զնոցանէ, և մանաւանդ կարող գոլով զնոսա ամաչեցուցանել։ Հաւատացեալ օրինացն ամենայնի ասէ զինքն. և ոչ ասաց թէ հաւատան, զի ինքն հաւատայր ամենայն գրելոցն և ոչ նոքա։ Իսկ թէ որպէս հաւատայր ամենեցուն գրելոցն, կամ զինչ գրեցաւ յօրէնսն և 'ի մարգարէսն, յայտ է՝ վասն Հոր, վասն Որդւոյ, վասն Սրն Ժամանակի գալստեանն, վասն խաչելեն յարու-

թեն և վասն Հրէիցն անհաւատութեան. զորս ոչ յաւելու, զի մի զբանն յերկարեսցէ։ Եւ ոչ ուրեք առատաւոր զբն յիշէ. բայց զՀաւատսն յիշելով, և զերան որ ըստ Քրիստի էր՝ 'ի ներքս եմոյծ։ Այլ առ ժամայն 'ի յարութեան բանն դեգերի, որ նոցա հաստատակայ էր աւանդ, այսինքն փարիսեցւոցն։

«Ունիմ, ասէ, յոյս առ Ա՛ծ՝ որում և նոքա ակն ունին, թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց»։ Այսոքիւբ ցուցանէ զամբիծ զկեանս իւր։ զի ապաքէն մարդ հաւատալով յարութիւն ոչ այնպիսի գործ զոր գոքա ասեն՝ գործեսցէ։ Եւ զի զյարութիւն ակնկալուութիւն և նոցա ունել ասաց, զիւրն ապա առանձինն ցուցանէ զառաքինութիւն ըստ յուսոյն 'ի Ա՛ստ։ «Յորում և ես իսկ ձգնիմ, ասէ, անխիղճ միտս ունելով առ Ա՛ծ և առ մարդիկ յամ ժամ»։ Զի այս իսկ է կատարեալ առաքինութիւն, փութալն առ Ա՛ծ առանց իրիք խղճի գոլ. և մարդկան չտալ պատճառս մեղանչելոյ, այլ մանաւանդ սիրոյ և խնամոյ, և զայն յերկար։ Սմին վասն ասէ՝ յամ ժամ, և 'ի վերայ ածէ զցոյցս այսոցիկ։

Ել այժմ ևեթ սկսեալ, այլ «Ի բազում ամաց հետ եկի, ասէ, ողորմութիւն առնել յազգդ իմ. և ետուս պատարագիս, որով գտին զիս սրբեալ 'ի տաճարին, ոչ բազմաբ և ոչ ամբոխիս»։ Զպատճառն յերուսաղէմ ելանելոյ իւրոյ ասէ՝ թէ զիարդ կամ ընդէր ել։ «Ողորմութիւն, ասէ, և պատարագս եկի առնել յազգդ իմ»։ Արդ ոՐպէս կամ զինչ՞ դ խառնվեցուցանէի, ասէ, զնոսա՝ որոց վասն ողորմութիւս առնելոյ եկի այնչափ ճանապարհ. զի այսպիսի գործ ոչ է խառնվարարի. և 'ի ստուգութիւն իրացն զնոսին զդատախազն իսկ ածէ վկայս՝ որ գտին զիս, ասէ, սրբեալ 'ի տաճարին։ Տեսանեմ որչափ մնտակարարութիւն վճարեաց խրատն Յակոբայ. զի նոքա ամբաստանէին թէ զտաճարն ևս պղծեաց, զոր սա 'ի դերև հանել ասելով գտին զիս սրբեալ 'ի տաճարին։ Արդ ոՐպէս պղծեաց, ով ամբարիշտ Հրեայք. զի ոչ էր այնպիսի առն զայն առնել. և գործն զոր արար՝ սրբելն և երկիր պագանելն ցուցանէ. զի ոչ է նոյն վասն այսորիկ անդ գալն, սրբիլ և երկիր պագանել և պղծել։ Տեսանեմ զի ոչ էր-

բէք խօսին Հէմարիտ . վասն որոյ և Քս ասէր՝ թէ «Դուք 'ի հօրէ սատանայէ եք . զի նա սուտ է 'ի սկզբանէ » ։ Իսկ նորա Հէմարտութեն վկայ՝ գործն որ հաւատալի առնէր զասացեալն . և ոչ յերկարութի ինչ անկանել բանից , և ոչ ընդհուպ ինչ՝ որպէս Տերտիղոսն՝ առնել դատաւորին ։

«Ոչ բազմաք և ոչ ամբոխիւ գտին զիս » ասէ ։ Ա մենայնիւ զհակառակութենն 'ի բաց բառնայ յինքենէ և զկարծիս խռովարարութեն . զի միայնիկ առանձին գտին զիս , ասէ , զի մի ուրեիցն ասել՝ թէ ձևով ազգմութեն զախտոսիկ առնէիր , այսինքն խռովութիս ։ «Ոչ բազմաք և ոչ ամբոխիւ » ասէ . որպէս զի և քրնութի լինելով յաղագ » այսորիկ՝ ոչ ինչ առաւել գտանել կարացին ։ Տեսեր զմեծ հեծութենն 'ի վերայ , տեսեր հոգի խնարհ և լեզու բարեբանող՝ թէ որպէս մի միայն խնդրէ զերբ իրսն լուծանել և ոչ գնոսա ընդ ամբաստանութիւն արկանել , բայց թէ ուրեք հարկեալ յանիրաւութի ուրուք լինիցի ։ Որպէս և Քս ասէր . «Ես զև ոչ ունիմ , այլ պատուեմ զՀայր , և դուք անարգիք զիս » . Նոյնպէս և սա յամի զհակառակութենն 'ի բաց բառնայ . վասն որոյ բաղբէ և զասիացւոցն , զի լուծցէ զնակարծիս ։

«Ամենք յասիացւոց անտի Հրեայք , ասէ , որոց պարտէր գալ առաջիքս և ամբաստան լինել , եթէ ուրնիցին ինչ զինէն . և կամ ինքեանք սոքա ասասցեն զինչ գտին յիս անիրաւութի մինչ կայի յատենին . բայց միայն վասն միոյ բարբառոյս այսորիկ զոր աղաղակեցի մինչ կայի 'ի մէջ նոցա , թէ վասն յարութեան մեռելոց դատիմ ես այսօր 'ի ձէնջ » ։ Ա յս իսկ սեպհական իրք է իրաւանց , ոչ խափանել 'ի չարախօսացն , այլ պատրաստ լինել յամի տալ պատասխանի ։

Այց տես զնորա զանչափ հեզութենն . զյարութենն մեռելոց միայն բերէ 'ի մէջ , և այլ ինչ ոչ զնոցանէ յաւելու . քանզի ունէր ասել՝ եթէ դաւաճանեցին զնա , եթէ ըմբռնեցին տարապարտուց , եթէ դարան գործեցին սպանանել զնա ։ Զայսոսիկ և առաւել քան զսոյն յաղագս նոցա յիրաւի լինէր ասացեալ , վշտի իրիք տակաւին անդ ոչ գոլով . բայց ոչ ասէ , այլ լռէ . և միայն յաղագս իւր զարդարն պատասխանա-

տրէ. և մանաւանդ բազում ինչ ունելով ասել և յանդիմանել զնոցին սուտ ամբաստանութիւն։ Այլ այս իսկ զնա յերուսաղէմ պայծառ արար, և 'ի Կեսարիա այնչափ բանակաւ գալ պատրաստեաց։

Արարոք և զայս իսկ ոչ Թողու որ վասն նոցա էր, եթէ ինքեանք դրբա ասասցեն զինչ վասն գտին յիս։ Յայտ առնէ՝ թէ վասն այնորիկ 'ի սկզբանէ ցաւագնեալք լինէին, զի չարութիւն քարոզէր։ Արդ զայս ցուցանելով և յաղագս Քրիստոսի յարութիւն եթէ յարեաւ 'ի մեռելոց՝ 'ի ներքս մնծանէր։ Զինչ վասն գտին յիս, ասէ, յատենին. ոչ յատուկ, այլ հանդերձ քրիստոնութիւն ասասցեն. և զի զոր ասեմս՝ ճշմարիտ ասեմ, վկայ են որ ամբաստանողքդ են վասն նորին իրաց. զի վասն նոցին բռնութեան աղաղակեցի մինչ կայի 'ի մէջ ատենին՝ թէ վասն յարութիւն մեռելոց դատիմ ես այսօր 'ի ձէնջ. որով և Հրեայքն չարախօսք լռեալ յամոթ լինէին։ Բայց ինձ թուի թէ և բան դատաւորին ամփոփեաց զնոցա պատասխանին. զի տեսանելով զանիրաւութիւն նոցա, ոչ ևս թոյլ ետ յաւելուլ 'ի նոյն, զոր և յառաջիկայսդ պատմեսանէ։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Այլ նմանեսցուք նմա ոգ և նա Քրիստոս. և առ այնոսիկ՝ որ մինչև ցմահ և զենուն զմեզ վտարեն, մի դժուարիներս ինչ ասասցուք։ Զի որոյ ներողութեամբ արժանի իցեմք, որ վասն չարախօսութիւն և անարգանաց գազանացեալք պիղծս և ամենապիղծս զթշնամանողսն կոչեմք։ Եւ որպէս հնար է անարգեալ լինելով հանդուրժել, ասէ։ Եւ որպէս ոչ է հնար, դու ասա. վերքդ ինչ ծնանին 'ի մեզ 'ի բանիցն, խոցոտին մարմինքս մեր։ Այլ թէ կամիցիմք հանդուրժել, դիցուք մեզ օրէնս ոչ ցաւագնիլ. և հանդուրժիցեմք. մի թշնամանաց համարեսցուք զանարգանսն, այլ տկարութիւն անարգողին։ Ոչ ապաքէն դիւահարացն ներեմք, թէ և բազում ինչ ասիցեն. և թէ մեծագոյն ոք թշնամանէ, և այնմ. և թէ բարեկամ ոք, և այնմ։ Այսպէս հանդուրժեսցուք և համապատուացն և նուազագունիցն, իմաստասիրելով 'ի փառս Քրիստոսի։

ՃԱՌ ՑԻՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

«Ի յապաղեաց զնոսա Փելիքս, զի ստուգագոյնս գիտէր վասն Ճանապարհին». Տեսանէս թէ որչափ լինի քննութիւն 'ի բազումժամանակս վասն նորա, որպէս զի մի ունիցին ասել Հրեայքն՝ թէ յափշտակելով իմն եղև դատաստանն, և ոչ յայտնեցաւ վասն նորա Ճշմարիտն։ Արդ յապաղեաց զնոսա Փելիքս վասն խիստ յանդգնութենն Հրէից, պատճառս խընդրելով աստանօր զյապաղելն, և ոչ իբրև ագէտ գոլով նոցին օրինաւորութենն յապաղեալ լիներ։ Զի կարի քաջ գիտեր, ասէ, վասն Ճանապարհին. զդաւաճանողութենէ նոցա, ասէ, գիտեր քաջ. և Ճահողութիւն զանց արար զժամանակաւն, ոչ կարօտ գոլով իմանալ. այլ այնու զՀրեայսն պատանձեցուցանել և խափանել զմիաբանութենէ նոցա։ Եւ քանզի լիցեաց հաւատոցն զԼիւսիաս ասելով՝ թէ բռնութիւն 'ի բաց եհան 'ի մէնջ զայրն, ըստ որում յապաղեաց զնոսա Փիլիքս ասելով. «Յորժամ Լիւսիաս հազարապետն ինքն այսր, տեղեկացայց վասն ձեր»։

ԵՓՐ. «Հրամայեաց հարիւրապետին պահել զնա և ունել յընդարձակի, և մի զոք յիւրոց անտի արգելուլ 'ի պաշտելոյ զնա»։ Արդ հոգեմտին թէպէտ պարտաւորելով անիրաւութիւն ոչ պարտաւորեաց զնա, այլ և ոչ արդարացուցանելով արդարացոյց զնա, եղ զնա 'ի պահ. թողուլ ոչ կամէր վասն նոցա, և տանջել ոչ էր հնար, զի գարշելի թուէր առանց մեսոս զայն առնել։

ՈՍԿ. Հրամայեաց ունել յընդարձակի. այսպէս զնա և զսա 'ի բաց եթող յամբաստանութենէն. բայց նոցին շնորհս առնելով տակաւին պահեալ առ իւր ունէր։ «Եւ յետ աւուրց ինչ, ասէ, եկն Փելիքս հանդերձ Դրուսիլլաւ կնաւ իւրով, որ էր հրեայ. կոչեաց զՊաւղոս և լուաւ 'ի նմանէ վասն որ 'ի Քրիստոս հաւատոյն»։ Արդ զայս ասեմք. եթէ մեղադիր էր նմա

Փելիքս, ոչ երբեք առնէր զայն. ոչ բնաւ յանձն առ-
նոյր լսել ինչ 'ի չար և 'ի դատապարտեալ առնէն։ Նա
և կինն ևս լսէ հանդերձ իշխանաւն, որ ինձ Թուի
բազում պատուոյ նշանակ գոլ. զի եթէ ոչ մեծամեծս
ինչ յաղագս նորա զմտաւ ածէր, ոչ ևս զկինն հա-
ղորդ առնէր լսողութեան։ Որ Թուի ինձ և կնոջն փա-
փաքել յայսոսիկ. այլ և հրեայ գոլով և ոչ օտար 'ի
Պաւղոսէ։

«Եւ 'ի խօսելն նորա վասն արդարութեան և ժուժ-
կալութեան և հանդերձեալ դատաստանին, զահի հարաւ
Փելիքս, ետ պատասխանի. դու առ այժմ երթ. և յոր-
ժամ ժամ լինիցի, կոչեցից զքեզ. միանգամայն և
ակն ունէր թէ տացի ինչ նմա 'ի Պաւղոսէ, զի արձա-
կեսցէ զնա. վասն որոյ ստէպ կոչեցեալ խօսէր ընդ
նմա»։ Տես զՀոգին Պաւղոսի, զի մանաւանդ ընդ
իշխանին խօսելով ոչ ինչ յայտնցանէ՝ որ պատշաճ էր
և վայելէր զնա թողուլ, ասէր բնաւ. այլ յաղագս
հաւատոյ և թողութեան մեղաց. և ոչ միայն վասն այ-
սոցիկ, այլ վաղվաղակի և վասն յարութեան և հանդերձ
ձեալ դատաստանին խօսէր, և յաղագս գործակա-
նաց վարուց և ժուժկալութեան. և այնչափ էր զօրու-
թեան բանին, մինչև զարհուրեցուցանել զիշխանն։

Մի՛ա դիր և հեռի օտարութեան բարուց իշխանին
'ի քարոզութենէն Պաւղոսի. զի զայնպիսի զահագինս
լսելով ակն ունէր առնուլ ինչ 'ի նմանէ. և ոչ մի ան-
գամ՝, այլ բազում անգամ խօսելով ընդ նմա։ Տե-
սանե՞ս թէ ո՞րպէս ճշմարտութի՛ւն գրեալքս. կոչէր
զնա ստէպ, ասէ, ոչ սքանչանալով զնմանէ և ոչ գովե-
լով զասացեալսն և ոչ հաւատալ կամելով. այլ զինչ.
ակն ունելով ինչս առնուլ։ Եւ դու միտ դիր՝ թէ ո՞ր-
պէս ոչ թաքուցանէ աստանօր Ղուկաս զկամս դատա-
ւորին։ Արդ զիարդ կամ ո՞րպէս խնդրէս ինչս, ով
պիղծդ, 'ի յառնէ զներհակդ այդոցիկ քարոզողէ.
զի որ քեզ ուսուցանէ աղքատանալ, զիարդ 'ի նմանէ
ինչս խնդրես։ Եւ քանզի ոչ էառ ինչս, աստուստ
յայտ է, զի կապեալ եթող զնա. զի թէ առեալ էր,
նա և արձակեալ իսկ էր։

Տեսէ՞ր բարք ագահութեան. նա յաղագս ժուժկա-
լութեան վարդապետէր, և սա մեծանալ փափաքէր առ 'ի
նմանէ, որ զայն ինչ զոր քարոզէր, գործով յանձին

իւրում ցուցանէր։ Անյոպիսի է արծաթասիրութիւն. յամի կորուսանէ զընդունողն իւր։ Եւ խնդրել ոչ համարձակէր. քանզի այսպիսի է առաքինութիւն, ուսոտի ակն ածէ և խորշի չարութիւն. սակայն յուսացեալ ակն ունէր. և ըստ որում ոչ ինչ էառ, վայելչապէս Հրէիցն շնորհս առնէր, և այնչափ ժամանակս իշխեցեալ զնա պահէր 'ի կապանս՝ որ արդար գտաւ յամի։

Եւ քանզի վախճան հասեալ նորին իշխանութենն՝ թողու զնա կապեալ, զի այնու Հրէիցն շնորհս առնիցէ. քանզի ոչ միայն ընչից, այլ և փառաց էր ցանկացող։ «Զի 'ի կատարել, ասէ, երկուց ամաց եկն փոխանակ Փելիքսի Փեստոս Պորկիոս. իբրև կամեցաւ շնորհս առնել Հրէիցն Փելիքս, եթող զՊաւղոս կապեալ»։ Քանզի ըստ մարգարէութենն Յակոբայ և Դանիէլի բարձեալ էր իշխանութիւն Հրէից. և փոխանորդելով զիրեարս 'ի Հռոմայեցւոցն 'ի վերայ նոցա կացեալ լինէին իշխանք. ըստ որում և սա փոխանորդեալ՝ թողու զՊաւղոս կապանաւոր, թէպէտ և ոչ էր պարտ և արժան, քանզի վայել էր դատաստանին 'ի կատարումն ածել. բայց շնորհս առնելով Հրէիցն, ասէ, այնպէս եթող զնա։ Զի նոքա այնպէս լինէին հաստատեալ, յոյս ունելով դարձեալ հանդիպել նմա և տանջել զՊաւղոս կամ տալ 'ի ձեռս նորա, զի սպանցէն։ Եւ զի մանաւանդ այլոց առաքելոցն և ոչ միոյ ուրուք այնպէս լինէին 'ի վերայ հասեալ, և հասանելով իսկ փութով 'ի բաց կացին, բայց սմա ոչ այնպէս՝ այլ խստաբար միշտ զնոյն խորհին. վասն այսորիկ և այնպէս անօրինեցաւ հեռանալնմա յԵրուսաղէմ, և ընդ այնպիսի գազանաց ոչ ունել զբնակութիւն։

«Փեստոս իբրև եհաս յիշխանութենն, յետ երից աւուրց էլ յԵրուսաղէմ 'ի Կեսարիոյ. և զգացուցին քահանայապետքն և զլխաւորք Հրէիցն ըզՊաւղոսն, և աղաչէին՝ խնդրեալ շնորհս 'ի նմանէ, զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ, դարան գործեալ սպանանել զնա 'ի Ճանապարհին»։ Տես զանդանդաղ չարութենն Հրէից. վաղաղակի 'ի սկզբանն մատեան քահանայապետքն առ Փեստոս. ոչ արդեօք յապաղէին և 'ի Կեսարիա իջանել, եթէ ոչ վաղվաղակի հասեալ

էր դատաւորին յԵրուսաղէմ ելանել. որ և փու-
թանակի մատեան առ նա խնդրելով, զի ժամ լիցի
ախորժողացն սպանանել զնա։ Եւ քանզի և զնա և-
սպականել 'ի մտաց ջանային լիրքն, և ոչ կարացին,
զի այնպէս և նմա յայտ եղև խորհուրդն թէ ընդէր
շնորհս հայցեն, եթէ իրաւունք է զի մեռանիցի այրն.
զի աղաչէին զնա, ասէ, ածել զՊաւղոս յԵրուսաղէմ.
զի յայնժամ տնօրինեաց ՝ած ոչ ըստ կամաց նոցա
յարդարելով զիշխանն. զի վայել էր և նմա նորոգ
յիշխանութեի կոխեալ՝ կամելով շնորհս առնել նո-
ցա, բայց ոչ թողացոյց ՝ած։

«Օ 'ի փեստոս արար պատասխանի՝ պահել զնա 'ի
Կեսարիա. և թէ ինքն իսկ ընդ հուպ անդր երթալոց
է. և որ 'ի ձէնջ կարողք իցեն, ասէ, ընդ իս իջցեն.
և եթէ իցէ ինչ յառնն մնաս, ամբաստան լիցին ըզ-
նմանէ»։ Քանզի ոչ համարձակէին զփեստոս հատա-
նել դատակնիք ինքեանց. այսինքն զի չկամէին ա-
ռաջի նորա լինել քննութեի դատաստանի երկնչելով
'ի լեզուոյն Պաւղոսի. այլ հնարէին միայն զնա ածել
'ի հաւանութեի կամաց իւրեանց, զի ժամ դացեն
սպանանել զՊաւղոս։ Իսկ նա ասէ՝ պահել զնա 'ի Կե-
սարիա. գրեթէ զայս ասելով, զի երկնչիք կամ զի փու-
թայք, պահեալ գոլով նորա՝ որ ոչ կարիցէ փախչել.
և որ 'ի ձէնջ կարողք իցեն, ընդ իս եկեալ՝ յատենի
չարախօսեսցեն զնմանէ։

«Լ։ լեալ անդ աւուրս ոչ աւելի քան զութ կամ
զտասն, եկն էջ 'ի Կեսարիա. և 'ի վաղիւ անդր նըս-
տեալ յատենի՝ հրամայեաց ածել զՊաւղոս»։ Ո՛վ
մեծի փութոյն, դարձեալ չարախօսք, դարձեալ 'ի
Կեսարիա, դարձեալ Պաւղոս արտաքս բերեալ լինի
և յատենի կացեալ. անդէն 'ի վաղիւն դատաւորն
նստեալ 'ի բեմքի, այնչափ փութով զի ոչ տային նմա
դուլ Հրեայքն. այնպէս բորբոքեին և վանեալ առ-
նէին զնա. այնպէս փութացուցանէին զնա, մինչ չև
և փորձ առեալ էր զնոցա՝ կասկածէին և զուլիրն
ծածկել ջանային։

«Լ։ իբրև եկն Պաւղոս, կացին շուրջ զնովաւ որ
յԵրուսաղէմէ իջեալ էին Հրեայքն. բազում և ծանր
մեղս դնէին, զոր ոչ կարէին ցուցանել. քանզի առ-

ներ պատասխանի Պաւղոս՝ Թէ ոչ յօրէնս Հրէիցն և ոչ 'ի տաճարն և ոչ 'ի կայսր ինչ մեղաւակար եմ»։ Տես զի մեծապէս անամօթաբար առնէին զչարախօսուին, և բազում բանիւք դարձեալ զրպարտէին զնա. և մի ինչ 'ի նոցանէ ոչ կարացին ցուցանել և յայտնի առնել։ Եւ իբրև ոչ կարացին օրինականաբեր ըմբռնել զնա, դարձեալ սովորական բարուքն իւրեանց յիրան որ յաղագս կայսեր էին՝ զնա մեղադրանէին. զոր և առ Փեսիւ՝ զնոյն և աստ առնէին։ Քանզի Պաւղոս տալ սկսաւ պատասխանի՝ Թէ ոչ 'ի կայսր ինչ մեղաւակար եմ, զայս նշանակէ։ Այլ և պատուով զնոցանէ և ուղիղ առնէր զպատասխանին. Թէպէտ և նոքա լիրբք և յանդգնութք էին։

«Բայց Փեստոս կամեցեալ Հրէիցն շնորհս առնել, պատասխանի ետ Պաւղոսի և ասէ. կամիս յԵրուսաղէմ երանել և անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ»։ Տեսանես, զի և նա Հրէիցն շնորհս առնէր. քանզի եղև յԵրուսաղէմ զաւուրս տասն, ակն առնոյր 'ի նոցանէ. բոլորովին ազգ և հանդէս և քաղաք գոլով միաբան, որոց շնորհս առնել ջանայ. և կամեցաւ զի պատրեսցէ զնա։ Կամիս, ասէ, յԵրուսաղէմ դատել առաջի իմ. ոչ 'ի նոցա ձեռս տամ զքեզ, ասէ։ Այսպէս հնարեցաւ, և զինքն առնէ տէր, զի պատուով յօժարեցուսցէ զնա. զի այնպէս կամէր զնա մատնել Հրէիցն։ Զի անդէն ոչ ինչ կշտամբեալ և ոչ մեղաւ ինչ գտեալ, վասն որոյ և ոչ կարէր պատուհասել. բայց յԵրուսաղէմ փութայր տանել, քանզի անդ էին դատակնիքն և ատեանն. և ամենեքին ամ առանց իրաւանց և ամենայն էր։ Վասն որոյ և Պաւղոս երկեցոյց զնա դարձեալ մարդկային ինչ զէն 'ի կիր արկեալ, զոր ոչ ոք էր ձեռնհաս լուծանել։

ԵՓՐ. Զ 'ի իբրև կամեցաւ Փեստոս տալ զնա պարգև նոցունց մնաց, և զի յառաջ քան զժամն զայն եղեալ էր 'ի մոի իւրում Պաւղոս երթալ 'ի Հռոմ քաղաք և արգելաւ, ընդ միտ ածէ և խորհեցաւ բողոք հարկանել 'ի կայսր. զի մինչդեռ երթեալ հասանիցէ նա 'ի Հռոմ առ կայսր, ուսուսցէ և աշակերտեսցէ զտիեզերս 'ի վարդապետութենն Քրիստոսի։

«Այս ասէ Պաւղոս. յատենի կայսեր հասեալ կամ, ուր պարտ է ինձ դատել. Հրէից ինչ չեմ մեղաւակար,

որպէս և դու իսկ քաջ գիտես. ապա թէ վնասակար իցեմ և արժանի մահու ինչ գործեցի, ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ. իսկ եթէ ոչ ինչ է զոր գոքա ամբաստանեն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել, 'ի կայսր բողոքեմ։ Իբրև հարցաւ թէ կամիս յԵրուսաղէմ ելանել, ոչ ասաց թէ ոչ կամիմ. գուցէ ուժգնագոյն արասցէ զդատաւորն. այլ գարձեալ մեծաւ համարձակութիւն խօսի. մի անգամ, ասէ, և երկրորդ 'ի նոցանէ ազատ և անվնաս գտայ և 'ի բաց ելի 'ի նոցանէ. ապա զի այսու կարծեն զիս դատապարտել, ցուցանելով թէ յաղագս կայսեր վնասակար իցեմ, արդ առաջի նորա կամիմ կալ 'ի դատաստան. զՀրեայսն ոչ ինչ անիրաւեցի, որպէս դու քաջ գիտես։

Այսուհետև բուռն եհար զնովաւ իբրև զչնորհողն զինքն Հրէից. ապա դարձեալ թողացուցանէ զբանն ասելով. եթէ արժանի մահու ինչ գործեցի, ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ. ես ինձէն հաստատեմ 'ի 'ի վերայ իմ դատակնիք, քանզի ընդ համարձակութիւնն պարտ է և իրաւաբանութիւնն գալ. ապա թէ ոչ ինչ է զոր գոքա զինքն ասեն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել, թէպէտ և կամեսցի։ Եւ ոչ ասաց թէ դու, այլ թէ ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել, զի մի հանդիպոյ 'ի նա ձգեսցէ զանարգանան. քանզի կամէր նա առնել զնա շնորհ Հրէիցն։ Եւ ոչ ասաց թէ չեմ արժան մեռանելոյ, և ոչ թէ արժանի եմ արձակելոյ. այլ թէ պատրաստ եմ դատել առաջի կայսեր. միանգամայն և զտեսին յիշեալ զբան, առաւել համարձակեցաւ 'ի կայսր բողոքել։

Այսասցէ ոք թերևս՝ սակս որոյ իրաց առնէր զայսսիկ. որովհետև լուաւ յայ եթէ 'ի Հռոմ պարտ է քեզ վկայել վասն իմ։ Ասեմք՝ թէ ոչ իբրև թերահաւատ գոլով բանին, քաւ լիցի. այլ և յոյժ հաւատացեալ և մեզ օրինակ եղեալ. քանզի փորձողն է քաջալերել և վստահանալ միայն 'ի բանն յայս, և 'ի բազում վիշտս և 'ի մէջ անօրինաց արկանել զանձն իւր ասելով տեսից կարէ՞ ՝ՀՀ և այսպէս փրկել զիս։ Իսկ Պաւղոս ոչ առնէ զայս. այլ զառ յինքնէն զամ՝ 'ի ներքքս բերէ. և ոչ զամ ինչ յամ ապաստան առնէ և անհոգ նստի։ Բայց տես զՊաւղոսի հանճարն զիարդ ծածկաբար զիշխանէն բուռն եհար. զի ետես զնա ա-

պականեալ 'ի Ճշմարտութենէն, ասաց՝ ոչ օք կարէ զիա դոցա ընդհանել, 'ի կայսր բողոքեմ. որով առաւել յեր-կիւղ արկ զնա ոչ կարող լինել առնել զայն, և առ Հրեայսն ունել պատասխանի թողլոյն զնա։

«Յայնժամ Փեստոս խօսեցեալ ընդ խորհրդակցին՝ արար պատասխանի. 'ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիջիր»։ Տես դարձեալ ընդարձակութիւն տարա-ծեալ զդատաստանն նորա, և զդաւաճանութենն պատ-ճառ լեալ քարոզութենն անդ 'ի Հռոմ՝ 'ի թագաւո-րական քաղաքին. որպէս զի դիւրութիւն և պահպա-նութիւն ելցէ 'ի Հրէից և տարեալ լիցի 'ի Հռոմ ոչ յուսիւքէ դաւաճանեալ. քանզի ոչ էր հաւասար պար-զարար գնալն, և այսպիսի պատճառաւն. զի այս իսկ և զՀրեայսն արդել և ոչ ետ գնալ 'ի Հռոմ։ Եպա դար-ձեալ ժամանակ լինի նմա դեգերելով 'ի կապանս 'ի Հռոմ. զի իմացիս թէ և ժամանակի լինելով ոչ ինչ դաւաճանութիւն նոցա իրքն կարաց վնասել, այլ թո-ղացուցանելով 'ի նոյնն։ Եկն էջ արքայն Ագրիպպաս՝ որ եկաց 'ի տեղւոջ իշխանութիւն Հերովդի յորջոյն հոգեմտնին։ Նա կաց պատմեաց առաջի նորա զդա-տաստանն Պաւղոսի. և զի խնդրեցին 'ի նմանէ Հրեայ-քն զՊաւղոս, և երկեաւ նա յօրինացն Հռոմոց տալ զնա 'ի ձեռս նոցա. քանզի ոչ գտաւ զկնի նորա յան-ցանք ինչ, բայց թէ բամբասանք օրինացն Հրէից, ըստ որում պատմաբանն յառաջիկայսդ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ա՛յ ապա դժուարինս համարեսցուք զդաւաճա-նին. զի եթէ մեք զանձինս մեր ոչ դաւաճանիցեմք, ոչ այլ օք կարէ նենգել մեզ. այլ ջանալոցն նենգել՝ մեծապէս զմեզ շահեցուցանէ. զի մեք եմք տեարք անձանց մերոց կրեալս ինչ յարաւար և ոչ կրեալս. զի ոչ կարէ նենգել քրիստոնեի ոչ մարդ օք և ոչ սատա-նայ, մինչ ինքն զինքն ոչ նենգիցէ. այլ որպէս հրեշտա-կի ոչ կարէ վնասել օք, և ոչ քրիստոնեի։ Եւ ոչ միայն ինքն յայլոց ոչ վնասի, այլ և ոչ զայլս վնասել կարիցէ, և այսու՝ այ և հրեշտակի նմանեալ է. այլ՝ ած բնութիւն այսպիսի է, իսկ մարդ յօժարութիւն. իսկ զանձն վնասէ 'ի կամէն զայլս վնասել, յորմէ զդուշալի է երկիւղիւ։

ՃԱՌ ՑԻՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

«Լ՝ԲՐԵՒ անցին աւուրքն ինչ, յայտ է ոչ բազումք, Ագրիպպաս արքայ և Բերենիկէ եկին 'ի Կեսարիա յողջոյն Փեստոսի. և իբրև աւուրս բազումս հանէին անդ, Փեստոս զեկոյց արքայի զՊաւղոսէ»։ Ագրիպպասս այս, որ և Հերովդէս, այլ ոմն էր զկնի այնորիկ որ յաւուրսն Յակոբու, որ և զնայն նահատակեաց, որպէս զի չորրորդ յետ առաջնոյն Հերովդի գոլով նորա։ Զսա հաղորդ առնէ Փեստոս բանին՝ որ վասն Պաւղոսի. զի և այնպէս բազումք եղիցին լսողք բանին. և ոչ խորհրդակցաւ միայն, այլ և թագաւորն և զորք և Բերենիկէ գիտելով, ապա արասցէ զպատասխանին առաքելով զնա 'ի Հռոմ։

«Լ՝ՍՐ մի, ասէ, է ասա մեացեալ կապեալ 'ի Փելիքսէ. վասն որոյ իբրև չոգայ Յերուսաղէմ, զգացուցին ինձ քահանայապետքն և գլխաւորք Հրէիցն, և խնդրէին յինէն առնել նմա պատուհաս. որոց ետուս պատասխանի՝ թէ չէ օրէն հռոմայեցւոց շնորհել ումեք զոք մինչև ամբաստանեալն յանդիման ունիցի զդատախազն, և տեղի պատասխանւոյ առնուցու վասն ամբաստանութենն։ Տես ասասնոր չարախօսուի զՀրէիցն, ոչ առ 'ի Պաւղոսէ, այլ յիշխանէն. Հայցէին, ասէ, ածել պատուհաս 'ի վերայ նորա. առ որս ես ասացի յամօթ առնելով զնոսա՝ թէ ոչ է օրէն հռոմայեցւոց յառաջ քան զբանի հաղորդել՝ շնորհել ումեք զմարդ։ Տես ասաստին 'ի բնէ իշխանն հանապազ 'ի բաց մերժելով զՀրէական ծանրութենն. իբրու առանց իրաւանց բազում անգամ հարկողաց առնել և ամիւ փոյթ գոլով 'ի սպանութիւն։

«Լ՝Ս իբրև եկին այսր, ասէ, ոչ ինչ յապաղեցի. այլ վաղվաղակի նստեալ յատենի հրամայեցի ածել զայրն. վասն որոյ մատուցեալ ամբաստանքն և ոչ մի ինչ մեսաչարութեան 'ի մէջ բերեին զորոց էն կարծէի. այլ խնդիրս ինչ որ վասն իւրեանց պաշտաման ունէին

ընդ նմա, և վասն Ցոի ուրուն մեռելոյ՝ զոր մեք ասեր Պաւղոս թէ կենդանի է։ Տես զպատասխանին յաղագս Պաւղոսի զոր նոյն ինքն Փեստոս առնէ. արարեալ, ասէ, յանդիման՝ ոչ ինչ գտի զնա պատճառաւոր. և խայտառակեալ լինի հրէական կարծրութիւնն. զի յորժամ իշխանն ասէ զայսոսիկ, առանց կարծեաց լինի վկայութիւնն, որով և առ ի նմանէ մեղապարտ ցուցանին Հրեայքն։

Այս յետ ամսոյն հատանելով ի վերայ նոցա դատակնիք՝ անիրաւս և պատժապարտս գոլ, յայնժամ նոցա հասոյց և ածէ զտանջանսն ըստ արժանի գործոց իւրեանց ի ձեռն Հռոմոց բառնալով ի միջոյ։ Մեղապարտ արար զնոսա Լիւսիաս. մեղապարտ արար Փիլիքս. մեղապարտ արար Փեստոս, որ և շնորհսն կամէր առնել նոցա. զմի ամենեցուն մեղապարտ արար զնոսա և Ագրիպպաս. զմնչ այնուհետև, մեղապարտ անձամբ զանձինս արարին փարիսեցիքն ասելով հոգի խօսեցաւ ի դմա կամ հրեշտակ։

Ոչ ինչ չարութիւն, ասէ, ի մեջ բերէին յորոց ես կարծէի. և սակայն յինքեանց հասուցանէին և ի մեջ բերէին, այլ ոչ կարէին յայտնի կացուցանել. քանզի դաւաճանութիւն նոցա և յանդգնութիւն զայս ինչ տայր կարծել, իսկ քննութիւն այսպիսի և ոչ ինչ. այլ յաղագս Ցոի ումեմն մեռելոյ ասէ Պաւղոս թէ կենդանի է։ Վայելչապէս յաղագս ումեմն ասեր իբրև զմարդոյ, մարդ գոլով ի սկզբանն ծանուցեալ։ Ոչ ինչ ես, ասէ, այսոցիկ փոյթ առնելով։

« Իբրև յանհնարս մտի ես յաղագս այնպիսի իրաց քննութիւն, ասեմ ցՊաւղոս՝ եթէ կամիցիս երթալ Յերուսաղէմ և անդ դատել վասն դոցին իրաց»։ Ցիւրաւի յանհնարս մտի ասէ. քանզի արդարեւ գերագոյն անցաներ քան զմիտս և զլսելիս դատաւորին որ յաղագս այսոցիկ ինդիրն. ասեմ, ասէ, կամիս ելանել Յերուսաղէմ։ Աստ թաքուցանէ և զիւր սխալանս։ Արդ եթէ տարակուսեալ ես, ընդէր ձգես Յերուսաղէմ՝ զնա։ « Բայց ի Պաւղոսի բողոքելն զի պահեսցի ի քաջի արանցն յանդիմանութիւն, հրամայեցի պահել զնա մինչև տաց տանել զնա առ կայսր»։ Յերուսաղէմ, ասէ, ինքն ոչ արժանի համարեցաւ, այլ առ կայ-

սեր կալ յատենի, զի յաղագս այնորիկ զնա ամբաս-
տանէին։ Եւ քանզի լսելի եղև յօժարութիւն Հրէից
յաստգէլոցս 'ի Փեստոսէ դաւաճանութիւնքն և խռո-
վութիւնքն, այսոքիկ ամենեքեան ածին զԱգրիպպաս
'ի ցանկութիւն լսել Պաւղոսի։

«Ագրիպպաս ցՓեստոս ասէ. կամիմ և ես լսել առ-
նլն։ Եւ նա ասէ՝ վաղիւ լուիցես։ Կամեցաւ Ագրիպ-
պաս տեսանել զՊաւղոս, որպէս Հերովդէս զի կամ-
ցաւ տեսանել զտէր մեր. և տայ նմա Փեստոս զչնորհ-
սին առ 'ի լսել, հրամայելով ածել զՊաւղոս զառա-
ջեաւ։ Եւ լինի պայծառագոյն Պաւղոս, զի այսպիսի
արարին զնա դաւաճանութիւնքն. և եթէ ոչ էին ե-
ղեալ այնոքիկ, թերևս ոչ զբ յիշխանացն արժանացու-
ցանէր զնա լսել այնչափ հանդարտութիւն և հեզութիւն։

«Այլ 'ի վաղիւ անդր իբրև եկին Ագրիպպաս և Բե-
ռնիկէ բազում և երևելի սպասուք, և մտին յա-
տեանն հանդերձ հազարապետօքն և արամբք պա-
տուաւորօք քաղաքին. և հրամայեցին ածել զՊաւ-
ղոս»։ Ցես որպիսի հանդիսաւոր լսարան եղև վասն
Պաւղոսի. թագաւորն իսկ հանդերձ զօրօքն և գլխա-
ւորօք քաղաքին, իշխանօքն և հազարապետօք և դա-
տաւորաւն մեծ երևելութիւն. ապա ածեալ եղև Պաւ-
ղոս։ Եւ միտ դիր ճշմարտութիւնն յայտնութիւն՝ թէ որ-
պէս դատաւորն զնմանէ բողոքէ. զի ինքն իսկ Փես-
տոս այսու բանիւ ազատեաց և թողացոյց զնա յամ-
բաստանութենէ ասելով. «Աղքայ Ագրիպպա և ամենայն
արք որ ընդ մեզ էք, տեսանէք զսա. վասն սորա ամ-
նայն ժողովք Հրէից ամբաստան եղեն ինձ յԵրու-
սաղէմ, և ասա աղաղակէին թէ չէ պարտ դմա կեալ.
բայց ես 'ի վերայ հասի թէ չէ գործ արժանի մահու
գործ գործեալ»։ Յորժամ՝ 'ի բաց եղեն Հրեայքն 'ի
նմանէ յամօթ եղեալք բազում անգամ, ապա այ-
նուհետև դատաւորն զթողութիւն նորա 'ի կիր արկա-
նէ, և յայնժամ պայծառ լեալ լինի նմա տեսարանն։

Այլ տես զինչ ասէր. «Ամենայն բազմութիւն Հրէի-
ցըն ամբաստան եղեն». ոչ ոմանք միայն և ոմանք ոչ,
այլ ամենեքեան իսկ յԵրուսաղէմ և ասասցուք համբն
զմահ ըղձային և ասէին՝ պարտ է գոլ դմա մեռանել։
Ցուցանէ այսու՝ թէ յիրաւի Պաւղոս բողոքեաց 'ի

կայսր. քանզի թէ ուր ոչ ինչ բնաւ դժուարին ունէին Հրեայքն ասել զնմանէ և այնպէս մոլեալ լինէին, վայելչապէս ապա և ինքն դատաւորն զգուշանայր՝ զի մի 'ի վերայ նորա լինիցին նոքա եկեալ մեղադրութիւն։ Եւ տես թէ որպէս զնոսա չարախօսէ և զսա թողացուցանէ 'ի մեղադրութէ։

«Լաւ, ասէ, 'ի վերայ հասի գորին անմեղութենն։ Ո՛վ մեծի իրաւանցն սեպհականութիւն. իշխանն ոչ գտանէ թէ որպէս զնա դատապարտեսցէ բազումքնութիւն լինելով։ Այս իսկ վայել էր Պաւղոսի մաքրուին, ոչ ունել դատաւորին թէ զինչ ինասաքանեսցէ վասն նորա։ Իսկ Հրեայքն զնա արժանի մահու գոլ ասէին. զի նոքին իսկ և զԲՇ սպանին։ Արդ յորպիսի տարակուսանս զանձինս իւրեանց արկին Հրեայք, զի վասն նոցա իսկ միանգամայն զոր հանդերձեալ էին իմանալ և որ 'ի Հռոմն էին Հրեայք, բազում անգամ կրկնէ Փեստոս զատեանն, թերևս կարասցէ ինչ գտանել, և զթագաւորն և զայլսն օգնականս առնու 'ի դատաստանին։

«Օ՜ի դորա ինքնին բողոք կալեալ, ասէ, առ քաջ արանցն՝ խորհեցայ յղել. վասն որոյ ստուգութիւն ինչ գրել տեսուն իմում ոչ ունիմ. վասն այնորիկ ածի զդա առաջի ձեր և մանաւանդ առաջի քո, արքայ Ագրիպպաս, որպէս զի վերստին քննեալ մարթացիս ինչ գրել. քանզի անպատեհ իմն թուի ինձ տալ տանել կապեալ մի, և ոչ ինչ ինասս զնմանէ նշանակել»։ Տեսանես թէ որպէս ակամայ քարոզք լինէին իւրեանց չարութենն և Պաւղոսի առաքինութենն. քանզի և կապանաքն առ նոսն իսկ թագաւորն յոյժ պայծառագոյն տարեալ լինէր Պաւղոս, քան թէ առանց կապանաց։ Զի ոչ էս տակաւին իբրև զմոլորեցուցիչ և կախարդ և խաղմարար տարեալ լինէր, այնչափ դատաւորաց զնա թողացուցանելով. այլ իբրև զայոյժ ազատ 'ի մեղադրութէ գնայր հանդերձ գրով և բազում վկայիւք։ Իսկ Հրեայքն և յայնմիկ ևս դատապարտեալք և չարագործք երևեցան, որպէս և ընդ Քրիստի մահուն։ Իսկ Պաւղոս այնուհետև զամենայն 'ի բաց եդեալ առ որս ծնեալ և սնեալ էր, և զայն ոչ վայրապար, այսպէս մաքուր 'ի կասկածանաց վերայ կոխէ 'ի Հռոմ։

«Աղրիպպաս ցՊաւղոս ասէ. Հրամայեալ է քեզ խօսել վասն քո։ Բազում ցանկութիւն զոր ունէր առ 'ի լսել ինչ 'ի նմանէ, հրամայէ նմա խօսել Թագաւորն։ «Յայնժամ Պաւղոսի ձգեալ զձեռն առնէր պատասխանի. վասն ամենայն ամբաստանութեանց Հրէից զինէն, արքայ Աղրիպպաս, համարիմ զանձն իմ երանելի, զի քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի։» Այսուհետև Պաւղոս մեծաւ համարձակութիւն լինի բարբառեալ. ոչ խաբէութիւն ինչ, այլ զշմարտութիւնն պատմելով. վասն որոյ և զանձն երանելի համարի, քանզի զամենայն ինչ գիտեր յառաջագոյն որ ինչ լինելոց էր։

Այլ զի երկնէր առիւծն այն ահագին և հուրն երկնային ելանել յայնմ կապանաց, զի ընթացցի այրել զանտառս մեղաց տիեզերաց։ Բայց միտ դիր և այժմ հեզութեամբ նորա. զի ոչ ասաց թէ ընդէր է այս, մի անգամ բողոք կալայ առ կայսր և աստ բիւր անգամ դատեալ եղէ, մինչև ցերբ այս. այլ զինչ։ Դարձեալ պատրաստ եղև վճարել դատաստան առաջի Աղրիպպայ առաւել գիտողի զօրէնսն և զիրս Հրէից. և զայն բազում համարձակութիւրբև ոչ գոլով նոցա տերանց կարողաց դատապարտել զնա, նա և ոչ իսկ գոլով տերանց։ Քանզի դատակնիքն այն քան զամենայն զօրաւոր էր՝ թէ առ կայսր երթայցեմ և տայցեմ պատասխանի։ Յաղագս ամենայն ամբաստանութեանց, ասէ. ոչ յաղագս ոմանց ասեմ և յաղագս այլոցն ոչ. քանզի ամբաստանեն զինէն յաղագս խաղմարարութեան, յաղագս հերձուածոց և եթէ զտաճարն ապախտ արարի. յաղագս այսր ամենայնի տամ պատասխանի. և զի ոչ իմոյ յեղանակի և վարուց են իրքս այսոքիկ, այսինքն խաղմարար դոլ, նոքին իսկ վկայեն չարախօսքդ։

«Մանաւանդ զի գիտակ իսկ ես ամենայն կրօնից և խնդրոց Հրէից. վասն որոյ աղաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ»։ Մի միտ դիր Ճշմարտութեանն Պաւղոսի. զի մանաւանդ թէ գիտեր ինչ զանձին իւրում, երկնչել պարտ էր առ 'ի յԱղրիպպայ՝ զամենայն ինչ գիտողէ դատեալ լինելով. քանզի մաքուր մտաց է զայն խնդրել դատաւոր և քննիչ զգիտողն ստուգապէս խնդրոց ամենայնի և կրօնից Հրէից իբրև որդի

օրինաց, զի մի ասիցեն լիրքն Հրեայք՝ թէ նոքա ոչ գիտէին զօրէնսն մեր. ահաւասիկ սա զամենայն դիտէ, ըստ որում և Պաւղոս խնդայ և երանելի զանձն կոչէ։ Եւ քանզի հանդերձեալ էր ընդ յերկար բանս տարածել յաղագս անձին իւրոյ, վասն այսորիկ յառաջելով աղաչէ մի ձանձրանալ։ Եւ զի նախ քան զայս ասէր, «Նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն». և անդ յորժամ հանդէսն մերձ էր, յայնժամ կարդայ զվկայութիւն նոցա ոչ առաջի Հրէից դատարանին միայն, այլ և առաջի Լիւսիայ. իսկ յերկրորդումն ոչ էին պէտք բազում պատասխանւոյ։ Գրոյն Լիւսիայ ազատեալով զնա և պատասխանելով ընդ նորա դարձեալ աստանօր յորժամ բազումք մերձ էին, սկսանի առանց երկիւղի։

«Օ կենաց իմոց, ասէ, որ 'ի մանկութենէ 'ի սկզբանէ եղեալ յազգին իմում Յերուսաղէմ, տեղեակ են ամենայն Հրեայք. յառաջադոյն գիտեն 'ի վաղուց հետէ եթէ կամիցին վկայել։ Դարձեալ ասէ 'ի վերուստ ճանաչելով զիս. բայց ոչ ասէ թէ որպիսի էին կենաց իւր, այլ զայս 'ի կամս նոցա թողացուցանէ։ Եւ զամենայն ինչ եդ ըստ հաճութեան նոցա յարգելով և ոչինչ 'ի բաց դարձուցանելով զինքն անտի. յայտ է զի թէ չար ոք էր և դժուարակենցաղ, ոչ յայս ինչ յօժարէր՝ կոչել զնոսա վկայս զթշամին։ Արդ զիարդ խազմարար եղէ, ասէ, 'ի մանկութենէ վկայեալ յամենեցունց։ «Եւ զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի». որ և առ նոսա իսկ խնդրելին է։ Եւ զի արդեօք, եթէ կրօնքն և օրէնքն ըստքանչելի են, և դու չար եղեր։ Ա. յսոցիկ, ասէ, վկայս կոչեմ զամենայն Հրեայս իմոյ կենցաղոյս և վարժմանըս, որպէս յառաջեցի ասացի։

«Եւ արդ վասն յուսոյն առ Հարսն եղելոյ աւետեացն այ դատեալ կամ յատենի». և ասպա գովութեամբ դնելով Հրէիցն ասէ. «Յոր երկոտասան ազգաւորմին մերոյ անպակաս զցայգ և զցերեկ պաշտեալ ակն ունիմ հասանելոյ։ Զի վասն յուսոյն այ, ասէ, և աւետեաց Հարցն փութան հանապազ և լինին զղջացեալ և վասն նորին պաշտօն կատարել, զի այնմ հանդիպեսցին. զայն իսկ և ես պատմեմ յայտնի ամենե-

ցուն և ցանկամ հասանել այնմ բարեաց. և զամենայն ինչ առնել ջանամ, զի այնմ հանդիպեցայց։ «Վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, արքայ, 'ի Հրէից»։ Արդեօք այս է գործ մոլորեցուցչի։

«Օ՜ինչ անհաւատ թուի ձեզ, եթէ ոչ զմեռեալսս յարուցանէ»։ Տես զի թուի հանդիսաբանել և պատասխանատրել, բայց մանաւանդ ուսուցանէ իսկ զնոսա բազում բարեկարգութիւն։ Որում և Ագրիպպաս 'ի մեծ ցանկութիւն անկեալ 'ի լսողութիւնն՝ ոչ վայրապար լսէ, այլ հանդերձ բազում կազմութիւն։ Արդ երկուս խորհուրդս դնէ յաղագս յարութեան. մի զառ 'ի մարգարէիցն. և մարգարէ յառաջ ոչ ածէ, այլ զնոցն իսկ զկամն Հրէիցն յասելն՝ թէ վասն յուսոյն այ զայգ և զցերեկ պաշտեն։ Երկրորդ զառ 'ի յիրացն ընտրութիւն, որ և զօրաւոր իսկ էր, այսինքն զոր ինչ ուսոյց և վարդապետեաց նմա Քս. և կազմէ զայս ամենայն 'ի կոչմանէն իւրմէ և յընտրութիւնն զյառաջագոյն մոլորութիւնն իւր պատմելով ստուգապէս։

«Լաս ինքն պատշաճ համարէի, ասէ, բազում ինչ հակառակ անուանն Յսի նազովրեցւոյ գործել»։ Այս ինքն դատեցայ զայս բազում հակառակութիւն գործել. ոչ էի ես յաշակերտացն Քսի, այլ 'ի հակառակ մարտուցելոցն ընդ նմա։ «Զոր և արարի իսկ Յերուսաղէմ, և զբազումս 'ի սրբոցն ես բանտարգել առնէի, 'ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն. և զսպանելոցն նոցա բերէի զհամար. և ըստ ամենայն ժողովրդոցն բազում անգամ պատժեալ զնոսա՝ բրնադատէի հայհոյել. առաւել ևս մոլեալ 'ի վերայ նոցա՝ հալածէի մինչև յարտաքին քաղաքսն»։ Աստուստ յոյժ հաւատարիմ լինի վկայութիւն. զի որ բիւր իրս առնէր մարտնչելով ընդ հաւատացեալսն և խափանելով զնոսա և հաւանեցուցանելով հայհոյել և զամենայն 'ի վերայ շարժելով զքաղաքսն, զիշխանսն, 'ի ձեռն ինքեան զայսոսիկ առնելով, այնպիսին յանկարծ փոփոխեալ գտաւ. ապա չէր փոքր ինչ դիպուած որ զնա վաղվաղակի յայնց բարուց շրջեաց։ Ուրեմն ասելովն թէ որպէս հալածէր զհաւատացեալսն՝ վկայ ածելով զքահանայապետսն և զարտաքոյ քա-

զաբան, կաղմնղական հնարիւք և խորհրդով և մեծաւ փութով զայս ինչ ցուցանել կամի, զի թէ այսպիսի հալածիչ ոչ էի և ոչ աւանդութիւնն հայրենեաց մնեալ՝ և այժմիկ յայսմ՝ի ներքս բերեալ լինէի, յիրաւի թերևս ոչ որ ընդուներ զբանս իմ. իսկ եթէ այնչափ բան զլաղումն էի նախանձայոյզ, որովք գնացեալ երթայի ՝ի Դամասկոս իշխանութիւն և հրամանաց քահանայապետիցն վասն սոցին իրաց, և ՝ի ձեռն աքանչելի տեսլեանն բռնադատեալ եղէ՝ ահաւոր զօրութեանն հաւանեալ, զնմանդ եմ արժանի դատելոյ։ Եւ թէ սրպիսի հրաշից պատահեալ փոխեցաւ՝ ասէ։

«Ո՛ միջաւուրքն՝ի Ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութի արեգական ծագեալ զինև լոյս և փնոքաք որ ընդ իսն էին. և ամենեցուն մեր անկեալ յերկիր՝ լուայ ձայն որ ասէր ցիս հեբրայեցւոց բարբառովն՝ Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես զիս, խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել. և ասեմ. ովքես, տէր. և տէր ասէ. ես եմ Յիսուսն որ դուն հալածես. այլ արի և կաց՝ի վերայ ոտից քոց, զի վասն այսորիկ երևեցայ քեզ առնուլ զքեզ՝ ի ձեռն պաշտօնեայ և վկայ որոց տեսերդ զիս և որոց երևեցայ քեզ փրկել զքեզ՝ ի ժողովրդենէդ և՝ ի հեթանոսաց՝ յորս ես առաքեցից զքեզ. բանալ զաչս կուրաց, դարձուցանել՝ ի խաւարէ՝ ի լոյս և յիշխանութենէ սատանայի յԱստուած. առնուլ նոցա թողութիւն մեղաց և վիճակ ընդ սուրբսն հաւատովք նոցա որ յիս»։ Ցեսանես որպիսի հեղութիւն վարդապետի և ուսուցանէ. ասէ, խոսեցաւ ընդ իս, և վկայք արքն որ ընդ իսն էին. որով ցուցաներ զինքն յիրաւի հաւանեալ նախ՝ի լուսոյն, ապա և՝ի կատարմանէ իրացն ասացելոց և այժմիւ եղելոցս։ Ցուցանէ և զՀրեայսն դատապարտս. զի զնա՝ որ Ճշմարիտ ասծ էր՝ խաչեցին, և զի յետոյ ոչ զլաղջացան։ Եւ զի՞նչ արդեօք ասաց ցիս. թէ եղիցես ինձ վկայ որոց երևեցայ քեզ. զի ոչ երևեցայ զի տանջեցից զքեզ, այլ զի առաքեալ և պաշտօնեայ արարից. որով և փրկել խոստացաւ՝ ի Հրէից և՝ ի հեթանոսաց։

Լչ. Իբրև ասաց զտեսիլն, այնու հետև զնեբողական քաղցրութենն ասէ հանդերձ ողորմութիւնքն, թէ

կուրացեալ մարդկան յանձգիտութիւն բժիշկ առաքեցաւ և լուսատու խաւարելոց, որք և զնոյն սիրէին և ընդ նոսին գնային. յորոց վերայ խաւարաբնակ և չարասէրն սատանայ առեալ իշխանութիւն, արդ 'ի նորս մահաբեր իշխանութէն 'ի կենդանարար աւետարանն և յանձ դարձուցանել աւանդեցաւ. որով և ձրի մեղաց թողութիւն պարգևեցաւ հաւատացելոց։ Եւ ոչ միայն այս, այլ և սրբոցն լինել վիճակակից և կենդանի յաւիտենից։ Բաւէ մեծի պարգևացն և իշխանութեան, որոց գտաւ նա պաշտօնեայ և հաւատարիմ։ Ասպիսի բարութիւն հաւանեցայ, ասէ. այսպիսի տեսլեամբ հաւաքեցայ զիս առ ինքն, և այսչափ աւետեաց հաւանեցայց զիս ոչ երբեք լինել ընդերկուացեալ։

«Ուստի, արքայ Աղրիպպա, ոչ եղէ անհաւան երկնաւոր տեսլեանն. այլ նախ որոց 'ի Դամասկոս և Յերուսաղէմ էին և ընդ ամենայն գաւառս հրեաստանի և 'ի հեթանոսս՝ պատմեցի զղջանալ և դառնալ յանձ կենդանի, արժանի ապաշխարութեան գործս գործել»։ Ոչ միայն հաւանեալ եղէ լինելոյ, այլ և բազմաց առաքեցայ լինել խրատիչ, ասէ։ Արդ այժմիկ որ զայլս խրատել և ուսուցանել յաղագս զղջանալոյ 'ի չարեաց և վասն յանձգիտութեան գալոյ և առաքինութեան վարս սրբութիւն յանձինս ցուցանելոյ, որպէս արդեաք ինքն խազմարարութեան և խռովութեան առաջնորդ կարիցէ լինել։ Այլ տես զի 'ի դարձելոցն ոչ վայրապար ապաշխարութեան խնդրէ, այլ վարս և կեանս սքանչելիս ցուցանել, և յամենայնի զհեթանոսս խառնէ ընդ բանին. քանզի պահեալքն մնա 'ի հանդիսի անդ 'ի հեթանոսաց էին։

Արդ իբրև երկրորդեաց նա զառաջին բնակութեան մանկութեան իւրոյ Յերուսաղէմ, և թէ զինչ անցս անցուցանէր նա ընդ այնոսիկ որ կարդային զանուն Ցոի, պատմեաց նա և վասն տեսլեանն զոր ետես 'ի Դանապարհին Դամասկեայ, և թէ Յերուսաղէմ և 'ի հեթանոսս որպէս տուաւ նմա հրաման դարձուցանել՝ քարոզեաց նա։ «Վասն այսորիկ, ասէ, կալեալ զիս Հրէից 'ի տաճարին՝ կամէին սպանանել. օգնութիւն հասեալ յայ՝ կացի վկայել մինչև ցայսօր փոքու և մեծի»։ Տես զՀշմարտութիւն բանին. զնմ՝ ինչ

ՅԻ վերադրէ, և զիւր փրկութիւնն, ապա և զՀամարձակութիւնն. զոր այժմ ոչ 'ի բաց կացեալ լինի յայնմ քարոզութիւն։ Վկայելով մեծի և փոքու, ասէ, մինչև ցայսօր. զայս իսկ առ զինուորսն ասէ. այսինքն նը-շանաւորի քարոզեալ զՔՍ և անենանի։

«Ոչ ինչ արտաքոյ ասացեալ քան զոր մարգարէքն և Մովսէսիսօսեցան զՀանդերձելոցն՝ եթէ չարչարելոց է ՔՍն, և թէ առաջին 'ի յարութիւն մեռելոց լոյս պատմելոց է ժողովրդեան և հեթանոսաց»։ Հայեաց ընդ զգուշութիւնն. քանզի թողեալ զկարգ պատա-խանատուութիւնն՝ զվարդապետել 'ի ձեռն էառ. զի մի զայս կարծիցեն իբրև յանձնէ վարդապետել, ըղ-մարգարէսն և զՄովսէս 'ի մէջ բերէ. 'ի նոցանէ, ա-սէ, հաստատեալ եմ և ամրացեալ եթէ չարչարելոց էր ՔՍ. և ապա յարութիւնն ՔՍի խոստումն կենաց ամենեցուն։ Բայց միտ դիր բանիս նորա, զի ոչ նմա-նապէս խօսի յաղագս ՔՍի 'ի գատարանին և յեկե-ղեցւոջն. քանզի անդ ասէ՝ խնդրեալ 'ի Պիղատոսէ սպանին զնա. իսկ աստ ոչ այնպիսի ինչ, որպէս զի մի յաՃախ բորբոքիցէ զցասումն նոցա. բայց զնոսն միտս ցուցանէ ասելովն՝ թէ չարչարելոց է ՔՍն, և թէ զայս մարգարէքն նախ ասացին. և այնպէս 'ի մարգարէիցն և առ 'ի սոցունց նորոգ եղելոցս հաւանեցուցանէ զնոսա, միանգամայն թողացուցանելով զՀրեայսն յամբաստանութիւն։

«Ոչ նորա զայս սլատասխանի տուեալ՝ Փեստոս 'ի ձայն մեծ ասէ. մոլիս, Պաւղէ. բազում դպրութիւք զքեզ 'ի մոլութիւն դարձուցանեն»։ Երբև ետես Փես-տոս զՀամարձակութիւն նորա, զի հանապազ ընդ թագա-ւորին լինէր վարդապետեալ, տես զիարդ ախտացեալ 'ի միտս 'ի ձայն մեծ ասաց, այսինքն լի սրտմտութիւն, մոլիս, Պաւղէ. զի հնչաւոր մարդ գոլով յիմարութիւն կարծէր զվարդապետութիւն Հոգւոյն։ Եւ Պաւղոս տես զիարդ հեզութիւն տայ նմա զպատասխանին. «Ոչ մո-լիմ, քաջդ Փեստոս. այլ զցածութիւն և զՀշմարտու-թեան բանս բարբառիմ»։ Զայս ասելով 'ի բաց մղէ յինքեանէ զկարծիս մոլութեան։ Այլ զցածութիւն բանս, ասէ, խօսիմ. այսինքն զդատութիւն և խոնար-հութիւն. զզգաստութիւնն ընդդէմ խելայեղայութիւն

կարծեացն ասելով, և զխոնարհութենն ընդդէմ մեծամտութեան. քանզի ընդ առն թագաւորի տրամանեալ կաՀառէր, և զՀշմարտութեան բանս ասէ ընդդէմ կարծեաց ստեղծաբանութեան։ Այսպէս զպատՃառն ուսուցանէ վասն որոյ առ թագաւորն զբանն դարձոյց իբրև ընդ գիտողի խօսելով։

«Գիտակ իսկ է այսոցիկ, ասէ, արքայ, ընդ որում համարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել 'ի քէն իմիք 'ի սոցանէ չաՀանում յանձն. զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ իցէ այս»։ Այսու ցուցանէ թէ զՀամ ինչ գիտէր նա ստուգապէս. և զրեթէ ցնոսա ասէր՝ թէ պարտ էր և ձեզ զՀամ ինչ գիտել զայսոսիկ. զի 'ի վերայ բերեալն՝ թէ ոչ յանկեան ուրեք եղև այս, զայս նոցա ուսուցանէր։ Եւ դարձեալ ոչ ծածկեմ 'ի քէն, զի ոչ յանկեան ուրեք գործեցաւ այս, յաղագս խաչին և յարութեան Քրիստոսի՝ եթէ յՀամ տիեզերս եղև հասեալ աւանդութիւն հաւատոցս այսոցիկ։ «Հաւատաս, արքայ Ագրիպպա»։ Ոչ ասաց յարութիւն, այլ մարգարէիցն։ Եւ զի մի յուրասոյ լիցի, ածէ ինքն 'ի վերայ և ասէ. «Գիտեմ զի հաւատաս». Զի այնպէս Հշմարիտ իրօքն Հարկ արասցէ նմա խոստովանել։

ԵՓՐ. Իսկ արքայն որ 'ի մարգարէսն հաւատայր, և միաբանեալ մարգարէութենոցառ կամէր, աՃապարելով առ այն ասաց. «Փոքու իմն հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ»։ Այսինքն պակաս և փոքր ինչ իրաց հաւանեցուցանես զիս։

ՈՍԿ. Իսկ Պաւղոս ոչ իմացաւ թէ զինչ է փոքուն, համարեցաւ թէ առ փոքր մի, ասէ, հաւանեցուցանես զիս. վասն որոյ և առ այն տայ պատասխանի այլ ազգ. զի թէպէտ և ռամիկ էր համարեալ յայսնորա, բայց ոչ ասաց թէ ոչ կամիմ զքեզ այսպէս, այլ թէ «խնդրեի յՀայ և փոքու և մեծաւ ոչ միայն զքեզ, այլ և զՀամն որ լսեն ինձ այսօր՝ լինել այսպիսի որպէս և ես եմ, բաց 'ի կապանաց սոսի»։ Զինչ է փոքուն զոր խնդրէ յՀայ. այսինքն սակաւ և թերի և սուղ ինչ հեռի կացեալ. այլ և մեծաւ, ասէ. և ոչ պարզաբար մեծաւ խնդրեի, այլ գերազանցութիւն, այսինքն յոյժ ըղձիւք, այժմէն իսկ և ոչ յամելով.

ոչ միայն զքեզ, այլ զամ լսողդ լինել իբրև զիս։ Տես 'ի խաբէութէ ազատեալ զքանն. ինդրէի, ասէ, յայ լինել այսպէս որպէս և ես, բաց 'ի կապանաց աստի։

ԵՓՐ. Կամ թէ որը այսօր լսեն ինձ լինել իբրև զիս, փոքունքն և մեծամեծքն։ Կամ թէ յօրժամ լիցին յիս զօրութիւնք, կատարին յիս նեղութիւնք. այսինքն ես փոքր համարիմ զկատարումն զօրութեց առ մեծ բաղձանս նեղութեց. այլ այսպէս յաղթս կամ, թէ լսողք իմ իբրև զիս լիցին բաց 'ի կապանացս որով կապեալս կամ 'ի նեղութէ։

ՈՍԿ. Այլ զի մնանաւանդ 'ի վերջ քան զամ այն իսկ կապանքն որ վասն Քրիստոսի էր արժանի փառաց, ընդէր արդեօք զայս ասիցէ։ Ոչ իբրև դժուարելով ընդ կապանսն, որով պարծէր նա ամ ուրեք և յառաջ բերէր զնոսա իբրև զմանեակ ոսկի. ապա ոչ 'ի նմանէ արձակիլ ըղձայ. այլ քանզի տակաւին տկարասէս անկեալ կայինն նոքա և ոչ հանդարտէին լսել, ըստ որում առ նոցա միտսն և կարծիսն հայելով ինքն ընդ նոսա զիջանէ բանիւն՝ թէ բաց 'ի կապանաց։ Եւ քանզի ոչ ինչ է լաւագոյն քան զկապանսն զայսոսիկ, զոր և հանապազ 'ի Թուղթսն նախադրելով ասէր. «Ես որ կապեալս եմ 'ի տէր». և «Պաւլոս կապեալ Յիսի Քրիստոսի». և դարձեալ վասն նորին զերկաթքս զայս շուրջ եմ առեալ և պատգամաւորիմ կապանաւքս իբրև զչարագործ, այլ բանն այ ոչ է կապեալ. այլ ասելոյն կապեալ գոլ իբրև զչարագործ՝ կրկին ցուցանէ պատուհաս և խիստ զնեղութիւն։ Ոչ իբրև կապեալ միայն, այլ իբրև զչարագործ. զի թէ վասն բարւոյ իմիք լինէր կապանքն համարեալ՝ բերէր ինչ մխիթարութիւն. բայց այժմ իբրև զչարագործ թուիմ նոցա։ Յայսպիսի դժուարագոյն իրս ըմբռնեալ, բայց ոչ և միոյ առնէր փայթ 'ի սոցանէ, զի անչափ էր սէրն որ առ Քրիստոս։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Օ այն այսպիսի սիրով վառեալ տեսանեմք, որ և 'ի հոգի եռացեալ սիրոյն Քրիստոսի և 'ի վեր թռուցեալ էրկնային ցանկութիւնք՝ ոչ ինչ վարկանի ոչ զփառս և ոչ զանարգանս, միւսն ևեթ սկելով հասանել ըղձից,

որ է Քա։ Զի թէ որ այսու գարշելի տապանաքս տրու-
փեալք ոչ ինչ վարկանին զփառաւորս ինչ կամ զան-
պատիւ, այլ միայն փուլթան զի ցանկութենն հասա-
նիցեն, յոյժ մանաւանդ որ այնու ածայնն սիրոնն ի-
ցեն արբեալք՝ ոչ ինչ վարկանին զսաստս։ Ապա թէ
մեք ոչ իմանամք զասացեալս, ոչ են զարմանք, ան-
հմուտ գոլով իմաստասիրուեն այսմիկ. զի որ ըմբռ-
նեալ լինի սիրոնն Յեսի, լինի որպէս այր մի միայն բնա-
կեալ յերկրի, որոյ և ոչ միոյ ուրուք փոյթ ինչ է նամ-

ՃԱՌԻ ՅԻՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

«ՅՈՏՆ եկաց արքայն և դատաւորն և Բերինիկէ և որք ընդ նոսայն նստէին. և իբրև գնացին, խօսէին ընդ միմեանս՝ և ասէին թէ ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս։ Իսկ Ագրիպպաս ցՓեստոս ասէ. արձակել մարթ էր զայրս զայս, եթէ ոչ էր բողոքեալ'ի կայսր»։ Տես թէ որպէս բաղում անգամ յաղագս նորա դատ արարեալ լինին։ Եւ ասա յետ ասելոյն թէ մոլեալ ես, սկսան ասել նոքա ցմիմեանս երկուք յերկուց, թէ մարթ էր զի արձակեսցի. և թողին զնա ոչ 'ի մահուանէ միայն, այլ բնաւ իսկ 'ի կապանաց արձակեալ լինէր եթէ ոչ էր բողոքեալ առ կայսր։ Բայց և այս անօրինաբար եղև գնալ նմա կապանօք անդր, զոր և ինքն երանելին խնդրէր՝ թէ կապանաց իմոց յայտնի լինել'ի Քս. զի թէ տեղն նորա ընդ անօրէնսն համարեցաւ, որչափ մանաւանդ նա։ Բայց որպէս նա այնմ կարծեաց ոչ կցորդեցաւ, նոյնպէս և ոչ սա. զի աքանչելի և չքնաղ յայնժամ երևեալ լինի իրքն, յորժամ կարծեօք ինասուց և խառնակմամբ ոչ ինչ յայնմանէ ինասեալ լինի։

«Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա, տային զՊաւղոս և զայլս ոմանս կապեալս ցհարիւրապետ մի՝ որում անունն էր Յուլիոս՝ սեբաստեան գնդին. և եղեալ 'ի նաւ մի անդրամինտացի որ երթալոց էր 'ի կողմանս ասիացւոց՝ գնացաք. էր ընդ մեզ և Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկեցի»։ Տեսանես ըզգուութ աշակերտին. զի այնչափ ժամանակս ժուժկալեաց ընդ նմա, մինչև ընդ նմին 'ի Հռոմ եկեալ լինէր ընդ Պաւղոսի։ Եւ այս յոյժ բարիոք և կարևոր, Արիստարքոսի անդ մնա պատահեալ ամենայն եղելոցն հանդերձեալ գոլով զնմա պատմել 'ի Մակեդոնիա։

«Եւ 'ի վաղիւ անդր ինքաք 'ի Սիդոն. և մարդա-

սիրութիւն ցուցեալ Յուլեայ առ Պաւղոս, հրամայեաց առ բարեկամս երթալ և դարման գտանել»։ Մարդասիրապէս, ասէ, յորդորեաց Յուլիոս զկարևոր պէտսն առնուլ Պաւղոսի յաշակերտացն. քանզի զայս իրաւունս համարեցաւ նմա 'ի բազում չարչարանս գոլով նորա, 'ի կապանս, յերկիւղ տանելոյն իսկ և ածելոյն զնա հանապազորդ կապանօք։ Բայց տես և զՀնարտախօս միտս պատմող աշակերտին, զի և զայս իսկ ոչ թաքուցանէ թէ կամեցաւ Պաւղոս երթալ և փութոյ հանդիպիլ և դարման գտանել կարեաց։

«Եւ անտի ելեալ խոնարհագոյն նաւեցաք 'ի Կիպրոս վասն հողմոյն ընդդէմ լինելոյ»։ Դարձեալ հողմոյն սաստկութիւնք ընդդէմ հակառակին նմա։ Եւ տես 'ի ձեռն այսոցիկ զկենցաղ սրբոյն շարամանեալ. նախ 'ի բաց զերծաւ 'ի դատափետ առնելոյն, և անկեալ եղև 'ի նաւակոծութիւն 'ի ձմերայնոյն։ «Ցայնժամ, ասէ, ընդ մէջ ծովուն Կիլիկիայ և Պամփիլեայ նաւեալ՝ իջաք 'ի Զմիւռնիա լիկիացւոց. և անդ գտեալ հարիւրապետին նաւ մի աղեքսանդրացի որ երթայր Յիտալիա՝ եմոյծ զմեզ անդր»։ Տես զպատահումն իրացն. զի վայել էր նոցա որք յառաջնում նաւին էին՝ պատմել յԱսիա զիրսն Պաւղոսի, և զմիւռնացւոցս 'ի Լիկիա։ Իսկ նաւ մի աղեքսանդրացի յոր մտին, զի և աղեքսանդրացիք 'ի Լիբիա պատմեսցեն զՊաւղոսն։ Տես զնոր ոչ ինչ նորաձևեալ և ոչ փոփոխեալ. այլ թաղեալ զնա նաւել անձամբ հողմովք։ Նա և այս սքանչելիք լեալ լինէին, որպէս զի ամենեւ և անիշաս յաւազակաց նաւեսցէ. և ոչ եթող զնա 'ի խորն, այլ միշտ առ ցամաքաւն նաւէին։

«Եւ 'ի բազում աւուրս ծանրանաւեալք՝ հազիւ հասաք առ Կնիդոն, և 'ի չթողացուցանել զմեզ հողմոյն, նաւեցաք խոնարհագոյն 'ի Կրետէ առ Սաղամինեաւ. հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք 'ի տեղի ինչ որ կոչիւր գեղեցիկ նաւահանգիստ, յոր հուսկ էր քաղաքն Ղասեա։ Եւ իբրև բազում ժամանակք անցանէին և սիսալ ևս լինէր նաւելոյն, և վասն այն ինչ պահոցն անցանելոյ տայր խրատ Պաւղոս և ասէր ցնոսա. արք, տեսանեմ զի թշնամանօք և վնասիւբ ոչ միայն բեռինդ և նաւիդ՝ այլ և անձանց մերոց լինելոց է նա-

սարկութիւն։ Իսկ հարիւրապետն նաւապետին և նա-
ւավարին առաւել անսայր քան բանիցն Պաւղոսի»։
Պահն ասասնոր զՀրեշիցն առաւել ասել վարկանիմ.
թերևս տասներորդում ամենանն՝ յորում սպանաւ
Դիոգոնիա յետ առնելոյն Երուսաղէմի՝ ի քաղաքացւոյն,
զոր պատմէ Երեմիա և յիշէ Զաքարիա։ Զի զկնի
պէնտեկոստէին եղեն ի Կեսարիա. ապա յետ բա-
զում ժամանակաց իբրև ի նոյն իսկ ի ժամ ձմերայ-
նոյ հասանել կալ եղև նոցա ի կողմանս կրետացւոյց։
Եւ այս իսկ ոչ էր փոքր աբանչելիք, ապրեալ լինել
նաւորդացն ի ձեռն Պաւղոսի։

Լուր Պաւղոս հրամայեաց կալ մնալ անդէն, և զհան-
դերձեալ իրսն որ լինելոյ էր՝ յառաջագոյն ասաց։
Եւ դու տես զխոնարհութիւն նորա. զի մի թուեսցի
մարգարէանալ, այլ որպէս ի նկատելոյ ասէ. տեսա-
նեմ ասէ. քանզի ոչ թերևս յանձն առնուին վաղվա-
ղակի, թէ և այնպէս իբրև մարգարէութիւն ասէր։ Եւ
զի յայտ լիցի թէ ոչ ի նկատելոյ իրացն զայն ասէր՝
թէ տեսանեմ զլի թշնամանօք զնաւարկելս, նաւա-
վարն զներհանն ասէր, և մանաւանդ հմուտ գոլով
Աւյպէս յայտ եղև՝ զի ոչ էր ի նկատելոյ ասացեալն
Պաւղոսի. նա և տեղին իսկ ոչ զնոցն յորդորէր իմա-
նալ անցեալոց գոլով. բայց և յոլովից ոմանց մտա-
ւանդ ի նկատելոյ երևէր զնալ անտի, որով և վասն
գեցան. ուստի ցուցանի նորայն յառաջատեսութիւն
ոչ մարգկեղէն իրաք ասացեալ։ Այլ նոքա փութա-
լով նաւել, և ի տեղւոջն սխալեալ և խափանեալ լի-
նելով ոչ դադարէին անդ. այլ կամէին ձմերել ի
Փիւնիկէ։

«Իբրև դժպատեհ լինն թուէր նաւահանգիստն
առ ի ձմերել, բազումք խորհեցան գնալ անտի, թէր-
և ս կարասցեն հասանել ի Փիւնիկէ ձմերել ի նաւա-
հանգստին կրետացւոց, որ հայէր ընդ հարաւակողմն
և ընդ աշխարհն։ Եւ ի հնել հարաւոյն համարեցան
ուր դիմեալն էին՝ հասանել. և արկեալ մեծ առ ցա-
մաքաւն անցանէին առ Կրետաւ. և յետ ոչ բազում
ինչ աւուրց անկաւ զնովաւ հողմ ուռուցիկ որ կոչի
եւրակիկլոն. ընդ յափշտակել նաւին և չհանդուրժել
ընդդէմ հողմոյն՝ թոյլ տուեալ երթայաք և գա-

աք. 'ի կղզի ինչ գիմեալ՝ որ կոչեր Կղզիա, հազիւ կարացաք ըմբռնել զմակոյին. զոր առեալ յօգնականութեի կապէին ընդ նաւն, երկուցեալ թէ գուցէ 'ի յորձանուտն անկանիցին. և իջուցեալ զառագաստն այնպէս երթային և գային»։ Արդ տես տնօրինեալ զիրսն. յառաջագոյն ըմբռնէին զմակոյին և կապէին. ապա իբրև բռնութեի հողմոյն 'ի վերայ ընդեաց, տրեալ լինէին տարօղի և բերօղի. հազիւ ապրել լինէին։

«Այս 'ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝ 'ի վաղիւանդը զկարասին ընկեցիկ առնէին. և յերիր աւուր ընդ իւրեանց ձեռն, այս է ինքնաձեռն, զգործի նաւին ընկեցին»։ Եթէ հաւատացեալ էին մարգարէութեն Պաւղոսի զոր զգուշացոյց վասն տարաժամանաւարկութեն՝ ոչ վտանգէին. վայել էր իսկ նոցա հարցանել զՊաւղոս զպատշաձն վասն որոյ նաւէին, և 'ի նմանէ իմանալ զամենայն, և ոչ վայրապար փութալ և ընդերկար համարել զնաւարկութեն։

ԵՓՐ. Արդ իբրև ժամանեաց նոցա ձմեռն դառնաշունչ, և մրրկեցաւ ծովն ալեօք իւրովք և յարեաւ 'ի վերայ նոցա զբօսանք կուտակադեզ ալեօք փրփրելոյ, ընկեցին զկարասին 'ի ծով անդր։

ՈՍԿ. «Իբրև ոչ արև և ոչ աստեղք երևէին 'ի բազում աւուրս, և ձմեռն ոչ սպակաւ կայր 'ի վերայ, ապա բառնայր ամենայն յոյս փրկութեի մերոյ»։ Տես աստ, դժուարին էր ձմեռն, սաստիկ էր խաւարն. զի 'ի ձեռն այսր ամենայնի մի մոռասցին զառ 'ի նմանէ ասացեալսն. բայց և նեղութեն իսկ շնորհեաց Պաւղոսի ժամանակ վարդապետութեի։

«Այս զի բազում աւուրս նօթի էին, ասէ, յայնժամ Պաւղոս կացեալ 'ի մէջ նոցա ասէ. պարտ էր ձեզ, ով արք, անսալ ինձ և ոչ ելանել 'ի Կրետեայ և շահել զվիշտս զայս և զվտանգ. և արդ խրատ տամ ձեզ քաջալերել, զի ՀԱՍԱ անձին և ոչ միւմ'ի ձէնջ լինիցի բաց 'ի նաւէդ. քանզի երևեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշտակ այ, որոյ եմն եմ և պաշտեմ զնա, և ասէ. մի երկնչիր Պաւղէ, կայսեր ևս պարտ է քեզ յանդիման լինել. և ահա շնորհեալ է քեզ յայ զամենեան որ են ընդ քեզ 'ի նաւիդ։ Վասն այսորիկ քաջալերեցարուք, ով արք, զի հաւատամ յայծ թէ այսպէս լինի, զոր օրի-

նակ խօսեցաւ ընդ իս. բայց 'ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել»։ Եւ դարձեալ յետ այնչափ ձմերայնոյ յայնժամ Պաւղոս 'ի վերայ հասանէր քաջալերել զնոսա յորժամ բարձեալ լինէր ամենայն ակնկալութիւն յուսոյ կենաց նոցա. և ոչ նախ 'ի վերայ նոցա յարուցեալ եղև բանիւ, այլ կամեցաւ յապառնի ժամու յեղելոցն հաւատարիմ գտանել. և զերան որ լինելոց էր, առնու 'ի վկայութիւն քանին Աշմարտութեան. և զայն յեղելոց իրացն հաստատեալ, և երկուս իրս ասէ յառաջագոյն, մնաւանդ երեք և չորք։ Զի 'ի կղզի անկանել հասանէ. և զի նաւն կորնչելոց է, բայց որ 'ի նմանէն ապրեալ լինին. և այս ոչ էր 'ի նշանակէ իրացն, այլ մարգարէութեան յառաջագոյն. և զի առաջի կայսեր, ասէ, կալ պարտ է քեզ։ Եւ դարձեալ յառաջագոյն մարգարէանայ զլինելոցն, և երկրորդ անգամ զնոյն ասէ։ «Եթէ որոյ ես եմ և պաշտեմ զնա». Ներածելով զնոսա 'ի հաւատս, և զնոյ խնամսն և զզօրութիւն ցուցանելով, և առ ինքն ածելով զնոսա։

Իսկ այն՝ թէ չնորհեալ եղև քեզ յոյ զամենեսեան որ ընդ քեզ, ոչ է պարծանաց, այլ կամելով առ ինքն ածել զնաւաւորեալսն. ոչ զի չնորհ ունիցին նմա, այլ զի հաւատալով հաւանեսցին ասացելոցն առ 'ի նմանէ. իբրև թէ արժանի են մահու, բանիւն ցուցանէ, քանզի ոչ լուան նմա. սակայն և այնպէս վասն նորա չնորհքին կեցուցին զամենեսեան։ Զի այնպիսի բանութեան ձմերայնոյն որպէս ոչ եղև հանդերձ վնասուք անձանց նոցա, եթէ ոչ 'ի խնամոյն այ. քանզի լիներ վնաս նոցա և կարի յոյժ, եթէ ոչ ածէ լիներ կեցուցեալ զնոսա. զի որչափ ըստ բնութեան իրացն էր, և նոքա կորուսեալ եղեն։

ԵՓՐ. Յայտնեաց Պաւղոս վասն հրեշտակին՝ որ եւ ևեցաւ նմա և ասաց ցնա՝ թէ առաջի կայսեր կալոց ես դու, և նաւդ բեկանի, և այր մի յերկերի՝ ը և եօթանասուն մարդոյդ որ են 'ի դմա՝ մի կորիցէ։ «Իբրև չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ մինչդեռ ծփեաք 'ի Հանդրին յանդունդս՝ 'ի մէջ գիշերին կարծէին նաւավարքն թէ հասեալ իցեն յաշխարհ ուրեք. և ընկեցեալ զգունդն՝ դտին գիրկս քսան. սակաւ ինչ դադարեալ՝ դարձեալ ընկեցին և դտին գիրկս հնգետասան։

Զահի հարեալ թէ գուցէ 'ի խիստ ինչ տեղի անկանիցին, յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս չորս. ընդանային այգոյն լինելոյ։ Բայց նաւավարքն խրնդրեին փախչել 'ի նաւէ անտի. և ինքուցեալ զկուրն 'ի ծով անդր՝ պատճառանօք որպէս թէ յառաջնոյ կողմանէ խարիսխս ձգելոց իցեն։ Ասէ Պաւղոս ցՀարիւրապետն և ցզօրականսն. եթէ ոչ դոքա մնան 'ի նաւիդ, դուք ապրել ոչ կարէք։ Յայնժամ զօրականքն հատին զլարս մակուկին և 'ի բաց ընկեցին»։

ՈՍԿ. Հանդերձեալ էին նաւորդքն փախչել՝ թերահաւատելով դեռ ասացելոցն 'ի Պաւղոսէ. իսկ հարիւրապետն հաւատաց Պաւղոսի։ Եւ ընդէր ասաց Պաւղոս՝ թէ դոքա փախչին, դուք ապրել ոչ կարէք։ Ոչ վասն այնորիկ՝ թէ զի սոքա ոչ ապրէին, այլ զի ըմբռնեսցէ զնոսա 'ի ներքս, և մարդարէութիւն ոչ սխալեսցի։ Եւ տես զիմաստութիւն Պաւղոսի թէ որպէս 'ի մէջ մահաբեր վշտացն կեցոյց զնոսա, և թէ զիարդ որպէս յեկեղեցւոջ խրատեալս զնոսա գործէր։ Այլ և անօրինաբար Պաւղոս նախկին ոչ լինէր հաւատացեալ 'ի նոցանէ, զի յետ լինելոյ իրացն հաւատացին, որ և եղև իսկ։ Բայց ոչ փոքր առ լսողութիւն գործակից լինէր ձմեռն և խաւարն. մինչ զի հարիւրապետն ապա այնպէս հաւանեալ լինէր Պաւղոսի, որպէս զի զկուրն թողուլ, զի կորնչիցի։ Իսկ նաւորդքն չև ևս հաւանեցան, զի և ազգաւ իսկ կարծր են նոքա. այլ յետոյ և նոքա լինին հաւանեալ։ Նա և ոչ էր առժամայն դիւրաւ ընդունելի, ամբաստանելով ինն Պաւղոս զպատահարսն. իսկ յետ պատահարացն յորժամ այն լինէր, զոր ինչ կանխաւ ասաց Պաւղոս, յայնժամ դիւրաւ ընդունէին։

«Այլ իբրև այգն կամէր լինել, աղաչէր Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր. ասէ. այս չորեքտասան ներորդ օր է որում ակն ունիմք նօթի կատարել, և չէ ինչ ճաշակեալ»։ Զի մի ոք ասիցէ թէ ոչ ինչ վտանգաւոր եղև. երկիւղն վկայէ. ահա և տեղին դժուարին ագրիական ծովուն խորոց և անսուաղուութիւն բազում. և զի էին 'ի մէջ մահու, չորեքտասան օր անսուաղ կատարեալ և ոչ բնաւ իրաց հաղորդեալ։ Արդ զիարդ հանդուրժէին զայնքան աւուրս. քանզի երկիւ-

զքն մահու ըմբռնեալ զնոսա՝ ոչ թողացուցանէր 'ի ցանկութիւն կերակրոց հասանել. հանգերձեալք այնուհետև զվերջինն կրել վասնզի։ Եւ զի որ ինչ եղև 'ի ժամանակին եղև վիշտքն, բայց զի յայնպիսի ժամանակի 'ի միջոց ահագին վշտացն ապրեալ եղև ինքքն Պաւղոս և 'ի ձեռն նորա ամենեքեան այլքն, զանչելիք մեծ էր։ Եւ տես զվտանգն, զի բնաւ չէր նոցա փոյթ կերակրոց. այնչափ մեծ էր տաղնապն 'ի վերայ. զորս և ողբէր Պաւղոս հոգոյզդել կերակրոյ։

«Ա՝ ան որոյ ապաւեալ զձեզ, ասէ, Ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք 'ի ձէնջ մազ մի 'ի գլխոյ կորիցէ»։ Տեսանես նախ վասն նօթի լինելոյն յառաջաբանէ. զի այս, ասէ, վասն ձերոյ փրկութեան է՝ առնուլ կերակուր, զի մի 'ի սովոյդ ապականիցիք։ «Իբրև զայս ասաց, առեալ հաց գոհացաւ զնայ առաջի ամենեցուն. եբեկ և սկսաւ ուտել, և քաջալերեցան ամենեքին, և նոքա առին կերակուր»։ Ինքն յառաջագոյն հաղորդի ոչ բանիւ լոկով, այլ և գործով հաւանեցուցեալ զնոսա. և զայս ուրախութիւն. իբրև թէ ոչ ինչ վնաս արար ձմուն, այլ մանաւանդ շահեցոյց զոգիս նոցա. և գոհանալով նոքա զնայ, այսինքն 'ի վերայ ամենայն նեղութեանցն որ հասին նոցա, և սկսանելով ուտել, զօրացոյց զանձինս նոցա յուտել. զի այս իսկ հաստատուն հոգւոյ գործ է զոր և նա առնէր, զի կեցցեն բազմութիւնքն յառնուլն զթոշակն կերակրոյն. վասն որոյ և հաւանեալ լինէին։

«Լ՝ ուեին 'ի նաւին ոգիք երկերիւր եօթանասուն և վեց»։ Զեր և այս փոքր, այնչափ բազմութիւն անձանց լինել ընդ Պաւղոսի, որոց քանայր դուռն հաւատոյ ամենեցուն։ «Եւ իբրև յագեցան կերակրոմն, թեթևացուցին զնաւն թափեալ զցորեանն 'ի ծով»։ Ոչ միայն Ճաշակել կերակրոյն լիներ նոցա յօգուտ խրատոմն Պաւղոսի, այլ և զամենայն զիւրեանց օգտակարս այնուհետև առ նա ընկեցին, որպէս զի և զցորեանն արտաքս արկանել, այնքան բազումք գոլով նոցա։ Եւ տես, և յետ այնորիկ զնոսա մարդկային առնելով՝ թափելով զցորեանն, և զ Պաւղոս՝ ոչ խափանելով զնոսա։

«Լ՝ իբրև այգ եղև, զերկիրն ոչ Ճանաչէին. բայց

զգոգ մի նշմարէին թէ ափն ծովուն իցէ, յոր խորհէին թէ հնար ինչ իցէ՝ զերծուցանել զնաւն. և զխարիսխն հատեալ ընկեցին 'ի ծովն. թողացուցին զխառնելիս թեւոցն, և 'ի բաց առին զառագաստն, և ետուն հողմոյն յափն կոյս ծովուն. անկեալ 'ի տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն. և առաջին կողմն նաւին խրեալ անշարժ մնայր. և յետին կողմն քակէր 'ի բրեռնութենէն։ Թողացուցին, ասէ, զլծորդս թիս թեւոցն քեղեացն վասն ընելոյ հողմոյն ոչ ներելով նաւին. քանզի բազում անգամ այնպէս առնէին 'ի վայր իջուցանելով զառագաստն. քանզի յորժամ ուժգին իցէ հողմն, այս իսկ իւրովի լինի 'ի բաց հատանելով ըզլարսն բռնութենէ հոսմանն. և այսոքիկ յագրիկանն Ուստի և նաւն քակեալ լինի, և զցորեանն և զամենայն ինչ 'ի ծովն ընկեցեալ, զի մի ունիցին յետ այնորիկ պատճառս ինչ անամօթութենէ. զի վասն այսորիկ նախ նաւն քակէր, և ապա փրծանէին անձինքն։

«Եւ զօրականացն խորհուրդ արարեալ զի զկապեալսն սպանցեն, և մի օք լողացի և փախիցէ։ Եւ հարիւրապետն քանզի կամեցաւ ապրեցուցանել ըզՊաւղոս, արգել զնոսա 'ի խորհրդոցն, և հրամայեաց զի որ կարողն իցէ լուղալ՝ անկանիցին և 'ի ցամաքն ելանիցեն։ Դարձեալ փորձուն յարուցանէր բանսարկուն և ջանայր խափանել զմարգարէութիւն. խորհուրդ արկանէր զինուորացն սպանանել զկապեալսն։ Իսկ հարիւրապետն ոչ ետոզ զայն առնել վասն Պաւղոսի. քանզի այնպէս ընտանացեալ էր նմա և սիրէր զնա։ Արդ իբրու կամէր նա զՊաւղոս միայն ապրեցուցանել, զինուորքն կամեցան զայլսն սպանանել։ Ինձ այսպէս թուի՝ թէ վասն զի նոքա զորս սպանանել խորհէին, խոստովանեալք էին յայսմանի չարք գոլ և արժանիք մահու. բայց և այն խափանեցաւ վասն Պաւղոսի։

«Եւ ոմանք լուղալով. և զայլսն զորս 'ի տախտակսն և զորս յայլ ինչ 'ի կահ 'ի նաւէ անտի, և այսպէս եղև ամենեցուն փրծանել յերկիր, և ապրեալք։» Եւ այսպէս մարգարէութիւն Պաւղոսի առնոյր զկատարումն, թէպէտ և ոչ յոլով ժամանակաւ զօրանալով. զի ոչ բազում ամօք յառաջ ասաց, սակայն բը-

նութեն իրայն հետևելով. զի առանց յուսոյ կենաց էին ամենեքեան, և 'ի ձեռն իւրեանց փրկութեն իմանային թէ ով որ արդեօք էր Պաւղոս։ Տեսանէս որչափ բարի եղև 'ի ձմերայնոյն. ապա ուրեմն անօրենութեն այ էր և ոչ 'ի ձեռաց Թողչոյ ձմերայնոյն։ Այլ ասասցէ որ Թերևս՝ ընդէր և զնաւն ոչ փրկեաց։ Վասելչապէս. զի իմասցին թէ յորպիսի բրնաագոյն վշտաց Ճողոպրեալք եղեն. զի ոչ մարդկային օգնականութեն էր այն ամենայն, այլ ամենազօր ձեռինն այ կարողին առանց նաւի կեցուցանել։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Զի արդարք թէպէտ և 'ի ձմերայնի իցեն, թէպէտ 'ի ծովու, ոչ ինչ կրեն դժուարինս. այլ և զայլս հանդերձ ինքեամբք կեցուցանեն։ Եւ թէ նաւ վըշտագնեալ և նաւակոծութեն պատահեալ և կապանաւորք վասն Պաւղոսի ապրեցան, պարտ է ասա զի այր սուրբ կալցուք 'ի տունս մեր. զի բազում ձմերուանք 'ի վերայ մեր հասեալ լինին. և նոքօք կարող է ած փրկել զմեզ. եթէ հաւանիմք սրբոյն որպէս նոքա որ 'ի նաւին էին։ Զի թէ 'ի կապանս իցէ սուրբն, քան զարձակսն մեծագոյնս գործէ. զի արձակ հարիւրապետն աղաչէր զկապանաւորն Պաւղոս։ Արդ յամենայն ընթացս մեր լուիցուք և անսասցուք իրատուն Պաւղոսի, զի ապրեսցուք։

ՃԱՌ ՅԻՄՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

«ՅԱՅՆԺԱՄ գիտացաք թէ Մելիտինէ էր անուն կղզւոյն. բայց բարբարոսքն չնորհեցին ոչ սակաւ մարդասիրութի մեզ. քանզի լուցին խարոյկ և ընկալան զաւ մենեսին զմեզ վասն անձրևին՝ որ ստիպէր և վասն ցրտոյն»։ Տես արդ Հրեայքն այնչափ նշանս տեսեալ հալածելին, իսկ բարբարոսքն միայն զնոսա ի պատահարացն տեսանելով զերծեալս՝ մարդասէրք գտանին։ «Չնորհեցին, ասէ, բարբարոսքն ոչ սակաւ մարդասիրութի»։ Քանզի ոչ էր շահ փրկիլն ի ծովէն, ձմերայնոյն հանդերձելով զամենեսեան մահացուցանել։

ԵՓՐ. «Այլ ի ժողովէն Պաւղոսի խուիս ինչ բազում և գնել ի վերայ խարուկին՝ իժ մի ի ջերմութենէն ելեալ կալաւ զձեռանէ նորա»։ Վասն զի յելանելն իւրեանց ի ծովէն բերին բարբարոսքն խաւժագուժք կրկուտ մանրախուիս՝ գնել կրակ և ջեռուցանել զնոսա։ Մատեաւ Պաւղոս և քաղեաց, և էլ ի նմանէ քարբ և պատեցաւ զձեռամբ նորա։ Իբրև թուէր բնակչացն թէ սպանանէ զնա, վրիժապարտ արեան կոչէին զնա։ Իսկ իբրև տեսին զի ՀՕՃԵՑՈՅՑ զձեռն և ընկեց զսպանողն ի հուրն և ինչ ոչ վնասեաց նմա, ՝ածէ կոչեցին զնա։ Վասն զի բազում ողորմութի արար ի վերայ մեր. զի զսպանիչ սատակիչ բնակչաց գաւառացս այրեաց ի հուրն յանդիմանն մեր։

ՈՍԿ. Տես զնա ի գործն փութալով. տես զնա ոչ վայրապարաբաքնչելիս արարեալ, այլ ըստ պիտոյից. և նախ վասն ձմերայնոյն պատահարի մարդարէացաւ և ոչ պարզաբար. և ասա առժամայն խուիս եղեալ ըստ հարկի՝ ոչ մեծամտելով ինչ ընդ ապրելն նոցա, այլ և խնամելով և ասէ։ «Իբրև տեսին բարբարոսքն կախեալ զդպանն զձեռանէ նորա, ասեն ցմիմեանս. ուրեմն սպանող է այրս այս. որ թէպէտ ապրեցաւ ի ծովէն,

իրաւունքն ոչ ետուն կեալ»։ Բարիոք և այսոցիկ տեղի տուաւ, որպէս զի տեսանիցեն նոքա և զայսոսիկ բարբառիցին. զի յորժամ աքանչելիքն լինիցին, մի թերահաւատեսցեն։ Եւ տես զնոսա՝ պատկառելով ընդ միմեանս ասէին, և ոչ վայրապար ստգտանէին զնա։

Տես և զենական դատաստանն յօդաւորեալ առ բարբարոսացն։ Ուրեմն մահապարտ է այրս այս, ասէին. ոչ միայն պարզաբար դատէին, այլ հանդերձ ստուգութիւն։ և զայս անդուստ է տեսանել՝ի նոցին բանիցն։ Իրաւունքն, ասէին, ոչ ետուն կեալ. ապա ուրեմն և վասն աշխարհիս զնախախնամութեն այ բան ունէին նոքա. յոյժ քան զիմաստասէրսն սոքա իմաստնագոյնք հանդիսային, որք ոչ թողացուցանէին նախախնամութեն հանդիպել զի ներքոյ լուսաւորացդ։ Իսկ յամենայն տեղւոջ կարծէին սոքա գոլ զանծ և զդատաստան նորա. զի թէպէտ և բազումանգամ զերծցի ոք, ասէն, այլ իսպառ ոչ կարէ փախչել՝ի Ճշմարիտ իրաւանցն։ Եւ զայս ասելով իբրև՝ի կարծ իմն, և ոչ՝ի վերայ հասեալ եղեն կատարելապէս. այլ պատկառելով իմն առաժամայն ասացեալ վասն պատահարացն։ Դա և ոչ արտայայտեն, այլ առ միմեանս ասեն, զի և կապանքն իսկ զայս կարծել ուսուցանէր։ Յամօթ լիցին այնոքիկ որ ասեն՝ թէ չէ պարտ բարի առնել այնոցիկ, որ՝ի բանտի և՝ի կապանս իցեն. ամաչեսցեն գէթ՝ի բարբարոսացն, զի նոքա ոչ գիտէին թէ այք ոմանք իցեն նոքա. այլ՝ի պատահարացն առաժամայն տեսեալ զերծեալ՝ վաղվաղակի զդուութեն և զսէր ցուցանէին. քանզի տեսին զի մարդիկ էին և՝ի վտանգի։

«Այս նոքա թօթափեալ, ասէ, զգազանն՝ի հուր՝ եղև նմա չար և ոչ ինչ. և նոքա ակն ունէին նմա այտնելոյ կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ։ Իբրև շատ ակն կալեալ տեսանէին թէ ոչ ինչ վնաս եղև նմա, դարձեալ դարձուցին զբանս և ասեն՝ թէ՝ ած ոմն է»։ Վասն այսր ապա յառաջագոյն՝ի կասկած մահու տեսին զնա, զի առաւել աքանչասցին։ Բազումանգամ, ասէ, ակն ունէին թէ մեռանի. և յորժամ թափեաց զձեռն և զգազանն ընկէց, յայնժամ տե-

սին և զարհուրեցան։ Եւ զի ոչ եղև յանկարծակի նշանն, ըստ որում և ժամանակաւն տարակուսեալ դեգերեցան արքն, այնպէս ոչ էին իրքն պատրանք։ Տես դարձեալ այլ ինչ յայնմանէ զարմանս և զօրութիս զոր արար 'ի կղզւոջն. զի զհայր ասպնջականին իւրեանց բժշկեաց, և բազում հիւանդաց որ անդ էին՝ տուաւ 'ի ձեռն նորա բժշկութիւն։

«Յաւ շուրջ, ասէ, զտեղեաւն զայնուիկ էին գիւղք գլխաւորի կղզւոյն՝ որում անունն էր Պոպղիոս, որ առ զմեզ յերաշխի զերիս աւուրս և սիրով ընկալաւ։» Ահա դարձեալ այլումն հիւրասէր Պոպղիոս փարթամ գոլով. և ոչ այլ ինչ տեսեալ բաց 'ի պատահարացն միայն, և այնչափ սիրով յանձն առ զնա աշակերտաբնաբարեխորհ և օտարասէր գոլով մեծաւ պատուով ընկալաւ զնոսա զերկերիւր և զեօթանասուն և վեց արսն։ Եւ զմտաւ ածէ զօտարսիրութիւնն շահ թէ որչափ է. ոչ իբրև 'ի հարկէ գոլով և ոչ ակամայ, այլ սիրով, ասէ, ընկալաւ զերիս աւուրս։ Ապա այնուհետև փոխարինին հանդիպի յոյժ մեծագունի, և առաւել վայելչապէս. ոչ միայն նա, այլ և ամենայն կղզին զիւրաքանչիւր պէտս և զկաճառս գտանելով։

«Յաւ եղև, ասէ, հօրն Պոպղեայ 'ի ջերմ և յախտ թանչից հիւանդանալ գնել. առ որ մտեալ Պաւղոսի և կացեալ յաղօթս՝ եդ ձեռն և բժշկեաց զնա։ Իբրև այս եղև, և այլ հիւանդք որ էին 'ի կղզւոջն՝ գային և բժշկէին, որք և բազում պատուով պատուեցին զմեզ. և իբրև գնացաք, ետուն որ ինչ պէտք էին»։ Տես զառատութիւնոցա, զի ոչ 'ի ձմերայնին միայն յանձանձէին գթով, այլ և յետ ձմերայնոյն ոչ պղերգացեալ լինէին. նա և զընդունելութիւնն պատուասիրելով առնէին, և զամենայն վասն Պաւղոսի։ Բազում պատուով պատուեցին զմեզ, ասէ։ Արդ ոչ վարձ բժշկութիւն ընկալաւ զայն ինչ Պաւղոս, քաւ լիցի. այլ ըստ գրեցելումն՝ թէ արժանի է մշակն կերակրոյ իւրում։

«Յաւ գնալով մեր, ասէ, ետուն որ ինչ պէտք էին»։ Քաջայայտ է թէ զբանն քարոզութիւն ընկալան և հաւատացին. որք այնպէս առատութիւն և անձանձրոյթ զնոցա զամենեցուն պէտս ընուին, զամիսս երիս

անդասնոր կերակրելով զամենեսին։ Զի Թերևս ոչ այնչափ ժամանակս անդ քարոզէր և ուսուցանէր Պաւղոս, եԹէ ոչ նոքա յոյժ հաւատացեալ լինէին և պատուղ ցուցեալ, նա և զայնչափ նշանս տեսանելով եղեալ։ զի և նշանացն գործ զհաւատս նոցա ցուցանէր, իբրև Թէ յայնմ ամենայնէ նշան մեծ է տեսանելանդ զբազմուԹիւն հաւատացելոցն եղեալ։

«Եւ յետ երից ամսոց ելաք 'ի նաւ մի աղեքսանդրացի՝ որ ձմերեալ էր 'ի կղզւոջն, նշանաւորաւ դիոսկուրացւոյ. և ինքաք 'ի Սիրակուզա, եղաք անդ աւուրս երիս. ուստի գնացեալ հասաք 'ի Հռեգիոն։ Ելաք, ասէ, 'ի նաւ մի նշանաւոր դիոսկուրիցն. Թերևս յայս ինչ էր վերապրեալ նա՝ Դիոսի. զի այնպէս կռամելք էին, ձօնեալ զնաւն ըստ այնմ անուանն։ Հասեալ 'ի Հռեգիոն, յետ աւուր միոյ 'ի չնչել հարաւոյն երկօրեայք եկաք 'ի Պատիոզուս, ուր և գտեալ եղբարս՝ աղաչեցեալք 'ի նոցանէ լինել առ նոսա աւուրս եօԹն։ Տես զնոսա յամենալս 'ի կղզւոջն և դարձեալ փուԹացեալս. քանզի այնուհետև պատկառելի էր Պաւղոս, իբրև ԹողուԹի 'ի նոցանէ զընտեալ զոչ նմա ըստ կամս ինքեանս։ Զի Թէ յառաջքան զայս ամենայն մարգասիրուԹիւն առ նա վարեալ լինէին վերակացուքն, բազում առաւելուԹիւն այժմ ևս. 'ի Պատիոզուս գտին զոմանս, ասէ, և աղաչեցեալք մնացին առ նոսա աւուրս եօԹն։

«Եւ ապա ելաք, ասէ, 'ի Հռոմ. և անտի լուեալ եղբարց զմէնջ՝ ելին ընդ առաջ մեր մինչև յորգոստայն Ապփեայ և երիցն կրպակաց. զոր տեսեալ Պաւղոսի գոհացաւ զայ և քաջալերեցաւ»։ Վասն Պաւղոսի տես զամենայն ինչ լինելով. որպէս զի օրք ընդ նմա էին կապեալքն, զենուորքն, հարիւրապետն, ամենեքեան հաւատացեալք եղեն. քանզի Թէ և քարեղէնք էին, զգօնանալ պարտ էր։ Ուստի չէն ինչ զարմանք եԹէ հաւատացին, այնչափ ժամանակս ընդ նմա կալով և այնչափ սքանչելիս տեսանելով. քանզի 'ի ձեռն բարւոյ խորհրդակցուԹեան նորա՝ որ լուան, և 'ի ձեռն ողջամբ մնալոյն և վասն սքանչելագործուԹեան և վասն կերակրելոյն՝ որով վայելեցին 'ի կղզւոջն, մեծամեծս Թերևս խորհէին վասն նորա։

Տես յորժամ ուղիղ դատաստան իցէ և ոչ յառաջաւ գոյն ըմբռնեալ իցէ ոք ախտիւ իւիք՝ թէ որպէս վաղ վաղակի առնու զընտրութիւն ուղիղս, և գիտութիւն և քննելով զդատ իրացն վճարէ, որպէս նոքայն որ ընդ Պաւղոսի էին։

Ո՛վ քանչելեացն, ածեղէն զօրութիւն աւետարանն յանկարծակի իբրև զլոյս տարածեցաւ ընդ տիեզերս. զի ահաւասիկ մինչ 'ի Սիկիլիա մերձեցաւ. տես որպիսի արագութիւն 'ի Սպանիա և Յիտալիա ընթացեալ մխեցաւ։ Ի Հռոմէ, ասէ, լուեալ եղբարցն՝ եկին ընդ առաջ մեր մինչև ցերևելի վաճառատունն երիցն խանութիւց։ Զի այնչափ էր յօժարութիւն եղբարցն, զի ոչ զարհուրեցոյց զնոսա կապանքն լինելն Պաւղոսի, ոչ ինչ երկուցեալք 'ի վշտաց և յահէ ուրուք. որ և այսոքիկ բաւական են առ 'ի հաւատարմացուցանել զհաւատն նոցա որք ընդ Պաւղոսի էին։ Եւ տես զի ոչ ուրեք 'ի քաղաքի պատահեալ եղև նոցա առ այսչափ ժամանակս նաւարկուե. այլ 'ի կղզւոջ և 'ի ժամանակս ձմերայնոյ. և ամբողջ ամենեքեան անդանօր լինէին եկեալ. որ և այս իսկ վերածէր զնոսա առ հաւատս, զնաւակցացն ասեմ։

Այլ տես զՊաւղոս և մարդկային ինչ կրեալ. «Քաջալերեցաւ, ասէ, տեսանելով զեղբարսն». և մանաւանդ ոչ յերկիւղի գոլով, այլ բազում խնդութիւն լի և անչափ նշանս գործելով. սակայն 'ի նոցա տեսութէն յաւելուած էառ։ Աստուստ իմանամք թէ և մարդկապէս մխիթարեալ եղև. յաւէտ ևս ածանոնն փափաքման լրմամբ. զի եհաս 'ի լրումն ըղձից իւրոց և 'ի կատարումն հրամանին Քրիստոսի առնա՝ թէ «Պարտ է քեզ կայսեր լինել յանդիման»։

«Այս իբրև մտաք 'ի Հռոմ, հրամայեցաւ Պաւղոսի լինել առանձինն հանդերձ զինուորաւն պահպանաւ իւրով»։ Տեսանես զիարդ զատեցաւ յայլոցն, և ներողութիւն եղև նմա ըստ ինքեան ագանել. և այս իսկ ոչ փոքր նշան էր յոյժ սքանչելի լինելոյ նորին։ Սմին վասն առանձինն եղև հանդերձ զինուորաւն պահպանաւ իւրով. որպէս զի մի անդանօր հնար լիցի դաւաճանութիւն յումեքէ կրելնմա։ Զի ոչ թէ զնա զգուշութիւն պահել ջանային, այլ զի մի առ նա

ինչ լինիցի յումեքէ յանպատշաճիցն և անիրաւաբար. և քանզի ամենուն հետեւ ոչ էր հնար 'ի քաղաքի գալով և մերձ թագաւորի՝ լինել ինչ յումեքէ անպատշաճ և թողութիւն գտանել։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այսպէս միշտ թուելոցն մեզ հակառակ գալ՝ լինին անտի մեզ իրք պատշաճաւորք. քանզի դաւաճանութիւնքն նիւթեալք զառաքինիսն պայծառագոյնս առնեն հանապազ. որպէս է տեսանել առ սրբովքն ամենեքումբք, զորս փորձութիւնքն ընտիրս երևեցուցին։ Եւ տես, Հրամայեաց Փարաւոն 'ի գետն ձգել զտղայսն. և եթէ ոչ լինէին տղայքն գետամիջք, թերևս ոչ լինէր ապրեալ Մովսէս և ոչ յարքունիսն մնալ. և եթէ ապրիւր ևս, ոչ 'ի պատուի լինէր մեծարեալ, այլ հակառակօքն ՝այ հնարքն ներգործէր։ Սպառնացաւ նմա Հրեայն, «Մի թէ սպանանել զիս կամիցիս». և այն չահ եղև նմա, ՝ոծային տեսլեանն պատճառ տնօրինեալ, և այնպէս 'ի մեծամեծսն գնալոյ նմա 'ի փառս։ Այսպէս Կային նենգելով զԱբել՝ ՝այ ընտիր արար գնա։ Եւ Նաբուգոդոնոսոր զերիս մանկունսն պայծառս արար 'ի հնոցն արկանելով. ըստ որում և զինուորն պահապանն Պաւղոսի տեսող և վկայս եղև նորայնոցն ՝ամի։

ՃԱՌ ՅԻՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Եւ յետ երից աւուրց կոչեաց զՀրէշտակն գլխաւորս», փուլթով յետ երից աւուրց, զի մի յառաջագոյն այլ ազգ ըմբռնեսցին լսելիք նոցա։ Եւ զինչ ունէր հաստատակաց առ նոսա. զի հանդերձեալ էին թերեւս քննել զնմանէ. սակայն նա այսոցիկ փոյթ ոչ առնէր, այլ ուսուցանելոյն, զի մի ընդդէմ կացեալ լիցին նմա առ ատացեալսն։

«Եւ իբրև եկին, ասէ ցնոսա. ես, եղբարք, ոչ ինչ հակառակ գործեալ ժողովրդեանն կամ կրօնիցն Հայրենեաց՝ կապեալ յԵրուսաղէմէ մատնեցայ 'ի ձեռս Հռոմայեցւոց. որք իբրև դատեցան զիս, կամեցան արձակել վասն և ոչ մի ինչ մեռաս մահու գտանելոյ յիս. և 'ի հակառակել Հրէից՝ հարկ եղև բողոքել 'ի կայսր. իբր ոչ եթէ զազգէն իմմէ ունիցի ինչ չարա խօսել. վասն այսր պատճառի աղաչեցի զձեզ տեսանել և խօսել. զի վասն յուսոյն Խարայէլի կամ 'ի շղթայս յայսոսիկ»։ Կամեցեալ այնուհետև զանձն իւր ազատել 'ի պատճառէ և զայլս. զանձն իւր՝ զի մի չարախօսեսցեն զնմանէ, և այն իսկ զնոսա մեռասէ. իսկ զնոսա՝ զի մի թուլցի ամենայն ինչ 'ի նոցանէ լինել. քանզի 'ի դէպ էր գալ համբաւու իրացն՝ թէ 'ի ձեռն Հրէից մատնեցաւ. և այս իսկ բաւական էր խոցել զնոսա և 'ի մեծ ահի կացուցանել։

Արդ վաղվաղակի առ այս իրս կացեալ լինի, և իրացն որ յաղագս ինքեան էր՝ տայ պատասխանի. և տես զինչ ասէ. «Ոչ ունէի իրս ինչ մեռասու իբրև հակառակ գործեալ կրօնիցն»։ Վայրապար մատնեցին զիս, ասէ. «կայէն Հռոմայեցւոց իշխանքն, ասէ, որք և քննեալ դատեցան արձակել զիս. վասն զի քննելով զիս ոչ ինչ գտին յիս։ Եւ ընդէր ապա ոչ արձակեցին զքեզ։ Յընդդիմաբանութէ Հրէից. ըստ որում պարտ էր նոցին իսկ ապրեցուցանել, նոքա մատնեցին 'ի ձեռս Հռոմայեցւոց. և այնչափ առաւէ

լութիւն, զի թէպէտ և իշխանքն ոչ կարացին զիս դատապարտել, այլ և ոչ կարացին ազատել. որով հարկ եղև ինձ առ կայսր բողոքել։

Տես թէ որպէս 'ի բաց բառնայ զամբաստանութիւնս զնոցանէ. քանզի թէ կամեցեալ էր աձեցուցանել և չարախօսել զնոցանէ, ուժգնագոյնս պարտ էր 'ի կիր արկանել. այլ ոչ այնպիսի ինչ ածէ 'ի միջ, այլ լոկ՝ թէ 'ի Հրէից հակառակել հարկ եղև բողոքել 'ի կայսր։ Տեսանես զի հեզութիւն խօսի և անյիշաչարութիւն և ըստ ներողութեան ասէ զայդ։ Եւ զիարդ. միթէ վասն ամբաստանելոյ զնոցանէ բողոքէս 'ի կայսր. ոչ՝ ասէ. զի ոչ եթէ զաղդէն իմմէ ունիցի ինչ չարախօսել, այլ իբրու Աստուածոյ 'ի զուր դատելոյ և 'ի վշտեանոցա զիս։ Տես զընտանութիւն բանին. զի ոչ օտարանայ 'ի նոցանէ, այլ դարձեալ սերմանէ զաւանդն, այսինքն այսու բանիւ զնոսա յինքն կամի ձգել և աշակերտել զնոսա քրիստոնեայ կրօնիցն։

Այլ ոչ ասաց թէ ոչ չարախօսեմ, այլ թէ 'ի բնէ իսկ ոչ ունիցի ինչ չարախօսել, և մանաւանդ այնպիսի տանջանս կրելով դժուարին։ Բայց ոչ զայն ինչ յիշէ, և տակաւին 'ի նոյն կիրսն գոլով. այլ առնէ զբանն դժուարալուր։ Դա և ոչ շնորհս ինչ և երախտիս դնէ նոցա արարեալ յինքեանէ. զի թէ յայս փութայր, պարտ էր զնոսա դատապարտել նախ և ամբաստանել և 'ի յայտ ածել զնոցանս որ առ նա գնաս։ Ապայ նա այնպէս պատասխանատրէ, որով ոչ ինչ ամբաստան լինի զնոցանէ։ Վասն այսորիկ, ասէ, աղաչեցի զձեզ տեսանել, զի մի կարծիցէք թէ եկի այսր չար ինչ հատուցանել ազգի իմոյ։ Զի թէ և յօտարէ ուրուք դէպ լինի չար ինչ կրելով ումեք՝ չէ պարտ չար ինչ առնել նմին, որչափ ևս առաւել յազգայինսն խնամել պարտ է։ Վասն որոյ այնչափ հեռի եմ 'ի չարախօսելոյ զձէնջ և 'ի թշնամաբար գնելոյ զիս առ ձեզ. մանաւանդ այնչափ զթամ 'ի ձեզ, զի վասն փրկութեան ձերոյ կամ յերկանեաց յայսոսիկ։

Այդ թէպէտ և ոչ ասաց թէ զինչ ունիցի ամբաստանել կամ զինչ լուայք զինէն չար, այլ միայն երևեալ ոչն իւրով անդ զամսն զնոսա զարհուրեցոյց. ուստի և նոքա այնպէս ըմբռնեալ եղեն բանիւն, մինչ զի տալ

պատասխանի փութան յաղագս աղգականացն իւրեանց։ «Մեք, ասեն, ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք 'ի Հրէաստանէ, և ոչ եկեալ ոք յերդարց պատմեաց կամ խօսեցաւ ինչ վասն քո չարութեան»։ Զայս ասեն՝ կամելով տալ պատասխանի, որպէս ասացի, յաղագս նոցա որ ներուսաղէմն էին. քանզի յոյժ մեղադիր լինելոյ նշանակ իմացան գոլ զասելն՝ թէ ոչ ըստ իրաւանց տուեալ եղէ 'ի կապանս Հրէից, զի յափշտակեցին զնս։ Եւ այլ ազգ. զի և այսր գալ դանդաղեցան, և անգէն բազում անգամ ձեռս մխեցին և ոչ ինչ ինաս կարացին ցուցանել։ Ուստի թէ սոքա վստահացեալ էին և անհոգ 'ի նմանէ, թերևս ոչ առնէին զայս։ Ոչ 'ի ձեռն Հրէից թղթոյ, ասեն, և ոչ 'ի ձեռն մարդոյ ծանուցին մեզ յաղագս քո չար ինչ։ Տես ապա զնոսա և ընտանեգոյնս խօսեցեալ ընդ նմա։

«Բայց աղաչեմք, ասեն, 'ի քէն լսել զոր ինչ խորհիսգ». վասն առ 'ի քո իրացն՝ յայտ է։ Եւ զի ոչ յուղիղ կամաց հարցին, յառաջ բերին փութով զիւրեանց կամն։ «Զի վա՞ հերձուածոյդ այդորիկ յայտնի իսկ է մեզ, ասեն, զի ա՞մ ուրեք հակառակութի՞ն կրէ»։ Տես զիարդ յայտնի ցուցին զատելութիւնն. զի իբրև զյոյժ ինն դժնդակէ իմեք տաղտկացեալ ասեն՝ վասն հերձուածոյդ այդորիկ։ Իսկ նա ոչ տայ վաղվաղակի պատասխանի որում հարցինն. այլ օր յայտ արար գալ նոցա առ նա 'ի միասին։

«Յամ եգեալ նմա, ասէ, օր մի եկին 'ի վանսն առ նա բազումք. որոց պատմէր վկայութիւ՞ զարքայութիւնն այ, և հաւանեցուցանէր զնոսա վասն Յեսի յօրինացն Մովսէսի և 'ի մարգարէիցն յայգուէ մինչև ցերեկոյ»։ Տես դարձեալ ոչ 'ի նշանաց, այլ յօրինաց և 'ի մարգարէից հաւանեցուցանէր և լռեցուցանէր զնոսա. և ա՞մ իսկ ուրեք զնոյն առնէր։ Եւ մանաւանդ պարտ էր, ասեն, նշանս առնել։ Ասեմ՝ թէ այնու հետև իրքն ոչ լինէր հաւատարիմ. զի մեծ նշան քան զա՞մ այն իսկ էր յօրինաց և 'ի մարգարէից ցուցանել զքեզ յայտնապէս։

«Որոմնք հաւատային բանին, և կէսք չհաւատային. և անմիաբան լեալ առ միմեանս արձակէին»։ Ոչ ա՞մքն

հակառակախոսք լինէին. այլ ոմանք հաւանէին և ոմանք ոչ։ Այլ յորժամ գնայեալ լինէին հակառակ կելով ընդ միմեանս, յայնժամ անարգէ զնոսա. ոչ զնոսա յանդիմանել ինչ կամելով, այլ զիւրան հաստատելով։ «Բարիոք, ասէ, խօսեցար Հոգին սուրբ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի առ հարսն մեր և ասէ։ Զայս ասելով զմիութիւնն ցուցանէ. և յայտ առնէ՝ զի մարգարէքն Հոգւոյն խօսէին զնա։ Արդ 'ի վերայ հրեշտակի ոչ ասի այսպէս. քանզի հրեշտակի գործ է ասել զոր ինչ տէրն ասէ. և ոչ յորժամ պատմեն գիրք յաղագս 'ի ձեռն հրեշտակաց ասացելոցն՝ ասեն թէ բարւոք ասաց հրեշտակն, այլ բարւոք ասաց Հոգին սուրբ. զմիապատիւ հրամանս առանձնաւորութիւն երրորդութիւնն ցուցանէ. զի Հօր՝ Որդւոյ ասի և Հոգւոյն։

«Բարիոք ասաց, ասէ, Հոգին սուրբ». փոխանակ ասելոյ՝ թէ ոչ ինձ ինչ անհաւանք լինիք և հակառակաբանեալք, այլ նմա որ 'ի վերուստ գիտէր զայս՝ այ. զի անդուստ 'ի վերուստ այս ինչ կանխաւ լինէր ասացեալ ձեր «Երթ առ ժողովուրդն և ասասցես ցնոսա. լսելով լսիջիք և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք և մի տեսջիք. զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ, և ականջօք իւրեանց ծանունս լուան և զաչս իւրեանց կափուցին, զի մի երբէք տեսցեն աչօք և ականջօք լուիցեն և սրտիւք իմասցին և դարձցին և բժշկեցից զնոսա»։ Այժ զմարգարէութիւնն 'ի մէջ, զի մի նոր և հրաշափառագոյն գոլ զիրսն կարծիցեն. և յայտ առնէ թէ 'ի գէպ այժմ քան յայնժամ ասացեալ եղև առ սոսա որք ոչ հաւատացին։ Քանզի զիարդ նոքա առաջինքն առանց լրման մարգարէութեան հաւատային. զի մարգարէն կանխաւ ասաց զլինելոցն՝ թանձրացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ. ոչ վասն անարգելոյ ասաց զայսոսիկ, այլ զնոսա ընդոստուցանելոյ և զդայթակղութիւնն 'ի բաց բառնալոյ։

Դարձեալ 'ի նախանձ զնոսա շարժէ այնոքիւք՝ որք 'ի հեթանոսաց էին։ Եւ տես նախ կշտամբեալ զանհաւատութիւն Հրէիցն, յայնժամ առ հեթանոսս եկեալ լինի։ «Յայտնի լիցի ձեզ, ասէ, զի հեթանոսաց

առաքեցաւ փրկուելոյ նոքին և լուիցեն »։ Բարիոք ասաց՝ թէ հեթանոսաց տուաւ գիտել զխորհուրդս զայս, և վայելչապէս բաշխեցաւ ընտրեալքն 'ի հեթանոսս՝ Հրէիցն անհաւանք գոլով։ Եւ ապա ընդէր արդեօք ընդ մեզ խօսիս և ուսուցանես. միթէ զայս ո՞չ գիտէիր։ Այո, ասէ, գիտէի. այլ առնեմ զայս, զի կամ հաւանեսցին, կամ ինքեանք տացեն պատասխանի. զի ոչ ուրուք կամիմ տալ բնաւ պատճառս ինչ։

Օ այս ասելով նորա գնացին Հրէայքն՝ բազումս ունելով յինքեանս տրտունջ զնմանէ։ Բայց տես զի անարգեալ և յանդիմանեալ առ 'ի նմանէ ոչ համարձակեցան ինչ ասել, և ոչ կարկատէն դաւաճանութիւն ինչ 'ի վերայնորա, որպէս յերուսաղէմ. քանզի անդ 'ի հրէաստանի 'ի գոռոզութիւն էին. իսկ աստ ոչ ընդ իշխանութիւն նոցա այնուհետև որ ընդ նմա իրքն էին հրամայեալ լինի։

Իսկ ընդէր բնաւ տնօրինեցաւ նմա գնալ 'ի հրէաստան և մանաւանդ զինեալ ինքն ասաց Քս՝ թէ փութա եւ յերուսաղէմ։ Վայելչապէս. զի ցուցեալ լիցի՝ նոցա չարութիւն, և մարգարէութիւն Քսի ճշմարիտ՝ թէ լեն ընդունելոց զքս վկայութիւդ. զի ոչ ընկալան և ոչ յանձն առին. և դարձեալ զի անպատասխանի և առանց ներելոյ գտանիցին նոքա։ Եւ այլ ազգ. զի գիտասցեն ամբն վասն Պաւղոսի թէ պատրաստ էր զնամ ինչ կրել 'ի նոցանէ։ Ապա և 'ի մխիթարութիւն այնոցիկ որ 'ի հրէաստանի էին հաւատացեալքն՝ թոյլ տուեալ լինէր զոր ինչ եղևն 'ի Պաւղոս. քանզի և նոքա անդ բազում դժուարութիւս և հալածանս 'ի Հրէիցն կրէին։ Արդ եթէ քարոզելով զՏրէականն զայն կրէր, եթէ յատուկ զփառացն Քսի քարոզեալ էր զիարդ յանձն առնուին լսել. զի և սրբելով ըստ օրինացն և պատարագ մատուցանելով ոչ եղև նոցա հանդուրժելի։

ԵՓՐ. «Լու եղև զերկեամ մի բովանդակ իւրով վարձու, և ընդունէր զնամն որ մտանէին առ նա»։ Արդ իբրև խօսեցաւ նա ընդ Հրէից յառաւօտէ մինչև ցերեկոյ վասն Քսի յօրինաց և 'ի մարգարէից, և երկրորդեաց վասն անհաւատիցն որք ոչ ընկալան յան-

ձին զբանն Եսայեայ, դարձաւ յիշեաց Ղուկաս և վասն գործոց և վաստակոց ձեռաց նորա, զոր ետ վարձ տանն զերկեամ մի. և զի ոչ դադարէր խօսել վասն Քրիստոսի ընդ Հրեայսն և ընդ հեթանոսս, որք եկանէին և մտանէին առ նա. և ասէր՝ թէ Յս Քրիստոս Որդի՝ այ. զի վասն նորա աշխատիմք և հասանեմք պատկացն՝ի ձեռն Քրիստոսի։

ՈՍԿ. «Դարոզէր, ասէ, զարքայութիւն՝ այ, և ուսուցանէր վասն տեառն Յսի Քրիստոսի անխափան՝ամ համարձակութիւն։ Տես ոչ ինչ զգալի և ոչ ինչ յաղագս հասելոցս լրացն՝ այլ յուսալի՝այ միշտ մնուցանէր զնոսա. ոչ ինչ ունելով հնար բանիւ զլուսն բնութիւն իրսն անձառս ցուցանել, և ոչ զանմտածելին զգալեաք իւիք բնախօսել։ «Ուսուցանէր անխափան՝ամ համարձակութիւն». առանց խափանման և աղատաբար եցոյց զքարոզութիւն այնուհետև։ Տես, զբանէլիսն որ՝ի հրեաստանի խափանեալ լինէր, նա՝ի Հռոմ առանց խափանելոյ քարոզէր. զերկուս ամս՝ի կապանս կացեալ անդանօր, և զքարոզութիւն ոչ պակասեցուցեալ։

«Լ՝ամ համարձակութիւն». զի զոյ համարձակութիւն ասել ինչ, բայց խափանմամբ. զի յայտ լիցի մեզ թէ համարձակութիւն նորին ոչ և մի ինչ կարաց տալ հատուցն, կամ եղև արգել. այլ առանց խափանելոյ ըստիւ և զգիշեր աւետարանէր. Վայելչասլեա զայնքան ընդ երկար ճանապարհ առաքեցաւ, հանդերձեալ գոլով անդ հեթանոսացն քարոզել. զի և ներբին կողմանքն Սպանիոյ լցցի աւետարանաւն Քրիստոսի։ Տես զտնօրէնութիւն՝այ. թողացոյց զոր անդ էին լսողքն յերկար ժամանակաւ ծարաւի լինել բանին. զի իբրև ըզպարարտ երկիր ուռոգեալ պտղաբեր լիցին։ Զայս իսկ և արտաքինքն առնեն, սակաւ սակաւ ներարծելով զնորեկսն՝ի հմտութիւն. զի այն ինչ իսկոյն զամ ինչ գիտելն՝ տարտամ և լքեալ առնէ, ծոյլ և արհամարհոտ։

Լ՝ալ յաղագս այնորիկ որ յետ երկտեայ ժամանակին էր՝ թէ զինչ արդեօք արար կամ գործեաց, ոչ պատմեաց մեզ Ղուկաս. քանզի արձակեցաւ Պաւղոս յայնմ կապանաց բազում ժամանակս. զոր և

'ի Թուղթն յայտ առնէ՝ թէ ապրեցայ 'ի բերանոյ առիւծուն։ Իսկ եթէ ոք տարակուսեսցի թէ ընդ-էր Ղուկաս ոչ զամ գրեաց, ասեմք՝ թէ և զՊետին իսկ ոչ զբովանդակն գրեցին, այլ զսակաւն բաւականն հա-մարեցան։ Նա և այլոցն իսկ առաքելոցն զոր ինչ արա-բին՝ ոչ գրեցաւ. այլ մասնաւոր սակաւ ինչ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Արդ եթէ կամիցիր ուսանել զՊաւղոսի որ ինչ յետ այնորիկ էր, 'ի սոցանէ գիտասջիր յորոց լուար. զի այսպիսիք էին և այնք նորայքն՝ կիրք, կապանք, տան-ջանք, բանտք, դաւաճանութիւք, քարկոծանք, մահք հանապազորդք։ Տեսեր զնորա վարուցն մասն փոքր. որչափ և տեսցես, ամն այսպիսի է։ Զերկնի մասն մի տեսեալ և զնշոյլս արեգականն 'ի մասնէ՝ ուր և գնասցես, այնպիսի զբոլորն տեսանիցես։ Նոյնպէս և զգործն Պաւղոսի տեսեալ 'ի մասնէ, ամն այնպիսի լինի հանդիպեալ անչափ վշտաց։ Երկին էր նա քան զամ երկինս բարձրագոյն և քան զդաստ անմարմնոցն պայծառագոյն. որոյ գովեստն 'ի վեր անցանէ քան զհասուցն եղականաց։ Արդ նմա նմանեսցուք արիա-գունին այնմիկ և անդամանդեայ հոգւոյն. զի հե-տևելով նմա գնալ կարասցուք ընդ շաւիղս կենցաղա-վարութեան նորա. զի կարող լիցուք ընդ հասեալ ծով կենցաղոյս նաւել և յանկասկած նաւահանգիստն հասանել և խոստացելոց բարութեանց սիրելեացն այ հանդիպել հնոր հօր և մարդասիրութիւն տեառն մերոյ Յիսուսի. ընդ որում հօր և հոգւոյն սրբոյ փառք և իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՀԱՅ. ՀԱՅՐԱՊԱՏ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ-СССР Հ.
ՄԱՏ. Հ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Հ. А. МАСТУРЯНА